

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՒՄՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1918 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա. Ց.

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության ջախջախիչ պարտությունը հանգեցրեց Մուղրոսի գինադադարի ստորագրմանը (30.X.1918 թ.), ինչից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը լուծարվեց, իսկ դրա յոթ պարագլուխները նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը փախուստի դիմեցին: Պատերազմի ընթացքում երիտթուրքերի գործելառճից սհաբեկված և ձայնագուրկ ուժերը քաղաքական նոր իրավիճակում իրենց բողոքի ձայնը բարձրացրին և սկսեցին դատապարտել այդ վարչակարգի իրականացրած հանցագործությունները: Մամուլի էջերում հնչող քննադատությունը շուտով տեղափոխվեց օսմանյան խորհրդարանի դահլիճ, որն իր գործունեությունը վերսկսեց 1918 թ. հոկտեմբերի 10-ին:

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայերի ցեղասպանության հարցը քննարկվեց օսմանյան խորհրդարանի հինգ նիստերում, որոնց մասնակցում էին 12 հայ պատգամավորներից միայն 6-ը՝ Սսից ընտրված Մատթեոս Նալբանդյանը, Զմյուռնիայից՝ Օննիկ Բասանը, Էրզրումից՝ Հովսեփ Մադաթյանը, Հալեպից՝ Արթին Բոշկեզեչյանը, Մարաշից՝ Հակոբ Խրլաքյանը, Սեբաստիայից՝ Տիգրան Պարսամյանը: Նիստերին չէին մասնակցում Մուշի երկու հայ պատգամավորները՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, որն անկողնային հիվանդ էր, և երկրից դուրս գտնվող Վահան Փափազյանը (Վոսն) և Պոլսից ընտրված Պետրոս Հալաջյանը: Երիտթուրքերի կողմից մինչ այդ սպանվել էին պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սերենկյույանը և Օննիկ Դերձակյանը (Վոսմյան): Այս առումով հարց է առաջանում, թե ինչպես պատահեց, որ Զոհրապին, Վարդգեսին և Վոսմյանին վերացրած երիտթուրքական կառավարությունը նույն ճակատագրին չարժանացրեց երկրում մնացած մյուս հայ պատգամավորներին: Նշենք, որ նրանցից Գ. Տեր-Կարապետյանը չաքսորվեց միայն այն պատճառով, որ զամված էր անկողնուն, և իշխանություններն ի դեմս նրա վտանգ չտեսան¹: Մակայն նա շարունակում էր տարբեր վայրերից նամակներ ստանալ, հետևել տեղի ունեցող եղերական իրադարձություններին և

¹ Տատրեան Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուղթրթաուն, 1995, էջ 59:

հավաքած փաստերը հետա-գայում ներկայացրեց կառավարությանն ուղղված գրավոր հարցապնդման մեջ: Իսկ պատգամավոր Մատթեոս Նալբանդյանն արտոնից կարողացավ խուսափել միայն կաշառքի միջոցով՝ իր կալվածքների արժեքի կեսի չափով գումար տալով Ադանայի Իսմայիլ Հաքքը նահանգապետի եղբորը՝ Համիդին²: Ողջ մնացած մյուս հայ պատգամավորները կամ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ էին, ինչպես, օրինակ, Տիգրան Պարսամյանը, կամ էլ այդ կուսակցության թույլտվությամբ թուրքերի քվեներով էին ընտրվել, ուստի իշխանություններն ի դեմս նրանց սպառնալիք չէին տեսնում: Այդ ամենը, սակայն, չխանգարեց, որ նրանք հետագայում օսմանյան խորհրդարանում հայ ժողովրդի բնաջնջման համար մեղադրեին ոչ միայն երիտթուրքական կառավարությանը, այլև ողջ թուրք ցեղին: Հայ պատգամավորների հնչեցրած մեղադրանքներին երբեմն միանում էին նիստերին մասնակցող 10 հույն պատգամավորներից մի քանիսը՝ Այդրնից ընտրված Էմմանուելիդին, Թեքիր-դադից՝ Էվկալիտիսը, Պոլսից՝ Հարալամ-պիսը, Տրապիզոնից՝ Գոֆիդին և Յուվանիդին:

Չնայած երիտթուրքական կուսակցության ինքնալուծարմանը, նախկին իթթիհա-դականները շարունակում էին մեծամասնություն կազմել խորհրդարանում: Խորհրդարանի խոսնակը նախկին կառավարությունում արտաքին գործերի և կարճ ժամանակով նաև արդարադատության նախարար Թալեաթի մտերիմ Հալիլ էր, որը հե-տագայում ի թիվս այլոց ձերբակալվեց հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով³: Իթթիհադական մեծամասնությունից բացի, հայ պատգամավորների գործը զգալիորեն բարդանում էր նաև խորհրդարանի կանոնակարգի սահմանափակող դրույթներով, որոնց համաձայն, կոնկրետ հարցերով կառավարության ներկայացուցչին խորհրդարան հրավիրելու և նրան հարցապնդում ներկայացնելու համար քսան պատգամավորների ստորագրությամբ պահանջագիր էր հարկավոր: Փաստորեն, հույները, հայերը և հրեաները, որոնց պատգամավորների թիվը չէր հասնում քսանի, զրկված էին այդ իրավունքից: Հայ պատգամավորները հարկադրված էին կանոնակարգի այս անարդարացի սահմանափակումը խախտել և կառավարության անդամներին հարցապնդում ներկայացնել այլ հարցերի, օրինակ՝ կառավարության վստահության քվեի քննարկման ժամանակ: Հատկանշական է, որ հայ պատգամավորներն օսմանյան խորհրդարանում գործում էին կազմակերպված, օգնում էին միմյանց, երբ իթթիհադական մեծամասնությունը փորձում էր ճնշում գործադրել նրանցից որևէ մեկի վրա և համագործակցում էին հույն պատգամավորների հետ:

² Նույն տեղում, էջ 99:

³ Նույն տեղում, էջ 74:

Պետք է նշել, որ դեռ հոկտեմբերի 28-ին արաբ պատգամավոր Ֆուադ բեյի կողմից պատրաստվել էր պատերազմի ընթացքում երիտթուրքական վարչակարգի իրականացրած հանցագործությունները հետաքննելու վերաբերյալ 10 կետից բաղկացած հարցապնդում, որի միայն երկու կետերն էին վերաբերում հայերի բնաջնջման հարցին, այն էլ՝ բավական անորոշ ձևակերպումներով: Ֆուադ բեյն իր գրավոր առաջարկի 5-րդ կետում «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները որակում էր որպես մարդկային և իրավական կանոններին ամբողջովին հակասող և օսմանյան Սահմանադրության ոգին ու բավանդակությունը ոտնահարող օրենքներ, հրամաններ և կանոնադրություններ, որոնք երկիրը վերածեցին ողբերգական թատերաբեմի⁴: 10-րդ կետով էլ, ակնարկելով «Հատուկ կազմակերպությանը», արաբ պատգամավորը նշում էր, որ երիտթուրքերը երկրում քառս և խառնաշփոթ ստեղծելով՝ իրենց իսկ ստեղծած ավազակախմբերի միջոցով մարդկանց կյանքի և սեփականության դեմ կատարված ծանր հանցագործությունների մասնակիցը դարձան⁵: Կարելի է ենթադրել, որ Ֆուադ բեյը, խորհրդարանում նախկին իթթիհադականների ձայների մեծամասնություն ունենալու հանգամանքը հաշվի առնելով, միտումնավոր չէր շեշտադրել հայերի կոտորածները, որպեսզի վերջիններս, այդ պատրվակն օգտագործելով, չտապալեն իր առաջարկությունը: Արաբ պատգամավորն իր գրավոր առաջարկությունը նոյեմբերի 2-ին ներկայացրեց խորհրդարանի նախագահությանը, իսկ նոյեմբերի 4-ին այն քննարկման առարկա դարձավ:

Նոյեմբերի 4-ի նիստում ներկայացվեց նաև հայ պատգամավոր Մ. Նալբանդյանի գրավոր հարցապնդումը, որը ստորագրված էր նաև նիստին մասնակցող մյուս հայ պատգամավորների՝ Հ. Խրլաքյանի, Օ. Բիսանի, Ա. Բոշկեզենյանի, Հ. Մադաթյանի և Տ. Պարսամյանի կողմից: Հայ պատգամավորները ցանկանում էին պարզել նոր կառավարության դիրքորոշումը օսմանյան Սահմանադրությանը հակասող՝ 1915 թ. մայիսի 27-ի «Տեղահանության մասին» և սեպտեմբերի 26-ի՝ «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների կիրառման հետևանքով իրականացված հանցագործությունների՝ սպանությունների, բռնաբարությունների, գույքի և ունեցվածքի բռնագրավումների, ինչպես նաև որբացածների և այրիացածների հետագա ճակատագրի վերաբերյալ: Այս հարցապնդումներին պատասխանեց նախկին իթթիհադական, նոր կառավարության ներքին գործերի նախարար Ալի Ֆեթհի Օքյարը, որը հնչեցրեց թուրքական ժխտողականության այն հայտնի դրույթը, թե պատերազմի

⁴ Սսոռյան Ա., Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Ե., 2013, էջ 77:

⁵ Kévorkian R. *La Turquie face à ses responsabilités. Le process des criminels jeunes-turcs (1918-1920)*, Revue d'histoire de la Shoah, janveir-août, 2003, p. 171.

ժամանակ տուժել են ոչ միայն հայերը, հույները կամ արաբները, այլ նաև թուրքերը: Միննույն ժամանակ, նախարարը կառավարության անունից խոստացավ պատժել հանցագործություններ կատարածներին, իրենց բնակավայրերը վերադարձնել տեղահանվածներին և հատուցել նրանց կրած վնասները՝ առաջարկելով, որ տուժողներն իրենց իրավույթները վերականգնելու համար մեղավորների դեմ բողոքներ ներկայացնեն: Հասկանալով նախարարի հետին միտքը, այն է՝ տուժածների մեծ մասն արդեն ոչնչացված է, իսկ ողջ մնացածներն էլ այնքան են ահաբեկված, որ չեն համարձակվի բողոք ներկայացնել, Մ. Նալբանդյանն անմիջապես արձագանքեց նախարարի խոսքին՝ նկատելով, որ անկախ բողոք ներկայացնելու հանգամանքից, հանցագործություններ բացահայտելու գործը կառավարությունը պետք է իր պարտականությունը համարի: Համաձայնվելով Նալբանդյանին, Ֆեթհին նշեց, որ այդ ամենը միանգամից անհնար է անել և խոստացավ տուժածների ոտնահարված իրավունքներն աստիճանաբար վերականգնել, իսկ հանցագործություններ կատարած պաշտոնյաներին ենթարկել պատասխանատվության⁶:

Քննարկումներին մասնակցած թուրք պատգամավոր Մեհմեդ Էմինը (Տրապիզոնից) իր ելույթում հատուկ անդրադարձավ հույն պատգամավոր Էմմանուելիդիի՝ հայերի զանգվածային կոտորածներին տված որակումներին՝ դրանք համարելով չափազանցված: Թուրք պատգամավորն առարկեց, որ միայն սպանված հայ կանանց ու երեխաների թիվը չի կարող մեկ միլիոն լինել, քանի որ դրան 500 հազար տղամարդկանց թիվն ավելացնելու դեպքում զոհված հայերի ընդհանուր քանակը կհասնի 1,5 միլիոնի⁷: Մ. Էմինը, ընդունելով, որ կայսրությունում մինչև պատերազմը հայ բնակչությունը 1 200 000 էր, նշում է, որ զոհված հայերի թիվը ճշտելու համար հենց դրանից պետք է հանել հայ վերապրողների թիվը⁸: Միանգամայն հասկանալի է, որ հայ բնակչության թվաքանակը և զոհված հայերի թիվը պակասեցնելու միջոցով թուրք պատգամավորը փորձում էր նվազեցնել հանցագործության ծավալները: Մակայն օսմանյան խորհրդարանում իր ելույթով նա ակամայից նշեց զոհված հայերի 1,5 միլիոն թիվը, որը հետագայում տարածում ստացավ աշխարհով մեկ:

Խոստովանելով, որ պետական պաշտոնյաները շատ ընտանիքների, կանանցով և երեխաներով հանդերձ, ոչնչացրեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին, Մ. Էմինն անընդունելի համարեց հույն պատգամավոր Էմմանուելիդիի հնչեցրած՝ «հայերը

⁶ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող և առաջաբանի հեղինակ Բարսեղյան Լ., Ե., 2005, էջ 147:

⁷ Տարբեան Վ., նշվ. աշխ., էջ 17:

⁸ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

ջարդվեցին հայ լինելու համար» ձևակերպումը, անգամ վստահաբար պնդեց, թե դա չեն ընդունում նույնիսկ հայ պատգամավորները: Սակայն Ա. Բոշկեզենյանի՝ «Իսկ ինչու՞ ջարդվեցին» հարցից անակնկալի եկած Մ. Էմինը չկարողացավ պատասխան գտնել, և նիստերի դահլիճում խառնաշփոթ սկսվեց:

Խորհրդարանի օրակարգի հաջորդ՝ «Տեղահանության մասին» հարցը ժամանակավոր օրենքի ճակատագիրը որոշելու խնդիր էր: Այդ օրենքը չեղյալ համարելու պահանջով նախ հանդես էր եկել արաբ պատգամավոր Ֆուադ բեյը, իսկ այնուհետև՝ հինգ հայ պատգամավորներ միասնական պահանջ էին ներկայացրել ոչ միայն «Տեղահանության մասին», այլև «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքները չեղյալ համարելու պահանջով: Իր ելույթում Ֆուադ բեյը, համերաշխելով հայ պատգամավորներին, նշեց, որ բացի «Տեղահանության մասին» օրենքից, կան դրա նման և դրանից էլ վատ ուրիշ օրենքներ, որոնք նույնպես պետք է վերացվեն: Արթին Բոշկեզենյանն էլ չբավարարվեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ ապօրինի լինելը փաստելով և պահանջեց պատասխանատվության կանչել տվյալ օրենքը հանցավոր մտադրությամբ ընդունած և գործադրած անձանց⁹: Ներքին գործերի նախարար Ֆեթհի բեյն արձագանքեց, որ «Տեղահանության մասին» օրենքը ոչ թե կառավարությունը պետք է հետ կանչի, այլ չեղյալ համարվի խորհրդարանի կողմից: Խորհրդարանի քվեարկությանը դրվեց այդ օրենքի չեղարկման հարցը, և դրա արդյունքներով այն չեղյալ համարվեց: Քվեարկությունից հետո Արթին Բոշկեզենյանը և Ֆուադ բեյը բողոքեցին, որ հատուկ չնշվեց, թե ինչ հիմքով չեղյալ համարվեց օրենքը. նրանք պահանջում էին հատուկ շեշտել, թե տվյալ օրենքը չեղյալ համարվեց հակասահմանադրական լինելու պատճառով: Սակայն խորհրդարանի խոսնակը հայտարարեց, որ օրենքը չեղարկվել է, և դրա համար հիմնավորում չի պահանջվում¹⁰: Թեև խորհրդարանի խոսնակն ամեն կերպ խուսափեց նշել չեղարկված օրենքի հակասահմանադրական բնույթը, այդուհանդերձ, դա շեշտվում էր ինչպես արաբ և հայ պատգամավորների գրավոր հարցապնդումներում, այնպես էլ մյուս պատգամավորների ելույթներում, ուստի այդ օրենքի չեղարկման հիմքը միանգամայն ակնառու երևում է խորհրդարանի այդ օրվա նիստի սղագրությունից:

Նոյեմբերի 4-ի նիստի վերջում խորհրդարանի նախագահը հրապարակեց այդ օրվա օրակարգի դեռևս չքննարկված հարցերը, որոնց թվում էր պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունները հետաքննող մարմին ստեղծելու խնդիրը, որը քննարկման արժանացավ հաջորդ նիստերի ընթացքում: Նշենք, որ այս նախաձեռ-

⁹ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 148:

¹⁰ Տասրեան Վ., նշվ. աշխ., էջ 19:

նության շնորհիվ հետագայում ձևավորվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը զբաղվելու էր պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների հետաքննությամբ:

«Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի չեղարկումից հետո Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը օսմանյան խորհրդարանում ոչ միայն չդադարեց, այլև ավելի բուռն կերպով շարունակվեց քննարկվել նոյեմբերի 18-ի նիստում, որտեղ գլխավորը նոր կառավարության վստահության հարցն էր, ուստի խորհրդարանի դահլիճում էին գտնվում պետական խորհրդի նախագահ Շերիֆ փաշան և կառավարության երեք նախարարները՝ արտաքին գործերի նախարար Մուսթաֆա Ռեշիդը, ներքին գործերի նախարարի պաշտոնում Ալի Ֆեթհի Օքյարին փոխարինած Մուսթաֆա Արիֆը, կրթության նախարար Ռիզա Թեվֆիքը, որը հետագայում ընդգրկվեց Սերի հաշտության պայմանագիրը ստորագրող թուրքական պատվիրակության կազմում: Նիստի ընթացքում հանդես եկան հայ պատգամավորներ Ա. Բոշկեզեզյանը, Տ. Պարսամյանը և Մ. Նալբանդյանը, որոնց ելույթների ժամանակ նիստերի դահլիճում մթնոլորտն այնքան շիկացավ, որ արտգործնախարարը նույնիսկ առաջարկեց նիստը շարունակել դռնփակ, սակայն նրա առաջարկը չընդունվեց:

Պատգամավոր Ա. Բոշկեզեզյանը կրկին խոսեց հայերի կոտորածների մասին՝ շեշտելով, որ քաղաքակիրթ աշխարհը դրանում մեղադրում է թուրք ազգին. դա բուռն դժգոհություն առաջացրեց դահլիճում: Իթթիհատական մեծամասնության կողմից իր ելույթի ընդհատումը թույլ չտալու և նրանց իր խոսքն ընկալելի դարձնելու նպատակով Բոշկեզեզյանը նման հանդուգն որակումներից հետո հայերի կոտորածների մեղադրանքի սլաքն ուղղեց դեպի երիտթուրքական կառավարությունը: Սակայն, խոսքը շարունակելով, նա կրկին վերադարձավ թուրք ազգի պատասխանատվության հարցին՝ նշելով, որ կառավարության հանցավոր քաղաքականությանը թուրք ազգը, այդուհանդերձ, մասնակցություն է ունեցել¹¹: Դահլիճում իսկական իրարանցում առաջացրեց հայ կույսերին ապրանքի պես իրար մեջ բաժանողներին պատժելու՝ հայ պատգամավորի պահանջը և նույնիսկ Պոլսում պաշտպանություն վայելող անձանց մոտ հայ կույսերին թաքուն ստրկության մեջ պահելու փաստի հրապարակումը¹²: Ա. Բոշկեզեզյանը դրանում մեղադրում էր թուրք պետական պաշտոնյաներին և պատգամավորներին, որոնց դժվար էր պատասխանատվության ենթարկել նրանց պաշտոնական դիրքի և անձեռնմխելիության պատճառով: Պատահական չէր, որ նրա հանդուգն մեղադրանքներն ազդեցին հատկապես հայ աղջիկներ առևանգողի համբավ ձեռք բերած՝ Մուշի պատգամավոր Իլյաս Սամիի վրա, որը նույնիսկ իթթիհատական

¹¹ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 151:

¹² Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

առաջնորդներին նվիրելու համար մի խումբ դեռատի հայ աղջիկներ էր իր հետ բերել Պոլիս¹³: Նա փորձեց ընդհատել Բոշկեզենյանի խոսքը՝ նշելով, որ վերջինս օրակարգից դուրս է խոսում, սակայն ստացավ հայ պատգամավորի շատ կոշտ պատասխանը, թե իրենք գտնվում են ոչ թե Մուշում կամ Բիթլիսում, այլ խորհրդարանում¹⁴: Ավարտելով իր խոսքը՝ Բոշկեզենյանը հինգ կետից բաղկացած պահանջագիր է ներկայացնում՝ 1. հանցագործ պաշտոնյաների պատժամիջոցների հաստատում, 2. գերեվարված և ստրկացրած կանանց և որբերի ազատ արձակում, 3. Խառավարության կողմից նրանց սննդի ապահովում, 4. ապրանքների և ունեցվածքի վերադարձի ապահովում, 5. վնասների հատուցում¹⁵: Կառավարությանն իր վստահության քվեն տալը հայ պատգամավորը պայմանավորում էր այս պահանջների կատարումով:

Նրա ելույթից հետո միայն խորհրդարանը վերադարձավ կառավարությանը վստահություն հայտնելու օրակարգային հարցի քննարկմանը, սակայն հույն պատգամավոր Էմմանուելիդին իր ելույթում կրկին անդրադարձավ հայերի կոտորածների հարցին և հայտարարեց, թե կառավարությանը վստահության քվե չի տալու, քանի որ վերջինս բռնագրավված գույքի դիմաց տուժածներին դեռևս որևէ հատուցում չի տվել: Տրապիզոնի թուրք պատգամավոր Մեհմեդ Էմինի ելույթից հետո դահլիճում խառնաշփոթ սկսվեց, քանի որ նա պաշտպանեց հայ և հույն պատգամավորների արդար պահանջները և հայտարարեց, որ կառավարությանը վստահության քվե տալու դեպքում խորհրդարանը կկորցնի իր արժանապատվությունը: Անգամ իր կուսակից Սինոպի պատգամավոր Հասան Ճեհմիի հնչեցրած՝ «խոսքերդ հետ վերցրու» սպառնալից պահանջից հետո Մեհմեդ Էմինը անդրդվելի մնաց¹⁶:

Բացառիկ նշանակություն ունեն այս նիստին Մերաստիայից թուրքերի քվեներով ընտրված «Թեջեղյուք»* (Վերածնունդ) կուսակցությունը ներկայացնող հայ պատգամավոր Տիգրան Պարսամյանի ելույթը, որը խոսեց ոչ թե որպես կուսակցական, այլ որպես հայ ազգի ներկայացուցիչ: Նա բարձրացրեց Սիրիայի անապատներ արտրված և դեռևս ողջ մնացած հարյուր հազարավոր հայերին (որոնց մեծ մասը կանայք և երեխաներ էին) օգնություն ցուցաբերելու հարցը՝ պահանջելով, որ կառավարությունն այդ գործը սկսի մինչև խաղաղության բանակցությունները:

¹³ Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 94:

¹⁴ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարաններ..., էջ 154:

¹⁵ Նույն տեղում, էջ 154-155:

¹⁶ Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 31:

* «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը 1918 թ. վերջին ձևականորեն ինքնալուծարվեց և ընդհատակ անցավ, իսկ իր լեզու գործունեությունը շարունակեց «Թեջեղյուք» կուսակցության անվան տակ, որը երկար կյանք չունեցավ:

Նիստերի դահլիճում ներկա գտնվող կառավարության անդամները, հասկանալով, որ նման թեժ քննարկումները կարող են բացասաբար անդրադառնալ կառավարությանը վստահություն հայտնե լու հարցի վրա, ստիպված եղան միջամտել: Թեև արտգործնախարար Մուստաֆա Ռեշիդը խոստովանեց, որ հայերի դեմ իրականացված վայրագություններն առաջացրեցին մարդկության ցասումը և կայսրությունը վերածեցին հսկայական սպանդանոցի, սակայն առաջարկեց ժամանակավորապես դադարեցնել հայերի կոտորածների հարցի քննարկումը և վերադառնալ կառավարությանը վստահության քվե տալու օրակարգային հարցին¹⁷: Կառավարության անդամների մտավախությունները հիմնադրվել են, քանզի այս քննարկումներն իսկապես որոշակի ազդեցություն էին ունեցել դահլիճում տիրող տրամադրությունների վրա: Քվեարկության արդյունքներով («կողմ»՝ 84, «դեմ»՝ 27 և «ձեռնպահ»՝ 3) խորհրդարանը վստահության քվե չտվեց կառավարությանը, քանի որ չհաջողվեց հավաքել նվազագույն՝ 129 «կողմ» ձայները¹⁸:

Հայոց ցեղասպանության հարցը կրկին քննարկման առարկա դարձավ խորհրդարանի դեկտեմբերի 9-ի նիստում: Նախագահողը ցանկանում էր համառոտ ներկայացնել Մուշի հայ պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանի (որը ներկա չէր նիստերին հիվանդության պատճառով)՝ ներքին գործերի նախարարությանն ուղղած գրավոր հարցապնդման բովանդակությունը, սակայն Տիգրան Պարսամյանը համառելով ամբողջությամբ ընթերցեց Տեր-Կարապետյանի հարցապնդումը. դա կարևորվում էր այնքանով, որ, ի տարբերություն մյուս հայ պատգամավորների, Տեր-Կարապետյանն ընտրվել էր բացառապես հայերի քվեներով:

Նա արձանագրում է այն փաստը, որ թուրք պատգամավորների նշած թիվը՝ 100 հազարը, կազմում են միայն Սամսոնում, Գարահիսարում, Տրապիզոնում և Կիրասոնում նահատակված հայերը, իսկ Կարինի, Սեբաստիայի, Խարբերդի, Վանի և Տիգրանակերտի (Դիարբեքի) նահանգներում և Ուրֆայի գավառում կոտորվել և ոչնչացվել են ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր¹⁹: Հատկանշական է, որ հայ պատգամավորը օսմանյան խորհրդարանում հրապարակում է Արևմտյան Հայաստանի միայն հինգ նահանգներում (առանց Բիթլիսի) և Ուրֆայի գավառում զոհված ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի թիվը: Անդրադառնալով իր ընտրական տարածքում՝ Մուշում և Բիթլիսում կատարված վայրագություններին, Տեր-Կարապետյանը նշում է, որ այնտեղ հայերի դեմ գործադրվեցին թնդանոթներ, որոնք հողին հավասարեցրին հայկական բնակավայրերը: Փաստորեն, նա արձանագրում է,

¹⁷ Kévorkian R., նշվ. աշխ., էջ 188:

¹⁸ Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 42:

¹⁹ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 155-156:

որ Մուշի և Բիթլիսի հայերի կոտորածն իրականացվել է օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումների կողմից: Հարցապնդման մեջ նաև խոսվում էր կոտորածներին զուգահեռ ընթացող՝ հայերի զանգվածային ունեզրկման մասին, երբ կողոպուտվում էին ոչ միայն բոլոր հայերի շարժական և անշարժ գույքերը, այլև ավերակների վերածվող ազգային ու կրոնական կառույցներում՝ վանքերում ու եկեղեցիներում պահվող արժեքավոր իրերը²⁰: Հայ պատգամավորը հատուկ նշում է հայ հոգևորականներին սպանելու, ինչպես նաև ոչնչացված հայերի որք մնացած երեխաներին բռնի մահմեդականացնելու դեպքերի մասին: Տեր-Կարապետյանի հարցապնդումն ավարտում է կառավարության հասցեին ուղղած մեղադրանքով, այն է՝ դարեր շարունակ հայ ազգին պատկանող և օսմանյան սուլթանների հրովարտակներով հաստատված՝ հայերի նվիրական հայրենիքը հանդիսացող կայսրության արևելյան նահանգներում համընդհանուր կոտորածից փրկված և իրենց գոյությունը հազիվ քարշ տվող հայազգի վերապրողներին կառավարությունը որևէ օգնություն չի ցուցաբերում: Ընդհակառակը՝ նրանց պատկանող կալվածքներում և հողերում բնակեցնում է դրսից բերված գաղթականներին²¹: Հարցապնդման այս վերջին հատվածն իսկապես բացառիկ էր նրանով, որ հայ պատգամավորը խիզախություն ունեցավ Օսմանյան կայսրության արևելյան նահանգները, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը, **հայերի նվիրական հայրենիք** անվանել՝ շեշտելով նաև այն հանգամանքը, որ այդ դարեր շարունակ հաստատվել է օսմանյան սուլթանների հրովարտակներով: Միևնույն ժամանակ, նա մեղադրեց կառավարությանը, որը հայերի հայրենիքում, նրանց կալվածքներում տեղավորում է մահմեդական վերաբնակիչներին: Թերևս, սա էր պատճառը, որ նիստի նախագահողը չէր ցանկանում, իսկ Պարսամյանն էլ համատում էր, որ հարցապնդումն ընթերցվի ամբողջությամբ՝ ի վերջո, հասնելով այն բանին, որ այդ մտքերը բարձրաձայն հնչեցին խորհրդարանի դահլիճում:

Խորհրդարանի դեկտեմբերի 11-ի նիստում ելույթ ունեցավ նաև Տրապիզոնի պատգամավոր Մեհմեդ Էմինը, որը նշեց, որ անձամբ ներկա է եղել Սամսոնում և տեսել է, թե ինչպես Սամսոնի և Տրապիզոնի միջև գտնվող Օրդու Գազայի նավահանգստի կառավարիչը Սամսոն ուղարկելու պատրվակով հայերին լցրեց նավակների մեջ և բոլորին ծովում խեղդել տվեց: Նույն մեղադրանքը նա հնչեցրեց նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի հասցեին²²: Միևնույն նահանգից ընտրված թուրք պատգամավորի ուղղած մեղադրանքը նահանգապետի հասցեին բացառիկ երևույթ էր օսմանյան խորհրդարանում:

²⁰ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

²¹ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 156:

²² Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 70:

Դեկտեմբերի 12-ի նիստին խոսք վերցրեց Մատթեոս Նալբանդյանը, որը կրկին անդրադարձավ հայերի կոտորածներին: Սակայն երբ խոսնակ Հալիլը փորձեց ընդհատել նրան՝ պատճառաբանելով, թե քննարկումները վերաբերում են միայն Չաթալչայի և Էդիրնեի, այսինքն՝ հույների տեղահանության հարցին, Նալբանդյանն առարկեց, թե՝ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը վերաբերել է ընդհանուրին, և շարունակեց խոսքը: Հայ պատգամավորը հատուկ անդրադարձավ մտավորականությանը ոչնչացնելու հարցին՝ եզրահանգելով, որ հայերի կոտորածներն իրականացվել են նախապես ծրագրված և համակարգված գործելու կերպով: Նա խոսեց նաև իր ընտանիքի՝ աքսորի ճանապարհին կրած տառապանքների մասին՝ նշելով, որ իրեն էլ էին ուզում աքսորել, եթե միջամտություն չլիներ: Պատմելով Սսից Պոլիս ճանապարհին հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին, որոնց ինքն ականատես է եղել: Նալբանդյանը կասկածի տակ է դնում թուրք պատգամավորների այն տեսակետը, թե այդ ամենը երեքից հինգ մարդու գործ է՝ պահանջելով որ պատժվեն բոլորը, եթե անգամ մեղավորների թիվը 100 հազար էլ լինի²³: Հայ պատգամավորն ակնարկում էր, որ գուցե կոտորածը ծրագրողներն ու հրաման արձակողները երեքից հինգ հոգի են, սակայն հայերի բնաջնջմանը մասնակցություն են ունեցել հարյուր հազարավոր թուրքեր: Նալբանդյանի այս խոսքերը խիստ ազդու էին, և նիստի վերջում ստիպված դրանց արձագանքեց ներքին գործերի նախարար Արիֆը՝ նշելով, որ եթե անգամ միլիոնավոր թուրքերից հարյուր հազարները մասնակցել են այդ հանցագործություններին, ապա ճիշտ չէ ամբողջ թուրք ցեղին դրա համար պատասխանատու համարել²⁴:

Օսմանյան խորհրդարանի դահլիճում հայ պատգամավորը համարձակորեն հայտարարեց, որ միջազգային հանրությունը և զոհ դարձած ազգերն այս ամենի համար թուրքերից պետք է հաշիվ պահանջեն, և թուրքերը պետք է պատասխան տան²⁵:

Այս նիստը եզրափակվեց Մ. Արիֆի ելույթով. նա նշեց, որ ինչպես խորհրդարանը, այնպես էլ կառավարությունը հաստատում են տեղի ունեցած դեպքերը, և ոչ ոք չի ասում, թե դրանք չեն պատահել²⁶: Այսպիսով, թուրքական նոր կառավարության ներկայացուցիչը օսմանյան խորհրդարանում նույնպես ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը:

Օսմանյան խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ծավալված այս քննարկումների արդյունքը եղավ այն, որ արաբ պատգամավոր Ֆուադի առաջարկով, ի

²³ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 159:

²⁴ Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 86:

²⁵ Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները..., էջ 158:

²⁶ Kévorkian R., նշվ. աշխ., էջ 175.

վերջո, ձևավորվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը պետք է զբաղվեր պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության իրականացրած հանցագործությունների, այդ թվում՝ հայերի կոտորածների հետաքննությամբ: Հանձնաժողովի անդամների միջև վեճի առարկա դարձավ այն հարցը, թե որ դատական մարմինն է քննելու մեղավոր ճանաչված երիտթուրքական կառավարության անդամների գործը: Մեծամասնություն կազմող նախկին իթթիհադականները պնդում էին, որ նրանց գործը պետք է քննվի Գերագույն դատարանում, ընդ որում, նրանց այս պնդումն ամեննին էլ արարողակարգային բնույթի չէր: Բանն այն է, որ օսմանյան Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն, Գերագույն դատարանի 30 դատավորների կազմի 1/3-ը համամասնորեն ընտրվում էր Սենատի անդամներից, վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատավորներից, որոնք իրենց պաշտոնները ստացել էին երիտթուրքերի կառավարության օրոք: Գերագույն դատարանում նախկին կառավարության անդամների դատավարությունը ֆարսի վերածելու իթթիհադականների մտադրությունը կռահելով՝ Հինգերորդ հանձնաժողովի պատգամավորների փոքրամասնությունը փորձում էր հասնել իսկական արդարատյության, ինչը հնարավոր էր իրականացնել միայն արտակարգ ռազմական աստիճանների միջոցով²⁷: Ի դեպ, նախկին՝ երիտթուրքական կառավարության անդամների փաստաբանները հետագայում թուրքական ռազմական աստիճանում նույնպես փորձում էին վիճարկել այդ դատական մարմնի իրավագործությունն իրենց պաշտպանյալների նկատմամբ²⁸: Հինգերորդ հանձնաժողովում այս հարցի ձգձգումների պատճառով 1918 թ. դեկտեմբերի 21-ին սուլթանը լուծարեց խորհրդարանը՝ այդպիսով վերջ դնելով նաև այդ հանձնաժողովի գոյությանը: Խորհրդարանի լուծարումից հետո պատգամավորները կորցրեցին իրենց անձեռնմխելիությունը, և նրանցից 24-ը ձերբակալվեցին²⁹: Այդուհանդերձ, Հինգերորդ հանձնաժողովի գործունեության արդյունքը եղավ այն, որ 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այն անցկացրեց 14 լսում, հարցաքննեց 15 նախարարների, որոնցից երկուսը՝ շեյխ-ուլ-իսլամ: Իր գործունեության կասեցումից հետո Հինգերորդ հանձնաժողովն իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի ամբողջ փաթեթը փոխանցեց ռազմական աստիճանին³⁰: Ի թիվս այլ ապացույցների, թուրքական ռազմական աստիճանին փոխանցված նյութերը կարևոր նշանակություն ունեցան հայերի զանգվածային

²⁷ Տասրեան Վ., նշվ. աշխ., էջ 11:

²⁸ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Ե., 1988, էջ 16:

²⁹ Kévorkian R., նշվ. աշխ., էջ 188:

³⁰ Տերնոն Բ., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային աստիճանների առջև, Ե., 2003, էջ 20:

կոտորածներն իրականացնելու մեջ երիտթուրքական կառավարության անդամների պատասխանատվությունը հաստատելու և նրանց դատապարտելու գործում:

Անփոփելով օսմանյան խորհրդարանում 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների հինգ նիստերին հայ պատգամավորների գործուն մասնակցությամբ ծավալված քննարկումները Հայոց ցեղասպանության հարցի շուրջ՝ կարող ենք արձանագրել, որ.

1. Նոյեմբերի 4-ին Օսմանյան կայսրության օրենսդիր մարմինը, չեղարկելով իր կողմից երբևէ չհաստատված երիտթուրքական կառավարության ընդունած և սպորի-նաբար գործադրած 1915 թ.՝ մայիսի 27-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը, որը հանցավոր վարչակարգի համար «իրավական հիմք» դարձավ հայերի զանգվածային բռնազաղթն ու բնաջնջումն իրականացնելու համար, փաստորեն, ճանաչեց երիտթուրքական կառավարության իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը,

2. Թեև թուրքական նոր կառավարության անդամները խորհրդարանի դահլիճում նույնպես հրապարակայնորեն ընդունեցին Հայոց ցեղասպանության փաստը, այդուհանդերձ, նոյեմբերի 18-ին այդ հարցի շուրջ ծավալված բուռն քննարկումները որոշակիորեն ազդեցին նոր կառավարությանը վստահության քվե չտալու՝ օսմանյան խորհրդարանի որոշման վրա,

3. Պատերազմի ընթացքում նախկին՝ երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծվեց խորհրդարանական Հինգերորդ հանձնաժողովը, որը թեև խորհրդարանի լուծարման պատճառով երկար չգործեց, սակայն արտաքին ազդակների, մասնավորապես՝ հաղթանակած տերությունների կողմից միջազգային աստյան ստեղծելու մտադրության հետ մեկտեղ, իր ժամանակահատվածում, նախ, կառավարության հետաքննիչ հանձնաժողովի, այնուհետև՝ ռազմական աստյանների ստեղծման համար, որոնց վճիռներով երիտթուրքական կառավարության անդամները, ի թիվս այլ հանցագործությունների, դատապարտվեցին նաև Հայոց ցեղասպանությունը կազմակերպելու և իրականացնելու մեղադրանքներով:

**ПРИЗНАНИЕ И ОСУЖДЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ОСМАНСКОМ ПАРЛАМЕНТЕ
(НОЯБРЬ-ДЕКАБРЬ 1918 Г.)**

МАРУКЯН А. Ц.

Резюме

В преддверье 101-ой годовщины геноцида армян внимание средств массовой информации было сосредоточено на выступлении армянского депутата в парламенте Турции Гаро Пайлана, представляющего прокурдскую Демократическую партию народов в Великом Национальном Собрании Турции. В своей речи (21 апреля) он выступил с критикой турецкой государственной политики отрицания геноцида армян и от имени своей партии предложил создать специальную парламентскую комиссию по расследованию обстоятельств смерти армянских депутатов османского парламента, ставших жертвами этого преступления в отношении армянского народа. В конце выступления им были перечислены имена армянских депутатов османского парламента и показаны их фотографии. Реакция турецких депутатов была более чем предсказуема. Вместо обсуждения предложения Пайлана они попытались учинить над ним физическую расправу прямо в парламенте. В противовес турецким тезисам отрицания геноцида армян Пайлан в качестве контраргументов приводил те доводы, которые в своих осуждающих речах использовали армянские депутаты на заседаниях османского парламента в ноябре-декабре 1918 года.

**RECOGNITION AND CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE
OTTOMAN PARLIAMENT (NOVEMBER-DECEMBER 1918)**

A. MARUKYAN

Abstract

On the threshold of the 101st anniversary of the Armenian Genocide attention of Mass Media has been concentrated on the speech of the Armenian deputy in the parliament of Turkey about the Genocide of Armenians. Garo Paylan representing pro-Kurdish Democratic party of people in the Grand National Assembly of Turkey in his speech on April 21 has scarified Turkish state policy of denial, has presented implementation of the Armenian Genocide and on behalf of his party has suggested to create the special parliamentary commission on investigation of circumstances of death of the Armenian deputies of Ottoman parliament who have become the victims of the Armenian Genocide. At the end of the speech he has presented the names of the Armenian deputies of Ottoman parliament and has shown theirs photos. Reaction of the Turkish deputies making the majority was more than predictable. Instead of discussion of the proposal of Paylan, they have tried to punish him physically directly in parliament. It is characteristic, however, that on the Turkish denial theses of the Armenian Genocide Paylan gave those arguments which in the condemning speeches were voiced by the Armenian deputies in their speeches in Ottoman parliament in November-December 1918 as counterarguments.

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՁ

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Էգեյան ծովի մերձափնյա գաղթօջախների առաջացումը կապվում է հայրենի երկրից հարկադրաբար գաղթելու իրողության հետ: Հայության զանգվածային տեղաշարժերի նոր փուլ սկսվեց Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375), երբ ժողովրդի բազմությունները ոչ միայն գերեվարվեցին, այլև տեղահանվեցին կամ գաղթեցին Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ երկրներ: Այս ժամանակաշրջանում և հետագայում նոր գաղթավայրեր ստեղծվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում, Պարսկաստանում, Սև և Միջերկրական ծովերի առափնյա տարածքներում, Թուրքիայի փոքրասիական շրջաններում՝ ընդհուպ մինչև դրանց արևմտյան մասը և այլուր:

Էգեյանի ծովամերձ շրջանների (Զմյուռնիա, Դենիզլի, Մանի սա, Այդրն, Մենեմեն, Քուշադա, Քրքադաչ, Սյոքե, Նազիլլի և այլն) հայ գաղթօջախների կազմավորման մասին փաստական վկայությունները առ այսօր, կցկտուր բացառություններով, սկսվում են XVI դարից: Զմյուռնիայի վաղեմի հայկական գերեզմանատնից ցայժմ հայտնի ամենահին դամբանագրերը թվագրված են 1551 և 1567 թթ.¹: Ավելի ուշ՝ 1622 թվականից է ավանդված առ այսօր մեզ հայտնի ձեռագիր հիշատակարանը, որ վկայում է դրան նախորդած ժամանակներում այստեղ հայերի ներկայության մասին²:

Զմյուռնիայում «վաճառականության մեջ հաջողակ» հայերի մասին առաջին տեղեկությունը տրվում է 1261 թ. մարտի 13-ին Միքայել Պալեոլոգ կայսեր (1259-1282) և ջենովացի առևտրականների միջև կնքված դաշնագրի տեքստում (ըստ Բ. Սլարսի): Այս ժամանակաշրջանում Զմյուռնիայում հայ վաճառականներ կային՝ Ջուդայից, Նախիջևանից, Ագուլիսից և Հայաստանի արևելյան այլ շրջաններից՝ ուղղակի կապված լինելով Ջենովայի ու Վենետիկի խոշոր առևտրականության հետ³:

Եթե XIII դարի երկրորդ կեսից հայտնի են Զմյուռնիայում գործող հայ վաճառականներ, ապա նույն դարի վերջերին - XIV դ. առաջին կեսին տեսնում ենք նաև հայ մտավորականի՝ Նիկողայոս Արտավազդ Ռաբդասին, որ քառակուսի արմատ դուրս բերող առաջին մաթեմատիկոսն է, ինչպես նշում է Ն. Ադոնցը: Ն.

¹ Քոսեան Հ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 82:

² Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 6332, էջ 513:

³ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գահիրէ, 1955, էջ 527:

Ադոնցը կարծում է, որ Արտավազըրը (ինչպես և նրան առնչվող մյուս հայերը), պահպանելով իրենց ազգային անունները՝ ցույց են տալիս, որ «նոր են եկել Արևելքից և հնաբնակ չեն Բյուզանդիայում»⁴: Ազգային անունները, ի դեպ, նրանք կարող էին պահպանած լինել նաև հայկական միջավայրի կամ համայնքի (Զմյուռնիայում) առկայության դեպքում ևս: Բոլոր դեպքերում, փաստն այն է, որ Արտավազըրը պահպանել է և հայկական անունը, և իբրև դրա բաղադրիչ՝ իր քաղաքի (չի բացառվում նաև ծննդավայրի) հիշատակումը: Ավելացնենք նաև, որ «վաճառականության մեջ հաջողակ» հայերը կարող էին լինել ոչ միայն երթևեկ վաճառականներ, այլև բուն զմյուռնացի հայ վաճառականներ, այսինքն, տեղի հայ համայնքի անդամներ:

Գաղթօջախի գոյացման կամ նոր գաղթերով համալրման վերաբերյալ ուշագրավ հիմք է Մ. Չամչյանի աշխատության այն հատվածը, որն առնչվում է Կիլիկիայի հայոց թագավորության անկման հետևանքներին: Ժողովրդի մի մասը ցրվում է երկրով մեկ և ամրանում անառիկ բերդերում, լեռնային բնակավայրերում և այլուր, «և բազումք ևս վաղագոյն աճապարեալ խոյս ետուն յաշխարհս հեռաւոր՝ ի կողմանս Փոքուն և Մեծին Հայոց և երկիրս Վրաց և Աղուանից և ի սահմանս Յունաց և Պարսից ևս և ի կղզիս և ցրուեցան յայլ և այլ թագաւորութիւնս քրիստոնէից, որոց թիւն եղև ըստ ոմանց իբր երեսուն հազար անձանց և ըստ այլոց՝ աւելի յոյժ», - գրում է Մ. Չամչյանը⁵:

Դեպի Զմյուռնիա գաղթի հավանականությունը՝ դեռևս XI դ. սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանում, թերևս, փոքր-ինչ ավելի հուսադրող, գտնում ենք Հ. Մանանդյանի աշխատության մեջ: «Շատ հավանական է, որ Ալփասլանի հարձակումներից հետո Փոքր Ասիա էին գաղթել նաև հայության ուրիշ հատվածներ Հայաստանի հյուսիսային և արևելյան կողմերից: Հայ ազնվականության ու ռազմական ուժի մասսայական այս գաղթը Փոքր Ասիա... որ պարբերաբար շարունակվել էր 11-րդ դ. առաջին քառորդից սկսած՝ հիմք ծառայեց այստեղ հայկական նոր իշխանության ծագման Կիլիկիայի լեռներում», - գրում է նա⁶:

Հավանականությունը՝ հավանականություն, բայց իրողությունն այն է, որ տակավին չլուծված է մնում Զմյուռնիայի գաղթօջախի սկզբնավորման խնդիրը: Հետազոտողները միասնական տեսակետ չունեն այս հարցում: Գաղթօջախի պատմության առաջին ուսումնասիրող Բ. Մլարսը, իր ֆրանսերեն աշխատության մեջ (*Slars B. E'tude sur Smyrne, Paris, 1868*) կարծում է, որ հայերը Զմյուռնիա են գաղթել

⁴ Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 536:

⁵ Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 359:

⁶ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Ե., 1952, էջ 62-63:

Ռուբինյանների անկումից՝ 1375 թ. հետո, երբ «իբր երեսուն հազար ընտանիք անցան Կիպրոս, Ռոդոս, Կրետե և ուսկից տարածուեցան նաև Իտալիա»⁷: Կարելի է կարծել, որ Բ. Մլարսի աղբյուրն այս դեպքում Մ. Չամչյանն է, որը, ինչպես տեսանք վերը, նշում էր Կիլիկիայից «երեսուն հազար անձանց՝ գաղթելու մասին: Այս հեղինակը վկայակոչում է նաև, որպես հնագույն հիշողությունը կրողների, հայ «ալևորներին և ուսումնականներին», գլխավորապես Մ. Պալապանյանին (ուսյալ քահանա, մանկավարժ) և Ղ. Պալապարյանին («Արշալոյս Արարատեան» լրագրի խմբագիրը), որոնք նրան տեղեկություններ տրամադրելիս գաղթօջախի սկիզբն են համարել 1375-ին հետևող տարիները⁸: «Այս առաջին գաղթի ժամանակ, - հարում է Բ. Մլարսը, - Հայք Չմիւռնիա հաստատուելով՝ կառուցին մատուռ մը, որուն կից ունէին գերեզմանոց մը: Դեռ այս օրս կը տեսնուին սոյն մատրան վայրն և գերեզմանոցին ցանկերը (ցանկապատերը-Խ.Ա.)՝ տաճկաց թաղին ճիշտ քովը: Հայոց եկեղեցւոյն (իմա՛ այժմյան-Խ. Ա.) մեծ գերեզմանոցին մէջ տակաւին այս օրս կայ գերեզմանաքար մը վերոյիջեալ գերեզմանոցէն փոխադրուած, որուն վրայ կը կարդացուի թուական մը 215 տարուան (իմա՛ XVII դ. երկրորդ քառորդի-Խ.Ա.): Ալևոր Հայք կըսեն, թէ շատ լաւ կը յիշեն, որ վերոյիջեալ գերեզմանոցին մէջ աւերակ դառնալէն յառաջ տեսած են շիրիմներ, որոց թուականը շատ աւելի հնագոյն եղած է: Այս ամէնը նմանապէս իմ կարծիքիս հաստատութեան կը նպաստեն և կրկնել կուտան, թէ Հայոց Չմիւռնիա գաղթելը ԺԴ-երորդ դարու մէջ եղած է»⁹:

Չմիւռնահայ գաղթօջախի հեղինակավոր հետազոտողը՝ Հ. Քոսյանը, իր աշխատության մեջ¹⁰ ընդունում է Մլարսի տեսակետը՝ իր կողմից ավելացնելով որոշ մանրամասներ. «Գաղթականութեան համար ըսուածները (Մլարսի-Խ.Ա.) կը հաստատենք մենք ալ: Հայք այլևայլ դարերու մէջ և զանազան կողմերէ Չմիւռնիա դիմած են: Առաջին անգամ ամենայն հավանականութեամբ Ռուբինեանց թագաւորութեան անկումէն ետքն ոտք կոխած են հոս»: Նա հավելում է, որ 200 տարվա հնություն ունեցող գերեզմանաքարերի կարելի է հանդիպել և ավելին. «Աւելի հնագոյն՝ 300 տարուան և աւելի թուական ունեցող կրկին գերեզմանաքարեր կը գտնուին, որք նախկին գերեզմանոցէն փոխադրուած են այժմեան եկեղեցւոյ պարտեզը»¹¹: Հիրավի, Հ. Քոսյանն իր գրքում մեջբերել է իր նշած հնագույն Չմիւռնիայում

⁷ Բ. Մլարսի աշխատությունը մենք ձեռքի տակ չունենք, ուստի նրա տեսակետը վերարտադրում ենք Հ. Քոսյանի «Հայք ի Չմիւռնիա և ի շրջակայս» գրքի հանգամանալի շարադրանքի հիման վրա:

⁸ Տե՛ս Քոսեան ԅ., նշվ. աշխ., էջ 40:

⁹ Նույն տեղում, էջ 32:

¹⁰ Քոսեան ԅ., Հայք ի Չմիւռնիա և ի շրջակայս, հ. Ա-Բ, Վիեննա, 1899:

¹¹ Նույն տեղում, էջ 38:

նահատակված Սարգսի և Գասպարի դամբանականները, որոնք թվագրված են համապատասխանաբար 1551 և 1567 թվականներով¹²:

Մրանք անհերքելի փաստեր են, որ հաստատում են XVI դ. երկրորդ կեսից առաջ հայկական գերեզմանատան, ուրեմն և համայնքի գոյությունը Զմյուռնիայում: Մնում է միայն ավելացնել, որ աչքի առջև ունենալով իր իսկ հղած այս փաստերը, Հ. Քոսյանը, այնուամենայնիվ, հետևում է Սլարսին և, ինչպես տեսանք վերը, եզրակացնում, որ «ամենայն հաւանականութեամբ» հայերն այստեղ հայտնվել են կիլիկյան թագավորության անկումից հետո:

Փոքրասիական շրջաններում հայ գաղթականության ներկայության հավանականությունը ավելի վաղ շրջանի է վերագրում Ղ. Ալիշանը՝ այդ հասցնելով մինչև XIV դ. երկրորդ կես և XV դ. սկզբներ: «Արդէն Հայք Կիլիկիոյ իրենց տէրութեան վերջի տարիներուն սկսեր էին սփռիլ ինչուան ի Յունաստան և ի կղզիս ծովամիջի Փոքր Ասիոյ...», - գրում է նա¹³:

Զմյուռնահայ համայնքի սկզբնավորման հարցին քանիցս անդրադարձել է ականավոր պատմաբան Ա. Ալպոյաճյանը: Նա հակադրվում է Հ. Քոսյանին՝ պնդելով, որ գաղթօջախի սկիզբը պետք է համարել ոչ թե XIV դարը, այլ դրանից 200-300 տարի և անգամ ավելի առաջ՝ փաստարկելով Բ. Սլարսի և ապա Հ. Քոսյանի վկայակոչած՝ Միքայել Պալեոլոգի և ջենովացիների 1261 թ. դաշնագրում հայերի մասին հիշատակությունը: Կնշանակի, կարծում է նա, որ այդքան կարևորություն ստացած Իզմիրի հայերը, «արդէն անկէ բաւական առաջ ալ հոն հաստատուած էին: Վաւերական աղբիւրներ, յիշատակարաններ թէեւ կը պակսին, բայց գերեզմանաքարեր եւ իզմիրցիներու խօսած լեզուին ինչ-ինչ երեւոյթները ցոյց կուտան, թէ Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ եւ կամ աւելի առաջ», - գրում է նա¹⁴: Նման եզրակացության համար պակասում են ոչ միայն վավերական աղբյուրներն ու հիշատակարանները, այլև գերեզմանաքարերը, որպիսիք անհայտ են. վերը ցույց տրվեց, որ գաղթօջախում գտնված ամենահին գերեզմանաքարը վերաբերում է 1551 թվականին: Մյուս կողմից, դրան նախորդող փաստական նյութի պակասը դեռևս չի բացառում Զմյուռնիայում և շրջակայքում հայկական գաղթօջախի գոյությունը, որ կարող ենք ընդունել համոզիչ մտահանգումների շնորհիվ: Ինչ վերաբերում է զմյուռնահայ բարբառի «ինչ-ինչ երեւոյթներին», ապա այստեղ ևս հնարավոր չէ հենվել XI կամ XII դդ. որևէ աղբյուրի

¹² Նույն տեղում, էջ 82-83:

¹³ Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարբնջութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ-Դ և Ի ԺԵ-Զ դարու, Վենետիկ, 1896, էջ 178:

¹⁴ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն Հայոց Իզմիրի (Բիւզանդիոն, 1908, ապր. 10/23):

վրա, այդպիսին չկա, կան միայն շատ ավելի ուշ շրջանի գվյունահայ բարբառի տվյալներ, բայց դրանք ավելի շուտ կարող են դիտվել որպես հետագա դարերի գաղթերի հետևանք: Պատկանելով բարբառների կը ճյուղին և «չափազանց նման» լինելով Կ. Պոլսի ու հատկապես Եվրոկիայի բարբառներին¹⁵, գվյունահայ բարբառը, հիրավի, արևելահայերենի տարրեր կարող էր ներառել միայն XVII դ. առաջին տասնամյակներին, երբ բազմաթիվ արևելահայեր գաղթեցին Չմյունիա և հատկապես շրջակայք:

Հավանականության սահմաններում և ընդհանուր պատմագիտական վերլուծությունների մեջ են շրջանառում նաև Ա. Ալպոյաճյանի հետագայի դիտողությունները դեպի Չմյունիա գաղթի մասին՝ Կիլիկիայի թագավորության անկումից առաջ՝ XIII դ.: Վկայակոչելով Վարդան պատմագրին՝ նա գրում է, որ հայերը, խուսափելով մոնղոլական հեղեղից, դիմել են Ռումի սուլթանների երկիր. «Այս գաղթականներեն հաւանական է, որ մաս մը խուճապահար փախուստի ընթացքին առաջացած է մինչև Փոքր Ասիոյ արեւմտեան ծայրը, Հոնիականի եզերքը՝ Չմիւնիա, որուն հայ գաղութին հաստատութիւնը կը կարծուի՝ ժամանակակից է Չարմաղան թաթար զօրապետին Հայաստանի նուաճման թուականին, այսինքն 1236-ին»¹⁶:

Ա. Ալպոյաճյանի դիտողությունները՝ գաղթօջախի սկզբնավորման ժամանակի և սրան առնչվող հանգամանքների հարցում, ամբողջովին համընկնում են իրենից՝ Ա. Ալպոյաճյանից վեց տարի առաջ Կ. Պոլսի «Արևելք» լրագրում Ատոմ ստորագրությամբ հանդես եկած հեղինակի հրապարակումներում առկա դրույթներին: Այսպես, Ատոմը գրում է. «երբ 1261-ին (նկատի ունի Մ. Պալեոլոգի և ջենովացիների միջև կնքված պայմանագրի տարին-Ա. Խ.) պաշտօնապես այնքան գովեստներով կը խօսուի Բզմիրի վրայ, անշուշտ, շատ տարիներ առաջ քաղաքը գտնուած է այդ նախանձելի կացութեան մէջ: Անկարելի է, որ այդ վիճակը ստացած ըլլա անակնկալ կերպով, 1261 մարտ 13-ին, այլ աւելի առաջ երթալով եւ կոթնելով մեր առաջ բերած ապացոյցներուն, կրնանք Բզմիրի գաղթականութեան ծագումը ԺԴ դարէ աւելի առաջ թուականներու վերագրել, որով իրաւամբ կրնանք հասնիլ ԺԱ կամ ԺԲ դարուն եւ կամ աւելի առաջ»¹⁷: Իր հերթին Ա. Ալպոյաճյանը գրում է. «Բզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ եւ կամ աւելի առաջ»¹⁸: Ատոմը գրում է. «Բզմիրի հայը գլխաւորաբար արեւելեան գաւառներէ

¹⁵ Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն: Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 6, Մոսկվա-Նախիջևան, 1911, էջ 239:

¹⁶ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գահիրէ, 1955, էջ 544:

¹⁷ Ատոմ, Բզմիրի Մ. Լուսաւորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը (Արեւելք, 1902, յունուար 31/փետր. 13):

¹⁸ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Բզմիրի (Բիւզանդիոն, 1908, ապր. 10/23):

եկած ըլլալնին կը հաստատեն ոչ միայն շատ մը գերեզմանաքարեր, այլև նոյն իսկ ցարդ խոսուած լեզուին մէջ ինչ-ինչ շատ հետաքրքրական երեւոյթներ»¹⁹: Ա. Ալպոյաճյանը գրում է. «գերեզմանաքարեր եւ իզմիրցիներու խօսած ինչ-ինչ երեւոյթներ ցոյց կուտան, թէ Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են»²⁰:

Այն տեսակետը, որ առաջ է քաշել Ատոմը 1902-ի «Արևելքում», կրկնվում և զարգացվում է 1908-ի «Բյուզանդիոնում»՝ Ա. Ալպոյաճյանի կողմից: Կարելի է ենթադրել, որ Ատոմ ծածկանունով հանդես եկած հեղինակը հենց ինքը՝ Ա. Ալպոյաճյանն է²¹: Այստեղ ավելացնենք, որ Ա. Ալպոյաճյանը մի տեղ թոուցիկ, բայց և «ԺԴ դարուն գաղթականության մը եկած ըլլալը (իմա՝ Զմիւռնիայի հայ գաղթականության սկիզբը-Խ.Ա.) կը հերքէ՝ բանավոր առարկութեամբ»²²:

Գաղթօջախի գոյացումը ոչ այնքան որոշակիորեն, շատ ավելի վաղ ժամանակների է վերագրում Գ. Օ. Գալուստյանը: Նա, փաստորեն, միանում է զմիւռնացի հրապարակախոս Թ. Ճերմակյանի տեսակետին, որի համաձայն, գաղթօջախը հաստատվել է XIV դ. շատ ավելի վաղ, XII-XIII դդ. կամ անգամ ավելի հին ժամանակներում²³: Նա արժանահավատ չի համարում, նախ, Կիլիկիայից հայերի գաղթը 1370-1380-ական թթ.՝ փաստարկելով, որ այս տասնամյակներին իրենք՝ քաղաքին տիրող Հռոդոսի ասպետները, հազիվհազ էին դիմակայում սելջուկների ճնշումներին, և որ գաղթականների աչքին այդ քաղաքն արդեն իսկ հուսալի ապաստան չէր կարող դիտվել: Այնուհետև, կարծում է նա, հայերն այստեղ չէին կարող գաղթել Կիլիկիայից, որովհետև զմիւռնահայ համայնքը երբևէ կապված չի եղել Կիլիկիայի աթոռի հետ, և այդ վկայող ոչ մի գերեզմանաքար կամ այլ վկայություն չկա: Մինչդեռ, շարունակում է նա, հայտնի են այդ գաղթօջախի վաղեմի սերտ կապերն ու հարաբերությունները Էջմիածնի հետ, քանի որ հնագույն տապանաքարերը «Արարատայ նահանգի անուններով կը հաստատեն, թէ զմիւռնահայութիւնը կիլիկեան ծագումով ոչինչ ունեցած է իր մէջ»²⁴:

Հասկանալի է գաղթօջախի պատմությունը շատ ավելի հետ տանելու՝ Գ. Գալուստյանի մոտեցումը: Մակայն նրա փաստարկներն անվրեպ չեն: 1370-1380-

¹⁹ Ատոմ, նշվ. աշխ.:

²⁰ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ.:

²¹ Այս անվամբ մեծավաստակ պատմաբանի ստորագրությանը չի հիշատակում ո՛չ Գ. Ստեփանյանը իր Կենսագրական բառարանում (երեք հատորով, հ. I, Ե., 1973, էջ 55-56) և ո՛չ էլ Բ. Հովակիմյանը Հայոց ծածկանունների բառարանում (Ե., 2005):

²² Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ.:

²³ Գալուստեան Գ. Օ., Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը: Յունահայ տարեգիրք, Աթէնք, 1928, էջ 279:

²⁴ Նույն տեղում, էջ 277-278:

ական թթ. Կիլիկիայից հայերի գաղթը ժխտելիս նա անտեսում է այն, որ Հռոդոսի ասպետները, մինչև Թիմուրի կողմից Զմյուռնիան գրավելը, հաջողությամբ պայքարում էին Այդրնի էմիրության դեմ՝ սատարվելով պապի և Վենետիկի կողմից: Այս պայմաններում հնարավոր էր հայերի գաղթը ասպետների կողմից վերահսկվող տարածքներ, թեև դժվար է հաստատապես պնդել Բ. Սլարսի և Հ. Քոսյանի վարկածը, քստ որի, Կիլիկիայից հայերը գաղթել են Կիլիկիայի անկումից հետո: Ինչ վերաբերում է «Արարատյան նահանգի» տեղանուններով և անձնանուններով հայտնի տապանաքարերին, ապա դրանք պատկանում են Շահաբասի ժամանակվա գաղթականներին ու նրանց սերունդներին և համեմատելի չեն XIV դ. վերջին քառորդի գաղթի հետ: Եվ վերջապես, զմյուռնահայերը, եթե ընդունենք, որ գաղթել էին հենց այդ ժամանակ, չէին կարող առնչվել Էջմիածնի հետ, որովհետև կաթողիկոսական աթոռն այստեղ պետք է վերադառնար հաջորդ դարում միայն՝ 1441 թ.:

Գաղթօջախի սկզբնավորման խնդիրը քննարկել է Հ. Աճառյանը՝ կարելի է ասել, բավական ուշ հրատարակված իր աշխատության մեջ²⁵: Նա, իրոք, վստահելի տեղեկություն է տալիս Էգեյանի այս տարածաշրջանի հայ գաղթականության մասին, որ վերաբերում է XII դարին: Հ. Աճառյանը գրում է, որ 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովում, որ գումարվել էր Գրիգոր կաթողիկոսի հրավերով՝ հույների հետ միության խնդիրը քննարկելու համար, «ներկայ էր նաև Սարգիս եպիսկոպոս Լաւոտիկէի, որ հիմնական Տենիզլիի (վրիպակ է, պետք է լինի Տենիզլի-Ա. Խ.) կողմերը կիյնա, Լաւոտիկէի մէջ կը ցուցնէ, թէ նոյն ժամանակ բաւական մեծ հայ գաղթականութիւն կար հոն²⁶»:

Այս փաստը հիմնավորված նորություն է Էգեյանի շրջանի հայ գաղթականության պատմության մեջ: Եթե Դենիզլիի կողմերում XII դ. գործել է հայ եպիսկոպոս, ուրեմն, առնվազն գործ ունենք Հայ առաքելական եկեղեցու ոլորտում գտնվող տարածքի՝ ասել կուզի՝ հայկական մի համախումբ հանրության հետ: Նկատենք, որ XIII դ. սկզբին սելջուկները Դենիզլին զիջել էին բյուզանդացիներին²⁷, որ ենթադրում է քրիստոնեական տարրի, այդ թվում և զգալի թվով հայերի բնակությունն այստեղ, գոնե վերջիններիս հոգևոր գլխի նստավայր լինելու տեսակետից ևս:

²⁵ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002:

²⁶ Նույն տեղում, էջ 549-550: Հռոմկլայի ժողովը գումարվել է 1179 թ. Զատիկին և դրան մասնակից հոգևորականների մեջ էր Սարգիս Լավոդիկէի եպիսկոպոսը, «որով Կիլիկիոյ հետ մօտ յարաբերութիւններ ունեցող եպիսկոպոսներ կըլլան 15» (Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 1718): Ավելի քան հավանական է, որ Զմյուռնիայի շրջակայքը, այս դեպքում՝ Դենիզլին, կամ որ նույնն է՝ Էգեյանի տարածքների հայ գաղթականության բնակավայրերը ենթարկված լինեին Կիլիկիայի աթոռին

²⁷ Տե՛ս Гордлевский Б. А. Избр. соч., т. 1, М., 1960, с. 53.

Գաղթօջախի հաստատման սկիզբը XI-XII դարերին է վերագրվում ՀՀ ԳԱ հրատարակած Հայ ժողովրդի պատմության համապատասխան հատորում՝ որևէ նոր բան չավելացնելով վերը հիշված հեղինակների տեսակետներին²⁸: Այդ հիմնահարցը ավանդականորեն՝ ըստ Բ. Մլարսի և Հ. Քոսյանի է դիտարկվում նաև ՀՀ ԳԱԱ հետազոտարկություններում, այդ թվում և տողերիս հեղինակի շարադրանքներում՝ գաղթօջախի հաստատման սկիզբը տեղադրելով Կիլիկիայի հայկական թագավորության անկմանը հետևող ժամանակաշրջանը (1375-ից հետո-1380-ական թթ.)²⁹:

Հանրագումարի բերելով գնումնահայ գաղթօջախի պատմության առաջացման վերաբերյալ տարաբնույթ կարծիքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

Զմյուռնահայ գաղթօջախի սկզբնավորման ժամանակի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են իրարամերժ կարծիքներ, որոնք ենթադրում են XI-XIV դդ. միջև ընկած ժամանակաշրջանները: Որոշ բացառություններով, այդ կարծիքները հենվում են ոչ թե նյութական տվյալների (հիշատակարաններ, վիմագիր արձանագրություններ, որպիսիք հայտնի են միայն XVI դ. երկրորդ կեսից), այլ մտահայեցողական, տեսական դատողությունների վրա: Զմյուռնիայում հայ գաղթօջախին վերաբերող ամենահին նյութական վկայությունները (դամբանագրեր) ավանդված են 1551 և 1567 թվականներից:

Այսուհանդերձ, Էգեյանի մերձափնյա տարածքների և Զմյուռնիայի հայ գաղթօջախների ավելի վաղ գոյության մասին պահպանվել են թեկուզ կցկտուր, բայց անհերքելի տվյալներ, որպիսիք են Զմյուռնիայի հայ վաճառականների հիշատակումը 1261 թ. հույն-ջենովական պայմանագրում և Լավոդիկեի (Դենիզլիի շրջան) Սարգիս եպիսկոպոսի գործառույթը 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովում, որ վկայում է Էգեյանի այդ տարածաշրջանում հայ համայնքի առկայության մասին:

XII-XIII դդ. հայ գաղթօջախներ են գոյացել կամ գործել ոչ միայն Զմյուռնիայում, այլև դրան կից փոքրասիական շրջաններում, ընդ որում, վերջիններս, զոնե մեզ հայտնի տվյալներով, վկայված են ավելի վաղ, քան բուն Զմյուռնիայի գաղթօջախը: Հետևաբար, Էգեյանի մերձակայքում հայ գաղթօջախների առաջացումը (կամ արդեն գոյություն ունենալը) կարելի է համարել ոչ ուշ, քան XII դարը, բուն Զմյուռնիայի գաղթօջախինը՝ XIII դարը:

²⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 309 (հեղ.՝ Ղազարյան Հ., Խառատյան Ա.):

²⁹ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Ե., 2003, էջ 178: Հայոց պատմություն, հ. 2, Գիրք երկրորդ, Ե., 2014, էջ 703:

О ФОРМИРОВАНИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ СМИРНЫ**ХАРАТЯН А. А.**

Резюме

О более раннем формировании армянских колоний на прибрежных территориях Эгейского моря и в Смирне сохранились хоть и скудные, но при этом неоспоримые данные, каковыми являются упоминание армянских купцов Смирны в греческо-генуэзском договоре 1261 г. и фактор участия лаодикейского (район Денизли) епископа Саргиса на церковном соборе Ромклы в 1179 г., что свидетельствует о существовании в XII в. (либо до этого) армянской колонии в этой части Эгейского побережья.

В XII-XIII вв. армянские колонии формировались не только в Смирне, но и в сопредельных ей районах Малой Азии. Причем последние, по известным нам сведениям, были засвидетельствованы гораздо раньше, нежели смирнинская колония.

Следовательно, возникновение (либо существование) армянских колоний на прибрежных территориях Эгейского моря можно датировать не позднее, чем XII в., а смирнинской колонии – XIII веком.

ON THE FORMATION OF THE ARMENIAN COLONY OF SMYRNA**A. KHARATYAN**

Abstract

The earlier formation of the Armenian colonies on the coastal territories of the Aegean Sea and in Smyrna wound up at least meager, but indisputable data, such as the mention of Smyrna's Armenian merchants in the Greek-Genoese treaty of 1261 and the factor of participation of the Laodicean (Denizli district) Bishop Sargis at the church cathedral of Hromkla in 1179, which indicates the existence in the XII century (or before) the Armenian colony in this part of the Aegean coast.

In the XII-XIII centuries Armenian colonies were formed not only in Smyrna, but also in the adjacent areas of Asia Minor. And the latter, according to the information we know, were witnessed much earlier than the Smyrna colony.

Consequently, the emergence (or existence) of the Armenian colonies on the coastal territories of the Aegean Sea can be dated no later than the 12th century, and the Smyrna colony by the thirteenth century.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1925-1932 ԹԹ.

ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ ՈՒ Կ.

1926 թ. սկզբներից Խորհրդային Հայաստանում կրթական կյանքն աննախադեպ զարգացում է ապրում: Զարգացման հիմնական ուղղություններն էին՝ 1) անգրագիտության վերացում, 2) պարտադիր տարրական կրթություն և ապա անցում յոթնամյա կրթության, 3) տեխնիկական կրթության կազմակերպում, 4) բարձրագույն կրթության կատարելագործում:

Անգրագիտության վերացման 1924-30 թթ. շարժընթացը պարզ երևում է մի վավերաթղթից, որտեղ նաև մատնանշված են այդ ուղղությամբ տարված և տարվելիք աշխատանքների հիմնական ձևերն ու խնդիրները: «Ընդհանուր դիտողություններ» վերնագրված փաստաթղթում նշվում է.

«1. Անգրագիտության վերացման աշխատանքները Խորհրդային հանրապետություններում ստացել են թե քաղաքական և թե կուլտուրական առաջնակարգ նշանակություն: Այդ աշխատանքները հիմնարկային նեղ բնույթից պետք է ընդարձակվեն և դեպի գործը գրավեն Խորհրդային ամբողջ հասարակությունը «Կորչի անգրագիտությունը» ընկերության միջոցով:

2. Մեր այս երկու տարվա աշխատանքների արդյունքն այն է, որ մեր լայն մասսաներն իրենց սկզբնական շրջանին պասսիվ դրությունից դուրս գալով, ցույց են տալիս իրենց անհագ ծարավը դեպի գրագիտությունը: Սրա փայլուն ապացույցն է «Գրագետ» դասագրքի մեծ պահանջը:

3. Քանի որ մեր գյուղացիության հոծ բազմությունն անգրագետ է, և գյուղատնտեսության նոր ձևերի մասին լրագրի կամ գրքի միջոցով հնարավորություն չունի որևէ տեղեկություն ստանալ, այդ պայմաններում մեր գյուղատնտեսության զարգացումն անհնար է դառնում: Անգրագիտության վերացումն ոչ միայն կուլտուրական գործ է, այլ դա միևնույն ժամանակ քաղաքական մեծ խնդիր է:

«Անգրագետը քաղաքականությունից դուրս է» (Լենին): Կրոնական և այլ սնոտիապաշտությունները, նախապաշարումները և զանազան անհիմն լուրերը անգրագիտության արդյունք են¹:

Հիրավի, երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը կյանքի կոչելու պայմաններում կարևոր էր այդ մասին լրատվության կամ ծրագրային դրույթներից տեղեկացվածությունը, որն անհնար էր առանց գրագետ լինելու, երկրորդ, այդ տեղեկացվածությամբ կարելի էր համոզվել, թե որքանով է ճիշտ

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 133, ց. 1, գ. 696, թ. 10:

գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը, և երրորդ, իսկապես, անգրագիտության վերացումն ուներ քաղաքական նշանակություն, առանց գրագետ լինելու անհնար էր պատկերացում կազմել քաղաքականության մասին:

Այնուհետև վավերաթղթից տեղեկանում ենք այս ուղղությամբ աշխատանքների դժվարությունները հաղթահարելու խնդիրների մասին: Այդ խնդիրներից կարևորվում է կոմկուսի, կոմերիտմիության բջիջների, գյուղխորհրդի և արհմիությունների անդամների լայն աջակցությունը: Քանի որ ֆինանսների սղությունը թույլ չէր տալիս Հայաստանում լիկկայանների լայն ցանց բացել, խնդիրը դրվում էր «Կորչի անգրագիտությունը» ընկերության խրճիթ-ընթերցարանների վրա: Այն գյուղերում, որտեղ չկային խրճիթ-ընթերցարաններ, ընկերության բջիջը պետք է գործեր դպրոցին կից՝ իրականացնելու համար իր առաքելությունը: Առաջ էր քաշվում «Ամեն գրագետ պետք սովորեցնի անգրագետներին» լոզունգը: Անգրագիտության վերացման ուղղությամբ աշխատանքները պետք է ուժեղացվեին նաև ազգային փոքրամասնությունների մեջ այն ուսուցիչների միջոցով, որոնք տիրապետում էին վերջիններիս լեզուներին: Դրվում էր նաև երիտասարդ կանանց անգրագիտության վերացման խնդիրը, իսկ գորակոչիկները մինչև գորակոչը պետք է դառնային գրագետ²:

Համոզվելու համար, թե անգրագիտության վերացման աշխատանքներն ինչ արդյունավետությամբ են ընթացել, մեջբերենք հետևյալ թվերը³.

Համահայաստանյան մասշտ. անգրագետների թիվը (15-40 տարեկան)	Ուսումն. տարին	Անգրագետ. տոկոսը վերաց.
207.871	1926-27	45.000
	1927-28	45.000
	1928-29	60.000
1929-30	12.571	6

Ակներն է, անգրագետների թիվը մինչև 1930 թ. բավական մեծ չափերով նվազել է:

Անգրագիտության վերացման առումով խրճիթ-ընթերցարանների աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար դրվում են հետևյալ խնդիրները.

Առաջին. դրանց կից ստեղծել վարչություններ, որոնց մեջ պետք է մտնեին վարիչը, գյուղի ուսուցիչը, կոմերիտմիության և կոմբջիջների ներկայացուցիչները, ինչպես նաև առկայության պարագայում՝ գյուղատնտեսն ու բժիշկը:

² Նույն տեղում, թ. 10 և շրջերես:

³ Նույն տեղում:

Երկրորդ. խրճիթ-ընթերցարանի վարչությունը պետք է հանդիսանա նաև լուսավորական բոլոր աշխատանքների հանձնաժողովը և պատասխանատուն:

Երրորդ. վարչությունը միաժամանակ քաղաքավարական աշխատանքների հանձնաժողովն էր, իսկ վարիչը՝ շրջանային քաղաքահրահանգիչը⁴:

Ձերժ մնալով այս կազմակերպություններին տրված այլ հրահանգների մանրամասներից՝ շեշտենք միայն, որ խրճիթ-ընթերցարանները բավական դրական դեր են ունեցել գյուղում կամ գավառներում, ինչպես նաև Երևանում անգրագիտության վերացման գործում: Դրանում ավելի ենք համոզվում, երբ կարդում ենք ԿԱ-ի («Կորչի անգրագիտությունը») կենտրոնական խորհրդի թեզիսներն ընկերության առաջին համագումարի համար՝ կազմված 1929 թ. օգոստոսին: Թեզիսների 3-րդ կետում մասնավորապես ասված է.

«1928-29 թթ. կուլտարշավը կոմսոմոլի ղեկավարությամբ անգրագիտության վերացման գործում բեկում առաջ բերեց: Ունեցանք մի շարք նվաճումներ: Ընդգրկեցինք ավելի մեծ թվով սովորողների: Աշխատանքները դուրս բերվեցին հիմնարկային վիճակից, ապարատային մեթոդին շատ շրջաններում համարյա վերջ դրվեց: ԿԱ-ն «Կորչի Անգրագիտությունը» ընկերությունը որոշ չափով մասսայականացավ: Աշխատանքի տեմպը որոշ չափով ուժեղացավ: Սակայն լայն մասսան դեռ թույլ չափով ընդգրկվեց գործի մեջ: Աշխատանքները գյուղում և ազգային փոքրամասնության մեջ թույլ ընթացան. բացվեցին 1100-ից ավելի գրագետների և կիս. (կիսագրագետների-Ռ.Մ.) դպրոցներ: Ընդգրկվեց մոտ 32,000 հոգի: Առ 15 դեկտեմբերի եղած (1928 թ.-Ռ.Մ.) Կենտվիճվարի տվյալներով 574 դպրոցում կուլտարշավի գծով՝ ԿԱ-ն և այլն սովորում էին 16276 հոգի: 800 ուսուցիչներից 638-ը ձրի էին պարապում: Ուրեմն 17-18 հազարի փոխարեն, որը սովորում էր մինչև օրս, 1928-1929 թթ. սովորում էին 100 տոկոսով ավելի- 32,000)»⁵:

Անգրագիտության վերացման կատարված աշխատանքները տալիս էին դրական արդյունքներ:

Թեզիսներում մի հետաքրքիր փաստի ենք հանդիպում՝ 1829-30 թթ. ուս. տարում նախատեսվում է գրագիտություն սովորեցնել 30 հազար հոգու, որը կազմում է անգրագետների ընդհանուր թվի 50 տոկոսը, իսկ այդ թիվը կազմել է 60 հազար⁶:

Ընդհանուր առմամբ, 1921-30 թթ. ընթացքում գրագետ են դառնում «ավելի քան 200 հազ. բանվորներ և մեծահասակ բնակիչներ»⁷:

Իսկ արդեն 1931-32 թթ. ուս. տարիների համար 1931 թ. օգոստոսի 3-ի ՀՄԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարների սովետի համատեղ

⁴ Նույն տեղում, թ. 14:

⁵ Նույն տեղում, ֆ. 112, ց. 4, գ. 523, թ. 8:

⁶ Նույն տեղում, տե՛ս թ. 9-ի շրջերեսը:

⁷ Մեխքության Վ., Կարապետյան Հ., Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկր. պրակ, 1926-1934, Ե., 1958, էջ 67:

որոշմամբ դրվում է անգրագիտությունը և կիսագրագիտությունը պարտադիր կերպով վերացնելու խնդիրը: Փաստաթղթում նշվում է՝ նկատի ունենալով, որ սոցիալառարարության ներկա փուլում համատարած գրագիտության համար մղվող պայքարը հանդիսանում է ծավալուն «սոցիալիստական հարձակման» կարևորագույն ճակատամասերից մեկը, որ կուլտուրական հեղափոխության այդ կարևորագույն էտապում չնայած անգրագիտության վերացման առումով ձեռք են բերվել զգալի հաջողություններ, բայց դրանք դեռևս չեն համապատասխանում ինդուստրացման պահանջներին և այլն, Հայաստանի Կենտրոնական և Ժողովուրդները որոշում են՝

«1. Անգրագիտության և կիսագրագիտության վերացումը հայտարարել պարտադիր

ա) բոլոր 16-50 տարեկան երկու սեռի անգրագետ և կիսագրագետ անձանց, արդյունաբերական բոլոր տեսակի ձեռնարկությունների և հիմնարկությունների, խորհրդային տնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների աշխատողների ու արհմիության անդամների համար՝ մինչև 1932 թ. հունվարի 1-ը:

բ) Երևան և Լենինական քաղաքներում բնակվող երկու սեռի 16-45 տարեկան աշխատավորների համար, որոնք չեն պատկանում «ա» կետով սահմանված կատեգորիաներից որևէ մեկին՝ մինչև 1932 թ. հունվարի 1-ը:

գ) Բամբակագործական շրջանների 16-45 տարեկան բոլոր անգրագետ և կիսագրագետ կոլտնտեսականների համար՝ մինչև 1933 թ. հունվարի 1-ը:

դ) Մնացած վայրերի բոլոր ազգությունների երկու սեռի 16-40 տարեկան անգրագետների և կիսագրագետների համար՝ մինչև 1933 թ. հունվարի 1-ը»⁸:

Այսպիսով, 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում առհասարակ կիսագրագետ կամ անգրագետ մարդիկ պետք է չլինեին:

Նույն որոշմամբ նախատեսվում էր մինչև 1932 թ. մայիսի 30-ը պարտադիր վերացնել ՀԽՍՀ-ում բնակվող մինչև 18 տարին լրացած քաղաքացիների անգրագիտությունը: Բոլոր նրանք, ովքեր կխուսափեին անգրագիտության վերացման դպրոցներում սովորելու համար ցուցակագրվելուց, դատախազական մարմինները ենթարկելու էին պատասխանատվության: Որոշմամբ տրվում էին նաև համապատասխան հրահանգներ՝ կապված անգրագիտության առհասարակ վերացման մարտավարական քայլերի հետ (Լուսժողովուրդին՝ ձեռնարկել դասագրքերի շտապ հրատարակումներ, ֆինժողովուրդին՝ ապահովել դրա ծախսերը, հաշվառման ենթարկել բոլոր այն կուլտուրական ուժերին, որոնց կարելի էր օգտագործել անգրագիտության վերացման աշխատանքներում և այլն)⁹:

Ինչպես համոզվում ենք, հիմնականում 16-50 տարեկան քաղաքացիների անգրագիտության վերացման խնդիրը երկրի ինդուստրացման և ապա՝ գյուղացիության կոլեկտիվացման արագ կուրսի որդեգրման պայմաններում դառնում է հրատապ: Ընդհա-

⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 35, գ. 15, թ. 24:

⁹ Փաստաթուղթն ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, թ. 24-25:

նոր առմամբ, կարելի է պնդել, որ նախատեսված ժամանակահատվածում այս տարիքի քաղաքացիների անգրագիտության վերացման խնդիրը լուծվում է դրականորեն:

Կարևորագույն աշխատանքներ են իրականացվում նաև տարրական կրթության ոլորտում: Հայաստանում դպրոցական հասակի երեխաների թիվը փոփոխական զարգացման ընթացք է կրել՝ կախված այն հանգամանքից, թե որ թվականին են ծնվել նրանք, և բնակչության ինչպիսի վերարտադրություն է տեղի ունեցել տվյալ թվականին: Փաստաթղթում՝ «Պերսպեկտիվ պլան ընդհանուր տարրական ուսման», նշվում է. «Հայաստանը մի քանի անգամ պատերազմի բեմ է դարձել արտաքին, ազգամիջյան և քաղաքացիական կռիվների ժամանակ, ամբողջ գավառներ տեղահան են եղել և փախուստի կամ գաղթի ուղին բռնել, սովն ու վարակիչ հիվանդությունները ահագին հունձ են արել: Ինչ խոսք, որ այս պայմաններում ժողովրդի նորմալ բնական աճում չէր կարող տեղի ունենալ. ինչ խոսք, որ մահացությունը, մանավանդ մանկահասակների, շատ բարձր է եղել»¹⁰:

Ուստիև, նրանք Ռուսաստանում կիրառված տարբերակով են ճշտել դպրոցահասակ երեխաների թիվը: Իսկ թե պատկերն ինչպիսին է եղել այնտեղ, այդ մասին հետևյալն ենք կարողում. «Պատերազմական շրջանի, գլխավորապես 1916 և 1917 թթ. գորակոչները, երբ համարյա ամբողջ հասակավոր բնակչությունը զենքի տակ էր, զգալի չափով ազդել են ծննդաբերության նվազման վրա, իսկ այնուհետև տեղի ունեցած սովն ու հիվանդությունները բարձրացրել են երեխաների մահացածության տոկոսը: Այդ բոլորը միասին ազդել է թույլ մանկական հասակների վրա, և սրանք թվով շատ պակասել են: 1920 թվի մարդահամարի տվյալները ցույց են տվել, որ 3-4 տարեկան երեխաների թիվը 1920 թվին նույն տարիքի երեխաների մինչպատերազմյան թվի կեսից էլ պակաս է: Իսկ առաջիկա հնգամյակի ընթացքում հենց այդ մանկական խմբերն են, որ դպրոցական հասակի պետք է հասնեն, բայց շատ պակասած կազմով: Այստեղից պարզ է, որ 1924-1928 թթ. ընթացքում դպրոցական հասակի երեխաների թիվը տարեցտարի աճելու փոխարեն պետք է պակասի»¹¹:

Համաձայն այս մեթոդի՝ Հայաստանում դպրոցական հասակի երեխաների թիվը հետևյալ պատկերն է ունեցել.

Գավառներ և քաղաքներ	1924 թ.	1925 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.
-	1933 թ.	1932 թ.	1931 թ.	1930 թ.	1929 թ.
-					

¹⁰ ՀԱՍ, ֆ. 130, ց. 1, գ. 99, թ. 135 և շրջերես:

¹¹ Նույն տեղում, թ. 1:

<i>ք. Երևան</i>	<i>5779</i>	<i>4824</i>	<i>4018</i>	<i>3525</i>	<i>3579</i>
<i>Երևանի գավառ</i>	<i>15159</i>	<i>12452</i>	<i>10376</i>	<i>9274</i>	<i>9049</i>
<i>ք. Լենինական</i>	<i>8614</i>	<i>6432</i>	<i>4807</i>	<i>3885</i>	<i>3538</i>
<i>Լենինականի գավառ</i>	<i>20782</i>	<i>17563</i>	<i>14800</i>	<i>13921</i>	<i>13778</i>
<i>Էջմիածնի գավառ</i>	<i>15324</i>	<i>12519</i>	<i>10345</i>	<i>9156</i>	<i>9370</i>
<i>Լոռի-Փամբակի գավառ</i>	<i>21189</i>	<i>17963</i>	<i>16074</i>	<i>15259</i>	<i>14833</i>
<i>Դիլիջանի գավառ</i>	<i>12282</i>	<i>11197</i>	<i>10221</i>	<i>9787</i>	<i>9659</i>
<i>Նոր Բայազետի գավառ</i>	<i>15787</i>	<i>14925</i>	<i>14012</i>	<i>13289</i>	<i>12611</i>
<i>Դարալագյազի գավառ</i>	<i>4679</i>	<i>4162</i>	<i>3696</i>	<i>3266</i>	<i>3285</i>
<i>Չանգեզուրի գավառ</i>	<i>10973</i>	<i>9678</i>	<i>8541</i>	<i>8099</i>	<i>8345</i>
<i>Մեղրու գավառ</i>	<i>1039</i>	<i>920</i>	<i>816</i>	<i>787</i>	<i>871</i>
	<i>131616</i>	<i>112635</i>	<i>97706</i>	<i>90348</i>	<i>88918</i> ²

Համաձայն ցուցակի՝ ակնառու է, որ ըստ տարածաշրջանների, պայմանավորված այն հանգամանքով, թե դպրոցահասակ երեխաներն ինչպիսի տնտեսական և սոցիալական պայմաններում են ծնվել, անհնար է խոսել նրանց թվի համաչափ կամ վերընթացային զարգացման մասին: Այս տվյալների ճշգրտումից հետո մշակվում է դպրոցահասակ երեխաների տարրական կրթության կազմակերպման մարտավարությունը: Նախ և առաջ բացվում են նոր դպրոցական համալիրներ առաջին հնգամյակում հետ մնացած զավառներում, «որոնք գան հասնեն մյուս զավառներին և կարողանան ընդունել դպրոցական հասակի բոլոր երեխաներին, ու այսպիսով տարրական ուսումը Հայաստանում դառնա հանրամատչելի»¹³:

Նախատեսվում է հաջորդ հնգամյակում նոր դպրոցներ (1929- 30–1933-34) բացել «այն հաշվով, որ բնական աճմամբ ավելացած բոլոր երեխաներին ևս հնարավոր լինի դպրոց ընդունել և բացի դրանից հարմարություն ստեղծվի հետամնաց աշակերտների համար երկրորդ տարին ևս մնալու նույն խմբակում: Այս վերջին հնգամյակում ուսումը հայտարարվում է պարտադիր դպրոցական հասակի բոլոր երեխաների համար անխտիր»¹⁴:

Համոզվելու համար, որ վերևի աղյուսակով ներկայացված դպրոցահասակ երեխաների տարրական կրթության խնդիրը հիմնականում լուծվում է, դիմենք հետևյալ թվերին: Այսպես, 1928-29 թթ. Երևան գավառի 9049 երեխաների համար կար 301 դպրոց, որտեղ սովորում էին 9030 աշակերտներ, այսինքն՝ տարրական կրթություն էր ստացել նրանց գրեթե 100 տոկոսը: Երևան քաղաքում կար 119 դպրոց, որտեղ սովորում էին աղյուսակում հիշատակված 3579 դպրոցահասակներից 3570-ը, դարձյալ գրեթե 100 տոկոսը: Լենի-

¹² Նույն տեղում, թ. 136:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

նական քաղաքի 3538 դպրոցահասակներից 118 դպրոցում սովորում էին 3570-ը, Լենինականի գավառի 13778 դպրոցահասակներից 459 դպրոցներում սովորում էին 13770-ը, դարձյալ 100 տոկոսը և այսպես շարունակ գրեթե մյուս բոլոր գավառներում¹⁵, որոնցում առկա դպրոցահասակների թիվը բերել ենք աղյուսակում:

Այսպիսով, տարրական կրթության խնդիրը լայն ծավալով լուծվում էր, և ամեննին պատահական չէ, որ արդեն 1932 թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշում է անցնել պարտադիր 7-ամյա կրթության: Այդ մասին Կենտկոմի բյուրոյի նախագծում կարդում ենք. «Սոցիալիստական շինարարության աննախընթաց հաջողությունը հնարավորություն է տվել պրոլետարական պետությանը 1930-31 ուս. տ. հիմնականում լուծելու ընդհանուր նախնական պարտադիր ուսում անցկացնելու խնդիրը: Տարրական դպրոցներում սովորող երեխաների թիվը Հ.Ս.Ս. Հ. 1931-32 ուս. տարում հավասար է 137 593 հոգու: Պարտադիր ուսումը ընդգրկել է հանրապետության կուլտուրապես ամենահետամնաց շրջանները և անց է կացվում 6 լեզուներով»¹⁶:

Այս ամենից ելնելով՝ որոշվում է 1932-33 ուս. տարում անցկացնել պարտադիր 7-ամյա կրթություն, որի նյութական բազան ապահովելու համար տրվում են անհրաժեշտ հանձնարարականները:

Կրթական հաջորդ կարևոր ոլորտը տեխնիկական ոլորտն էր, որի զարգացման համար նույնպես կատարվում էին դրական քայլեր:

1926-29 թթ. և այս դրանից հետո Հայաստանում ընդարձակվում է տեխնիկական կրթությունը՝ իրականացնող հաստատությունների թիվը:

Նախ՝ հստակեցվում են տեխնիկումների ընդունելության պայմանները: Այնտեղ կարող էին ընդունվել «Արհլուսգլխավարչության կողմից հաստատված ընդունելության ծրագրերի՝ 7-ամյա, գյուղերիտ. և գյուղատնտեսական դպրոցներն ավարտած 15-20 տարեկան տղաներ ու աղջիկներ»¹⁷:

Դիմումները կարող էին նաև ուղարկել փոստով, որոնց կցվում էին անհրաժեշտ փաստաթղթերը (կրթական, ծննդյան, զինծառայության և աշխատանքային ստաժի մասին վկայականները, դիմորդի և ծնողների սոցիալական վիճակի մասին փաստաթուղթ): Սա նշանակում է, որ ընդունելությունը եղել է բավական հեշտ, որը պետք է պայմանավորել արտադրության մեջ աշխատողներ նախապատրաստելու անհրաժեշտությամբ: Ստուգվում էր գիտելիքների աստիճանը հայոց և ռուսաց լեզուներից, հասարակագիտությունից, աշխարհագրությունից և մաթեմատիկայից: Գեղարվեստական-արդյունաբերական տեխնիկումներում՝ գեղարվեստական ընդունակություններից¹⁸:

¹⁵ Նույն տեղում, թ. 136-137:

¹⁶ ՀՍՍ, Ֆ. 122, ց. 1, գ., 223, թ. 42:

¹⁷ Նույն տեղում, ց. 1, գ. 205, թ. 3:

¹⁸ Նույն տեղում, տե՛ս թ. 3-ի շրջերեսը:

Այն, որ տեխնիկական կրթությունը մատչելի էր ժողովրդական լայն զանգվածների համար, հետևում է ներքոհիշյալ փաստաթղթից՝

«Տեխնիկում ընդունվում են՝

ա. Բանվորներն ու աշխատավոր գյուղացիները/չքավոր և միջակ/ և նրանց զավակները Համ. կոմ. կուսի և Համ. Լ. Կ. Յե. Մ. անդամները, մանկատան սաները, նաև այն անձինք, որոնց իրավունքները դպրոցական հիմնարկություններն ընդունվելու տեսակետից հավասարված են բանվորների և աշխատավոր գյուղացիների/սրանք են՝ կարմիր բանակայիններ, կարմիր բանակի և նավատորմի հրամանատարական-վարչական և քաղաքական կազմը և պետ. քաղվարչության աշխատակիցներն ու նրանց զավակները, Կարմիր բանակի հաշմանդամներն ու նրանց զավակները, գյուղական լուսաշախտավորների, գյուղի և գավառակային բժիշկների և այլ բժշկասանիտարական աշխատավորների ու տեխնիկումի դասատուների զավակները/.

բ. Աշխատավոր ինտելիգենցիայի, ծառայողների, արհեստավորների և տնայնագործների զավակները.

գ. Այլք.»¹⁹:

Կրթության այս ոլորտը կրում էր հասանելի բնույթ, այսինքն՝ որևէ խավի ներկայացուցչի համար չկար սահմանափակում: Դրանք վերաբերում էին միայն որոշակի հիվանդություններ ունեցողներին:

Դիմորդներին ընդունելության հանձնաժողովներն ընդունում էին՝ առաջնորդվելով «Չրջանայնացման/րայոնիզացիայի/ հետևյալ տախտակով.

1. Երևանի մանկավարժական տեխնիկում ընդունվում են՝ Երևանի, Մեղրու, Նոր Բայազետի, Դարալագյազի գավառների 7-ամյա, գյուղերիտ. և գյուղատնտեսական դպրոցների շրջանավարտները.

2. Լենինականի մանկավարժական տեխնիկում – Լենինականի, Զանգեզուրի և Դիլիջանի գավառներից.

3. Ստեփանավանի մանկավարժական տեխնիկում – Լոռի-Փամբակ գավառից.

4. Վաղարշապատի մանկավարժական տեխնիկում – Էջմիածնի գավառից.

5. Երևանի թյուրք. մանկավարժական տեխնիկում – Հ. Ս. Խ. Հ. բոլոր գավառներից.

6. Երևանի արդյունաբերական, գեղարվեստական-արդյունաբերական և կոոպերատիվ տեխնիկումները – Հ. Ս. Խ. Հ. բոլոր գավառներից:

7. Երևանի գյուղատնտեսական տեխնիկում – Երևանի, Էջմիածնի, Մեղրու և Դարալագյազի գավառներից.

8. Լենինականի գյուղատնտեսական տեխնիկում – Լենինականի, Լոռի-Փամբակի, Դիլիջանի, Նոր Բայազետի և Զանգեզուրի գավառներից»²⁰:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, թ. 4 և շրջերես:

Հայաստանում գործում էր տասնմեկ տեխնիկում, որոնցում սովորողներին ընդունում էին նաև տարածքային նախապայմաններով, որն այնուհետև պետք է պայմանավորեր շրջանավարտներին աշխատանքի համար համաչափ բաշխելու սկզբունքը:

Կարևոր նշանակություն էր տրվում բանֆակներում ընդունելության կազմակերպմանը, որտեղ արտադրության տարբեր ոլորտներում աշխատելու համար ուսուցանվում էին բանվորներ:

1930 թ. մարտի 7-ին ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է ընդունում «Ինդուստրիալ-տեխնիկական և գյուղատնտեսության սիստեմը վերակազմելու մասին»: Լուսժողկոմին այդ որոշմամբ հանձնարարվում էր 1929-30 թթ. ակադեմիական տարվա գարնանային կիսամյակից ինդուստրիալ-տեխնիկական և գյուղատնտեսական դպրոցներում կիրառել նոր մշակած ուսումնական ծրագրեր և ապահովել դրանց կենսագործումը 1930-31 թթ. ակադեմիական տարվա սկզբից, իսկ ընթացիկ ակադեմիական տարվա երկրորդ կիսամյակի սկզբից այդ հաստատությունների առաջին կուրսերի ուսումնական ընթացքը շարունակել նոր ծրագրով: Նոր ծրագրերը կազմելիս պետք էր նկատի ունենալ այնպիսի առարկաների դասավանդման ցանկ, որ բխում էր ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերը մասնագետներով հագեցնելու անհրաժեշտությունից:

Հանձնարարվում էր նաև «Գյուղատնտեսական բարձրորակ կադրերի ճշտված պահանջների համեմատ՝ մի ամսվա ընթացքում ուսումնասիրել պետհամալսարանի գյուղֆակը վերակազմելու և գյուղատնտեսական ինստիտուտի վերածելու հնարավորությունները, մշակել և համապատասխան նախագիծ մտցնել ժողկոմխորհի ի հաստատություն»²¹:

Որոշմամբ Պետհամալսարանի տեխնիկի և ինդուստրիալ ու գյուղատնտեսական տեխնիկումների շրջանավարտները ստանալու էին հետևյալ որակավորումները.

1. Շինարարական բաժանմունքից՝ ճարտարագետ-շինարարի կոչում երկու թեքումով՝ քաղաքացիական շինարարության ճարտարագետ և հիդրոտեխնիկական շինարարության ճարտարագետ:

2. Քիմիական բաժանմունքից՝ քիմիկոս-ճարտարագետի որակավորում:

Ինդուստրիալ տեխնիկումների շրջանավարտները ստանում էին՝

1. Էլեկտրո-մեխանիկական տեխնիկումից՝ էլեկտրիկ-տեխնիկի և տեխնիկ-մեքենագետի որակավորում:

2. Ինդուստրիալ-շինարարական տեխնիկումից՝ ջրաշինարար-հիդրոշինարարության տեխնիկի և տեխնիկ քիմիկոսի որակավորում:

3. Քիմիական տեխնիկումից՝ տեխնիկ-քիմիկոսի որակավորում:

4. Լեռնային տեխնիկումից՝ տեխնիկ-շտեյգերի /բովապետ, հանքային աշխատանքի պետ/ և տեխնիկ-մարկշեյդերի որակավորում:

²¹ ՀՍՍ, ֆ. 113, ց. 1, գ. 325, թ. 6:

5. Հանքաշինարարական նյութերի տեխնիկումից՝ հանքաշինարարության նյութերի և քաղաքացիական շինարարության տեխնիկի որակավորում:

6. Գեղարվեստական-արդյունաբերական տեխնիկումից՝ տնայնագործական արդյունաբերական տեխնիկի որակավորում:

Գյուղատնտեսական տեխնիկումների շրջանավարտներն ստանում էին հետևյալ մասնագիտությունները՝ բանջարաբույծ և այգեգործ տեխնիկ, գինեգործ տեխնիկ (Երևանի գյուղատնտեսական տեխնիկում), բամբակագործ-տեխնիկ (Երևանի բամբակագործական տեխնիկում), անասնապահ-տեխնիկ և կաթնատնտես-տեխնիկ (Լենինականի և Ստեփանավանի գյուղատնտեսական տեխնիկումներ), անասնապահ և կաթնատնտես տեխնիկ, դաշտագործ-տեխնիկ (Լենինականի երկրորդ գյուղատնտեսական տեխնիկում)²²:

Նույն որոշումով պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետի համար սահմանվում է 4-ամյա, իսկ գյուղատնտեսական տեխնիկումների համար՝ 3-ամյա դասընթաց: Որոշմամբ կարևորագույն տեղ էր հատկացվում արտադրական պրակտիկաներին, ինչպես նաև լաբորատոր պարապմունքների կազմակերպմանը:

Ընդհանուր առմամբ, այս որոշումով ամբողջությամբ վերակազմվում էր կրթական համակարգը, և նրա զարգացման ընթացքը փոխկապակցվում էր տնտեսության զարգացմանը:

Բարձրագույն կրթության կատարելագործման առումով իրականացվում էին կարևորագույն քայլեր: Մինչև 1926 թվականը Հայաստանում գոյություն ուներ երեք բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Պետական համալսարանը, Մանկավարժական ինստիտուտը (1922 թ.) և Պետական կոնսերվատորիան (1923 թ.):

1928 թ. Երևանում բացվում է անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, ԽՍՀՄ Ժողովրդաբարձրի որոշմամբ երկու՝ հայկական և ռուսական բաժիններով: Ինստիտուտում առաջին տարվանից հիմնադրվում են կենդանաբանության, անատոմիայի, հյուսվածագնության, սաղմնաբանության, ընդհանուր զոոտեխնիկայի, երկրագործության հիմունքների և այլ ամբիոններ: Ուսման առաջին տարում այս ինստիտուտ են ընդունվում 120 ուսանողներ, որոնց զգալի մասը գործուղված էր ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից՝ Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և Միջին Ասիայի հանրապետություններից²³:

ԽՍՀՄ կառավարությունը նյութական միջոցներ է հատկացնում ինստիտուտի ուսումնական նոր մասնաշենքի, անատոմիկումի, լաբորատորիաների և հանրակացարանների կառուցման համար²⁴: Այս ինստիտուտի նշանակությունը մեծ էր, «քանի որ

²² Նույն տեղում, թ. 6-7:

²³ Մելիքսեյան Վ., Կարապետյան Հ., նշվ. աշխ., էջ 71-72:

²⁴ Նույն տեղում, էջ 72:

բարձրագույն կրթության մասնագետներ էր պատրաստում ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև եղբայրական ռեսպուբլիկաների համար»²⁵:

Այլ հանրապետությունների և արտերկրի համար Հայաստանի պետական համալսարանում նույնպես տեղեր էին հատկացվում: Այսպես, 1927-28 թթ. ակադեմիական տարվա համար հետևյալ որոշումն է ընդունվում.

«3. Պետ. Համալսարանի ընդունելության հանձնաժողովն ուսանող-ուսանողուհիների ընդունելությունը կատարելիս առաջնորդվելու է բաշխման հետևյալ տախտակով.

ա) Ադրբեջանին/ավտոնոմ հանրապետությունների հետ միասին/ հատկացվում է 25 տեղ:

բ) Վրաստանին /ավտոն. հանր. հետ միասին/ հատկացվում է 25 տեղ:

գ) ԽՍՀՄ այլ հանրապետություններին հատկացվում է 15 տեղ:

դ) ԽՍՀՄ սահմաններից դուրս գտնվող պետությունների քաղաքացիներին—10 տեղ:

ե) Մնացած տեղերը հատկացվում են Խորհրդային Հայաստանին, առաջնություն տալով Երևանի և Լենինականի բանֆակների շրջանավարտներին:

1. Դաշնակից հանրապետությունների Լուսժողովուստները բաշխում են ստացած տեղերը իրենց հանրապետության համապատասխան հիմնարկություններին և տեղերին, որոնք համաձայն իրենց հատկացված տեղերի թվին՝ գործուղում են Հայաստանի Պետ. Համալսարանը մտնել ցանկացողների՝ աչքի առաջ ունենալով նրանց այս կամ այն ֆակուլտետում սովորելու ցանկությունները»²⁶:

Ինչպես համոզվում ենք, բարձրագույն կրթության առումով Խորհրդային Հայաստանը աստիճանաբար ձեռք էր բերում պահանջված հնարավորությունները: Իսկ դրա վկայությունն է նաև այն փաստը, որ այնտեղ սովորելու էին գալիս միութենական այլ հանրապետություններից:

1931-32 ուսումնական տարում հանրապետությունում գործում էին ութ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում էին 3400 ուսանողներ²⁷: 1928-32 թթ. ընթացքում Հայաստանի բուհերն ավարտում են մոտ 1500 մասնագետներ, որոնց թվում՝ 430 մանկավարժ, 300 բժիշկ, 120 ինժեներ, 300 գյուղատնտես, 100 անասնաբույժ և անասնաբույժ, 250 տնտեսագետ, արվեստի բնագավառի 10 աշխատող²⁸:

Կրթական կյանքի կազմակերպմանը զուգընթաց՝ զարգանում էր նաև գիտությունը: Արդեն 1927-28 ուս. տարում բացվում է Պետական համալսարանի ասպիրանտուրան: Համալսարանում դասավանդում էին նշանավոր գիտնականներ Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Հրայր Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ալեքսանդր Հակոբյանը, Վահան Արծրունին, Արտավազդ Մելիք-Աղամյանը և ուրիշներ:

²⁵ Նույն տեղում:

²⁶ ՀԱՍ, ֆ. 112, ց. 1, դ. 205, թ. 14:

²⁷ Культурное строительство Армянской ССР, Е., 1962, с. 163.

²⁸ Социалистическое строительство Армянской ССР, 1920-1940, Е., 1940, с. 114.

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները ճշտելու համար կարևոր նշանակություն են ունենում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կազմակերպած գիտական արշավախումբերը, որոնք գիտահետազոտական ուսումնասիրություններ են անցկացնում Սևանի ավազանում, Արագածում և Արարատյան դաշտավայրում²⁹:

1927 թ. ակադեմիկոս Լևինտոն Լեսինգի արշավախումբը գիտական աշխատանքներ է իրականացնում Սևանի ավազանում: Ուսումնասիրելով լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ կառուցվում են առաջին հիդրոոդերևութաբանական և հիդրոմետեոլոգիական կայանները, կազմվում են լճի բարեխառնության ռեժիմի սխեմաները, խորության քարտեզները: Այս ուսումնասիրությունների նպատակն էր ճշտել լճի հնարավորությունները էլեկտրիֆիկացիայի և ռոտման նպատակով օգտագործման համար:

Դեռևս 1925 թ. հունվարից կազմակերպված Հայաստանի գիտության և Արվեստի ինստիտուտը նույնպես զբաղվում էր գիտական ծանրակշիռ աշխատանքներով: Այն ուներ երեք բաժին՝ բնագիտական-մաթեմատիկական, պատմա-հասարակագիտական և գեղարվեստական: 1925 թ. հունվարի 30-ի Լուսժողկոմի որոշումով հաստատվել էր այս ինստիտուտի իսկական անդամների կազմը: Դրանք էին՝

1. Բնագիտական-մաթեմատիկական բաժին՝ Արեշյան Գրիգոր, Արծրունի Վահան, Բեգեյան Հովակիմ, Իսահակյան Արգար, Հակոբյան Ալեքսանդր, Հովհաննեսյան Հակոբ, Համբարյան Ստեփան, Քալանթարյան Պապա, Քեչեկ Համբարձում, Ռուբինյան Լևոն:

2. Պատմա-հասարակագիտական բաժին՝ Աբեղյան Մանուկ, Ազատյան Հայկ, Աճառյան Հրաչյա, Բաբախանյան Առաքել /Լեո/, Լալայան Երվանդ, Քալանթար Աշխարհբեկ, Խանգաղյան Յուլյա, Խաչատրյան Ասատուր, Կանայան Ստեփան, Կարինյան Արտաշես, Հակոբյան Սիմեոն, Հովհաննիսյան Աշոտ, Շելկովնիկյան Ալեքսանդր, Մանանդյան Հակոբ, Չարենց Եղիշե, Տեր-Հակոբյան Սենեքերիմ, Տերտերյան Արսեն:

3. Գեղարվեստական բաժին՝ Բունիաթյան Նիկողայոս, Բուրջայան Արշակ, Դեմիրճյան Դերենիկ, Թամանյան Ալեքսանդր, Թորամանյան Թորոս, Մանվելյան Միքայել, Մելիքյան Ռոմանոս, Սարյան Մարտիրոս, Սպենդիարյան Ալեքսանդր³⁰:

Ինստիտուտը 1926 թվականից հետազոտել է Հայաստանի հողերը, Սևանի ավազանի կենդանական աշխարհը, ուսումնասիրել Սևանում սիգ ձկան բազմացման և այլ խնդիրներ:

Ինստիտուտը նաև զբաղվում էր հայագիտության հիմնախնդիրներով: Այսպես, Հ. Օրբելու գլխավորած հնագիտական արշավախումբը 1920-ական թթ. երկրորդ կեսին պեղումներ է կատարում Ամբերդում և Գառնիում, Թ. Թորամանյանը զբաղվում է հայ հին և միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությամբ:

²⁹ Մելիքսեթյան Վ., Կարապետյան Հ., նշվ. աշխ., երկր. պրակ, էջ 72:

³⁰ ՀԱՍ, ֆ. 122, ց. 1, գ. 234, թ. 1 և շրջերես:

Իրենց արժեքավոր աշխատություններն են հրատարակում Հ. Մանանդյանը, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Գր. Ղափանցյանը, քիմիկոսներ Ս. Ղամբարյանը, Ալ. Հակոբյանը: Ջարգանում էին նաև բժշկական, գյուղատնտեսական և այդ ոլորտներին առնչվող գիտությունները³¹:

СФЕРА ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ В 1925-1932гг.

МИРЗАХАНЫАН Р. К.

Резюме

Наиболее значимым успехом Армении в сфере образования в 1925-1932 гг. явилась борьба с неграмотностью. К 1932 году неграмотность фактически была преодолена, что позволило перейти к обязательному семилетнему образованию. В изучаемый период в Армении действовали двенадцать техникумов и три вуза. В 1928 был открыт четвертый – зооветеринарный. В вузах республики получали образование также студенты из других республик. По ряду направлений серьезную работу осуществлял институт науки и искусств Армении, членами которого являлись выдающиеся представители науки и культуры.

THE FIELD OF EDUCATION IN ARMENIA IN 1925-1932

R. MIRZAKHANYAN

Abstract

The major achievement in the domain of education in the period between 1925 and 1932 was the struggle against illiteracy. In 1932, illiteracy was almost abolished which allowed establishing the seven-year-long compulsory education. In the aforementioned period there were twelve technical schools and three higher education institutions in Armenia. In 1928, the fourth higher education institution – the Zoological and Veterinary Institute – was founded. The Armenian higher education institutions had students from other member countries of the USSR. The contribution of the Institute of Science and Art of Armenia, the members of which were outstanding representatives of science and culture of the country, was particularly prominent in a number of directions.

³¹ Մելիքսեթյան Վ., Կարապետյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 72-75:

ՀԱՅՈՑ ՄԱՐԶՊԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ. Ա.

Մարզպանությունը, որպես Հայաստանում հաստատված պարսկական վարչակարգ, տևեց շուրջ երկու հարյուր տարի (V-VII դդ.): Այն սկզբնավորվեց, երբ կենտրոնացման ձգտող Արշակունիների հայոց թագավորությունն անկում ապրեց: Դա պայմանավորված էր մի կողմից նախարարական տների հզորացմամբ, մյուս կողմից՝ Պարսկաստանի՝ հայ նախարարների անջատողական ձգտումների խրախուսմամբ:

Նախարարների ազդեցիկ դիրքի մասին է վկայում Պատմահայր Մովսես Խորենացին. «Յայնժամ գային հասանելին ի բազում նախարարաց կոչնականք զմեծէն Սահակայ, զի ի մէջ նոցա անցեալ՝ ի միարանութին հաւաքեցէ զամենեսեան: Քանզի գիտացեալ արքային Պարսից Վռամայ, եթէ առանց նախարարացն Հայոց ոչ մարթի ունել զաշխարհս՝ հաշտութին խաւսի ի ձեռն Սմբատայ ասպետի»¹: Պատմիչ Ղազար Փարպեցին հաղորդում է. «Եւ եկեալ իշխանք աշխարհին Հայոց առաջի Վռամայ արքային Պարսից, խնդրեցին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց: Եւ նա թագաւորեցոյց ի վերայ նոցա զԱրտաշէս որդի Վռամշապետոյ, յազգէ թագաւորացն Հայոց»²: Այսինքն՝ արքայից արքա Վռամ Ե Գոռից (420/421-438/439)* նախարարներն են իրենց թագավոր խնդրում և ոչ թե կաթողիկոս Սահակ Պարթևը (388-439)** կամ պարսից արքան՝ իր նախաձեռնությամբ:

Հենց նախարարների ցանկությամբ էլ 428 թ. Արտաշէս Արշակունին զրկվեց իշխանությունից, որովհետև նրանք ձգտում էին ազատվել թագավորական իշխանության զսպող ուժից և ձեռք բերել ազատություն³:

Արտաշէս Արշակունուն գահազրկելուց հետո պարսից արքայից արքա Վռամ Ե Գոռը «...մեծապարզել զնախարարսն արձակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրշապուհ»⁴: Ղազար Փարպեցին ևս անդրադարձել է նույն

¹ Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, (Մատենագիրք Հայոց), Կ. Բ, Ե դար (այսուհետև՝ Մովսէս Խորենացի), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2092:

² Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, (նույն տեղում, այսուհետև՝ Ղազար Փարպեցի), էջ 2217:

* Պարսից արքաների կառավարման տարիները տրվում են համաձայն Хуршудян Э. Государственные институты парфянского и Сасанидского Ирана (III в. до н. э. - VII в. н. э.), Алматы, 2015, с. 365-369 " Touraj Daryaee, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, 2013 մենագրությունների ցանկի:

** Կաթողիկոսների ժամանակագրությունը տրվում է համաձայն «Հայաստանի ազգային ատլաս»-ի, Կ. Բ, Ե., 2008, էջ 227 ցանկի:

³ Իւզբաշեան Կ., Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարասիկի պայմանադրութիւնը, Ե., 2005, էջ 48:

⁴ Մովսէս Խորենացի, էջ 2104:

իրադարձությանը. «Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշեսի, եւ յայնմհետէ առաքեցաւ նախ ի Վռամայ արքայէն Պարսից յաշխարհս Հայոց մարգպան պարսիկ. եւ յայնմհետէ եղեն ի սպառ ի սպառ անկեայք ընդ լծով ծառայութեան անաւրէն ազգին Պարսից»⁵: Ի տարբերություն Պատմահոր, Ղազար Փարպեցին մարգպանի անունը չի հիշատակում:

Հետաքրքրական է, որ IX-X դդ. պատմիչ Թովմա Արծրունին, որը, կարծում ենք, ձեռքի տակ ունեցել է Պատմահոր երկը, այլ մարգպանի անուն է նշում. «եւ կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, եւ ապա զԲրքիշոյ Ասորի, եւ ապա զՍամուէլ, որք ոչ ըստ արինի եկեղեցականաց կրանից զվարսն յարմարէին, այլ ընդ մարգպանին Մշկանայ լծակցեալ՝ հոգալ զաշխարհս: Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարհս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի»⁶: Որ Մշկան անունով մարգպան չի եղել, փաստ է: Հավանաբար, պատմագիրը նրան շփոթել է 451 թ. Հայաստան ներխուժած պարսից զորավար Մուշկան Նյուսայավուրտի հետ:

Կիրակոս Գանձակեցին (XIIIդ.) Արտաշես Արշակունու գահընկեցությունից հետո Հայաստան ուղարկված առաջին մարգպանի վերաբերյալ գրում է. «Զի թէպէտ եկաց սուրբն Սահակ յետ այնորիկ ամս վեշտասան և լուսաւոր վարդապետութեամբ պայծառացոյց զաշխարհս, սակայն անարժան վերակացուօք՝ և պարսիկ մարգպանաւ, որպէս զՎեհմիհրշապուռի՝ փոխանակ Արտաշրի թագաւորին, և զոսխասէրն Սուրմակ՝ փոխանակ սրբոյն Սահակայ, որ եկաց ամ մի»⁷:

Առաջին մարգպան Վեհմիհրշապուռի կառավարման տևողության մասին տեղեկություն է հաղորդում Ստեփանոս Օրբելյանը. «Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց որ էր վերջին Արտաշէս, եկաց մարգպան ի տեղի Արտաշիսի վեհ Միհր-Շապուռի ամս 13»⁸: Փաստորեն առաջին մարգպան Վեհմիհրշապուռը կառավարել է 428-441 թթ.:

Հաջորդ մարգպանը Վասակ Սյունին էր: Այս մասին նշված իրադարձությունների ժամանակամերձ պատմիչ Եղիշեն հաղորդում է. «Զայն ահա ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես (մոզպետը - Խ.Հ.) ինձէն աչաւք տեսի, թուի ինձ՝ թէ մեծագոյն եւս լինի քան զառաջինն: Արդ դու (Վասակ Սյունին - Խ.Հ.) որ մարգպանդ ես աշխարհիս, պարտ է

⁵ Ղազար Փարպեցի, էջ 2222-2223:

⁶ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (Մատենագիրք Հայոց), հ. ԺԱ, Ժ դար, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 112:

⁷ Հարկ է նշել, որ «վերակացու» եզրույթը գործածված է ոչ թե «իշխող, հսկող», այլ՝ «կաթողիկոս» իմաստով: Սա ևս մեկ փաստ է այն բանի, որ մարգ-պանի և վերակացուի պաշտոնները չեն նույնանում:

⁸ Կիրակոս Գանձակեցոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 33:

⁹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Միսական (այսուհետև՝ Ստեփաննոս Օրբելեան), Թիֆլիս, 1910, էջ 57:

քեզ փոյթ յանձին ունել, գրել եւ ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս, որպէս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի»¹⁰: Ղազար Փարպեցին նույնպէս Վասակ Մյունուն հիշատակում է որպէս հայոց մարզպանի. «Եւ որք ի ժամուն ի մեծամեծ աւագանւոյն Հայոց յուղի անկեալ ճանապարհորդեցան՝ այսոքիկ են. ի տոհմէն Միւնեաց Վասակ Միւնեաց տէրն, որ եւ ի ժամուն մարզպանն էր Հայոց»¹¹: Եղիշէի և Փարպեցու հաղորդումները վերաբերում են 450 թ.-ին: Այստեղ ևս մեզ օգնության է գալիս Մյունյաց պատմիչը: Ստ. Օրբելյանի հաղորդմամբ՝ «Իսկ յետ վեհ Միհր-Շապիոյ մարզ-պանութեան կացուցանեն ի տեղի նորա զՎասակ՝ Միւնեաց տէր, մարզպան Հայոց»¹²:

Եթե Վեհմիհրշապուհի կառավարման ավարտը 441-ին է եղել, ապա այդ նույն թվականին էլ Վասակ Մյունին պետք է նշանակվեր Հայաստանի մարզպան: Նա պաշտոնավարեց տասը տարի, և պաշտոնից հեռացվեց պարսից Հազկերտ Բ (438/439-457) արքայի կողմից 451 թ.¹³: Ավարայրի ճակատամարտից (451 թ. մայիսի 26) հետո, երբ Վասակը հեռացվեց պաշտոնից և կանչվեց Տիգրան, Հազկերտ Բ արքան «զմի ոմն յաւագ նախարարացն՝ Ատրորմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին եւ գործակից էր զաւրավարին ի նմին պատերազմի, գրէր եւ յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ: Արդ եկն եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղութեամբ»¹⁴: Ղազար Փարպեցու տեղեկությունները ներդաշնակ են Եղիշէի այս հաղորդմանը. «Եւ զԱտրորմիզդ ոմն անուն, յաշխարհէն Հայոց, մարզպան հրամայէր թողուլ (Հազկերտ Բ-ն-Խ.Հ.), որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, եւ զպաշտան քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն: Եւ տեսեալ Մուշկանայ զհրովարտակն թագաւորին Յազկերտի, եւ լուեալ զբանսն ի հրովարտակէն՝ կացուցանէր ի Հայս մարզպան զԱտրորմիզդ Արշական, եւ զիրս ամենայն ըստ գրեցելոցն ի հրովարտակէն թագաւորին՝ նմա յանձն առնէր»¹⁵:

Պատմիչները չեն գրում, թե որքան է տևել Ատրորմիզդի կառավարումը, որը, ի դեպ, Արշակունի էր (միջ. պրսկ. *Askān*): Ատրորմիզդին հաջորդած մարզպանին Ղազար Փարպեցին հիշատակում է, արդեն Վահանանց ապստամբության հետ կապված: Ըստ Ղազար Փարպեցու, պարսից Պերոզ արքայից արքայի (459-484)

¹⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (Մատենագիրք Հայոց), Կ. Ա, Ե դար (այսուհետև՝ Եղիշէ), Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 589:

¹¹ Ղազար Փարպեցի, էջ 2245:

¹² Ստեփաննոս Օրբելեան, էջ 57:

¹³ Տէ՛ս Օրմանեան Մ., Ազգապատում (Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը ազգային պարագաներով պատմուած), Կ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 520:

¹⁴ Եղիշէ, էջ 670-671:

¹⁵ Ղազար Փարպեցի, էջ 2269:

կառավարման քսանհինգերորդ տարում՝ 482 թ., վրաց թագավոր Վախթանգ Գորգասարը (բառացի՝ գալլի գլուխ, 446-502) սպանում է բղեշի Վազգենին. դա ապստամբության ազդանշան էր, եւ «Հայոց աշխարհիս Ատրվճնասպ Յոզմանդեան էր մարգպան»¹⁶: Կ. Յուզբաշյանը, քննության ենթարկելով այս վկայությունը, եկել է այն եզրակացության, որ բղեշի Վազգենի սպանությունը, որով էլ և ազդարարվել է ապստամբության սկիզբը, տեղի է ունեցել **482 թ.**¹⁷ և ոչ թե ընդունված 481-ին¹⁸:

Պատմիչների լռությունից՝ կարելի է ենթադրել, որ Ատրորմիզդը կառավարել է երկար ժամանակ՝ **451-ից** մինչև մոտ **470-ականները**, իսկ նոր մարգպան Ատրվճնասպը՝ մոտ **480-ից**¹⁹, քանզի վերջինս հիշատակվում է միայն բղեշի Վազգենի սպանության առիթով: Եթե Ատրվճնասպն ավելի վաղ նշանակված լիներ մարգպան, ապա Փարպեցին, որ հիշատակում է ընդամենը մի քանի ամիս իշխած մարգպանների՝ **Շապուհ Միհրանյանին, Անդեկանին, անպատճառ կհիշեր նաև Ատրվճնասպին**: Նկատենք, որ պատմիչը բժախնդիր է գորավարների, մարգպանների անունները, ինչպես նաև պաշտոնները նշելիս:

Մասնագիտական գրականության մեջ հենվելով Մ. Օրմանյանի թվագրման վրա²⁰, որպես Ատրորմիզդի կառավարման ավարտ և Ատրվճնասպի կառավարման սկիզբ, նշվում է **464-ը**²¹: Մարգպան Ատրվճնասպը, համաձայն Փարպեցու, զոհվեց Ակոռիի **482 թ.**²² ճակատամարտում²³: Ատրվճնասպ Յոզմանդյանի կառավարումը եղել է **~480-482 թթ.**: Դեռևս նրա կենդանության օրոք, երբ հայերն ապստամբեցին (**482 թ.**), ժողովրդի կողմից հայոց մարգպան ընտրվեց **Սահակ Բագրատունին**²⁴: Սակայն նա զոհվեց ճարմանայնի ճակատամարտում՝ **483-ի ամռանը**²⁵:

Այնուհետև 484 թ. գարնանը Պերոզ արքան Զարմիհր Հագարավուխտին հրամայում է գնալ Վիրք՝ Վախթանգ թագավորին կամ բռնել կամ սպանել կամ էլ

¹⁶ Ղազար Փարպեցի, էջ 2313:

¹⁷ Յուզբաշյան Կ., Հայ-վրացական ապստամբությունը Մասանյան իշխանության դեմ (482-484 թթ.) [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1985, - 1, էջ 56], նույնի՝ Երբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը, (ՊԲՀ, 1984, - 1, էջ 101):

¹⁸ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 525:

¹⁹ Хуршудян Э. Армения и Сасанидский Иран (Историко-культурное исследование), Алматы, 2003, с. 104.

²⁰ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 492:

²¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II (այսուհետև՝ ՀԾՊ, հ. II), Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1984, էջ 196:

²² Տե՛ս Յուզբաշյան Կ., Հայ-վրացական ապստամբությունը Մասանյան իշխանության դեմ (482-484 թթ.), էջ 56-57:

²³ Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 2318-2319:

²⁴ Ղազար Փարպեցի, էջ 2316, Յուզբաշյան Կ., նշվ. աշխ., էջ 48, 57, Ակինեան Ն., Եղիշէ վարդապետ եւ իւր (Պատմութիւն Հայոց պատերազմի), հ. Բ, Վիեննա, 1936, էջ 415:

²⁵ Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 2328-2330, Յուզբաշյան Կ., նշվ. աշխ., էջ 58:

վոնդել իր աշխարհից, իսկ **Շապուհին՝ Միհրանյան տոհմից (484 թ. գարուն-ամառ)**, իր զորքով մարզպան թողնել Հայաստանում²⁶:

Նվարսակում Նիխոր Վշնասպրատի հետ համաձայնության գալուց հետո, 484 թ. աշնանը Վահան Մամիկոնյանը մեկնեց պարսից արքունիք՝ Վաղարշ արքայից արքայի (484-488) հետ բանակցությունները շարունակելու և իր պահանջները «**գրով ու կնիքով հաստատելու**» համար²⁷: Վահանի պահանջները բավարարվեցին, և ինքն էլ ճանաչվեց Մամիկոնյան տոհմի տանուտեր ու հայոց սպարապետ: Երբ նա վերադարձավ Հայաստան, նույն ժամանակ եկավ նաև մի մարզպան, որի անունն էր **Անդեկան**²⁸: Սա, որոշ ժամանակ մնալով Հայաստանում, մեկնում է արքունիք՝ հաշվետվություն ներկայացնելու: Հենց վերջինիս խորհրդով էլ պարսից Վաղարշ արքայից արքան **Վահան Մամիկոնյանին** կարգում է Հայաստանի մարզպան²⁹:

Ըստ Ն. Ակինյանի՝ 484 թ. Վաղարշը Հայաստանի համար նոր մարզպան է նշանակում **Անդեկանին**, այնուհետև այդ նույն՝ 484 թ., նաև Վահան Մամիկոնյանին³⁰:

Մ. Օրմանյանը գտնում է, որ Ղազար Փարպեցու տեղեկություններից դժվար է պարզել, թե որքան է տևել **Անդեկանի** մարզպանությունը³¹: Վահանի սպարապետությունը նա դնում է 485 թ. գարնանը, իսկ մարզպանությունը՝ 485թ. աշնան վերջին³²: Այսինքն՝ 484 թ. աշնանը Վահանը մեկնում է Վաղարշ արքայից արքայի մոտ և նրա կողմից կարգվելով Մամիկոնյան տոհմի տանուտեր և հայոց սպարապետ՝ 485 թ. գարնանը վերադառնում է Հայաստան: Ինչպես կարելի է կոտակել Ղազար Փարպեցու տեղեկությունից, հենց այդ ժամանակ էլ **Անդեկանը**, որպես մարզպան, գալիս է Հայաստան, իսկ նույն թվականի աշնանը նրա փոխարեն Հայաստանի մարզպան է նշանակվում Վահան Մամիկոնյանը:

Մենք լիովին ընդունում ենք Մ. Օրմանյանի տեսակետը, որը նաև հնարավորություն է տալիս որոշել **Անդեկանի** կառավարման ժամանակը՝ **485 թ. գարուն-աշուն**:

Ղազար Փարպեցին, իր «Հայոց պատմությունը» շարադրել է, ցավոք մինչև Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալը, իսկ հետագա պատմիչները հաճախ հաղորդում են իրարամերժ տեղեկություններ: Այսպես, Սեբեոսը (VII դ.) գրում է, որ Պերոզից հետո թագավորեց որդին՝ Կավադ Ա-ն (488-496 և 498/499-531), որը

²⁶ Ղազար Փարպեցի, էջ 2340, Յուզբաշյան Կ., նշվ. աշխ., էջ 59:

²⁷ Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 2353-2355:

²⁸ Նույն տեղում, էջ 2369:

²⁹ Նույն տեղում, էջ 2370-2371: Հետաքրքիրն այն է, որ Վահան Մամիկոնյանը միաժամանակ և՛ մարզպան էր, և՛ հայոց սպարապետ, և՛ Մամիկոնյան տոհմի տանուտեր: Այդպիսով նա իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի ռազմա-քաղաքական ամբողջ իշխանությունը:

³⁰ Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 416-417:

³¹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 543:

³² Նույն տեղում, էջ 545:

Վահանին տվեց հայոց աշխարհի մարզպանությունը և Մամիկոնյանների իշխանությունը³³: Սա ակնհայտ շփոթ է, քանզի հայտնի է, որ Պերոզին հաջորդել է Վաղարշը, որն էլ Վահանին ճանաչել է մարզպան: Նույն պատմիչի տեղեկությամբ՝ Վահանից հետո իշխանությունն անցավ եղբորը՝ Վարդ պատրիկին, որը սակավ կառավարելով մահացավ³⁴:

Հովհաննես Դրասխանակերտցին (IX-X դդ.) նույնպես շփոթում է Վահանի՝ մարզպան նշանակելու ժամանակը: Նախ նա հայտնում է, որ պարսից Վաղարշ արքան Վահանին «գաշխարհս մեր հաւատայր», մեկ էլ, որ Բարգեն Ա Ռթմսեցու (490-516) հայրապետության ժամանակ Պերոզն էր պարսից թագավոր, որից էլ Վահանը ստացավ մարզպանությունը³⁵:

Ստեփանոս Ասողիկը (X-XI դդ.) հաղորդում է, որ Վահանը պաշտոնավարեց «ամսս Լ», իսկ Վարդ պատրիկը՝ «ամսս»³⁶: Սամվել Անեցին (XII դ.) Վահանին վերագրում է 31 տարվա կառավարում՝ «ամսս ԼԱ», իսկ Վարդին՝ «ամսս Գ»³⁷: Մխիթար Անեցին (XII դ. երկրորդ կես), հետևելով մյուսներին, Վահանին վերագրում է «ամսս Լ», Վարդին՝ «ամսս Դ» տարվա կառավարում³⁸: Կիրակոս Գանձակեցին, առանց Վահանի մարզպանության տարիներն արձանագրելու, նշում է, որ Հմայակի որդի Վահան Մամիկոնյանը Վաղարշ արքայի կողմից է կարգվել մարզպան: Նա Վարդին վերագրում է երեք տարվա կառավարում. «ամսս երիս»³⁹:

Վահան Մամիկոնյանին պատմիչների վերագրած 30 տարիները Ն. Ակինյանն անհնար է համարում⁴⁰, քանզի 506 թ. Բարգեն կաթողիկոսի «Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս»-ում թվարկված նախարարների շարքում բացակայում է Վահան Մամիկոնյանի անունը, մինչդեռ հիշվում է նրա եղբայրը՝ Վարդ Մամիկոնյանը⁴¹:

³³ Պատմություն Սերեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի (այսուհետև՝ Սերեոս), Ե., 1979, էջ 67:

³⁴ Սերեոս, էջ 67:

³⁵ **Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմություն Հայոց** (այսուհետև՝ Յովհաննես Դրասխանակերտցի), Թիֆլիս, 1912, էջ 61:

³⁶ **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմություն Տիեզերական (Մատենագիրք Հայոց), հ. ԺԵ, Ժ դար (այսուհետև՝ Ասողիկ), Ե., 2011, էջ 688-689:

³⁷ **Սամուել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Անահիտ Հայրապետեանը, առաջաբանը՝ Կարեն Մաթեոսեանի, խմբագրությամբ՝ Գեորգ Տեր-Վարդանեանի (այսուհետև՝ Սամուել Անեցի), Ե., 2011, էջ 91-92:

³⁸ **Մխիթար Անեցի**, Մատենան աշխարհավկայ հանդիսարանաց, աշխատասիրությամբ՝ Հ. Գ. Մարգարյանի (այսուհետև՝ Մխիթար Անեցի), Ե., 1983, էջ 67:

³⁹ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 37, 40:

⁴⁰ **Ակինյան Ն.**, նշվ. աշխ., էջ 418: Հայագետն առաջարկում է սրբագրել «ամսս Լ»-ն՝ «ամսս քսան»-ի, այն է՝ 484-504/505 թթ.:

⁴¹ Գիրք Թղթոց, Մատենագրություն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 42: Սակայն՝ ոչ որպես մարզպան:

Թուղթը կնքված է Բարգեն կաթողիկոսի և Վարդ Մամիկոնյանի մատանիներով⁴²: Բարգեն կաթողիկոսի երկրորդ թղթի մեջ նշվում է Վարդի մարզպան լինելը⁴³: Այստեղից Մ. Օրմանյանը եզրակացրել է, որ Վահանը մահացել է 506 թ. առաջ, նրա մարզպանությունը տևել է 20 տարուց ավելի, և 505 թ. հետո չպետք է լինի⁴⁴:

Նման տեսակետ է արտահայտել նաև Հ. Համբարյանը, որը, հենվելով Վարդան Արևելցու (XIII դ.) տեղեկության վրա, Վահանի մարզպանությունը դնում է 485-505 թթ.⁴⁵: Ընդգծենք, որ Վարդան Արևելցին չի նշում «քսան տարի» կամ «ամս Բ», այլ փաստում է. «Բսկ Վահանայ բարիոք վախճանեալ, փոխէ գիշխանութիւն նորա եղբայր իւր Վարդ, ամս չորս. զՎահան կէսք քսան ամ, և կէսք երեսուն և մի ասեն կացեալ իշխան»⁴⁶: Կ. Կոստանյանցը նշում է, որ 485-ին Վաղարշը Վահանին տալիս է Մամիկոնյանների տանուտերությունն ու հայոց սպարապետությունը, իսկ 486-ին՝ մարզպանությունը⁴⁷:

Լեոն Վահանի մարզպանությունը դնում է Վաղարշի կառավարման երկրորդ տարում՝ 486 թ., և նկատում, որ 506 թ. արդեն նախարարների մեջ առաջինը նրա եղբայր Վարդն էր⁴⁸: Մ. Երեմյանն ընդունել է Մ. Օրմանյանի տեսակետը, և Վահան Մամիկոնյանի մարզպանությունը դրել է 485-ի աշնան վերջ-505 թ.⁴⁹, նշելով, որ պարսկաբյուզանդական պատերազմի (502-504 թթ.) ավարտից հետո, որի հաշտության բանակցությունները տևեցին 504 թ. ձմռանից մինչև 506 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները, բյուզանդացիներն իրենց տեր ու տիրական էին զգում Հայաստանում, և երբ Վահան Մամիկոնյանը մահացավ (505 թ.), Անաստաս կայսրը (491-518)^{***} Վարդ Մամիկոնյանին կարգեց Մարզպանական Հայաստանի կառավարիչ՝ «պատրիկ» տիտղոսով⁵⁰: Հավանաբար, դրա համար էլ Վարդը մարզպան չի կոչվում, այլ միայն 506 թ. աշնանը, երբ կնքվեց պարսկաբյուզանդական հաշտության

⁴² Նույն տեղում, էջ 47: Բարգենը՝ որպես հոգևոր առաջնորդ և Վարդը՝ որպես երկրի կառավարիչ. վերջինս կրում էր «պատրիկ» տիտղոսը:

⁴³ Նույն տեղում, էջ 48:

⁴⁴ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 578:

⁴⁵ Համբարեան Հ., Հայաստանի քաղաքական վիճակը Վահանի մահէն մինչեւ Վարդան Ե-ի ապստամբութիւնը (Հանդէս ամսօրեայ), Վիեննա, 1912, - 9, էջ 531:

⁴⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 57:

⁴⁷ Կոստանեանց Կ., Հիւսուածք հայոց հին պատմագիրների խօսքերից, հ. Ա, Հայոց մարզպանների ժամանակուայ պատմութիւնը, գիրք երկրորդ, Վիեննա, 1877, էջ 213:

⁴⁸ Լեոն, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 2, Հայոց պատմություն, Միջին դարեր, Ե., 1967, էջ 130:

⁴⁹ ՀժՊ, հ. II, էջ 206, 211, տե՛ս նաև Բսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Ե., 1991, էջ 138-140:

^{***} Բյուզանդական կայսրերի ժամանակագրությունը տրվում է համաձայն (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Ե., 1976, էջ 474 ցանկի):

⁵⁰ ՀժՊ, հ. II, էջ 211:

պայմանագիր, որով Հայաստանը կրկին ընկավ Պարսկաստանի ենթակայության տակ, Վարդ Մամիկոնյանը արքայից արքա Կավադ Ա-ից ստացավ մարգպանությունը⁵¹: Այդպես է մտածել Լեոն՝ նշելով, որ Կավադը 506 թ. հաշտությունից հետո, գուցե հենց այս հաշտության հետևանքով, Հայաստանի մարգպան նշանակեց Վարդ պատրիկին⁵²:

Վահանը 506-ին չէր կարող մարգպան լինել, որովհետև, եթե նա՝ որպես մարգպան, չէր մասնակցել Դվինի առաջին ժողովին, միննույն է կաթողիկոս Բարգեն Ռթմեսցին պետք է ժողովին տար բարձրագույն իրավաբանական ուժ, այսինքն՝ անհրաժեշտ է, որ դրա որոշումները կնքվեին կաթողիկոսի և մարգպանի կողմից: Վարդն է կնքում «թուղթը» կաթողիկոսի հետ, ինչը նշանակում է, որ Վահանը մարգպան չէր⁵³, իսկ Վարդն էլ այստեղ որպես մարգպան հանդես չի գալիս, քանզի վերջինս «պատրիկ» էր կարգված և միայն 506 թ. հաշտությունից հետո Կավադ Ա արքայից ստացավ մարգպանությունը:

Այսպիսով՝ Վահան Մամիկոնյանին կարելի է վերագրել շուրջ 20 տարվա կառավարում, այսինքն՝ նրա մարգպանությունը տևել է **485 թ. աշնանից մինչև-505 թ.**:

Վարդ Մամիկոնյանի կառավարման համար կարևոր են Սեբեոսի և Ասողիկի տեղեկությունները: Սեբեոսի հաղորդմամբ՝ **«Յետ Վահանայ կալաւ զիշխանութիւնն Վարդ Պատրիկ եղբայրն նորա սակաւ ինչ ժամանակ, և մեռաւ»**⁵⁴, իսկ ըստ Ասողիկի, Վարդը կառավարեց **«ամս Դ»**⁵⁵: Նկատենք, որ հետագա պատմիչների հաղորդումները Վարդ Մամիկոնյանի կառավարման վերաբերյալ կրկնում են Ասողիկին՝ տատանվելով 3/4 տարվա մեջ, այսինքն՝ **506 թ. վերջ-509/510 թ.**:

Վարդ Մամիկոնյանից հետո Հայաստանում նշանակվում են պարսիկ մարգպաններ: Սեբեոսը գրում է. **«Զկնի նորա եկին մարգպան պարսիկք. ապա ոչ կարացին պատերազմիլ Հայք, ի հնազանդութեան կացին մինչև ցՄուրէնն մարգպան և ցՎարդանն Մամիկոնէից տէրն»**⁵⁶: Ըստ Ասողիկի՝ **«Եւ ապա զկնի Վարդ պատրկայ եղբարն Վահանայ, մարգպանք պարսիկք տիրեցին Հայոց ամս ԺԱ: Եւ ապա եկաց**

⁵¹ Նույն տեղում, էջ 211-212:

⁵² Լեոն, նշվ. աշխ., էջ 156:

⁵³ Կամ ողջ չէր կամ չէր պաշտոնավարում: Թեպետ Վահան Մամիկոնյանի կառավարման և մահվան թվականները կարող են տարբեր լինել: Մեր խնդիրն է պարզել Վահանի կառավարման թվականը: Նա 506 թ. մարգպան չէր, բայց դա չի նշանակում, որ չէր կարող ողջ լինել:

⁵⁴ Սեբեոս, էջ 67:

⁵⁵ Ասողիկ, էջ 689:

⁵⁶ Սեբեոս, էջ 67:

իշխան Հայոց Մեծեժ (Մժեժ) Գնունի ամս Լ»⁵⁷: Ըստ Մխիթար Անեցու՝ «պարսիկք ամս ԺԹ»⁵⁸:

Սեբեոսի և Ասողիկի հաղորդումները, ընդհանրություններով հանդերձ, էապես տարբերվում են: Փաստենք. Սեբեոսը նշում է, որ Վարդից հետո եկան պարսիկ մարզպաններ⁵⁹, ինչն առկա է նաև Ասողիկի «Պատմության» մեջ: Այնուհետև, ըստ Սեբեոսի, հայերը չկարողանալով պատերազմել՝ մնացին հնազանդ: Եթե հայերը հնազանդվում են, ապա ինչպես կարող էր Ասողիկի հիշատակած Մժեժ Գնունին դառնալ մարզպան: Պարսիկները հայերին հնազանդեցնում էին, որ հայ մարզպանն նշանակեին: Եթե հետևենք միայն Ասողիկին, ապա **509/510-520/521 թթ.** Հայաստանում իշխել են պարսիկ մարզպանները, իսկ նրանց հաջորդել է Մժեժ Գնունին:

Ի դեպ, Մ. Չամչյանցի, Մ. Օրմանյանի և նրանց հետևած Ս. Երեմյանի կարծիքը, այն է՝ **Բուրղան/Բուրգան** մարզպանը⁶⁰ հաջորդել է Վարդին, շփոթի հետևանք է:

Մ. Օրմանյանը հղում է արել Կիրակոս Գանձակեցու 1865 թ. հրատարակչության (էջ 30) աշխատասիրողի ծանոթագրությանը, որտեղ նշված է. «Ոչ յիշի յայլոց մի ըստ միոջէ երեք ճիհր, այլ Բուրգան իբր յիսուն ամաւ յառաջ քան զճիհր Վշնասպ Սուրէն և Միհրան ճիհր Վղոն իբր տասն ամաւ յետոյ քան զսա»⁶¹:

Ըստ Գանձակեցու՝ Վարդից հետո եկան «պարսիկք մարզպանք ամս երիս. և ապա Մեժեժ Գնունի ամս երեսուն և չորս: Իսկ յետ Մեժեժայ մարզպանի պարսիկք տիրեն Հայոց ամս երեսուն և վեց: Իսկ յետ սպանման մարզպանացն ճիհր Բուրգենայ, ճիհր Վշնասպ Սուհենայ, ճիհր Վղոն Միհրանայ, և այլ տաճկաստանեացն, Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն»⁶²: Եթե Սուրենից հիսուն տարի առաջ Բուրղանն էր մարզպան, ապա ինչպե՞ս է նրան հաջորդում Սուրենը, ու ի՞նչ մնացին Դենշապուհն ու Վարազդատը: Համենայն դեպս, աղբյուրները Բուրղան անունով ոչ մի մարզպան չեն հիշատակում:

Հաջորդ մարզպանի մասին մեզ տեղեկություն է տալիս Ասողիկը, ըստ որի, պարսիկ մարզպաններին հաջորդել է Մժեժ Գնունին «**ամս Լ**»⁶³: Վարդից հետո տիրող իրավիճակը Հովհաննես Դրասխանակերտցին այլ կերպ է նկարագրում: Նա նշում է, որ Մուշե Այլաբերեցի կաթողիկոսի (526-534) օրոք Հայաստանում իշխում էին

⁵⁷ Ասողիկ, էջ 689:

⁵⁸ Մխիթար Անեցի, էջ 67:

⁵⁹ Ցավոք, չգիտենք նրանց անունները և թիվը:

⁶⁰ Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.-ը), հ. Բ, Ե., 1984, էջ 236, Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 593-594, ՀԺՊ, հ. II, էջ 212, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, Ե., 2011, էջ 309:

⁶¹ Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ Համառոտ Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 30:

⁶² Կիրակոս Գանձակեցի, էջ 40, 44, 53:

⁶³ Ասողիկ, էջ 689:

պարսիկ մարզպանները: Մուշեին, որպես կաթողիկոս հաջորդում է Սահակը (534-539)՝ Հարք գավառի Հղուկ գյուղից, որի ժամանակ ևս Կավադ արքայի հրամանով պարսիկ մարզպաններ էին իշխում Հայաստանում⁶⁴: Կավադի հիշատակումն այստեղ շփոթի արդյունք է, քանի որ նա 531 թ. մահանում է և նրան հաջորդում է որդին՝ Խոսրով Ա Անուշիրվանը (531-579), այսինքն՝ մարզպանները նշանակվել էին նրա որդու կողմից: Ինչևէ, վերոնշյալը խոսում է Հայաստանում **526-539 թթ.** պարսիկ մարզպանների առկայության մասին:

Մժեժ Գնունու կառավարման վերաբերյալ պատմաբանները միակարծիք չեն, քանզի եղած աղբյուրագիտական նյութը խիստ անորոշ է և հնարավորություն չի ընձեռում վերջնական եզրակացություններ կատարելու: Առաջինն այս իշխանին հիշատակում է Ասողիկը, սակայն պատմիչի տեղեկությունները հակասում են պատմական շատ անցքերի: Մասնավորապես, նա նշում է, որ Մժեժ Գնունու կառավարման յոթերորդ տարում կաթողիկոս դարձավ Ներսես Բ Բագրևանդցին (548-557): Վերջինս իր հայրապետության չորրորդ և Մժեժի կառավարման տասներորդ տարում Դվինում ժողով գումարեց⁶⁵:

Ներսեսը կաթողիկոս է դարձել **548 թ.**⁶⁶, ուստի Մժեժ Գնունու մարզպանության սկիզբը դառնում է 541-ը, որովհետև նրա մարզպանության յոթերորդ տարում էր Ներսեսը դարձել կաթողիկոս: Սակայն այս մոտեցումն ընդունելի չէ, որովհետև ոչ Ներսես կաթողիկոսի չորրորդ, ոչ էլ Մժեժ Գնունու տասներորդ տարում Դվինի ժողով չի եղել⁶⁷: Եթե հաշի առնենք նաև այն փաստը, որ երեսուն տարի է վերագրվում Մժեժին, ապա ստացվում է 571 թ., ինչն անհնար է:

Ինչպես նշեցինք, առաջին հիշատակությունը պատկանում է Ասողիկին, իսկ հետագա պատմագիրների կողմից Մժեժ Գնունուն վերաբերող տեղեկությունները, ամենայն հավանականությամբ, քաղված են Ասողիկի երկից⁶⁸, որովհետև թե՛ Սամվել

⁶⁴ Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 63:

⁶⁵ Ասողիկ, էջ 689-690, Ստեփաննոս Օրբելեան, էջ 96:

⁶⁶ Անանեան Պ., Պատմական յիշատակարան մը Դուինի Բ ժողովքի մասին, (Բազմավեպ), Վենետիկ, 1957, - 5-6, էջ 119-120:

⁶⁷ Ժողովը, համաձայն «Գիրք թղթոց»-ի, տեղի է ունեցել Խոսրով արքայի կառավարման 24 տարում՝ **555 թ.** (Գիրք Թղթոց, էջ 72): Այս մասին մանրամասն տե՛ս Անանեան Պ., Պատմական յիշատակարան մը Դուինի Բ ժողովքի մասին, էջ 111-121, նույնի՝ 1958, - 3-5, էջ 64-72, Մելիքյան Կ., "Narratio de rebus Armeniae" Հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Ե., 2007, էջ 75:

⁶⁸ Բերենք օրինակներ. «Վահան՝ ամս Լ: Վարդ՝ ամս Դ: Մեժեժ Գնունի՝ ամս Լ» (Մխիթար Անեցի, էջ 67), որը նա կարող էր վերցնել միմիայն Ասողիկից, քանզի Ս. Անեցին գրում է. «Վահան՝ ամս ԼԱ: Վարդ՝ ամս Գ: Մժեժ Գնունի՝ ամս ԼԴ» (Սամուել Անեցի, էջ 91-93), Գիրակոս Գանձակեցին՝ «Վարդ՝ ամս երիս, պարսիկք՝ ամս երիս, Մեժեժ Գնունի՝ ամս երեսուն և չորս» (Գիրակոս Գանձակեցի, էջ 40): Վարդան Արևելցին հաղորդում է. «Իսկ յիշխանաց կարգի զկնի Մեժեժայ պարսիկք կացին. նախ Դենշապուհ, որ զշնամուրթիսն շատացոյց, և յետ նորա Վարագրատ ոմն, և ապա Սուրեն ազգական Խոսրովու, որ շնայր ընդ կանայս իշխանացն» (Վարդան վարդապետ,

Անեցին, թե՛ Մխիթար Անեցին, թե՛ Կիրակոս Գանձակեցին, թե՛ Վարդան Արևելցին միայն նշում են, որ Մժեժ Գնունին կառավարել է **34 տարի** (Ս. Անեցի և Կ. Գանձակեցի), **30** (Ս. Անեցի), **31** (Վ. Արևելցի), որից հետո եկան պարսիկ մարզպաններ. նրանք չեն չհաղորդում այլ տվյալներ:

Սերեոսը և Հովհաննես Դրասխանակերտցին չեն հիշատակում Մժեժ Գնունուն (նկատի ունենք՝ VI դարի Մժեժ Գնունուն), նշելով միայն պարսիկ մարզպաններին: Այդ իշխանի անունը բացակայում է նաև «Գիրք թղթոց»-ի «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն Ներսեսի Հայոց կաթողիկոսի...» վավերագրում⁶⁹: Ինչպես նշեցինք, պատմաբաններն այս հարցում տարակարծիք են: Ըստ Հ. Համբարյանի, այդքան մեծ ժամանակամիջոցն ինքնին անհավանական է դարձնում Մժեժ Գնունու մարզպանությունը, նաև փաստում, որ համաձայն Աստղիկի՝ Մժեժի օրոք Ներսես Բ կաթողիկոսը Դվինի ժողով գումարեց, միաժամանակ այդ ժողովի վավերական արձանագրության մեջ այդպիսի անվամբ իշխան չի հիշատակվում⁷⁰:

Ն. Ակինյանը, հետևելով Հ. Համբարյանին, գտնում է, որ Աստղիկը շփոթել է Մժեժ Գնունուն բյուզանդական Հայաստանի կառավարիչ Մժեժ Գնունու հետ, ով առաջին անգամ 630-640-ականներին է երևան գալիս պատմության մեջ⁷¹: Ս. Օրմանյանը Մժեժ Գնունու կառավարումը դնում է 517-548 թթ⁷²: Լեոն նույնպես գտնում է, որ հոների դեմ տարած հաղթանակի հետևանքով (մոտ 518 թ.) Մժեժ Գնունին Կավադ արքայի կողմից նշանակվեց հայոց մարզպան⁷³: Հ. Աճառյանը և Կ. Թումանովը Մժեժ Գնունու մարզպանությունը դնում են 518-548 թթ.⁷⁴: Հայոց պատմության քրեստոմատիայում նրա մարզպանությունը թվագրված է 529-535-ով⁷⁵:

էջ 61): Ահա Աստղիկի հատվածը. «...յետ Մժեժին Գնունու պարսիկ մարզպանք եկին ի Հայս: Նախ Դենշապուհ, որ զճնտնութիւնն շատացոյց եւ զորսզական հուրն վառեաց ի Ռշտունիս, եւ յետ նորա Վարազդատ ոմն պարսիկ ի նմին տոհմէ, եւ ապա Խոսրով արքայ Պարսից զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր-Վշնասպ, հանէ ի հազարապետութիւն Հայոց, որ եկեալ կալաւ զերկիրս մեր՝ յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի շնայր ընդ կանայս ազատաց» (Աստղիկ, էջ 690-691): Պարզ երևում է, որ Վարդան Արևելցին այդ հատվածը վերցրել է Աստղիկից և կարծել, թե վերոնշյալը փաստում է Մժեժի մարզպան լինելը. մեր կարծիքով, դա այնքան էլ իրատեսական չէ:

⁶⁹ Գիրք թղթոց, էջ 72-75:

⁷⁰ Համբարյան Հ., նշվ. աշխ., էջ 532:

⁷¹ Ակինյան Ն., նշվ. աշխ., էջ 420:

⁷² Օրմանյան Ս., նշվ. աշխ., էջ 602, 621:

⁷³ Տե՛ս Լեոն, նշվ. աշխ., էջ 156: Սակայն Լեոն չի նշել, թե հոների՝ Հայաստան արշավանքի մասին տեղեկությունները որ աղբյուրից է վերցրել:

⁷⁴ Օտար աղբյուրները հայերի մասին 4, Պարսկական աղբյուրներ, Ֆիրդուսի, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Ե., 1942, էջ 52, ծնթ. 1, Toumanoff C. *Studies in christian Caucasian history*, Georgetown University, 1963, p. 205.

⁷⁵ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, էջ 319: Հետաքրքրական է, որ քրեստոմատիայի վերջում կազմված ժամանակագրության մեջ Մժեժ Գնունու մարզպանությունը նշված է **513-548 թթ.** (Նույն տեղում, էջ 623):

Մովսես Կաղանկատվացին (VII դ., որի երկր շարունակել է Մովսես Դասխուրանցին՝ X դ.) հաղորդում է. «Ընդ այն ժամանակս ապա թագաւորն Ռոսմոսքեան իւրովք զաւրաւքն եւ Թորեյական գնդին զումարեալ ժողովեաց զամենայն զաւրս Հոնաց եւ անց յայս կոյս Կուրական գետոյն՝ տարածեալ յՈւտիացոց զաւառն: Եւ ածեալ նստուցանէր զղակիչն իւր մերձ ի Խաղխաղն քաղաք: Եւ անդէն արս երիս ընտրեալ զաւրաւարս՝ ոստիկանս առնէր ի վերայ գնդին մեծի եւ բովանդակեալ զումարէր ի ձեռս նոցա զմետասան զաւրացն բազմութիւնս եւ հրամայէր յերիս առաջս առնել՝ ասպատակել ի վերայ աշխարհին Աղուանից, Հայոց եւ Վրաց: Իսկ երրորդ մասն զաւրուն հասեալ ի մուտ զատկին յԱրցախական զաւառն՝ տայր ասպատակ ի վերայ Մեծ Կուենից»⁷⁶:

Պատմիչի հաղորդմամբ, VI դ. սկզբներին ամբողջ Այսրկովկասը ենթարկվեց խազարներին ցեղակից հոնսաբիրների ավերիչ արշավանքներին, որոնք առաջին իսկ արշավանքի ժամանակ՝ 516 թ. հաստատվեցին Ուտիք նահանգի Խաղխաղ քաղաքում, որտեղից էլ ասպատակություններ կատարեցին Աղվանք, Վիրք և Արցախի շրջակա գավառներ⁷⁷:

Այս կապակցությամբ IX դ. արաբ պատմիչ Բալազուրին գրում է. «Պերոզ արքայի որդի Կավադն ուղարկել էր իր մեծ զորավարներից մեկին՝ տասներկու հազարով, որը եկավ Աղուանք երկիրը և նվաճեց Արաքս կոչված գետից մինչև Շարուան: Ապա Կավադը հասավ նրան և Աղուանքում կառուցեց Բայլական քաղաքը, ինչպես նաև Պարտավ քաղաքը ամբողջ սահմանային ամրությունների համար, իսկ Կապադակ քաղաքը՝ խազարների դեմ»⁷⁸: Պատմիչների վերոնշյալ հաղորդումներից ամեննին էլ չի հետևում, որ Կավադ արքան Մեծ Գնունուն կամ որևէ այլ մարդու կարգել է մարզպան:

Որոշ մասնագետներ, VI դ. բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու՝ պարսկական պատերազմների առնչությամբ հիշատակած միակնանի Բարեսամ-

Սա կարելի էր վրիպակ համարել, սակայն այդ ցանկը կրկնում է 1981 թ. հրատարակությունը (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Ե., 1981, էջ 852):

⁷⁶ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (Մատենագիրք Հայոց), հ. ԺԵ, Ժ դար, էջ 140-141:

⁷⁷ Связан Г. История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Е., 2009, с. 241.

⁷⁸ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 16, Արաբական աղբյուրներ Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 265:

նասին փորձել են նույնացնել հայոց մարզպան Մժեժ Գնունու հետ⁷⁹, իսկ ոմանք էլ՝ VI դարի Մժեժին՝ VII դ. բյուզանդական Հայաստանի համանուն կառավարչին⁸⁰:

Մեր կարծիքով, «Գիրք թղթոց»-ի մի արժեքավոր տեղեկություն նվազեցնում է Մժեժ Գնունու մարզպան լինելու հնարավորությունները: Այսպես՝ Ներսես կաթողիկոսի «Ուխտ միաբանութեան...» թղթում ասվում է, որ «ի տասն և յթներորդ ամի Խոսրովու (Անուշիրվան - Խ.Հ.) արքայից արքայի (548 թ.- Խ.Հ.), ի մարզպանութեանն Նիհորականայ, արարին իմն շինած յանուն Մանածրիի Ռաժկի որ հաւատացեալ ի Քրիստոս...»⁸¹: Խոսրով Անուշիրվանի կառավարման 17-րդ տարին 548 թվականն է, և այդ ժամանակ մարզպանն էր Նիհորականը, որի մարզպանությունը կարող էր սկսված լինել նաև ավելի վաղ: Այդ պարագայում Ասողիկի հաղորդումն առ այն, որ Մժեժի կառավարման տասներորդ տարում Ներսես կաթողիկոսը Դվինում ժողով հրավիրեց արժանահավատ չէ: Այստեղ կարևորն այն չէ, որ Մժեժ Գնունու կառավարման տասներորդ տարին ճշգրիտ կերպով համապատասխանի Դվինի ժողովի թվականին, այլ այն, որ նշվում է Մժեժ Գնունու օրոք ժողովի կայանալը: Այսինքն՝ Ասողիկն ինքն իրեն հակասում է: «Սուրբ Հիզտիրուզիտի վկայաբանության» մեջ ասվում է, որ «Ի վաղիւ անդր երթեալ մոզուցն առաջի Հայոց իշխանին՝ որ կոչէր Նիհորական, և ամբաստանեցին զերանելոյն»⁸²:

Վերոնշյալից տրամաբանական հարց է ծագում. արդյո՞ք Ասողիկի հիշատակած Մժեժ Գնունին եղել է պատմական անձ կամ չի շփոթվել VII դ. իշխած բյուզանդական Հայաստանի համանուն իշխանի հետ, որն անգամ պատմիչի կողմից չի էլ հիշատակվում: Հակառակ պարագայում նա ինչպես պետք է շփոթեր «30 տարվա խաղաղ մարզպանություն» վարած հայոց իշխանի մասնակցությունը հայոց ազգային եկեղեցու հիմքերն ամրապնդելու համար հրավիրված ժողովին: Այն էլ այն դեպքում, երբ Ներսես կաթողիկոսի վավերագրում, և «Սուրբ Հիզտիրուզիտի վկայաբանության» մեջ հստակ ասված է, որ առնվազն 548 թ. Հայաստանում կար պարսիկ մարզպան:

⁷⁹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1967, էջ 323, ծնթ. 111:

⁸⁰ **Մժեժ Գնունի**- հայ անվանի նախարարներից է, որն աչքի է ընկել հյուսիսային ցեղերի՝ հոների դեմ հերոսական մարտեր մղելով, որի համար **518 թ.** նշանակվել է Հայաստանի մարզպան (**518-548 թթ.**): Հետագայում, երբ Վարազտիրոցը հունաց կայսրին դավաճանելու մեղադրանքով քստրվեց, Մժեժ Գնունին կայսեր կողմից նշանակվեց Հայաստանի կառավարիչ (**Սեբեոս**, Պատմություն, քննական բնագիրը՝ Գ. Աբգարյանի, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիա-գարյանի, Ե., 2005, էջ 352, ծնթ. 289): Մակայն այդպիսի մոտեցումն ընդունելի չի կարող լինել, նախ, Մժեժ Գնունին առնվազն 25-30 տարեկան պետք է լիներ, որ նշանակվեր մարզպանի պաշտոնում, եթե դա էլ չհաջվենք, հենց 518 թ. մինչև 635 թ. արդեն կազմում է **117 տարի, եթե սրան էլ ավելացնենք Մժեժի տարիքը դիցուք 25, կստանանք 142:**

⁸¹ Գիրք Թղթոց, էջ 72:

⁸² Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց, հ. Բ., Վենետիկ, 1874, էջ 126:

Այսպիսով, փաստերի համադրությունը թույլ չի տալիս ՄԺԺ Գնունուն համարել մարզպան, որը կառավարել է մոտ 30 տարի:

Ինչպես նշեցինք, առնվազն 548-ից Հայաստանում մարզպան էր կարգված Նիխորականը: «Սուրբ Հիզտիբուզիտի վկայաբանություն»-ից տեղեկանում ենք հաջորդ մարզպանների մասին. «Յետ սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխորականին Նախապետն անուանեալ. և նստեալ յատենի ածին զերանելին Մախոշ առաջի նորա»⁸³, «Եւ ի լնուլ այլ ևս երից ամացն՝ յաջորդէր զՆախապետն որում Քնարիկն ասեին»⁸⁴: Նշանակում է Նիխորականը և Նախապետը կառավարել են 3-ական տարի, քանզի նշվում է, որ ևս երեք տարի հետո Նախապետին հաջորդեց Քնարիկը (Նիխորական՝ ~ 546-549, Նախապետ՝ ~ 549-552, Քնարիկ՝ ~ 552-554)⁸⁵:

Հովհաննես Դրասխանակերտցին հիշատակում է «Վշնասն Վահրամ» (հնարավոր է՝ Վշնասպ, միջ. պրսկ. *Gušnasp dēhiḡ*) մարզպանին, որից չարչարանքներ կրելով էլ նահատակվել է Սուրբ Հիզտիբուզիտը⁸⁶ 553 թ-ի նոյեմբերի 9-ին⁸⁷: Վարդան Արևելյին հիշատակում է «Վարհամ» անունով մարզպանի⁸⁸:

IX դ. արաբ պատմագիր ալ-Դինավարին հաղորդում է. «Ապա գրեց (Որմիզդ Դ.-ը-Իս.Հ.) Հայաստանի ու Ատրպատականի իր կառավարիչներին, որոնք հավաքվեցին ու դեմ կանգնեցին խազարաց տիրոջը, մինչև որ հեռացրին իրենց հողից: Երբ այս բոլորը վերջացավ, ուշադրությունը սևեռեց թուրքաց տիրոջ վրա, որն ամենահզոր թշնամին էր և գրեց Սահմանային ամրություններ [հանդիսացող] Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ Վահրամ Վշնասպի (Բահրամ Ջուշնաշ) որդի Վահրամին, որը կոչվում էր Վահրամ Չուբին, հրամայելով նրան ժամանել»⁸⁹: Հայ և արաբ պատմիչների հաղորդումները մի կողմից փաստում են Վշնասպ Վահրամի գոյությունը, մյուս կողմից, սակայն, տարբերություն կա մարզպանի և կառավարչի միջև: Հավանաբար, այստեղ խոսքը հյուսիսային քուստակի մասին է, որի կառավարիչն էր Վահրամ Վշնասպը, իսկ մարզպանները ստորադասված էին պառոսպաններին և սպահբեղներին⁹⁰: Հենվելով Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդման վրա՝ կարելի էր 553 թ. մարզպան համարել Վշնասպ Վահրամին, սակայն մեզ հասած

⁸³ Նույն տեղում:

⁸⁴ Նույն տեղում, էջ 127:

⁸⁵ Հմմտ. Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 422-424:

⁸⁶ Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 64:

⁸⁷ Անանեան Պ., Պատմական յիշատակարան մը Դուինի Բ ժողովրդի մասին, 1957, էջ 120:

⁸⁸ Վարդան վարդապետ, էջ 57:

⁸⁹ Արաբական աղբյուրներ Գ, էջ 207:

⁹⁰ Сукиасян А. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.), Е., 1963, с. 301.

«Վկայարանութիւն սրբոյն Յիզուիրուզտեայ» վավերաթղթում⁹¹ Վշնասպ Վահրամ կամ Վահրամ/Վարհամ անունով մարզպան չի հիշատակվում:

К ВОПРОСУ О ПРАВЛЕНИИ МАРЗПАНОВ АРМЕНИИ

ХАЧАТРЯН Г. А.

Резюме

Марзпанство как персидская административная система правления просуществовало в Армении около двухсот лет (V-VII вв.). Оно возникло в 428 г. после упразднения царства армянских Аршакуни (Аршакидов), что было обусловлено, во-первых, усилением армянских нахарарских (княжеских) домов, а, во-вторых, тем, что Сасанидская Персия содействовала отделению этих нахарарских домов от центральной власти. В качестве марзпанов назначались как персы, так и армяне, однако не все упоминаемые в исторических источниках марзпаны являлись историческими деятелями либо марзпанами как таковыми.

ON THE QUESTION OF RULING OF THE ARMENIAN MARZPANS

H. KHACHATRYAN

Abstract

Marzpanate in Armenia as the regime of Sassanids lasted about two hundred years (V-VII c.). It rose in 428 after the fall of the Armenian Arshakuni kingdom. The results were: first of all was mightiness of the Armenian nakharars. The second was the Sassanids encouragement for separating the nakharars from the central kingdom. Marzpanns were both of Persian and Armenian origin. But not in all sources the mentioned marzpanns were the historical figures.

⁹¹ Վարք եւ վկայարանութիւնք սրբոց, էջ 124-130:

ՇԱՌԼ ԴԸ ԳՈՒԼԻ ԱԼԺԻՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ժ. Հ.

Շատլ դը Գոլլի վարած արտաքին քաղաքականության մեջ առանձնանում են հետևյալ ուղղությունները. գաղութային (առաջին հերթին Ալժիրի ճգնաժամի կարգավորումը), հյուսիսատլանտյան (հարաբերությունները ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ), եվրոպական (հարաբերությունները ԳՖՀ-ի և ԱՊԵՀ-ի* հետ) և հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Այս ուղղություններից առավել ջանքեր էր պահանջում Ալժիրում ստեղծված իրավիճակի շտկումը, քանի որ ընթացող պատերազմն օր օրի վատթարացնում էր ֆրանսիացիների դրությունն այդ երկրում, խստում Ֆրանսիայի միջազգային վարկանիշին և տնտեսական բեռ դառնում Ֆրանսիայի տնտեսության համար: Անձամբ Շատլ դը Գոլլը կողմ էր Ալժիրին անկախություն տալու գաղափարին և համոզված էր, որ Ֆրանսիան այլևս չի կարող շարունակել նախկին քաղաքականությունը և անիմաստ էր համարում Ալժիրը ուժով պահել ֆրանսիական իշխանության ներքո: Սակայն կառավարության ոչ բոլոր անդամներն էին համամիտ դրան: Ալժիրի հարցը ֆրանսիական կառավարությունը բաժանել էր երկու գաղափարական ճամբարի. մի մասը կողմ էր գաղութային քաղաքականության շարունակման ու պատերազմը մինչև հաղթանակ տանելուն (մասնավորապես աջ ծայրահեղականները)¹, իսկ ըստ մյուս մասի՝ ստեղծված իրավիճակը չէր բխում երկու ժողովուրդների շահերից, և անհրաժեշտ էր անկախություն տալ Ալժիրին²: Մինչ Փարիզը կկողմնորոշվեր Ալժիրի նկատմամբ քաղաքականության հարցում, 1958 թ. մայիսին Ալժիրում ստեղծվեց «Հանրային անվտանգության կոմիտե»՝ կոչ անելով հրաժարվել Փարիզին ենթարկվելուց: Որպես դրա հետևանք՝ 1958 թ. մայիսի 31-ին Պիեռ Պֆիմլենի կաբինետն ընկավ. նոր վարչապետ նշանակվեց Շատլ դը Գոլլը³:

* Աժիա և պողոպատի եվրոպական համայնք՝ ստեղծված 1952 թ., որի հիմքի վրա հետագայում ձևավորվել է ԵՄ-ն:

¹Sté u *История международных отношений (1918-2003)*, т. третий. События 1945-2003 /Раздел второй. балансирование на грани войны, глава 5. Противоречия «конкурентного сосуществования» (1956-1958), <http://www.diphis.ru>

² Sté u **Арзаканян М.** "Де Голль и реформа государственного устройства Франции" [Электронный ресурс] - <http://www.strana-oz.ru/?numid=178 article=837>

³Sté u *История международных отношений (1918-2003)*, т. третий... <http://www.diphis.ru>

Մայիսի 13-ին ալժիրյան իրադարձությունների հետևանքով Ֆրանսիան կանգնել էր քաղաքացիական պատերազմի շեմին: Այն հանգեցրեց Չորրորդ հանրապետության անկման: Իշխանության եկած Շառլ դը Գոլը որպես քաղաքական առաջնահերթություն, իր առջև դրեց Ալժիրյան պատերազմի հարցը: Վերջինս անմիջապես իրադրությունը վերցրեց վերահսկողության ներքո և բոլորովին էլ մտադիր չէր անհապաղ գնալ զիջումների ապստամբների հետ, բայց նպատակ էր հետապնդում վերակարգավորել Ֆրանսիայի հարաբերություններն իր գաղութների հետ: 1958 թ. սեպտեմբերին Ֆրանսիայում ընդունվեց նոր սահմանադրություն: Դրանով նախ-կին Ֆրանսիական միությունը վերափոխվեց Ֆրանսիական համայնքի. դա քաղաքական մարմին էր, որի մեջ էին Ֆրանսիան և իր գաղութները՝ որպես «ինքնավար» պետություններ: Շատ գաղութներ, բացառությամբ Գվինեայի (որը ձգտում էր խաղաղ ճանապարհով հասնել անկախության), համաձայնեցին դր Գոլի պլանին: Սակայն ալժիրցիները չընդունեցին այդ պայմանները⁴: ԱՊԵՀ-ը թերահավատորեն էր նայում Ֆրանսիայի հանձնառությանը՝ լուծելու ալժիրյան խնդիրը, և դեմ էր ամեն տեսակ իրավական ընդարձակումներին: Ըստ նրա՝ Շառլ դը Գոլը դեռ հստակ չի կողմնորոշվել Ալժիրի ճակատագրի հարցում, փորձում է այնտեղ պահել ֆրանսիական լեզուն ու մշակույթը, և իր այցն էլ Ալժիր, որը տեղի ունեցավ հունիսի 4-7-ը, ԱՊԵՀ-ն ընկալեց որպես «Ֆրանսիական Ալժիրի» օգտին արված քայլ: Ալժիրում հունիսի 4-ին Շառլ դը Գոլը հստակ խոսեց ինքնորոշման իրավունքի մասին⁵: Ելույթ ունենալով մեծ հանրության առջև՝ դր Գոլն ասաց. «Ես գիտեմ՝ ինչ է այստեղ տեղի ունեցել: Ես գիտեմ՝ ինչ էիք ուզում անել: Ես տեսնում եմ, որ այն ճանապարհը, որ բացվել է Ալժիրում, ճանապարհ է դեպի եղբայրություն: Ես հայտարարում եմ, որ Ալժիրում ապրում է միևնույն իրավունքներով և պարտականություններով օժտված ժողովուրդ»⁶: Իրականում Շառլ դը Գոլը իր առջև երեք նպատակ ուներ.

1. Համոզել Եվրոպային և խուսափել բողոքի ակցիայից, որը կարող էր միայն խորացնել Ալժիրի ճգնաժամը:

2. Հարգել մուսուլման ժողովրդին, պատերազմի ընթացքում հարգել նրա իրավունքները:

⁴ Նույն տեղում (<http://www.diphis.ru>):

⁵ Տե՛ս Де Голль III. Мемуары надежд, М., 2000.

⁶ Նույն տեղում:

3. Պահպանել օրինականություն⁷:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ղը Գ ո լ ի ա լ ժ ի ը լ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո լ թ յ ու ն ը է ա պ ե ս տ ա ռ ք ե ղ Վ ու մ է ի ի ն ա խ ո ղ ո ղ ն ե ղ ի վ ա ռ ա ծ ք ա ղ ա ք ա կ ա ն ո լ թ յ ու ն ի ղ : Դ ը Գ ո լ ը ն ա պ ա տ ա կ չ ու ն ե ղ վ ի ղ կ ե լ Ֆ ռ ա ն ս ի ա ն ա լ ժ ի ը լ ա ն ճ ա հ ճ ի ղ : Ն ա ջ ա ն ու մ է ը ա ն է լ ա յ ն , ի ն չ ն ը ա ն ի ղ ա կ ն կ ա լ ու մ է ը թ է ' Ֆ ռ ա ն ս ի ա ն , թ է ' Ա լ ժ ի ը ի ֆ ռ ա ն ս ի ա կ ա ն վ ա ը չ ա կ ա ը ը ' պ ա հ ա պ ա ն է լ ֆ ռ ա ն ս ի ա կ ա ն Ա լ ժ ի ը ը ⁸ : 1958 թ . հ ու ն ի ս ի 4- ի ն Ա լ ժ ի ը ու մ ք ա զ մ ո լ թ յ ա ն ա ո ջ ն ղ ը Գ ո լ ի « Ե ս Ձ ե զ հ ա ս կ ա ն ու մ ե մ » ա ը տ ա հ ա յ տ ո լ թ յ ու ն ը պ ա տ մ ա կ ա ն լ ա յ ն ք ն ն ա ը կ ու մ ն ե ղ ի տ ե ղ ի ք տ վ ե ղ : Ն ա ի ի կ ա ո ա վ ա ը մ ա ն 18 ա մ ի ս ն ե ղ ի ը ն թ ա ջ ք ու մ չ ը ն դ ու ն ե ղ ո չ մ ի պ ա ը տ ա վ ո ղ ո լ թ յ ու ն Ա լ ժ ի ը ի ա ն կ ա խ ո լ թ յ ա ն ճ ա ն ա չ մ ա ն ն կ ա տ մ ա ը :

1958 թ . հ ու ն ի ս ի 27- ի ն Մ ա տ ի ն յ ո ն ու մ ա ո ա ջ ի ն ա ն զ ա մ հ ե ո ո ս տ ա տ ե ս ա յ ի ն է լ ու յ թ ի ժ ա մ ա ն ա կ Շ ա ո լ ղ ը Գ ո լ ն ա ն դ ը ա դ ա ը ձ ա վ ա - ժ ի ը յ ա ն խ ն դ ը ի ն ' վ ե ղ ա կ ա ն զ ն է լ Ֆ ռ ա ն ս ի ա յ ի տ ն տ ե ս ա կ ա ն և ֆ ի ն ա ն ս ա կ ա ն հ ա վ ա ս ա ը ա կ շ ո ո լ թ յ ու ն ը Ա լ ժ ի ը ու մ և ի ը ա կ ա ն ա ջ ն է լ ս ա հ մ ա ն ա դ ը ա կ ա ն ք ա ը կ փ ո խ ու մ ն ե ղ ⁹ : 1958 թ . հ ու լ ի ս ի 31- ի ն ա յ ն հ ե ո ա ը ձ ա կ վ ե ղ Ա լ ժ ի ը ու մ : 1958 թ . հ ու լ ի ս ի ն Ա լ ժ ի ը կ ա տ ա ը ա ծ ա յ ղ ի ժ ա մ ա ն ա կ , ո ը ն ի ը ի շ խ ա ն ո լ թ յ ա ն գ ա լ ու ղ հ ե տ ո ա ո ա ջ ի ն ն է ը , Շ ա ո լ ղ ը Գ ո լ ը խ ո ս տ ա ջ ա վ մ ո տ ա կ ա ա մ ի ս ն ե ղ ի ն ս ո ղ ի ա լ -տ ն տ ե ս ա կ ա ն հ ա ը ղ ե ղ ի լ ու ծ ու մ ¹⁰ : Ի ս կ է ղ ի ը ո ղ ղ ա յ ղ ի ը ն թ ա ջ ք ու մ Ա ը ն է լ յ ա ն Ա լ ժ ի ը ի մ ա յ ը ա ք ա ղ ա ք Կ ո ն ս տ ա ն տ ի ն ու մ Շ ա ո լ ղ ը Գ ո լ ը հ ը ա պ ա ը ա կ ե ղ Ա լ ժ ի ը ի ս ո ղ ի ա լ -տ ն տ ե ս ա կ ա ն զ ա ը զ ա ջ մ ա ն ծ ը ա զ ի ը ' ը

⁷ Sté u *Discours du 4 juin 1958 au Forum d'Alger*, Type de média: *Vidéo*, Date de diffusion 04 juin 1958, Type de parole: *Voyage en outre-mer, Allocutions et Discours*, Thèmes: *Colonisation et décolonisation > Guerre d'Algérie*:

⁸ Wall I. M. *France, the United States and the Algerian War*. Berkeley, Los Angeles and London, 2001, pg 335, ISBN 978-0-520-22534-3 Reviewed by William D. Irvine (Department of History, York University, Toronto, Canada, Published on H-Diplo (May, 2002).

⁹ Sté u *Allocution radio-télévisée du 27 juin 1958, prononcée à l'Hôtel Matignon*, Type de média: *Vidéo* Date de diffusion: 27 juin 1958, Type de parole: *Allocutions et Discours*, Thèmes: *Colonisation et décolonisation > Guerre d'Algérie*:

¹⁰ Berstein S. *Allocution radio-télévisée du 27 juin 1958, Éclairage*.

¹¹ Sté u *Allocution radio-télévisée du 3 juillet 1958 prononcée à Alger*, Type de média : *Vidéo*, Date de diffusion : 04 juillet 1958, Date d'événement 03 juillet 1958, Type de parole : *Voyage en outre-mer, Allocutions et Discours*, Conditions de tournage *Intérieur - Aucun public visible - Tenue militaire*, Thèmes: *Colonisation et décolonisation > Guerre d'Algérie > Population > Musulmans*:

ուղղված մոտակա հինգ տարում մուսուլմանների և եվրոպացիների միջև անհավասարությունների կրճատմանը¹²:

Ըստ Շառլ դը Գոլի՝ ալժիրյան հակամարտությանը կարելի էր վերջ դնել քվեարկությամբ՝ նկատի ունենալով սեպտեմբերի 28-ի բարեփոխումները և 1958 թ. նոյեմբերի 23-30-ի ընտրությունները, ինչպես նաև ռազմական գործողությունները դադարեցնելով, որի հետևանքով խնդիրը կթևակոխեր լուծման իրավական դաշտ: Ինչ վերաբերում է Ալժիրի ապագային, ապա դը Գոլն այն տեսնում էր Միության կազմում: Հաշվի առնելով, որ Ալժիրում ծավալվող իրադարձությունները ցույց տվեցին ռազմական ճանապարհի վտանգները Ֆրանսիայի համար, Շառլ դը Գոլը կատարեց վճռական քայլ, որն անուղղակիորեն նշանակում էր հրաժարում ինտեգրացիայից: Նա երկակի քաղաքականություն էր վարում, որն ուղղված էր պահպանելու ֆրանսիական Ալժիրը և հրատապորեն հասնել ռազմական հաշտեցման և, իհարկե, սոցիալ-տնտեսական զարգացման, որը Կոնստանտինի հնգամյա ծրագրի հիմքում էր: Ստեղծված իրավիճակում ալժիրցիները պահանջեցին քաղաքական հստակեցում, և իրավիճակից դուրս գալու համար Շառլ դը Գոլին ոչինչ չէր մնում, քան ընդունել պատմական նշանակության որոշում՝ հնարավորություն տալ ալժիրցիներին որոշելու իրենց ապագան՝ ընձեռելով երեք հնարավոր տարբերակ.

1. մեկուսացում-սեցեսիա (Ֆրանսիայի հետ կապերի խզում)։
2. ֆրանսիականացում-գալիզացիա (ամբողջական ինտեգրացում)։
3. համագործակցություն-ասոցիացիա (պահպանելով ինքնուրույնությունը՝ ստանալով աջակցություն Ֆրանսիայից)¹³։

Ալժիրում 1959 թվականին գործի դրվեց այսպես կոչված «Շելի ծրագիրը»։ Նպատակներն էին՝ խարխլել ազգային-ազատագրական բանակի հիմքերը և բանդել Ալժիրի ազգային-ազատական ճակատը¹⁴։ 1959 թ. փետրվարից մինչև 1961

¹² *Sté u Discours du plan de Constantine, le 3 octobre 1958*, Type de média : Vidéo, Date de diffusion: 04 octobre 1958, Date d'événement : 03 octobre 1958, Politique intérieure > Economie > Vie économique > Plan quinquennal, Lieux: Afrique > Algérie > Constantine:

¹³ *Sté u Allocution radio-télévisée prononcée au palais de l'Elysée le 16 septembre 1959*, Type de média: Vidéo, Date de diffusion: 16 septembre 1959, Type de parole : Allocutions et Discours, Thèmes: Colonisation et décolonisation > Communauté Française, Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes, Colonisation et décolonisation > Guerre d'Algérie > Développement de l'Algérie > Plan de Constantine:

¹⁴ Ազգային-ազատական ճակատը ստեղծվել էր 1954 թ. և նպատակ ուներ հասնելու Ալժիրի անկախության, <http://www.history.com/this-day-in-history/french-algerian-truce>

թվականը Շելն իրականացրեց իր ծրագիրը, որը, փաստորեն, հետապնդում էր Ալժիրի ռազմական վերանվաճման քաղաքականություն: Այն միլիոնավոր մահմեդականների տեղահանեց իրենց գյուղերից՝ ստեղծելով «ազատ կրակի գոտիներ» և ավելացնելով Ալժիրի ապստամբների և զոհերի թիվը: Շելի ծրագիրն անկախ Ալժիրի տեսլականի հետ անհամատեղելի էր¹⁵: Միայն համոզվելով, որ Շելի նպատակները չիրականացան և չկարողացան կոտրել Ալժիրի Ազգային-ազատական ճակատի վճռահանությունը՝ զր Գոյն անցավ ֆրանսիական Ալժիրի պահպանման քաղաքականությանը՝ գիտակցելով, որ միայն ռազմական գործողությունների դադարեցմամբ Ալժիրում խաղաղություն չի հաստատվի, և անհրաժեշտ է խնդրի խորքային լուծում: Անգամ Կոնստանտինի հնգամյա տնտեսական բարեփոխումների ծրագիրը բավարար չէր: Ուստի 1959 թ. սեպտեմբերի 16-ին իր ելույթում ալժիրցիներին առաջարկվեց վերոնշյալ երեք տարբերակը՝ սեցեսիա¹⁶, գալիզացիա, ասոցիացիա¹⁶: Դր Գոյը նշեց. «Նրանք, ովքեր ալժիրցիների ինքնորոշման իրավունքը տանում են հեղաշրջման ճանապարհով, խնդրեմ, բոլոր հնարավորությունները բաց են, եթե ապստամբները վախենում են, որ նրանք, վերջ դնելով զինված պայքարին, կհանձնվեն արդարադատությանը, ապա նրանք կքննարկեն իշխանությունների հետ իրենց ազատման պայմանները, որոնք ես առաջարկեցի»¹⁷: Այս ելույթը կարելի է համարել Ալժիրի քաղաքական պայքարի կարևոր իրադարձություններից մեկը¹⁸: Այն առաջացրեց եվրոպացիների անհանգստությունը, Ֆրանսիայում ակտիվիստների և բանակի դժգոհությունը, որոնք զր Գոյից իրենց խաբված էին համարում: Իսկ արդեն 1959 թ. սեպտեմբերի 28-ին Ալժիրի ժամանակավոր կառավարությունը պատասխանեց զր Գոյի ելույթին՝ առաջարկելով բանակցություններ Ֆրանսիայի կառավարության հետ՝ պահանջելով պայմաններ և երաշխիքներ ինքնորոշման իրավունքի իրականացման համար¹⁹: 1960 թ. հունվարին Կոմիտեի նախկին նա-

¹⁵Sté u Irwin M. Wall., նշվ. աշխ.; *France, the United States and the Algerian War*. Berkeley, Los Angeles and London: University of California Press, 2001, pg. 337, ISBN 978- 0-520-22534-3 Reviewed by William D. Irvine (Department of History, York University, Toronto, Canada) Published on H-Diplo (May, 2002):

¹⁶Սեցեսիա-ֆր. Secession- պետության կազմից նրա որևէ մասի դուրս գալը՝ անկախ պետություն կազմելու նպատակով:

¹⁶Sté u Discours du 29 janvier 1960, Type de média: Vidéo, Date de diffusion: 29 janvier 1960, Type de parole: Allocutions et Discours, Lieux: Afrique>Algérie > Alger:

¹⁷Sté u Stora B. *Le mystere De Gaulle: Son Choix Poux l'Algerie (The Mystery De Gaulle: His Choice for Algeria)* (Robert Laffont: 2009, 267 pages: ISBN 13: 97822 21110768-ISBN10:2221110765, p. 241:

¹⁸Նույն տեղում, էջ 183:

¹⁹Նույն տեղում, էջ 247:

խագահ, ալժիրյան բանակի կորպուսի հրամանատար գեներալ Մասուն գերմանական թերթում հրապարակված իր հարցազրույցում քննադատեց պետության ղեկավարի քաղաքականությունը: Վերջինս անմիջապես հրավիրվեց Փարիզ և ազատվեց պաշտոնից: Սրան հաջորդեց հունվարի 24-ի ակտիվիստների բողոքի ակցիան, որը, լայն թափ ստանալով, հանգեցրեց ոստիկանության հետ բախումների²⁰:

Ինքնորոշման առաջարկը չդադարեցրեց ալժիրյան պատերազմը: Ճզնաժամից դուրս գալու համար Շառլ դը Գոլը պարտավոր էր հանդես գալ նոր նախաձեռնությամբ: Ըստ նրա՝ ալժիրյան հարցը ապագա դաշնային քաղաքականության մի մասն է միայն, որը դեռ անհանգստացնում է ֆրանսիացիներին²¹: Այս ամենին Շառլ դը Գոլն անդրադարձավ 1960 թ. սեպտեմբերի 5-ի մամուլի ասուլիսի ժամանակ, քաջ գիտակցելով, որ չի խուսափի կոմունիստական երկրների և երրորդ աշխարհի երկրների հարցադրումներից: Անդրադառնալով Սև Աֆրիկային՝ նշեց նախկին գաղութների ինքնորոշման անհրաժեշտության մասին՝ կարևորելով այդ երկրների և Ֆրանսիայի համագործակցությունը²², իսկ Ալժիրի հիմնահարցի վերաբերյալ հայտարարեց, որ Ալժիրի ճակատագիրը կորոշեն ալժիրցիները:

1959 թ. սեպտեմբերի ելույթից մեկ տարի անց ալժիրյան ինքնորոշման հարցը դեռ մնում էր հետնաբեմում: 1960 թ. հունիսին մղվող բանակցությունները փակուղի էին մտել: Դր Գոլը ցանկանում էր նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և քայլ անել: Սկզբում նա հայտարարում էր, որ կստեղծվի Ալժիրի Հանրապետություն՝ իր կառավարությամբ, օրենքներով և ինստիտուտներով, իսկ դրան հասնելու համար պետք էր կա՛մ գործի դնել կառավարական հեղինակությունը, կա՛մ զենքը: Այս ելույթը կարծես սկիզբ էր ծրագրված գործընթացին, որը թույլ կտար Ալժիրին իրականացնելու ինքնորոշման իր իրավունքը: 1961 թ. հունվարի 8-ին ծրագրվում էր անցկացնել ինքնորոշման քաղաքականության հաստատման հանրաքվե: Դր Գոլի այս քաղաքականությունը հանգեցնում էր Եվրոպայի հակակրանքին և մուսուլմանների դեմ ցույցերի:

1961 թ. ապրիլի 22-ին Ալժիրում ռազմական հեղաշրջում եղավ: Չորս բարձրաստիճան գեներալներ, այդ թվում Ալժիրի բանակի երկու նախկին

²⁰ Sté u **Berstein S.** *La semaine des barricades à Alger*, <http://fresques.ina.fr>

²¹ Նույն տեղում:

²² Sté u **Conférence de presse du 5 septembre 1960**, Type de média : Vidéo, Date de diffusion: 05 septembre 1960, Type de parole: Conférence de presse, Thèmes: Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes, Empire français > Colonie, Guerre d'Algérie > Cessez-le-feu, Guerre d'Algérie > Développement de l'Algérie, Guerre d'Algérie > Statut de l'Algérie > autodétermination:

հրամանատարներ, ցամաքային զորքերի շտաբի նախկին պետը և օդուժի հրամանատարը օտարերկրյա լեզուների հովանավորության ներքո գրավեցին իշխանությունը: Այն պետք է կանխեր ինքնորոշման քաղաքականության իրականացումը: Դր Գ ո յ ը սահմանադրության 16-րդ հոդվածով իրեն տրված արտակարգ լիազորություններով ապրիլի 23-ի իր ելույթում դատապարտեց ռազմական հեղաշրջումը²³:

Ալժիրի հետ բանակցություններն այս պայմաններում արդեն պետք է վարվեին ժամանակավոր կառավարության հետ: 1961 թվականին Էվիանում տեղի ունեցան առաջին բանակցությունները, որտեղ զր Գ ո յ ը ներկայացրել էր Ալժիրի ինքնորոշման հարցը: 1961 թ. մեծ մասն անցավ բանակցությունների մեջ: Դժվարություններն ակնհայտ էին, և անհրաժեշտ էր տեղի տալ զիջումների: 1960 թ. սեպտեմբերի 5-ի մամլո ասուլիսում բարձրացվեց Ալժիրի պետության ստեղծման հարցը, որը զր Գ ո յ ը մտադիր էր հանձնել ժամանակավոր կառավարությանը: Ըստ նրա՝ միայն ընտրությունների միջոցով է հնարավոր ստեղծել օրինական կառավարություն: Հաջորդ հարցը Սահարայի հարցն էր. զր Գ ո յ ը համաձայն էր տեսնել այն Ալժիրի իշխանության ներքո, պայմանով, որ Ֆրանսիան վերահսկի գազն ու նավթը²⁴: Այսպես քայլ առ քայլ զիջումներ անելով՝ առաջարկում էր Ալժիրին ինքնուրույն ընտրել իր ապագան:

1961 թ. մայիս–հուլիս ամիսներին ընթացան ժնկյան բանակցությունները. պայմաններից մեկը ռազմական գործողությունները դադարեցնելն էր: Եվ արդեն 1962 թ. մարտի 18-ին Ալժիրում հայտարարվեց հրադադար: Այս ամենը, ըստ զր Գ ո յ ի, կհանգեցներ ալժիրցիների ինքնորոշման իրավունքի իրականացման, Ֆրանսիա–Ալժիր համագործակցության և եղբայրական հարաբերությունների հաստատման:

Ֆրանսիական երեք նախարարների (Լուի ժոկա, Ռոբերտ Բուրոն, Ժան զր Բրոյլա) և Ալժիրի ժամանակավոր կառավարության միջև բանակցություններից հետո (Լը Ռուսես, 1962 թ. փետրվարի 12-18) մարտի 17-ին Էվիանում սկիզբ դրվեց պաշտոնական բանակցությունների: Այն ավարտվեց մարտի 18-ին «Կրակի դադա-

²³ *Sté u Discours du 23 avril 1961*, Type de média : *Vidéo*, Date de diffusion: 23 avril 1961, Type de parole : *Allocutions et Discours*:

²⁴ *Sté u Conférence de presse du 5 septembre 1960*, Type de média : *Vidéo*, Date de diffusion: 05 septembre 1960, Type de parole: *Conférence de presse*, Thèmes: *Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes*:

րեցման» համաձայնագրով, որն ուժի մեջ մտավ մարտի 19-ին²⁵: Սեդանին դրված էր երեք հարց՝ Ալժիրի անկախություն, ֆրանս-ալժիրյան համագործակցություն, երկու ժողովուրդների միջև կապի պահպանում: Ալժիրյան պատերազմի ավարտը և Էվիանի համաձայնագիրը Հինգերորդ հանրապետության կարևոր քայլերից է²⁶: Այս համաձայնագրով, որը կնքվեց Ֆրանսիայի և Ալժիրի Ազգային-ազատական ճակատի միջև, ավարտվեց Ալժիրի 7-ամյա պատերազմը՝ ազդարարելով Ալժիրում Ֆրանսիայի 130 տարվա գաղութային քաղաքականության ավարտը: Ալժիրը անկախություն ստացավ²⁷, և 1962 թ. ապրիլի 8-ի հանրաքվեից հետո Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց Ալժիրի անկախությունը: Ստեղծվեց «օդային կամուրջ» Ֆրանսիայի քաղաքացիներին Ալժիրից տեղափոխելու համար: Էվիանի համաձայնագրով անկախություն ստանալուց հետո Ալժիրը պարտավորվեց իր տարածքում պահել ֆրանսիական երեք ռազմական բազա և հարգել եվրոպացիների իրավունքները²⁸: Ֆրանսիայի սահմանադրության մեջ առանձին մաս հատկացվեց Ֆրանսիայի գաղութների կարգավիճակի հարցին:

Այսպիսով՝ Շառլ դը Գոլի ալժիրյան քաղաքականության շնորհիվ երկիրն ի վերջո դուրս եկավ արյունոտ ճգնաժամից, իսկ Ալժիրն էլ իր պայքարի շնորհիվ նվաճեց անկախություն: Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը պետական մեծ գործչին հասուկ խորաթափանցությամբ հասկացել էր, որ Ալժիրը պահել այլևս անհնար է, իսկ արնահեղությունը շարունակելը կհանգեցնի ոչ միայն նորանոր չարդարացված զոհերի, այլև նման քաղաքականության շարունակման պարագայում ուղղակիորեն վտանգված կլինի արդեն Ֆրանսիայի ապագան: Բայց ժողովուրդը, որն ընկալում էր գեներալ դը Գոլին որպես մեծ հայրենասերի խարիզմա-տիկ կերպարի, և դրա համար ուներ բոլոր հիմքերը, այս անգամ չընկալեց նրան: Շառլ դը Գոլը դիմեց խիստ ծայրահեղ, բայց հիրավի խորիմաստ քայլի: Նա համապետական հանրաքվեի դրեց ժողովրդի կողմից իրեն վստահություն հայտնելու հարցը: Հանրաքվեն հաստատեց ժողովրդի վստահությունը դը Գոլի հանդեպ:

²⁵ Sté u **Berstein S.** Déclaration du 18 mars 1962 (cessez-le-feu en Algérie), *Éclairage*, <http://fresques.ina.fr>

²⁶ Sté u **Арзаканян М. Ц.** Де Голль и голлисты, М., 1990, с. 164.

²⁷ Sté u **Де Голль III.** Военные мемуары, М., 2003.

²⁸ *История международных отношений (1918-2003), Глава 6. Смещение конфликтности в зону международной периферии (1959-1962)/ Урегулирование конфликта в Алжире (март 1962)*, <http://www.diphis.ru>

РЕЗУЛЬТАТ АЛЖИРСКОЙ ПОЛИТИКИ ШАРЛЯ ДЕ ГОЛЛЯ

ԱՐՄԵՆԻԱՆ Ժ. Ա.

Резюме

Алжирская концепция де Голля была разработана задолго до того, как он стал президентом в 1958 году. 16 сентября 1959 года де Голлем были предложены три возможных решения алжирского кризиса: а) отделение, которое повлекло бы за собой разделение страны; б) превращение Алжира в территорию Франции в) независимость, в той или иной форме предполагающая ассоциацию с Францией. Де Голль принял решение дать Алжиру возможность самоопределения. Данное решение привело к восстаниям французских колонистов в Алжире, выступавших против независимости. Наконец, в 1962 году была достигнута договоренность, и Алжир стал независимым.

THE RESULT OF CHARLES DE GAULLE'S ALGERIAN POLICY

ZH. HARUTYUNYAN

Abstract

The policy on Algeria was one of the most marking elements of leadership of France's president Charles De Gaulle (1958-1969). De Gaulle conception of Algeria's future was developed well before he was called upon to lead the country in 1958. On September 16, 1959 the General offered three possible solutions to the Algerian crisis: a) secession, which would entail dividing the country; b) turning Algeria into a totally French territory through the elevation of the Algerians to the level of citizens; and c) independence with some form of association with France. De Gaulle decided to allow Algeria self-determination. This decision led to several revolts in Algeria by French colonists who opposed independence. Finally in 1962 an agreement was reached that provided for Algerian independence.

ԱՐԴԱՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
1920 Թ. ԱՇՆԱՆԸ

ԹՈՐՈՍՅԱՆ Շ. Ա.

Արդահանի գավառը կենսական նշանակություն ուներ Հայաստանի առաջին հանրապետության համար հատկապես ծովային ելքի հարցում, քանզի դեպի Սև ծով տանող բոլոր հնարավոր ուղիների համար (Տրապիզոն, Լազիստան, Բաթում) Արդահանը հանդիսանում է գլխավոր դարպաս՝ նախադուր: Ուստի, նաև այդ գործոնը հաշվի առնելով, Վրաստանի մենջնիկյան կառավարությունը ձգտում էր տիրանալ Արդահանին (Հայաստանի ծովային ելքը կանխելու և տարանցման կախվածության մեջ պահելու նպատակով), որի շուրջ զարգացումները նոր, դրամատիկ դրսևորումներ ունեցան 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ընթացքում:

Պատերազմը բռնկվեց 1920 թ. սեպտեմբերին: Այն փաստացի հանգեցրեց Հայաստանի անկախության կորստին և էականորեն արագացրեց Վրաստանի անկումը: Թե ինչ ընթացք կստանար Արդահանի շուրջ հայ-վրացական վեճը, եթե չլիներ այս պատերազմը, կամ եթե չկործանվեին երկու հանրապետությունները, դժվար է ասել. պատմությունը «եթեներ» չի ընդունում: Պատերազմի ընթացքում այս վեճը լուրջ զարգացումներ ստացավ, որոնց ուսումնասիրությունը և վերլուծությունը հանգեցնում են այն եզրահանգման, որ Վրաստանը, օգտվելով Հայաստանի ծանր, մղձավանջային վիճակից, թուրքերի հետ համագործակցելով, փորձում էր իլել Արդահանի շրջանը, ինչն արեց նաև Լոռվա պարագայում:

Դեռ նոր էր սկսվել պատերազմը, երբ վրաց իշխանություններն այս ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկեցին: Սեպտեմբերի 30-ին վրացիները Չղրրի և Գյոլի շրջաններ են ուղարկում իրենց նշանակած գավառապետերին: Սա նշանակում էր, որ նրանք ուզում էին հայերի ձեռքից իլել հարավային Արդահանի քաղաքացիական իշխանությունը: Դեսպան Բեկզադյանը բողոքում է վրաց արտգործնախարար Սարախտարաշվիլուն՝ ակնարկելով, որ վրաց կառավարությունը կարող է կապ ունենալ թուրքերի հետ և (կամ) օգտվում է Հայաստանի ծանր վիճակից, սակայն ստանում է հերքող պատասխան և Հայաստանի նկատմամբ բարի վերաբերմունքի հավաստիացումներ: Սակայն այդ ամենը հայկական կողմին հավատ չէր ներշնչում: Այս կապակցությամբ վարչապետ Օհանջանյանը հեռագրում է Բեկզադյանին. «...Կտրուկ կերպով բողոքեցեք Սարախտարաշվիլու առջև: Հասկացրեք, որ բացի իրենց խոստմանը

հակասելուց, նման քայլերն անթույլատրելի են և կարող են իբրև մեր դեմ թշնամական վերաբերմունք դիտվել: Պահանջեցեք անմիջապես հեռացնել այդ շրջաններից վրաց իշխանության ներկայացուցիչներին և բացատրեք, որ Արդահան գավառի Քոչի աջ սահմանը ոչ մի դեպքում չպետք է խախտվի վրացիների կողմից: ...Երեկ ասացիք Սարախտարաշվիլու խոսակցությունը, դա չի հաստատվում Արդահանում նրանց բռնած դիրքով...»¹:

Վրացիների բռնած դիրքը հստակ էր: Տրամաբանորեն այն տանում էր զինված ուժերով Արդահանի գրավմանը: Այդ անհանգստությունն արդեն նկատելի էր Հայաստանի կառավարությունում: Հոկտեմբերի 7-ին ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը գրում է Բեկզադյանին. «...Կկասկածենք, որ վրացիք ուրախ լինեն տաճկական արշավանքին, որ օգտվին գրավելու Արդահանը: Մեզ անհասկանալի է նրանց հանգստությունը Արդահանում: Կկասկածենք, որ երբ ջարդենք տաճիկներին, մեր դեմ ունենանք Արդա-հանում (վրացիներին – Շ. Թ.)...»²: Հաջորդ օրը Բեկզադյանը պատասխանում է, որ Թիֆլիսում իրենք էլ են Արդահանի վերաբերյալ կարծում, որ վրացիք կարող են օգտվել հանգամանքից և գրավել³: Այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը շատ վճռական էր տրամադրված այս հարցում. եթե վրացիները զինված ոտնձգություն ցուցաբերեն Արդահանի նկատմամբ, ապա իրենք ոչ մի խնդրի առջև չպետք է կանգ առնեն, և դա պետք է իմանան թե՛ վրացիները և թե՛ դաշնակիցները⁴:

Վրացիների զինված ներխուժումը հարավային Արդահան երկար սպասեցնել չտվեց՝ արդարացնելով հայկական կողմի հիմնավոր կասկածները: Հավանաբար հոկտեմբերի 9-ին (Թիֆլիս-Երևան նամակագրության ժամանակագրությունն ու բովանդակությունը համադրելով՝ համոզվում ենք, որ հոկտեմբերի 8-ի դրությամբ ներխուժումը դեռ չէր եղել) վրացական մի ջոկատ, 30 զինվորներից ու մի քանի սպաներից բաղկացած, մուտք է գործում Ջուրզունա, որտեղ նրանք բարձրացնում են վրացական դրոշակը: Ստացված տեղեկությունների համաձայն՝ Ախալքալաքից Ջուրզունա էր շարժվում նաև վրացական 8-րդ գումարտակը: Այս ամենից վրդովված՝ վարչապետը հեռագրում է Բեկզադյանին. «...Արդահանի շրջանի գրավումը վրացիք վերագրում են տեղական ազգաբնակչության հրավերին: Շտապ և կտրուկ կերպով պահանջեցեք վրացական կառավարությունից անմիջապես հեռացնել իրենց գործերը Արդահանի մեր սահմաններից:

¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 147-148, նաև՝ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 3:

² Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 150:

³ Նույն տեղում, թ. 151:

⁴ Նույն տեղում, թ. 155:

Հակառակ դեպքում՝ հետևանքների ամբողջ պատասխանատվությունը կրնկնի նրանց վրա»⁵:

Մինչև այժմ ակնատես էինք վրացիների՝ Արդահանի նկատմամբ հավակնությունների ամենատարբեր անհիմն բացատրություններին, հիմա արդեն շրջանը գրավելու նույնքան անհիմն ու ստահող հիմնավորումների հերթն էր. իբր տեղի բնակչության ցանկությամբ են գրավել շրջանը: Մի թե Չլղբրի և Գյոլի քրդերի հիշողությունն այդքան կարճ էր, և նրանք մոռացել էին մոտ մեկուկես տարի առաջ իրենց նկատմամբ վրացի զինվորների կատարած բռնություններն ու թալանը. հազիվ թե: Որպես ապացույց՝ նշենք, որ դեռևս հոկտեմբերի սկզբներին Ախալքալակից Չլղբր են ժամանում վրացի պաշտոնյաներ և չլղբրցիներին առաջարկում ընդունել վրացական հպատակություն, սակայն վերջիններս մերժում են՝ հայտարարելով, որ իրենք մնում են Հայաստանի կառավարության հավատարիմ հպատակներ⁶:

Հոկտեմբերի 13-ին Բեկզադյանը տեսակցում է Սաբախտա-բաշվիլու հետ: Բողոքելով Արդահանի գրավման համար՝ դեսպանը հայտնում է. «...Այժմ մեր զորքերը պիտի գնան գրավելու մեզ պատկանող Չլղբր և Գյոլը և, եթե հանդիպելու լինենք այստեղ վրաց զորքերի հետ, ի՞նչ պիտի անինք. մի թե կռվինք...»⁷: Ակնարկն ավելի քան հասկանալի էր. մի թե սահմանավեճը գենքի ուժով էր լուծվելու:

Բարեբախտաբար, Ջուրզունայում գործը դրան չհասավ: Հայ զինվորները հոկտեմբերի 13-ին ձերբակալեցին և բանտարկեցին ներխուժած վրացի զինվորներին⁸, բռնագրավեցին նրանց ձիերն ու հրացանները իջեցրին բարձրացված վրացական դրոշակը⁹:

Սաբախտաբաշվիլու հետ վերոնշյալ հանդիպման ժամանակ Բեկզադյանը պաշտոնապես փոխանցում է նաև բողոքի նոտա, որտեղ մանրամասն ներկայացնելով վրացական զորամասի կողմից Արդահանի շրջանի Չլղբրի և Գյոլի տեղամասերի գրավումը, այնտեղ վրացական քաղաքացիական իշխանությունների հաստատումը, Ջուրզունայում վրացական պետական դրոշի բարձրացումը, Ախալքալակից դեպի Արդահան վրացական 8-րդ գումարտակի ընթացքը: Նա նշում է, որ անթույլատրելի է սեփական տարածքների անձեռնմխելիության համար անողոք թշնամու դեմ վճռական պատերազմի դուրս եկած բարեկամ ժողովրդի նկատմամբ իրականացնել թշնամական գործողություններ՝

⁵ Նույն տեղում, գ. 19, թ. 17:

⁶ Տե՛ս Տեր-Մինասյան Ռ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. Ա. Վիրաբյան, Ե., 2011, էջ 241:

⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 13:

⁸ Նույն տեղում, թ. 18:

⁹ Նույն տեղում, թ. 23:

ապօրինաբար զավթելով նրա տարածքները: Այս շարունակում է՝ վրացական իշխանությունների նմանատիպ վարքագիծը Արդահանի շրջանում, զուգադիպելով թուրքական ներխուժման հետ, թշնամու դեմ մարտնչող հայ ժողովրդի մեջ խոր հիասթափություն է առաջացնում Վրաստանի կառավարության նկատմամբ, իսկ այդպիսի զգացողության առկայությունը հազիվ թե նպաստի հարևան հանրապետությունների բնականոն հարաբերությունների ամրապնդմանը, ինչքան էլ կառավարությունները կամենան: Նոտայի վերջնամասում պահանջվում է վրացական գործերի շտապ պարպումը հայկական տարածքներից¹⁰:

Ի վերջո, հայկական կողմի ճնշման ներքո Վրաստանի մենշևիկյան կառավարությունը գործերը հարավային Արդահանից դուրս հանելու կեղծ պատրաստակամություն ցուցաբերեց՝ դիմելով ձգձգումների և խուսանավման: Այժմ էլ Արդահան մտնելու գլխավոր հիմնավորումներից մեկը, իբր, թուրքական հնարավոր ներխուժման վտանգը կանխելն էր: Վրացական կառավարությունը հայերից երաշխիքներ էր պահանջում, որ իրենց գործերը հետ քաշելուց հետո թուրքերը չեն գրավի այդ՝ Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի տարածքը: Այսպես վրացական կառավարությունը մեկ նետով երկու նպաստակ էր սպանում. մի կողմից վերահաստատում էր գավառի վիճելի լինելու հանգամանքը, մյուս կողմից երաշխիքներ պահանջելով՝ հիմք էր ստեղծում գործերը շրջանից դուրս չհանելու համար: Այս ամենին գումարվեց նաև վրաց զինվորներին Ջուրգունայում բանտարկելու լուրը, որը շատ էր «վրդովել» վրաց կառավարական շրջանակներին: Այս կապակցությամբ, հոկտեմբերի 14-ին սուր խուսակցություն է տեղի ունեցել Բեկզադյանի և Մաբախտարաշվիլու միջև. վերջինիս դժգոհությանն ի պատասխան՝ Բեկզադյանը նշել է, որ նրանք չէին բանտարկվի, եթե ուրիշի հողի վրա իրենց դրոշը չպարզեին: Ի վերջո, ձեռք է բերվում պայմանավորվածություն, որ հայերը ազատ կարձակեն վրաց զին-վորներին, իսկ վրացական գործը դուրս կգա հարավային Արդահանից¹¹: Հայկական կողմը անմիջապես կատարեց իր պարտավորությունը, սակայն վրացիները չէին շտապում դուրս հանել գործերը: Հաջորդ օրը Բեկզադյանը նորից տեսակցություն ունեցավ Մաբախտարաշվիլու հետ: Վերջինս Արդահանի վերաբերյալ այս անգամ առաջ է քաշում երկու առաջարկ. 1. վրացիք պահում են իրենց գործերը Արդահանի հարավային մասում և գրավոր երաշխավորում, որ այդ հանգամանքը հետագայում վեճը լուծելիս ոչ մի առավելություն չի տալու, 2. նրանք քաշում են իրենց գործերը, բայց հայերը երաշխավորում են, որ այդ տարածքը այնքան ամուր

¹⁰ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 17:

¹¹ Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 18:

կպահեն, որ թուրքերն այնտեղ չմտնեն, ինչպես նաև վրացիներին են հանձնում Ախալքալակ-Արդահան խճուղին¹²: Ինչպես տեսնում ենք, վրաց արտգործնախարարը տարբեր հնարքներով փորձում է շրջանցել Բեկզադյանի արդարացի պահանջները. մի դեպքում ուղղակի համոզում է, որ իրենց գորքերը մնան գրավված տարածքներում՝ քաջ գիտակցելով, որ գրավոր երաշխավորությունը քաղաքական կատեգորիա չէ, հատկապես, որ մեր աչքի առաջ ունեինք Ախալքալակի դառն օրինակը, իսկ մյուս դեպքում պահանջում է Ախալքալակ-Արդահան խճուղին, որը գրեթե նույնն է, ինչ Արդահանի շրջանին տիրելը: Բհարկե, այս խնդիրը քննարկելիս հայոց դեսպանը հակառակվում է՝ նշելով, որ թերևս կարող է խոսք լինել միայն խճուղուց ազատ օգտվելու իրավունքի մասին: Այս «ներկայացումն» ավարտվում, և ամեն ինչ պարզ է դառնում, երբ հոկտեմբերի 18-ին Մաբախտարաշվիլին պաշտոնապես գրավոր պատասխանում է Բեկզադյանի հոկտեմբերի 13-ի նոտային: Այստեղ պարզորոշ երևում է վրացական կառավարության՝ Արդահանը գրաված պահելու հստակ դիտավորությունը: Ահա այդ գրության հիմնական դրույթները. «Վրաստանի հանրապետության գորքերով և ադմինիստրացիայով Արդահանի գավառի Չլդրրի և Գյոլի շրջանների գրավման առիթով ձեր հղած նոտային ի պատասխան հայտնում եմ հետևյալը. 1. ինչպես ձեզ հայտնի է, Վրաստանի և Հայաստանի միջև վիճելի տարածքային հարցերի թվում է գտնվում նաև Արդահանի գավառը: Հետևաբար, չենք կարող չարտահայտել մեր զարմանքը ձեր հայտարարության հետ կապված, որով Արդահանի գավառի Չլդրրի և Գյոլի շրջանները որակում եք որպես Հայաստանի տարածքի մաս, իսկ գրավումը՝ անթույլատրելի բռնագավթում: Մենք գտնում ենք, որ մինչև այս վիճելի հարցի վերջնական լուծումը, վրացական գորքերի այդտեղ գտնվելը նույնքան օրինական է, որքան հայկական գորքերինը և ադմինիստրացիայինը: 2. Բացի դրանից, ուշադրություն դարձնելով այն հանգամանքներին, որոնց հետևանքով Չլդրրի և Գյոլի շրջանները գրավվեցին վրացական գորքերով և ադմինիստրացիայով, ակնհայտ է դառնում, որ գրավումը անհրաժեշտ էր ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի կենսական շահերի պաշտպանության համար: Այդ շրջանների բնակչության մեջ կազմավորվել են ավագակախմբեր՝ ինչպես Վրաստանի դեմ, այնպես էլ հայկական գորքերի թիկունքում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Միաժամանակ նկատվեց Քեմալ փաշայի գորքերի շարժումը Արդահանի ուղղությամբ, որոնք և կգրավեին այն, եթե վրացական գորքերն այնտեղ չմտնեին: Դրա շնորհիվ թուրքերի հարձակումը Արդահանի վրա կասեցվեց, և դադարեցվեց ավագա-

¹² Նույն տեղում, թ. 23-24:

կախմբերի կազմավորումը...»¹³: Այս արժեքավոր արխիվային փաստաթուղթը գրեթե ամբողջությամբ մեջբերվեց՝ ապացուցելու վրաց մենշնիկների երեսպաշտությունը: Արղահանը վիճելի հռչակած վրացի կառավարիչները, հենվելով իրենց իսկ մոգոնածի վրա, օրինական են համարում ուրիշի տարածքի գրավումը: Նրանք պնդում են, թե իբր այդ գրավումը բխում է նաև Հայաստանի կենսական շահերից: Եթե Հայաստանի կառավարությունը, ելնելով անհրաժեշտությունից, իր տարածքում տեղաբաշխված գործերը տեղաշարժում է մի տեղից մեկ այլ տեղ (տվյալ դեպքում Արղահանից Կարսի ճակատ՝ դիմակայելու այդ ուղղությամբ թուրքական առաջխաղացմանը), ապա դա արդյոք նշանակում է ստիպողական տարհանում (Սաբախտարաշվիլին այդ նույն գրության մեջ հայկական գործի տեղաշարժը դեպի Կարսի ճակատ «դիտարկում էր» որպես ստիպողական տարհանում, որով և հիմնավորում էր վրացական գործի մուտքն Արղահան), և արդյոք դա իրավունք էր տալիս Վրաստանի կառավարությանը գրավել այդ տարածքները՝ իբր, քեմալականներին կանգնեցնելու և ավազակախմբերի դեմ պայքարելու համար. միանշանակ՝ ոչ: Իսկ քեմալականներն էլ թուրք-հայկական պատերազմի ողջ ընթացքում այդպես էլ Արղահանի ուղղությամբ չառաջացան, բացառությամբ Գյուլի տեղամասի հարավային հատվածի (Մերդենեկի ուղղություն), որն էլ մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ վաղօրոք Արղահանի և Հայաստանի այլ տարածքների վերաբերյալ թուրք-վրացական գործարք էր կնքվել: Բայց դրա մասին ավելի ուշ կխոսենք: Ինչ վերաբերում է ավազակախմբերին, ապա ևս մեկ անգամ հիշենք, որ ողջ ամռան ընթացքում Արղահանի հայկական կայազորը ստիպված էր հալածել վրա-ցական հատվածից ներթափանցած ավազակախմբերին: Ի վիճակի չլինելով ժամանակին վերջիններիս դեմ անհրաժեշտ պայքար կազմակերպելուն՝ վրաց իշխանավորները դրանով հիմնավորում են ուրիշի տարածք ներխուժումը:

Ի դեպ, փաստենք, որ նման վարքագիծը վրաց իշխանավորների համար դարձավ առօրյա մարտավարություն: Օգտվելով ռազմաճակատում հայոց բանակի անհաջողություններից՝ վրացիներն անընդհատ կրկնում էին նույն երգը: Որպես ասվածի ապացույց՝ հիշենք Բեկզադյանի հերթական՝ հոկտեմբերի 23-ի հեռագիրն Օհանջանյանին. «Այսօր տեսակցեցի Սաբախտարաշվիլիի հետ. կտրուկ կերպով հավաստիացրեց, որ Արղահանի շրջանում նոցա միակ նպատակն է պահել քաղաքը և կանխել թուրքերի առաջխաղացումը: Ոչ մի ուրիշ նպատակի և մանավանդ շրջանը գրավելու մասին խոսք լինել չի կարող: Հավաստիացրեք ձերոնց, սասց մինիստրը, որ մենք ոչ մի վեճ հայերի հետ զենքով վճռելու դի-

¹³ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602 թ. 23:

տավորություն չունենք: Եթե թուրքերը առաջ խաղային դեպի Արդահան, մենք պիտի կռվեինք և ոչ մի դեպքում չենք կարող միանալ տաճիկների հետ, հայերին վնասելու դիտավորությամբ: Համոզեցեք ձերոնց, որ ձեր պարտությունը մեր պարտությունն է, և մենք սրտատրոփ սպասում ենք ձեր հաղթություններին իբրև մեր փրկության...»¹⁴: Եթե իրոք մեր պարտությունը վրացիների պարտությունն էր, և մեր հաղթանակը՝ նրանց փրկությունը, և եթե նրանք պատրաստ էին կռվել թուրքերի դեմ Արդահան ներխուժելու դեպքում, ապա ի՞նչն էր խանգարում վրաց կառավարությանը Հայաստանի հետ ուս ուսի տված կռվել ընդհանուր վտանգի դեմ. չէ՞ որ դա էր ենթադրում առողջ տրամաբանությունը, և ոչ թե ոսոխի դեմ անհավասար կռվում մարտնչող հայկական բանակի թիկունքում ներխուժել հայկական տարածք և կանգնեցնել կատարված փաստի առաջ: Կամ թե ինչո՞ւ, ռազմակալելով Արդահանի շրջանը, վրացիները զինաթափեցին հայ բնակչությանը¹⁵, չէ՞ որ զինված հայերը թուրքերի դեմ հուսալի դաշնակից կլինեին:

Հոկտեմբերի կեսերին Բեկզառյանի նկատվող մեղմ և զիջողական պահվածքը Վրաստանի հետ հարաբերություններում մի կողմից պայմանավորված էր տրանզիտի մշտական խնդրով, մյուս կողմից՝ նա հույս ուներ դաշնակիցների կռիվակալ ճնշման ներքո Վրաստանին դուրս բերել բոլշևիկների դեմ՝ ուղղորդելով նրան դեպի Ղազախ և Ադստաֆա, որը հայկական ուժերին հնարավորություն կտար լրացուցիչ ուժեր նետելու արևմտյան ճակատ՝ թուրքերի դեմ¹⁶: Բայց արդեն ամսվա վերջին նա հասկացավ, որ Վրաստանի հետ կապված բոլոր հույսերը սին են: Հոկտեմբերի 25-ին Թիֆլիսում տեղի է ունենում հայ և վրաց պատվիրակությունների երկու նիստ, որտեղ էլ քննարկումներից հետո պարզ է դառնում, ինչպես դա արձանագրել է իր զեկուցագրում դեսպան Բեկզառյանը, որ «վրացիները մեզ հետ չեն կռվելու եւ այլևս նրանց վրայ որեւէ յոյս դնելու չէ, եթե նրանք չխանգարեն մեր մոբիլիզացիային (Վրաստանում բնակվող հայաստանահպատակների գորակոչին – Շ. Թ.) եւ տրանզիտին, եւ տան իսկապէս դիրտութիւններ որոշ կարելոր ապրանքներ արտահանելու այստեղից եւ Բայթումից - դա ամենամեծ աջակցութիւնը պիտի համարել, որը նրանք այժմ տրամադիր են մեզ անելու...»¹⁷: Սակայն երբ կարդում ենք գեներալ Քիշմիշնի նոյեմբերի 16-ին այս թեմայով Ռուբենին հղված հերթական զեկուցագիրը, հասկանում ենք, որ Վրաստանից Հայաստանին

¹⁴ Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 31-32:

¹⁵ Տե՛ս Յառաջ, 10.X.1920, թիվ 221, նաև՝ Ժողովուրդ, 10.X.1920, թիվ 169:

¹⁶ Տե՛ս շԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 20-21:

¹⁷ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 42:

իրական օգնություն չի լինելու. «...Նրանցից օգնություն սպասել չարժե», - գրում է Քիշմիշը¹⁸:

Թիֆլիսում բրիտանական ներկայացուցիչ գնդապետ Ստոքսը ևս բավականաչափ ջանքեր թափեց այս ուղղությամբ, սակայն ի վերջո նա էլ եկավ այն համոզման, որ վրացիները հայերին զինված աջակցություն չեն ցուցաբերելու¹⁹: Անգլիական վերջին զինվորները Բաթումից հեռացել էին դեռևս հուլիսին, դաշնակիցներն այլևս մեծ ազդեցություն չունեին տարածաշրջանում, այստեղ արդեն գլխավոր խաղացողները բոլշևիկներն ու քեմալականներն էին: Հիշենք նաև, որ հոկտեմբերին ընթանում էին բանակցություններ բոլշևիկների ներկայացուցիչ Լեգրանի հետ՝ հայ-ռուսական հաշտության պայմանագիր կնքելու համար, և հայկական դիվանագիտությունն այս հանգամանքը ևս ձգտում էր օգտագործել Արդահանի պաշտպանության համար: Բեկզադյանի՝ Օհանջանյանին ուղղված հոկտեմբերի 23-ի հեռագրում կարդում ենք. «...Ես ուզում եմ առաջարկել նրանց (բոլշևիկներին – Շ.Թ.) մի զինվորական ուղարկել Ղարս՝ մերոնց հետ որոշ համաձայնության գալու Արդահանի շրջանի պաշտպանության մասին...»²⁰: Ըստ երևույթին, խոսքը շրջանը վրացիներից պաշտպանելու մասին էր:

Շարունակվում էր թուրք-հայկական պատերազմը, և հայոց բանակի անհաջողություններին զուգահեռ՝ ավելանում էին Վրաստանի կառավարության տարածքային պահանջները: Կարսի անկման լուրը ստանալու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, Սաբախտարաշվիլին իր մոտ է հրավիրում Բեկզադյանին: Տեղի է ունենում ծանր զրույց, որտեղ վրաց արտգործնախարարը, փաստելով Կարսի անկումը, ասում է. «...Եթե դա այդպես է, բնական է, որ թուրքերը կարող են անցնել Ալեքսանդրապոլ, իսկ այդ դեպքում վտանգվում է նեյտրալ գոնան, որտեղից Վորոնցովկայի վրայով նրանք կարող են անցնել դեպի Վրաստան...»²¹: Եվ, որպեսզի դա տեղի չունենա, Սաբախտարաշվիլին Հայաստանի կառավարությանն առաջարկում է թույլ տալ գրավել չեզոք գոտին: Բնականաբար, Բեկզադյանը մերժում է այդ առաջարկը՝ այն համարելով ևս մեկ սպառնալից, որ վրացիներն օգտվում են հայերի նեղ վիճակից, փոխանակ օգնեն միասին հետ մղել տաճիկներին, որի համար հարկավոր էր Մերդենեկում կանգնած վրացական 3000-անոց զնդի աջակցությունը: Սակայն Սաբախտարաշվիլին պնդում է առաջարկը՝ մեղադրելով հայերին, որ Արդահանում էլ դեմ էին

¹⁸ Նույն տեղում, գ. 221, թ. 148:

¹⁹ Նույն տեղում, գ. 602, թ. 43:

²⁰ Նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 32:

²¹ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 150:

վրացական գորքի տեղակայմանը, իսկ հիմա գորքերը քաշում են այնտեղից²²: Վրացական կառավարությունը, շահարկելով ստեղծված փաստացի իրավիճակը, փոխանակ գինական աջակցություն ցույց տալու (ինչը իրավացիորեն նշում էր Բեկզադյանը), հանդիսատեսի նման թիկունքից հետևում էր հայերի կենաց ու մահու գոյամարտին: Արդահանի շրջանում մնացած միակ հայկական գորախումբը Գյուլի հարավում գտնվող Մերդենեկի գորամասն էր՝ Մեպուհի գլխավորությամբ, որն էլ դեպի Կարսի մատույցները նահանջի հրաման ստացավ հոկտեմբերի 29-ի գիշերը՝ Կարսի կովի նախօրեին²³:

Վերոնշյալ գրույցի ընթացքում Սարախտարաշվիլին ևս մեկ առաջարկ ներկայացրեց, որ հայկական կողմը թույլատրի վրացիներին ազատորեն օգտվել Ախալքալակ-Արդահան խճուղուց²⁴: Բայց սա արդեն ձևական առաջարկ էր: Կարսի անկումից հետո թուրքերը առաջացան դեպի Ալեքսանդրապոլ, և Կարսի ռազմաճակատի հայկական բոլոր ուժերը կենտրոնացել էին Ալեքսանդրապոլի մատույցներում: Քեմալականներն այդպես էլ չչարժվեցին Արդահանի վրա, և շրջանը փաստորեն տնօրինում էին վրացական գորքերն ու վարչությունը:

Թուրք-հայկական պատերազմն ավարտվեց Հայաստանի պարտությամբ, որը հանգեցրեց Հայաստանի խորհրդայնացմանը: Թվում էր, թե Վրաստանը ճիշտ էր կողմնորոշվել և շահած դուրս եկել այդ իրադարձություններից. Արդահանը գրավել էր, Լոռու չեզոք գոտին ևս ամրագրվել էր նոյեմբերի 13-ի հայ-վրացական պայմանագրով, Ախալքալակը գրավվել էր դեռևս 1918 թ. դեկտեմբերի սկզբին և ամրագրվել 1919 թ. հունվարյան հայ-վրացական հաշտության խորհրդաժողովում: Սակայն դա այդպես չէր: Հայաստանի հետ հարցերը լուծելուց հետո քեմալականները թնդանդթներն ուղղեցին Վրաստանի դեմ: Նրանք Վրաստանից պահանջեցին անհապաղ գորքերը դուրս բերել Արդահանի շրջանից²⁵, ապա, խախտելով թուրք-վրացական ենթադրյալ դաշինքը²⁶, 1921 թ. փետրվարի 23-ին

²² Նույն տեղում, թ. 151:

²³ Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը: Անհայտ գրողի օրագիրը, կազմ. և հրատ. Ս. Հարությունյանը, Ե., 1993, էջ 106:

²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 152:

²⁵ Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 433:

²⁶ Այդ դաշինքի մասին հստակ գրել է Ա. Խատիսյանը, ըստ որի Ալեքսանդրապոլի բանակցությունների ընթացքում՝ նոյեմբերի 29-ին, Կարաբեքիր փաշան ասել է, որ Անգորայի ներկայացուցիչներ Յուսուֆ Քեմալ բեյը և Ալի Ֆուատ փաշան 1920 թ. ամռանը եղել են Թիֆլիսում և Վրաստանի կառավարության հետ դաշինք են կնքել, համաձայն որի՝ հայ-թուրքական պատերազմ ծագելու դեպքում Վրաստանը պետք է չեզոքություն պահպաներ, որի դիմաց կստանար Բորչալուի, Ախալքալակի և Արդահանի գավառները (տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրոյթ, 1968, էջ

գրավեցին Արդահանը, հետո ներխուժեցին Ախալքալակի գավառ²⁷: Արդահանը գրավելու հարցում, ըստ էության, բոլշևիկներն աջակցում էին քեմալականներին: Ինչպես գրում է Նոյ Շորդանիան. «...Պարզ էր, որ այդ ժամանակ Մոսկվան գնել էր Թուրքիայի չեզոքությունը՝ Արդահանի և Արդվիհի շրջանները զիջելով: Դա հաստատվեց շուտով թիկունքից մեզ վրա թուրքական զորքերի հարձակմամբ...»²⁸: Եվս մեկ անգամ ապացուցվեց մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրի սնանկությունը:

Քեմալ-բոլշևիկյան ճնշման ներքո փետրվարի 25-ին խորհրդայնացավ նաև Վրաստանը՝ Հայաստանի խորհրդայնացումից մոտ երեք ամիս անց:

1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ողջ Կարսի մարզը, այդ թվում՝ Արդահանի և Օլթիի գավառները, բոլշևիկների թեթև ձեռքով հանձնվեցին Թուրքիային: Տարածքային հարցերում քեմալականները Մոսկվայի խորհրդաժողովում համառություն ցուցաբերեցին: Այդ առիթով Չիչերինը հեռագրում է Մոլոտովին. «...Թուրքերը ծայրաստիճան համառություն են ցուցաբերում, իսկ մենք ոչ մի դեպքում զիջել չենք կարող: Այժմ առևտուր է գնում: Մենք տալիս ենք Կարսը, Արդահանը, բայց ոչ մի դեպքում չենք կարող հանձնել Բաթումը...»²⁹: Կարսն ու Արդահանը բոլշևիկները դյուրությանը զիջեցին թուրքերին՝ դա պատճառաբանելով «Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքական դժվարություններով», թեև իրականում ձգտում էին քեմալականներին հետ պահել զուգահեռաբար ընթացող Լոնդոնի խորհրդաժողովում Անտանտի տերությունների գիրկը նետվելու գայթակղությունից:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում վերջին անգամ Արդահանի հարցը շոշափվել է 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովում: Ի պատասխան թուրքական կողմի՝ ԽՍՀՄ-ի հետ դաշինք կնքելու առաջարկի՝ խորհրդային պատվիրակությունը որպես նախապայման պահանջում է վերադարձնել Հայաստանից և Վրաստանից խլված տարածքները³⁰: ԽՍՀՄ

307): Այս ամենը մանրամասնորեն շարադրված է Կ. Պոլսում լույս տեսնող «Շուրնալ դը Օրիան» թերթում հոկտեմբերի 19-ին հրատարակված «Ինչպե՞ս քեմալականները վճռեցին յարձակուել Հայաստանի վրայ» հոդվածում: Հաջորդ օրն այդ հոդվածը արտատպել է «Ճակատամարտը»: (Տե՛ս Ճակատամարտ, Կ. Պոլիս, 20.X. 1920: **Զոհրաբյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 149):

²⁷ Տե՛ս **Մեթրոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 329:

²⁸ **Жордания Н.** *Моя жизнь, Париж, 1968, с. 115.*

²⁹ **Քաղայան Ա.**, Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1921 թվականներին, Ե., 2005, էջ 125-126:

³⁰ Տե՛ս *См. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945 гг., т. VI, Берлинская (Потсдамская) конференция руководителей трех*

արտգործնախարար Վ. Մոլոտովը հայտարարում է, որ 1921 թվականին թուրքերը, օգտվելով խորհրդային պետության թուլությունից, պոկեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում³¹: Մոլոտովը Խորհրդային Հայաստանից և Վրաստանից իլված տարածքները համարում էր Կարսի, Արդահանի և Արդվինի շրջանները³²: Սակայն Ստալինը Թուրքիայից պահանջվող տարածքների բաշխման սեփական պատկերացումն ուներ: Նա գտնում էր, որ Կարսի շրջանը պետք է մտնի Խորհրդային Հայաստանի կազմի մեջ, իսկ Արդահանի շրջանը՝ Վրաստանի: Ստալինը դա հիմնավորում էր նրանով, որ այդ շրջանները մինչև Առաջին աշխարհամարտը համապատասխանաբար Հայաստանի և Վրաստանի մաս են կազմել³³: Ստալինը խեղաթյուրում էր պատմական իրականությունը՝ Արդահանի, ինչպես նաև Արդվինի շրջանները Խորհրդային Վրաստանին միացնելու միտումով:

Բրադարձությունների ընթացքը նախորոշել էր, որ երկու երկար ու ձիգ տարիներ հարևան երկրները վիճեն Արդահանի համար, բայց այն բաժին հասնի Թուրքիային:

ВОПРОС АРДАГАНА В АРМЯНО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЯХ ОСЕНЬЮ 1920 Г.

ТОРОСЯН Ш. А.

Резюме

Провинция Ардаган имела жизненно важное значение для Первой Республики Армения, особенно с точки зрения выхода к морю. Исходя из этого меньшевистское правительство Грузии стремилось взять Ардаган под свой контроль. Турецко-армянская война, разразившаяся в сентябре 1920 года, дала возможность Грузии претворить в жизнь свои антиармянские программы. 30 сентября грузинское правительство направило губернаторов провинций в регионы Челдер и Гел с целью отстранения армян от власти, что и подготовило почву для вооруженной интервенции.

союзных держав – СССР, США и Великобритании (17 июля-2 августа 1945г.), сборник документов, М., 1984, с. 135.

³¹ Там же, с. 37.

³² Տե՛ս **Корхмазян Р.** Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав-СССР, США и Великобритании (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Ե., 1996, թիվ 16, էջ 26):

³³ Նույն տեղում, էջ 27:

И 9 октября грузинский военный отряд вторгся в Зурзуну (один из региональных центров Ардагана). Оккупацию Ардагана грузинская сторона квалифицировала как предотвращение вторжения Турции в Ардаган. Грузинское правительство заявило, что Ардаган является спорной территорией между Арменией и Грузией. Есть основания полагать, что за сохранение нейтралитета Грузии в турецко-армянской войне Турция собиралась уступить Грузии спорные между Арменией и Грузией территории. Тем не менее грузинские меньшевики также потерпели неудачу. Турция одержала победу, и 23 февраля 1921 года турецкие войска вторглись в Ардаган и заняли Ахалкалак.

Под большевистско-турецким давлением Грузия также была советизирована и в соответствии с договорами, подписанными в 1921 году в Москве и Карсе, провинция Ардаган перешла под контроль Турции.

THE QUESTION OF ARDAHAN IN ARMENIAN-GEORGIAN RELATIONS IN AUTUMN OF 1920

SH. TOROSYAN

Abstract

Ardahan province was of vital importance for the First Republic of Armenia especially in terms of the maritime exit. The Menshevik Government of Georgia sought to take control of Ardahan, keeping Armenia in the transit dependence. The Turkish-Armenian War, which broke out in September of 1920, provided Georgia with new opportunities to call to life its anti-Armenian programs. On September 30, the Georgian Government sent its designated governors of provinces to Chlder and Gyol regions, trying to take away the power of Armenians in Ardahan. This prepared the ground for the armed intervention.

On October 9, one Georgian detachment entered Zurzuna (one of the regional centers of Ardahan province). The occupation of Ardahan was justified by the Georgian side as a desire by the local population and the prevention of the Turkish invasion to Ardahan. The Georgian Government announced that Ardahan is disputed between Armenia and Georgia. There are well-founded suspicions that the secret was in the Georgian-Turkish alliance, according to which for the benevolent neutrality of Georgia in the Turkish-Armenian War, Turkey was going to cede Georgia the disputed territories between Armenia and Georgia. However, the Georgian Mensheviks failed, too. After Turkey defeated Armenia on February 23, 1921 Turkish troops invaded Ardahan and occupied Akhalkalak.

Under the Bolshevik-Turkish pressure Georgia was sovietized, too and according to Moscow and Kars treaties, signed in 1921, Ardahan province became part of Turkey.

ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ՝ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԸ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Ա. Է.

Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումից հետո հայ պատմաբանների և թուրքագետների համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին անաչառ և, ըստ անհրաժեշտության, քննադատաբար անդրադառնալու հայ ժողովրդի համար այն առանցքային հարցերին, որոնք տասնամյակների ընթացքում կա՛մ խեղաթյուրվել էին, կա՛մ շրջանցվել հայտնի պատճառներով: Նման կնճռոտ խնդիրներից էր Օսմանյան կայսրության ռազմական նախարար, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ Իսմայիլ Էնվեր փաշայի և բոլշևիկների միջև 1919-1921 թթ. համագործակցությունը, որին մեծապես նպաստել էր հայտնի բոլշևիկ Կարլ Ռադեկը: Սակայն ի՞նչ ընդհանրություններ կարող էին լինել Կ. Ռադեկի և Էնվերի նման վարկաբեկված անձի միջև:

Ռադեկը Բեռլին էր մեկնել ռուսական և համաշխարհային պատմության մեջ հայտնի հեղափոխական գործիչ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կուսակցության հիմնադիր, 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Վ. Ի. Լենինի հրամանով: Ընդ որում, բոլշևիկների ներկայացուցիչներն արտասահմանում զբաղված էին հեղափոխական գաղափարախոսություն սերմանելով: Ռադեկը, Բեռլինում մասնակցելով մի շարք կոմունիստական ժողովների, 1919 թ. փետրվարի 15-ին ձերբակալվում է: Հատկանշական է, որ բանտում գտնվող բոլշևիկ գործիչը պարբերաբար հանդիպումներ էր կազմակերպում մի շարք երիտթուրք գործիչների հետ: Դրա մասին են վկայում մասնավորապես թուրք և տաջիկ հեղինակները: Վերջիններիս հետաքրքրությունը Էնվեր փաշայի նկատմամբ պատահական չէր. տխրահռչակ թուրք քաղաքական գործիչը 1919-1922 թթ. ձեռնամուխ էր եղել նոր արկածախնդրության՝ Միջին Ասիայում գլխավորելով բասմաչների ապստամբությունը բոլշևիկների դեմ: Ի դեպ, ինչպես հայտնի է, հենց այդտեղ էլ 1922 թ. օգոստոսի 24-ին Կարմիր բանակի հայազգի հրամանատար Հակոբ Մելքումովը գնդակահարում է Էնվերին:

Ռադեկի և Էնվերի հանդիպումների արդյունքը եղավ այն, որ վերջինս շուտով հրավիրվեց Մոսկվա՝: Նա 1920 թ. օգոստոսի 15-ին գերմանական անձնագրով (Ալի բեյ կեղծանվամբ) ժամանում է Մոսկվա՝:

Մոսկվայում Էնվերն ընկալվում է իբրև մի անձ, որ սանձազերծել էր «կայսերապաշտական պատերազմ»։ Հատկանշական է նաև այն, որ թեև Խորհրդային Ռուսաստանում Էնվերին համարում էին ոչ այնքան դրական անձ, այնուամենայնիվ, Մոսկվայում լավ հյուրընկալում են։ Էնվերի թուրք կենսագիր Շեքեթ Սյուրեյա Այդեմիրը մասնավորապես գրում է, որ փաշան Կրեմլի հանդիպակաց մասում՝ Մոսկվա գետի ափին, ստացել էր մի մեծ առանձնատուն, որտեղ նախկինում հյուրընկալվել էր մեկ այլ երիտթուրք գործիչ՝ Օսմանյան կայսրության ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան³։ Եվ, ինչպես վկայում է ճապոնացի հետազոտող Մասայուկի Յամայուչին, Էնվերը Կրեմլից ստացել էր մոտ 400 հազար գերմանական մարկի չափ գումար՝ անձնական ծախսերի համար⁴։

Նենգամիտ Էնվերը, գիտակցելով, որ Մոսկվան իրեն վերաբերվում է որպես անբարեհույս անձի, Արևելքի ժողովուրդների առաջին կոնգրեսում (Բաքու, 1920 թ., 1–8 սեպտեմբերի) ելույթի ժամանակ փարիսեցիորեն իրեն մեղադրեց Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու համար։ Էնվերը Մոսկվա էր ժամանել պաշտոնապես բանակցելու բոլշևիկների հետ՝ Կարմիր բանակին գերմանական զինամթերք մատակարարելու նպատակով։ Էնվերը Ռադեկի հետ բանակցությունների մասին է հայտնում Ջեմալ փաշային գրած նամակներից մեկում. «Մեր բոլշևիկ բարեկամը դուրս է եկել բանտից։ Այստեղ մեր բոլշևիկ բարեկամները համաձայն են մեզ օգնելու այն գաղափարների շրջանակներում, որոնք մենք քննարկեցինք բանակցությունների ընթացքում։ Այս պահին ահա իմ դիրքորոշումը հիմնական գծերով.

1. ազատագրել մահմեդական ազգերին
2. նկատի ունենալով, որ իմպերիալիստական կապիտալիզմը մեր ընդհանուր թշնամին է, համագործակցել սոցիալիստների հետ
3. ընդունել սոցիալիզմի սկզբունքներն այն պայմանով, որ դրանք հարմարեցվեն մահմեդականների այն վարդապետություններին, որոնք կառավարում են մահմեդական երկրների ներքին կյանքն ու գործունեությունը»⁵։

Բոլշևիկները Էնվերի միջոցով նպատակ ունեին իրենց ազդեցությունը տարածել Միջին Ասիայում, որտեղ անգլիացիները իրականացնում էին հակախորհրդային քարոզչություն։ Իր հերթին, Էնվերն էլ հետապնդում էր սեփական շահերը։ Նա բոլշևիկների հակաբրիտանական քարոզչությունը դիտարկեց որպես հարմար առիթ՝ հերթական անգամ միջազգային ասպարեզում գործուն դեր ունենալու համար։ Էն-

¹ Абдулаев К. От Синьцзяня до Хорасана. Из истории среднеазиатской эмиграции XX века, Душанбе, 2009, с. 202.

² Yamauchi M. The Green Crescent under the Red Star: Enver Pasha in Soviet Russia 1919- 1922, Tokyo, 1991.

³ Şevket Süreyya Aydemir. Makedonya dan Ortaasya'ya Enver Paşa. 3 Cilt, İstanbul, 1972, s. 520.

⁴ Yamauchi M., նշվ. աշխ.։

⁵ Տե՛ս Սահակյան Ռ., Բոլշևիկները և Էնվերը, Ե., 1991։

վերը հույս ունենալ, որ բոլշևիկները ռազմական աջակցություն կցուցաբերեն թուրքերին, ու ինքը հաղթական հարված կհասցնի քեմալականներին և փլուզված Օսմանյան կայսրության տարածքներից կվճռի Անտանտի երկրների ներկայացուցիչներին՝ վերականգնելով երիտթուրքերի իշխանությունը:

Հարկ է նշել, որ բոլշևիկներն ուշիուշով հետևում էին նաև Մուղրոսի զինադարձից հետո Փոքր Ասիայի արևելյան շրջաններում սկիզբ առած քեմալական շարժմանը, որի առաջնորդն էր Մուստաֆա Քեմալը: Բոլշևիկները կարծում էին, որ եթե Էնվերը հաջողության չհասներ Միջին Ասիայում, ապա իրենք խաչ կքաշեին նրա վրա և կկենտրոնանային Մուստաֆա Քեմալի վրա: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ բոլշևիկներն իրավացի էին, երբ երկակի խաղ էին խաղում թե՛ Քեմալի, թե՛ Էնվերի հետ: Այս առումով առանցքային նշանակություն ունեցավ Մուստաֆա Քեմալի հաղթանակը հույների դեմ: Ակնհայտ է, որ հեղափոխության գաղափարի շրջանակները մեծացնելու ձգտումն այնքան ուժեղ էր, որ այդ նպատակին հասնելու ճանապարհին ամեն քայլ արդարացված էր, անգամ համագործակցությունը հանցագործների հետ: Հավելենք նաև, որ Էնվերը, բացի պանթուրքիստական ծրագրերից, մտնում էր մի շարք պանիսլամիստական գաղափարներ: Մասնավորապես, նա առաջադրել էր «Բալամի միության համայնք» ստեղծելու գաղափարը, այն է՝ համագործակցություն Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի՝ Մինձյանից մինչև Մադրիբ տարածված մի շարք հեղափոխական ուժերի հետ⁶:

Էնվերի մտահղացմամբ՝ համայնքը պետք է ունենար սեփական զինված ուժերը: Ուշագրավ է, որ նշյալ ծրագրերն ստացան բոլշևիկների հավանությունը: Եվ նույնիսկ «Բալամի միության համայնքի» երկրորդ կոնգրեսը տեղի ունեցավ հենց Մոսկվայում⁷, որտեղ էլույթ ունեցավ ՌԽՖՍՀ արտգործժողովուհու Գեորգի Չիչերինը՝ խոստանալով օժանդակել Արևելքի հեղափոխական ուժերին: Այն, որ բոլշևիկները թե՛ Մուստաֆա Քեմալի, թե՛ Էնվեր փաշայի հետ երկակի խաղ էին խաղում, երևում է նաև Չիչերինի նամակներից մեկում: Խոսելով Էնվերին ֆինանսական օժանդակություն տրամադրելու հարցի շուրջ՝ նա նշում է. «Մուսուլման անհրաժեշտ է նրա համար, որ թուրք ազգայնական կազմակերպությունները (ոչ քեմալական) կարողանան իրենց գոյությունը պահպանել: Սրանք այն տարրերն են, որոնք մնացել են երիտթուրքերից: Վերջիններս մեծ կապեր ունեն կենտրոնական Եվրոպայում, ինչպես նաև համագործակցում են Եգիպտոսում, Ալժիրում և Մարոկկոյում հեղափոխական գործունեություն ծավալող զանազան խմբավորումների հետ: Պահանջվում է նրանց

⁶Тарасов С. 1921 год: Эввер-паше - Константинополь, Нариманову - Карабах <https://regnum.ru/news/polit/1432857.html>

⁷ Նույն տեղում:

տարեկան տրամադրել 15 հազար լիբ, որն այդքան էլ մեծ գումար չէ: Մենք կարծում ենք, որ դա կարելի է իրագործել: Նրանք ունեն այնպիսի կապեր, որոնք բացակայում են քեմալականների միջև: Անձամբ Էնվերը, չնայած որ պատկանում է իմպերիալիստական խմբավորմանը, որպես նրբանկատ քաղաքական գործիչ՝ ավելի լավ է կողմնորոշվում ներկա իրավիճակում: Մենք, իհարկե, ստիպված կլինենք օգտվել նրա քաղաքական ծառայություններից»⁸:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ բոլշևիկները գործում էին «նպատակը արդարացնում է միջոցները» դատապարտելի սկզբունքով, քանի որ նրանց բանակցությունները թե՛ երիտթուրքերի, թե՛ քեմալականների հետ առաջին հերթին մեծ վնաս հասցրին հայ ժողովրդին: Հետագայում դրա մասին են վկայելու Կարսի և Մոսկվայի ոչ իրավական պայմանագրերը, որոնք ստորագրվեցին առանց հայ ժողովրդի կամքը հաշվի առնելու:

К ВОПРОСУ О СОТРУДНИЧЕСТВЕ ЭНВЕРА ПАШИ С БОЛЬШЕВИКАМИ

МЕЛКУМЯН А. Э.

Резюме

В 1919-1922 гг. большевики вступили в контакт с Энвером пашой – бывшим военным министром Османской империи и одним из организаторов геноцида армян.

Руководствуясь собственными интересами, большевики оказали финансовую поддержку Энверу паше.

ON THE QUESTION OF COOPERATION OF ENVER PASHA WITH BOLSHEVIKS

A. MELKUMYAN

Abstract

In 1919-1922 the Bolsheviks entered into contact with Enver Pasha, a former Ottoman military minister and one of the organizers of the Armenian Genocide.

Guided by their own interests, the Bolsheviks provided financial support to Enver Pasha.

⁸ Тарасов С., указ. соч.

**ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-2015 ԹԹ.)**

ՂՈՒԼՅԱՆ Հ. Գ.

Հայաստանը 1991 թվականին անկախություն ստանալուց հետո հնարավորություն ունեցավ վարելու ինքնուրույն արտաքին քաղաքականություն. սկսվեց տարբեր երկրների հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման ընթացքը: Առաջնային նշանակություն ունեցան Ֆրանսիայի հետ երկկողմանի կապերի հաստատումը և կարգավորումը, քանզի Ֆրանսիայում առկա է ստվարաթիվ հայկական Սփյուռք: Նշենք նաև, որ միջազգային բազմաթիվ հարցերի շուրջ Ֆրանսիայի և Հայաստանի տեսակետները համընկնում են: Երկու երկրների մերձեցումն օրինաչափ է, քանի որ Հայաստանը և Ֆրանսիան հաճախ ունեցել են համերաշխ կապեր, հարգել են միմյանց շահերը: Հիշարժան է Ֆրանսիայի օգնությունը 1988 թվականի ավերիչ երկրաշարժի ժամանակ: Ֆրանսիայի քաղաքները ցուցաբերեցին մարդասիրական օգնություն Հայաստանին և դրանով իսկ առաջիններն էին, որ բարեկամական վերաբերմունք դրսևորեցին Հայաստանի ազգաբնակչության հանդեպ:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայի քաղաքականությունը ԱՊՀ երկրների հանդեպ դուրս չի գալիս Եվրամիության վարած միասնական քաղաքականության շրջանակներից: Բնչպես արևմտյան երկրների, այնպես էլ Ֆրանսիայի հետ հարաբերություններում Հայաստանն ընկալվում է որպես քրիստոնեական արժեքներով և մտավորականության որակական ներուժով երկիր: Բացի այդ, հեռանկարում Հայաստանը կարող է դառնալ տարանցիկ ճանապարհ, մի կողմից՝ Սև և Կասպից ծովերի միջև, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև:

Հայաստանի Հանրապետությունն ունի նաև ռազմավարական նշանակություն հարավկովկասյան տարածաշրջանում, և Ֆրանսիան, ձգտելով ապահովել իր ներկայությունն այստեղ, իրականացնում է երկկողմանի հարաբերությունների հաստատում տարածաշրջանի երկրների հետ:

1992 թ. հունվարի 3-ին Ֆրանսիան ճանաչեց ՀՀ-ի անկախությունը, իսկ 1992 թ. փետրվարի 24-ին Ֆրանսիայի հումանիտար օգնության հարցերով պետքարտուղար Բ. Կուլեների՝ Հայաստան կատարած այցի ժամանակ երկու երկրների միջև

ստորագրվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ արձանագրություն¹:

Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև երկկողմանի համագործակցությունն ընդգրկում է հետևյալ ոլորտները՝

- քաղաքական,
- տնտեսական,
- գիտության, կրթության և մշակույթի:

Նկատելի է, որ Ֆրանսիան մեծ նշանակություն է տալիս Հայաստանի հետ կապերի զարգացմանը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1993 թ. ստորագրվեց համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության բարեկամության ու համագործակցության մասին²:

1992 թ. մարտի 14-ին Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանս դե Հարտինգիրը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հանձնեց իր երկրի հավատարմագիրը, իսկ 1992 թ. մարտի 20-ից Հայաստանում սկսեց գործել Ֆրանսիայի դեսպանատունը:

Պաշտոնական կապերի հաստատումից հետո արձանագրվեցին երկու երկրների միջև տարբեր մակարդակների փոխգործակցության շփումներ ու հարաբերություններ (1992 թ. ապրիլին պաշտոնական այցով Ֆրանսիա մեկնեց ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանը, 1993 թ. մարտի 13-ին ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Ֆրանսիա, Ֆրանսիայի Ազգային ժողովի մի քանի պատգամավորներ, ներառյալ Ռիշար Կազանովը, Ֆրանսուա Ռոշբուլանը և Պատրիկ Դեջյանը, 1990 թ. վերջին հանդիպում ունեցան ՀՀ Գերագույն խորհրդում, 1996 թ. մարտի 26-ին պաշտոնական այցով Փարիզում գտնվող ՀՀ վարչապետ Հ. Բազրատյանը հանդիպեց վարչապետ Ալեն Շյուպեին, և տեղի ունեցան մի շարք այլ հանդիպումներ):

ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը և Ֆրանսիայի Եվրոպական հարցերով նախարարության ներկայացուցիչ Միշել Բարնեն ստորագրեցին հայտարարություն՝ «Երկու երկրների միջև եկամտի և գույքի համար կրկնակի հարկումից խուսափելու մասին»: Ստորագրվեց նաև հուշագիր էներգետիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ՝ բացառելով քաղաքական չարաշահումները

¹ Protocole Sur L'etablissement Des Relations Diplomatiques Entre la Republique Francaise et la Republique D'Armenie ([HTTP:// WWW.DOC.DIPLOMATIE.GOUV.FR /BASIS/PACTE/WEBEXT/BILAT/DDD/19920032.PDF](http://www.doc.diplomatie.gouv.fr/basis/pacte/webext/bilat/ddd/19920032.pdf)).

² Ֆրանսիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության համաձայնության մասին պայմանագիր, <http://www.armeniaforeign-ministry.am/doc/conventions/3-05-francebigogI-12-03-93-a.pdf>.

աստուային էներգիայի զարգացման հարցերում: Դեռևս այդ ժամանակ քննարկվող խնդիրների շրջանակում մեծ տեղ էր հատկացվում Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցին:

Երկկողմանի հարաբերություններն ավելի ակտիվացան 1996 թ. հուլիսի 13-ից. նորանշանակ դեսպան Միշել Լեգրանը Երևանում հավատարմագիր հանձնեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Ձգտելով նպաստել, որ ԼՂՀ-ի ձայնը լսելի լինի հակամարտության կողմերին, 1996 թ. դեկտեմբերին Ֆրանսիան կազմակերպեց ԼՂՀ նորընտիր նախագահ Ռ. Քոչարյանի այցը Փարիզ³, որի ընթացքում վերջինս հանդիպեց ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչների հետ:

Այդ շրջանում արդյունավետորեն զարգանում էր նաև ֆրանսիական իշխանությունների վերահիմաստավորման գործընթացը Հարավային Կովկասի երեք հանրապետությունների հետ գործող տնտեսական ու ռազմավարական կապերի շուրջ:

Ֆրանսիան պաշտոնապես տեղի տվեց նաև իր ձգտումներին դառնալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, որը հետմտում էր առավել ակտիվ ընդգրկվել ԵԱՀԿ խաղաղարար գործընթացում, ինչպես նաև ունենալ տնտեսական ու ռազմավարական երաշխիքներ Հարավային Կովկասում:

Հայաստանի հավասարակշռված դիրքորոշումը, ընդհակառակը, նպաստեց վստահության մթնոլորտի ստեղծմանը: Ֆրանսիայում հավատարմագրված ՀՀ ներկայացուցիչ Կ. Տեր-Ստեփանյանն այդ առիթով նշեց. «Նախապատվությունը, որը տալիս է Հայաստանը Ֆրանսիային, վառ ապացույց է նրան, որ մենք արժևորում ենք այդ երկրի հարաբերությունները»⁴: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ, ֆրանսիացիների կարծիքով, ԱՄՆ-ի փորձերը՝ խցկվել այդ տարածաշրջան, դրական արձագանք ստացան երկու հարևան հանրապետություններում: ԱՄՆ-ն խաղարկեց վերջիններիս հետ և օգտագործեց դրանց քաղաքական, տնտեսական և նույնիսկ պատմական գործոնները (Վրաստան-Գերմանիա, Ադրբեջան-Մեծ Բրիտանիա), որպեսզի նրանց տրամադրի դեպի իր կողմը:

Երկկողմանի կապերի զարգացման հաջողված փորձերի շարքին կարելի է դասել նաև այն, որ 1998 թ. մայիսին Երևանը դարձավ ֆրանսալեզու քաղաքների Միջազգային ասոցիացիայի անդամ (AIMF): AIMF-ն զբաղվում է անդամ-քաղաքների քաղաքական հարցերով՝ նպատակաուղղված դրանցում բարելավելու կյանքի պայմանները⁵:

³ Информация об отношениях с Францией. Официальный сайт МИД РА: <http://www.mfa.am>.

⁴ Նույն տեղում, ց. 3, գ. 195, թ. 141:

⁵ Le monde de la Francophonie: <http://www.francophonie.org/-Etats-et-gouver-nements-html>.

Հարկ է փաստել, որ հայ-ֆրանսիական հարաբերությունները կառուցվում էին ինչպես երկու երկրների քաղաքական վերնախավերի ընդհանուր տրամադրության գործոնի վրա, այնպես էլ երկու ժողովուրդների փոխշահավետ կապերի (նաև Սփյուռքի գործոնը), ազգային շահերի ընդհանրության և պատմական ավանդույթների հիման վրա: Պատահական չէ, որ երկու երկրներում էլ իշխանության փոփոխությունները չհանգեցրին հարաբերություններում էական տեղաշարժերի, քանզի պահպանվեց և զարգացավ բարի-դրացիական գործակցությունը:

1998 թ. կայացած քաղաքական փոփոխություններն էականորեն չազդեցին ՀՀ արտաքին քաղաքականության գործընթացի վրա: Կ. Տեր-Ավետիսյանի խոսքով՝ «ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահներ Ֆրանսուա Միտերանի ու Ժակ Շիրակի միջև ավանդաբար կուտակվել էին լավ հարաբերություններ, որոնք պայմանավորված էին առկա համաձայնություններով: Լ. Տեր-Պետրոսյանը, ֆրանսիացիների կարծիքով՝ զսպվածության խորհրդանիշ էր համարվում Լեոնային Ղարաբաղի բանակցությունների հարցերում, ինչը գնահատվում էր ֆրանսիացիների կողմից»⁶: Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած հակամարտության փուլերով կարգավորման տարբերակի վերաբերյալ՝ Ֆրանսիայի ԱԳՆ շատ պաշտոնյաների մեջ զարմանք հարուցեց. ըստ նրանց՝ նման դիրքորոշմամբ Լ. Տեր-Պետրոսյանը մեծ ռիսկ էր վերցնում իր վրա:

Լ. Տեր-Պետրոսյանից հետո Ռ. Քոչարյանի ընտրվելը ՀՀ նախագահի պաշտոնում Ֆրանսիայում ընկալվեց որպես Հայաստանը փակուղուց դուրս բերելու հնարավորություն, քանի որ Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկած տարբերակն անհնարին էր կիրառել Ղարաբաղյան հակամարտության լուծման գործում: Ֆրանսիական իշխանությունները, ծանոթ լինելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ռ. Քոչարյանի առավել արմատական տեսակետին, հանձին նրա տեսնում էին այն ղեկավարին, որն ի վիճակի էր իրականացնելու խաղաղ համաձայնությունը: Ֆրանսիացիները, հաշվի առնելով իրենց պատմական փորձը, մասնավորապես Շառլ դը Գոլի մոտեցումն Ալժիրյան հարցին, կարծում էին, որ Ռ. Քոչարյանը կընդունի առավել ճկուն ուղղություն: Ֆրանսիայի ղեկավարությունը գնահատեց նաև նրա կառուցողականությունը, որը հնարավորություն տվեց Ռ. Քոչարյանի վարչապետ ժամանակ՝ 1997 թվականին, երկկողմանի տնտեսական հարաբերություններին հաղորդելու նոր զարգացում:

⁶ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 3, գ. 195, թ. 142:

⁷ Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղիները. Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005 թ. ՀՀ ԱԺ, Ե., 2006, էջ 470:

Ղարաբաղյան հակամարտության և Հայոց ցեղասպանության հարցերի վերաբերյալ նոր իշխանությունների տեսակետները վկայում են այն մասին, որ իշխանությունը Հայաստանում իրականում փոխվել է, և արտաքին քաղաքականությունում երևան են գալիս նոր դրսևորումներ, որոնք ակտիվությամբ տարբերվում են նախկին իշխանությունների քաղաքականությունից:

Ֆրանսիան, լինելով Թուրքիայի մատակարար մի շարք սպրանքների ու ծառայությունների գծով, ցեղասպանության հարցը դիտարկեց որպես Թուրքիայի շահերի դեմ հնարավոր տնտեսական վտանգ: Այդուհանդերձ, գործադիր իշխանությունը չկարողացավ դիմակայել խորհրդարանական նախաձեռնությանը՝ զգուշանալով հայկական ծագումով ֆրանսիական ընտրողների և հասարակական կարծիքի դժգոհություններից, որոնք հիմնականում մեծ նշանակություն են տալիս մարդու իրավունքներին:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի իշխանությունները սկսեցին նախաձեռնել համապատասխան քայլեր: 1998 թ. նոյեմբերին Ֆրանսիա ժամանեց նախագահի խորհրդական, ՀՅԴ նախագահ Վ. Հովհաննիսյանը, որի նպատակն էր հաստատել անմիջական կապեր Ֆրանսիայի տարածքային իշխանությունների հետ և ամփոփել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: 1999 թ. մարտի 16-ին Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Է. Նալբանդյանը, որը այդ պաշտոնում մնաց մինչև 2008 թ.: Այդ թվականից կարևոր ավանդույթ դարձավ նաև դեպի Ֆրանսիա ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների այցերը: Ֆրանսիա այցելեցին ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանը, արտգործնախարար Ն. Մելքումյանը, որոնք հան-դիպեցին Ֆրանսիայի քաղաքական և պետական գործիչների ու Սփյուռքի ներկայացուցիչների հետ:

Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր՝ Ֆրանսիան փորձում էր ակտիվացնել բանակցությունների գործընթացը: Ֆրանսիայի Սենատի նախագահ Կ. Պոնսլեի հրավերով Փարիզում (2000 թ. հոկտեմբերի 14-15-ին) հանդիպեցին Ադրբեջանի Միլի Մեջլիսի նախագահ Ալեքսանդրովը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Ջ. Ժվանիան և ՀՀ ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանը: Արդյունքն ընդհանուր հայտարարագիրն էր, որով կողմերը, ելնելով ընդհանուր շահերից, որոշեցին խորհրդարանների միջև ստեղծել տարբեր օրենսդրական ենթադրություններում խորհրդատվության և համագործակցության կառուցակարգ: Որոշվեց Պոնսլեի հովանավորության ներքո կրկին հանդիպել՝ քննարկելու տարածաշրջանում անվտանգության և կայունության հարցերը՝ նպաստելու համար մշակութային, տնտեսական և սոցիալական հարաբերությունների զարգացմանը Հարավային Կովկասի և Եվրոպայի միջև: 2001 թ. հոկտեմբերի 23-ին Պոնսլեի հովանավորության

ներքո կայացավ երրորդ եռակողմ հանդիպումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի օրենսդրական պալատների նախագահների միջև, որի ընթացքում ստորագրվեց հռչակագիր⁸:

2000 թ. հուլիսի 30-ին աշխատանքային այցով, իսկ 2001 թ. փետրվարի 12-16-ին Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի հրավերով պետական այցով Ֆրանսիա ժամանեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Պետական այցի ընթացքում նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպեց նախագահ Ժ. Շիրակին, վարչապետ Լ. Շոսպենին, Սենատի նախագահ Կ. Պոնսյեին, ԱԺ նախագահ Ռ. Ֆորնիին, Փարիզի քաղաքապետ Ժան Տիբերիին: Երկու երկրների նախագահներն անցկացրին համատեղ մամլո ասուլիս:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ այդ տարիների համար Ֆրանսիայի ղեկավարությունը հայ-ֆրանսիական գործակցությունը չէր սահմանափակվում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում գործունեությամբ: Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի անձնական նախաձեռնությամբ և մասնակցությամբ Փարիզում կազմակերպվեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում: Ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները պատմության մեջ մտան «Փարիզյան սկզբունքներ» անվանումով:

Ֆրանսիայում 2002 թ. ապրիլի 21-ին մայիսի 5-ին անցկացվեցին նախագահական ընտրություններ, որում հաղթանակ տարավ գործող նախագահ Ժ. Շիրակը⁹: Նա հավաքեց 82% ձայն, որն ամենաբարձրն է Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության պատմության մեջ:

2002 թ. հուլիսի 2-ին նախագահ Ժ. Շիրակի հրամանագրով Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղարի պաշտոնում նշանակվեց Ռենո Մյուզելեին¹⁰: 2002 թ. հոկտեմբերի 3-5-ը Հայաստանում էր Ֆրանսիայի պատվիրակությունը՝ Ռ. Մյուզելեի գլխավորությամբ¹¹: Ֆրանսիայի ԱԳՆ-ի և պետքարտուղարի առջև դրված էր բարդ խնդիր: Այն է՝ ապահովել արտասահմանում ֆրանսիական վարչակազմի միասնական մասնակցություն: Պաշտոնյան հանդիպեց ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԳՆ նախարարի, առողջապահության, կրթության և գիտության նախարարների, Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Պատվիրակությունն այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցեց անմեղ զոհերի հիշատակին¹²: Հոկտեմբերի 4-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղարը

⁸ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 3, գ. 195, թ. 31:

⁹ Նույն տեղում, ց. 5, գ. 22, թ. 47:

¹⁰ Նույն տեղում, թ. 51:

¹¹ Նույն տեղում, թ. 52:

¹² Նույն տեղում, թ. 22:

մասնակցեց Հայաստանում Ֆրանսիական համալսարանի երկրորդ մասնաշենքի բացման արարողությանը, որին մասնակցեցին նաև ԵՄ անդամ երկրների դեսպանները և Եվրոպական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հայ-ֆրանսիական միջպետական կապերի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ստացավ 2006 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը նախագահ Ժ. Շիրակի պետական այցը Հայաստան: Ռ. Քոչարյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ ինչպես միջազգային նշանակության հիմնախնդիրների, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հետ կապված: Ֆրանսիայի նախագահի այցն ուներ բացարձակ նշանակություն՝ ինչպես երկկողմանի հարաբերությունների հետագա զարգացման տեսանկյունից, այնպես էլ Եվրամիության ու Հայաստանի միջև համագործակցության խորացման պլանի և միջազգային թատերաբեմում Հայաստանի հեղինակության բարձրացման համար: Ժ. Շիրակը ԵՄ երկրների միակ ղեկավարն էր, որը հրապարակայնորեն հայտարարեց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության՝ որպես նրա ԵՄ մտնելու պայմանի մասին¹³: Այդ տեսակետը նորից հնչեցվեց Երևանում ՀՀ նախագահի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ:

Քաղաքական երկխոսության խորացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցան հաջորդող տարիներին պաշտոնական տարբեր մակարդակներում տեղի ունեցած հանդիպումներն ու փոխայցելությունները, մասնավորապես 2008 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցը Ֆրանսիա, 2009 թ. մայիսին Պրահայում կայացած ԵՄ «Արևելյան գործընկերության» զագաթաժողովի շրջանակներում ՀՀ նախագահի հանդիպումը Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի հետ, 2010 թ. Երևանում տեղի ունեցավ հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության II համաժողովը, իսկ 2011 թ. Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան պատմական էր թե՛ իր նշանակությամբ, թե՛ արդյունքներով:

2012 թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Չնայած օրենքի ուժի մեջ մտնելուն՝ խոչընդոտ հանդիսացավ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը՝ Ֆրանսիայի նորրևտիք նախագահ Ֆրանսուա Հոլանդը տարբեր առիթներով բազմիցս վերահաստատեց նպատակադրվածությունը հասնելու Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը: Հատուկ կարևորություն ունի նաև այն հանգամանքը, որ 2015 թ. ապրիլի 24-ին

¹³ Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի պետական այցը Հայաստան, 29.09-01.10.2006թ., // <http://www.gov.am/am/news/item/2837/>:

Օիժեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը: Բացի այդ, 2015 թ. ընթացքում Հայաստանը եղել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամենակտիվ անդամներից՝ ներգրավված լինելով կազմակերպության տարբեր կառույցների աշխատանքներում: Այդ տարվա մարտի 3-ից ապրիլի 30-ը Հայաստանում կայացած Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում Երևանում և Հայաստանի մի շարք մարզերում կազմակերպվել է շուրջ 550 միջոցառում¹⁴:

Հայ-Ֆրանսիական գործակցության շրջանակներում ձևավորված սկզբնական փոխըմբռնումը և հետագա տարիներին կայացած շփումները Հայաստանի և Ֆրանսիայի բարձրագույն իշխանությունների միջև կրում էին սերտ, փոխշահավետ բնույթ: Համագործակցության շրջանակներում հատուկ տեղ են զբաղեցնում նաև խորհրդարանականների, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապերը: Հայաստանը, ի դեմս Ֆրանսիայի, ձեռք բերեց հուսալի գործընկեր, որը նպաստեց զարգացնելու հարաբերությունները եվրոպական կառույցների հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Ֆրանսիայի օգտակար դերակատարությանը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության շրջանակներում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Հարկ է նաև նշել, որ ապակենտրոնացված մակարդակով փոխշահավետ համագործակցությունը շարունակում է ավելի ընդլայնվել և ընդգրկում է նորանոր ոլորտներ:

Որպես ամփոփում՝ հարկ է փաստել, որ հայ-Ֆրանսիական հարաբերությունները կառուցվել են նախ և առաջ ազգային շահերի փոխադարձ հարգանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև ժամանակի պահանջները: Երկկողմանի ակտիվ համագործակցությունը բարձր մակարդակի հասցրեց միջխորհրդարանական, միջկառավարական, միջգերատեսչական գործակցությունը՝ դրանց միջոցով կյանքի կոչելով տարատեսակ ծրագրերի ու պլանների իրականացման, խնդիրների արդյունավետ լուծման հնարավորություններ: Նշանակալիորեն աշխուժացավ համագործակցությունը իշխանության տարբեր թևերի միջև: Կողմերը հայ-Ֆրանսիական համագործակցության համատեքստում մշտապես քննարկում են միջազգային իրավիճակի արդի հարցեր, մասնավորապես կարևոր քաղաքական բազմաթիվ հարցեր՝ պայմանավորելով նաև Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշը:

¹⁴ Այս և բազմաթիվ այլ պաշտոնական փոխայցելությունների մասին լրացուցիչ տե՛ս նաև արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններում և Ֆրանսիայի հետ երկկողմ հարաբերությունների մասին տեղեկատվությունում (<http://mfa.am/hy/annualreport/> և <http://mfa.am/hy/country-by-coun-try/fr/>):

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНО-ФРАНЦУЗСКИХ ОТНОШЕНИЙ (1991-2015 ГГ.)**ГУЛЯН Г. Г.**

Резюме

В результате весьма успешных переговоров и достигнутых за столько лет договоренностей, а также политического диалога между двумя странами установились теплые дружественные и доверительные отношения. Официальные визиты способствовали обсуждению многих политических вопросов. Армяно-французский политический диалог ведется на довольно высоком уровне, содействуя прогрессу переговорного процесса по урегулированию Карабахского конфликта в формате Минской группы.

**THE ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF ARMENIAN- FRENCH RELATIONS
(1991-2015)****H. GHOULYAN**

Abstract

Studying the history and content of the Armenian-French relations, it can be concluded about the importance of the official visits and negotiations on a regular basis. As a result of quite successful negotiations and reached agreements for so many years and also the political dialogue, the two countries have established a good friendship and relations based on mutual trust. Visits contributed to the discussion of political issues. The Armenian-French political dialogue is at a fairly high level, contributing to the progress of the negotiation process of the settlement of the Karabakh Conflict in Minsk Group format.

ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԱԿԻՉՅԱՆ Վ. Լ.

1960-ական թթ. վերջերից Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում ապրող հայերը փորձեցին ստեղծել մի ընդհանուր միություն, որը պիտի ընդգրկեր գերմանախոս երկրներում գործող հայկական կազմակերպությունները՝ համայնքների ուժը և հնարավորություններն օգտագործելու ընդհանուր նպատակների համար¹:

1969 թ. Աախենում ձևավորվեց հայերի կենտրոնական մարմինը՝ «Հայկական միությունների միավորում» (այսուհետև՝ Միություն) անվամբ: 11 միություն և 8 մասնավոր անձինք նոյեմբերի 22-23-ին նիստ գումարեցին, որտեղ էլ ընդունվեց Միության կանոնադրությունը (հաստատվեց 1970 թ. փետրվարի 28-ին առաջին ատյանի դատարանի կողմից), և կազմավորվեց առաջին վարչությունը՝ պաստոր Ջեյմս Կառնուսյանի ղեկավարությամբ: Հետագայում Միությունը բազմիցս փոխել է իր անվանումը: Նշենք, որ նրա սկզբնական գործունեության հիմնական ոլորտը եղել է Հայոց ցեղասպանության խնդիրը²:

1993 թ. Միությունից անջատվեց Բոննում հիմնադրված «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը» (այսուհետև՝ ԳԿԽ)՝ արդեն որպես գրանցված կազմակերպություն³: Այդ ժամանակ ԳԿԽ-ի նախագահ ընտրվեց Անդրանիկ Ազնավուրը, տեղակալը Մասիս Նահապետյանն էր, քարտուղարը՝ Պատու Գուլօղլուն, իսկ Ռուբեն Վասիլյանը հաշվապահն էր⁴: Կենտրոնական խորհրդին, բացի միավորումներից, կարող էին անդամագրվել նաև մասնավոր անձինք: Միության նստավայրը Մայնի Ֆրանկֆուրտում էր: Այսպիսով, ԳԿԽ-ն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հայերի, հայ համայնքի և հայկական միավորումների կենտրոնական, համընդհանուր միությունն է: Կանոնադրության համա-

¹ Ordukhanyan A. *Armenier in Deutschland. Geschichte und Gegenwart*, Erfurt, 2008, S. 44.

² Kantian R. *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK)*, Hannover, 2000, Ausgabe № 108, S. 28.

³ Kantian R. *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK)*, Hannover, 1993, Ausgabe № 79, S. 34.

⁴ Նույն տեղում:

ձայն՝ Կենտրոնական խորհուրդը կոորդինացնում է իր անդամների, անդամ-միավորումների բարեգործական և մշակութային հաստատությունների գործունեությունը, բարելավում գերմանական և հայկական կազմակերպությունների համագործակցությունը Գերմանիայում ապրող հայերի միջև⁵: Խորհուրդը հիմնականում ֆինանսավորվում է անդամ-միավորումների և առանձին անդամների կողմից վճարվող անդամավճարներով, նաև՝ նվիրատվություններով: Բացի այդ, ստանում է հատկացումներ՝ տարբեր նախագծերի տեսքով⁶: Չնայած զանազան դժվարություններին՝ ԳԿԽ-ի վարչությունը աշխատում է կանոնավոր ռիթմով: Նրա հիմնական նպատակը՝ Հայկական հարցին հետամուտ լինելը, իրագործվում է Բեռլինում Թուրքիայի դեսպանատան և Թուրքիայի հյուպատոսարանի առջև իրականացվող ցույցերի ու թուրքական պետական կառույցներին ուղղված բողոք-նամակների միջոցով⁷:

1994-ին ԳԿԽ-ի ղեկավար ընտրվեց Ասքանազ Ղարախանյանը: Համագործակցելով Գերմանիայի Հայ առաքելական եկեղեցու և ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության հետ՝ ԳԿԽ-ն աշխատանքներ էր տանում ոչ միայն ցեղասպանությանն առնչվող հարցերի, այլ նաև Հայաստանից գաղթած հայրի խնդիրների լուծման մասնավորապես հայապահպանության գործում: Խորհուրդը հետագա տարիների գերակա նպատակ էր համարում հայկական համայնքի երիտասարդության շրջանում նպատակաուղղված աշխատանքի կազմակերպումը, ինչպես նաև համագործակցությունը «Հայաստան» հիմնադրամի, Հայաստանի ու Արցախի շահագրգիռ կառույցների հետ⁸:

Ամեն տարի ապրիլի 24-ին ԳԿԽ-ն Գերմանիայում հայկական եկեղեցական թեմի հետ միասին Ֆրանկֆուրտի Սբ. Պողոս եկեղեցում կազմակերպում է մեծ միջոցառում՝ նվիրված 1915-1916 թթ. ցեղասպանության զոհերի հիշատակին՝ ջանքեր գործադրելով այդ միջոցառմանը քաղաքական, տնտեսական և մշակութային հայտնի գործիչների մաս-

⁵ <http://www.zentralrat.org/en/satzung>

⁶ **Zadoyan M.** *Migration und Integration: Migrationorganisationen und gesellschaftliche Partizipation das beispiel ausgewählter armenischer Vereine in Deutschland*, Bochum, 2008, S. 42.

⁷ **Ordukhanyan A.**, նշվ. աշխ., էջ 44:

⁸ **Kantian R.** *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK)*, Hannover, 1994, Ausgabe № 85, S. 41.

նակցությունն ապահովելու⁹: Նրա կարևոր գործառնություններից է Գերմանիայի կառավարության ու հայկական համայնքի, ինչպես նաև Մփյուռքի ու Հայաստանի Հանրապետության միջև փոխհարաբերությունների ամրապնդումը:

ԳԿԽ-ի գործունեությունը, սակայն, Հայաստանի Հանրապետության կողմից գնահատվում է որպես խնդրահարույց և սակավ ձեռնտու, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ցեղասպանության հարցում ավելի հստակ ու չափավոր դիրքորոշում ունի, քան Հայկական սփյուռքը: Քաղաքական-վարչական համակարգի ներկայացուցիչների տեսակետների համաձայն՝ ԳԿԽ-ի օգնությունը երիտասարդ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական համախմբման և ժողովրդավարության կայունության հաստատման գործում շատ չնչին է:

1999 թ. նոյեմբերին Բաֆֆի Բեդիկյանից հետո ԳԿԽ նախագահ ընտրվեց Շավարշ Հովասափյանը, որն այդ պաշտոնում է ընտրվել ևս մի քանի անգամ՝ կառույցը ղեկավարելով մինչ 2009 թ.: Նրա նախագահության ժամանակ՝ ԳԿԽ-ն (2000 թ.) Գերմանիայի Բունդեսթագին Հայոց ցեղասպանության ճանաչման նամակ-խնդրագիր ուղարկեց: Ճիշտ է՝ այն մերժվեց, սակայն խոր հետք թողեց ցեղասպանության ճանաչման գործընթացում: Միայն այն հանգամանքը, որ այդ խնդրագրի տակ ստորագրել էին հազարավոր մարդիկ և հարյուրավոր կազմակերպություններ, խոսում էր գործի լրջության և կատարված աշխատանքի մասին:

Խնդրագրի տակ իրենց ստորագրություններն էին դրել գերմանական, հայկական, ասորական, հունական, հրեական և թուրքական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքական, գիտական և մշակութային գործունեությամբ, ինչպես նաև աշխարհի այլևայլ վայրերում բնակվող անհատներ: Շ. Հովասափյանի ղեկավարման տարիներին կարևորվում էին հատկապես երիտասարդների հետ տարվող աշխատանքները. կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ՝ երիտասարդների մեջ ամրապնդելու հայապահպանության գաղափարը¹⁰:

2000-ական թթ. կեսերից ԳԿԽ-ի ներսում ի հայտ եկան հակասություններ և տարակարծություններ՝ Միության հետագա քաղաքական գործունեության և եվրոպական կազմակերպությունների հետ հնարավոր

⁹ <http://www.zentralrat.org/de/dokumente>

¹⁰ Ordukhanyan A., նշվ. աշխ., էջ 47:

համագործակցությանը վերաբերող հարցերի առնչությամբ: Այս ամենը հանգեցրեց ձգվող վիճարանությունների և ներքին գծտությունների:

2009 թ. ԳԿԽ-ի հաջորդ նախագահ ընտրվեց Ազատ Օրդուխանյանը: Նոր վարչությունը, ավանդական աշխատանքներին զուգահեռ, որոշեց մայրաքաղաք Բեռլինում հաստատել իր գրասենյակը, ապա նախաձեռնել ու երեք տարում հիմնել հայկական գրադարան ու արխիվային կենտրոն, որը ոչ միայն պիտի ամփոփեր օրեցօր մեծացող գերմանահայ համայնքին առնչվող վավերագրերը, կենտրոնացներ համայնքային բոլոր արխիվներն ու համատեղեր ընթացիկ համայնքային գրագրությունը, այլև գրադարանի, ձայնադարանի ու ֆիլմադարանի հետ աստիճանաբար վերաճեր հայկական գիտահետազոտական կենտրոնի¹¹:

Օրդուխանյանը զգալի ներդրում ունեցավ Գերմանիայի կառավարության հետ, ինչպես նաև Գերմանիայի հայկական համայնքի և Միջուռքի փոխհարաբերությունների զարգացման գործում: Նա հանդիպումներ էր ունենում Բունդեսթագի պատգամավորների հետ՝ իրականացնելով քննարկումներ՝ Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված¹²: Նրա նախագահության տարիներին, համախմբելով ԳԿԽ-ի ու համայնքի ուժերը, հիմնվեց սիրիահայ համայնքին աջակցող կոմիտե, որը տարբեր հանգանակությունների միջոցով նպաստում է սիրիահայերի առջև ծառայած խնդիրների լուծմանը¹³:

Հետագայում ԳԿԽ-ում տեղի ունեցած պառակտումների հետևանքով ի հայտ եկան նոր խնդիրներ, որոնք ԳԿԽ-ի կանոնակարգի ու ներքին տարաձայնությունների արդյունք էին¹⁴: Այս հարցերին լուծում տալու համար 2014 թ. հունվարի 25-ին հրավիրվեց ընդհանուր ժողով (նախագահ՝ Միհրան Դաբազ): Լարված մթնոլորտում ընթացան քննարկումները, քանի որ նախկին վարչությունը հրաժարական էր տվել հաշվապահության՝ ոչ պատշաճ որակների պատճառով¹⁵: ԳԿԽ-ի նախագահ

¹¹ <http://www.zentralrat.org/de/dokumente>

¹² Նույն տեղում:

¹³ <http://www.zentralrat.org/en/node/10917>

¹⁴ <https://armenpress.am/arm/news/741625/>

¹⁵ <http://www.hay-society.de/haysociety/gesellschaft-a-politik/292-krise-des-zad-neuanfang-fehlanzeige->

ընտրվեց Նազարեթ Աղեկույանը¹⁶, որին 2015 թ. նոյեմբերի 15-ին հաջորդեց Ժազլին Խաչատրյանը¹⁷:

Ներկայումս ԳԿԽ-ի հովանու ներքո գործում են մեկ տասնյակից ավելի հայկական կազմակերպություններ, ինչպես նաև հարյուրավոր անդամներ: ԳԿԽ-ն փորձեց Դաշնային հանրապետությունում հայերի շահերն արտահայտել Գերմանիայում Հրեաների կենտրոնական խորհրդի օրինակով, սակայն այս ծրագիրը ձախողվեց, քանի որ ոչ բոլոր հայկական միավորումներն էին անդամակցում Կենտրոնական խորհրդին: Բացի այդ, չնչին էր Խորհրդի կազմում գրանցված անձանց թիվը՝ Գերմանիայում բնակվող հայերի քանակի համեմատությամբ, ուստի նրա համար դյուրին չէ Գերմանիայում գտնվող հայերի մեծամասնության աջակցությունն ստանալ պետական հաստատություններին իր պահանջները ներկայացնելիս:

ԳԿԽ-ի քաղաքական գործունեությունը հիմնականում իրականացվում է համացանցում հրապարակվող հայտարարությունների և բաց նամակների հիման վրա: Նրա համագործակցությունը հայկական, հայ-գերմանական և հայանպաստ այլ կազմակերպությունների հետ ընդհանուր առմամբ կրում է կանոնավոր բնույթ, չնայած, ըստ որոշ փորձագետների կարծիքների, այն աստիճանաբար վերածվում է առանձին, մեկուսացած կառույցի, որը հայերի շահերը ոչ բավարար չափով է ներկայացնում: ԳԿԽ-ի գործունեության վրա նս հայկական կազմակերպությունների ազդեցությունը տարբեր կերպ են գնահատում փորձագետները: Նրանք ամենամեծ տեղը հատկացնում են ՀՅԴ-ին, որը հայերի ամենաազդեցիկ կուսակցությունն է Սփյուռքում: Սակայն ԳԿԽ-ի ղեկավարությունը ժխտում է Դաշնակցության ազդեցությունը Միության վրա:

Այնուամենայնիվ, կարճ ժամանակահատվածում ԳԿԽ-ն զգալի աշխատանքներ է կատարել գերմանահայ համայնքին, հայ-գերմանական հարաբերություններին և հայ ժողովրդին ու Հայաստանին առնչվող տարաբնույթ խնդիրների լուծման ուղղությամբ:

¹⁶ http://www.zentralrat.org/files/kermaneren_neu.pdf

¹⁷ <http://www.zentralrat.org/en/node/11051>

ЦЕНТРАЛЬНЫЙ СОВЕТ АРМЯН В ГЕРМАНИИ**МАКИЧЯН В. Л.**

Резюме

Еще с конца 1960-х гг. в германоязычных странах Европы велись работы по созданию такой организации, которая объединила бы все армянские организации и общины.

В 1969 г. в Аахене был сформирован центральный орган обосновавшихся в германоязычных странах армян, который был назван “Союз армянских объединений”, а в 1993 г. на основе этого союза в Бонне был основан “Центральный совет армян в Германии”. Последний должен был играть координирующую роль для организаций-членов и частных лиц. Финансирование Совета осуществлялось благодаря членским взносам и пожертвованиям.

Деятельность Совета во многом способствовала признанию геноцида армян.

В настоящее время Совет координирует работу входящих в него более десяти организаций и частных лиц.

THE CENTRAL COUNCIL OF ARMENIANS IN GERMANY**V. MAKICHYAN**

Abstract

Since late 1960s, many attempts have been made in German speaking countries to create an organization, which will shelter all the Armenian organizations and communities under one roof.

In 1969 the central body of German speaking Armenians was formulated in Aachen called “Union of Armenian Unities”, and in 1993 the “Central Council of Armenians in Germany” was isolated from that union and was formulated in Bonn. The board was to undertake the role of a coordinator for its member organizations and individuals. The board was financed by membership fees and donations.

In the flow of time the “Central Council of Armenians in Germany” played a central role in organizing events and the procedure of recognizing Armenian Genocide.

Sometimes there occurred contradictions and disagreements in reference to the further activities of the board.

At present, more than 10 organizations and hundreds of members are under the auspice of the “Central Council of Armenians in Germany”.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԳՐԱՎՈՐ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

ԳԱԼՍՏՅԱՆ Վ. Ա.

XIX դարի սկզբին Արևելյան Այսրկովկասի պատմության մեջ տեղի ունեցան շրջադարձային իրադարձություններ: 1804-1813 թթ. երկրամասի տարածքը կազմող և Իրանից կիսանկախ քաղաքական կարգավիճակում գտնվող Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Շամախիի, Շաքիի խանությունները խաղաղ համաձայնության կամ ռազմական գործողությունների հետևանքով մտան Ռուսական կայսրության կազմի մեջ¹:

Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Արևելյան Այսրկովկասն աշխարհագրորեն կտրվեց իր համար ավանդական դարձած իրանական քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրից: Սակայն դարերով արմատացած իրանական՝ առաջին հերթին մշակութային ազդեցությունը շարունակում էր մնալ որպես երկրամասի մահմեդական բնակչության և վերնախավի վրա ազդող հզոր գործոն: Բավական է նշել միայն, որ դարեր շարունակ Իրանի տիրապետության ներքո գտնված Արևելյան Այսրկովկասում պետական գրագրության և գրականության լեզուն պարսկերենն էր: Թյուրքերենի տեղական տարբերակով ստեղծվել էին միայն բանահյուսություն և պոեզիայի սակավաթիվ գրավոր օրինակներ: Ռուսական տիրապետության հաստատումից հետո էլ պարսկերենի դիրքերը տեղի մահմեդական գրագետ բնակչության շրջանում մնում էին գերակայող:

Արևելյան Այսրկովկասը ոչ միայն աշխարհագրորեն, այլև մշակութային և քաղաքական տեսանկյունից Իրանից և իրանական միջավայրի ազդեցությունից կտրելու նպատակով Կովկասի ռուսական իշխանությունը դիմեց հատուկ քայլերի: Իրանական ազդեցության ամենացայտուն դրսևորումը պարսկերենն էր, որը ռուսական տիրապետության հաստատման առաջին տարիներին էլ կիրառվում էր գրագրության մեջ: Ուստի Ռուսաստանը թիրախ դարձրեց պարսկերենը: Պատահական չէ, որ Կովկասի կառավարումը ստանձնելուց անմիջապես հետո գեներալ Ա. Երմոլովը 1816 թ. կարգադրություն ուղարկեց «թաթարներով» բնակեցված բոլոր շրջաններ՝ պահանջելով թողնել պարսկերենը և գրել միայն «թաթարերեն»: Այնուհետև գրագրությունն ու

¹ Дубровин Н. Ф. История войны и владычества русских на Кавказе, т. 4, СПб., 1886, с. 135-143; т. 5, СПб., 1887, с. 78-89; Бакиханов А. Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 156-162.

նամակագրությունը սկսեց իրականացվել թյուրքերենով՝ տարբեր ուղղագրություններով²:

Ցարական ռազմավարչական համակարգի դրդմամբ և հովանավորությամբ աստիճանաբար ավելի լայնորեն սկսեց կիրառվել Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության մեջ ամենատարածված լեզուն՝ խոսակցական թյուրքերենը: Փաստորեն, տեղի էր ունենում մշակութային լուրջ փոխակերպում՝ գրագրության և իշխող դասակարգի լեզու հանդիսացող պարսկերենը տեղը զիջում էր նոր ձևավորվող գրական թյուրքերենին: Այս գործընթացին աջակցում էր ցարական Ռուսաստանը³:

Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրականության և գրական լեզվի հիմնադիրը ցարական պաշտոնյա, գրող և թարգմանիչ Միրզա Ֆաթալի Ախունդովն էր (1812-1878): Դասական կրոնական կրթությունից բացի, նաև ռուսական կրթություն ստացած Ախունդովն ստեղծագործական առումով կրում էր պարսկական մշակույթի ազդեցությունը, սակայն նրա քաղաքական հայացքները ձևավորվել էին ռուսական միջավայրի ներգործությամբ: Հենց նրա գործունեության շնորհիվ երկրամասում էականորեն թուլացավ իրանական ազդեցությունը, որը, անշուշտ, բխում էր Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական շահերից:

1850-1857 թթ. Ախունդովի գրած «Մուլլա Իբրահիմ Խալիլ, ալ-քիմիկոս, փիլիսոփայական քարի տիրակալ», «Բուսարան Միսյե ժորդանը և դերվիշ, հայտնի կախարդ Մոսթալիշահը», «Ավագակին հաղթած արջը», «Լենքորանի խանության վեզիրը», «Մյատի արկածները», «Արևելյան փաստաբանները» կատակերգական պիեսները, «Խաբված աստղերը» պատմվածքը համարվում են Այսրկովկասում թյուրքերենով գրված առաջին ամբողջական արձակ երկերը, որոնք միննույն ժամանակ սկսեցին տպագրվել⁴: Դրանք նորություն էին նաև նրանով, որ գրված էին ոչ թե արևելյան, այլ եվրոպական ոճով⁵:

² Տե՛ս **Ахундов М. Ф.** Докладная записка штабс-капитана Мирзы Фатали Ахундова (Избранные философские произведения, Баку, 1953, с. 342).

³ Հմմտ. **Варданян Т.** Азербайджанцы. История одного незавершенного этнопроекта, М., 2012, с. 30; **Swietochowski T.** Russian Azerbaijan, 1905-1920: The Shaping of a National Identity in a Muslim Community, Cambridge, 1985, p. 27.

⁴ История всемирной литературы в 9-и томах, т. 7, М., 1991, с. 216; **Мамедов III.** Мирза-Фатали Ахундов, М., 1978, с. 29.

⁵ **Rubin D., Nagy P., Rouyer P.** The World Encyclopaedia of Contemporary Theatre: Europe, London-New York, 1994, p. 81; История всемирной литературы в 9-и томах, т. 7, М., 1991, с. 215; **Аух Е. М.** Между приспособлением и самоутверждением, Азербайджан и Россия: общества и государства, вып. 4, М., 2001; <http://old.sakharov-center.ru/publications/azrus/az003.htm>

Մինչև Ախունդովի երկերը թյուրքալեզու կայացած գրականության բացակայության մասին են խոսում բարոն Նիկոլայիին ուղղված նրա նամակի հետևյալ տողերը. «Մինչև հիմա՝ XIX դարի կեսը, «թաթարական ցեղը» չունի սեփական գրականությունը: Հնարավոր չէ գտնել մի գիրք, որն իր բնագրով գրված լինի թաթարական ժողովրդական լեզվով: Եթե նույնիսկ գտնվի՝ թաթարերենով գրված ինչ-որ բան, դա որևէ այլ լեզվից թարգմանություն է՝ պարսկերենին, արաբերենին կամ թուրքերենին հատուկ անբնական և ճոխացված արտահայտություններով»⁶:

Արևելյան Այսրկովկասում թյուրքերեն գրական լեզվի ամրապնդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև Միրզա Ֆաթալի Ախունդովի՝ արաբատառ գիրը բարեփոխելու նախաձեռնությունը: Նա առաջարկում էր Այսրկովկասի թյուրքերենի, նաև պարսկերենի և օսմանյան թուրքերենի համար կիրառվող արաբական այբուբենը հասարակ ժողովրդի համար դարձնել ավելի մատչելի: Ավելի ուշ նա հանգեց այն մտքին, որ արաբական այբուբենը պետք է ընդհանրապես փոխարինել լատինականով կամ ռուսականով: Ախունդովի նպատակն էր երկրամասի թյուրքախոս մտավորականության շրջանում մասսայականացնել գրական թյուրքերենը⁷:

Հարկ է հաշվի առնել XIX դարում առկա՝ արաբական այբուբենը փոխարինելու համընդհանուր միտումը, որը զգալի էր հատկապես Օսմանյան կայսրությունում: Հայտնի է, որ մինչև Առաջին աշխարհամարտը մի քանի փորձ է արվել օսմաներենի համար կիրառվող արաբական այբուբենը փոխարինել այլ լեզուների այբուբեններով: Գիտությանը հայտնի է հայատառ թուրքերենի ֆենոմենը, որով դարեր շարունակ արժեքավոր գեղարվեստական գործեր են ստեղծվել, թերթեր լույս տեսել: Հայոց այբուբենի հնչյունաբանությունը լիարժեքորեն համապատասխանում էր օսմաներենին, և, դրանով պայմանավորված, XIX դարի երկրորդ կեսին օսմանյան իշխանական շրջանակներում նույնիսկ ծրագրեր կային օսմաներենի արաբական այբուբենը փոխարինել հայկականով⁸: Ի դեպ, հայատառ թուրքերենի արդյունավետությունը ժամանակին գնահատել է նաև Ախունդովը: Նա նշում էր, որ հայերն ու հույները իրենց տառերով, սակայն թյուրքերենով տասից ավելի թերթեր են

⁶ Ахундов М. Ф., *նշվ. աշխ.*, էջ 342:

⁷ Levend A. S. *Türk Dili'nde Gelişme ve Sadeleşme Evreleri*, Ankara, 1972, s. 155.

⁸ Ստեփանյան Հ. Հայատառ թուրքերենի դերը Օսմանյան կայսրության ժողովուրդների առաջընթացի մեջ (Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Ե., 2006, - 13, էջ 82):

տպագրում. հետևաբար ինչո՞ւ օսմանյան կայսրությունը թույլ չի տալիս իրեն իր ստեղծած այբուբենով գրքեր և թերթեր տպագրել⁹:

Ախունդովի լատինական և ռուսական այբուբենների հիման վրա ստեղծած «նոր մահմեդական այբուբենի» վերջնական տարբերակը բաղկացած էր 32 ձայնավորից ու 10 բաղաձայնից¹⁰: Սակայն Իրանի և Օսմանյան կայսրության գիտական և իշխանական պահպանողական շրջանակները հրաժարվեցին ընդունել նոր այբուբենի նախագիծը: Ցարական Ռուսաստանն էլ չէր ցանկանում «մահմեդական» այբուբենի բարեփոխման կամ փոխարինման հարցում առաջ անցնել իսլամական աշխարհի երկու ամենաազդեցիկ պետություններից՝ Օսմանյան Թուրքիայից և Իրանից:

Ուշագրավ է, որ Ախունդովն իր կազմած լատինատառ այբուբենի մեջ էթնիկ հիմք չէր դնում և առաջին պլան չէր մղում թյուրքախոսների շրջանում դրա տարածումը: Պատահական չէ, որ նամակներում իր այբուբենը կոչում էր «նոր մահմեդական այբուբեն», իսկ Այսրկովկասի մահմեդականներին դիտարկում էր որպես մեկ ամբողջություն՝ տուրք տալով այդ շրջանում տարածված հավաքական ինքնագիտակցությանը՝ հիմնված կրոնական ընդհանրության վրա: Նա հաճախ օգտագործում էր «մահմեդական ազգ» եզրույթը՝ իրեն համարելով այդ «ազգի» ներկայացուցիչ¹¹: Այս երևույթը փաստում է, որ XIX դարի 60-70-ական թթ. Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը որպես էթնոս կամ ազգ ձևավորված չէր, այլ մետաէթնոլեզվական հանրույթ էր՝ կրոնական ինքնագիտակցությամբ:

Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի հետագա արմատավորումը կապված է Հասան-բեկ Չարդաբիի (Մելիքով) (1842-1907) գործունեության հետ, որը հիմնադրել է Արևելյան Այսրկովկասում առաջին թյուրքալեզու «Էքինչի» (Հողագործ) թերթը:

Հասան-բեկ Չարդաբին անձնապես ճանաչել և նամակագրական կապի մեջ է եղել «Մշակ» թերթի հիմնադիր և խմբագիր Գրիգոր Արծրունու հետ¹²: 1875 թ. փետրվարի 27-ին լույս տեսած «Մշակ» թերթի 8-րդ համարի առաջին էջում

⁹ Ахундов М. Ф. Письмо Мирзе Юсиф-Хану от 8 июня 1871 года (Избранные философские произведения, Баку, 1953, с. 324).

¹⁰ Тагиев И. Мирза Фатали Ахундов и новый тюркский алфавит (Культура и письменность Востока, кн. II, Баку, 1928, с. 58-59).

¹¹ Ахундов М. Ф. Письмо министру просвещения Ирана (Избранные философские произведения, Баку, 1953, с. 275-276).

¹² Агаян Ц. К вопросу об издании азербайджанской газеты «Экинчи» и связи «Экинчи» с армянской периодической печатью (Տեղեկագիր Հայկական ՄԱԹ ԳԱ, 1950, - 11, с. 58).

հրապարակվել է «Էքինչիին» նվիրված հոդված՝ «Մի լրագիր թուրքերեն լեզուով»: Նշվում էր. «Կովկասյան թուրք ազգաբնակչությունը արգելք է հանդիսանում գյուղատնտեսության և հասարակական զարգացման համար: Ուստի ցանկություն կա, որպեսզի հայ և վրացի հասարակությունների համանմանությամբ թուրք հասարակության մեջ էլ ի հայտ գային ամբողջ բարձր և մտավոր կյանքով ապրող երիտասարդների խմբեր»¹³: Հայկական թերթում Հասան-բեկ Չարդաբին ներկայացվել է այս կերպ. «Մի բարձր ուսում ստացած երիտասարդ, Հասան-բեկ Մէլիքով, առաջինն է, որ յաղթելով բոլոր նախապաշարմունքները և ամեն տեսակ արգելքներ, հանդես պիտի գայ թուրքերեն լեզուով մի լրագիր հրատարակելով Բագուի մէջ: Մենք առանձին բուսականութեամբ մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում այդ երևոյթի վրայ... Մի լուսաւորուած թուրք կամենում է, լուսաւորուած մնալով թուրք մնալ... Ինչպէս ընթերցողը տեսնում է, սա մի բոլորովին նոր երևոյթ պէտք է լինի մեր մահմէտական ազգաբնակչութեան կեանքի մէջ: Յուսանք, որ պ. Մէլիքովի յանձն առած գործը արձագանք կը գտնի նրա համադասանների շրջանում, յուսանք, որ նրա լրագիրը առաջին քայլ կը լինի՝ մի անշարժ տարր եվրոպական ընդհանուր մարդկային լուսաւորութեան հետ ծանօթացնելու և նրա ուղղութեան հետ հաշտեցնելու համար»¹⁴:

Հասան-բեկի անձնական ծանոթությունը և մտերմությունը Գրիգոր Արծրունու հետ, նաև այն փաստը, որ առաջին թուրքալեզու թերթի անունը ևս նշանակում էր «հողագործ» կամ «մշակ», մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Հասան-բեկ Չարդաբին ոգեշնչվել ու ազդվել է հայկական մամուլից և մասնավորապես «Մշակ» թերթից: Հայ մտավորականությունն իր հերթին հույսեր էր կապում Չարդաբիի և նրա հիմնած թերթի հետ՝ կարծելով, որ Այսրկովկասի թուրքախոս էթնոլեզվական հանրույթը կդառնա ավելի քաղաքակիրթ, ինչն էլ դրականորեն կանդրադառնա նաև երկրամասի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի վրա:

Ի վերջո, 1875 թ. Հասան-բեկ Չարդաբին մեծ դժվարությամբ և հոդվածները մանրակրկիտ գրաքննության ենթարկելու պայմանով ստացել է ցարական իշխանության թույլտվությունը: Թերթի յուրաքանչյուր նոր համար ամեն անգամ Թիֆլիս գրաքննության չուղարկելու համար Հասան-բեկի խնդրանքով «Էքինչիի» գրաքննությունն ստանձնել և երաշխավորել է անձամբ Բաբվի նա-

¹³ Մշակ, -8, Թիֆլիս, 1875:

¹⁴ Նույն տեղում:

հանգապետ Ստարոսելսկին¹⁵: Այս պարագայում ևս տեսնում ենք, որ ցարական իշխանությունը խրախուսում էր թյուրքալեզու գրավոր մշակույթի տարածումը՝ որպես հակակշիռ Արևելյան Այսրկովկասում իր դիրքերն աստիճանաբար զիջող պարսկերենին: Պետք է հաշվի առնել, որ Կովկասի ցարական իշխանությունը թույլատրել էր «Էքինչի» թերթի հիմնումն այն պայմանով, որ դրանում չէին հրապարակվելու քաղաքական և հասարակական սուր բնույթի նորություններ: Գրաքննական մարմինների խստացված հսկողության պայմաններում թերթի էջերում հիմնական ուշադրությունը դարձվում էր մահմեդականների շրջանում կրթության տարածման, թյուրքերեն և ռուսերեն գրավոր լեզուների հանրայնացման քարոզչությանը:

«Էքինչի» թերթը փակվել է 1877 թ.: Մեզ հասած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թերթի փակման գործում վճռորոշ դեր է կատարել նույն թվականին սկսված ռուս-թյուրքական պատերազմը: Թերթի հիմնադիր և խմբագիր Հասան-բեկ Չարդաբին իր հուշերում նշել է, որ ռուսական իշխանությունը ոստիկանության գործակալների միջոցով անընդհատ հետևում էր իրեն, իսկ ցարական գրաքննությունը շատ անգամ արգելում էր որոշ հոդվածների հրատարակումը¹⁶:

«Էքինչի» 1877 թ. մի քանի համարներում զետեղվել էին Ռուսաստանին անհաճ լուրեր՝ ընթացող ռուս-թյուրքական պատերազմի մասին, որոնք էլ կարևոր նշանակություն են ունեցել թերթի փակման համար¹⁷: Պետք է նաև հաշվի առնել, որ «Էքինչի» թերթը լույս էր տեսնում Այսրկովկասի թյուրքերենով, որն օսմաներենի նման արաբատառ էր, բառապաշարով մոտ այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում շրջանառվող լեզվին: Համարներում մեծ տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրության վերաբերյալ նյութերին: Տ. Սվետոխովսկին իրավացիորեն կարծում է, որ «Էքինչի» թերթը համակրում էր Օսմանյան Թուրքիային և փաստացի Այսրկովկասի թյուրքախոսների շրջանում տարածում էր պրոօսմանյան տրամադրություններ, քարոզչական աշխատանք էր կատարում¹⁸: «Էքինչի» թերթի համարներն ուսումնասիրելիս ակնհայտ է, որ իսկապես դրանցում նշանակալի տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրությանը, այդ պետությունում տեղի ունեցող իրադարձություններին: Օսմանյան պետությունը բացահայտ չէր գովաբանվում, սակայն

¹⁵ Агаян П., նշվ. աշխ., էջ 57:

¹⁶ Əkinçi, 1875-1877 (Tam mətni), Bakı, 2005, s. 16.

¹⁷ Sə'ü Əkinçi, № 17, 1877 – Əkinçi, 1875-1877 (Tam mətni), Bakı, 2005, s. 372.

¹⁸ Swietochowski T., նշվ. աշխ., էջ 29:

հաստատապես կարելի է պնդել, որ «Էքինչիի» միջոցով Արևելյան Այսրկովկասի թուրքախոսների շրջանում Օսմանյան կայսրությունը ներկայացվում էր որպես պատկառելի մահմեդական պետություն:

Այս փաստը, բնականաբար, հայտնի էր և անհանդուրժելի՝ ցարական իշխանությանը, հատկապես Օսմանյան կայսրության հետ 1877-1878 թթ. պատերազմի պայմաններում: Առաջին թուրքալեզու թերթի էջերում լույս էին տեսնում նորություններ ոչ միայն ռազմաճակատում, այլև Այսրկովկասում կատարվող կարևոր իրադարձությունների վերաբերյալ: Հետևաբար ցարական կառավարությունը «Էքինչին» դիտարկում էր որպես տեղեկությունների արտահոսքի աղբյուր՝ պատերազմում Ռուսաստանի թշնամի Օսմանյան Թուրքիայի ռազմական և լրտեսական մարմինների համար: XX դարասկզբի քաղաքական գործիչ Մամեդ Էմին Ռասուլզադեն ևս «Էքինչի» թերթի փակման պատճառ էր նշում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի առաջին տարում տպված մի քանի հոդվածները¹⁹:

1860-1870 թթ. թուրքալեզու գրականության և թուրքալեզու մամուլի ձևավորման նախաձեռնություններն իրենց շարունակությունն են ստացել նաև հաջորդ տասնամյակներում: Հասան-բեկ Ջարդաբիի աշակերտներից Նաջաֆ-բեկ Վեզիրովը (1854-1926) թուրքերենով գրել է մեկ տասնյակից ավելի պիեսներ՝ հիմնականում կատակերգական ժանրի: «Միսը քեզ, ոսկորը ինձ» կատակերգությունում հեղինակը ծաղրել է մահմեդական կրոնավորների բարքերն ու սոցիալությունը, հանդես եկել արաբա-պարսկական լեզվի հիման վրա կրոնական կրթություն սովորող հետամնաց դպրոցները ժամանակակից կրթական հաստատություններով փոխարինելու պահանջով: «Դժբախտի ողբերգությունը» դրամայում Վեզիրովը ներկայացրել է մահմեդական հասարակության մեջ կնոջ ողբալի վիճակը²⁰: 1890 թ. նա թուրքերենով գրել է իր «Նետված քարը կրունկին է դիպչում» և «Ուշացած զոջումը օգուտ չի տալիս» կատակերգությունները՝ ծաղրելով Այսրկովկասի մահմեդականների սնահավատությունն ու հետամնաց կենցաղը²¹: Նաջաֆ-բեկ Վեզիրովի ամենահայտնի երկը՝ «Ֆահրեդդինի վիշտը», թուրքալեզու առաջին ողբերգությունն է (1896 թ.): Ստեղծագործության գլխավոր հերոսը ազատամիտ Ֆահրեդդինն է²²:

¹⁹ Расулзаде М. Э. Сборник произведений и писем, М., 2010, с. 28.

²⁰ Азербайжан өдөбијјаты тарихи, Нөчөфбөј Вөзирөв, Үч чилддө, II чилд, Бақы, 1960, с. 326; Везиров Н. Б. Избранные произведения, Баку, 1950, с. 9.

²¹ Vəzirov N. B. Əsərləri, Bakı, 2005, s. 24-56.

²² Swietochowski T., նշվ. աշխ., էջ 27: Vəzirov N. B. Əsərləri, Bakı, 2005, s. 4; История всемирной литературы в 9-и томах, т. 7, с. 219.

«Էքինչի» թերթի փակվելուց հետո XIX դարում Այսրկովկասում թյուրքալեզու մամուլի հետագա պատմությունը կապված է Ունսիզադե եղբայրների գործունեության հետ: Հաջի ՍեՄիդ (1839-1905) և Ջելալ Ունսիզադե (1854-1932) եղբայրները 1879-1891 թթ. Թիֆլիսում հրատարակել են «Ջիյա» (Լույս) և «Քեշքյուլ» (Մուֆիի պնակ) թյուրքալեզու թերթերը: Նրանց պարագայում էլ Կովկասի ռուսական իշխանությունը թույլատրել է թերթերը տպագրել թյուրքերենով, սակայն խիստ գրաքննության պայմանով²³: Մուննի կրոնական գործիչ Սեյիդ Ունսիզադեի «Ջիյա» (1880 թ. վերանվանված «Ջիյա Քաֆրասիյե») թերթը աչքի էր ընկնում կրոնական և պահպանողական ուղղվածությամբ: Այնուամենայնիվ, այս տպագիր օրգանը ևս իր կարևոր դերն է ունեցել թյուրքալեզու գրավոր մշակույթի զարգացման գործում:

Համեմատաբար ավելի ազատական էր 1883 թ. Ջելալ Ունսիզադեի հիմնած «Քեշքյուլ» թերթը: Ուշագրավ է, որ թերթի համար աշխատել են նաև հայ մեծանուն գրողներ Բաֆֆին և Ալեքսանդր Շիրվանզադեն²⁴: Թերթի տարբեր համարներում տպագրվել են Միր-զա Ֆաթալի Ախունդովի երկերը, Սեյիդ Ազիմ Շիրվանիի թյուրքերեն բանաստեղծությունները: Թյուրքերեն թարգմանությամբ ներկայացվում էին եվրոպական և հատկապես ռուսական գրականության նշանավոր ներկայացուցիչների գործերը: Թերթում լույս էին տեսնում նաև պարսկերեն և արաբերեն նյութեր²⁵:

«Քեշքյուլի» գոյության վերջին տարիներին՝ 1890-1891 թթ., թերթի էջերում լույս էին տեսնում թյուրքախոս էթնոլեզվական հանրույթի էթնիկ պատկանելության և ինքնագիտակցության վերաբերյալ հոդվածներ, որոնք ակնհայտորեն թուրքամետ էին և կրում էին ծնվող պանթյուրքիզմի գաղափարախոսության ազդեցությունը²⁶: Ի վերջո, Ունսիզադե եղբայրները ցարական իշխանության կողմից մեղադրվել են պանթյուրքիստական գաղափարներ քարոզելու մեջ և հեռացել են Օսմանյան կայսրություն²⁷:

²³ Şahverdiyev A. *Azərbaycan mətbuatı tarixi*, Bakı, 2006, s. 46.

²⁴ Зейналов А. А. *Проблема взаимоотношений азербайджанской литературы и печати с цензурой (1850-1905)*, Автореферат канд дисс., Баку, 1990, с. 41; Şahverdiyev A., նշվ. աշխ., էջ 52:

²⁵ Аyx E. M., նշվ. աշխ., <http://old.sakharov-center.ru/publications/azrus/az003.htm>

²⁶ Swietochowski T., նշվ. աշխ., էջ 32; Shaffer B. *Borders and brethren: Iran and the challenge of Azerbaijani identity*, Cambridge, 2002, p. 30; Alstadt A. *The Azerbaijani Turks Power and Identity under Russian Rule*, Stanford, 1992, p. 70; Аyx E-M., նշվ. աշխ., http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_003.htm

²⁷ Adel G. H., Elmi M. J., Taromi-Rad H. *Periodicals of the Muslim World*, London, 2012, p. 16.

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրականության և մամուլի տեսքով ձևավորվել էր գրավոր մշակույթ (որի հիմքի վրա մի քանի տասնամյակ անց՝ XX դարասկզբին, պիտի տեղի ունենար նոր՝ ադրբեջանցի ժողովրդի էթնոհամախմբման գործընթացը): Երկրամասի համար այս նոր երևույթն արդյունք էր նախ և առաջ ռուսական տիրապետության հաստատման և ցարական իշխանության վարած քաղաքականության: Յարիզմը ցանկանում էր վերջնականապես կտրել Արևելյան XIX Այսրկովկասի մահմեդականների կապերը Բրանի հետ, ուստի խրախուսում էր թյուրքալեզու գրականության և մամուլի ձևավորումը: Բհարկե, միննույն ժամանակ ռուսական իշխանությունը խստագույնս հետևում էր հատկապես թյուրքալեզու մամուլին, դրանում տեղ գտնող հրապարակումների քաղաքական և գաղափարական միտումներին՝ փորձելով կանխել կայսրության տարածքային ամբողջականության համար վտանգավոր ազգայնական և պանթյուրքիստական դրսևորումները: Այնուամենայնիվ, սեփական գրական լեզվի, գրականության և մամուլի ձևավորումը բնականաբար հանգեցնում էր մահմեդական թյուրքախոս բնակչության ինքնագիտակցության փոխակերպման, որը XIX դարի երկրորդ կեսին դրսևորվում էր առավելապես նոր ձևավորված թյուրքախոս մտավորականության շրջանում: Թյուրքալեզու գրավոր մշակույթի առաջ գալու գլխավոր հետևանքն այն էր, որ թյուրքախոս էթնո-լեզվական հանրույթի էլիտայի շրջանում նախորդ շրջանի իրանական ինքնագիտակցության փոխարեն աստիճանաբար ամրապնդվում էր թյուրքական ինքնընկալումը, որն արդեն ցուցադրում էր պանթյուրքիզմի հանգեյու իրողությունը:

ФОРМИРОВАНИЕ ТЮРКОЯЗЫЧНОЙ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЫ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX В.**ГАЛСТЯН В. А.**

Резюме

В начале XIX в. завоевав полунезависимые иранские ханства Восточного Закавказья, Российская империя стала проводить политику устранения персидского влияния, направленную в первую очередь на вытеснение персидского языка, который на протяжении столетий являлся официальным и литературным языком в этом регионе. Лучшим средством для достижения названной цели было создание тюркоязычной литературы. Во второй половине XIX в. Мирза Фатали Ахундов написал свои первые драмы на тюркском языке, заложив своими произведениями основу литературного тюркского языка (впоследствии – азербайджанско-го). Его начинание успешно продолжил Гасан-бек Зардаби, издававший газету “Экинчи” и ставший основателем тюркоязычной прессы. Вслед за “Экинчи” стали издаваться тюркские газеты “Зия” и “Кешкюль”, ставшие рупором формирующейся тюркоязычной интеллигенции.

THE FORMATION OF THE TURKIC LITERAL CULTURE IN EASTERN TRANSCAUCASIA IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY**V. GALSTYAN**

Abstract

After the invasion of semi-independent Iranian khanates of the Eastern Transcaucasia the Russian Empire started politics of eliminating the Persian influence. First of all Russian authorities wanted to exclude Persian language, which was the formal and literal language in this region for many centuries. The newly emerging Turkic literature was a good tool for that goal. In the second half of the 19th century under the patronage of the Russian Empire Mirza Fathali Akhundov wrote his first dramas in Turkic language of Transcaucasia and with those founded the Turkic literal language. This movement was successfully continued by Hasan bey Zardabi who founded the Turkic press by printing the first Turkic newspaper Ekinchi. After short period under the influence of Turkic literature the Turkic speaking intellectual class was formed. After Ekinchi the other newspapers in Turkic language such as Ziya and Keshkul became the discussion and self-expression arena for Turkic speaking elite.

ՍԱՐԻՍՍԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՄԱՍԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ (Մ.թ.ա. XVI-XII ԴԴ.)

ՂԱԶԱՐՅԱՆ Ռ. Պ.

Խեթական պետության արևելքում գտնվող կարևորագույն կենտրոններից էր Սարիսսա (Սարեսսա)¹ քաղաքը, որի մասին տեղեկություններ չկան «կապադովկյան» աղբյուրներում (մ.թ.ա. XX-XVIII դդ.)², բազմիցս հիշատակվում է իսթական աղբյուրներում³:

Քաղաքի տեղադրության վերաբերյալ հնչել են տարբեր կարծիքներ, սակայն այսօր իսթագետները հակված են այն տեղորոշել ներկայիս Քուշաքըր հնավայրում, որը գտնվում է պատմական Փոքր Հայքի տարածքում, Անտիտավրոսի լեռների մերձակայքում, ներկայիս Սեբաստիայի նահանգում (Սեբաստիա քաղաքից մոտ 60 կմ հարավ), մոտ 1650 մ բարձրության վրա՝

¹ Կազմված է sara (բարձր, վեր) արմատից և -issa տեղանվանակերտ վերջածանցից: Հավանաբար, նույն արմատից են բաղկացած նաև իսթական աղբյուրներում հիշատակված Սարիյանա, Սարիյանտա, Սարիպիյա տեղանունները (այս քաղաքների տեղադրության վերաբերյալ տե՛ս **Del Monte G., Tischler J.** Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978 (այսուհետև՝ **RGTC, VI**), S. 350-351: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Սարիսսայի մոտից էր սկիզբ առնում Սարոս գետը (Անտիտավրոսի լեռներում), որի անվանումը կապվում է Սարիսսա տեղանվան հետ [տե՛ս **Մարտիրոսյան Ն.**, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1961, 3-4, էջ 103)]:

² Մ.թ.ա. XX-XVIII դդ. ընթացքում Աշշուրից դեպի Քանես (գտնվում էր հետագայի Կապադովկիայի տարածքում) և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուր էր իրականացվում: Աշշուրն իր գաղութները հիմնել էր առևտրական մայրուղիների հանգուցակետերում՝ հումքի աղբյուրներին առավել մոտ, հատկապես Փոքր Ասիայի արևելյան շրջաններում. այստեղ գտնվող Քանես քաղաքից հայտնաբերվել են հազարավոր սեպագիր աղյուսակներ, որոնք անգնահատելի աղբյուր են այդ ժամանակաշրջանի տարածաշրջանի պատմության համար [տե՛ս **Lewy H.** Notes on the Political Organization of Asia Minor at the Time of the Old Assyrian Texts, *Orientalia*, 1964, vol. 33, f. 2-3, pp. 181-198; **Янковская Н. Б.** Торговая община Каниша и свободный рынок (Малая Азия XIX в. до н.э.), *Древняя Анатолия, М.*, 1985, с. 228-242]:

³ Տե՛ս **RGTC, VI**, S. 351-352:

շրջապատված լեռներով⁴: Հնավայրի արևմտյան մասի մի շինությունից հայտնաբերվել է սեպագիր արձանագրությունների դիվան (մեծությամբ չորրորդ խեթական դիվանն է, որը, հավանաբար, կազմվել է Թուրխալիյա III-ի կամ Սուպպիլուլիումա I-ի ժամանակաշրջանում (մ.թ.ա. XIV դ. II կես)): Կավե աղյուսակները հիմնականում պարունակում են ծիսական և գուշակային բնույթի տեղեկություններ: Հնավայրի հարավարևելյան մասում գտնվել է բավական ընդարձակ մի շինություն, որը, թերևս, Սարիսսայի Ամպրոպի աստծո տաճարն էր: Տեղանքի հյուսիսային մասում պեղվել է մեկ այլ տաճարային շինություն⁵, իսկ հարավային մասում՝ կիսազետնափոր մի ամբար, որտեղ, ըստ մասնագետների, հնարավոր էր պահել մոտ 700 տոննա հացահատիկ⁶: Նմանատիպ ամբարներ հայտնաբերվել են նաև խեթական այլ քաղաքներում⁷: Քաղաքի հյուսիսարևմտյան դարպասների մոտ, պարիսպներից դուրս, խոշոր արհեստական ջրավազան է եղել, որտեղ ամբարել են հարակից լեռներից հոսող աղբյուրների ջուրը՝ քաղաքի կարիքները հոգալու, ինչպես նաև հարակից ցանքատարածությունները ոռոգելու համար⁸: Նմանատիպ ջրավազաններ են եղել նաև քաղաքի հարավարևմտյան և հարավարևելյան մասերում⁹: Կավե խողովակներով այդտեղից ջուրը մատակարարվել է քաղաքին: Այդ ջրամբարները Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի տարածքի ամենահին նմանատիպ կառույցներն են (թվագրվում են մ.թ.ա XVI դարով): Քաղաքից մոտ 2,5 կմ հարավ՝ լեռներում հայտնաբերվել է նաև մի սրբավայր՝ ջրավազանով¹⁰: Խեթական տեքստերից

⁴ Խեթական աղբյուրներում տեղեկություն կա նաև Սարիսսայի լեռների մասին (տե՛ս *RGTC, VI, S. 352*):

⁵ **Müller-Karpe A.** *Kuşaklı-Sarissa: A Hittite Town in the "Upper Land" (Recent Developments in Hittite Archaeology and History, Winona Lake, 2002, pp. 145-155)*; **Mielke D. P.** *The province center: Kuşaklı-Şarišša. Key sites of the Hittite Empire. The Oxford Handbook of Ancient Anatolia, Oxford, 2011, pp. 1043-1044*; **Wilhelm G.** *Combining Textual and Archaeological Evidence of Urban Structures: Hattusa and Sarissa, Mesopotamia, XLVI, Firenze, 2011, pp. 105-106.*

⁶ **Mielke D. P.** *Die Grabungen an der Südspitze. Untersuchungen in Kuşaklı 2000, Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft (այսուհետև՝ MDOG), 133, 2001, S. 237-241.*

⁷ **Müller-Karpe A.** *The Rise and Fall of the Hittite Empire in the Light of Dendroarchaeological Research, Tree-Rings, Kings, and Old World (Archaeology and Environment: Papers Presented in Honor of Peter Ian Kuniholm, Oxford, 2009, p. 5).*

⁸ **Hüser A.** *Hethitische Anlagen zur Wasserversorgung und Entsorgung. Kuşaklı-Sarissa 3. Rahden: Leidorf, 2007.*

⁹ **Müller-Karpe A.** *The Rise and Fall of the Hittite Empire...*, p. 4.

¹⁰ **Müller-Karpe A.** *Untersuchungen in Kuşaklı 1998, MDOG, 1999, 131, S. 79-91.*

մեկում նշվել է Սարիսսայի՝ լեռներում գտնվող huwaši-արքավայրի մասին, որն ունեցել է կարևոր նշանակություն, քանի որ Խաթթիի արքան Խաթթուսայից ուղևորվել է դեպի այդ վայրը՝ այնտեղ գարնանային տոնակատարությանը մասնակցելու համար¹¹: Քաղաքում եղել է արքայական պալատ (É.LUGAL), ինչպես նաև խեթական արձանագրություններից մեկում հիշատակություն կա «Սարիսսայում Խաթթուսա քաղաքի տան» մասին (É^{URU}Hatti^{URU}Sarissai), որը նշանակում է, թե Սարիսսայում գտնվել է Խաթթիի մեծ արքայի պալատը¹²: Գտնվել են նաև քաղաքային պարիսպների հետքեր, ինչպես նաև քաղաքի չորս դարպասները: Նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ պարիսպներից դուրս նույնպես թաղամասեր են եղել:



Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի երկրները մ.թ.ա. XIV-XIII դդ.

Պեղումների ընթացքում հնավայրում հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ կնիքներ: Հետաքրքիր է հիշատակել հատկապես դրանցից մեկը, որի կենտրոնում գաղափարագիր լուվիերենով գրված է Մազիտիմա (Միզիտիմա) արքայի անունը¹³: Առայժմ այս անվան եզակի հիշատակությունը

¹¹ Wilhelm G. Keilschrifttexte aus Gebäude A. Kuşaklı-Sarissa 1. Rahden: Leidorf, 1997.

¹² Mielke D. P. Hittite Cities: Looking for a Concept, in *Insights into Hittite History and Archaeology*, Leuven-Paris-Walpole, 2011, pp. 167.

¹³ Müller-Karpe A. Kuşaklı-Sarissa: A Hittite town in the “Upper Land”, pp. 151-152.

հնարավորություն չի տալիս պարզել, թե ով էր այդ անձը: Հավանաբար, նա կառավարել է Սարիսսայում՝ որպես Խաթթիի մեծ արքայի վասալ:

Խեթական ոճի կավանտթներից բացի, հնավայրում գտնվել է նաև միկենյան խեցեղեն, որը խոսում փաստ է այն մասին, որ քաղաքն առևտրական կապեր է ունեցել նաև հեռավոր երկրների հետ¹⁴:

Կարող ենք նշել, որ Սարիսսան միջին մեծության խեթական քաղաք էր (հավանաբար, ունեցել է մոտ 5000 բնակիչ¹⁵), զբաղեցրել է մոտ 18 հա տարածք: Առկա հնագիտական նյութը հնարավորություն է տալիս ենթադրել, որ Սարիսսան բնակեցված է եղել առնվազն խեթական Հին թագավորության ժամանակներից (սկսած մ.թ.ա. XVI դարից): Այն մասնակի ավերվել է մ.թ.ա. XIV դ. առաջին կեսին (գուցե Առնուվանդա I-ի օրոք), վերականգնվել է կա՛մ Թուդիսալիյա III-ի, կա՛մ Սուպիլիուլիումա I-ի օրոք: Սարիսսայի հնավայրում նոր ավերման հետքերը վերաբերում են Խեթական տերության անկման ժամանակաշրջանին: Քաղաքն աստիճանաբար լքվել է արդեն մ.թ.ա. XIII դ. վերջին: Սարիսսայի միջնաբերդի որոշ կառույցներ այրվել են, որը խոսում է այն մասին, որ քաղաքը հարձակման է ենթարկվել և գրավվել: Մ.թ.ա. VII-VI դդ. քաղաքի տարածքի մի մասը նորից է բնակեցվել: Այնուհետև բնակավայրը լքվել է վերջնականապես:

Սարիսսան վարչական առումով մտել է խեթական Վերին երկրի կազմի մեջ¹⁶, առավել մոտ էր Կուսսարին և Սամուխային: Այն նաև Խաթթիի հոգևոր կենտրոններից մեկն էր: Խեթաեգիպտական պայմանագրի (մ.թ.ա. 1258 թ.) «աստվածների վկայության» հատվածի եգիպտական տարբերակում խեթական աստվածների ցանկում նշվել է Սարիսսա քաղաքի Սեթ աստվածը (Սարիսսայի Ամպրոպի աստվածը)¹⁷: Սարիսսայի Ամպրոպի աստծո մասին տեղեկանում ենք նաև խեթական այլ պայմանագրերից: Դրանցում տեղ

¹⁴ Mielke D. P. Die Ausgrabung des Nordwest-Tores. Untersuchungen in Kuşaklı 2003, MDOG, 136, 2004, S. 155, B. 13.

¹⁵ Mielke D. P. Hittite Cities: Looking for a Concept, p. 184.

¹⁶ Խեթական Վերին երկիրը գտնվել է Խեթական տերության հյուսիսարևելյան հատվածում: Առավել մանրամասն տե՛ս Ghazaryan R. The North-Western Region (the Upper Land) of the Armenian Highland within the Hittite State, Fundamental Armenology, 2015, 2, pp. 8-18. Siegelovn J. Der Regionalpalast in der Verwaltung des hethitischen Staates (Altorientalische Forschungen, 2001, Volume 28, Issue 2, S. 193-208); Wilhelm G. Keilschrifttexte aus Gebude A. (Kuşaklı - Sarissa I/I), Rahden, 1997.

¹⁷ Singer I. Hittite Gods in Egyptian Attire: A Case Study in Cultural Transmission, Literature as Politics, Politics as Literature. Essays on the Ancient Near East in Honor of Peter Machinist, Winona Lake, Indiana, 2013, p. 437.

գտած աստվածների ցանկում Սարիսսայի Ամպրոպի աստվածը սովորաբար նշվում էր Սամուխայի և Խուրմայի Ամպրոպի աստվածներից հետո¹⁸, հավանաբար, այդ քաղաքները մոտ են եղել իրար, այդ պատճառով էլ ցանկում նշվել են միմյանցից հետո: Այդտեղ հիշատակվել են նաև Սարիսսայի «արական ու իգական աստվածները»¹⁹:

Քաղաքի մասին հիշատակություն կա նաև խեթական գուշակային և ծիսական որոշ տեքստերում: Ծիսական մի տեքստում (KuT 6) նշված է «Սարիսսա քաղաքի մարդը»՝ որպես ծեսի մասնակից կողմ²⁰, մեկ այլ՝ գուշակային տեքստում (KuT 1)^a նաև Ազգի երկիրը²¹: Նշված են արքան (հավանաբար, Խաթթիի) և «Ազգի երկրի մարդը»²²: Թերևս, այդ արարողություններին մասնակցել է նաև Ազգիից ժամանած մի բարձրաստիճան հյուր:

Խեթական պետության հյուսիսարևելյան երկրամասի՝ Վերին երկրի քաղաքներից Սարիսսան բավական մոտ էր Հայկական լեոնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի (մ.թ.ա. XVI-XII դդ.) պետություններին՝ Հայասային, Իսուվային, և բնական է, որ տնտեսական կապեր է ունեցել այդ պետությունների քաղաքների հետ: Սարիսսան մոտ էր նաև Խաթթիի արևելյան մասում գտնվող քաղաքներին՝ Սամուխային և Կուսսարին: Այն մինչ օրս հայտնաբերված խեթական քաղաքներից լավագույնս պահպանվածներից է, որը բազմաթիվ հետաքրքիր նյութեր է տրամադրել խեթագետներին: Այն նաև հայտնաբերված խեթական քաղաքներից առավել բարձրադիրներից մեկն էր և կարևոր տնտեսական ու ռազմական նշանակություն ուներ: Որպես հոգևոր նշանավոր կենտրոն՝ քաղաքում է գտնվել նաև խեթական կարևորագույն աստվածներից մեկի՝ Սարիսսայի Ամպրոպի աստծո պաշտամունքի վայրը, որտեղ կրոնական արարողությունների ժամանակ ներկա են եղել նաև խեթական արքաները:

¹⁸ Beckman G. *Hittite diplomatic texts*, Atlanta, 1996, pp. 24, 47, 53, 58, 63, 87.

¹⁹ Singer I. *Muwatalli's Prayer to the Assembly of Gods through the Storm-God of Lightning (CTH 381)*, Atlanta, 1996, p. 13.

²⁰ Wilhelm G. *Keilschrifttexte aus Gebäude A. (Kuşaklı - Sarissa I/I)*, S. 18-19.

²¹ Հայկական լեոնաշխարհի մ.թ.ա. XIV-XIII դդ. կարևորագույն պետություններից մեկը Ազգին էր, որը խեթական աղբյուրներում նշվել է նաև Հայասսա անվամբ (տե՛ս Ղազարյան Ռ., Հայասսա. քաղաքական և մշակութային պատմությունը, Ե., 2009):

²² Նույն տեղում, էջ 25-27:

ՆԱՍԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

ԱՍԱՏՐՅԱՆ Է. Տ.

Եզիպտոսը մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանի ամենահանգուցային երկրներից մեկն է, որը մեծ կշիռ ու հեղինակություն է ունեցել արաբական աշխարհում նաև պատմության նոր և նորագույն շրջանում: Եզիպտոսում տեղի ունեցած սոցիալական, քաղաքական և մշակութային իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել արաբական իսլամական երկրներում տեղի ունեցած գործընթացների վրա: Եզիպտոսն առաջիններից էր, որտեղ XIX դարի սկզբներին ձևավորվեց արաբական երկրների նոր շրջանի պատմության ամենանշանակալից իրադարձություններից մեկը՝ արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան: XIX դարի վերջերից մինչև XX դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում Եզիպտոսն արաբական աշխարհում սկզբնավորված հակազաղութային և հակասիոնիստական շարժումների ամենակարևոր կենտրոններից մեկն էր, որտեղ 1952 թ. հուլիսին «Ազատ սպաների» իրականացրած հեղափոխության շնորհիվ տապալվեց միապետությունը: 1953 թ. հունիսի 18-ին Եզիպտոսը հռչակվեց անկախ հանրապետություն:

1956-1970 թթ. Եզիպտոսի նախագահը «Ազատ սպաների» ամենաէական դեմքերից մեկն էր՝ զինվորական գործիչ Գամալ Աբդել Նասերը, որի անվան հետ են կապված Եզիպտոսի պատմությանն առնչվող մի շարք հանգուցային իրադարձություններ: Արտաքին դաշտում արժանահիշատակ են Եզիպտոսի մերժողական դիրքորոշումը Բաղդադի պակտին, 1958 թ. Սուեզի ճգնաժամը և «Եռյակ ազրեսիան», Եզիպտոսի ու Միջին Արևելքի միավորմամբ Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը (1958-1961 թթ.), Եզիպտոսի արտաքին քաղաքականության կողմնորոշումը դեպի ԽՍՀՄ և առճակատումը Արևմուտքի ու արևմտյան կողմնորոշում ունեցող արաբական պետությունների հետ, շարունակական հակազդեցությունը Բուրայելին և այլն: Ներքին քաղաքականության ոլորտում հիշատակման արժանի են սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ ագրարային բարեփոխումները, որոնք ուղեկցվեցին օտար, իսկ հետագայում՝ եզիպտական խոշոր կապիտալի ազգայնացմամբ, արաբական սոցիալիզմի եզիպտական ուղղության ձևավորումը, քաղաքական ազատությունների սահմանափակումները, նաև հետևողական պայքարը կրոնաքաղաքական շարժումների, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» դեմ:

Հատկանշական է, որ Նասերը մեծ նշանակություն էր տալիս արաբական միասնության և համերաշխության, նաև սոցիալական արդարության գաղափարներին: Նա կայսերապաշտության, գաղութատիրության և սիոնիզմի դեմ կոշտ պայքարի կողմնակից էր: Նրա առաջ քաշած գաղափարները, որոնք իր ժամանակին լայն ժողովրդականություն էին վայելում, հայտնի են նասերականություն անվամբ: Նասերականությունը տարողունակ հասկացություն է, քանի որ առնչվում է սոցիալական, հասարակական և քաղաքական ոլորտներին: Այլ խոսքով՝ նասերականությունը ոչ միայն Եգիպտոսի, այլև արաբական ազգի միասնական և արժանապատիվ ապրելու Նասերի բանաձևն էր:

Գամալ Աբդել Նասերը, գալով իշխանության, փորձեց գործնականում իրականացնել իր առաջ քաշած թեզերը: Օտար ընկերությունների, առաջին հերթին Սուեզի ջրանցքի անգլո-ֆրանսիական կազմակերպության ազգայնացմամբ Նասերն ապացուցեց, որ մինչև վերջ պայքարելու է գաղութատիրության դեմ: Մյուս կողմից, հասարակության բարեկեցությանը և համահավասարությանը միտված սոցիալ-տնտեսական բարեփոխումները նպատակ ունեին ստեղծել հզոր ու մրցունակ եգիպտական պետություն, որը կարող էր ձգտել տարածաշրջանային գերակայության:

1961-1967 թթ. Եգիպտոսի զարգացման երկրորդ փուլը միտված էր սոցիալիստական հասարակության կառուցմանը¹: Նասերի սոցիալիզմը, ի դեպ, աղերսներ չունեց կոմունիզմի հետ, որը դիտարկվում էր որպես արաբների ավանդույթներին հակասող գաղափարախոսություն: Սոցիալիզմը գաղափարական առումով միանգամայն նոր իրողություն էր Եգիպտոսի համար: Պատահական չէ, որ Նասերն իր ելույթներում փորձում էր հիմնավորել սոցիալիզմի ներդրման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն չի կարող հակասել իսլամին, քանի որ առաջ է քաշում սոցիալական արդարության գաղափարներ, ինչը անում է նաև իսլամը²:

Առանձնապես ուշագրավ են արաբական միասնության, համերաշխության և առհասարակ պանարաբիզմի վերաբերյալ Նասերի գաղափարները, որոնց հիմքում «արաբական ազգ» և «արաբական հայրենիք» հասկացություններն են: Գաղափարներ, որոնց մասին արաբները պատկերացում չունեին ընդհուպ XIX դարը, եթե նկատի ունենանք, որ օսմանյան չորսդարյա տիրապետության շրջանում

¹ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., 2006, էջ 278-283:

² Sté u Anouar Abdel-Malek, *Nasserism and Socialism*, [http://www.socialistregister.com/index.php/srv/article-viewFile/5927/2823](http://www.socialistregister.com/index.php/srv/article/viewFile/5927/2823)

արաբական ինքնությունը մթազնված էր³: Արաբական ազգայնականությունը սկիզբ առավ միայն XIX-XX դարերում եվրոպական ազգայնականության անմիջական ազդեցությամբ և կապված էր նաև արաբական ազգային մշակութային զարթոնքի՝ Նահդայի հետ, որը նպաստեց արաբական ինքնության վերելքին⁴: Հետագա տարիներին՝ մինչև նասերականության սկիզբը, արաբական ազգայնական տեսություններն աչքի են ընկել գաղափարախոսական տարաբնույթ շեշտադրումներով ու աշխարհագրական լայն ընդգրկումներով: Նրանց գործունեությունը սկզբնական շրջանում կապված է եղել Օսմանյան կայսրության կազմում արաբների ազգային իրավունքների առաջադեման հետ⁵:

Կայսրության փլուզումից և եվրոպական գաղութատիրության հաստատումից մինչև Երկրորդ աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը արաբական ազգայնական շարժումները որակական առումով նոր փուլ թևակոխեցին: Դրանցից ամենահանգուցայինը 1947 թ. ստեղծված Բասան էր՝ Արաբական սոցիալիստական վերա-ծննդի կուսակցությունը, որը տարիներ անց իշխանության եկավ նախ Սիրիայում՝ 1963 թ., ապա Իրաքում՝ 1968 թ.: Արդեն XX դարի երեսնականներին սկսեց առանձնանալ արաբական ազգային՝ տեղային հայրենասիրությունը (*local patriotism, regionalism*), որի կողմնակիցները կարծում էին, որ յուրաքանչյուր արաբական երկիր պետք է զարգանա ինքնիշխան կերպով՝ ըստ իր առանձնահատկությունների և ավանդույթների⁶: Արաբ ազգայնական գործիչների շրջանում աստիճանաբար սկսվում էր մրցակցություն, նաև պայքար իշխանության գալու և առաջատար դիրքեր գրավելու հարցում:

³ Միայն արաբական զարթոնքի՝ Նահդայի գործիչների քարոզներում է, որ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ արաբներին միավորում է ընդհանուր պատմությունը, փառահեղ անցյալը, լեզուն, մշակույթը և կրոնը: Նշենք, որ միջնադարում ևս արաբները չեն ունեցել շեշտված արաբական ինքնություն, քանի որ ցեղային ինքնությանն անմիջապես փոխարինելու եկան մուսուլմանական ինքնությունը և պատկանելությունը Ումմայյին, իսկ XVI դարից արաբները հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում՝ հետքայլ կատարելով իրենց քաղաքակրթական ձեռքբերումներից:

⁴ Մանրամասն տե՛ս **Նաջարյան Ե.**, *Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան, Ե., 1988*:

⁵ Տե՛ս **Գասպարյան Ա.**, *Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. Համագործակցությունից առճակատում, Ե., 2016*:

⁶ Ռեզիտնայիզմի ակնառու օրինակ է լիբանանցի հասարակական-քաղաքական գործիչ Անտուն Մաադեի Մեծ Սիրիայի նախագիծը: 1932 թ. Ա. Մաադեն հիմնում է Սիրիական սոցիալ-ազգայնական կուսակցությունը, որի անդամներն ու համախոհները հայտնի էին «դոմի սուրիյուն» (սիրիական ազգայնականներ) անունով: Մանրամասն տե՛ս **Labib Zuwiyya Yamak**. *The Syrian Social Nationalist Party: An Ideological Analysis*. Center for Middle Eastern Studies of Harvard University, 1966.

Սերտորեն կապված լինելով արաբական ազգի միասնության ու համերաշխության գաղափարների հետ՝ նասերականությունը կարելի է դիտարկել թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի ընդհանուր խորաստեղծների մեջ: Բացի այդ, Նասերի օրակարգում հանգուցային նշանակություն էր տրվում արաբ-իսրայելական հակամարտությանն ու պաղեստինյան հարցին: Եգիպտոսը Նասերի իշխանության գալուց հետո առանձնանում էր որպես Բարայելիին հակազդող ամենազործուն արաբական երկրներից մեկը⁷:

Նասերականությանը նոր լիցքեր հաղորդեց նաև Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը՝ 1958 թ. Եգիպտոսի և Սիրիայի միավորումը, որը Եգիպտոսի նախաձեռնությունն էր⁸: Ուշագրավ է, որ Եգիպտոսը Նասերի օրոք նախապատվությունը տվեց երկրի արաբական ինքնությանը՝ ստորադասելով աֆրիկյան և իսլամական բաղկացուցիչները, թեև Նասերը համարվում է նաև Չմիացող երկրների շարժման առաջատար գործիչներից ու հիմնադիրներից մեկը⁹: Նասերի պատկերացմամբ՝ եգիպտացիներին արաբական աշխարհի հետ կապում է պատմական ընդհանրությունը, ընդհանուր դավանանքը, շահերը, մյուս կողմից՝ ընդհանուր աղետները: Նրանց առջև ծառայած են նույնանման խնդիրներ, նույնն է նրանց հեռանկարը, անգամ թշնամին՝ թեպետ տարբեր կերպարներով, ի վերջո՝ արաբական երկրները կազմում են աշխարհագրական միասնություն¹⁰:

Արաբական ժողովուրդների ներկային և հեռանկարին անդրադառնալիս Նասերը կարևորում էր գաղութատիրության վերացումը, քանի որ այն մշտական սպառնալիք էր եգիպտական և արաբական ժողովուրդների նվաճումներին: Կայսերապաշտության դեմ պայքարը կանխորոշեց Նասերի մարտավարությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Եգիպտոսի հարաբերությունները բավական լարված էին թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Արևմուտքի հետ, որոնք փորձում էին տարածաշրջանի իրենց դաշնակիցների, մասնավորապես աստվածապետություն

⁷ Նշենք, որ Եգիպտոսն արաբ-իսրայելական հակամարտության գործուն անդամ էր, մասնակցել էր 1948-1949 թթ. արաբ-իսրայելական առաջին պատերազմին, որից հետո Եգիպտոսին էր անցել Պաղեստինի Գազայի շրջանը: Եգիպտոսի դեմ «Եռյակ ազդեցիկ» շատ դեպքերում համարվում է արաբ-իսրայելական երկրորդ պատերազմը, երբ Անգլիան և Ֆրանսիան Բարայելիին վերապահեցին առաջինը Եգիպտոսին հարվածելու «պատիվը»:

⁸ Տե՛ս **Elie Podeh**. *The Decline of Arab Unity: The Rise and Fall of the United Arab Republic*, Sussex Academic Press, 1999.

⁹ *Non-Aligned Movement and Egypt: The Nasser Era*, http://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/17016/8/08_chapter%203.pdf

¹⁰ **Պամալ Աբդել Նասեր**, *Հեղափոխության փիլիսոփայությունը*, Կահիրե, 1955, էջ 91-110 (արաբերեն):

համարվող Սաուդյան Արաբիայի միջոցով աշխարհիկ արաբական ազգայնականությանը հակազդել իսլամական համերաշխության և միասնության գաղափարներով, որին Նասերը դեմ էր արտահայտվում¹¹:

Նա կոչ էր անում արաբներին միասնության թե՛ գործողությունները համա-կարգելու, թե՛ քաղաքական ու տնտեսական ինտեգրման առումով, որը պետք է նպաստեր առաջընթացին ու զարգացմանը, արաբների մեկ բռունցք դառնալուն: 1958 թ. իր ելույթներից մեկում արաբների համար ամենակարևորը Նասերը համարում է իջմասն՝ համաձայնությունը¹²: Կարելի է ասել, որ 1950-ականների վերջերին պանարաբիզմը արաբական աշխարհի ամենալայն հեղինակություն վայելող գաղափարախոսությունն էր, որի անվերապահ առաջնորդը Գամալ Աբդել Նասերն էր¹³:

Պատմական ընթացքը, սակայն, ցույց տվեց, որ արաբական երկրների միջև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափություններն ու բնեռացումը անհնար էր հաղթահարել: Արաբական միասնությունը գործնական դաշտում չկարողացավ դիմանալ պատմության քննությանը և բազմաթիվ ձախողումներ ունենալով՝ ապացուցեց իր անկենսունակությունը: Ասվածի ապացույցներից էր նաև 1961 թ. Արաբական Միացյալ Հանրապետության փլուզումը: Մեկ տարի անց Նասերն ակտիվորեն ներգրավվեց Եմենի քաղաքացիական պատերազմում (1962-1970 թթ.)՝ հակամարտության մեջ մտնելով Սաուդյան Արաբիայի հետ, որը պաշտպանում էր թագավորական ուժերին¹⁴:

Նասերականությանն ուղղված լրջագույն հարված էր նաև 1967 թ. Բարայելի հետ պատերազմում Եգիպտոսի և արաբների պարտությունը՝ ոչ միայն հողային, այլև բարոյական կորուստները¹⁵: Պատերազմն ի ցույց դրեց Եգիպտոսի խոցելի կողմերը: Բացի այդ, իշխանության վերջին տարիներին Նասերը ավելի ու ավելի էր կախվածության մեջ ընկնում Ծոցի նավթարդյունահանող արաբական երկրների ֆինանսական հատկացումներից: 1969 թ. նա նույնիսկ ընդառաջ գնաց սաուդյան Ֆահդ թագավորի առաջարկությանը, որպեսզի Եգիպտոսը մասնակցի Իսլամական

¹¹ Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Ե., 2003, էջ 32:

¹² Левин З. Развитие арабской общественной мысли, М., 1984, с. 46.

¹³ Dawisha, Aaded, *Arab Nationalism in the Twentieth Century: From Triumph to Despair*, Princeton, 2009, p. 184.

¹⁴ Jesse Feris. *Nasser's Gamble: How Intervention in Yemen Caused the Six-Day War and the Decline of Egyptian Power*, Princeton, 2013.

¹⁵ Եգիպտոսը պատերազմի հետևանքով կորցրեց Մինայը, Բարայելին հաջողվեց գրավել նաև Գազայի շրջանը, Արևմտյան ափը, Արևելյան Երուսաղեմը, Գոլանի բարձունքները:

կոնֆերանս կազմակերպության հիմնադիր համագումարին, որը տեղի ունեցավ Ռաբաթում իսլամական համերաշխության շարժման շրջանակներում¹⁶: Պատահական չէ, որ Նասերի հրամանով Կահիրեում կասեցվեց նաև արաբական ազգայնական արմատական ուղղվածությամբ «Արաբների ձայնը» ռադիոհաղորդումների հեռարձակումը¹⁷:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ նասերականությունը սոցիալ-քաղաքական հայեցակարգ էր՝ հիմնված Գամալ Աբդել Նասերի գաղափարների ու հայեցակարգային դրույթների վրա: Այն առաջ էր քաշում թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի աշխարհիկ գաղափարներ, կողմնակից էր սոցիալիզմին և հանրապետական մոդելին, աչքի էր ընկնում շեշտված հակակայսերապաշտական և հակագաղութատիրական ձախակողմյան ուղղվածությամբ: Ի տարբերություն բասսիզմի, որն ուներ մի քանի տեսարաններ ու հստակ հայեցակարգ, նասերականությունը համակարգված գաղափարախոսություն չէր, այլ ներկայացնում էր Եգիպտոսի արտաքին ու ներքին քաղաքական դաշտում ձևավորված մի շարք խնդիրների ու մարտահրավերների այն պատասխանները, որոնք փորձում էր գտնել Նասերը նորանկախ Եգիպտոսը կառավարելու համար: Հաճախ Նասերն ինքն էլ չէր տիրապետում արդյունավետ կառավարման մեխանիզմներին, որը հանգեցնում էր սխալների: Ամեն պարագայում, նա փորձում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների միջոցով համախմբել ազգը ընդհանուր գաղափարների շուրջ: Այդ իմաստով նասերականությունը տարբերվում էր Բասսից, որը ձևավորվել ու զարգացել էր նախքան իշխանության գալը՝ որպես կուսակցական կառույց: 1962 թ. Նասերը հիմնեց Արաբական սոցիալիստական միություն (ԱՄՄ) անունով մի կուսակցություն, որը դարձավ նրա քաղաքական հենարանը, երկրի միակ քաղաքական ուժը: Սակայն նասերականությունը տարածվեց մի շարք արաբական երկրներում (Միթիա, Իրաք, Հորդանան, Լիբանան, Սաուդյան Արաբիա, Հյուսիսային Եմեն, Հարավային Եմեն)՝ վերաճելով կուսակցական կառույցի: Արդեն Նասերի մահից մի քանի տարի անց արաբական երկրներում գործող նասերական միությունները սկսեցին աստիճանաբար վերանալ: Բացառություն էր 1950-ականների վերջերին Լիբանանում հիմնված ձախակողմյան անկախ նասերականների շարժումը, որն առավել հայտնի է Մուրաբիտուն անունով¹⁸: Միայն 1992 թ.՝ Եգիպտոսում Նասերի մահից տասնամյակներ անց,

¹⁶ Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 38-39:

¹⁷ Adeed Dawisha. *Requiem for Arab Nationalism*, *Middle East Quarterly*, Winter 2003, pp. 25-41.

¹⁸ Lebanon-Al-Mourabitoun, <https://www.justice.gov/sites/default/files/pages/attachments/2015/09/30/lbn36334.pdf>.

հիմնվեց ԱՄՄ-ի ժառանգորդ Արաբական դեմոկրատական նասերական կուսակցությունը, որն աչքի չընկնող քաղաքական ուժ է¹⁹:

Հատկանշական է, որ Նասերին հաջորդած Անվար Մադաթը, գալով իշխանության, միանգամայն փոխեց Եգիպտոսի զարգացման ընթացքն ու արտաքին քաղաքական ուղենիշները²⁰: Նասերականությունն անցավ պատմության գիրկը:

Ամեն պարագայում, չնայած որոշ ձախողումների, Նասերի օրոք հատկապես գաղութատիրության և արաբ-իսրայելական համընդհանուր պայքարի մեջ Եգիպտոսն իր վճռորոշ ներդրումն ունեցավ, որի համար Նասերը թանկ գին վճարեց՝ մշտապես լինելով Արևմուտքի ճնշումների տակ: Ոչ պակաս կարևոր էր Նասերի դերն արաբական ազգայնականության, արաբական միասնության և ընդհանրապես պանարաբիզմի գաղափարական դաշտի ձևավորման հարցում: Ըստ այդմ՝ Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված արաբական անկախ պետություններն իրենց սահմանադրություններում սկսեցին ամրագրել այն դրույթը, որ արաբական երկրները պատկանում են միասնական արաբական հայրենիքին, իսկ նրանց բնակչությունը արաբական ազգի մի մասն է՝ անկախ քաղաքական, տնտեսական, աշխարհագրական, սոցիալական և դավանական տարանջատվածությունից²¹: Փաստորեն, XX դարում հնարավոր եղավ սահմանել արաբական ազգ հասկացողությունն ու նրա տեսլականը, որն աստիճանաբար սկսեց հարստանալ նորանոր գաղափարական լրացումներով:

Նասերի մահից հետո արաբական աշխարհում աստիճանաբար անկում ապրեց նաև աշխարհիկության այն առաջադեմ մթնոլորտը, որին կողմ էին Նասերն ու նրա բազում համախոհներ՝ իր տեղը զիջելով զարգացման կրոնական ուղուն և արաբական հասարակությունների հարաձուլ կրոնականացմանը: Ընդհանրապես, արաբական երկրներում աշխարհիկության նահանջն ըստ ամենայնի կապված է արաբական հասարակություններում խոր արմատներ ունեցող պահպանողական ու կրոնական ավանդույթների, ցեղային ու կլանային համակարգի տարրերի, ինչպես նաև կարծրատիպային ու կրոնամոլ աշխարհընկալումների հետ, որոնք փաստացիորեն խոչընդոտում են արդիականացմանը:

¹⁹ A Partial Guide to the Egyptian Political Parties, <https://connectedincairo.com/2011/11/15/a-partial-guide-to-the-egyptian-political-parties/>.

²⁰ Փաշայան Ա., Եգիպտոսը արդի պատմության զիգագներում, <http://middleorient.com/?p=4465>

²¹ The Arab world: past, present, and future by Izzeddin, Nejla Mustapha, Chicago, H. Regnery Co., 1953, p. 31.

НАССЕРИЗМ: ТЕОРИЯ И ФУНКЦИЯ**АСАТРЯН Э. Т.**

Резюме

Доктрина была основана на социально-политических воззрениях и идеях президента Египта Гамаль Абдель Нассера (1956-1970гг.). В отличие от баасизма, нассеризм не имел одного или нескольких идеологов, напротив, он возник как комплекс практических мер, нацеленных на построение Нассером сильного египетского государства, завоевание политической и экономической независимости. Стартовав как панарабский национализм, нассеризм постепенно эволюционировал в арабский социализм. Не приемля идеологии западного капитализма и колониализма, идеи арабского социализма Нассер противопоставлял также и коммунизму, отмечая несовместимость последнего с арабскими традициями.

В 1950-60-ые годы нассеризм являл собой одну из самых популярных и мощных политических идеологий в арабском мире, став особо актуальным после Суэцкого кризиса 1956 г., политический исход которого ознаменовал победу нассеризма над западными империями. Однако распад ОАР в 1961г., а также поражение арабов в Шестидневной войне негативно сказались как на политическом положении Нассера, так и идеологии нассеризма.

NASSERIZM: THEORY AND FUNCTION**E. ASATRYAN**

Abstract

The paper deals with the theory and practice of Nasserism, which was a socio-political doctrine based on the thoughts and actions of Gamal Abdel Nasser, president of Egypt (1956-1970). Unlike Baathism, Nasserism was not a well-conceived thesis by one or more ideologues, but emerged as an ideology out of a series of practical responses to the problems, domestic and foreign, that Egypt, ruled by military officers from 1952 onward, faced as it tried to consolidate its newly won political and economic independence. Beginning a pan-Arab nationalism, it evolved into Arab socialism. Though opposed ideologically to Western capitalism and colonialism, Nasser's interpretation of Arab socialism developed as a rejection of communism, which was seen as incompatible with Arab traditions. In the 1950s and 1960s, Nasserism was amongst the most popular and potent political ideologies in the Arab world. This was especially true following the Suez Crisis of 1956 the political outcome of which was seen as a validation of Nasserism, and a tremendous defeat for Western imperial powers. The collapse of the United Arab Republic of 1961, as well as the Arab defeat in the Six-Day War of 1967, damaged the standing of Nasser, and the ideology associated with him.

СОВЕТ СОТРУДНИЧЕСТВА АРАБСКИХ ГОСУДАРСТВ ЗАЛИВА

АРАКЕЛЯН А. Р.

Еще в конце 1970-ых гг. в районах, прилегающих к Персидскому заливу, было неспокойно. Эта нестабильность, вызывавшая опасения Запада, была обусловлена междинастическими и межродовыми противоречиями, сектантской нетерпимостью, а также несогласием в вопросах распоряжения запасами нефти и в иных вопросах. Все это превратило район Персидского залива в зону потенциальных волнений. Как заявил в апреле 1967 г. Государственный секретарь Англии по вопросам обороны Денис Хейли в “House of Commons”, “Персидский залив является важнейшим регионом как для экономики Западной Европы, так и с точки зрения мира во всем мире”¹.

Увеличение числа членов Лиги арабских государств, провал Пакта коллективной обороны арабских стран в шестидневной войне 1967 г., а также отсутствие перспектив экономического сотрудничества послужило основой для более узкого сотрудничества между странами Персидского залива.

Бывший госсекретарь ООН Бутрос Бутрос-Гали в 1970 г. посоветовал странам Лиги арабских государств создать четыре субрегиональных объединения: Благодатный Полумесяц, Арабский залив, Арабский Магриб и так называемый Северо-восточный треугольник, состоящий из Египта, Ливии и Судана. Десятилетие спустя в марте 1981 г. по инициативе Саудовской Аравии был создан Союз сотрудничества арабских государств Персидского залива. В него вошли все шесть монархий залива². Страх перед Ираном и Ираком сплотил нефтяные монархии Персидского залива. Призывы руководителей Ирана к распространению исламской революции подстегнули Саудовскую Аравию, Катар, Кувейт, Оман, Бахрейн и ОАЭ 26 мая 1981 г. подписать в Абу-Даби Устав Совета сотрудничества арабских

¹ J. B. Kelly, *Arabia, The Gulf and The West*, London, 1980, p. 47.

² Александров И. А. *Монархии Персидского залива: этап модерн, зац, , ,* М., 2000, с. 279.

государств Персидского Залива (ССАГПЗ)³. Тем не менее, по мнению некоторых авторов, создание организации было продиктовано не велемием времени, а было запланировано еще до начала ирано-иракской войны⁴. Международной предпосылкой создания ССАГПЗ послужили война в Афганистане и послевоенная ситуация в этой стране (в условиях советской оккупации), исламская революция в Иране, ирано-иракская война и подписание египетско-израильского мирного договора⁵.

Мнения ряда авторов касательно создания ССАГПЗ не совпадают. Одни полагают, что Союз носил стратегический и идеологический характер и не предполагал создания перспективных программ⁶, другие же считают, что основной акцент в ССАГПЗ сделан на экономические и финансовые отношения, при этом уделено мало внимания вопросам безопасности, обороны и внешних отношений⁷. Есть также авторы, полагающие, что Союз ставил перед собой в основном цели обеспечения безопасности и расширения сотрудничества⁸.

³ **Tripp Ch.** 'Regional Organizations in the Arab Middle East', in L. Fawcett and A. Hurrell (eds), *Regionalism in World Politics: Regional Organization and International Order*, 1995, New York, p. 293.

⁴ **Bergsten F., R. Keohane and J. N.** 'International Economics and International Politics: A Framework for Analysis', in Fred Bergsten (ed.) *The Future of International Economic Order: An Agenda for Research*. Richmond, VA: Lexington Books. Vol. 29, No. 1, pp. 3-36 (Winter, 1975) http://www.jstor.org/stable/2706284?seq=1#page_scan_tab_contents (10/09/2016)

⁵ **Dr. Jamal Abdullah, Dr. Omar Said Al Hassan, Ghassan Alshihaby, Dr. Khalid Shams Abdulqader, Dr. Zafer Alajmi, Dr. Yahya Alzahrani, Dr. Saud Al Tamamy, Islam Khalid Hassan, Dr. Ahmed Alazdi.** *Gulf Cooperation Council's Challenges and Prospects*. AlJazeera Center for Studies. 31 March 2014, <http://studies.aljazeera.net/en/>

⁶ **Ramazani R. K.** with the assistance of Joseph A. Kechichian, with a foreword by Sultan Bin Mohamed al-Qasimi, *The Gulf Cooperation Council: Record and Analysis*. Charlottesville: University Press of Virginia, 1988, p. 45-61.

⁷ **Pinfari M.** *Nothing but Failure? The Arab League and the Gulf Cooperation Council as Mediators in Middle Eastern Conflicts*. International Relations Department. London School of Economics and Political Science. March 2009 <http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.469.8564&rep=rep1&type=pdf> (12/12/2016)

⁸ **Александров И. А.,** указ. соч., с. 279.

ССАГПЗ обладает некоторыми структурными сходствами с ЕС⁹. Два основных органа ССАГПЗ также являются межправительственными: Верховный Совет (состоящий из руководителей стран-членов и созываемый раз в год) и Совет министров (в целом имеет общие структурные особенности с Советом министров ЕС, состоит из министров иностранных дел стран-членов и созывается раз в три месяца). Оба Совета управляются Секретариатом, базирующимся в Эль-Риаде¹⁰.

Несмотря на общепринятую точку зрения, согласно которой благодаря развитой экономике Совет сможет наилучшим образом защитить своих членов, вопросы безопасности с самого начала создания ССАГПЗ волновали членов организации¹¹. Проблема военного сотрудничества всегда была в повестке дня ССАГПЗ. В период формирования Совета Саудовская Аравия выступила с предложением приобретать оружие и боеприпасы у одного поставщика и максимально улучшить сотрудничество между вооруженными силами стран-членов, однако так и не внесла предложения о создании военного союза. В свою очередь, Оман предлагает создать единые военно-морские силы для защиты Ормузского пролива от возможного нападения. Подобного рода предложения были озвучены также Кувейтом и Бахрейном. Тем не менее в преамбуле Устава ССАГПЗ так и не была упомянута проблема безопасности¹².

Безопасность Персидского залива охватывает четыре сферы:

- национальную: страны отличаются друг от друга своей национальной безопасностью,
- внутреннюю, благодаря которой страны-члены ССАГПЗ вступают в определенные отношения друг с другом, например, пограничные проблемы между странами-членами (Катар – Саудовская Аравия, Саудовская Аравия– ОАЭ и пр.),

⁹ **Guazzone L.** *Gulf Co-operation Council: The Security Policies, 1988, Survival* 30(2):134-148, http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/0039633880844_2401 (14/12/2016)

¹⁰ Там же, с. 147.

¹¹ **Pinfari M.**, указ. соч.

¹² **Al-Ash'al, Abdullah.** *The Evolution of the International Relations of the GCC in the Light of Regional and Global Variables [in Arabic], Cairo, 1999, Gulf Centre for Strategic Studies.* http://studies.aljazeera.net/mritems/Documents/2015-/3/31/-20153311_31534662734Gulf%20Cooperation.pdf(08/11/2016)

- региональную, которая объединяет страны-члены ССАГПЗ в условиях регионального кризиса, к примеру, иракский кризис или спор с Ираном вокруг островов, принадлежащих ОАЭ и пр.,
- международную, на основе которой страны-члены участвуют в решении всеобщих вопросов, имеющих в основном экономический характер, например, вопросов добычи, экспорта и определения стоимости нефти¹³.

После иракского кризиса с целью обеспечения безопасности в рамках Совета Сотрудничества был выдвинут ряд предложений:

- подписание двустороннего договора об обороне с США. Страны-члены ССАГПЗ были единодушны в вопросе присутствия в регионе внешней силы. В 1990 г. в преддверии войны в Персидском заливе Кувейт подписал военные договоры с рядом крупных внешних сил: США, Францией, Великобританией, Китаем и Россией,
- коллективная региональная оборона. В ССАГПЗ считали, что в вопросах обороны объединение усилий станет основой безопасности и стабильности в регионе. Страны-члены ССАГПЗ после создания организации сразу же объявили о создании совместных сил обороны. В мае 1981 г. под контролем Секретариата ССАГПЗ был создан Военный комитет. Затем в 1983 г. и 1984 г. в рамках Военного комитета были проведены совместные военные учения, а в 1985 г. были созданы совместные силы быстрого реагирования, состоящие из 2500 человек (Щит полуострова)¹⁴. В 1995 г. на проведенном в Мускате саммите ССАГПЗ утвердил проект развития коллективной обороны. Затем, в 1997 г., страны-члены разработали проект развития Единой сети предупреждения, а в 1999 г. была создана система объединенных коммуникаций руководителей армий стран-членов ССАГПЗ. Саммит, проведенный в 2000 г. в Манаме (Бахрейн), послужил основой для подписания Договора о совместной обороне, а спустя год ССАГПЗ утвердил создание Совета объединенной обороны. На саммите в

¹³ Ch. Koeh, F. Neugart. *A Window of Opportunity. Europe, Gulf Security and the Aftermath of the Iraq War*, Gulf Research Center, 2005, pp. 20-23 (*Iraq in Transition: Vortex or Catalyst*. Chatham House, September 2004, <http://www.chathamhouse.org.uk/pdf/research/mep/BP0904.pdf>)

¹⁴ GCC (Gulf Cooperation Council) (1981). *The Charter of the Gulf Cooperation Council [in Arabic]*. <http://www.gcc-sg.org/indexfc7a.html>. (02 /03/2015)

декабре 2003 г. страны-члены ССАГПЗ договорились создать Верховный военный комитет¹⁵,

- коллективная безопасность арабских стран. Принятую в 1990-91 гг. накануне войны в Персидском заливе Дамаскскую декларацию можно рассматривать как попытку укрепления безопасности и стабильности в районе Персидского залива.

ССАГПЗ вмешался лишь в три спорных приграничных конфликта с вовлечением стран-участниц: Омана-Йемена, Катара-Бахрейна, Саудовской Аравии-Катара. Совет внес положительный вклад в процесс мирного урегулирования каждого из этих конфликтов. Согласно СМИ, лишь благодаря усилиям ССАГПЗ и Египта стало возможным организовать визит эмира Катара в Саудовскую Аравию в декабре 1992 г. Совету удалось также успешно вмешаться в конфликты с вовлечением стран-членов Совета (конфликт между Оманом и Южным Йеменом в 1982 г. и конфликт между Катаром и Бахрейном в 1986-87 гг.)¹⁶.

Однако спорным является вопрос прямого участия основных действующих органов ССАГПЗ в процессы урегулирования конфликтов. Например, Секретариат ССАГПЗ не был прямо вовлечен в урегулирование конфликтов с участием стран-членов Совета и в большинстве своем не осуществлял каких-либо посреднических миссий¹⁷. Вмешательство организации в процесс урегулирования конфликтов в основном осуществлялось посредством стран-участниц (как правило, Саудовской Аравии и Катара). Так, Саудовская Аравия в 1986-87 гг. приняла прямое участие в территориальном конфликте между Катаром и Бахрейном и в конце концов добилась восстановления статус-кво между странами. ССАГПЗ лишь пересмотрел и одобрил мирный договор, инициатором которого была Саудовская Аравия.

¹⁵Yahya Hulmei Rajeb. *Majles al-Taween al-Khaleeje: Nadra Mustagablya*, Kuwait, Dar al-Arab Publishers, 1983 <http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.469.8564&rep=rep1&type=pdf> (12/12/2016)

¹⁶Tow W. *Subregional Security Cooperation in the Third World*, Brisbane, 1990, p. 50, Ramazani R. K. указ. соч., с. 123. Barnett, Michael and Gause III, Geogory F. *Caravans in Opposite Directions: Society, State, and the Developments of Community in the Gulf Cooperation Council*, in E. Alder and M. Barnett (eds), *Security Communities*. Cambridge: Cambridge University Press, 1998, p. 180.

¹⁷Schofield R. *Boundaries, Territorial Disputes and the GCC States*, in D. E. Long and C. Koch (eds), *Gulf Security in the Twenty-First Century*. London: The Emirates Center for Strategic Studies and Research, 1997, p. 146.

ССАГПЗ также поддержал посредническую миссию Кувейта и ОАЭ в территориальном конфликте между Оманом и Йеменом в 1982 г. Совет также выразил готовность поддержать дипломатические усилия Катара, направленные на разрешение конфликта вокруг президентских выборов в Ливане¹⁸. В ирано-иракском конфликте Совет занял нейтральную позицию. Однако подобная позиция, скорее, указывала на стремление оправдать агрессию Саддама Хусейна. После того как начиная с 1982 г. иранские силы перешли к контратаке, Совет квалифицировал действия Ирана как «действия, направленные против всего арабского мира»¹⁹.

Войны в Персидском заливе в 1990-91 гг. и в 2003 г., а также террористические атаки на Нью-Йорк продемонстрировали военную и политическую слабость ССАГПЗ. В ходе событий 1990 г. организация ограничилась лишь осуждающими заявлениями, а террористические атаки 2001 г. выявили слабость Саудовской Аравии в вопросе выявления на своей территории террористических группировок. После войны 2003 г. странам-членам ССАГПЗ так и не удалось выработать единый подход в вопросе будущего Ирака.

ССАГПЗ не сумел добиться справедливого решения малых конфликтных ситуаций, в которых одной из сторон являлась страна-участница ССАГПЗ. В 1999 г. в ходе конфликта вокруг островов Абу-Муса и Тонб Иран отказался принять посредническую комиссию ССАГПЗ. Причиной отказа явилось то, что один из членов комиссии выступил в поддержку ОАЭ. В дальнейшем Катар попытался сыграть роль посредника в конфликте вокруг иранского ядерного оружия. На встрече министров ССАГПЗ в декабре 2005 г. и мае 2006 г. члены организации заявили о готовности оказать поддержку Катару. Руководитель национальной безопасности Ирана Али Лариджани также положительно отнёсся к подобной инициативе. Однако такого рода инициативы имели в основном символический характер, поскольку инициатива Катара так и не оказала существенного влияния на положительное разрешение конфликта²⁰.

¹⁸ *GulfNews*, 12 May 2008 [http://gulfnews.com/search?action=search&submitted=true&sort=publisheddate_descending&freeText=12+May+2008\(14/12/2016\)](http://gulfnews.com/search?action=search&submitted=true&sort=publisheddate_descending&freeText=12+May+2008(14/12/2016)), Ramazani R. K., указ соч., с. 124.

¹⁹ Ramazani R. K., указ соч., я.ял 18-121.

²⁰ Pinfari M., указ соч., Mason R. *The Omani Pursuit of a Large Peninsula Shield Force: A Case Study of a Small State's Search for Security* (*British Journal of*

Страны-участницы ССАГПЗ всегда пытались найти грани сотрудничества в разных сферах. В рамках ССАГПЗ в 1983 г. было подписано соглашение о создании зоны свободной торговли, в 2003 г.— о создании Таможенного Союза, в 2008 г.— о создании общего рынка. Начиная с 2013 г. ведутся работы по созданию единой валютной системы. Создание единой валюты было отложено в основном из-за Омана. Оман в октябре 2006 г. заявил, что не собирается вступать в единую валютную систему до 2010 г. Тем не менее с точки зрения долгосрочных программ экономики стран-членов ССАГПЗ тесно связаны между собой²¹.

В силу нестабильной ситуации в Ираке, ядерной программы Ирана и волнений в Сирии страны-члены ССАГПЗ столкнулись с неразрешимой проблемой. Для создания единой системы безопасности, в первую очередь, необходимо убедить страны-участницы Совета в эффективности подобной инициативы. Они должны осознать, что вместе защищаться гораздо эффективнее, чем в одиночку²².

Исследования, касающиеся участия ССАГПЗ в урегулировании международных конфликтов на Арабском Востоке, малочисленны. Их основная часть проводилась в первое десятилетие создания организации. Проведенные западными авторами последние серьезные исследования относятся к 1997 г. Они в основном направлены на изучение роли ССАГПЗ в урегулировании региональных конфликтов²³.

Middle Eastern Studies, June (2014):355-367), <http://www.tandfonline.com/doi/full/10.1080/13530194.2014.918801> (14/12/2016).

²¹Darrat A. and Al Shamsi Fatima. "On the Path of Integration in the Gulf Region", *Economist Intelligence Unit*, "Report on GCC Trade and Investment Flows", United Kingdom, London, 2014.

²² Dr. Jamal Abdullah, Dr. Omar Said Al Hassan, Ghassan Alshihaby, Dr. Khalid Shams Abdulqader, Dr. ZaferAlajmi, Dr. YahyaAlzahrani, Dr. Saud Al Tamamy, Islam Khalid Hassan, Dr. Ahmed Alazdijforstudies-en@aljazeera.net <http://studies.aljazeera.net/en/> Christian Koeh, Felix Neugart, *A Window of Opportunity. Europe, Gulf Security and the Aftermath of the Iraq War* Gulf Research Center, 2005, 119 pages (pages 20-23).

²³ George H. J. *Disputes over State Boundaries in the Middle East and North Africa*, *The Middle East in Global Change*, pp. 58-94, http://link.springer.com/chapter/10.1007/978-1-349-25526-9_4, (14/12/2016) Schofield, Richard. 'Boundaries, Territorial Disputes and the GCC States', in D. E. Long and C. Koch (eds), 1997, *Gulf Security in the Twenty-First Century*. London: The Emirates Center for Strategic Studies and Research.

В заключение можно отметить, что специфическое влияние на деятельность Совета сотрудничества арабских государств Персидского залива оказали идейные и династические противоречия стран-членов Совета. Однако Совет сотрудничества арабских государств Персидского залива может перерасти в более влиятельную организацию. В отличие от Лиги арабских государств Совет сотрудничества арабских государств Персидского залива объединяет арабские страны с более широким спектром интересов, что дает организации возможность осуществления более гибкой деятельности на международной арене.

ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ռ.

Անվիտիում

Ծոցի համագործակցության խորհրդի (ԾՀԽ) գործունեության վրա ուրույն ազդեցություն են թողել անդամ-երկրների գաղափարական ու դինաստիական հակասությունները: Այնուամենայնիվ, ԾՀԽ-ն ունի ավելի ազդեցիկ կազմակերպության վերաճելու հնարավորություն: Ի տարբերություն Արաբական պետությունների լիգայի՝ ՀԽ-ն միավորել է հետաքրքրությունների ու շահերի ավելի լայն շրջանակ ունեցող արաբական երկրների, ինչը կազմակերպությանը թույլ է տալիս ավելի ճկուն գործունեություն ծավալել միջազգային ասպարեզում:

THE COOPERATION COUNCIL FOR THE ARAB STATES OF THE GULF

A. ARAKELYAN

Abstract

The GCC's member states represent a coherent political complex that is held together by common historical experiences and linked by geographical proximity and shared borders. Given their importance and interrelatedness, the need arose for a collective platform to express their interests, to deal with regional and international events, and to respond appropriately to

regional and global variables and developments. Accordingly, the formation of the GCC was announced and the GCC Charter signed on 25 May 1981, promoting cooperation among member states, the development of relations between them in a range of different fields via mutually beneficial projects, and the standardising of systems to serve their interests and enhance their capacities to abide by their principles and values.

ՓԻՆԻՍՈՓՈՒՅՈՒՆԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՐ

**СИНКРЕТИЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ ПРАВА:
ВЗГЛЯД В БУДУЩЕЕ**

ВАРДАНЯН Л. Г.

Необходимость качественно нового права, новой его концепции, обусловленной новыми вызовами тысячелетия, среди которых следует выделить бурно развивающийся научно-технический процесс и углубляющийся морально-нравственный кризис, привела к переосмыслению традиционных категорий общетеоретической юриспруденции и появлению новых взглядов на право как регулятора общественных отношений в «обществе риска».

Тенденции глобализации, необходимость диалога культур, определения стратегического направления развития общества, глубокого осмысления положения человека в мире, определения степени его ответственности за сохранение и воспроизводство природы, биологических видов и биоразно-образия, рассмотрения коллективного разума человека в качестве эволюционной силы мироздания, проблема выживания цивилизации, а также вовлечение самого субъекта познания в познающийся объект, расширяющийся процесс взаимопроникновения естественнонаучных и гуманитарных наук, синкретизация права и его сближение с этикой, моралью, духовно-нравственными началами – вот те факторы, которые должны быть учтены при формировании нового правопонимания.

Весьма ощутимый вклад в формирование нового типа правопонимания внёс Ю. Хабермас. Его учение оказало влияние на формирование и развитие коммуникативного подхода к осмыслению права. Им сформулирована идея коммуникативной рациональности и теория коммуникативного действия как действия, основанного на взаимопонимании и общепринятых

этических нормах, имеющих консенсуальную природу. Ю. Хабермас исходит из необходимости переориентации философской рефлексии с модернистской парадигмы субъект-центрированного разума, ориентированного на монологичный процесс познания, на переход к диалогичному межсубъектному поиску истины в процессе социальной коммуникации, направленной на консенсус. «Субъект-центрированный разум сменяется системной рациональностью»¹. Разработанное им понятие коммуникативного разума вытесняет понятие индивидуального разума – основы классической философии. При этом ключевая идея сводится к единству познания и коммуникативной социальной практики. С позиций такого подхода теорией истины у Ю. Хабермаса становится теория консенсуса². Дискурс, представляющий собой ориентированный на консенсус многовекторный диалог, трактуется им и как процесс познания, и как процесс формирования познаваемой социальной реальности. Если участники дискурса обладают надлежащей «коммуникативной компетенцией», мы имеем дело с той «идеальной разговорной ситуацией», которую автор рассматривает в качестве основы своей «этики дискурса». Творческая сила человеческого разума не умаляется, она лишь раскрывается в коммуникативном дискурсе, у которого своя этика, в основе которой лежит универсальная демократическая процедура выработки справедливого решения социальных проблем на основе всеобъемлющего консенсуса. Перво-степенность установления компромисса и взаимопонимания вынуждает пересмотреть современное право, ибо «в условиях современного кризиса права... плоское одномерное упрощенное «техническое» право, пригодное для решения узко-прагматических задач, должно уступить место живому человеческому

¹ Хабермас Ю. *Философский дискурс о модерне*, М., 2003, с. 390.

² Денежкин А. «Фактичность и значимость» Ю. Хабермаса: новые исследования по теории права и демократического правового государства (Послесловие к книге: Хабермас Ю. *Демократия. Разум. Нравственность*, М., 1995, с. 188).

праву для свободного и справедливого общения людей³. С 2001 года Генеральная ассамблея ООН утвердила «Глобальную повестку дня для диалога между цивилизациями» и признала диалог между цивилизациями в качестве развернутой концепции «поощрения культуры мира и диалога между цивилизациями». В этом документе указано, что диалог между цивилизациями – это процесс, который имеет место внутри цивилизаций и на их стыке и который основан на всеобщности участия и коллективности желания учиться, открывать для себя и изучать цивилизации, выявлять сферы общего понимания основных ценностей и сводить разные подходы в единое целое с помощью диалога⁴. И так, диалог необходим для возникновения права.

Анализ правовой мысли Ю. Хабермаса позволяет сделать несколько выводов. Во-первых, «концепция права Ю. Хабермаса по сути дела является современной версией естествен-но-правового подхода, для которой характерно стремление уйти от метафизической трактовки категории справедливости»⁵. Во-вторых, рациональность у него имеет процедурный характер. Норма права рождается посредством консенсуса, истина всегда существует вне зависимости от ее сущностного компонента, то есть отрицается существование какого-либо всеобщего, априорного принципа, которому эти нормы должны соответствовать. По сути правовая норма остается «пустой», ее содержание нельзя характеризовать как истину. Вместе с тем право, рожденное в коммуникативном дискурсе, без определяющего его содержательную истину принципа может продолжить все те же позитивистские традиции правопонимания⁶.

Именно принцип занимает определяющее место в учении Р. Дворкина, предлагающего либеральную концепцию права.

³ Мальцев Г. В. *Понимание права. Подходы и проблемы*, М., 1999, с. 401.

⁴ Следзевский И. В. *Диалог цивилизаций как смысловое поле мировой политики (Общественные науки и современность, 2001, № 2, с. 142)*.я

⁵ Лапаева В. В. *Типы правопонимания: правовая теория и практика*, М., 2012, с. 206.

⁶ Мальцев Г. В. *Понимание права. Подходы и проблемы*, М., 1999, с. 401-403.я

Позитивизм, по его мнению, ориентирующийся в своих теоретических построениях на систему норм, игнорирует роль правовых принципов. Отвергая позитивизм, где признание правовых принципов в качестве составной части права означает признание так называемой теории «высшего права», рассматривающей принципы в качестве своего рода «правовых норм в отношении самого права»,⁷ Р. Дворкин считает, что принципы, которые служат основанием для принятия юридически значимых решений, сами должны включаться в состав права, ибо «позитивизм... скрывает от нас важную роль стандартов, не являющихся нормами».⁸ К числу таких стандартов исследователь относит принципы (то есть стандарты, которые следует соблюдать потому, что они выражают «некоторые моральные требования, будь то требования справедливости, честности и т. д.») и стратегии (стандарты, формулирующие «необходимость достижения некоторой цели, обычно связанной с улучшением каких-то экономических, политических или социальных условий в обществе»)⁹.

Теория Р. Дворкина строится на базе «ключевой идеи утилитаризма, а именно—идеи коллективной цели сообщества в целом». В настоящее время главной коллективной целью сообщества становится цель выживания—генерализованный и обобщенный инстинкт самосохранения. Она весьма напоминает выделенную Б. А. Кистяковским эмпирическую цель права — «цель организации совместной жизни людей»¹⁰, с небольшой поправкой — организации совместного выживания людей, исходя из рискогенности современного мира. А. Маркович в поисках дополнительного измерения для абсолютной морали задается вопросом: что является действительно непреложным и всеобщим законом природы или Бога, на что направлена вся её или Его

⁷ Дворкин Р. *О правах всерьез*, М., 2004, с. 67, 68.я

⁸ Там же, с. 45.я

⁹ Там же.я

¹⁰ Кистяковский Б. А. *Социальные науки и право*, М., 1916, с. 678.я

видимая нам «деятельность»? И далее сам же отвечает на поставленный вопрос: «Этика современности подсказывает нам только один ответ—развитие, упрочение и расширение жизни и её высшего атрибута—разума. Наш долг, следовательно, состоит в том, чтобы в максимально возможной степени содействовать этому развитию – ведь вне жизни, вне человека сама постановка каких-либо этических проблем теряет всякий смысл»¹¹. То есть принцип, на котором может строиться право, должен быть не только универсально истинным для людей, но и обеспечивать существование цивилизации.

Принятие, в качестве долга, содействия жизни приводит к необходимости становления универсальной рациональности с обязательным пересмотром понимания человека и его роли в мире. Как утверждал В. И. Вернадский, «ум человека—геологическая сила, человек призван к мировому творчеству, и это творчество есть часть самой природы, реальная движущая сила мироздания»¹². Верховенство человеческого разума, принимающего на себя миссию определять развитие мира, направлять его движение, сохранять жизнь, требует уяснения своих этических и правовых сторон. Отсюда исходит значение идеи естественной справедливости и естественного права, указывающих на нормы, с которыми должен считаться человек, права которого должны вытекать из его миссии. Кроме того, необходимо обеспечение органического единства прав и обязанностей человека, сочетания его прав и свобод с обязанностями и ответственностью перед жизнью. Системообразующим элементом новой культуры в отношении жизни человека и биосферы в целом уже не может быть первичность прав человека и вторичность его обязанностей

¹¹ **Маркович А.** *На пути к абсолютной морали* [«Вестник Online», № 15(326) 23 июля 2003 г. (Электронный ресурс)]. Режим доступа: // <http://www.vestnik.com/issues-/2003/0723/win/markovich.htm>

¹² *Русский космизм. Антология философской мысли, М., 1933, с. 339.*

и ответственности. Западная концепция прав человека должна дополняться институтом обязанностей человека, который присущ восточной концепции прав человека.

Всепланетарный характер вышеуказанной миссии предполагает выявление точек соприкосновения культур, в том числе и правовых, что уже подчеркивает необходимость возникновения диалогового пространства для достижения компромисса, о котором говорил Ю. Хабермас. И теперь дело остается за малым: указать ту этику во множестве «частных этик», которая будет «этикой дискурса».

Предлагаемый нами синкретический тип правопонимания предполагает формирование глобального дискурса, где в результате консенсуса должно рождаться новое право как инструмент реализации этического принципа «благоговения перед жизнью», этика же дискурса должна опираться на глобальную биоэтикуновую абсолютную мораль, которая способствует не только диалогу культур, но и диалогу науки (е, различных ветвей), религии, этики, нравственности. Эмпирическая цель права дополняется этической целью, которая и обуславливает саму природу права.

Этический принцип «благоговения перед жизнью» может быть отражен в своеобразной мононорме, которая будет иметь синкретический характер. Такое правопонимание преодолевает антропоцентрический мир позитивизма, выводит правопорядок не из пределов человеческой деятельности, а из понимания человека как частицы и хранителя биосферы, из ценности жизни как данности, что также не связано с деятельностью человека, в том числе и с его законотворческой. Правовым идеалом становится ценность жизни человека и биоса, отражающая синкретизм правосознания с доминированием моральных, нравственных и духовных начал. Правовой идеал

синкретического правопонимания восстанавливает утраченную связь человека и природы, воскрешает подход, выраженный еще в древней китайской, индийской, греческой философии, где человек мыслился как часть космоса, некоторого единого сверхвременного «порядка» и «строения» бытия, как «малый мир», микрокосм (Демокрит).

Право, рожденное в биоэтическом дискурсе, или биоправо разрабатывает нормы в соотнесении с природным императивом – жизнью, ибо невозможно нормативно оценить жизнь вне этих императивов.

Такое правопонимание не укладывается также в рамки юснатурализма и требует переосмысления теории естественного права. Синкретическое правопонимание, имея в качестве своей основы ценность человеческой жизни, перекликается с концепцией естественного права, но, тем не менее, отличается от нее, так как не исходит из обычного антропоцентризма. Так, естественное право исходит из природы человека, а точнее – его ценности¹³.

Тем самым опять же утверждается антропоцентризм, который исходит из того, что этические принципы свойственны только человеку, потребности и интересы которого имеют первостепенное значение, а это значит, что такое право не может решить вопросы современного потребительского общества.

Естественное право лежит в основе концепции прав человека, которая теперь уже может подвергнуться трансформации в связи с проблемой выживания человечества. Данная концепция не преодолевает процесс дальнейшей секуляризации права от ценностных категорий, которая уже неприемлема в контексте так называемого универсального синтеза. Последний процесс весьма

¹³ «Само право имеет свою основу не в юридических нормах, а его источником является природа человеческой личности, ее дух, а руководящим идеалом – свобода. На этом и зиждется естественная школа права» (Нерсесянц В.С. *Философия права. Учебник для вузов*, М., 1997, Электронный ресурс. Режим доступа: www.pravovuzlib.su).

красочно описывает В. А. Бачинин: «разбегающаяся вселенная» мировой культуры начала переходить в новое для себя состояние «сжимающейся вселенной». Так, мореплаватель, совершая кругосветное путешествие, преодолев большую часть пути и удаляясь от пункта отплытия все дальше, на самом деле уже начал приближаться к нему»¹⁴. Этот синтез возрождает синкретизм, который «является всеобщим принципом социально-гуманитарного познания»¹⁵. Он является характеризующей идеей биоцентризма и органически переплетается с биоэтикой в мировоззренческом срезе. Как указывает С. В. Пустовит, «биоэтика представляет собой грандиозный проект возвращения к синкретическим основаниям человеческого знания, к разуму как мудрости, в которой рациональное и когнитивное неразрывно связано с практической философией»¹⁶.

Новое правосознание должно опираться на неприкосновенность жизни, а задачей правопонимания становится, в мировоззренческом плане, правовая гармонизация антропоцентризма и экоцентризма в целях обеспечения биобезопасности и устойчивого развития общества, их сочетание через духовность, мораль этику и нравственность.

Новое правопонимание будет основано на интеграции социального и естественнонаучного знания, для чего, собственно, и была предложена глобальная биоэтика. Синкретизм, помогающий преодолеть барьер между моралью, нравственностью, религией, философией, возрождающий родственные связи между правом и указанными сферами, обеспечит право через мононорму «ценность жизни», ибо как праву, так и морали, нравственности, религии свойственна аксиологизация жизни. Это еще раз подтверждает мысль К. Маркса о том, что «со временем естествознание включит в себя науку о человеке в такой же

¹⁴ Бачинин В. *Философия права и преступления*, Харьков, 1999 г.

¹⁵ Алексеев А. П., Васильев Г. Г. *Краткий философский словарь*, М., 2010, с. 347 г.

¹⁶ Пустовит С. В. *Глобальная биоэтика: становление теории и практики* Киев, 2009 г.

мере, в какой наука о человеке включит в себя естествознание: это будет одна наука»¹⁷.

Особенность права, рожденного в биоэтическом дискурсе, или биоправа состоит в её императивно-опережающем характере. В отличие от нормогенеза современного права его нормогенез будет иметь прогрессивное действие, в качестве норм будут закрепляться также те правила поведения, которые до того не были обычаями. Мононорма в праве (ценность жизни) будет иметь априорный принцип, действующий непосредственно. Одновременно на основе этой мононормы на международном, а далее на национальном уровне будет воздвигаться «здание» его принципов-регуляторов-идейно-концептуальных основ, которые будут очерчивать «безопасную магистраль» для дальнейшего правотворчества. Заметим, что среди тенденций развития права в контексте глобализации М. Н. Марченко указывает и широкое использование принципов права как регуляторов общественных отношений¹⁸. Использование разработанных на основе мононормы принципов права сыграет также охранительную роль, очертит «магистраль» безопасного толкования права и обеспечит некий консерватизм в праве. Любая новая норма уже будет иметь тот ценностно-нормативный критерий, которому она должна будет соответствовать. Одновременно возможно будет обеспечить своеобразную децентрализацию права, некий эволюционизм в праве. Правоприменитель через непосредственно действующую мононорму сможет выйти на междисциплинарный уровень при толковании правовых норм, ею же будет очерчена граница судебного усмотрения в судебном разбирательстве.

¹⁷ Цит по работе: **Фролов И.Т.** *Перспективы человека, М., 1983, с. 12*

¹⁸ **Марченко М. Н.** *Основные тенденции развития права в условиях глобализации (Государство и право, 2009, N 6, с. 6-10).*

Синкретизм в судебном процессе будет предполагать не только обеспечение широких пределов судейского усмотрения. Биоправо будет отличаться немногочисленностью его позитивных источников и выражаться в установлении принципов и норм общего характера в том же биоэтическом дискурсе, а их содержание будет определяться судьей в рамках мононормы, однако это вряд ли можно будет назвать обычным толкованием. Задача правовой герменевтики – проблема подведения частного случая под общее правило – при этом решается несколько иным образом. Общепринятым при толковании права считается выявление смысла, который вложил в нормы сам законодатель. Однако в биоправе законодатель лишь ограничит, очертит «круг смыслов» введением мононормы и принципов-регуляторов, переступить которые в своем усмотрении судья не будет иметь права. Но сама синкретивность мононормы предполагает, что ее толкование, а равно и толкование любой нормы права, основанной на идеологии глобальной биоэтики, будет требовать так называемых «междисциплинарных знаний». Это означает, что в процесс толкования нормы будут вовлечены практически все возможные специалисты различных направлений, то есть будет иметь место своеобразное коллективное обсуждение, тот же коммуникативный дискурс «локального масштаба» для выявления смысла нормы права. Появится также возможность назначения «биоэтической экспертизы».

Заметим, что биоправо нами воспринимается как необходимое условие для перехода к высшему порядку, к праву для новой, четвертой волны цивилизации, окончательно преодолевающей антагонизм между человеком и природой.

Итак, право – результат консенсуса в коммуникативном дискурсе, необходимый для принудительной реализации и обеспечения этического принципа, который на данном этапе

развития имеет первоочередную цель для данного общества. В контексте современного общества первостепенным является этический принцип «благоговения перед жизнью». Поэтому в будущем право (биоправо) должно быть инструментом принудительной реализации этого этического принципа. Правовым идеалом биоправа будет ценность жизни, которая обеспечит необходимый синкретизм между правом, религией, моралью и этикой и очертит дозволительный предел «творческого правосудия». Этикой дискурса, в котором будет рождаться биоправо, станет глобальная биоэтика.

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՆԿՐԵՏԻԿ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.
ՀԱՅԱՑՔ ԴԵՊԻ ԱՊԱԿԱ**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Լ. Գ.

Ամփոփում

Որակապես նոր իրավունքի անհրաժեշտությունը հանգեցրել է իրավագիտության ավանդական կատեգորիաների վերախմաստավորմանը: Արդի գիտության զարգացումը վաղուց դուրս է եկել միջդիսցիպլինար մակարդակ, և իրավունքի տեսության խնդիրները նույնպես հաճախ լուծումներ են պահանջում այդ դիրքերից: Իրավունքի գլխավոր, համակարգաստեղծ իդեալը պիտի ունենա սինկրետիկ բնույթ, ինչպիսին կարող է լինել կյանքի արժեքը:

Իրավահասկացության նոր տեսակը ծնվում է հաղորդակցական դիսկուրսի համատեքստում, և իրավունքը (բիոիրավունքը) որպես կոնսենսուսի արդյունք, միտված է հարկադրաբար իրականացնելու և ապահովելու հասարակության բարոյագիտական գլխավոր սկզբունքը՝ կյանքի նկատմամբ հարգանքը: Դիսկուրսի բարոյագիտությունը պետք է դառնա գլոբալ բիոէթիկան:

Նոր իրավահասկացությունը պահանջում է մարդու նշանակության վերախմաստավորում, նրա կողմից բիոսի պահպանման և զարգացման համար պատասխանատվության սահմանում, ուստի մարդուն՝ որպես բիոսի մասնիկ և միաժամանակ պահպան ընդունելը պետք է հանգեցնի բիոիրավունքում նրա իրավունքների և պատասխանատվության համադրմանը:

SYNCRETIC CONCEPTION OF LAW: PROSPECTION

L. VARDANYAN

Abstract

The necessity of a qualitatively new law led to a revision of the traditional categories of jurisprudence. The development of modern science has long gone at the interdisciplinary level and problems arising in the theory and practice of law also often require solutions from these positions. Bioethics is becoming a global ideology of human survival and the basis for the development of a new concept of law-biolaw. If you take global bioethics as philosophical foundations of biolaw, the syncretism is also a feature of the new law, which also allows to reconcile the morality, ethics, spirituality with the right. This concept includes philosophy, ethics, a deep understanding of the human condition in the world, its responsibility for the preservation and reproduction of nature, species and biodiversity, for only man is able to preserve the natural world. Biolaw comes from a combination of the rights and freedoms of the individual with the duties and responsibility for life. Here the only mode of existence of human rights is to be part of a system of survival. The rights and freedoms of a person confined to moral imperatives. The exercise of rights and freedoms becomes an integral of the fulfillment of the respective obligations.

ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ. Մ., ՍԱՐԳՍՅԱՆ Վ. Ա.

Նորամուծական ներուժի մեկնաբանությունները, գնահատման սկզբունքները և խնդիրները

Գիտատեխնիկական սրբնթաց առաջադիմության արդի պայմաններում նորամուծական գործունեությունն ունի ակնհայտ ազդեցություն տնտեսական առաջընթացի վրա: Ուստի կարևոր են այդ ազդեցության, ինչպես նաև նորամուծական ներուժի գնահատումը¹: Վերջինս բավականին բարդ գործընթաց է, և գիտական հանրությունը միայն վերջերս է սկսել զբաղվել այդ բացառիկ կարևոր խնդրով: Ներկայումս առկա են խնդրի լուծման տարբեր և հաճախ նույնիսկ միմյանց հակասող մոտեցումներ: Պատճառը թերևս այն է, որ տարբեր երկրներում և տնտեսական զանազան համակարգերում նորամուծական գործունեության կառավարումը իրականացվում է տարբեր մոդելներով, և այդ առումով հնարավոր չէ կիրառել միասնական մեթոդաբանություն: Նորամուծությունը ի վերջո պետք է տեղ գտնի շուկայում, սակայն մինչ այդ այն որոշակի ճանապարհ պետք է անցնի: XXI դարում նորամուծական ներուժի գնահատումը հատկապես կարևորվում է, քանի որ արդի տնտեսությունը ավելի «նորամուծական» է դառնում, իսկ գիտություն-տնտեսություն կապն առավել սերտանում է: Իհարկե, տնտեսական ներուժը չի կարող հենվել միայն նորամուծական համակարգի վրա: Կարելի է պնդել, սակայն, որ վերոնշյալ կապի սերտությունը կապված է նաև երկրի զարգացման մակարդակի հետ: Այս առումով առավել բարձր զարգացում ունեցող երկրներում առկա է նորամուծական առավել արդյունավետ համակարգ: Այն տնտեսությունները, որոնք առավելապես հենված են բնական ռեսուրսների վրա, ի վերջո, պետք է ընտրեն նորամուծական ուղին: Զարգացման այդպիսի ռազմավարությունը նպատակային է նաև մեր երկրի տնտեսության համար: Նորարարական ներուժի գնահատումը հիմնված է նախ և առաջ նորամուծական ներուժի մեկնաբանման վրա: Նորարարական կարողության հասկացությունը տնտեսագիտական գրականության մեջ բացատրվում է բազմազան մոտեցումներով:

¹ Տնտեսական առաջընթացի վրա նորամուծական գործունեության ազդեցության գնահատման մասին տե՛ս նույն հեղինակների «ՀՆԱ ծավալի և աճի տեմպի վրա գիտության ու կրթության ազդեցության գնահատումը» հոդվածում (Լրաբեր հասարակական գիտությունների, 2015, թ. 3, էջ 146-159):

Որոշ աղբյուրներում² որպես նորամուծական ներուժ ներկայացվում է նորարարական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների տարբեր տեսակների ամբողջությունը: Այս մեկնաբանությունն իր բնույթով ռեսուրսային մոտեցում է: Այս տեսակետի կողմնակիցների կողմից գործածվող սահմանումները կրում են միայն տնտեսական համակարգի ներուժի և հնարավորությունների, ոչ թե գործընթացների և արդյունքի շեշտադրումը: Վերջիններիս գնահատումը առավել իրատեսական բովանդակություն կարող է ունենալ, քանի որ որպես նորամուծություն է դիտարկվում արդեն իսկ շուկայում առկա նորարարական արտադրանքը: Այս առումով մեկ այլ մեկնաբանմամբ³ այդ ներուժը համակարգի՝ փոփոխությունների ենթարկվելու կարողությունն է շուկայում ձևավորված պահանջմունքների բավարարման նպատակով: Այսինքն՝ դիտարկվում է նորարարական կարողությունը նորարարական գործունեության արդյունքի տեսանկյունից, այսինքն՝ իրական արտադրանքի, որն ստացվել է նորարարական գործընթացի շնորհիվ: Այս դեպքում նորարարական կարողությունը ներկայացված է որպես հնարավոր, ապագայում ստեղծվելիք, նորարարական արտադրանք:

Տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել մի տեսանկյունի, ըստ որի՝ նորարարական կարողությունն անհրաժեշտ է ճանաչել գիտատեխնիկական կամ մտավոր-ստեղծագործական կարողությունների հետ: Տվյալ մոտեցումը այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ, համաձայն այդ տեսակետի, նորարարական գործունեությունն անհրաժեշտ է դիտարկել միայն ցուցաբերված կարողությունների շրջանակներում:

Հեղինակներից շատերը, որոնք ուսումնասիրում են տնտեսական համակարգի նորարարական կարողության քանակական գնահատականը, ելնելով նորարարական կարողության՝ ունակություն, հնարավորություն և պատրաստակամություն լինելու սահմանումից, նորարարական կարողության հաշվարկի ժամանակ նորարարական ներուժը ներկայացնում են որպես ռեսուրսների, ենթակառուցվածքների և արդյունքի ինտեգրում: Այս մոտեցմամբ նորամուծական ներուժը սահմանվում է որպես մի համակարգ, որը միավորում է դրա երեք բաղկացուցիչ տարրերը՝ ռեսուրսային, ներքին և արդյունքային, որոնք գոյություն ունեն փոխազդեցության մեջ և պայմանավորվում են մեկը մյուսով⁴: Ներուժը սահմանված է նաև որպես նորամուծությունների ստեղծման, իրականացման հնարավորություն, միջազգային մակարդակին համապատասխանող նորամուծություններ ընդունելու

² www.finam.ru

³ Кравченко С.И., Кладченко И.С. Исследование сущности инновационного потенциала (Науч. труды Донецкого национального технического университета. Сер.: экономическая, вып. 68, Донецк, 2003).

⁴ Кокурин Д.И. Инновационная деятельность, М., 2001.

պատրաստականություն հետագա արդյունավետ օգտագործման համար⁵: Ա. Բախտիզինի և այլոց մեկնաբանմամբ՝ նորարարական կարողությունը երեք բաղկացուցիչներից կազմված համակարգ է, որը ներառում է հետևյալ տարրերը՝ նորարարություններ ստեղծող սուբյեկտներ, նորարարական միջնորդներ, նորարարություններ սպառողներ:

Ի վերջո, նորամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանին գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունները և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Այս մոտեցմամբ որոշ հեղինակներ առաջարկում են բացահայտել այսպես կոչված «թաքնըրված» ռեսուրսները կամ հնարավորությունները՝ առաջիկայում դրանք երկրի նորամուծական համակարգում ինտեգրման և իրականացման նպատակով: Բհարկե, այս մոտեցումը հիմնավորված է, սակայն այն չի բացահայտում ընթացիկ իրավիճակը⁷:

Արտասահմանյան աղբյուրներում⁸ նորամուծությունն առավելապես բնորոշվում է որպես նորարարություն, որն արդեն պատրաստ է իրացման, այսինքն՝ որպես արդյունք, ընդ որում դիտարկվում է ինչպես «սեփական», այնպես էլ ձեռք բերված նորամուծությունը:

Նորարարական կարողության մեծությունից են կախված նորարարական ռազմավարության ընտրության և իրականացման համար կառավարչական որոշումների ընդունումը: Տարածաշրջանի նորարարական ներուժը կազմված է արտադրատեխնոլոգիական, կադրային, տեղեկատվական, ֆինանսական, գիտատեխնիկական, կազմակերպչական, նորարարական մշակույթի, սպառողական սեզմենտի կարողությունների համակարգից⁹:

Նորամուծական կարողության համալիր գնահատումը ենթադրում է հետևյալը. առաջին՝ ցուցանիշների գիտականորեն հիմնավորված համակարգի գոյություն, երկրորդ՝ վիճակագրական բազայի առկայություն: Ամենակարևորը՝ նորարարական

⁵ Шляхто И.В. Оценка инновационного потенциала региона (Управление общественными и экономическими системами, 2007, № 1).

⁶ Бахтизин А.Р., Акинфеева Е.В. Сравнительные оценки инновационного потенциала регионов Российской Федерации (Проблемы прогнозирования, 2010, № 3, с. 73-81).

⁷ Чекулина Т.А., Тамахина Е.А. Инновационный потенциал региона: содержательные особенности и теоретические аспекты исследования (Вестник ТГУ, 2011, № 2 (94), с. 65-70).

⁸ Claire Nauwelaers, A. Reid. Methodologies for the Evaluation of Regional Innovation Potential, *Scientometrics*, 2005, Volume 34, Number 3, p. 497-511. Kalcsú Zoltán, Magyar Dániel. Regional Situation Analysis on the Innovative Potential of the West – Transdanubian Region. / South East Europe Transnational Cooperation Programme «Jointly for our Common Future» Project FIDIBE – «Development of Innovative Business Parks to Foster Innovation and Entrepreneurship in the SEE Area». Written by Pannon Novum Nonprofit Ltd. on behalf of West Pannon Regional Development Company. November 2009.

⁹ Бахтизин А. Р., Акинфеева Е. В., նշվ. աշխ., էջ 73-81:

կարողության ցուցանիշը, ոչ միայն կանխորոշում է տարածաշրջանի հետագա զարգացումը, այլև բնորոշում է տարածաշրջանի՝ նորամուծությունների տարբեր տեսակների ստեղծմանը, յուրացմանը և տարածմանը, նորարարական գործունեության արդյունքների իրականացմանը պատրաստ լինելու աստիճանը: Նորամուծական ներուժի գնահատման վերաբերյալ հետազոտություններ սկսել են իրականացվել միայն վերջին 15 տարիների ընթացքում: Նորամուծական ներուժի գնահատման առումով առկա են մի շարք խնդիրներ, որոնց շուրջ դեռևս ընթանում են ակտիվ քննարկումներ: Փաստենք, որ չկա հստակ ընդհանրական մոտեցում կամ մոդել: Քննարկվում են նորամուծական ներուժի գնահատման տարբեր սկզբունքներ, որոնք հատուկ են տարբեր ուղղություններին կամ ոլորտներին, մակարդակներին, ինչպես նաև երկրներին:

Նորամուծական գործունեության գնահատման համար գիտական հանրությունը քննարկում է բազմաթիվ խնդիրներ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

Ներուժի գնահատման հիմնական խնդիրը նորամուծական գործունեության համակարգի հիմնական սկզբունքի կամ մոդելի բնորոշումն է, որի հիման վրա կներկայացվեն գնահատման գործոնները: Առանձնանում են երկու մոտեցումներ՝ գիտությունից դեպի նորամուծություն, շուկայից դեպի նորամուծություն:

Առաջին մոտեցմամբ նորամուծական գործունեությունն ուղղակիորեն հիմնված է գիտական ներուժի վրա: Այն երկրներում, որտեղ հզոր է գիտական ներուժը, նորամուծական գործունեությունն առավել ակտիվ է: Այստեղ կարևոր հարցադրում է այն, թե նորամուծական գաղափարը ծնվում է գիտահետազոտական դաշտում, թե՞ դա առավել բիզնես նախաձեռնություն է: Թերևս կարելի է պնդել, որ իրականում երկու մոդելներն էլ առկա են: Մի դեպքում գիտահետազոտական գործունեությունը նորամուծության աղբյուր կարող է լինել, մեկ այլ դեպքում բիզնես գործունեությունը կամ շուկան նորամուծական խնդիր կամ նորամուծության պահանջ կարող են առաջադրել: Ըստ էության, կարող է լինել գիտություն տնտեսական դաշտից դուրս կամ առանց նորամուծության, սակայն նորամուծություն առանց տնտեսական հետևանքների չի կարելի պատկերացնել:

Գլխավոր խնդիրներից է նաև այն, թե արդյոք գիտությունը և նորամուծությունը էապես տարբեր գործունեություններ են, որոնք պետք է կառավարվեն տարբեր մոդելներով կամ որոնց պետք է աջակցել տարբեր եղանակներով, թե արդյոք այդ երկու ոլորտներին պետք է վերաբերել որպես փոխադարձ կախում ունեցողների և մեկ համակարգի մեջ: Համաձայն որոշ մոտեցումների՝ գիտահետազոտական ռեսուրսն անկասկած կարևոր դեր է խաղում բիզնես նորամուծության մեջ, սակայն հաջողակ նորամուծությունը պահանջում է գիտելիք, կարողություն և նախաձեռնություն: Ավելին՝ չկա հստակ գծված ճանապարհ հաջող հետազոտությունից դեպի նորամուծություն:

Քննարկումների կիզակետում է այսպես կոչված «նորարարական շղթան», համաձայն որի՝ յուրաքանչյուր հետազոտություն հանգեցնում է նորարարության: Գրականության մեջ դիտարկվում են նորարարական շղթայի տարբեր մոդելներ, սակայն բոլորն էլ բերում են նույն գաղափարին: Այստեղ բավական բարդ է գնահատել հետազոտության արդյունքները, որոնք դեռևս շուկայական ապրանք չեն դարձել: Ոչ մի հետազոտական գործիք այստեղ կիրառելի չէ: Կարելի է նշել, որ նորարարական շղթան «չափելի» չէ: Մյուս կողմից, հետազոտությունից նորարարություն գործընթացը ցույց է տալիս, որ այս հայեցակարգային մոդելը տալիս է հետազոտության և նորարարության միջև կապի ոչ բավարար նկարագրություն մի շարք պատճառներով: Նորարարական գործընթացների զգալի մասն սկիզբ է առնում շուկայական գաղափարից: Փոքր բաժինն է ձևավորվում նոր տեխնոլոգիական հնարավորության մեջ, և նույնիսկ ավելի փոքր բաժինն է հիմնված նոր հետազոտության վրա: Ինչպես արդեն վերը նշվել է, նորարարությունը զուտ գիտական սկզբունքի կիրառումը չէ: Դա ներառում է գիտելիքներ շատ այլ աղբյուրներից, և դժվարությունը նորարարության համակարգում գիտության և բիզնես ոլորտի միջև ճիշտ հաշվեկշիռ ապահովելու մեջ է: Գիտությունը և տեխնոլոգիան փոխկապված են: Հետազոտության ուղղությունը հաճախ որոշվում է նրանով, թե ինչ գործիքներ կարող է առաջարկել տեխնոլոգիան: Գիտության կարևոր դեր է նաև բացատրելը, թե ինչպես և ինչու են գոյություն ունեցող տեխնոլոգիաներն աշխատում (որն էլ, իր հերթին, կարող է ցույց տալ, թե ինչպես դրանք կարող են կատարելագործվել):

Կարևոր է նաև գնահատել այսպես կոչված «նորարարական» տարածքը տնտեսության մեջ: Որոշ մոտեցումներով նորարարությունները տեսանելի են բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Օրինակ՝ համաձայն որոշ աղբյուրների՝ ԱՄՆ տնտեսության հիմնական նորարարական ոլորտը համակարգային տեխնոլոգիաներն են, սակայն տարբեր երկրներում այդ ոլորտները կարող են տարբեր լինել: Որոշ աղբյուրներ փաստում են, որ տնտեսական զարգացումը չի կարող պայմանավորված լինել սոսկ «բարձր տեխնոլոգիաներ» կոչվող սեկտորով¹⁰: Նորարարական քաղաքականությունը պետք է նպաստի նորարարությանը բոլոր ոլորտներում, ոչ թե միայն կենտրոնանա բարձր տեխնոլոգիաների վրա: Կարելի է հիմք ընդունել մի այնպիսի մոտեցում, որ յուրաքանչյուր երկիր իր նորարարական ներուժը կարող է չափել՝ հենվելով այդ երկրում առավելապես զարգացած և այդ երկիրը ճանաչելի դարձրած ոլորտի ցուցանիշների վրա: Մեկ այլ խնդիր է «գիտություն – նորարարություն – բիզնես» ժամանակի լագը: Բհարկե, գիտական արդյունքը անմիջապես շուկայական ապրանք չի կարող դառնալ: Հատկապես դա

¹⁰ Lennart Elg. *Innovations and New Technology - what is the Role of Research? Implications for Public Policy*, VINNOVA Analysis VA 2014:05, Swedish Governmental Agency for Innovation Systems, April 2014.

վերաբերում է հիմնարար գիտական հետազոտություններին: Այստեղ նույնպես չի կարելի ունենալ մեկ ընդհանուր ստանդարտ: Սա ևս խնդիր է առաջացնում նորամուծական ներուժի գնահատման առումով:

Նորամուծությունը հաճախ երկար ժամանակ կարող է «մնալ օդում»՝ որպես գաղափար այն բանի, թե ինչի պետք է հասնել: Էյնշտեյնը գիտականորեն բնութագրել է լազերի բաղադրիչ մասերը դրա կիրառումից ավելի քան 60 տարի առաջ: Նորամուծությունը կիրառելու համար անհրաժեշտ կարողությունները շատ ավելի բարդ են, քան դրա հիմնական բաղադրիչների գիտական հիմքերը: Արտոնագրված գյուտից մինչև օգտակար արտադրանքի ստեղծման ժամանակը նույնպես կարող է երկար լինել:

Տարբեր հայտնագործություններ մինչև շուկայական ապրանք միմյանցից խիստ տարբեր տևողությամբ ճանապարհ են անցել: Բհարկե, հետաքրքիր կլինեն պարզաբանել նաև հիմնավորումները՝ հասկանալու համար ժամանակի լազր բացատրող պատճառները: Այստեղ կարելի է ենթադրել, որ գործոնները բազմաթիվ են, սակայն, մեր կարծիքով, պատճառներն առավելապես շուկայական են: Եթե առկա է հստակ ձևավորված շուկայական պահանջ, ապա հայտնագործությունը արագ «կհայտնվի» շուկայում: Օրինակ՝ սինթետիկ մաքրող միջոցների պահանջ շուկայում 1880-ականներին հավանաբար դեռևս չէր ձևավորվել, այսինքն՝ գիտական արդյունքը պահանջված չի եղել: Բհարկե, միանշանակ առկա են այլ գործոններ, որոնց թվում՝ նաև սուբյեկտիվ: Դրանցից են տեխնոլոգիական գործոնները: Առկա է գյուտը, սակայն վերջինիս արտադրությունը կազմակերպելը կապված է տեխնոլոգիական բարդույթների հետ: Ներկայացվածն իր հերթին նույնպես խոչընդոտ է նորամուծական տնտեսական «հետևանքների» հստակ գնահատման առումով:

ՀՀ-ում նորամուծական ներուժի գնահատման հնարավոր մոդելները

Կատարված վերլուծությունների հիման վրա ստորև դիտարկվում են մեր հանրապետությունում նորամուծական զարգացման առկա ներուժի գնահատման հնարավոր մոդելները: Արևմտյան երկրների փորձն առավել օգտակար է, սակայն, ինչպես արդեն նշվեց, այդ մոդելները չեն կարող իրականացվել համապատասխան ցուցանիշների վիճակագրության բացակայության առումով: Սակայն սա չի կարող բացառել այդ մոդելների կիրառությունը՝ որոշ ձևավոր-խություններով հանդերձ: Ռուսական փորձն այս տեսանկյունից առավել կիրառելի է, քանի որ մեր երկրում տարվող վիճակագրությունը և հետազոտությունների շրջանակը առավել համապատասխան են այդ երկրում կիրառվող մոդելներին: Տեղին է շեշտել նաև, որ ռուսական փորձն ինչ-որ չափով ներառում է արևմտյանը:

Նախ և առաջ հարկ է առանձնացնել մեր տնտեսության մեջ նորամուծական ներուժ ունեցող և գիտելիքահենք մի շարք ոլորտներ: Առաջնահերթությունը կարող է տրվել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, սակայն մեր երկրի համար ուշադրության արժանի են մի շարք այլ ոլորտներ ևս. օրինակ՝ սարքաշինությունը, դեղագործությունը: Որպես նորամուծական տարածք կարող են դիտարկվել նաև այնպիսի ավանդական ոլորտներ, որտեղ մեր երկիրը հաջողություններ է գրանցել, և որտեղ առավել մեծ է նորամուծական առաջարկների հնարավորությունը: Սա այն պարագայում, երբ նորամուծական գործունեությունը կարող է ծնվել շուկայում, և երբ արտադրությունը նորամուծության «պատվիրատու» է:

«Նորամուծական» տարածքում նորամուծությունը չափվում է արդեն ստացված արդյունքով:

ՀՀ-ում նորամուծական ներուժը կարող է գնահատվել առանձին ոլորտի համար կամ մակրոմակարդակում, քանի որ առանձին ձեռնարկությունների վերաբերյալ չկան համակարգված ցուցանիշներ:

Նորամուծական ներուժի գնահատման կարևորագույն ինդիքը համապատասխան ցուցանիշների ձևավորումն է: Մեր կողմից վերլուծվել են համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեցող բազմազան ցուցանիշներ: Միջազգային կազմակերպությունների հաշվարկած վարկանշային ցուցանիշների (նորարարական ներուժի ինդեքս... և այլն) նպատակն այլ է: Դրանք կարող են կիրառվել տարածաշրջանային համեմատությունների համար, այլ ոչ թե կոնկրետ երկրի ներուժի բացարձակ գնահատման: Սակայն այս ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը ինտեգրալ ցուցանիշների տեսակետից կարող է օգտակար լինել:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, իհարկե, տրամադրում է որոշ ցուցանիշներ, որոնք բնութագրում են գիտական հետազոտությունների ոլորտը (հետազոտության և մշակումների ծախսերը, հետազոտական կազմակերպությունների և անձնակազմի թիվը և այլն), արտոնագրային վիճակագրությունը, գիտական հրապարակումների տվյալները, ինչպես նաև ֆիանսատնտեսական և տեխնոլոգիական միջավայրի վերաբերյալ մակրոցուցանիշներ: Նորարարական ոլորտի արդյունավետության գնահատման սահմանափակ լինելն ակնհայտ է, քանի որ ընդհանուր առմամբ այդ ցուցանիշները նորարարական գործունեության մասշտաբի, արդյունքների և որակի մասին ամբողջական պատկերացում չեն տալիս: Սակայն մակրոհամակարգում նորարարական գործընթացների գնահատման և կանխատեսման եղանակների մշակման գործընթացում կարելի է օգտագործել ցուցանիշների բազմազան հավաքածուներ, ինչպես նաև ինտեգրալ ցուցանիշներ, որոնք կարելի է գեներացնել տարբեր վիճակագրական և մաթեմատիկական գործիքների, մասնավորապես կշռված միջինների օգնությամբ: Օրինակ՝ նորարարական գործունեության արդյունքները կարող են գնահատվել բյուջետային միջոցների օգտագործման և

արդյունավետության տեսանկյունից: Բիարկե, այսպիսի հետազոտություններն ընդհանուր առմամբ հնարավորություն չեն ընձեռում բարձր ճշգրտությամբ գնահատելու մակրոմակարդակում նորարարական գործունեություն: Ընդհանրացնելով տնտեսական համակարգում նորարարական ներուժի գնահատման առկա մոտեցումների ուսումնասիրությունը, մեծ մասամբ հիմնվելով ռուսական փորձի վրա՝ կարելի է առանձնացնել այն հիմնական ցուցիչների ամբողջությունը, որոնք կարող են բնութագրել մակրոմակարդակում նորարարական համակարգի զարգացման մակարդակը: Դրանք են գիտատեխնիկական զարգացման մակարդակի ցուցանիշները, շուկայական ինստիտուտների և օրենսդրության զարգացման որակական ցուցանիշները, աշխատանքային ռեսուրսների կրթական մակարդակը, ֆինանսական ցուցանիշները, գիտելիքների փոխանցման և օգտագործման ցուցանիշները, ինչպես նաև տնտեսական աճի քանակական և որակական ցուցանիշները: Նորամուծական ներուժի գնահատման նպատակով սովորաբար կիրառվում են համալիր կամ ինտեգրալ ցուցանիշներ, որոնք կարող են օգտակար լինել երկրի և տարածաշրջանի նորամուծական ռազմավարություն մշակելու համար¹¹: Բնտեգրալ ցուցանիշը ներառում է մի շարք գործոններ, որոնք կարող են տարբեր լինել՝ էլնելով տարածաշրջանի կամ պետության առանձնահատկություններից: Բնտեգրալ ցուցանիշում ներառվող յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է կիրառել որոշակի կշռային ցուցանիշներ, որոնք ստացվում են փորձագիտական եղանակով: Այդ կշիռների միջոցով ցուցանիշները կարող են հաշվարկվել տարբեր մեթոդներով՝ մասնավորապես կշռված միջինի կամ միջին երկրաչափականի: Բնտեգրալ ցուցանիշի հաշվարկման նպատակով առաջարկվում է երեք մոտեցում:

1. Հիմնվելով ինտեգրալ ցուցանիշների հաշվարկման վերը նկարագրված փորձի վրա՝ ՀՀ նորամուծական ներուժի գնահատման նպատակով կարելի է կիրառել կշռային մեթոդը: Միաժամանակ՝ տարբեր ցուցանիշների աճի ինդեքսների միջոցով կարող է իրականացվել նաև ՀՀ-ում նորամուծական ներուժի դինամիկայի վերլուծություն: Ըստ էության, կարող են դիտարկվել ցուցանիշների ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծությունները: Հաշվարկների համար սովորաբար հիմք են ընդունվում հարաբերական ցուցանիշները¹²: Նախքան ցուցանիշների ինտեգրումը փորձագիտական մեթոդով անհրաժեշտ է սահմանել կշիռներ յուրաքանչյուր ցուցանիշի համար՝ հիմնվելով հետևյալ պայմանի վրա.

¹¹ Узяков М.Н., Сапова Н. Н., Херсонский А.А. Инструментарий макро-структурного регионального прогнозирования: методические подходы и результаты расчетов (Проблемы прогнозирования, 2010, № 2).

¹² Հարաբերական մեծությունները հիմք ընդունելու տրամաբանությունը տարբեր որակի կամ չափայնության ցուցանիշները համադրելի տեսքով և չափայնությամբ (0-ից 1) ներկայացնելու մեջ է:

$$0,1 \leq k_i \leq 0,9$$

$$\sum_{i=1}^n (k_i) = 1$$

որտեղ k_i – i -րդ ցուցանիշի կշիռն է,

n -դիտարկվող ցուցանիշների թիվն է:

Բնույնաբար ցուցանիշը կրնորոշվի հետևյալ բանաձևով՝

$$I = (k_1 * C_1) + (k_2 * C_2) + \dots + (k_n * C_n)$$

որտեղ C_i – i -րդ ցուցանիշի հարաբերական մեծությունն է:

I ցուցանիշը հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա համար: Հաշվարկելով ինտեգրալ ցուցանիշների շարքի աճի տեմպերը՝ ամեն տարվա համար կարելի է վերջիններս միջինացնելով (կիրառելով միջին երկրաչափականի մոտեցումը) պատկերացում կազմել երկրի կամ տարածաշրջանի նորամուծական զարգացման դինամիկայի վերաբերյալ:

$$D = \sqrt[n]{t_1 * t_2 * \dots * t_m}$$

որտեղ D -ն նորամուծական ներուժի դինամիկայի ցուցանիշն է:

$t_1 * t_2 * \dots * t_m$ – ինտեգրալ ցուցանիշի (I) աճի տեմպերն են՝ ըստ տարիների:

Այս մոտեցման հիմնական առավելությունը հաշվարկների պարզության մեջ է: Որպես թերություն՝ կարելի է նշել ցուցանիշների կշիռների մոտավորությունը, որը կարող է հանգեցնել ոչ ճշգրիտ արդյունքների:

2. Հաշվարկվում է հարաբերական ցուցանիշների միջին երկրաչափականը, և այս պարագայում չեն կիրառվում փորձագիտական կշիռները.

$$I = \sqrt[n]{C_1 * C_2 * \dots * C_n}$$

որտեղ C_i – i -րդ ցուցանիշի հարաբերական մեծությունն է,

n - դիտարկվող ցուցանիշների թիվն է:

Համաձայն այս մոտեցման՝ տարածաշրջանի նորամուծական ներուժի բաղկացուցիչները (C_i) բերված են համեմատելի տեսքի (դիտարկվում են հարաբերական ցուցանիշները): Այս մեթոդը հիմնականում կիրառվում է մի շարք տարածաշրջանների միջև տվյալ տարածաշրջանի նորամուծական վարկանիշը բացահայտելու նպատակով: Այս մոտեցմամբ հաշվարկվել են Միբիբի դաշնային օկրուգի տարածաշրջանների 2002-2005 թթ. նորամուծական ներուժի գնահատականները¹³:

Վերոնշյալ մեթոդով կարելի է հաշվել նորամուծական ներուժի դինամիկայի ցուցանիշը (ինչպես 1-ին մոտեցմամբ):

¹³ **Алексеев С.Г.** Экономические проблемы регионов и отраслевых комплексов (Проблемы современной экономики, 2009, N 2 (30).

3. Այս մոտեցմամբ տարբեր ցուցանիշների ազդեցությունները գնահատվում են էկոնոմետրիկ մեթոդով՝ զույգային ռեգրեսիոն գործակիցների միջոցով: Նախ և առաջ նկարագրված ցուցանիշների մեջ անհրաժեշտ է առանձնացնել մեր հանրապետությունում նորամուծական ներուժը ներկայացնող առավել նշանակալի վիճակագրական ցուցանիշը (որպես արդյունքային ցուցանիշ), որը հիմնականում արտացոլում է երկրի նորամուծական ակտիվությունը: Մեր վերլուծություններով դա արդյունաբերական «նորամուծական» ճյուղերի և տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության և ծառայությունների ծավալներն են ինչպես առանձին-առանձին, այնպես էլ գումարային: Այս ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ուշադրության արժանի է և կարևորվում է նորամուծական գործունեության «հետևանքը» տնտեսության հատկապես այն հատվածի համար, որն առավել մեծ հավանականությամբ է «կլանում» նորամուծությունները: Տնտեսության այդ հատվածում է, որ իրականացվում են այնպիսի ապրանքների արտադրություն և ծառայությունների մատուցում, որոնք հատկապես վերջին հինգ տարիների ընթացքում տարբեր աստճանի տեխնոլոգիական փոփոխությունների են ենթարկվել: Հաշվարկված ցուցանիշն այլ ցուցանիշների հետ ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում առանձնացված են նաև նորամուծական ներուժը բնութագրող ցուցանիշների բացարձակ և հարաբերական արժեքները: Այս աղյուսակում հարաբերական արժեքները հաշվարկվել են բարձր ճշգրտությամբ՝ էկոնոմետրիկ հաշվարկներում զգայնության աստիճան ապահովելու նպատակով: Այդ ցուցանիշների համար կառուցվել է զույգային կորելիացիոն գործակիցների մատրիցան: Դրա հիման վրա կրնորոշվեն այն ցուցանիշները, որոնք նշանակալի կորելացված են արդյունքային գործոնի հետ, այսինքն՝ կբացահայտվեն առավել նշանակալի ցուցանիշները, որոնք կմիավորվեն ինտեգրալ ցուցանիշի մեջ:

Աղյուսակ 1

Նորամուծական ներուժն արտահայտող ցուցանիշների բացարձակ և հարաբերական արժեքները (2010-2015 թթ.)

	2010	2011	2012	2013	2014	2015
Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակը, միավոր (ՏԻ)	81	72	72	62	66	70

Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ (%) (SIR)	0.540072	0.449607	0.444637	0.381492	0.404759	0.415603
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը, մլն դրամ (SE)	7987.9	9276.6	9713.2	9355.7	10912	11929.9
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, %(SER)	2.30850638	2.455462	2.276641	2.053653	2.259856	2.370765
Գիտատեխնիկական աշխատանքներ ու մշակումներ իրականացնող գիտական աստիճան ունեցող մասնագետ-հետազոտողների քանակը, հազ. մարդ (SP)	2.2	2	2	1.9	2.1	2
Գիտական աստիճան ունեցող մասնագետ-հետազոտողների մասնաբաժինը զբաղվածների մեջ (%) (SPR)	0.18562268	0.170198	0.170532	0.163258	0.185267	0.186463
Ասպիրանտուրա ունեցող կազմակերպությունների քանակը, միավոր (AS)	51	47	47	55	62	59

Ասպիրանտուրա ունեցող կազմակերպությունների մասնաբաժինը, % (ASR)	0.34004534	0.293493	0.290249	0.33842	0.380228	0.350294
Տրված արտոնագրերի քանակը, միավոր (PT)	187	188	182	172	181	170
10000 զբաղված բնակչի հաշվով տրված արտոնագրերի քանակը, միավոր (PTR)	0.15777928	0.159986	0.155184	0.147792	0.159682	0.158493
Հիմնական կապիտալի համախառն կուտակումը, մլն դրամ (CP)	1156732	985877.2	1006835	966365.3	965486.6	1045047
Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (CPR)	33.4295878	26.09559	23.59884	21.21251	19.99506	20.76766
Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ (ծավալը, մլն դրամ) (IT)	196717.3	198739.8	213906.9	234416.1	233830.3	235423.0
SՀS արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (ITR)	5.68513804	5.260526	5.013685	5.145626	4.842584	4.678435
Արդյունաբերական նորամուծական ձյուղերի ընդհանուր ծավալը (ID) (մլն դրամ)	20780.2	22168.7	22673.9	24437.5	24623.4	26825.3
Արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (IDR)	0.60054863	0.586792	0.531445	0.536423	0.509946	0.533085

SՀS և նորամուծական արտադրանքի և ծառայությունների ծավալը (մլն դրամ) (IN)	217497.5	220908.5	236580.8	258853.6	258453.7	262248.3
SՀS և նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (INR)	6.2857	5.8473	5.5451	5.682	5.3525	5.2115

Չույգային կորելիացիոն գործակիցների մատրիցան կառուցվել է ներգրավված ցուցանիշների հարաբերական արժեքների համար: Ստացված Չույգային կորելիացիայի գործակիցների միջոցով կարելի է գնահատել նաև գործոնների կշիռները հետևյալ մոտեցմամբ.

$$K_i = \frac{R_i}{\sum_{i=1}^m R_i}$$

որտեղ K_i – i -րդ ցուցանիշի կշիռն է,

R_i – i -րդ ցուցանիշի արժեքն է (կորելիացիայի Չույգային գործակիցը),

m – նշանակալի ցուցանիշների թիվն է:

K_i կշիռը հաշվարկվում է 1-ից m բոլոր նշանակալի ցուցանիշների համար: Կորելիացիայի բացասական կամ ոչ նշանակալի գործակիցներ ունեցող ցուցանիշները չեն ընդգրկվում նշանակալի գործակիցների շարքում: Կշիռները հաշվարկելուց հետո ինտեգրալ ցուցանիշը կարող է հաշվարկվել 1-ին մոտեցմամբ:

Կատարված կորելիացիոն վերլուծության հիման վրա նախ և առաջ ընդգծվում են նորամուծական ներուժի վրա ազդող նշանակալի գործոնները դիմադրելի համատեքստում՝ կոնկրետ դեպքում վերջին 6 տարիների ընթացքում: Եթե դիտարկումների քանակը ապահովում է բավարար ազատության աստիճան, առավել նշանակալի ցուցանիշների համար կարող է կատարվել նաև ռեգրեսիոն վերլուծություն:

Կորելացված գործոնների շարքում կարող են դիտարկվել երեք արդյունքային ցուցանիշներ՝ SՀS արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (ITR), Արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), SՀS և նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (INR): Առաջին և երրորդ ցուցանիշների դեպքում (ITR, IDR) նշանակալի են երկու գործոններ՝ Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ (%) (SIR) և Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (CPR): Երկրորդ ցուցանիշի համար նշանակալի են չորս գործոններ՝

Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ (%) (SIR), Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (SER), 10000 զբաղված բնակչի հաշվով Տրված արտոնագրերի քանակը, միավոր (PTR) և Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (CPR): Իհարկե, PTR-ի համար կապը բավական թույլ է արտահայտված, սակայն համապատասխան չափով էլ դա կինտեգրվի ընդհանուր ցուցանիշի մեջ:

Ունենալով վերոնշյալ պատկերը՝ նպատակահարմար է, որպես արդյունքային դիտարկել արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (IDR) ցուցանիշը, քանի որ գործոնների թիվը 4-ն է, այսինքն՝ առավելագույնը: Միջին երկրաչափականի միջոցով երկրորդ մոտեցմամբ կարելի է հաշվարկել 2010-2015 թթ. ընթացքում ՀՀ նորամուծական ներուժի ցուցանիշը (INNP):

$$INNP_T = \sqrt[4]{C_{SIR} \cdot C_{SER} \cdot C_{PTR} \cdot C_{CPR}} = 0,49$$

Համաձայն ստացված արդյունքի՝ նորամուծական ներուժը 0-ից 1 միջակայքում գնահատվում է 0.49:

Սակայն այս ցուցանիշը չի կարող արտացոլել ընդհանուր պատկերը: Այդ նպատակով հաշվարկենք դիտարկվող 4 ցուցանիշների կշիռները և ընդգծենք դինամիկան:

Ստացված զույգային կորելիացիայի գործակիցների միջոցով կարելի է գնահատել նաև գործոնների կշիռները հետևյալ մոտեցմամբ:

$$K_i = \frac{R_i}{\sum_{i=1}^m R_i}$$

որտեղ K_i – i -րդ ցուցանիշի կշիռն է,

R_i – i -րդ ցուցանիշի արժեքն է (կորելիացիայի զույգային գործակիցը),

m – նշանակալի ցուցանիշների թիվն է:

K_i կշիռը հաշվարկվում է 1-ից m բոլոր նշանակալի ցուցանիշների համար: Կորելիացիայի բացասական կամ ոչ նշանակալի գործակիցներ ունեցող ցուցանիշները չեն ընդգրկվում նշանակալի գործակիցների շարքում: Կշիռները հաշվարկելուց հետո ինտեգրալ ցուցանիշը կարող է հաշվարկվել 1-ին մոտեցմամբ:

Մեր դեպքում առաջարկված մեթոդով հաշվարկվել են 4 նշանակալի ցուցանիշների կշիռները.

$$K_{SIR} = 0.8 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.35$$

$$K_{SER} = 0.4 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.17$$

$$K_{PTR} = 0.2 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.09$$

$$K_{CPR} = 0.9 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.39$$

Ունենալով հաշվարկված կշիռները՝ կարելի է արդեն յուրաքանչյուր տարվա համար հաշվարկել նորամուծական ներուժը և ստանալ այդ ներուժի դինամիկան: Այդ նպատակով հաշվարկվել է նորամուծական ներուժի դինամիկան յուրաքանչյուր տարվա համար (INNP): (աղյուսակ 3):


Աղյուսակ 2

Ցուցանիշների կշռված արժեքները, ինտեգրալ ցուցանիշը և ինտեգրալ ցուցանիշի աճի տեմպերը

	Գշիռները	2010	2011	2012
Քիտատեխ-նիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ (%) (SIR)	0,35	0.1890252	0.1573625	0.1556230
Հետազոտությունների և մշակումների հիման վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (SER)	0,17	0.3924461	0.4174285	0.3870290
10000 զբաղված բնակչի հաշվով տրված արտոնագրերի քանակը, միավոր (PTR)	0,09	0.0142001	0.0143987	0.0139666
Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (CPR)	0,39	13.0375392	10.1772801	9.2035476
Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշը INNP:		0.34233157	0.31322749	0.2966303
Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշի աճի տեմպերը			91.4982763	94.701224

Հաշվարկները ցույց են տալիս, որ նորամուծական ներուժի դինամիկան վերջին հինգ տարիների ընթացքում էական միտում չունի, սակայն նկատվում է որոշ չափի նվազման միտում: 2014-2015 թթ. այն ցուցաբերում է դրական աճի տեմպ:

Քճանկար 1. Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշի (INNP_i) դինամիկան 2010-2015 թթ.



Միջին աճի տեմպը հաշվարկվել է միջին երկրաչափականի մեթոդով և հավասար է 96.5-ի: Սա նշանակում է, որ վերջին 5 տարիներին ցուցանիշի աճ չի նկատվել: Այդ երևույթը բացատրվում է մեր երկրում գիտական հետազոտությունների արդյունքի և դրա առևտրայնացման միջև խզվածքով: Դա նշանակում է, որ նորամուծական ներուժի ավելացման համար, գիտական բաղադրիչի հետ մեկտեղ, հարկ է ակտիվացնել շուկայական ներդրումային գործոնը:

МЕТОДОЛОГИЯ ОЦЕНКИ ИННОВАЦИОННОГО ПОТЕНЦИАЛА**СУВАРЯН Ю. М., САРКИСЯН В. А**

Резюме

В условиях современного научно-технического прогресса инновации способствуют экономическому прогрессу. Страны, экономика которых основана на использовании природных ресурсов, в конечном счете должны выбрать путь инновационного развития. Подобная стратегия приемлема и для экономики РА. В процессе разработки инновационных методов оценки и прогнозирования на макроуровне могут быть использованы разные, а также интегрированные показатели. В качестве значительного статистического показателя инновационного потенциала для нашей страны применимы объемы производств и услуг наукоемких промышленных отраслей (химическая промышленность, фармацевтика, производство компьютерного, электронного и оптического оборудования, производство электрооборудования) и информационных технологий.

Расчеты показывают, что в нашей стране на протяжении последних пяти лет нет тенденции роста и снижения инновационного потенциала, а в 2014-2015 гг. был отмечен положительный рост.

THE METHODOLOGY OF INNOVATION POTENTIAL ESTIMATION**YU. SUVARYAN, V. SARGSYAN**

Abstract

Under modern scientific and technical progress innovative activities have an obvious impact on economic progress. Resource based economies must choose the path of innovative development, which could be a goal also for Armenian economy. For assessing and forecasting innovative activities on macro level different, as well as integrated indicators could be used. Most significant statistical indicator of innovative potential for our economy could present volumes of production and services for science consuming industry (chemical and pharmaceutical industry, computer, electronic, optical and electrical equipment manufacturing) and information technology sector. The choice of this indicator is due to the fact that this sectors could more likely to absorb innovations. Calculations show that during the past five years there was no considerable tendency for innovative potential in Armenia, but there was a positive growth rate in 2014 -2015.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ Կ. Հ.

Մարդկության պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ անվտանգության ապահովումը միշտ եղել է հասարակության գործունեության հիմնական շարժառիթը: Ըստ էության, հենց անվտանգության ապահովման ձգտումն է պայմանավորել հասարակության ռեսուրսների միավորումը, ուժային մարմինների ձևավորումը և միջազգային կառույցների ստեղծումը¹: Միննույն ժամանակ, անվտանգության համակարգի բացակայությունը կամ դրա զարգացման ոչ բավարար մակարդակը կարող է զգալի կորուստների պատճառ դառնալ: Անվտանգության գործունե համակարգի ձևավորման ուղղությամբ լուրջ մոտեցում չցուցաբերող պետությունները, հասարակությունները և անհատները, որպես կանոն, խոշոր ցնցումների էական նախադրյալներ են ստեղծում, վտանգում սեփական գոյությունը և դառնում ոչ կենսունակ:

Անվտանգության երևույթի էության ամբողջական բացահայտման համար, մեր կարծիքով, կարևոր է դրա գիտականորեն հիմնավորված սահմանումը, որը, ըստ էության, պետք է ամբողջությամբ արտացոլի սովյալ երևույթի բոլոր բնութագրական կողմերը և բացահայտի հիմնախնդրի առավել կարևոր տարրերը:

Անվտանգության հիմնախնդրի էության ամբողջական բացահայտումը ենթադրում է այդ ուղղությամբ համալիր մոտեցման կիրառում, քանի որ անվտանգությունը բազմակերպ երևույթ է: Այդ առումով գոյություն ունեցող սահմանումների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնելու այդ երևույթի հետևյալ առավել էական տարրերը:

Առաջին, նշված հիմնախնդրով զբաղվող հեղինակների զգալի մասն անվտանգությունը հասկանում է իբրև վտանգի ներքո գտնվող օբյեկտի վիճակ: Երկրորդ՝ անվտանգությունը հաճախ դիտարկվում է որպես գոյություն ունեցող սպառնալիքների պայմաններում օբյեկտի սեփական էություն և հիմնական բնութագիրը պահպանելու ընդունակություն: Երրորդ՝ անվտանգությունը, ըստ էության, ինքնակարգավորման, կանոնակարգվածության և ամբողջականության սկզբունքների վրա հիմնված և այդ համակարգի բոլոր տարրերի պաշտպանությանն ուղղված համակարգային կատեգորիա է: Դրա կարևորությունը հասկանալիս որպես պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ տարրերից յուրաքանչյուրի

¹ Տե՛ս Մարկուսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Ե., 2005, էջ 11: Տե՛ս Лесков М. А. Гомеостатические процессы и теория безопасности (Безопасность, 1994, - 4, с. 66):

վրա հնարավոր բացասական ազդեցությունը կարող է հանգեցնել ամբողջ համակարգի փլուզման: Չորրորդ՝ անվտանգությունը դիտարկվում է որպես անհատի, հասարակության և պետության կենսագործունեության վճռորոշ պայման, որի առկայության դեպքում են միայն հնարավոր սեփական նյութական և հոգևոր արժեքների պահպանությունն ու վերարտադրությունը²: Հինգերորդ՝ անվտանգությունը, բացարձակ իմաստով, նշանակում է նյութական և հոգևոր ոլորտներին ուղղված սպառնալիքների և վտանգների բացակայություն: Հատկանշական է այն հանգամանքը, որ «անվտանգություն» հասկացության գրեթե բոլոր սահմանումներում դրա հիմնական տարր դիտարկվում է սպառնալիքը՝ որպես վտանգի իրական նշան: Փաստորեն, անվտանգության գոյություն ունեցող սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառնալիքը և դրա դեմ պայքարը անվտանգության էությունն են:

Անվտանգությունը, ընդհանուր իմաստով, մի իրավիճակ է, որի պայմաններում օբյեկտին վտանգ չի սպառնում, և գոյություն ունի պաշտպանության գործուն համակարգ: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար անվտանգության մեջ լինելը դեռևս չի նշանակում ապրել առանց վտանգների: Վերջիններս գոյություն ունեն միշտ կամ գրեթե միշտ և որոշակի պայմաններում կարող են ունենալ դրական ազդեցություն՝ դառնալով անհրաժեշտ ակտիվության պատճառներից մեկը: Վտանգները հնարավոր այն դեպքերն են, որոնք կարող են էական վնաս հասցնել մարդուն, հասարակությանը, պետությանը, սոցիալական խմբերին, նրանց հոգևոր արժեքներին և դրանով իսկ սահմանափակել հասարակական զարգացման հնարավորությունները: Վտանգները և սպառնալիքները ոչ միայն անխուսափելի են, այլև «օգտակար» են մինչև որոշակի աստիճան, քանի որ դրանք ինչ-որ առումով ունեն ակտիվացնող դեր: Հետևաբար, անվտանգությունը, ավելի շուտ, ոչ թե վտանգների բացակայությունն է, այլ դրանցից պաշտպանվածությունը և, փաստորեն, անհատի, հասարակության և պետության զարգացման հիմնական պայմաններից մեկն է:

Պետական և ազգային շահերի պաշտպանվածության վիճակը անվտանգության առարկան է: Ըստ էության, անվտանգության խնդիրը այնպիսի պայմանների ձևավորման մեջ է, որոնք ապահովում են հասարակության կայուն և առաջադիմական զարգացումը: Փաստորեն, անվտանգությունը անհատի, հասարակության և պետության արտաքին և ներքին վտանգներից ու սպառնալիքներից պաշտպանվածության վիճակն է՝ հիմնված դրանց կանխարգելման, բացահայտման, չեզոքացման ուղղությամբ իրականացվող նպատակամետ գործունեության վրա:

² Տե՛ս Դուշյան Հ.Բ., ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը (Բանբեր Երևանի համալսարանի, 2000, -3, էջ 16):

Անվտանգության ապահովման ուղղությամբ գործունեությունն ընդգրկում է այն բոլոր ոլորտները, որոնցում կարող են ծագել կամ գոյություն ունենալ անհատի, հասարակության և պետության բնականոն կյանքը խաթարող գործոններ, վտանգներ և սպառնալիքներ: Այլ կերպ՝ անվտանգության սպառնալիքը դեպքերի զարգացման այնպիսի հնարավորությունն է, որի պայմաններում կստեղծվի իրական վտանգ պետության գոյության, նրա քաղաքական և տնտեսական անկախության, անհատի և հասարակության բնականոն գործունեության և զարգացման համար:


Բովանդակային առումով կարելի է առանձնացնել անվտանգության հետևյալ ոլորտները. տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական, էներգետիկ, բնապահպանական, իրավական, տեխնոլոգիական, մշակութային, մտավոր, տեղեկատվական, ժողովրդագրական, հոգեբանական և այլն³: Պետական անվտանգությունը Մահմանադրությամբ, օրենսդրությամբ և այլ միջոցներով երաշխավորված պետական շահերի պաշտպանությունն է, որի նպատակը արտաքին և ներքին վտանգներից անհատի, հասարակության և պետության պաշտպանության ապահովումն է: Ըստ էության, պետության կենսական շահերն են տարածքային ամբողջականության, բնակչության վերարտադրության, տնտեսական և սոցիալական բարեկեցության ապահովումը, ինքնագիտակցության բարձրացումը, քաղաքացիների հոգեբանական և ֆիզիկական առողջության պահպանումը, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապագա սերունդների արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ երաշխիքների ստեղծումը և այլն: Պետական անվտանգության օբյեկտներն են պետական շահերը, քաղաքացիները, հասարակությունը և պետությունը: Ըստ էության, յուրաքանչյուր երկիր շահագրգռված է քաղաքական կայուն իրավիճակի, անհատի և հասարակության գործունեության բնականոն զարգացմանը նպաստող միջավայրի ձևավորման համար:

Քաղաքական անվտանգությունը երկրի քաղաքական կյանքի պաշտպանվածության վիճակն է, որի նպատակներն են պետության ներքին և արտաքին քաղաքականությանն մշակման և իրականացման գործընթացին քաղաքացիների մասնակցության մատչելիության ապահովումը, քաղաքական իշխանության փոփոխության դեպքում պետական և ազգային շահերի պաշտպանությունը և այլն: Քաղաքական անվտանգության օբյեկտի դերում հանդես է գալիս երկրի քաղաքական կյանքը, իսկ սուբյեկտներն են իշխանության երեք թևերը՝ օրենսդիր, գործադիր և դատական:

Որպես քաղաքական անվտանգության սպառնալիք և վտանգ՝ կարելի է նշել երկրում քաղաքական զարգացած համակարգի և ընդդիմության

³ Բոստանջյան Վ., Ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները (Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Ե., 2007, էջ 131-140):

բացակայությունը, հասարակության քաղաքական կառավարման անհնարի-
նությունը և այլն: Քաղաքական անվտանգության էությունը որոշվում է արտաքին
և ներքին անկախ քաղաքականություն իրականացնելու և պետական կառավար-
ման հետ կապված հարցերի լուծման ընդունակությամբ:



Գծապատկեր 1. Պետական անվտանգության ոլորտները

Պետական անվտանգության հաջորդ կարևոր բաղադրիչը ռազմական անվտանգությունն է, որը ներառում է պետական սահմանների պաշտպանության, մարտունակ զինված ուժերի ստեղծման, բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման և ռազմական արդյունաբերության զարգացման հետ կապված հարցերը: Ռազմական անվտանգությունը, ըստ էության, արտաքին ռազմական վտանգներից բնակչության պաշտպանության և երկրի տարածքային ամբողջա-
կանության ու ինքնուրույնության պահպանման ընդունակությունն է: Ռազմական անվտանգության անհրաժեշտ նախադրյալ է ռազմական ուժերի մարտական այնպիսի պատրաստվածությունը, որը հնարավորություն կստեղծի ապահովելու երկրի պաշտպանունակությունը: Ռազմական անվտանգության օբյեկտ են

պետական շահերը, իսկ սուբյեկտի դերում հանդես են գալիս պետությունը, զինված ուժերը և ռազմաարդյունաբերական համալիրը: Որպես սպառնալիքներ՝ կարելի է նշել օտարերկրյա պետությունների և ռազմական դաշինքների ագրեսիվ մկրտումները, ռազմաարդյունաբերական համալիրի և գիտության անմխիթար վիճակը, բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը, ոլորտների ֆինանսավորման ցածր ծավալները, երկրում լրտեսական գործունեության ակտիվացումը, բնակչության հոգևոր մակարդակի անկումը և այլն: Փաստորեն, ռազմական անվտանգությունը երկրի զինված ուժերի միջոցով պետական շահերի պաշտպանության հնարավորությունն է և մեծապես կախված է բանակի մարտունակությունից, տարածաշրջանային անվտանգության համակարգերում ընդգրկվածությունից, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման աստիճանից և այլն:

Ազգային անվտանգության հաջորդ կարևոր բաղադրիչը սոցիալական անվտանգությունն է, որի ապահովումը ենթադրում է սոցիալական ոլորտում պետության և հասարակության շահերի պաշտպանությունը, սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բարեկեցիկ կենսամակարդակի ձեռքբերմանը, ապագա սերունդների համար զարգացման նախադրյալների ձևավորմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում: Սոցիալական անվտանգության օբյեկտը հասարակության մեջ ծագող սոցիալական հարաբերություններն են, իսկ սուբյեկտները՝ սոցիալական պաշտպանության պետական և հասարակական կառույցները: Որպես այդպիսիք կարելի է նշել բնակչության սոցիալական պաշտպանության հարցերով զբաղվող պետական ինստիտուտները, կազմակերպությունները, կենտրոնները, շարժումները, կուսակցությունները և այլն⁴: Ըստ էության, սոցիալական վտանգներ են առանձին խմբերի, խավերի, անհատների այնպիսի գործողությունները, որոնք ուղղված են այլ խմբերի և անհատների դեմ, սահմանափակում են վերջիններիս իրավունքները և ազատությունները, վտանգ են ներկայացնում ընտանիքի, էթնոսի, հասարակության, ժողովրդի, պետության համար և այլն: Սոցիալական ոլորտն առանցքային դեր է խաղում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության ապահովման գործում: Հենց սոցիալական ոլորտում են առավել վառ դրսևորվում ինչպես անհատի, այնպես էլ ընտանիքի, սոցիալական որոշակի խավերի և հասարակության յուրաքանչյուր անդամի շահերը: Սոցիալական ոլորտի զարգացման մակարդակով է, ըստ էության, հնարավոր գնահատել հասարակության և պետության միջև փոխհարաբերությունների կոնֆլիկտայնության աստիճանը: Սոցիալական առումով երկրի տնտեսական անվտանգության առավել լուրջ սպառնալիքներն են բնակչության եկամուտների և սպառման մակարդակների միջև կտրուկ բևեռացումը, սպառվող սպրանքների կառուցվածքի վատ-

⁴ Տե՛ս Մանասեթյան Թ., Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր, Ե., 2014:

թարացումը, աղքատության աճը, կենսապահովման նվազագույն շեմից ցածր ապրող մարդկանց քանակը և այլն:

Ազգային անվտանգության հաջորդ կարևոր բաղադրիչը բնապահպանական անվտանգությունն է, որը հասարակության և բնության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների հետևանքով ծագող հիմնախնդիր է: Ակնհայտորեն, բնապահպանական անվտանգության նպատակը պետք է լինի երկարաժամկետ հատվածում երկրի շրջակա միջավայրի կայուն և հավասարակշիռ վիճակի ապահովումը: Բնապահպանական անվտանգության օբյեկտի դերում հանդես է գալիս շրջակա միջավայրը, իսկ սուբյեկտներն են իշխանության բոլոր թները և հասարակական կազմակերպությունները: Հարկ է նշել, որ հիմնախնդիրը սրվեց հատկապես վերջին տարիներին՝ պայմանավորված համաշխարհային բնապահպանական վիճակի վատթարացմամբ: Այս առումով նշված ոլորտում անվտանգության ապահովման հիմնական խնդիրներն են բնապահպանական վտանգների կանխումը, շրջակա միջավայրին պաշտպանությունը, տնտեսական, իրավական, գիտատեխնիկական բնույթի, ինչպես նաև բնապահպանական սպառալիքների չեզոքացմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչներից է տեղեկատվական անվտանգությունը, որը, փաստորեն, հասարակության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածության այնպիսի վիճակ է, որ ապահովում է հասարակության, քաղաքացիների և պետության շահերին համապատասխան այդ միջավայրի ձևավորումը և զարգացումը: Լայն իմաստով, տեղեկատվական անվտանգությունը պետության, հասարակության և անհատի ընդունակությունն է՝ ցանկացած պայմաններում անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսների միջոցով ապահովելու սեփական բնականոն գործունեությունը: Տեղեկատվական անվտանգության օբյեկտներն են պետական, ծառայողական, առևտրային, մտավոր և անձնական շահերին առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև դրա մշակման և փոխանցման միջոցներն ու ենթակառուցվածքները, իսկ սուբյեկտները՝ պետական իշխանության մարմինները, զանգվածային լրատվության միջոցները, քաղաքացիները և հասարակական կազմակերպությունները: Տեղեկատվական անվտանգության համար լուրջ սպառնալիքներ են տեղեկատվական պատերազմները, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների հետախուզական գործունեությունը, երկրի պետական շահերին հակասող օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային հանցավոր կառույցների, ինչպես նաև տեղեկատվության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց անօրինական գործունեությունը:

Ազգային անվտանգության բաղկացուցիչների համակարգում իր կարևորությամբ առանձնանում է ժողովրդագրական անվտանգությունը, որն արտաքին և ներքին վտանգներից երկրի բնակչության կազմի և թվաքանակի

պաշտպանվածության վիճակն է և ուղղված է մարդկանց գենետիկական առողջության ու բնակչության կառուցվածքի կարգավորմանը: Ժողովրդագրական անվտանգության սպառնալիքներն են երկրի բնակչության թվի կարգավորման հնարավորությունների բացակայությունը, ընտանիքի թվաքանակի կարգավորման հարցում քաղաքացիների շահագրգռվածության բացակայությունը, սոցիալական վտանգների աճը, հասարակական դեգրադացիան, ծնելիության և մահվան հարաբերակցության անբարենպաստ աստիճանը և այլն:

Հաջորդ կարևոր բաղկացուցիչը պարենային անվտանգությունն է, որը անհատի, հասարակության և պետության անվտանգության կարևորագույն տարրերից է: Այն երկրի բնակչությանը նվազագույն առողջապահական չափաքանակներին համապատասխանող կալորիականությամբ և ծավալներով պարենամթերքով ապահովելու հայրենական արտադրողների հնարավորությունն է: Պարենային անվտանգության օբյեկտներն են պարենային մթերքների արտադրության և բաշխման ազգային համակարգը, իսկ սուբյեկտները՝ պետական իշխանության մարմինները: Պարենային անվտանգության սպառնալիք են ագրոպարենային համալիրի փլուզումը, գյուղատնտեսական արտադրության պետական կարգավորման անարդյունավետ համակարգը⁵, արտաքին արտադրողների կողմից հայրենական շուկայի վերահսկողությունը, գյուղական բնակավայրերում աշխատուժի բացակայությունը, բնակչության գնողունակ պահանջարկի անկումը և այլն:

Ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչներից է գիտատեխնիկական անվտանգությունը, որը գիտական և տեխնիկական ներուժը հասարակության պահանջունքները բավարարող մակարդակի վրա պահելու պետության ընդունակությունն է: Եթե պետությունը չունի բավարար հնարավորություններ զարգացնելու հիմնարար գիտությունները, պատրաստելու բարձր որակավորման կադրեր, աջակցելու նորագույն տեխնոլոգիաների ստեղծմանն ու ներդրմանը, ապա պետության անվտանգությունը չի կարող ապահովվել: Գիտատեխնիկական անվտանգությունը նաև հայրենական արդյունաբերության ունակությունն է՝ ապահովելու երկրի պաշտպանունակությունը և կենսագործունեությունը հնարավոր վտանգների պայմաններում: Դրա նպատակը գիտության, տեխնոլոգիաների, արդյունաբերական և հումքային բազայի պետական շահերին համահունչ զարգացումն է: Գիտատեխնիկական անվտանգության սպառնալիքներ են կրթության, գիտության, արդյունաբերական և հումքային բազայի փլուզումը, ռազմաարդյունաբերական համալիրի պետական կարգավորման անարդյունավետությունը, առաջադեմ տեխնոլոգիաների լճացումը, ուղեղների արտահոսքը, բարձր որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսների բացակայությունը, կրթության, գիտության ֆինանսավորման ցածր մակարդակը և այլն: Խնդրի կարևորությունն

⁵ Տե՛ս Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Մարգարյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Ե., 2003:

առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտատեխնիկական ներուժը որոշում է տնտեսության վիճակը և դրա զարգացման հնարավորությունները: Հետևաբար, առանց դրա շարունակական զարգացման գործնականում անհնար է երկրի պաշտպանունակության ապահովումը և տնտեսության տարբեր ճյուղերի շարունակական զարգացումը:

Ազգային անվտանգության համակարգում գլխավոր տեղը զբաղեցնում է տնտեսական անվտանգությունը: Դա պայմանավորված է հատկապես նրանով, որ ինչպես ազգային, այնպես էլ դրա մյուս բաղկացուցիչների անվտանգության ապահովումը, նախ և առաջ, ենթադրում է զարգացած տնտեսական համակարգի առկայություն: Ակնհայտորեն, տնտեսության զարգացման համար խիստ կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է երկրի տնտեսական անվտանգությունը, որի ապահովումը տնտեսության կայուն զարգացման պայմանն է:

Տնտեսական անվտանգությունը պատմականորեն դիտարկվում է որպես տնտեսական համակարգի կարևորագույն որակական բնութագրիչ, որը ցույց է տալիս բնակչության բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, տնտեսությանը համապատասխան ռեսուրսներով ապահովելու և, որ ամենակարևորն է, ազգային պետական շահերի իրացման առումով պետության ընդունակությունը⁶: Տնտեսական անվտանգության՝ որպես ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչ ապահովման անհրաժեշտությունն էականորեն աճում է հատկապես տնտեսության ճգնաժամային փուլերում:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգությունը կարելի է սահմանել որպես արտաքին և ներքին սպառնալիքներից պետության, հասարակության, տարածաշրջանի, տնտեսավարող սուբյեկտների և անհատի տնտեսական շահերի պաշտպանվածության վիճակ: Այն կարևոր տեղ է զբաղեցնում ազգային անվտանգության համակարգում, որի խնդիրն է ապահովել երկրի հուսալի պաշտպանունակությունը, հասարակության սոցիալական համերաշխությունը, էկոլոգիական աղետներից պաշտպանվածությունը և, վերջին հաշվով, տնտեսության կայուն զարգացումը: Այստեղ ամեն ինչ փոխկապակցված է, և մի ուղղությունը լրացնում է մյուսին. չի կարող լինել ռազմական անվտանգություն թույլ և անարդյունավետ տնտեսության պայմաններում, և միևնույն ժամանակ, չի կարող լինել ռազմական և տնտեսական անվտանգություն համընդհանուր սոցիալական կոնֆլիկտների պայմաններում: Ընդգծելով նման փոխկապակցվածությունը՝ միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ այդ համակարգում բազիսային և առանցքային տեղ զբաղեցնում է տնտեսական անվտանգությունը, քանի որ տնտեսական

⁶Տե՛ս Բոստանջյան Վ., Պետության դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում, ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները (Գիտական հոդվածների ժողովածու, 8, Ե., 2006, էջ 323-327):

համակարգի բոլոր օղակների զարգացումն ուղղակիորեն կախված է տնտեսության զարգացման մակարդակից:

Այսպիսով, տնտեսական անվտանգությունը պայմանների և գործոնների այնպիսի համախումբ է, որն ապահովում է երկրի տնտեսության կայունությունը և նպաստում դրա արդյունավետ զարգացմանը: Տնտեսական անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառնություններից է: Տնտեսական անվտանգությունը տնտեսության և պետական իշխանության ինստիտուտների այնպիսի վիճակ է, որի պայմաններում ապահովվում և երաշխավորվում է անհատի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ В СИСТЕМЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

АВETИСЯН К. Г.

Резюме

В системе национальной безопасности особую роль играет экономическая безопасность, обеспечение которой является важнейшей функцией любого государства. Экономическая безопасность представляет собой такое состояние экономики и институтов государственной власти, при котором гарантируется защита интересов личности, общества и государства.

THE ECONOMIC SECURITY IN THE NATIONAL SECURITY SYSTEM

K. AVETISYAN

Abstract

Economic security performs a special role in the national security system, the protection of which is the most important function of any state. The economic security is such a state of the economy and state institutions at which the protection of interests of an individual, society, and state is guaranteed.

ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՍՈՂԵԼԸ

ՆԱԼԶԱԶՅԱՆ Թ.Ա., ԱՂԱԶԱՆՅԱՆ Լ.Հ., ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ն.Գ.

Ավիաընկերությունների համար առաջնային խնդիր է գործունեության արդյունավետության բարձրացումը: Այդ նպատակով նրանք փնտրում են ինքնաթիռների օպտիմալ շահագործման տարբերակներ: Ինքնաթիռների օպտիմալ շահագործումը թույլ է տալիս նշանակալիորեն կրճատել ավիաընկերության ծախսերը՝ բարձրացնելով նրա գործունեության կարևորագույն ցուցանիշը՝ շահույթը:

Հիմնահարցը գիտնականների ուշադրության կենտրոնում է: Նրանք խնդրի լուծման համար ներկայացրել են ինչպես տեսական առաջարկներ¹, այնպես էլ մշակել են ինքնաթիռների շահագործման գործընթացն օպտիմալացնող մոդելներ²:

Ստորև դիտարկում ենք ավիավառելիքի սահմանային ծախսը՝ նկատի առնելով դրա արդյունավետության չափանիշը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ավիաընկերության ծախսերի մեջ հիմնականը ավիավառելիքի վրա կատարվողներն են: Դրանք կազմում են ընդհանուր ծախսերի շուրջ 30-40%-ը³: Չվերթների ինքնաթիռները կցելու լավագույն տարբերակը կարող է ապահովել ավիավառելիքի հետ կապված ծախսերի զգալի տնտեսումներ:

Ինքնաթիռների օպտիմալ հատկացումների առաջարկվող մոդելն ապահովում է այդ լավագույն տարբերակը: Այն հնարավորություն է տալիս պարզելու, թե առկա ինքնաթիռներից որն է առավել նպատակահարմար կցելու յուրաքանչյուր չվերթին, որպեսզի ավիավառելիքի ծախսը լինի նվազագույնը:

Այդ նպատակով անհրաժեշտ է կառուցել ավիաընկերության արդյունավետության A_{ij} մատրիցը, որը ներկայացնում է հնարավորությունների, ծանրաբեռնվածության, հեռավորությունների և վառելիքի սահմանային ծախսի մատրիցների արտադրյալը.

$$A_{ij} = a_{ij} * M_{ij} * r_{ij} * c_{ij} \quad (1),$$

$i=1,2\dots n$; $j=1,2\dots m$, որտեղ a_{ij} -ն ավիաընկերության հնարավորությունների մատրիցն է, M_{ij} -ը՝ ավիաընկերության չվերթների ծանրաբեռնվածության մատրիցը, r_{ij} -ը՝ չվերթների հեռավորությունների մատրիցը, c_{ij} -ն՝ վառելիքի սահմանային ծախսերի մատրիցը: Այդ մոդելը թույլ է տալիս շարաթվա յուրաքանչյուր օրվա համար կառուցված արդյունավետության մատրիցներում ընտրել վառելիքի նվազագույն

¹ Каракуц М. А. Проблемы оптимизации маршрутной сети и парка воздушных судов как специфической задачи стратегического управления деятельностью авиакомпании (Научный вестник МГТУ ГА, 2015, № 214). Припадчев А. Д. Определение оптимального парка воздушных судов, М., 2009.

² Петрунин С. В. Методология управления использованием воздушных судов в российских авиакомпаниях, М., 2009.

³ Припадчев А. Д., նշվ. աշխ., էջ 15:

սահմանային ծախսով ինքնաթիռը. դա կարող է ապահովել ավիավառելիքի հետ կապված ծախսերի զգալի տնտեսումներ:

Մոդելի մշակման համար անհրաժեշտ տվյալներն են ավիաընկերության չվերթները՝ նշանակման կետերը, դրանց հեռավորությունը մեկնելու կետից, չվերթների իրականացման օրերը, ավիաընկերության կողմից շահագործվող ինքնաթիռների տեխնիկական բնութագրերը՝ նստատեղերի առավելագույն քանակը (m_{max}), թռիչքի երկարությունը, վառելիքի սահմանային ծախսը (գրամ/ուղևորկմ):

Հաշվի առնելով ուղղությունների հեռավորությունը մեկնելու կետից և առկա ինքնաթիռների թռիչքի երկարությունը՝ յուրաքանչյուր ինքնաթիռի համար կազմվում է տվյալ ուղղությամբ չվերթ իրականացնելու հնարավորության մատրիցը (a_i) (աղ. 1), որտեղ նշված «1»-ը վկայում է տվյալ ինքնաթիռով դեպի տվյալ քաղաք չվերթ իրականացնելու հնարավորության մասին, այսինքն՝ տվյալ քաղաքի հեռավորությունը մեկնելու կետից փոքր է կամ հավասար տվյալ ինքնաթիռի թռիչքի երկարությանը, իսկ «0»-ն՝ այն մասին, որ տվյալ քաղաքի հեռավորությունը մեկնելու կետից ավելի մեծ է քան տվյալ ինքնաթիռի թռիչքի երկարությունը, այսինքն՝ այդ ինքնաթիռով տվյալ քաղաք փոխադրումն իրականացնելն անհնար է:

Աղյուսակ 1

Ավիաընկերության հնարավորությունների մատրից

	Նշանակման կետ I	Նշանակման կետ II	Նշանակման կետ III
Ինքնաթիռ I	1	1	0
Ինքնաթիռ II	0	1	1
Ինքնաթիռ III	0	1	0

Սակայն, երբ հաշվի ենք առնում դեպի տրված քաղաքներ չվերթներ իրականացնելու օրերը, անհրաժեշտություն է առաջանում շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար կառուցել հնարավորությունների մատրից: Օրինակ, երկուշաբթի օրվա համար հնարավորությունների մատրիցը կարող է ունենալ աղյուսակ 2-ում բերված տեսքը, որը ցույց է տալիս, որ առկա երեք ինքնաթիռներից ոչ մեկը երկուշաբթի օրը չի կարող մեկնել 2-րդ նշանակման կետ: Նշենք, որ բոլոր քննարկվող մատրիցների ($n \times m$) չափողականությունները հավասար են, ընդ որում, n -ն ավիաընկերության ինքնաթիռների քանակն է, իսկ m -ը՝ նշանակման կետերի թիվը, այսինքն՝ այն քաղաքների թիվը, ուր իրականացվում են չվերթները:

Ավիարնկերության հնարավորությունների մատրիցը երկուշաբթի օրվա համար

	Նշանակման կետ I	Նշանակման կետ II	Նշանակման կետ III
Ինքնաթիռ I	1		0
Ինքնաթիռ II	0		1
Ինքնաթիռ III	0		0

Հնարավորությունների մատրիցում նշված «1»-ը վկայում է այն մասին, որ երկուշաբթի օրը չվացուցակով նախատեսված են չվերթներ դեպի 1-ին և 3-րդ նշանակման կետեր, որոնք հնարավոր է իրականացնել տվյալ ինքնաթիռով, «0»-ն ցույց է տալիս, որ տվյալ ուղղությամբ չվերթը հնարավոր չէ իրականացնել այդ ինքնաթիռով, իսկ դատարկ վանդակները խոսում են այն մասին, որ երկուշաբթի օրը դեպի 2-րդ նշանակման կետ չվերթ նախատեսված չէ:

Չվերթների ծանրաբեռնվածության M_{ij} ($0 \leq M_{ij} \leq 1$) մատրիցի տարրերը հաշվարկվում են տվյալ չվերթի համար վաճառված ավիատոմսերի m_{ij} քանակը բաժանելով ինքնաթիռի նստատեղերի առավելագույն քանակի վրա (m_{max}):

Հաշվի առնելով քաղաքների հեռավորությունը մեկնելու կետից և ավիարնկերությունում առկա ինքնաթիռների վառելիքի սահմանային ծախսը՝ կառուցվում են հեռավորությունների և վառելիքի սահմանային ծախսի հաստատուն մատրիցները (r_{ij} և c_{ij}), այսինքն՝ դրանց տարրերը ժամանակի ընթացքում չեն փոխվում, մինչդեռ նախորդ մատրիցների տարրերը ամեն օր փոփոխվում են:

Հնարավորությունների, ծանրաբեռնվածության, հեռավորությունների և վառելիքի սահմանային ծախսի մատրիցների արտադրյալի հիման վրա կառուցում են արդյունավետության մատրիցները (A_{ij}) շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար:

Չվերթներին ինքնաթիռների օպտիմալ կցումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար կառուցված արդյունավետության մատրիցներում ընտրել վառելիքի նվազագույն սահմանային ծախս ապահովող ինքնաթիռը:

Եթե մի քանի չվերթների համար վառելիքի նվազագույն սահմանային ծախս է ապահովում միևնույն ինքնաթիռը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ չվերթների չվացուցակը (վերթի ռու վայրէջքի ժամերը) և հնարավորության դեպքում տվյալ ինքնաթիռով իրականացնել երկու չվերթ: Որպես օրինակ՝ մշակվել է ինքնաթիռների օպտիմալ հատկացումների տեղեկատվական մոդել հետազոտության պահին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող «Արմենիա» ավիարնկերության համար: Մոդելի մշակմանն անհրաժեշտ պայմանական տվյալները ներկայացված են № 3 և № 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

«Արմենիա» ավիաընկերության պլանավորվող չվացուցակը⁴

№	Ուղղությունը	Հեռավորությունը Երևանից (կմ) (Lj)	Չվերթի իրականացման օրը
1	Մոսկվա	1804	I, II, III, IV, V, VI, VII
2	Սոչի	549	II, VII
3	Ռոստով	1927	V
4	Միներալնիե Վոդի	462	IV, VII
5	Սամարա	1509	III
6	Թել Ավիվ	1256	IV
7	Մինսկ	1986	I, III
8	Կիև	1578	VI
9	Թեհրան	785	V
10	Դուբայ	1935	II, VII
11	Լոնդոն	3623	VI
12	Լառնակա	1124	IV
13	Պրահա	2587	I, V
14	Բարսելոն	3542	VII

Աղյուսակ 4

«Արմենիա» ավիաընկերությունում առկա ինքնաթիռների տեխնիկական բնութագրերը⁵

Ինքնաթիռի տիպը	Նստատեղերի առավելագույն քանակը (m _{max})	Թռիչքի երկարությունը (կմ)	Վառելիքի սահմանային ծախսը (գրամ/ուղևոր-կմ)
CRJ-200	50	2500	11.6
B-737-500	108	3400	25.5
B-737-700	146	6040	28.3
B-737-800	160	5400	32.2

⁴ Չվացուցակի տվյալները տե՛ս <http://www.arminfo.am/index.-cfm?objectid=EEE4E140-F02D-11E5-99870EB7C0D21663>

⁵ Ինքնաթիռների տեխնիկական բնութագրերը տե՛ս <http://www.airlines-inform.ru/commercial-aircraft/>

«Արմենիա» ավիաընկերությունում առկա 4 ինքնաթիռներով չվերթ իրականացնելու հնարավորության մատրիցը (a_{ij}) ներկայացված է N° 5 աղյուսակում:

Աղյուսակ 5

«Արմենիա» ավիաընկերության հնարավորությունների մատրիցը

Ինքնաթիռ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200	1	1	1	1	1	1	1	1	1	1	0	1	0	0
B-737-500	1	1	1	1	1	1	1	1	1	1	0	1	1	0
B-737-700	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
B-737-800	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1

«Արմենիա» ավիաընկերության հնարավորությունների մատրիցը երկուշաբթի օրվա համար կունենա հետևյալ տեսքը (աղ. 6).

Աղյուսակ 6

Ինքնաթիռ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200	1						1						0	
B-737-500	1						1						1	
B-737-700	1						1						1	
B-737-800	1						1						1	

Այս մատրիցում նշված «1»-ը վկայում է այն մասին, որ երկուշաբթի օրը չվացուցակով նախատեսված են չվերթներ դեպի նշանակման կետեր (1), (7) և (13), որոնք հնարավոր է իրականացնել բոլոր ինքնաթիռներով, միայն Պրահա ուղղությամբ չվերթը հնարավոր չէ իրականացնել CRJ-200 ինքնաթիռով (աղ. 5):

Չվերթների ծանրաբեռնվածության մատրիցը հաշվարկելու համար անհրաժեշտ տվյալները (վաճառված ավիատոմսերի պայմանական քանակը) ներկայացված են N° 7 աղյուսակում:

Աղյուսակ 7

Վաճառված ավիատոմսերի քանակը (թվերը պայմանական են. լրացվում են թռիչքից 24-36 ժամ առաջ)

N°	Ուղղություն	Վաճառված ավիատոմսերի քանակ (m_{ij})
1	Մոսկվա	142
2	Մոսկի	120

3	Ռոստով	85
4	Միներալնիե Վոդի	102
5	Սամարա	90
6	Թել Ավիվ	47
7	Մինսկ	50
8	Կիև	106
9	Թեհրան	43
10	Դուբայ	125
11	Լոնդոն	92
12	Լաթնակա	133
13	Պրահա	78
14	Բարսելոն	132

Հաշվի առնելով վերոնշյալ տվյալները՝ չվերթի ծանրաբեռնվածության մատրիցը կունենա հետևյալ տեսքը (աղ. 8):

Աղյուսակ 8

Չվերթների ծանրաբեռնվածության մատրից (M_{ij} , թվերը պայմանական են. $0 \leq M_{ij} \leq 1$)

Բնօրինակ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200						0.9	1		0.8					
B-737-500			0.7	0.9	0.8	0.4	0.4	0.9	0.4				0.7	
B-737-700	0.9	0.8	0.5	0.7	0.6	0.3	0.3	0.7	0.3	0.8	0.6	0.9	0.5	0.9
B-737-800	0.8	0.7	0.5	0.6	0.5	0.2	0.3	0.6	0.2	0.7	0.5	0.8	0.4	0.8

Այս մատրիցում չլրացված վանդակները վկայում են այն մասին, որ տվյալ քաղաքի հեռավորությունը Երևանից ավելի մեծ է քան տվյալ ինքնաթիռի թռիչքի երկարությունը, կամ չվերթի համար վաճառված ավիատոմսերի քանակը մեծ է ինքնաթիռի նստատեղերի առավելագույն քանակից:

Հաշվի առնելով քաղաքների հեռավորությունը Երևանից և ավիարնկերությունում առկա ինքնաթիռների վառելիքի սահմանային ծախսը՝ կառուցենք հեռավորությունների և վառելիքի սահմանային ծախսի հաստատուն մատրիցները:

Աղյուսակ 9

Հեռավորությունների մատրից (r_{ij} , կմ)

Բնօրինակ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200	1804	549	1927	462	1509	1256	1986	1578	785	1935	3623	1124	2587	3542
B-737-500	1804	549	1927	462	1509	1256	1986	1578	785	1935	3623	1124	2587	3542
B-737-700	1804	549	1927	462	1509	1256	1986	1578	785	1935	3623	1124	2587	3542
B-737-800	1804	549	1927	462	1509	1256	1986	1578	785	1935	3623	1124	2587	3542

Վառելիքի սահմանային ծախսի մատրից (ս, գրամ/ուղևոր-կմ)

Բնթևաթիւ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200	11.6	11.6	11.6	11.6	11.6	11.6	11.6	11.6	11.6	11.6		11.6		
B-737-500	25.5	25.5	25.5	25.5	25.5	25.5	25.5	25.5	25.5	25.5		25.5	25.5	
B-737-700	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3	28.3
B-737-800	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2	32.2

Այս մատրիցում չլրացված վանդակները ցույց են տալիս, որ տվյալ քաղաքի հեռավորությունը Երևանից ավելի մեծ է քան տվյալ ինքնաթիռի թռիչքի երկարությունը, այսինքն՝ այդ ինքնաթիռով դեպի տվյալ քաղաք փոխադրումն իրականացնելն անհնար է:

Հնարավորությունների, ծանրաբեռնվածության, հեռավորությունների և վառելիքի սահմանային ծախսի մատրիցների արտադրյալի հիման վրա (1) բանաձևով կառուցվում են «Արմենիա» ավիաընկերության արդյունավետության մատրիցները (A_{ij}) շարաթվա յուրաքանչյուր օրվա համար: Օրինակ՝ երկուշաբթի օրվա համար այդ մատրիցը կունենա աղյուսակ 11-ում բերված տեսքը, որտեղ ինքնաթիռների օպտիմալ կցումներն ընդգծված են:

«Արմենիա» ավիաընկերության արդյունավետության մատրիցը երկուշաբթի օրվա համար (կգ/ուղևոր)

Բնթևաթիւ	Քաղաքներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
CRJ-200							23.04							
B-737-500							23.3						47.5	
B-737-700	49.5						19.1						38.8	
B-737-800	51.7						19.82						40.8	

Այսինքն՝ դիտարկվող երկուշաբթի օրը CRJ-200 մականիշի ինքնաթիռը պետք է հասկացնել 7-րդ չվերթին (Մինսկ), B-737-700 մականիշի ինքնաթիռը՝ Մոսկվա մեկնող առաջին չվերթին, B-737-800 մականիշի ինքնաթիռը՝ 13-րդ չվերթին (Պրահա), իսկ B-737-500 մականիշի ինքնաթիռն այդ օրը որևէ չվերթ չի իրականացնի:

Ինքնաթիռների ոչ օպտիմալ շահագործումը, ինչպես նաև դրանց երկարատև կանգառները բնորոշ են գրեթե բոլոր ավիաընկերություններին: Այդ խնդիրը խոչընդոտում է ավիաընկերությունների բարեհաջող գործունեությունը և հետագա զարգացումը⁶:

⁶ Петрунин С. В., նշվ. աշխ., էջ 3:

Այսպիսով, առաջարկվող տեղեկատվական մոդելը գործնականում հնարավոր է կիրառել ցանկացած երկրում, ցանկացած ավիաընկերության համար: Անհրաժեշտ մատրիցներն ունենալու դեպքում նախատեսված օպտիմալ հատկացումների խնդրի լուծումը կարելի է ավտոմատացնել: Այս սկզբունքի և մոդելի կիրառումը ձեռնտու կլինի առավել հզոր ավիաընկերություններին, քանի որ $(n \times m)$ չափողականությամբ մեծ մատրիցների դեպքում թռիչքներից մի քանի ժամ առաջ պահանջվող հաշվարկների ծավալը կլինի չափազանց մեծ, ինչը հնարավոր է իրականացնել միայն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

МОДЕЛЬ ОПТИМАЛЬНОЙ РАССТАНОВКИ ВОЗДУШНЫХ СУДОВ

НАЛЧАДЖЯН Т.А., АГАДЖАНЫАН Л.Г., МНАЦАКАНЫАН Н.Г.

Резюме

Оптимальное использование воздушных судов позволяет существенно сократить расходы авиакомпании и, как следствие, повысить важнейший показатель производственно-финансовой деятельности – прибыль. Предлагаемая модель оптимальной расстановки воздушных судов обеспечивает лучший вариант прикрепления воздушных судов к рейсам. Данная модель позволяет из матриц эффективности, построенных для каждого дня недели, выбрать воздушное судно, у которого удельный расход авиатоплива минимальный, и тем самым обеспечить значительную экономию расходов на авиатопливо.

THE MODEL OF AIRCRAFT OPTIMAL ALIGNMENT

T. NALCHAJYAN, L. AGHAJANYAN, N. MNATSAKANYAN

Abstract

The aircrafts' optimal using can significantly reduce airline costs and as a result improve key indicator of production and financial activities-profit. The proposed model of aircraft optimal alignment provides the best option of the aircrafts' attachments to the flights. This model allows to select from each day of the week designed matrix the aircraft, which specific fuel consumption is minimum, thereby significant saving of costs for aviation fuel is provided.

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

ԳԱԼՍՅԱՆ Ա. Վ.

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրության մետաժանրը¹ հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը և օրագրությունը:

Ուսումնասիրությունները փաստում են, որ XIX դ. երկրորդ կեսի գեղարվեստական վավերագրության բառային կազմի մեջ ընդհանուր համագործածական բառերին ձուլված են լեզվական տարբեր բառամիավորներ, ասել է, թե՛ ընդհանուր բառապաշարը ներառում է միկրոհամակարգեր՝ գրաբարյան բառաձևեր և արտահայտություններ, բարբառային բառաձևեր, ժողովրդական-խոսակցական բառեր և արտահայտություններ, արևմտահայերեն բառեր, նորաբանություններ, փոխառություններ, հնաբառեր և այլն:

Ըստ Ն. Աճառյանի՝ աշխարհաբարի գրական նմուշներում երկու հատկություն է նկատվում. 1. գրաբարի առատ խառնուրդ, 2. տեղական բարբառների կնիք²: Պետք է հստակ նշել, որ XIX դ. ձևավորվող արևելահայ գրական լեզվի բառապաշարային հիմքը գրաբարն է, որն իր դիրքերը աստիճանաբար զիջում է գրական աշխարհաբարին: Դա պայմանավորված է տվյալ հանրության ազգային նոր լեզվի գրականացման և ընդհանրացման գործընթացով:

Արդ, դիտարկենք առաջադիր ստեղծագործությունների լեզվական տիրույթի գրաբարյան և բարբառային բառաձևերն ու արտահայտությունները, դրանց լեզվատճական նրբերանգները:

Հուշերում, ինքնակենսագրական երկերում, ճամփորդական տպավորություններում նշված բառաշերտերի գործածությունը պայմանավորված է ոչ միայն տվյալ միջավայրին համապատասխան երանգավորում ստեղծելու անհրաժեշտությամբ, այլ նաև տեքստի բովանդակությամբ և մեմուարի հեղինակի ոճի անհատականությամբ: Ճշգրիտ բառընտրությունը հեղինակների էական խնդիրներից է. այս

¹ Մետա-(հուն. meta-հետո, համար, միջոցով) եզրույթը նշանակում է կառուցվածքային որոշակի ամբողջություն, որը կարող է այլ կառուցվածքների նկարագրության հիմքը դառնալ, օրինակ՝ մետալեզու, մետատեքստ, մետատեսություն և այլն:

² Աճառյան Ն., Հայոց լեզվի պատմություն, մաս 2-րդ, Ե., 1951, էջ 445:

պարագայում հուշագիրների, ուղեգիրների հնարավորությունները, կարելի է ասել, անսահմանափակ են:

Գեղարվեստական վավերագրության հեղինակների խնդիրն է այնպիսի բառապաշար գործածելը, որը կհամապատասխաներ տվյալ ժանրատեսակի թեմատիկային, ոճական համակարգին և նկարագրվող «հերոսների» աշխարհայացքին ու գործունեությանը: Վերջի-վերջո, բառապաշարը պայմանավորվում է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են թեման, պատկերվող միջավայրը, ժամանակաշրջանը և այլն: Դիտարկումները փաստում են, որ մեր ուսումնասիրության բառապաշարային դաշտը բազմաշերտ է:

XIX դ. երկրորդ կեսի արևելահայ գեղարվեստական վավերագրությունն արժեքավոր է ոչ միայն իբրև գեղարվեստական-վավերագրական ժանր, այլ նաև գրական արևելահայերենի գեղարվեստականացման միջոց: Առաջադիր լեզվատիրություն առավել ուշագրավ են Պ. Պոռոշյանի «Հուշիկները», Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» մեմուարային երկի, ինչպես նաև Բաֆֆու «Ճանապարհորդություն Պարսկաստանի», «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս», «Երկու ամիս Ադվանից և Սյունյաց աշխարհներում» ուղեգրությունների բառապաշարային առանձնահատկությունները:

Գրաբարյան բառեր: Ինչպես Պ. Պոռոշյանի «Հուշիկներում», այնպես էլ Բաֆֆու «Ճանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրության մեջ հաճախակի գործածվում են հատկապես գրաբարյան հոլովման դերանվանական ձևերը:

Գործածության մեծ հաճախականություն ունի **յուր** պակասավոր դերանունը. «Խեղճ հայրս անդադար կրկնում էր **յուր** ազնվական ծագման մասին» (Պ, 38): «Մեսրոպը ավելի կատաղեց, երբ լսեց **յուր** համար միշտ պիղծ համարված նրա անունը» (Ը, 14): «Նա... տակավին չէր կորցրել **յուր** հիշողությունը» (Ը, 18): Առկա է նաև հոլովված **յուրյանց** ձևը. «**Յուրյանց** երեխաներով, աղջիկներով, հարսներով և տղամարդերով գնում էին ուխտ դեպի Ս. Նախավկայի վանքը» (Ը, 14): «Հրամայեց ամենին պատրաստ ունենալ **յուրյանց** գենքերը» (Ը, 10):

Ակտիվ են նաև **սա**, **դա**, **նա** դերանունների գրաբարյան հոլովաձևերը, որոնք գործածվում են գոյականաբար. «Ես լսում էի Առաքել վարժապետի ինքնագովություններն ու հեզնական ժպիտով համեմատություն անում **սորա** և Հակոբ վարժապետի մեջ» (Պ, 132): «Բայց ո՞ր է այսօր մեր մեջ **դորա** շավղով գնացողը» (Պ, 182): «**Նորա** մեռած երկու-երեք օրը կաթողիկոսը ինձ ու Մկրտչին յուր մոտ չընդունեց» (Պ, 70): «Հարձակվում են ճանապարհորդների վերա, կողոպտում են **նորանց**» (Ը, 10): «Երկրորդ օրը մեզ տարան տեսուչների սենյակը. երկու հոգի էին **նորա**» (Պ, 67):

Այս դերանունները կապերի հետ կարող են արտահայտել նաև այլ հարաբերություններ. «**Նորա համար**, որ թուրքերն եթե գիտենան նա փող ունի, բոլորը կկողոպտեն» (Ը, 47): «**Բացի դոցանից**, հողի մշակության պայմաններն գյուղացիների հետ, նրանց զանազան տուրքերն ու հարկերն ամեն տեղ միատեսակ չեն» (Ը, 51-52):

XIX դ. երկրորդ կեսի գեղարվեստավերագրական բնագրերում գործածական են նաև **ամենեքյան** և **բոլորեքյան** որոշյալ դերանունները. «**Ամենեքյան** շփոթվում են, ոտքի են կանգնում, բայց կաթողիկոսը ձեռքով նշանացի է անում» (Պ, 83): «**Բոլորեքյան** հավատացած են եղել...» (Պ, 82):

Հաճախակի գործածություն ունեն գրաբարյան հոգնակի բառաձևերը: Համակարգային բոլոր կազմավորումների հոգնակիակազմ հիմքը ուղղականում զուգորդվում է **ք** հոգնակերտ-հոլովակերտի հետ. «Երեք էին այն ժամանակ **հոգաբարձուք**. Դավիթ Խերողինյանց, Դավիթ Թամաւաւջանց և Յազոր Մանդինյանց» (Պ, 70): «Հերարձակ, մեծամորուս, ընտանիքի տեր **տիրացուքը** հավաքվեցին դպրոց և սկսան հաճախել կրոնի, երգեցողության և հայոց լեզվի դասերին» (Պ, 80): «Հաճախում էին նմանապես **իշխանուհիք** և ազնվական օրիորդներ» (Պ, 85): «- **Երեխա յք**, ձեր վարժապետն ինձ խոստացել է այսուհետև ձեռք բոլորովին վերացնել» (Պ, 38): «Կաթողիկոսի անմիջական սեղանակիցներն էին...կոնսիստորի երկու անդամները՝ Սահառունի տեր Սահակ և Սայաթնյան տեր Մովսես ավագ **քահանայք**» (Պ, 84): «Մենք երբ տեսանք, որ **ծառայքը** մոտ են, թողինք Արզանյանցին և շտապեցինք վանքը» (Պ, 185): «...Նոր **առարկայք** էլ չես ուզում մտցնել» (Պ, 38):

Պ. Պոռչյանի «Հուշիկներ» հուշագրության մեջ առկա է **առարկայք-առարկաներ** զուգաձևությունը: Երկուսն էլ գործածվում են հերոսների խոսքում՝ որոշակի ոճավորում ստեղծելու նպատակով: Երկրորդ դեպքում խոսողը Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Շանջանցն է. «Թայիրյանը... հառաջ համակարծիք էր ինձ հետ նոր դասարաններ բանալու և առարկաներ մտցնելու համար...» (Պ, 127):

Բնագրային օրինակներից նկատելի է, որ XIX դ. 60-ական թվականներից սկսած՝ նույն բովանդակությունը լեզվական մի քանի ձևերով արտահայտելը սովորական երևույթ էր դարձել: Ստեղծվել էր լեզվական զուգաձևությունների մի քառու, որից անհրաժեշտ էր ընտրել և «քաղաքացիություն» տալ լեզվական այնպիսի ձևերի, որոնք համապատասխանում էին ժամանակի լեզվագագացողությանը: «Հուշիկներում» գործածական են **եկեղեցվո-եկեղեցու** զուգահեռները. «Նա առանց ապացույցի կամենում է հաստատել, որ ...հայ **եկեղեցվո** ձեսերը, ձեռնադրությունը և ուրիշ խորհուրդներն ավելորդ էք համարում» (Պ, 187): «Եկեղեցու բակը մաքրեցինք» (Պ, 47): Նույն բառազույգը գործածական է նաև Բաֆֆու ուղեգրություններում,

այսպես՝ «Մյուս օրը ինդրեցի, որ իմ կացարանը տեղափոխեն **եկեղեցու** գավիթում»։ «**Եկեղեցվո** գավիթում կային բավական մաքուր սենյակներ» (Ը, 70)։ Այսպիսի գուգաձևություններ առկա են նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանի հուշագրական այլ աղբյուրներում։ **Կյուրակի-կիրակի** բառագույգը գործածված է Ե. Շահագիզի «Ստեփանոս Նազարյանցը» հուշագրության մեջ. «Մի **կյուրակի** օր էլ, երբ նա զբոսնում էր բակում, ես իմ սովորական բարևս մատուցի» (Շ, 12)։ «Հորեղբայրս պատվիրեց ինձ **կիրակի** և տոն օրերն իր տան եղած ժամանակները միշտ իր մոտ ճաշելու» (Շ, 14)։ Լեզվական ձևերի այսպիսի ակնհայտ նմանությունները թույլ են տալիս այն կարծիքը ձևակերպելու, որ մեզ հետաքրքրող շրջանում աշխարհաբարն իր լեզվատարրերով արդեն տիրապետող լեզու է՝ չնայած գրաբարյան ձևերի առկայությանը։

Ի տարբերություն Պ. Պոռոջյանի «Հուշիկների»՝ Ղ. Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ գրաբարյան կազմությունները համեմատաբար սակավ են գործածված, չնայած հոգնակիակազմության ձևեր, այդուհանդերձ, առկա են. օրինակներ՝ «Երբ գնացի տպարան, **տղայքը** պատմեցին ինձ այս անցքը» (Ա, 345)։ «Միննույն կերպով վարվեցան և իմ ընկերոջ **ծնողքը** (Ա, 353)։ «-Ահա ես և **մանկունք** իմ, քննեցեք, ինչպես գիտեք» (Ա, 464) և այլն։

«Մենք, - գրում է Ղազարոս Աղայանը, - գրաբարից կիսմենք, ինչ որ կիսվի, կուտենք, ինչ որ կարելի է ուտել և մարսել, բայց ոչ կուտենք և ոչ կիսմենք՝ անմարս բաները»³։ Ընտրելով գրաբարի կենսական առողջ հյուսթերը՝ Ղ. Աղայանը ներկայացրեց մշակված և հարազատ լեզու։

Ընդհանուր «Ճանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրության մեջ զգալի են գրաբարյան բառերն ու քերականական ձևերը՝ անկախ կիրառության չափերի տարբերությունից։ Շիրվանզադեն հիշատակում է վիպասանի այն միտքը, որ գրողը գրաբարյան բառեր գործածելիս պիտի նուրբ ընտրություն կատարի. «Գրաբար բառեր գործածելը հեշտ է, բայց մարդ պետք է ճաշակ ունենա նրանց ընտրելու համար, պետք է երաժշտական լսողություն ունենա, որ ըմբռնի, թե որ բառը որտե՛ղ կարող է քաղցր հնչել և որտե՛ղ անախորժ»⁴։

Ընդհանուր ուղեգրություններում, գրաբարյան դերանվանական ձևերից բացի, գերակշռում են գրաբարյան այլ կառույցներ. օրինակներ՝ «Մենք հասանք վանքը երկրորդ **ավուր** երեկոյան պահուն» (Ը, 17)։ «Դաշտերը... Շապուհի, Վռամի և Հազկերտի օրերում ներկվեցան մեր **նախահարց** արյունով (Ը, 7)։ «Ո՞րն է «Յոթն **եղբարց** սեղանը»» (Ը, 67)։ «Իսկ այժմ այդ ծածկյալ **հավերժահարսունքը** ինչո՞ւ այդպես

³ Տարագ, 1890, N 5, էջ 83։

⁴ Հորիզոն, գիրք Ա., Ընդհանուր կյանքից, Թիֆլիս, 1894, էջ 123։

զմայլեցնում էին ինձ» (Ը, 65): «Մահմեդա-կանք ազատ են այսպիսի տուրքերից» (Ը, 9): «...Եկեղեցի և քահանա գտանվում էին բոլոր հայոց գյուղորայքում» (Ը, 47): «Ես ...միայնակ ման էի գալիս վանքի բոլորսիքը» (Ը, 18): «Ես ...խոնարհվեցա կրոնքի պահանջներին» (Ը, 62): «Ժողովրդի ջերմեռանդությունը բավական է լցուցանելու նրանց մի այսպիսի բաղձանքը» (Ը, 23): «...Արտաքին տեսքն անգամ ցուցանում էր, թե այնտեղ բախտավոր և հանգիստ ապրում են մարդիկ» (Ը, 24) և այլն:

Ինչպես նշում է լեզվաբան Գ. Սևակը, գրական աշխարհաբարը խարսխված է երկու սյունների վրա՝ գրաբարի և բարբառների, որոնցից առաջինն է տվել նրա բառակազմը կամ ատաղձը⁵:

Բարբառային բառեր: Սրանք գրական լեզուն սնուցող կարևոր երակներ են, որոնք, ըստ էության, XIX դ. երկրորդ կեսի գեղարվեստական-վավերագրական երկերի էատարրերից են: Այդ ստեղծագործությունների բառապաշարի գրական շերտին հանդիպադրվում են բարբառային, ոչ գրական բառաշերտեր: Առաջադիր բնագրերն ունեն բարբառային ճյուղավորումներ, որոնք մտել են գրական լեզվատիրույթ և յուրացվել նրա կողմից՝ դառնալով գրական լեզվի «սեփականությունը»:

Բարբառային բառերը գործածվում են և՛ հեղինակային խոսքում, և՛ հերոսների երկխոսություններում: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «...արձակի լեզուն հիմնականում սնվում, հարստանում և համապատասխան ոճավորում է ստանում բարբառների, ժողովրդախոսակցական լեզվի միջոցներով, որի բառապաշարն ավելի գործուն է, հյութեղ, կենդանի ու կենսունակ, որը և միշտ ու անընդհատ փոփոխության է ենթարկվում»⁶:

Պ. Պոռոջյանի «Հուշիկների» լեզուն հազեցած է բարբառային լեզվատարրերով: Այստեղ բարբառային բառերը մեծավ մասամբ գործածվել են նկարագրություններում, որոնք երկին հաղորդում են պարզություն և ճկունություն: Ահա օրինակներ՝ «Թվանքչի Սարոն եկավ և Ներսես կաթողիկոսի հրամանով ձիու վրա դրեց ինձ ու տարավ» (Պ, 61): «Կաթողիկոսը... ուշադրություն չէր անում քնջերում եղած բամբասանքներին» (Պ, 117): «Կեսգիշերին մոտ կլիներ, և մենք մտանք տեր - Մանվելի գոմի օղեն» (Պ, 58): «Կարգադրված էր... մսի թարմությանը հետևիլ, և պահոց օրերը դառը ձեթի փոխարեն քնջուրի ձեթ կամ շիրբախտ գործ դնել» (Պ, 104): «Հարկավորվում էր ծնողացը կանչել՝ տուն տանելու կամ մեծ աշակերտների շալակը տալով՝ տուն ուղարկելու» (Պ, 45) և այլն:

⁵ Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948, էջ 118:

⁶ Եզեկյան Լ., Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986, էջ 44:

Շատ հաճախ բարբառային բառերին դիմելը հեղինակի ոճական հնարանքն է՝ իր հերոսներին տիպականացնելու, նրանց խոսքի անմիջականությունը ցուցադրելու համար:

Հայտնի է, որ լեզվի զարգացման և թարմացման հարցում ժողովրդական գունեղ և հարուստ բարբառներն առաջնային է համարել Հովհաննես Թումանյանը: Ըստ նրա՝ հայ ժողովրդի լեզուն խարսխված է մեկ ընդհանրության՝ բարբառի վրա. «Հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն»⁷: Ղ. Աղայանը աշխարհաբարի գրական մշակման հարցում նույնպես մեծ տեղ է տվել բարբառներին՝ նրանց ամենամեծ արժանիքը համարելով ազգային լեզվամտածողությունը. «Ներկայումս մեր գրական լեզուն երկու ճյուղի է բաժանվում... Առաջինը խճողում է իրան գրաբարի արվեստական քերականության խորթ ու մութ ձևերով և խրթնացնում, իսկ երկրորդը հետևում է ժողովրդի բերանում կենդանի մնացած պարզ ու բնական քերականության օրենքներին: Առաջինը գրաբարն է ընդունում իբրև մայր և հեղինակ, երկրորդը՝ կենդանի բարբառը»⁸: Ղ. Աղայանը մտահոգված էր աշխարհաբարի գրական մշակմամբ: Նա առաջարկում էր աշխարհաբարը աղերսել, մի կողմից, հայերենի խոսակցական տարբերակի, մյուս կողմից, բարբառների հետ:

Ղ. Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության առաջին էջերից գործածական են բարբառային բառամիավորները, որոնք առավել շատ են հեղինակային նկարագրություններում. **մհալ** «գյուղի մի հատվածը»⁹-... Բնակիչները անցյալ դարի վերջերում գաղթել են Ղարաբաղի Խաչեն **մհալից**» (Ա, 326), **ճրդպրե** «ընկուզենի» - «Ես դեպք ունեցա այցելել այդ գյուղը և տեսա աչքովս Աղանց աղբյուրը և Աղանց **ճրդպրեն**», **դիփ** «բոլորը»-»Ասում է՝ դիփ սուտ են» (Ա, 347), **դսմաթ** «բախտ» - «Հայրաթ **դսմաթի** բան է, բախտ է, ճակատի գիր է» (Ա, 347), **դելը տալ** «տաքության կամ քնի մեջ զառանցել» - «Սաստիկ տաքության մեջ սկսեց **դելը տալ**» (Ա, 345): Սույն հուշագրության հերոսների խոսքում ևս գործածական են բարբառային բառամիավորները. «-Քան թե **ուռուսի** տպարանն **եք կնում**, - ասաց Հովհաննեսը, - լավ չէ՞ հայի տպարանումը **իլեք**...» (Ա, 370):

Դ. Դեմիրճյանը բարձր է գնահատել Ղ. Աղայանի լեզուն՝ այն համարելով ուղենշային, քանի որ օգտվելով բարբառային լեզվից՝ նա մնացել է «գրական կանոնի

⁷ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1958, էջ 419:

⁸ Աղայան Ղ., նշվ. աշխ., էջ 360:

⁹ Բարբառային միավորների իմաստային նշանակությունները ճշգրտելու համար հիմք ենք ընդունել Հ. Աճառյանի «Գավառական բառարան» (Թիֆլիս, 1913) և «Հայոց լեզվի բարբառային բառարան» (Ե., 2001-2012) աղբյուրները:

շրջանակներում»¹⁰: Ղ. Աղայանի ստեղծագործությունների լեզվին անդրադարձել է նաև Ս. Մելքոնյանը: Նա Աղայանի ստեղծագործությունը համարում է այն հիմնաքարերից մեկը, որի վրա հետագայում պիտի բարձրանար հայ գեղարվեստական լեզուն. «Ուշադիր ընթերցողը լավ է նկատում, թե գեղագետի շնորհքի հմայիչ ծածկույթի տակ ինչպես է տենդագին գործում վերլուծող, քննադատող (քննող և դատող), որոնող միտքը»¹¹:

Գեղարվեստական վավերագրության լեզվում քննության են արժանի օտար լեզուներից անցած և բարբառում արմատավորված փոխառյալ բառերը: Բնչպես նշում է Լ. Հովհաննիսյանը, «...չկա մի լեզու, որ կատարելապես զերծ լինի օտար ազդեցություններից: Լեզվի հասարակական բնույթը, լեզուն ստեղծող ու կրող ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած բազմաթիվ ու տարաբնույթ հարաբերությունները պայմանավորում են օտար ազդեցությունների անխուսափելիությունը, որը, վերջին հաշվով, նաև լեզվի զարգացման ազդակներից մեկն է»¹²:

Ընթացող ուղեգրություններում բարբառային բառամիավորների մի մասը փոխառյալ կազմություններ են, այդպիսի օրինակներից են՝ **փենջարե**, պարս. *pencere* «պատուհան, լուսամուտ» - «Սենյակի փենջարեները բացվում էին դեպի բակը» (Ը, 244), **սարվազ (սարբազ)**, պարս. *sarvaz, sarbaz* «պարսիկ զինվոր» - «Սարվազներն, արդարև, մեր հացը չեն ուտում, բայց հացի զինը մեզանից առնում են» (Ը, 48), **սալամ**, արաբ. *salam* «ողջույնի խոսք, փրկություն, խաղաղություն» - «Հանդիպելով նրան՝ մահմեդական է համարում և **սալամ** (բարև) է տալիս» (Ը, 48): [4., 48], **բայաթի**, պարս. - արաբ. *beyt*, «արևելյան երաժշտության տխուր եղանակ» - «Նրա...**բայաթին** հնչում էր ցավալի տխրությամբ» (Ը, 66), **հաջի**, արաբ. *hag, hagi* «մահմեդական, որ ուխտի է գնացել Սեբբա» - «**Հաջին** մտածում է, թե մեծ մեղք գործեց աստուծո դեմ» (Ը, 48), **փարա**, թուրք. *para* «փող, դրամ» - «Հայերը փարա չեն ի տա, - պատասխանեցին նրանք» (Ը, 214):

Փոխառությունների շարքում գործածություն ունեն չափման միավորները. **գազ**-երկարության պարսկական չափ.=112 սմ, **արշին**-երկարության ռուսական չափ.=70.11 սմ - «Դուք կտեսնեք յուրաքանչյուր գյուղում զանազան երկարությամբ **գազ և արշին**» (Ը, 51), **քոռ**. ըստ Հ. Աճառյանի՝ չափման միավոր է՝ 10 արդու կամ 30 գրիվ: Արդու-ն պատմաբար է և նշանակում է այլուրի և ընդդեմի չափ.=29 կգ 376 գ., գրիվ-ը՝ նույնպես և ունի «ընդդեմի և սորուն նյութերի հին չափ.= 9 կգ 792 գ»

¹⁰ Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հ. 12, Ե., 1985, էջ 246:

¹¹ Մելքոնյան Ս., Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Ե., 1986, էջ 77:

¹² Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 34:

նշանակությունը: **Սոմար**-հացահատիկի չափման միավոր.= մոտ 3 ցենտների - «Օրինակի համար դուք կտեսնեք յուրաքանչյուր գյուղում զանազան մեծությամբ **քոռ** և **սոմար**»(Ը, 51):

Հատկանշական է այն փաստը, որ Բաֆֆու ուղեգրություններն առավել աչքի են ընկնում բառապաշարի հարստությամբ ու գեղեցկությամբ: Հեղինակի՝ բարբառների (Թիֆլիսի, Ղարաբաղի, Մշո և այլն) և ժողովրդական ոճերի կիրառությունը հարստացրել է ուղեգրությունների լեզուն:

Հերոսների լեզվում զգալի են բարբառի համն ու հոտը, կենդանի, հոգեհարազատ շունչը: Ինչպես նշել է Հ. Հարությունյանը, «գրողը պետք է քրքրի բարբառը, պեղի, գտնի այդ զենքերը, մաքրի ժանգից (եթե կա), փայլեցնի ու նոր ուժ, հնչեղություն տա երկին»¹³:

Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսի գեղարվեստավավերագրական երկերում աշխարհաբարն իր լեզվատարրերով արդեն տիրապետող լեզու էր՝ չնայած գրաբարյան տարրերի առկայությանը: Առաջադիր ստեղծագործությունների լեզվում նկատելի է գրաբարյան որոշ միավորների գործածություն (հոլովման դերանվանական ձևեր, դերանվան կապի հետ կիրառություն, հոգնակիակազմ բառաձևեր և այլն):

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նույն բովանդակությունը լեզվական գույզաձևություններով արտահայտելը սովորական երևույթ էր դարձել: Անհրաժեշտ էր նախապատվությունը տալ լեզվական այնպիսի ձևերի, որոնք համապատասխանում էին ժամանակի լեզվագագացողությանը:

Գեղարվեստավավերագրական լեզվում բարբառային տարրերի կիրառությունը հեղինակների ոճական հնարանք է՝ հերոսներին տիպականացնելու, նրանց խոսքի անմիջականությունը ցուցադրելու համար:

Համառոտագրություններ

Ա - Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1963:

Շ - Շահագիզ Ե., Հիշողություններ և դիմաստվերներ, Ե., 1980:

Պ - Պռոշյան Պ., Երկերի ժողովածու, հ. 7, Ե., 1964:

Ը - Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ուղեգրություններ, պատմական երկեր, Ե., 1987:

¹³ Հարությունյան Հ., Գրողի լեզվի և ոճի հարցեր, Ե., 1979, էջ 51:

ЛЕКСИЧЕСКИЕ ПЛАСТЫ ДИАЛЕКТОВ И ГРАБАРА В ЯЗЫКЕ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ДОКУМЕНТАЛИСТИКИ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XIX В.**ГАЛСТЯН А. В.**

Резюме

В произведениях художественной документалистики второй половины XIX в. (П. Прошян, “Воспоминания”, Г. Агаян, “Главные события моей жизни”, путевые заметки Раффи) уже доминирует ашхарабар со всеми присущими ему элементами.

В языке упомянутых произведений, тем не менее, заметно также наличие некоторых признаков грабара (местоименные типы склонения, специфика образования множественного числа и др). В литературе указанного периода практика употребления параллельных языковых форм ашхарабара была достаточно распространенным явлением. При этом отдавалось предпочтение тем языковым формам, которые в большей степени соответствовали господствующим тенденциям.

В языке художественной документалистики XIX в. употребление диалектных форм являлось стилистическим приемом, использующимся при описании персонажей.

GRABAR AND DIALECT WORD LAYERS IN THE FICTION DOCUMENTARY WRITINGS OF EASTERN ARMENIAN IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY**A. GALSTYAN**

Abstract

Contemporary Armenian with its linguistic elements was dominant in the fiction documentary writings of the second half of the 19th century (P. Proshyan, "Houshikner", Kh. Aghayan, "The important events of my life", Raffi travel stories).

However, some elements of Grabar are still obvious in the writings under study (forms of noun cases, singular plural word forms and so on). This reality of linguistic parallel forms became very common. It was essential to give preference to such forms which were adequate to the linguistic thinking of the time.

The usage of dialectic elements in the fiction documentary is a stylistic tool for the authors to make heroes more typical and to show their lively nature.

«ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ' ԸՍՏ Դ. Հ. ԼՈՐԵՆՍԻ

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Վ. Վ.

Դ. Հ. Լորենսն անգլիական գրականության ամենանշանավոր գրողներից է՝ ընթերցողին հայտնի իր յուրօրինակ, հակասական գաղափարներով: Լորենսն ստեղծագործական կյանքի ընթացքում խրախուսել է իր ընթերցողներին վերադառնալ բնական արմատներին, զգալ բնությունից տրված ուժը, լինել ազատ և վայելել կյանքը, որն անընդունելի էր իր ժամանակակիցների համար, քանի որ փորձում էին այս կամ այն երևույթին գիտական բացատրություն տալ: Եթե բացատրությունը գիտական չլիներ և հիմնված լիներ պարզապես հույզերի, զգացմունքների, ներբնութման վրա, ապա չէր կարող արժանահավատ համարվել և չէր կարող ընդունելի լինել գիտակից մարդու համար, քանի որ դրանք մարդուն կարող էին տանել ինքնակործանման: Ժամանակակիցները կարծում էին, որ գիտությունը երբեք չի կարող կեղծ պատկերացումներ տալ շրջապատող երևույթների մասին:

«Ամերիկյան դասական գրականության ուսումնասիրություն» աշխատության մեջ Լորենսը դիմում է առասպելաբանությանը՝ փորձելով Ադամի և Եվայի աստվածաշնչյան պատմության միջոցով նկարագրել «բնական մարդու և գիտակից մարդու» տարբերությունը. «Սկզբում Ադամը ճանաչեց Եվային, ինչպես վայրի կենդանին է ճանաչում կողակցին իր բնագոյների, ոչ թե բանականության շնորհիվ, որը հատուկ է բնական մարդուն: Հետո սկսվում է խնձորի պատմությունը: Գիտակցությունը դրդում է Ադամին զգալ, թե ինչ է ամոթը: Նա սկսում է գիտակցել, որ մարմինը նախ և առաջ անհրաժեշտ է սնունդ հայթայթելու համար: Այսինքն՝ մարմինը պետք է տքնաջան աշխատի, որպեսզի սնվի: Գիտակցությունը մարդու մեջ ինքնագոհաբերության զգացում է առաջացնում: Այնուհետև հին Ադամի մտածելակերպը չորս հազար տարվա ընթացքում հետզհետե սկսում է փոխվել»¹: Ժամանակակից մարդու ինքնակործանումը Լորենսը նկարագրում է հետևյալ կերպ. «Քանի դեռ մարդն ընդունակ չէ ապրելու իրական զգացմունքներ, նա դատապարտված է ինքնակործանման: Մեր էությունը կարիք ունի զգալու այն բոլոր հաճելի զգացումները, որոնք բնությունը շնորհել է մարդուն»²: Այս հատվածը նկարագրում է մարդկությանը բնորոշ պայքարը բնագոյի և բանականության միջև:

¹ Lawrence D. H. *Phoenix. The Posthumous Papers of D. H. Lawrence* (Edited by Edward D. McDonald), New York, 1968, p. 770.

² Lawrence D.H. *Studies in Classic American Literature* (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge, 2003, p. 2.

Ինչպես Ֆրոմն է պնդում, մարդիկ ձգտում են խուսափել զգացմունքներից, որպեսզի չզգան իրենց անհատականությունը³: Ըստ Լորենսի՝ սա ինքնասպանության գործընթաց է. «Բոլոր մարդիկ անում են այն, ինչ իրենց նախնիներն էին անում՝ նրանք սպանում են բնական մարդուն՝ հին Ադամի մարմնի զգացմունքները, կարիքները: Սա նման է ինքնասպանության»⁴:

«Կենսահարաբերություն, գրականություն և գրաքննություն»՝ «Քումփաս» հրատարակության գրքի նախաբանում Հարրի Մուրը գրում է. «Ուշադիր կարդացողները շուտով հայտնաբերում են, որ Լորենսն իրականում իմաստուն մարդ է, որին ոչ թե կենսահարաբերությունն է հետաքրքրում, այլ կյանքն առհասարակ: Իսկ կյանքը բաղկացած է ոչ միայն կենսահարաբերությունից, այլ հաճելի զգացմունքներից և սիրուց՝ որպես մեխանիկական քաղաքակրթության հիմնական հակադրություն»⁵:

Լորենսը շեշտում է մարմինը՝ միայն մարմնի և բանականության միջև հազարավոր տարիների ընթացքում առաջացած անհավասարակշռությունը շտկելու համար: Մուրը այս մասին ևս գրում է իր գրքի նախաբանում. «Լորենսը ժամանակակից աշխարհում փորձում է հավասարակշռություն պահպանել մտավոր և զգայական համակարգերի միջև, որին դասվում է ոչ միայն կենսահարաբերությունը, այլև մարդու մյուս բոլոր զգացմունքները: Նա շեշտում է բնական մարդուն հատուկ կիրքն ու զգացմունքները, որովհետև մարդկությունն այդքան ժամանակ արհամարհել է դրանք: Նա չի ցանկանում ոչնչացնել մտավոր գործընթացները, այլ փորձում է դրանք բնականոն կերպով հավասարակշռել զգացմունքների հետ»⁶:

Սա այն բանի ճշգրիտ նկարագրությունն էր, ինչ Լորենսը փորձում էր անել: Լին Շվարցը մի քանի պատճառ է նշում, թե ինչու Լորենսի մտքերը չէին ընդունվում գրական աշխարհում. «Լորենսը կրքոտ գրող է, իսկ մեր ճաշակն այլ է, մենք անսիրտ ենք: Քաղաքական և սոցիալական ցնցումների դարաշրջանում հեզնանքը, թերահավատությունը, հիստերիաները դարձել են մարդկանց լավագույն ընկերները»⁷:

Ադելմանի գրքի նախաբանում Սանդրա Գիլբերտը ժամանակակիցների շրջանում Լորենսի մտքերի ճիշտ չընկալվելու առնչությամբ նույն պատճառներն է թվարկում. «Նա չափազանց լուրջ է, նրա մեջ բացակայում է հեզնանքը: Եվ նա տեղյակ է այդ մասին: Լորենսը շատ դժգոհ է, որ իր ժամանակակիցները կեղծում են զգացմունքները»⁸:

³ Erich Fromm. *The Art of Loving*, New York, 1956, p. 11.

⁴ Lawrence D. H. *Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence*, p. 771.

⁵ Harry T. Moore, *Sex, Literature and Censorship*, New York, 1959, p. 8.

⁶ Նույն տեղում, էջ 27:

⁷ Adelman G. *Reclaiming D. H. Lawrence: Contemporary Writers Speak Out*, Lewisburg, 2002, p. 42.

⁸ Նույն տեղում, էջ 3:

Լորենսը ցավով նշում է, որ ժամանակակից աշխարհի կործանման հիմնական պատճառներից է այն, որ մենք սովորել ենք զգացմունքներին չտրվել, քանի որ դրանք կարող են մեզ լրջորեն վնասել. «Մի՛ վստահիր ոչ մեկին, մի՛ տրվիր զգացմունքներին, - ահա սա է այսօրվա կարգախոսը: Վստահի՛ր մարդկանց՝ դատելով նրանց ըստ կարողության: Նյութապաշտությունը սպանում է բնական մարդու տեսակը, նրա զգացմունքները, կիրքը, սերը մյուսների նկատմամբ, քանի որ բնական մարդու հույզերը ժամանակակից մարդկանց համար ծիծաղելի են և ճղճիմ: Նրանք վստահում են միայն բանականությանը: Բնական մարդու և ժամանակակից աշխարհի միջև անդունդը շատ մեծ է: Իրական զգացմունքները հնարավոր է զգալ միայն մարմնի միջոցով: Մարմնական կյանքը զգացմունքային և հուզական կյանքն է: Մարմինը զգում է իրական քաղց, իրական ծարավ, ուրախություն, արևի ջերմություն, ցուրտ, իրական հաճույք, վարդերի բույր, իրական բարկություն, սեր, կիրք, ատելություն, ցավ: Բոլոր այս զգացողություններն անհնար է զգալ ուղեղի համակարգի միջոցով: Այդ զգացմունքները պատկանում են մարմնին և ճանաչվում միայն գիտակցության կողմից»⁹:

Սա, իսկապես, հետաքրքիր վարկած է, և Լորենսն այն պնդում է անընդմեջ՝ տարբեր ձևակերպումներ տալով նույն գաղափարին: Ըստ նրա՝ ամեն ինչ զգում ենք մեր մարմնով: Միտքը պարզապես գրանցում է փաստերը՝ մարմնի զգացողությունները: Սա թերևս անբնական թվա, սակայն այս հայտարարության մեջ ճշմարտություն կա, եթե մարդը սկսի լրջորեն խորհել այդ մասին: Զգացմունքները կասկածի տակ են դնում բանականությանը հակվածները: Սակայն նույնիսկ նրանք չեն կարող հստակ բացատրել, թե որտեղ են սկզբում առաջանում զգացմունքները՝ գլխուղեղում, թե՞ մարմնում: Արդյոք ուղեղն է առաջինը զգում դրանք, ապա ազդանշանը փոխանցում մարմնին, թե՞ մարմինն է ավելի շուտ զգում, ապա ուղեղը գրանցում այդ փաստը: Ճնշվածությունը, ընկճախտը, անհանգստությունը մարմինն ավելի շուտ է զգում, քան ուղեղն ունակ է այն գրանցելու:

1929 թ. գրված «Այս նկարների նախաբանը» («Introduction to These Paintings») էսսեում Լորենսն առաջ է քաշում ուշագրավ մի վարկած արևմտյան ավանդույթում Վերածննդից սկսած մարմնի կարիքները ստորադասելու վերաբերյալ: Լորենսի կարծիքով, անգլիացիներն ու ամերիկացիները կաթվածահար են եղել վախից և այդ օրվանից ի վեր սկսել են ստորադասել մարմնի բնական ցանկությունները, պահանջմունքները¹⁰: Այս վախի զգացումն առաջացել է դեռևս Շեքսպիրի ժամանակաշրջանում՝ հասարակական հոռի երևույթների, մասնավորապես սիֆիլիսի տարածման պատճառով: Կենսահարաբերությունը

⁹ Lawrence D. H. *A Propos of Lady Chatterley's Lover, Phoenix II* (Edited by Harry T. Moore, etc.), New York, 1971, pp. 82-111.

¹⁰ Տե՛ս Lawrence D. H. *Selected Literary Criticism* (Edited by Anthony Beal), New York, 1986, p. 53:

սարսափ էր ներշնչում մարդկանց¹¹: Միֆիլիսը նոր երևույթ էր Անգլիայում XV դարավերջին. «Անգլիայում անգամ թագավորական ընտանիքները տառապում էին սիֆիլիսից: Էդվարդ VI-ը և Էլիզաբեթը ծնվել էին՝ ժառանգելով այդ հիվանդությունն իրենց նախնիներից»¹²: Թյուրոքներն ու Ստյուարդները մահացել են այդ հիվանդությունից: Այս ժամանակահատվածում Անգլիայի և Շոտլանդիայի առօրյայում արդեն ձևավորվել էր «prox on you» արտահայտությունը, որն անեծքի մի տեսակ էր՝ ներառելով «սիֆիլիս» բառը: Սա թերևս ցույց է տալիս, որ վախի զգացումը այդ հիվանդության նկատմամբ իրական էր և պղտորում էր այդ ժամանակաշրջանի մարդկանց հոգեկան աշխարհը՝ մեծապես ազդելով նրանց սեռական կյանքի վրա: Ազնվական խավը անգամ սկսում է սահմանափակել մարմնական զգացումները՝ հիվանդությունից խուսափելու համար: Իրական, բնական կենսահարաբերությունն անհնար էր ունենալ նման վախը սրտներում¹³:

Այսպիսով, այս վախը բույն է դնում մարդկանց գիտակցության մեջ, և կենսահարաբերությունը սկսում է նույնացվել վախի զգացման հետ: Լորենսի կարծիքով՝ այս վախը նաև ստիպում է մարդուն սահմանափակել իր շփումը մարդկանց հետ՝ հանգեցնելով այն բանի, որ մարդիկ սկսում են ավելի շատ վստահել գիտությանը՝ հեռանալով բնական արմատներից¹⁴: «Բնագոյների միջոցով է հնարավոր, որ մարդիկ ճանաչեն իրար մարմնապես: Միայն բնագոյաբար է հնարավոր զգալ դիմացինի հուզերն ու ապրումները: Երկու մարդկանց միջև հրապուրանքը բնագոյաբար է ծագում և ոչ թե գիտակցաբար»¹⁵: Լորենսի կարծիքով՝ ժամանակակից մարդիկ, մասնավորապես՝ Անգլիայում և Ամերիկայում, իրականում չեն զգացել իրական, ճշմարիտ սեր, կիրք, քանի որ սպանել են իրենց մեջ բնագոյներին հետևելու ցանկությունը¹⁶: Հասարակական խնդիրներով զբաղվող գիտնականներին Լորենսի գաղափարները կարող են չափազանցություն թվալ, սակայն նրանք հաստատում են, որ Լորենսի արտահայտած մտքերում ճշմարտություն կա:

Ինչպես Գարրի Վոթսոնն է հաստատում «Ռ. Ն. Լորենս և խղճուկ մարմին» էսսեում, Լորենսն իր պնդումները վերցրել է Մաքս Վեբերի տեսությունից՝ ավելացնելով սեփական գաղափարներն իր էսսեում: Վեբերի «Բողոքական էթիկան և կապիտալիզմի հոգին» աշխատության մեջ Լորենսն իրեն հոգեհարազատ մտքեր է գտնում և գրում, որ բուրժուական գիտակցությունը վախ և ատելություն է սերմանում տղամարդկանց և

¹¹ Նույն տեղում, էջ 53:

¹² Նույն տեղում, էջ 54:

¹³ Նույն տեղում, էջ 57:

¹⁴ Նույն տեղում, էջ 58:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 59:

կանանց հոգիներում բնագրային, ինտուիտիվ մարմնի նկատմամբ¹⁷: Քանի որ վախն ու ատելությունը պատճառաբանված էին, մարդիկ սկսում են ճնշել բնագրները: Անշուշտ, այս գաղափարները տարածողները հասարակության մեջ մեծ ազդեցություն ունեցող մարդիկ են:

Ինչպես Փալմերն ու Բալդիքսն են նկատել, անգլիական գրականությունը, պատմությունը, բարքերն ու սովորույթները որպես առարկա առաջին անգամ Հնդկաստանի քոլեջներում են դասավանդվել՝ երեխաներին ավելի քաղաքակիրթ դարձնելու համար: Այն կիրառվում էր որպես գենդերի և դասակարգերի վերահսկողության գործիք¹⁸: Ըստ Լորենսի՝ ահա այս կեղծ բարոյագիտությունն է, որ մարդկանց դարձնում է ռոբոտ:

Այսպիսով, բնական մարդը, ըստ Լորենսի, ուժգին ցանկության, սիրո, կրքի հետևանքով առաջացած հարաբերությունների կողմնակիցն է, երբ մարդն ասես կորցնում է տեղի և ժամանակի զգացողությունը և ձուլվում տիեզերքին:

КОНЦЕПЦИЯ Д. Г. ЛОУРЕНСА О "ЕСТЕСТВЕННОМ ЧЕЛОВЕКЕ"

ОГАНЕСЯН В. В.

Резюме

Концепция Д. Г. Лоуренса о "естественном человеке" основана на идее о том, что человек отошел от своего природного естества и пренебрег тем, что, в первую очередь, он является чувственным существом, подверженным страстям, наделенным интуицией и свободным в биокоммуникациях. Д. Лоуренс сравнивает современного человека с роботом, ограничивающим свои чувства в силу нежелательного вмешательства сознания.

THE CONCEPT OF D. H. LAWRENCE ON "THE NATURAL MAN"

V. HOVHANNISYAN

Abstract

The concept of D. H. Lawrence on the "natural man" is based on the idea that a person has departed from his nature and ignored the fact that first of all he is a sensual creature, prone to the passions, endowed with intuition and free in biocommunication. D. H. Lawrence compares modern man with a robot, limiting his feelings due to unwanted interference of consciousness.

¹⁷ *Տե՛ս D. H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to these Paintings, Cambridge, 1985, p. 61:*

¹⁸ *Տե՛ս Stephen Slemon. Teaching and End of Empire, College Literature, UK, 1992-1993, p. 153:*

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ԹԱԲԱՂՅԱՆ Ս. Վ.

Յուրաքանչյուր լեզու ունի անհրաժեշտության կարգը (կատեգորիան) արտահայտող քերականական, բառակազմական իր միջոցները: Գերմաներենում այդ կարգը դրսևորվում է մոդալ (եղանակավորող) բայերի, եղանակավորող ստորոգելիական վերադիրների և մոդալ ֆյուրունգների՝ եղանակավորող առաջնորդողների միջոցով: Օրինակ՝ Er soll lernen – **Նա պետք է սովորի**: Sie muß fahren – **Նա պետք է մեկնի**: Diesen Text soll er gut lessen – **Այս տեքստը նա պետք է լավ կարդա**: Հայերենում այդ գործառույթը կատարում են հարկադրական եղանակի պիտի, պետք է և պայմանական եղանակի կ եղանակիչները, որոնք ավելանում են ըղձական ապառնիի և ըղձական անցյալի ժամանակային ձևերին: Հայերենում անհրաժեշտության կարգը կարող է դրսևորվել նաև գործողության պայմանի պարագայում, ինչպես՝ Ես կգամ վերադառնալու պայմանով:

Հարկ է նշել, որ անհրաժեշտության կարգի հաշվառումը կարևոր է լեզվական որևէ երևույթի ուսումնասիրության հարցում: Այդ կարգը իր ուրույն մոդելներով դրսևորվում է գերմաներենի քերականության մեջ՝ առաջադրելով նորանոր միջոցներ, նորաբանություններ: Անհրաժեշտությունը «անպայման պետք է տեղի ունենա տվյալ պայմաններում»¹, որը երևույթների կապերի և միջոցների այնպիսի զարգացումն է, որն անխուսափելիորեն բխում է այդ երևույթների ներքին հատկություններից, փոխհարաբերություններից²: Մոդալ բայերը, որոնք գերմաներենի անկանոն բայացանկի մեջ մտնող պրետերիտո-պրեզենտային³ և անհրաժեշտության կարգի դրսևորման քերականական ձևեր են, ունեն լեզվական որոշակի առանձնահատկություններ՝ խոնարհման հատուկ համակարգ: Լեզվաբան Վ. Ժիրմունսկին գրում է, որ մոդալ բայերի մեծամասնությունն առաջացել է մի շարք բայերի անցյալ (Präteritum կամ Imperfekt) և ներկա

¹ Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռուլենտալի խմբագրությամբ, Ե., 1975, էջ 76:

² Սպիրկին Ա. Գ., Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Ե., 1970, էջ 257:

³ Кращенкокова Е. Модальные глаголы в немецком языке, М., 1954, с. 3.

(Präsens) ժամանակների ձևերից⁴: Այսպես, wollen-ը (ուզենալ, կամենալ) առաջացել է wolta [welta]-ից, Lassen-ը՝ lazan, lazu (թույլ տալ) բայերից: Գերմաներենում մոդալ բայերի երեք հիմնական ձևերը քերականական դերբայներ են՝ Infinitiv, Imperfekt, Partizip 2, որոնք կազմվում են հիմնականում թույլ խոնարհման բայերի⁵ նման: Որոշ մոդալ բայեր (müssen, können, dürfen, mögen), որոնք անորոշում ունեն քմայնացում, անցյալ կատարյալում (Imperfekt կամ Präteritum) և Partizip 2-ում այն կորցնում են, օրինակ՝

Können – konnte – gekonnt (կարողանալ, գիտենալ)

Mögen – mochte – gemocht (ուզենալ, կամենալ)

Dürfen – durfte – gedurft (արտոնության իրավունք ունենալ մի բան անելու)

Müssen – mußte – gemußt (ստիպված, հարկադրված լինել):

Նշված բոլոր մոդալ բայերը, որպես կանոն, Präsens (ներկա) ժամանակի 1-ին և 3-րդ դեմքերում չունեն դիմային վերջավորություն, եզակի թիվը կազմում են արմատական ձայնավորի փոփոխությամբ (Ablaut): Ուժեղ խոնարհման բայերն իրենց անցյալ կատարյալը (Präteritum կամ Imperfekt) կազմում են նույն ձևով, այստեղից էլ՝ մոդալ բայերի Präterito-Präsenta անվանումը: Յուրաքանչյուր միտք խոսքում, տվյալ դեպքում՝ քերականական հատուկ կառուցվածքներում դրսևորվում է անհրաժեշտորեն: Գերմաներենում իմաստաբանական անհրաժեշտության կարգը դրական (positiv) նախադասություններում արտահայտվում է müssen մոդալ բայի միջոցով, օրինակ՝ Ashot muß nach Jerevan fahren – Աշոտը պետք է մեկնի Երևան: Իսկ ժխտական (negativ) նախադասություններում՝ nicht können և nicht dürfen մոդալ բայերի միջոցով, Ashot kann nicht nach Jerevan fahren – Աշոտը չի կարող մեկնել Երևան: Können-ը արտահայտում է ֆիզիկական և մտավոր կարողության իմաստ: Ich kann nicht Geige spielen – Ես չեմ կարող ջութակ նվագել: Այս օրինակներից երևում է, որ՝ երբ գործ ունենք իմաստաբանական կարգի հետ, կիրառվում են sollen և müssen մոդալ բայերը: Երկու բայերն էլ արտահայտում են անհրաժեշտության գաղա-

⁴ Жирмунский В. История немецкого языка, М., 1948, с. 245.

⁵ Թույլ խոնարհման բայերի անցյալ կատարյալը (Imperfekt) կազմվում է - (e) վերջածանցով, իսկ քերականական դերբայը (Partizip 2)՝ ge նախածանցով և (e)t վերջածանցով:

փար: Sollen-ի դեպքում այն դիտվում է որպես ներքին համոզմունք, մղում, անհրաժեշտություն, որպես իրադրությունից բխող կարգադրություն, որի դեպքում պարտադիր չէ գործողության իրականացումը, մինչդեռ müssen-ի պարագայում անհրաժեշտությունը դիտվում է որպես անխուսափելիություն: Անհրաժեշտության իմաստաբանական-քերականական կարգը գերմաներենում կարող է արտահայտվել haben+zu+Infinitiv խմբով (մոդելով): Օրինակ՝ Ich habe etwas zu machen – **Ես ինչ-որ բան ունեմ անելու:** Ich muß (soll) etwas machen – **Ես պետք է ինչ-որ բան անեմ կամ** Diese Arbeit ist zu machen – **Այս աշխատանքը պետք է կատարվի:** «Sollen» մոդալ բայը ևս նույն կերպ է արտահայտում անհրաժեշտության գաղափարը, բայց տվյալ բայի կիրառման դեպքում միշտ ենթադրվում է գործողությունը կատարողի և մոդալության հեղինակի անհամապատասխանություն UH#UM՝, ինչպես՝ Aschot soll Aram anrufen – **Աշոտը պետք է Արամին զանգահարի:** Հատկապես man անորոշ դերանունով կազմված նախադասություններում sollen և müssen բայերի իմաստն ավելի է շեշտվում՝ հավանաբար, այն պատճառով, որ չկա հստակ գործող անձը, այլ շեշտվում է կատարվելիք գործողությունը՝ որպես անհրաժեշտություն: Man muß das Problem der Luftverschmutzung lösen – **Պետք է լուծվի օդի աղտոտվածության հիմնահարցը:** Անհրաժեշտության գաղափարը կարելի է արտահայտել եղանակավորող բայերի և բայի անորոշ-կրավորական (Infinitiv-Passiv) ձևի միացությամբ: Այս կառուցվածքի մոդելը հանդիպում է գերմաներենի՝ ենթակա չպահանջող բայերի մեջ, օրինակ՝ Es muß auch in Zelten geschlafen werden – **Պետք է որ վրաններում քնած լինեք:** Անհրաժեշտության դրսևորման քերականական միջոց են նաև գործողության առարկա չպահանջող (խնդրառություն չունեցող) նախադասությունները: Օրինակ՝ Es muß das Problem der Luftverschmutzung geiöst werden – **Պետք է լուծվի օդի աղտոտության հիմնախնդիրը:** Քերականական կառուցվածք (մոդել) Sein+zu+Infinitiv-ը գերմաներենում անհրաժեշտության կարգն արտահայտում է նաև մեկ այլ միջոցով: Այս ձևը երկիմաստ է: Իմաստը հասկացվում է բուն տեքստում՝ բառային նեղ իմաստի միջոցով: Այն կիրառվում է միայն այն բայերի հետ, որոնք, մոդալությունն արտահայտելու դեպքում նախադասությանը տալիս են քերականական իմաստ, այն է՝ անհրաժեշտու-

Վանաձևում U-ն մոդալության հեղինակն է, H-ը՝ գործողությունը, իսկ M-ը՝ մոդալությունը:

թյան գաղափար, ինչպես՝ Von hier ist dir zu sehen – **Դու այստեղից ես լավ երևում:** Մոռալ ստորոգելիական վերադիրները **ևս միջոց են անհրաժեշտության գաղափարի դրսևորման համար:** Այդպիսի օրինակ է nötig, notwendig–**բառերի կիրառությունը**՝ Es ist nötig, diese Aufgabe noch in diesem Jahr zu erfüllen – **Այս հանձնարարությունը անհրաժեշտ է դեռ այս տարվա մեջ կատարել:** Infinitiv 2-ի հետ sollen մոռալ բայը հաճախ է հանդես գալիս: Այս դեպքում ուրիշի գործողության անհրաժեշտությունը կամ ուրիշի կարծիքն արտահայտում են անուղղակի խոսքի միջոցով: Օրինակ՝ Übrigens soll er sich ganz heiter bekommen haben in Danzig – **Ի դեպ, ասում են, նա բավական ուրախ ժամանակ է անցկացրել Դանցիգում:** <<Müssen>> մոռալ բայը օգտագործվում է նաև Infinitiv 2-ի հետ: Ինչպես, օրինակ՝ Er hat eine inhaltsreiche Vorlesung gehalten, er muß viel gearbeitet haben – **Նա մի իմաստալի դասախոսություն կարդաց: Նա պետք է, որ շատ աշխատած լինի:** Na, daß muß kommissch angesehen haben – **Այո՛, երևի դա շատ ծիծաղելի տեսք է ունեցել:** Sollen մոռալ բայը կարող է արտահայտել նաև անհրաժեշտությունից բխած հրաման, խնդրանք: Երբ müssen բայը անհրաժեշտության դեպքում ժխտում է թույլտվությունը, ապա իր նշանակությամբ մոտենում է brauchen-ին (կարիք ունենալ), ինչպես՝ Sie müssen sich nicht operieren lassen – **Դուք չպետք է թույլ տաք, որ Ձեզ վիրահատեն:** Sollen մոռալ բայի մյուս նշանակությունը գործողության ենթադրությունն է, որտեղ իշխում է անհրաժեշտությունից բխած հավանականությունը, ինչպես՝ Der Zug soll (muß) bald kommen – **Պետք է, որ գնացքը շուտով գա:** Այս օրինակները փաստում են, որ sollen և müssen մոռալ բայերը կարող են իրար փոխարինել: Մակայն, ի տարբերություն müssen-ի, sollen-ն արտահայտում է ուրիշի խոսքի վրա հիմնված ենթադրություն, իսկ müssen-ը՝ ենթադրություն՝ ինչ-որ օբյեկտիվ կանխանշանների իմացության հիմքով: Այս նշանակությամբ müssen մոռալ բայը կարող է կիրառվել և՛ Infinitiv 1-ի, և՛ Infinitiv 2-ի հետ: Նման դեպքերում վերջիններիս մեջ կա ոչ թե եղանակային, այլ ժամանակային տարբերություն: Օրինակ՝ Er muß es noch nicht wissen, sonst hätte er mir's gesagt (Infinitiv 1) – **Պետք է, որ նա դրա մասին իմացած չլիներ, հակառակ դեպքում ինձ կասեր:** Sie müssen damals sehr müde gewesen sein (Infinitiv 2) – **Պետք է, որ բավական հոգնած լինեիք:** Wie glücklich sie sein muß – **Պետք է, որ նա բավական երջանիկ լինի:** Müssen+Infinitiv կառուցվածքը (մոդելը) կարող է լինել պարզապես բայ. մոդալությունն այս դեպքում որևէ լիիմաստ բայի միջոցով

կարտահայտվի, ինչպես՝ Grunlich war seit diesem Tage mürrisch... ja unausstehlich das muß ich sagen – **Գրունլիխն այդ օրվանից փնթփնթան էր դարձել...այո՛, ես կասեի՝ անհանդուրժելի:**

Այսպիսով, կարող ենք ասել, որ անհրաժեշտության կարգը գերմաներենում դրսևորվում է բազմաբնույթ և բազմազան քերականական միջոցներով:

КАТЕГОРИЯ НЕОБХОДИМОСТИ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

ТАБАГЯН С. В.

Резюме

Диалектическая категория необходимости в грамматике немецкого языка выражается как посредством модальных глаголов, так и других разнохарактерных грамматических структур (моделей). Модальные глаголы как грамматические формы выражения категории необходимости имеют свои языковые особенности, особую систему спряжения. Эти глаголы широко используются в немецком языке.

THE CATEGORY OF NECESSITY IN GERMAN LANGUAGE

S. TABAGYAN

Abstract

Dialectical category of necessity in German language is expressed both by means of modal verbs and multicharacter grammatical structures (models). Modal verbs being grammatical forms of expression of the category of necessity have typical language peculiarities and a special system of conjugation.

All of them have broad application in German language and serve as a factor of transformation for linguistic innovations.

ՄՈՒՐԱԴԻԱՆ Գ. Հ.

Արտարկումը անգլալեզու գիտաֆանտաստիկ գրականության մեջ կիրառվող կարևորագույն հնարներից է և ներառում է ժանրի հիմնաքարը՝ փոփոխության գաղափարը: Գիտաֆանտաստիկ արտարկումների շնորհիվ հայտնի գիտական փաստերն ու տեսությունները վերածվում են ապագային վերաբերող անիրական կանխատեսումների, որոնք գիտական չեն, բայց գիտական հիմք ունեն և գիտականի տպավորություն են թողնում: Արտարկման վերլուծությունը մեծապես նպաստում է դրա միջոցով ստեղծված պատկերների ճիշտ ընկալմանը և հեշտացնում դրանց մեկնաբանությունը: Վերլուծության այդ մեթոդի կիրառությամբ հնարավոր է սահմանազատել գիտական և գեղարվեստական, ճանաչողական և երևակայական գործընթացները: Արտարկումը, այսպիսով, երևակայականի կառուցումն է բանական հենքի վրա, և գիտաֆանտաստիկան այն կիրառում է որպես ապագան կանխատեսելու և կառուցելու հնար¹: Ք. Մալիվանը արտարկումը կարևորում է փոխաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից²: Ըստ Մ. Մաքգլոնի, գծային արտարկումը կարող է լավագույնս կիրառվել որպես փոխաբերության վերլուծության լեզվաբանական և ճանաչողական հնար³: Քանի որ փոխաբերությունը ներհատուկ համեմատություն է և ոչ թե պնդում, այն կարող է հեշտությամբ հարմարվել գծային արտարկման բանաձևին ($y=cx+a$), որտեղ x -ը և y -ը համեմատության փոփոխական բևեռներն են, իսկ c -ն և a -ն՝ հաստատունները:

Անդրադառնանք արտարկման վերլուծության մեթոդի կիրառությամբ իրականացված լեզվական արտածումներին, որտեղ գծային արտարկումը հանդես է գալիս որպես ճանաչողական հնար: Քննենք նախադասության մակարդակում իրացվող հետևյալ արտարկումը. *Night City was like a deranged experiment in social Darwinism, designed by a bored researcher who kept one thumb permanently on the fast-forward button*⁴ (Գիշերային քաղաքը կարծես սոցիալ-դարվինիզմի խելահեղ գիտափորձ

¹ Muradian G.H., Mardoyan L. *Analytical Framework of Extrapolation and Metaphor in William Gibson's "Neuromancer"*. Kalbu Studijos: Studies About Languages N 27, International Scientific Journal. Lithuania: Kaunas University of Technology, 2015, pp. 69-77.

² Sullivan K. *The Linguistic Structure of Literary Metaphor*. Berkeley: University of California, 2007.

³ McGlone M. S. *Conceptual Metaphors and Figurative Language Interpretation: Food for Thought?* // Journal of Memory and Language, N 35, 1996, Article No. 0029: Lafayette College, 1996, pp. 544-565.


⁴ Gibson W. *Neuromancer*, New York: Ace Books, 1986.

լիներ՝ ստեղծված ձանձրացող գիտնականի կողմից, որը փորձում էր անմիջապես մոռանալ այդ տեսությունը):

Նշված օրինակում հեղինակի հետաքրքրության առարկան սպազայի գիշերային քաղաքն է (*Night City*), որը, գեղարվեստական համեմատության (*like a deranged experiment* – որպես խելահեղ գիտափորձ) միջոցով արտարկվելով, ներկայացվում է որպես համակարգչային դարաշրջանի խելահեղ գիտափորձ: Նախադասության կառույցում *Night City* գործակիցը փոփոխական է այն առումով, որ վիրտուալ իրականությամբ ներծծված քաղաքը բնորոշելու համար հեղինակը կարող էր մեկ այլ լեզվական միավոր գործածել, օրինակ՝ քաղաքի իրական անունը կամ նույն կապակցությունը՝ որոշյալ հոդով և փոքրատառերով և, բնականաբար՝ հուզական ավելի թույլ լիցքավորվածությամբ: Համեմատության պարտադիր բաղադրիչը (*was like a deranged experiment* – կարծես խելահեղ գիտափորձ լիներ) հաստատուն է այն առումով, որ տեխնոլոգիական մրցավազքի և դիստոպիական իրականության մի մասը կազմող հերոսի համար քաղաքի ռիթմը չէր կարող բնորոշվել այլ կերպ, քան խելահեղ բառով: Ընդ որում, հաստատունի ոճական ուժգնությունը կրկնապատկվել է *deranged experiment* մակդրավոր կապակցության շնորհիվ և բազմապատկվել *in social Darwinism* (սոցիալ-դարվինիզմի) փոփոխականի միջոցով, որից էլ մեծապես կախված է *y* փոփոխականի արժեքը, ինչպես նաև *c* հաստատունի հետագա արտարկումը: Փոփոխական միավորը նախադասության կառույցում աչքի է ընկնում իմաստային լայն ընդգրկմամբ և իրացնում է ճանաչողական գործառույթ: Առանց սոցիալ դարվինիզմի գաղափարախոսության էությունն ըմբռնելու հնարավոր չէ մեկնաբանել հեղինակի՝ քաղաքի նկատմամբ ունեցած հաստատուն բացասական վերաբերմունքը:

Այսպես՝ Ամերիկայում և Եվրոպայում 1870-ականներին առաջացած սոցիալ-դարվինիզմի գաղափարախոսները գտնում են, որ դարվինյան էվոլյուցիայի և բնական ընտրության տեսության տրամաբանական շարունակությունը մարդկային հասարակությունից աղքատների ու թույլերի դուրս մղումն է, հարուստների և ուժեղների վերարտադրության սպառնալույթ: Բայց այս նոր դարվինիստները չեն պարզաբանում, թե հատկապես որ հատկանիշների հիման վրա պետք է տարորոշվեն ուժեղները և թույլերը, և թե ինչ մեխանիզմներով պետք է խրախուսվեն ուժեղները, և ոչնչացվեն թույլերը: Սոցիալ-դարվինիզմի նկատմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջացած բացասական վերաբերմունքի պատճառով այն գրեթե մոռացության

մատնվեց⁵, և այդ գաղափարախոսության անլրջության վերաբերյալ Գիբսոնի կարծիքը, ինչպես նաև *in social Darwinism* փոփոխականի արտարկումը վերջանում է *a* հաստատունի տիրույթում իրացվող փոխաբերության միջոցով՝ *designed by a bored researcher who kept one thumb permanently on the fast-forward button* (ըստ Գիբսոնի, վերոնշյալ գաղափարախոսությունը ստեղծվել է ձանձրացող գիտնականի կողմից, որը պատրաստ է անմիջապես մոռանալ այդ տեսությունը): Արտարկման պատկերն ավելի պարզ կլինի, եթե շարժվենք հակառակ ուղղությամբ՝ սկզբնաղբյուր տիրույթից դեպի թիրախ տիրույթը. ձանձրացող գիտնականի անլուրջ գաղափարախոսությունը (a), այն է՝ սոցիալ դարվինիզմի տեսությունը (x)՝ դրան բնորոշ խելացնոր գիտափորձով (c), ներկայացնում է ապագայի համակարգչայնացված քաղաքը (y): Ընդ որում, *Night City* որոշային շարույթի *Night* գոյականական բաղադրիչն իր հերթին բացասական լրացուցիչ առնշանակային երանգ է հաղորդում ամբողջ ասույթին: Լայն առումով, համեմատության իմաստային տիրույթում առկա է երկու առարկա՝ խելահեղ քաղաքը և սոցիալ-դարվինիզմի ոչ պակաս խելագար տեսությունը: Եթե վերոնշյալ համեմատություն-արտարկումը ներկայացնենք գծապատկերով, այն կունենա հետևյալ տեսքը.



Դիտարկենք ռեակտիվ շարժիչներով տիեզերանավերի մղման տեսական մեթոդի արտարկման արդյունքը՝ նիվենյան **Դոն Ժուան** (*Don Juan*) տիեզերանավը: Լ. Նիվենի ծանր գիտաֆանտաստիկ ժանրին պատկանող վիպակի վերնագիրը՝ *Down and Out* (**Անապաստան աղքատները**)⁶, ընդլայնված փոխաբերություն է և իր հասկացական տիրույթ է ներառել ամբողջ ստեղծագործությունը: Որպես դարձվածք՝ *down and out*

⁵ Williams R. *Social Darwinism*.//Herbert Spencer's Critical Assessment. John Offer (ed). Philadelphia: Open University Press, 2000, pp. 186–199; Claeys G. *The "Survival of the Fittest" and the Origins of Social Darwinism*.//Journal of the History of Ideas 61 (2), 2000, pp. 223-240.

⁶ Niven L. *Down and Out*.//The Best from Galaxy. Volume IV, New York, Ace Books, 1978, pp. 8-40.

կապակցությունը պատկերում է թշվառ, անապաստան, կարիքավոր, հասարակության կողմից հալածված անձի կամ սոցիալական խմբի: Որպես այդպիսիք՝ վեպում հանդես են գալիս ոչ միայն 1970 թ. անբուժելի հիվանդության պատճառով սառեցման ենթարկված և 2190 թ. համաշխարհային տիրապետության հասած բռնապետական կառավարության կողմից վերակենդանացված, երեք հարյուր տարի անձայրածիր գալակտիկայում թափառող *Don Juan* անունը կրող տիեզերանավի միակ օդաչուն՝ Ջերոմ Քորբելը, այլև Երկիր մոլորակի վրա ապրող այն հասարակությունը, որին վերջինս հանդիպում է երկրային ժամանակով երեք միլիոն տարի անց հայրենիք վերադառնալուց հետո: Քորբելին վերակենդանացնելու, ուղեղի լվացման (գիտաֆանտաստիկ եզրույթ-նորաբանությամբ՝ *mindwiping*), այսինքն՝ նոր հիշողություններ տեղադրելու միջոցով երկրից արտաքսված հանցագործ դարձնելու և միջաստղային տիեզերանավով գալակտիկա ուղարկելու նպատակը կառավարության համար երկնային մարմինների մթնոլորտը, ջերմաստիճանը, էկոլոգիան փոխելու (գիտաֆանտաստիկ եզրույթ-նորաբանությամբ՝ *terraforming*) միջոցով նոր բնակելի տարածքներ ձեռք բերելն է: Քորբելին վերահսկում և կառավարում է տիեզերանավում նրա հետ «բնակվող» միակ էակը՝ գերբանական, խոսող համակարգիչը, բայց հերոսին ի վերջո հաջողվում է թոթափել համակարգիչի ճլուծը՝, անասելի դժվարություններ հաղթահարելով՝ հասնել գալակտիկայի կենտրոնում գտնվող սև անցքին և հետո վերադառնալ Երկիր մոլորակ: Ավելացնենք, որ գիտաֆանտաստիկ **Ղոն Ժուան** տիեզերանավը ֆիզիկոս Ռ. Բասարդի՝ 1960 թ. հայտնագործած ռեակտիվ շարժիչներով տիեզերանավերի մղման տեսական մեթոդի նիվենյան արտարկման արդյունքն է: Արտարկման պատկերը հետևյալն է՝ **Ղոն Ժուանը** համաձույլ տիեզերանավի տեսական մոդել է, որն օգտագործում է միջաստղային մատերիայի մագնիսական դաշտից հավաքած և խտացման ենթարկած ջրածնի միջուկային էներգիան: Նույնիսկ առանց վառելանյութի մեծ պաշար հավաքելու՝ այն կարող է զարգացնել հսկայական արագություն: Տեսաբանները կարծում են, որ կարելի է ստեղծել համաձույլ, թեթև և փոքր շարժիչ, եթե հնարավոր լինի կառավարել վերերկրային մագնիսական խտացման գործընթացը և կանխել պլազմատիկ անկայուն տատանումները⁸: Հենց այս «հնարավորն» է, որն արտարկվելով դարձել է գիտաֆանտաստիկ իրականություն:


Գծային արտարկման մեթոդի կիրառմամբ քննենք նիվենյան ևս մեկ օրինակ, որտեղ՝ որպես ճանաչողական հնար, արտարկման իրացման գործում կարևոր դեր է կատարում հասկացական տիրույթների ընդլայնումը: *Don Juan raced above a sea of*

⁷Bussard ramjet. Wikipedia, 2014, <[http://en.wikipedia.org/wiki/Bussard ramjet](http://en.wikipedia.org/wiki/Bussard_ramjet)>, Accessed January 21, 2015.

⁸Fusion rocket. Wikipedia, 2014, <http://en.wikipedia.org/wiki/Fusion_rocket>, Accessed August 5, 2015.

churning stars. In a normal galaxy they would have been crowded enough. Here, forced into a plane by the spin of giant black hole at the centre, they were crowded to death. Dying stars burned with a terrible light (Դոն Ժուանը սլանում էր անհանգիստ աստղերի ծովի վրայով: Մովորական գալակտիկայում դրանք իրենց սովորական բույլերը կկազմեին: Այստեղ, կենտրոնում գտնվող հսկայական սև անցքի պտտահողմի պատճառով մի կողմ մղված՝ դրանք դատապարտված էին մահվան: Մեռնող աստղերը վառվում էին ահավոր լույսով:)

Ընդլայնված փոխաբերական և հասկացական տիրույթներին առնչվող $y=cx+a$ գծային ֆունկցիան կունենա հետևյալ պատկերը.



Մակդիրով արտահայտված առաջին փոփոխականը (*a sea of churning stars – անհանգիստ աստղերի ծովը*) հենց այս, բացասական առնշանակայնությամբ օժտված ձևակերպմամբ մեծապես պայմանավորում է նախադասության հետագա ոճավորումը և մեկնաբանվում *c* հաստատունի (*forced into a plane by the spin of giant black hole – հսկայական սև անցքի պտտահողմի պատճառով մի կողմ մղված*) հետ ունեցած իր պատճառահետևանքային կապի շնորհիվ: Հաստատուն միավորն իր վրա է կրում նախադասության հասկացական արտարկման ամենամեծ բեռը, որը հետևյալն է. տեսականորեն, հաշվի առնելով մատերիայի և էներգիայի փոխակերպման վերաբերյալ ներկայիս գիտական ուսումնասիրությունները, կարելի է ենթադրել, որ արևից մի քանի անգամ մեծ չափեր ունեցող աստղերի մասնատման հետևանքով տիեզերքում կարող են առաջանալ որոշակի տարածություններ, որոնք էլ 1960-ականներին անվանվեցին «սև անցքեր»: Հարաբերականության տեսության լույսի ներքո դիտարկելիս՝ սև անցքերի արտարկման հնարավորությունները մեծանում են: Այդուհանդերձ, ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները խիստ վերապահումով են մոտենում այն փաստին, որ նշանակալի զանգված ունեցող աստղի մասնատված մատերիան կարող է նեյտրոնային-աստղային վիճակից մեկ այլ վիճակի փոխակերպվել և վերածվել սև անցքի: Այսպիսով, սև անցքերը՝ տիեզերական այն հանրահայտ տարածությունները,

որտեղ բազմիցս հայտնվում են գիտաֆանտաստիկ ստեղծագործությունների հերոսները, և սլանում են լույսից արագ ընթացող տիեզերանավի մոդելները, առայժմ իրականություն են միայն գիտական ֆանտաստիկայում:

Այս օրինակի *c* հաստատունի առնչությամբ ավելացնենք, որ աստղերի իրարանցման պատճառը հսկայական սև անցքն է, որի առաջացրած պտտահողմը խառնիխուռն մի կողմ է նետել նախկինում կանոնավոր դասավորված աստղաբույլերը: Իրավիճակի ողբերգականությունը բազմապատկվում է *x* փոփոխականի (*were crowded to death* – **դասապարտված էին մահվան**) միջոցով, որն, ինչպես գիտենք, պայմանավորում է *y* փոփոխականի (*a sea of churning stars* – **անհանգիստ աստղերի ծովը**) արժեքը և բացահայտում աստղերի իրարանցման պատճառը, այն է՝ **աստղային ամբոխը մեռնում է**: Այս միտքը վերահաստատվում և իր հանգուցալուծումն է գտնում *a* հաստատունի և հատկապես դրա բաղադրիչները կազմող *dying stars* (**մեռնող աստղեր**) և *terrible light* (**ահավոր լույս**) մակերային շարույթներով՝ *ահավոր լույսով բոցավառվող աստղերն իրոք «մեռնում են»*:

ЭКСТРАПОЛЯЦИЯ КАК СТИЛИСТИЧЕСКИЙ ПРИЕМ В ДИСКУРСЕ НАУЧНОЙ ФАНТАСТИКИ

МУРАДЯН Г. А.

Резюме

Экстраполяция – это сопоставление образного и рационального в дискурсе научной фантастики, и её анализ раскрывает когнитивные и эмоциональные процессы и лингвистические средства их реализации. Экстраполяция является важным инструментом, используемым в анализе научно-фантастической метафоры.

EXTRAPOLATION AS A STYLISTIC DEVICE IN SCIENCE FICTION DISCOURSE

G. MURADIAN

Abstract

Extrapolation is the juxtaposition of the imaginative and the rational in the discourse of science fiction, and its analysis reveals the cognitive and emotive processes and the linguistic means of their realization. Extrapolation, thus, is an important tool, which has been applied to the analysis of science fiction metaphor in the present paper.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԳԵՐԵՆԻ ԲԱՅԱՍԵՌԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԶԱՔԱՐՅԱՆ Շ. Ի.

Ժամանակակից թուրքերենն ունի բայասեռի յուրահատուկ ձևեր, որոնք հանդես են գալիս ձևախմբաստային և շարահյուսական հետաքրքրական դրսևորումներով: Բայասեռի կարգի ուսումնասիրությունն ունի հարուստ ավանդույթներ: Թուրքերենի բայասեռի վերաբերյալ թուրք հեղինակների աշխատությունները սակավաթիվ են և կրում են մակերեսային, նկարագրական բնույթ: Վերջին տարիներին թուրքագետների՝ բայասեռի ավանդական սահմանումը ենթարկվում է քննադատությունների: Երկարատև քննարկումներից հետո գիտնականները տարակարծիք են թուրքերենի սեռերի քանակի հարցում՝ այն պայմանավորելով լեզվի քերականական առանձնահատկություններով, գործողության կամ եղելության մասնակիցների քանակով: Նրանք տարբեր կերպ են մեկնաբանում սեռերի բովանդակությունն ու կիրառության ոլորտները:

Թուրքերենի բայասեռն առավել ընդգրկուն քննել է լեզվաբան Մ. Էրգինը՝ «*Türk Dil Bilgisi*» («**Թուրքերենի քերականություն**»)՝ աշխատության մեջ: Այն նվիրված է արևմտյան թուրքերենի քերականությանը: Առաջաբանում հեղինակն ընդգծում է, որ իր ուսումնասիրությունը կատարել է ոչ թե արևելյան և արևմտյան քերականական ավանդույթների շրջանակում, այլ լեզվի կառուցվածքի թելադրած սկզբունքների հիման վրա: Վերլուծելով քերականական միավորների արդի վիճակը, դրանց պատմական զարգացումները, համեմատականներ անցկացնելով հին թուրքերենի և թյուրքական լեզուների հետ՝ Մ. Էրգինը, թուրքերենի բայասեռեր կազմող ածանցները դիտարկել է որպես բառակազմական իրողություն²:

Լեզվաբան Ն. Քոչը բայի անցողականության և անանցողականության հենքի վրա դասակարգում է թուրքերենի բայասեռերը՝ կատարելով նկարագրական մակարդակի ձևաբանական վերլուծություն³: Նա թուրքերենում տարանջատում է հինգ սեռ՝ *Ettken* (հիմնական-ներգործական, գերմ. *aktivum, aktiv, ֆրանս. verbe actif, անգլ. active, active verbe*), *Edilgen* (կրավորական, գերմ. *passiv, passivum, ֆրանս. verbe passif, անգլ. passive verb*), *Dönüşlü* (անդրադարձ, գերմ. *reflexives verb, ֆրանս.*

¹ Ergin M. *Türk Dil Bilgisi*, İstanbul, Boğaziçi Yayınları, 2001, s. 406.

² Նույն տեղում, էջ 204-207:

³ Koç N. *Yeni Dilbilgisi*, İstanbul, İnkılap Kitabevi, 1990, s. 331-337.

verbe reflexi, verb pronominal, անգլ. reflexive verb), *İşteş* (փոխադարձ-համատեղ, գերմ. *reziprokes verb*, ֆրանս. *verbe reciproque*, անգլ. *reciprocal verb*), *Ettirgen* (պատճառական, գերմ. *faktiv, kausativum*, ֆրանս. *verbe causatif, verbe factitif*, անգլ. *causative verb, factitive verb*)⁴:

Առավել հայտնի թուրք լեզվաբան Չ. Քորքմազը, հենվելով արևմտյան լեզվաբանության տեսությունների և մեթոդների վրա, հաշվի առնելով թուրքերենի առանձնահատկությունները՝ իր մենագրության մեջ քննել է նաև թուրքերենի բայասեռը՝ իմաստային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում⁵: Ինչպես գրում է նա, այսօր թուրք լեզվաբանության մեջ շարունակվում է այն բանավեճը, թե սեռ կազմող ածանցներն արդյոք բառակազմակա՞ն, թե՞ խոնարհման ածանցներ են: Հեղինակն այս ածանցները որակելով **բայից բայ կազմող**՝ միաժամանակ բայասեռի կարգը քննում է բայի անցողականության և անանցողականության և շարահյուսության տեսանկյունից⁶: Նա թուրքերենի համար ընդունում է վեց սեռ՝ ներգործական՝ *Ettken* (հիմնական-ներգործական), *Edilgen* (կրավորական), *Meçul/Özensiz* (անենթական), *Dönüşlü* (անդրադարձ), *İşteş* (փոխադարձ-համատեղ), *Ettirgen* (պատճառական)⁷:

Ըստ Մ. Հենզիրմենի՝ սեռը բայի՝ ուղիղ խնդիր ստանալու կամ ենթակայի հոլովի համաձայն սեռային ածանցներով նոր բայ կազմելու քերականական կարգ է⁸: Թ. Գենջանը, տարանջատելով չորս սեռ, նշում է, որ սեռը բայերի՝ ենթակաների և ուղիղ խնդիրների հետ համաձայնությամբ ձևեր բերած առանձնահատկությունն է⁹: Նա պատճառականն առանձին սեռ չի համարում, այլ միայն ընդունում է, որ կան պատճառական բայեր, որոնք անցողական են¹⁰: Մ. Հենզիրմենը բայասեռը բաժանում է հինգ տեսակի՝ **հիմնական (ուղիղ), փոխադարձ-համատեղ, անդրադարձ, կրավորական և պատճառական**¹¹, Գ. Լևիսը՝ չորս¹²:

Ծագումով հայ լեզվաբան Հ. Դիլաչարը (Մարթայան), բայասեռը բնութագրելով որպես ենթակայի և խնդրի փոխհամաձայնության վրա հիմնված

⁴ Նույն տեղում, էջ 331:

⁵ Նույն տեղում:

⁶ **Korkmaz Z.** *Türkiye Türkçesi Grameri (Şekil Bilgisi)*, Ankara, TDK Yay., 541-546:

⁷ **Korkmaz Z.**, նշվ. աշխ., էջ 538-567:

⁸ **Hengirmen M.** *Türkçe Dilbilgisi Yabancılar İçin, I Baskı*, Ankara, 2001, s. 146.

⁹ **Gencan T.** *Türk Dilbilgisi*, Ankara, Ankara Dil Kurumu, 1979, s. 125.

¹⁰ Նույն տեղում, էջ 129:

¹¹ **Hengirmen M.**, նշվ. աշխ., էջ 132:

¹² **Lewis G.** *Teach Yourself Turkish*, London, Oxford Uni. Press, 1953, p. 92, 106.

կարգ¹³, թուրքերենի համար առանձնացնում է 10 սեռ՝ 1. *Etken (aktif)*, *Geçişli (անցողական)*, *Geçişsiz (անանցողական)*, 2. *Edilgen (passif-կրավորական)*, 3. *Orta ya da Etkin (ներգործական)*, 4. *Öze Dönüşlü (անդրադարձ)*, 5. *Karşılıklı (փոխադարձ)*, 6. *İsteşlik (համատեղություն)*, 7. *Köktes (անդրադարձ)*, 8. *Oldurumlu (հարկադրական)*, 9. *Ettirimli (պատճառական)*, 10. *İki dereceli ettirimli (միջնորդավորված հարկադրական, այսինքն՝ գործողությունը ինչ-որ միջոցով անել տալ): Դիլաչարը քննում է նաև թուրքերենում առկա սեռերի համատեղ կիրառության երևույթը՝ նշելով, որ բայարմատը միաժամանակ կարող է ստանալ մի քանի սեռային ածանց: Օրինակ՝ *bul-un-dur-ul-mak (Öze Donüşlü-Oldurumlu-Edilgen)* գտնվել (անդրադարձ-հարկադրական-կրավորական), *gör-üş-tür-ül-mek (Karşılıklı-Ettirim-li-Edilgen)* կազմակերպվեց հանդիպում, հանդիպեցնել (փոխադարձ-պատճառական-կրավորական)¹⁴: Ըստ լեզվաբանի՝ այս սեռերի տեսակների համար կարևորը ոչ թե բայարմատն ու վերջավորությունն են, այլ՝ իմաստն ու շարահյուսական պաշտոնը: Հավելենք, որ նման կառույցները հայերեն բառացի համարժեքներ չունեն և թարգմանվում են հետևյալ կերպ՝ *Annesiyle görüşürüldü՝ կազմակերպվեց հանդիպում մոր հետ: Müze bu ayın sonuna kadar ziyareçilere açık bulundurulacaktır՝ թանգարանը մինչև ամսվա վերջը բաց է լինելու այցելուների համար:**

Որոշ թուրք լեզվաբաններ գործողության ու դրա օբյեկտի հարաբերությունը չեն ներառում սեռի կարգի մեջ¹⁵: Այնինչ ակնհայտ է, որ սեռն ընդգրկում է գործողության զանազան հարաբերություններ:

Թյուրքական լեզուների համեմատական քերականության և ժամանակակից թուրքերենի համակարգված քերականության համակողմանի ուսումնասիրության ոլորտում բացառիկ ներդրում ունեն ռուսական և խորհրդային լեզվաբանական դպրոցները:

Հատկապես մեծ արժեք է ներկայացնում Ա. Կոնոնովի՝ ժամանակակից գրական թուրքերենի քերականությանը նվիրված ստվարածավալ մենագրությունը, որտեղ հեղինակը տվել է թուրքերենի հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության համակարգված նկարագիրը¹⁶: Ըստ նրա՝ սեռի կարգն արտահայտում է սուբյեկտի (գործողություն կատարողի) և օբյեկտի միջև տար-

¹³ **Dilaçar A.** *Gramer, Tanımı, Adı, Kapsamı, Türleri, Yöntemi, Eğitimdeki Yeri ve Tarihçesi, TDAY Belleten, 1971, s. 105-106.*

¹⁴ Նույն տեղում, էջ 106:

¹⁵ **Yücel B.** *Türkiye Türkçesinde Zarf-Fil Eklerinin Yapı Bakımından Sınıflandırılması Üzerine, Türklük Bilimi Araştırmaları, Sayı. 9, Sivas, 2000, s. 75, նույնի՝ Türkiye Türkçesinde Fiil Çatıları, Türk Gramerinin Sorunu, c. II, Ankara, 1999, s. 55.*

¹⁶ **Конов А.** *Грамматика современного турецкого литературного языка, изд. АН СССР, М.-Л., 1956, с. 191.*

բեր հարաբերությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում բայի ձևի մեջ: Օբյեկտի նկատմամբ գործողության հարաբերությունը դրսևորվում է հոլովային կառավարմամբ: Ըստ օբյեկտի հոլովային ձևի հետ իրենց համաձայնության՝ բայերը բաժանվում են անցողականի և անանցողականի¹⁷: Ա. Կոննովը թուրքերենի համար առանձնացնում է բայի հինգ սեռ՝ **հիմնական (ուղիղ), ռիսադարձ-համատեղ, անդրադարձ, կրավորական, պատճառական**¹⁸:

Ա. Իվանովը համեմատական մեթոդի կիրառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով թյուրքական լեզուների տիպաբանական նմանությունները՝ թուրքերենի բայասեռը դիտարկում է որպես բառագիտական-քերականական կարգ, որին բնորոշ են բառագիտական և քերականական «փոխազդեցությունները»: Միայն բացառիկ դեպքերում է այդ ամենը կրում միմյանցից մեկուսացած բնույթ¹⁹: Իվանովը թուրքերենի բայասեռը բաժանում է երեք տեսակի՝ կրավորական-անդրադարձ, փոխադարձ-համատեղ, պատճառական-կազուատիվ²⁰:

Ժամանակակից թուրքերենի բայասեռի ընդհանուր տեսությունը քննել է նաև Ա. Շչերբակը²¹: Նրա բնութագրմամբ՝ թյուրքական լեզուների համեմատական, նկարագրական և քերականական աշխատություններում սեռի կարգի լուսարանման հարցը բարդանում է նրանով, որ սահմանումները ոչ միշտ են իմաստավորվում ըստ համընդհանուր հաստատումների. ինչը հնդեվրոպական լեզուների քերականական աշխատություններում կոչվում է սեռ, բովանդակության և կառուցվածքի տեսանկյունից թյուրքական լեզուներում իր լրիվ համարժեքը չունի²²: Ինչպես նշում է Ա. Շչերբակը, «թյուրքական լեզուներում յուրաքանչյուր ձև, որ անվանում են սեռ, արտահայտում է ինքնուրույն կարգ: Հաշվի առնելով առկա քերականական ավանդույթները՝ սեռի մասին պետք է խոսել խիստ պայմանականորեն»²³: Նույն կարծիքն է հայտնում Վ. Խրակովսկին՝ նշելով, որ թյուրքագիտության մեջ **սեռ** եզրը օգտագործվում է իմաստաբանական տարասեռ երևույթների միավորման նպատակով, որոնք չունեն ընդհանուր օրինաչափություններ և միննույն քերականական կարգի մասնավոր նշանակություններ չեն²⁴:

¹⁷ Նույն տեղում, էջ 192:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Иванов С.** Курс турецкой грамматики, часть 2, Грамматические категории глагола, Л., 1977, с. 41.

²⁰ Նույն տեղում, էջ 3-41:

²¹ **Щербак А.** Очерки по сравнительной морфологии тюркских языков, Л., 1981.

²² Նույն տեղում, էջ 100:

²³ Նույն տեղում, էջ 92:

²⁴ **Храковский В.** Тюркский залог с позиций универсальной концепции диатез и залогов (Советская тюркология, Баку, 1989, N 5, с. 20-25).

Յու. Շչեկան, բայաստեռի կարգը քննելով բառափոխության և բառակազմության սահմանների միջև, սեռային ձևերը համարում է ինչպես քերականական գործողությունների կանոնավոր համակարգ, այնպես էլ այն, որ սեռային ձևերը կախված են այս կամ այն բառային հիմքից, և դա է պատճառը, որ որոշ լեզվաբաններ սեռի կարգը համարում են բառաքերականական²⁵: Այնուհետև հավելում է, որ եթե հնդեվրոպական լեզուներում սեռային ձևերն ակտիվ (ներգործական) և պասիվ (կրավորական) են, ապա թուրքերենի համար ընդունում է հինգ սեռ՝ հետևելով Ա. Կոնոնովի դասակարգմանը²⁶:

Ժամանակակից թուրքերենի բայաստեռի՝ պատմականորեն կրած փոփոխություններին ու զարգացման միտումներին անդրադարձել է Ն. Բասկակովը²⁷: Նրա բնորոշմամբ՝ սեռի կարգն արտահայտում է սուբյեկտի (գործողություն կատարողի) և օբյեկտի միջև հարաբերակցությունը, այսինքն՝ գործողության մեջ սուբյեկտի մասնակցության ձևը կամ աստիճանը: Ըստ Ն. Բասկակովի, թուրքական լեզուներում սեռերը բառակազմության տեսակ են: Նա դրանցում առանձնացնում է նաև հատուկ քարացած արտահայտությունները: Սեռի էությունը և տեսակը դրսևորվում են հենց արմատում՝ բայի հիմքում, իսկ օբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները քերականորեն արտահայտվում են հատուկ ածանցներով, որոնք կցվում են բայահիմքին²⁸:

Թուրքական լեզուների համեմատական քննության շնորհիվ Է. Ստորոյանը հանգում է այն եզրակացության, որ բայաստեռը պատմականորեն բառակազմությունից ձևաբանություն անցումային փուլում գտնվող միջանկյալ լեզվական երևույթ է, և թուրքական լեզուներում, ի սկզբանե, այն եղել է զուտ բառակազմական միջոց²⁹:

Թուրքերենի բայաստեռը քննել և հայերենի համապատասխան եզրերով ու համարժեք կադապարներով ներկայացրել են հայ թուրքագետներ Ա. Սաֆարյանը, Ա. Սողոմոնյանը, Տ. Լոբմազոզյանը³⁰:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ լեզվաբանների մի մասը սեռը համարում է բառակազմության տեսակ և բայից բայ բառակազմության հետևանքով ի հայտ եկած քերականական ձև: Ըստ նրանց՝ սեռի էությունը և տեսակը դրսևորվում են հենց արմատում՝ բայի հիմքում, և օբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները

²⁵ Щека Ю. Практическая грамматика турецкого языка, М., 2007.

²⁶ Նույն տեղում, էջ 161:

²⁷ Баскаков Н. Каракалпакский язык, М., 1952, նույնի՝ Турецкий язык, М., 1960.

²⁸ Баскаков Н. Турецкий язык, с. 209.

²⁹ Севортян Э. Аффиксы глаголообразования в азербайджанском литературном языке, М., 1962, с. 50.

³⁰ Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոբմազոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, հ. Ա, Ե. 2007:

քերականորեն արտահայտվում են հատուկ ածանցներով, որոնք կցվում են հիմնական բային³¹: Մյուս լեզվաբանները բայասեռի բնութագրման հարցում նկատի են առնում բայի հետևյալ հատկանիշները՝ ա) գործողությունը բխում է սուբյեկտից, բ) գործողությունն ուղղված է սուբյեկտին, սուբյեկտը ենթարկվում է գործողությանը, գ) գործողությունը բխում է սուբյեկտից և ուղղված է հենց նրան, դ) գործողությունը բխում է մի քանի սուբյեկտներից: Չուզադրության համար նշենք, որ բայասեռի սահմանումների ու բնութագրումների նման ընկալումը համընկնում է հայ լեզվաբանների տեսակետներին. ըստ նրանց սահմանումների՝ բայասեռը ձևաբանական կարգ է, որը դրսևորվում է քերականական ուրույն իմաստով և համապատասխան արտահայտչամիջոցներով:

К ВОПРОСУ О КАТЕГОРИИ ГЛАГОЛЬНЫХ ЗАЛОГОВ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

ЗАКАРЯН Ш. И.

Резюме

Категория глагольных залогов является одной из спорных проблем в тюркологии. Ряд лингвистов считает залог видом словообразования и грамматической формой, выявленной в результате словообразования. С их точки зрения суть и вид залога заключаются именно в основе залога, и объектно-субъектные отношения грамматически выражаются особыми аффиксами, присоединенными к глагольной основе. По мнению же других представителей турецкой лингвистической школы залог глагола обусловлен лексемой как его признаком, выступающей в качестве внутренних, грамматических, смысловых, формообразовательно-морфологических и синтаксических особенностей.

ON THE PROBLEM OF THE VERBAL VOICE IN MODERN TURKISH LANGUAGE

SH. ZAKARYAN

Abstract

The order of voice affixes, definitions, word-formative and morphological significance, and the quantity persist staying as one of the disputable issues in Turkic studies. In recent years traditional definition of voice is criticized by different interpretations. A group of linguists considers the verb as word-formative and grammatical form, which is a result of verb-formation from verb to verb. According to their opinion, the essence and form of voice depend on root – the basis of verb and objective-subjective relationship – are grammatically expressed with articular affixes, which are attached to main verb. The second group of linguists in this definition of voice is based on the subordinate meaning of verb and on other similar characters. According to their definitions the voice, being the concrete manifestation of the idea, stems from the nature of verbal lexemes as their internal quality of words with their grammatical, semantic and syntactic features.

³¹ Տե՛ս Բаскаков Н., նշվ. աշխ., էջ 210:

ՕՏԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԴՐՈՇԱԿԻ» ԷՋԵՐՈՒՄ
(1899-1914)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա.

ՀՅԴ «Դրոշակի» խմբագրությունը թերթի գործունեության առաջին իսկ տարիներից, կարևորելով գեղարվեստական գրականության՝ որպես ընթերցողի հետ անմիջական կապի լավագույն միջոցի դերը, պարբերաբար տպագրում էր ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպական հեղինակների ստեղծագործությունները: Դրանց ընտրությունը ուղղակիորեն պայմանավորված էր Երկրում տիրող պատմաքաղաքական իրադրությամբ և ժամանակի առաջադրած խնդիրների արժարժամբ: Անշուշտ, բոլոր ժամանակներում էլ գրականությունն իրականացրել է մարդկային արժեքների պահպանման կարևորագույն խնդիրը (այլ հարց է, թե որքանով է այն հաջողվել):

Օսմանյան բռնատիրության դեմ ազատագրական պայքար մղած ժողովուրդների հոգեբանության վրա անջնջելի հետք էր թողել թուրքական բարբարոսությունը: Նման էին նրանց տառապանքները, ցավերն ու վշտերը, անգամ թշնամու դեմ հերոսական պայքարի դրվագները: Ընդ որում, թերթում տպագրված հեղինակներն հիմնականում անդրադարձել են ն՝ հայ, և՛ այլ ժողովուրդների ազատագրական պայքարի պատմությանը: Այսպես, իտալացի սոցիալիստ-հեղափոխական Ամիլյար Չիպրիանիի «Կիցո»¹ պատմվածքը հերոսականության վառ օրինակ է հանուն հայրենիքի կոպող զինվորի համար: Ժողովուրդների ազատության համար պայքարող կամավորական Չիպրիանին հերոս է անվանում Կիցոյին, որ ծնված էր հրամանատար լինելու համար, սակայն դարձել էր ավագակապետ: Կիցոն սպանվել էր անհավասար մարտում՝ փրկելով ընկերների կյանքը: Նրա կերպարի միջոցով հեղինակը ընդհանրացնում է պայքարի անհրաժեշտության և հերոսականության գաղափարները՝ գրելով՝ «Հեղափոխության հասկություններից մեկն է դուրս բերել ամբոխի միջից հերոսներ, որոնք կոպում և մեռնում են գաղափարի համար»²: «Հայերը»³ հողվածում Չիպրիանին իր մտահոգությունն է հայտնում հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Նա՝ որպես բարեկամ, անկեղծ գրույց է վարում հայ մարդու հետ՝ ասելով, որ բավական են «տառապանքներն ու մարտիրոսաբանությունը», եկել է քաջության և հանդգնության ժամանակը: Նա փորձում է ոգեշնչել՝ օրինակներ բերելով իր մասնակցությամբ մղված կռիվների

¹ Դրոշակ, 1899, N 9, հոկտեմբեր, էջ 142:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, 1901, N 9, դեկտեմբեր, էջ 149 (Բրբեյ պատասխան «Երօ-պայի Հայ Ուսանողական Միութեան» ղինումի՝ Ա. Չիպրիանի հետևյալ յօդածը հրատարակած է «Լա պտիտ Ռեբիլիկի» մէջ):

պատմությունից. «Տեսէք պզտիկ Կրետէն, որուն համար ես երկու հեղ կուեցայ: Ապստամբեցաւ ան, նեղ օրեր քաշեց, կուեցաւ, և ազատեցաւ թրքական լուծէն: Անոնց պէս ըրէք, դուք այն ատեն պիտի շահագրգռէք ժողովուրդները ձեր դատով»⁴: Չիպրիանին թուրքի հետ թուրքի պէս վարվելու կոչ է անում՝ արդար համարելով ազատության համար մղվող ամեն պատերազմ, ամեն միջոց: Նա վստահեցնում է, որ ժողովուրդն ինքն է ընտրում իր ապրելու եղանակը, այն է՝ «Կամ մեռնիլ հերոսի պէս զէնքը ասիին, կուելով, կամ մեռնիլ անարի և վատասիրտ, համակերպ ու լալկան»: Չիպրիանիի արտահայտած մտքերի, դատողությունների տրամաբանական շարունակությունն է Պրոսպեր Մերիմեի «Մաթեո Ֆալկոնե»⁵ պատմվածքը: Մաթեո Ֆալկոնեն «նույնչափ լավ ընկեր է, որչափ և վտանգավոր թշնամի»: Նա ողորմած էր շատերի, բայց ոչ թշնամու, առավել ևս, մատնիչի հանդեպ: Փոքրիկ Ֆորտունատոն նրա որդին, հինգ ֆրանկանոցի դիմաց վիրավոր Ջիանետտոյին թաքցրել էր խոտի դեզի մեջ, ապա և մատնել վերջինիս՝ չկարողանալով դիմանալ փայլուն ժամացույց ունենալու գայթակղությանը: Մոլեգնած Մաթեոն սատնասրտորեն սպանում է իր մինուճար որդուն, որը հիմա միայն մատնիչ էր իր համար: Նա հավատացած էր ու համոզված՝ արդարացի էր իր արարքը. չէ՛ որ զինվորի համար պատիվը հայրենիքին ազնվորեն ծառայելն էր:

Չվարանել, դիմակայել հողմերին, գնալ նվիրական երազների հետևից և հանուն գերագույն գաղափարի պատրաստ լինել անգամ անհնարինը հնարավոր դարձնելուն. սա էր Պ. Մերիմեի հերոսի կենսափիլիսոփայությունը: Այս գաղափարախոսության այլաբանական արտահայտությունն են Մ. Գորկու «Սրբկահալը»⁶ «Սրբկահավի երգը»⁷, «Կյանքի դիմաց»⁸, «Խորտակված կապանքներ»⁹ խոհափիլիսոփայական պատկերները: Խմբագրության դիտարկմամբ, Գորկին «իր ուղղութիւնով անպայման ամենահամակրելին» էր հայ ընթերցողի համար: «Ռուսական գնդաններում» հողվածը ներկայացնում է սիրիայան բանտերում կատարվող քստմնելի եղեռնագործությունները¹⁰: Մակայն Գորկուն առավել բարկացնում էր քաղաքակիրթ հասարակության բացակա-

⁴ Նույն տեղում:

⁵ Թերթը նշում է. «Ֆրանսիացի վիպագիր Մերիմեի (1803-1870) այս պատկերը առաջարկում ենք մեր ընթերցողին իբր իրական կեանքից վերցրած մի ճշգրիտ նկար, որ ցույց է տալիս, թե ինչպես են նայում ուրիշ երկրներում մատնութեան վրա» (նույն տեղում, 1900, N 5, հուլիս, էջ 77):

⁶ Նույն տեղում, 1901, N 6, օգոստոս, էջ 99:

⁷ «Առաջին անգամ հայ իրականության մեջ թարգմանել է Ավ. Բսահակյանը, և առաջին անգամ հրատարակել է «Դրոշակը» Ժնևում 1901 թ. արևմտահայերեն «Սրբկահավը» վերնագրով» (Բսահակյան Ավիկ, Ավետիք Բսահակյանը և ոռու գրականությունը, Ե., 1984, էջ 421):

⁸ Դրոշակ, 1901, N 8, նոյեմբեր, էջ 143:

⁹ Նույն տեղում, 1903, N 1, հունվար, էջ 14:

¹⁰ Նույն տեղում, 1912, N 9, հոկտեմբեր, էջ 220:

յությունը: Նա խոսքն ուղղում է հեղափոխական «պատակտուն բանակի», ամբողջ Ռուսաստանի դեմ, որ լռելյայն հանդուրժում է ամեն տեսակ անարգանք: Մեղադրում է ռուս հասարակությանը սեփական արժանապատվության նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար:

«Դրոշակի» խմբագրությունը ծանուցում է Փարիզում հիմնադրված «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի գործունեության մասին՝ հայտնելով, որ «Թերթոն» գրական բաժինը պարբերաբար անդրադառնալու է այժի ընկնող հրապարակումներին՝ նպատակ ունենալով հայ հասարակության զանազան խավերին տեղյակ պահել Եվրոպայում մեզ համակիր հայտնի գրողների, հասարակական-քաղաքական գործիչների մտքերին¹¹: Հետաքրքրական է Ժ. Կլեմանտյի «Արյունաշաղախ ձեռքը»¹² հոդվածը, որտեղ հեղինակը վերլուծության է ենթարկում մեծ տերությունների՝ «որպես դարանամուտ գազանների» վարած քաղաքականությունը: Աշխատավոր ժողովուրդները ուժասպառ են լինում, որպեսզի «բազմանան» իրենց դարավոր ջանքերի արդյունքների «ոչնչացման գործիքները», իսկ եղբայրության քարոզները ծիծաղելի, նույնիսկ զգվելի են դարձել: Հատկապես ուշագրավ էին Ֆրանսիս դը Պրեսանսեի և խմբագրապետ Պիեռ Քիյառի հոդվածները, նամակները, որոնք հիմնականում իրադարձությունների պարզաբանումներ էին, վերլուծություններ, տեսակետներ: Թերթը մեջբերում է անում Պրեսանսեի «Ցարը և Հայերը» հոդվածից, որում խոսվում է հայերի նկատմամբ ռուս կառավարության վերաբերմունքի մասին: Պրեսանսեի մարդկային նկարագիրը պարզորոշ երևում է այն անկեղծ ոգևորության մեջ, որն ապրում էր նա Օսմանյան Թուրքիայում կատարվող բարեփոխումների ժամանակ: Իսկ Պիեռ Քիյառը լավատեսությամբ հավատացնում էր, որ եկել է թուրք և թրքահպատակ այլ ժողովուրդների համերաշխ ապրելու ժամանակը: Նա գրում է, որ հենց թուրք գյուղացիները նույնքան տառապած էին, որքան և հայերը, որոնց հետ երբեմն խաղաղ ապրում էին: Նրանք սկսել են հասկանալ, որ իրենց միակ և բուն թշնամին Աբդուլ Համիդն է և «զիշակեր շուներու այն ռհմակը», որն ապրում է իր գործած ոճիրների ավարով: Քիյառը համոզված էր, որ թուրքերը, հայերը, այբանացիները, բուլղարները, հույները, հրեաները և քրդերը «այլևս չպիտի բավականանան ունայն անեծքներով, այլ զինվեն գերագույն նպատակի գիտակցութեամբ»¹³: «Դրոշակը» բազմաթիվ էջեր է նվիրում Քիյառին՝ նրան համարելով բոլոր հայասեր եվրոպացիների մեջ մեզ ամենահարազատն ու մտերիմը, ավելի քան ընկեր-բարեկամ, այդ բառի

¹¹ Նույն տեղում, 1900, N 9, հոկտեմբեր, էջ 142:

¹² Նույն տեղում, էջ 143:

¹³ Նույն տեղում, էջ 6:

իսկական նշանակությամբ, «մի ճշմարիտ համաշխարհային քաղաքացի»¹⁴: Ջարմանալի խորն էր նրա սերը հայ ժողովրդի նկատմամբ:

Գաղտնիք չէ, որ եվրոպական աստաններում Հայկական հարցի նկատմամբ անտարբերության մթնոլորտ էր ձևավորվել. պետք էր նախ «խոսեցնել մեծ մամուլը», և դա կարճես հաջողվեց Պրեսանսեին: Հողվածագիրը գովեստով է խոսում նրա մատուցած ծառայության մասին՝ նշելով, որ նրա տրամադրության տակ էր Temps-ի առաջին սյունակը, որտեղ արժարժվում էին միջազգային քաղաքականության կնճռոտ հարցերը: Եվ այդ ազդեցիկ օրգանի առաջին սյունակը նվիրեց «Պրո Արմենիային» ու նրա դասին¹⁵: Նրանց շնորհիվ թերթը հաջորդ համարից արդեն դրսևորեց իր քաղաքական էրանգը: Այն, տեղեկատու օրգան լինելուց զատ, կռիվ էր տալիս հայ ժողովրդին ստրկացնող երկու մեծ բռնապետությունների՝ Թուրքիայի և Ռուսաստանի դեմ:

ПРОИЗВЕДЕНИЯ ИНОСТРАННЫХ ПИСАТЕЛЕЙ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ "ДРОШАК"(1899-1914)

АБРААМЯН А. А.

Резюме

С 1899 г. газета "Дрошак" издавала армянские переводы ряда произведений зарубежных авторов, таких как "Кичо" Амилькара Чиприани, "Матео Фальконе" П. Мериме, "Песня о Соколе" М. Горького, "Молодой солдат" Ламенне, а также статей Клемансо, Пьера Кийар, Пресансе, опубликованных в журнале "Про Армения", издававшемся во Франции. Эти произведения были созвучны идеологии национально-освободительной борьбы и отражали множество проблем, актуальных для армянского народа.

WORKS OF THE FOREIGN WRITERS IN THE NEWSPAPER "DROSHAK" (1899-1914)

A. ABRAHAMYAN

Abstract

In 1899 the editorial office of "Droshak" newspaper publishes translations of some works by foreign writers such as "Kicio" by Amilcar Cipriani, "Mateo Falcone" by P. Mérimée, "Song of a Falcon" by M. Gorki, "Young Soldier" by Lamennais, as well as some articles by Clemenceau, P. Quillard, Pressensé that were being published in "Pro Armenia" journal in France. The content of these works was consistent with the ideology of the national liberation struggles, reflecting many issues that the Armenians were facing and keeping informed about the point of view of European intellectuals supporting Armenians in this struggle.

¹⁴ Նույն տեղում, 1912, N 1, հունվար, Առաջնորդող:

¹⁵ Նույն տեղում:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՇՈՒՐՁ

ՂԱԶԱՐՅԱՆ Գ. Ա., ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Վ.

Գրագողությունը գիտության, արվեստի և առհասարակ նորարարության ոլորտում կիրառվող հնարք է, որը բնորոշվում է «ուրիշի մտավոր սեփականությունն ապօրինաբար յուրացնելու» գործելակերպով: Գրագողությունը թույլ է տալիս ֆորմալ՝ ձևական մակարդակում մրցակցություն ապահովել, սակայն արդյունքը մնում է զուտ փաստաթղթային մակարդակում:

Գրագողության գործելակերպը դիտարկվում է արագ արդյունքի հասնելու և անհատի կրթական նվաճումներում ձև-բովանդակություն կապի խզման համատեքստում: Նշված կապի խզումը պայմանավորված է աշխատաշուկայում աշխատատուի մոտ դիմորդի կրթությունը փաստող հավաստագրերի գործառականության և ազդեցության ցածր մակարդակով:

Հայաստանում այս խնդրի հասարակագիտական տեսանկյունից կատարված դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ մեր բուհական համակարգում ամբողջությամբ չեն գիտակցված գրագողության հետևանքները, գոյություն չունի երևույթի նկատմամբ մեկ ընդհանուր ինստիտուցիոնալ մոտեցում, իսկ բուհական համակարգը ուսանողին բավարար չափով չի իրազեկում գրագողության վտանգների մասին¹: Հետևաբար ունենում ենք փաստաթղթային կեղծիք, քանի որ գրագողության մեթոդով ստեղծված աշխատանքները ուսանողի կամ գիտական աստիճանի հայցորդի համար այն փաստական հիմքն են, որ վերջինիս թույլ էին տալիս որոշակի գիտական աստիճանի հասնել կամ կոչում ձեռք բերել: Իրավական առումով, սակայն, կարելի է գտնել ինչպես հեղինակի կարգավիճակի՝ փոխանցվող չլինելու, այնպես էլ փաստաթղթերի կեղծման համար մինչև իսկ քրեական պատասխանատվություն ենթադրող դրույթներ:

Տեխնիկական առումով գիտական աստիճանի ապօրինի յուրացման ճանապարհները մի քանիսն են՝ (ա) այլ անձի հեղինակած աշխատանքի ձեռքբերում կամ (բ) գրագողություն: Ընդ որում, գործնականում հնարավոր է նաև երրորդ տարբերակը՝ (գ) այլ անձի կողմից գրագողությամբ իրականացված աշխատանքի ձեռքբերումը²: Գրագողության այս հնարավոր մեխանիզմները հաշվի առնելով՝

¹ Գրագողությունը հայաստանյան բուհերում. ինչպես քանդել թնջուկը, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Լեզու, հասարակություն, հաղորդակցություն 1 (2), Ե., 2012:

² Երբեմն գիտական աշխատանքում տեղ գտած մեջբերումը կատարվում է պլագիատից: Այս մասնավոր դեպքերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Darde, J-N** La culture du plagiat au cœur de la 71e

նկատենք նաև, որ տվյալ երևույթը լեզվաբանական տեսանկյունից հաճախ քննարկվում է պարաֆրազի և մեջբերման հնարների հետ մեկտեղ՝ իբրև դրանց հարակից հասկացություն³:

Տեսականորեն նշված խնդիրը, որը ոչ այնքան տեխնիկական է, որքան գլոբալ՝ մենթալիտետային, բխում է հասարակության մեջ գիտելիքի նկատմամբ տրամադրվածությունից և գիտելիք-նվաճում կապի ըմբռնումից: Այլոց մտավոր սեփականության հաշվին «առաջ գնալը» որպես բացասական երևույթ չի գիտակցվում, եթե առկա են այլ՝ ավելի խոշոր, համակարգային բացեր, որոնք անձին թույլ են տալիս սեփական խղճի առջև արդարացում գտնել՝ գրագողության միջոցով որոշակի մասնագիտական աստիճանի կամ դիրքի հասնելուց հետո:

Իրավական տեսանկյունից խնդրի արմատները, ըստ էության, կարելի է գտնել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում⁴, որի վեցերորդ և ութերորդ հոդվածների դրույթները կամա թե ակամա արտացոլում են նշված հակասությունը. **Հոդված 6.** «Հեղինակը». Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը: [...] **Հոդված 8.** «Հեղինակային կանխավարկածը». Հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործության վրա, կամ ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործությունը հրատարակելիս, կամ ում անունը որպես հեղինակ նշված է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունում, կամ նոտարի մոտ, կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում ի պահ հանձնված ստեղծագործության օրինակի վրա, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Սույն դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ այդ անունը կեղծանուն է, և կեղծանունով հանդես եկող հեղինակի անձը կասկած չի հարուցում»:

Նշված դրույթների հակասությունն իրավական դաշտում որոշակի անհասկանալիություն է առաջացնում, ուստի ոլորտի վերահսկելիությունը մնում է առանձին կրթական կառույցների ամենաբարդ առաջադրանքների շարքում: Այս իրավիճակում գիտական աստի-ճանաչնորհման համակարգը ամբողջությամբ ստանձնում է յուրատեսակ գտիչի դեր (մշակութային ուսումնասիրություններում նման գտող մեխանիզմները կոչվում են *gate-keeper*)՝ կրելով գիտության ասպարեզ ներթափանցող նորանոր կադրերի ստեղծման և դրանից բխող հետևանքների պատասխանատվությունը:


section du CNU: [1] Des comitns de snlection, facteurs de contamination, 2013, <http://archeologie-copier-coller.com/?p=9424>:

³ Eco Um. Come si fa una tesi di laurea, Milano: Bompiani, 2006, p. 180.

⁴ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 15.06.2006.

Տեխնիկական լուծումներ: Առանձին գտող մեխանիզմները, տվյալ պարագայում՝ գիտական աստիճան շնորհող կառույցները հնարավորություն ունեն կիրառելու նորագույն ծրագրային համակարգեր՝ գրագողության դեպքերի բացահայտման նպատակով: Օրինակ՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը սկսել է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների տեքստերում գրագողության դեպքերը որսացող ծրագրային հատուկ համակարգեր կիրառել: Դրանք գործի դրվելուն պես տասնյակ հայցորդների ատենախոսություններ մերժվել և վերադարձվել են՝ աշխատանքում տեղ գտած պատճենումների առկայության փաստական հիմնավորմամբ: Այդ համակարգերից է, օրինակ, *Plagiarism Detector* ծրագրային համակարգը, որը թույլ է տալիս երևակել և պարզել գիտական տեքստում տեղ գտած միջտեքստային հղումների և արտագրված հատվածների համամասնությունը (տե՛ս պատկեր 1):

Plagiarism Detection Chart:



Պատկեր 1

Համակարգային լուծումներ: Ֆրանսիայում Համալսարանների ազգային խորհուրդը (*Conseil National des Universités*) սահմանել է հստակ վարչարարական և իրավական պատժամիջոցներ, համաձայն որոնց գրագողության հայտնաբերման պարագայում գիտական աշխատանքը, որպես այդպիսին, չեղարկվում է: Մասնավորապես, օրինակ, Լիոնի համալսարանում, 2000-ական թվականից սկսած՝ պաշտպանության երաշխավորվող ավարտական աշխատանքները ստուգվում են «նմանությունների հայտնաբերման ծրագրային համակարգերի» միջոցով: Խրախուսվում է չհաստատել այն դիպլոմայինները, որոնք գրվել են համացանցի ի հայտ գալուց հետո և պարունակում են գրագողության փաստացի նշաններ⁵: Որոշ հաստատություններում սահմանվում են նաև բարոյական պատժամիջոցներ, որոնք հարվածում են գրագողություն կատարած անձի հեղինակությանը⁶:

⁵ Մրա մասին ավելի մանրամասն տե՛ս *Le Monde*-ի հետևյալ հրատարակումը՝ «Plagiat: la copie pointée à l'université», *Le Monde*/21.05.2010, www.lemonde.fr/societe/article/2010/05/21/plagiat-la-copie-pointee-a-l-universite_1353840_3224.html

⁶ Մրա մասին ավելի մանրամասն տե՛ս *Le plagiat / Les sanctions administratives/ La sanction morale*, Université Bretagne Loire <http://guides-formadoct.ueb.eu/content.php?pid=224621&sid=1862805>:

Ինքնին հասկանալի է, որ գրագողության խնդրի լուծումները խոշոր հաշվով պետք է անդրադառնան կրթական համակարգի, որակի և արդյունավետության վրա, ուստի տրամաբանական է, որ դրանք սկիզբ առնեն հենց համակարգային մակարդակից, որտեղ, կարծում ենք, կարևոր դեր կարող են ունենալ՝

ա. ներբուհական և միջբուհական հատուկ խորհուրդները, որոնք կարգելեն կեղծ գիտական աշխատանքներ վաճառող բիզնեսների մուտքը համալսարաններ, եթե ոչ առհասարակ դրանց գործունեությունն ու քարոզը բուհերին կից տարածքներում: Այս հարցով ավելորդ չէր լինի նաև բուհերի սերտ համագործակցությունը ՀՀ ոստիկանության հետ, որի՝ այլևայլ ոլորտների բազմաթիվ խախտումներին աչալուրջ աչքից կարծես վրիպել է ապօրինի գիտական արտադրանք ստեղծող կազմակերպությունների հարցը.

բ. համակարգային կրթական հատուկ չափանիշների սահմանումը, որոնց առանցքում դրված ընհանուր մոտեցմամբ շեշտը կդրվի ոչ թե ներկայացվող բուհական և հետբուհական մակարդակի գիտական աշխատանքների ծավալային, այլ որակական հատկանիշների վրա, քանի որ տրամաբանական է, որ մեծ ծավալների դեպքում պլագիատի հավանականությունը համապատասխանաբար մեծանում է, մինչդեռ համակարգի կողմից համեմատաբար սեղմ ծավալի ակնկալիքները անձի համար կարող են ծառայել որպես անուղղակի խրախուսական միջոց, որպեսզի նա արդյունքի հասնի ինքնուրույն աշխատանքի միջոցով.

գ. հետպաշտպանական պարտադիր ատեստավորման չափանիշների սահմանումը, որի հիման վրա ԲՈՂ-ը կկարողանա պահանջել ատենախոսության թեմայի վերաբերյալ գիտական գեկուցումներ՝ բուն պաշտպանությանը հաջորդող մի քանի տարիների ընթացքում: Այդպիսով, ավելի հեշտ կլինի պարզել, թե, օրինակ, թեկնածուական կամ դոկտորական աստիճանի հասած անձն իրականում որքանով է տիրապետում իր նեղ մասնագիտական թեմային:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ գրագողության դեպքերի հավանականության նվազումն ու գործնականում արտագրված աշխատանքների թվի կրճատումը կապված են համալիր մեթոդաբանության մշակման և կիրառման հետ, որում փոխլրացնող կերպով պետք է առկա լինեն համակարգային, տեխնիկական և կրթական-ծրագրային բաղադրիչները: Փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն և հետբուհական կրթության մակարդակներում նորագույն ծրագրային լուծումներով հագեցած գտիչ համակարգերի կիրառումը կարող է որոշակի դրական արդյունքի հանգեցնել՝ ծառայելով որպես գրագողության դեպքերի կրճատման միջոց⁷: Մյուս կողմից պետք է նշել, որ խնդրի վերլուծությունն ու լուսաբանումն անհրաժեշտ է

⁷ Նման ծրագրային համակարգ է կիրառվում, օրինակ, ԵՊՀ ռուսա-գերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնում:

լրացնել նաև պլագիատի առանձնահատկությունների և դրանից խուսափելու վերաբերյալ տեսական և գործնական դասընթացներով⁸, որոնք նախատեսված կլինեն ինչպես ուսանողների, այնպես էլ ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համար:

О МЕТОДАХ ПРЕДОТВРАЩЕНИЯ ПЛАГИАТА В НАУЧНОМ ДИСКУРСЕ

КАЗАРЯН Г. А., АВETИСЯН Г. В.

Резюме

Предотвращение плагиата – одна из труднейших задач в системе образования в целом и в армянских высших учебных заведениях, в частности. Анализ правовой и этической составляющей плагиата в Армении показывает, что данное явление служит средством легкого достижения карьерных целей в научной сфере. Технические и системные решения проблемы в равной мере связаны с применением детекторов плагиата и с пересмотром критериев оценки научных работ в ВУЗ-ах.

ON THE METHODS OF PREVENTING PLAGIARISM IN SCIENTIFIC DISCOURSE

G. GHAZARYAN, H. AVETISYAN

Abstract

The problem of plagiarism is among the biggest challenges for the modern educational systems in general and the Armenian higher educational establishments in particular. The analysis of the legal and ethical aspects of plagiarism in Armenia demonstrates that the latter serves as an easy way of achieving career objectives in the scientific sphere. The technical and systematic solutions of the problem at the HEE are connected with the application of plagiarism detection tools on the one hand, and with the revision of the criteria of scientific product assessment on the other.

⁸ Ղազարյան Գ., *Գրագողության դեմ պայքարը սկսված է (Երևանի համալսարան, դեկտեմբեր, 2014)*:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՍԱԲԵԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐՆՁԱԿՅԱՆ Ա. Հ.

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Շեքսպիրի «Համլետ» պիեսում առկա տվյալներն ու ակնարկները հաստատում են այն իրողությունը, թե Հորացիոն հռոմեացի է՝ Մյուս կողմից, պիեսում չկա մի բան, որ ակնարկի նրա դանիական ծագման մասին: Հետևաբար, Գյոթեի միտքը, թե Շեքսպիրը հրաշալիորեն է պատկերել հռոմեացիներին, կարելի է վերագրել նաև այս կերպարին¹: Հարց է ծագում ինչու՞ է Շեքսպիրը քողարկել այն փաստը, որ իբրև գլխավոր հերոսի յուրահատուկ նախատիպ է ընտրել մ.թ.ա. I դ. հռոմեացի պոետին: Նախ, ինչպես հայտնի է, Շեքսպիրը նպատակ չի ունեցել առանձնացնելու հերոսներից որևէ մեկին՝ ըստ պատմական կամ ազգային հատկանիշների, և դա նրա արվեստի առանձնահատկությունն է: Նման մոտեցումը համահունչ էր պայմանական թատրոնի ոգուն, ընդունված էր XVI դարավերջի Անգլիայում և բնորոշ էր Շեքսպիրի թատրոնին:

Կար նաև մեկ այլ պատճառ, որ Շեքսպիրին մղել է թաքցնելու իր հերոսի իսկությունը: Նկատի ունենք խիստ գրաքննությունը, որ հսկողություն էր սահմանել հեղինակների հանդեպ: Թատրոններն ստիպված էին հետևելու քաղաքական ու կրոնական որոշակի սկզբունքների: Ավելին, ըստ Քենթերբերյան արքեպիսկոպոսի ու Լոնդոնի եպիսկոպոսի կարգադրության՝ ամեն մի նոր ստեղծագործություն պետք է հավուր պատշաճի գրանցվեր: 1599 թ. այս պարտականությունը հանձնվել էր Գաղտնի խորհրդին, որի գործակալները բաց չէին թողնում ոչ մի ներկայացում²:

¹ Տե՛ս մասնավորապես **Երնջակյան Ա.**, Հորացիոյի կերպարը՝ որպես հին հունական Պարերգի (Խորոսի) մետամորֆոզ, թեկնածուական ատենախոսություն, Ե., 2012:

² Միայն մեկ անգամ է Դանեմարքայի արքայազնը զգացական պոռթկումի պահին իր ընկերոջը կոչում հին հունական վեպի հերոսի անվամբ՝ Դամոն (III, 2): Թեպետ հնարավոր է նաև, որ Շեքսպիրը, անտիկ գրականության և դիցաբանության ոչ փայլուն իմացության հետևանքով, պարզապես շփոթված լինի: Ի վերջո, նա «Ինչպես կուզեք» կատակերգության մեջ Յունոնային շփոթել է Վեներայի հետ:

³ Տե՛ս **Аникст А. А.** Театр эпохи Шекспира, М., 2006.

Շեքսպիրը ըմբոստ պոետներից չէր ինչպես, ասենք, Քրիստոֆեր Մարլոն, որի ողբերգական ճակատագիրը, հավանաբար, հայտնի էր նրան: Ավելի ճիշտ կլինի ասել, որ Շեքսպիրն այնքան էլ անշրջահայաց չէր: Ուստի այն միտքը, թե՛ «ինչ-որ բան է նեխել Դանիո (կարելի է հասկանալ՝ անգլիական - Ե. Ա.) թագավորությունում», արտաբերվում էր հեռավոր և «անվտանգ» Էլսինորում: Պետք է նշել, որ նման ենթատեքստերով ու ակնարկներով լի են Շեքսպիրի բոլոր պիեսները, հատկապես «Համլետը»:

Վերոնշյալ պատճառներով էլ պիեսի որոշ (հնարավոր է՝ գլխավոր) գաղափարներ չէին կարող դրսևորվել բացահայտ կերպով: Պատահական չէ, որ պիեսում բազմիցս հանդիպում են արտահայտություններ, որոնք, թվում է՝ միտումնավոր կանխում են հատվածի իրական իմաստը կոտակելու հնարավորությունը: Հիշենք Համլետի առաջին ռեպլիկը, սրնգի կամ ավարտի տեսարանները: Եթե հանենք երկրորդ իմաստը, Շեքսպիրի ցանկությունը հուշելու, թե ինչ-որ խիստ էական բան ինքը չի կարող հայտնել, բազում ռեպլիկներ թվում են ավելորդ: Իրականում այնպիսի դարձվածներ, որպիսիք են՝ «Ուզում ես իմ գաղտնիքը սրտիցս դուրս քաշել», «Պետք է կապ դնեմ լեզվիս», «Եթե ժամանակ ունենայի դեռ...», «Մնացյալը լռություն ն», պիեսին ոչինչ չեն տալիս, բայց և այնպես իրադարձությունների խորին իմաստն ըմբռնելու բանալիներ են: Հավանաբար, Շեքսպիրն օգտվել է այն ժամանակներում տարածված ստեզանոգրաֆիայի («գաղտնագրություն») արվեստից, որը հնարավորություն էր տալիս տեքստում թաքցնելու այն, ինչը նախատեսված չէր շարքային հանդիսականի ու ընթերցողի համար: Հիշենք, թե ինչպես է Շեքսպիրը ծածկագրել «Գլոբուսի» նկարագրությունը «Համլետում»:

Շեքսպիրի շրջահայացությանը նպաստել են նաև երկրի քաղաքական իրադրության փոփոխությունը, Բրրբեջի թատրոնի կարգավիճակը, որտեղ աշխատել է դրամատուրգը: Ամեն դեպքում «Համլետի» երկու տեքստերի համեմատությունը ցույց է տալիս, որ երկրորդ՝ լրանշակված հրատարակության մեջ հեղինակն ակրնհայտորեն մեղմացրել է որոշ ռեպլիկների սրությունը: Այդուհանդերձ, չի կարելի ուղղակի պնդել, որ սրանք են եղել Համլետի ուսանողական ընկերոջ «Ես»-ը քողարկելու բուն պատճառները: Բայց ակնհայտ է, որ պիեսում հռոմեացի պոետի առկայությունը քաղաքական սրացումների պայմաններում առանձնահատուկ ընդգծելու կարիք չկար: Իսկ Հորացիուսն իր ժամանակ, ոգևորվելով ազատական երիտասարդության տրամադրություն-

ներով, անցել էր Բրուտոսի գորքերի կողմը՝ հավատացած լինելով, որ մոտ է հանրապետության ժամանակը:

Վերադառնալով մեր խնդրին՝ նշենք, որ այս իրադարձություններից ընդամենը մի քանի տարի առաջ (1584 թ.) հենց հանրապետական գաղափարների համար են արգելվում Ջ. Բյուկոնենի գրքերը: Վերջինս, արդարացնելով Մարի Ստյուարտի մահապատիժը, գրել էր. «Քաղաքացիների լավագույն և առաքինի խավն իրավունք ունի ընդվզելու երկրի օրենքներին անհնազանդ թագավորի դեմ ու գահընկեց անելու նրան»⁴: Իսկ այն գաղափարը, թե «վատ միապետը կարող է գահընկեց լինել ու մահապատժի ենթարկվել, բնականաբար, չէր կարող դուր գալ Եղիսաբեթին...»⁵: Հավանաբար, հենց այս նկատառումով է Շեքսպիրն աննշան փոփոխություն ներմուծել հերոսի անվան մեջ՝ ընտրելով Horatio-ն լատինական Horacio-ի փոխարեն, ինչպես կոչում էին պոետին:

Շարունակենք: Հայտնի է, որ Շեքսպիրի պիեսը հրատարակիչների մոտ է հայտնվել «գրագողերի» ձեռքով, որոնք հենց ներկայացման ժամանակ, հեղինակից ծածուկ, անկատար եղանակներով ու հապճեպ գրի են առել հնչող տեքստը: Ուսումնասիրողները բազմիցս նշել են դրանով պայմանավորված բացթողումները, հավելումներն ու սխալները, որոնք խեղաթուրում են այս կամ այն ստեղծագործության ճշմարիտ իմաստը: Հավանական է, որ նման մի շեղում թաքցրած լինի մեզնից այն ռեպլիկը, որը պետք է բացահայտեր հեղինակի մտահղացումը Համլետի բարեկամի վերաբերյալ: Ամեն դեպքում, կա տեսակետ, թե պիեսի սկզբում Հորացիոյի խոսքերում հինգերորդ և վեցերորդ տողերի միջև վրիպել է առնվազն մեկ տող.

Հորացիո

Մի հյուլե է դա մեր մտքի աչքը աղոտացնելու.

Այն օրերի մեջ, երբ Հռովմ հասել էր փառքի գագաթին՝

Հզոր Հուլիոսի մահից քիչ առաջ,

Շիրիմներն իրենց վարձակալներից դատարկվում էին,

Եվ մեռելները, պատանած Հռովմի փողոցների մեջ,

Թողնվում էին և աղաղակում:

⁴ Зубова Н. Два варианта "Гамлета" (Шекспировский сборник, М., 1958, с. 278).

⁵ Նույն տեղում:

Աստղերը դուրս եկան հրեղեն գեսերով, արյան ցող իջավ,
Եվ խանգարում կար արեգակի մեջ: Այն տամուկ աստղը,
Որ ներգործում է Նեպտունի ահեղ պետության վրա,
Այնպես հիվանդ էր իր խավարումից,
Որ կարծես մոտ էր աշխարհանցումը (I, 1)⁶:

Horatio

A mote it is to trouble the mind's eye:
In the most high and palmy state of Rome,
A little ere the mightiest Julius fell,
The graves stood tenantless, and the sheeted dead
Did squeak and gibber in the Roman streets,
And even the like precurse of fierce events,
As stars with trains of fire and dews of blood,
Disasters in the sun; and the moist star,
Upon whose influence Neptune's empire stands,
Was sick almost to doomsday with eclipse⁷.

Այս մասին են, ըստ Ա. Սմիռնովի, խոսում տաղաչափական և այլ առանձնահատկությունները⁸: Մակայն տեքստի, Հորացիուսի կյանքի ու արվեստի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Համլետում», անկախ հրատարակիչների բոլոր վրիպումներից ու շեղումներից, բավականաչափ նյութ կա սույն ստեղծագործության կենտրոնական գաղափարը հաստատելու համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Շեքսպիրն ունեցել է մի շարք պատճառներ՝ քողարկելու մ.թ.ա. I դ. հռոմեացի պոետ Քվինտուս Հորացիուս Փլակկուսին՝ որպես Հորացիոյի կերպարի նախատիպ ընտրելու փաստը. դրանք են՝

ա) XVI դարավերջի պայմանական թատրոնի առանձնահատկությունները, համաձայն որոնց, հեղինակը նպատակ չի ունեցել անձնավորելու հերոսներից որևէ մեկին՝ ըստ պատմական կամ ազգային հատկանիշների:

⁶ Վ. Շեքսպիր, Համլետ, թարգմանությունը՝ Հովհ. Խան Մասեհյանի, Ե., 2008, էջ 8:

⁷ Шекспир У. Гамлет, М., 1985, с. 32.

⁸ Смирнов А. А. Примечания к тексту «Гамлета» (Шекспир У. Полн. собр. соч. в 8 т., т. 6, М., 1960).

բ) Խիստ գրաքննությունը, որը հսկողություն էր սահմանել հեղինակների հանդեպ, որի պայմաններում վտանգավոր էր «գովազդել» մի հռոմեացի պոետի, որի ազատական տրամադրությունները չէին կարող ողջունել եղիսաբեթական թատրոնում:

գ) «Գրագողերի» թույլ տված բացթողումներն ու շեղումները, որոնց հետևանքով, հավանաբար, կորսվել է այն ռեպլիկը, որը պետք է բացահայտեր հեղինակի մտահղացումը:

ТРАГЕДИЯ ШЕКСПИРА “ГАМЛЕТ” В КОНТЕКСТЕ УСЛОВНОГО ТЕАТРА ЕЛИЗАВЕТИНСКОЙ ЭПОХИ

ԵՐՈՃՋԱԿՅԱՆ Ա. Ա.

Резюме

Почему Шекспир не раскрыл личность Горацио в своей пьесе, как это сделал 300 лет назад Данте Алигьери в “Божественной комедии”, введя в неё образ римского поэта Вергилия.

Можно предположить, что Шекспир, избрав в качестве прототипа Горацио образ римского поэта I в. до н.э. Квинта Горация Флакка, в силу определенных причин скрыл этот факт. В ряду этих причин могли быть особенности условного театра XVI в., строжайшая цензура в пуританской Англии и недобросовестная “работа” тайных переписчиков пьес, посредством которых “Гамлет”, возможно, впервые попал к издателям.

THE TRAGEDY OF SHAKESPEARE “HAMLET” IN THE CONTEXT OF THE CONDITIONAL THEATRE OF THE ELIZABETHAN ERA

A. YERNJAKYAN

Abstract

Why didn't Shakespeare reveal the identity of Horatio in his play, as it did Dante Alighieri in his “Divine Comedy” 300 years ago, entering into it a character of Roman poet Virgil? It may be assumed that, Shakespeare, choosing the character of Roman poet of the 1st century AD Quintus Horatius Flaccus as a prototype, has hidden that fact for certain reasons. Among those reasons could be the features of theatre of XVI century, the strictest censorship in Puritan England and unscrupulous “work” of secret play copiers, by virtue of who “Hamlet” for the first time, probably fall into the hands of publishers.

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՑՈՒՄ**

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ս. Ս.

Հայաստանից ընտանիքների արտագաղթը Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ բարեկեցիկ ապագայի հույսով, վերջին երկու տասնամյակում սովորական երևույթ է դարձել: Սակայն այն, ինչ պատահում է «Փակուղի» վավերագրական ֆիլմի գլխավոր հերոս Լևոնի հետ 1996-ին ԱՄՆ մեկնելուց հետո, իրական դրամա է, որ ներկայացվում է ինքնության պահպանման խնդիրների համատեքստում:

Կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանին և սցենարի հեղինակ Միքայել Ստամբոլցյանին հաջողվել է պատկերել վտարանդիների կյանքում ու կենսակերպում կատարվող փոփոխությունները՝ հայկական ընտանիքի օրինակով: Չնայած հեղինակների շատ ֆիլմերում է քննության ենթարկվում հայի ինքնության և արտագաղթի թեման, սակայն 2016-ին էկրան բարձրացած «Փակուղին» առանձնանում է հասարակագիտական երկակի նշանակությամբ. ընտանիքի կյանքը, որը Հայաստանից արտագաղթում է ԱՄՆ՝ առանց վերադարձի հստակ որոշման, և միջավայրը, որում ապրում է այդ ընտանիքը Հայաստանից հեռանալուց հետո:

Ֆիլմը դիտելով՝ կարելի է որոշ պատկերացում կազմել 1996 թ. մայրաքաղաքի տեսքի, առհասարակ երևանյան կյանքի (հերոսը մասնակցում է երկար տարածության վազքի զանգվածային մրցույթի, բարեկամների ու հարևանների հետ խնջույքի), ինչպես նաև ԱՄՆ-ի հայ համայնքի ապրելակերպի մասին (հարսանյաց արարողության եկեղեցական և ռեստորանային տեսարաններ, ԱՄՆ-ում հայ կալանավորների «տպավորիչ» քանակ, նրանց և ծերանոցում հայտնված հայրենակիցների առօրյան ներկայացնող տեսարաններ և այլն):

Լևոնի ներկայիս աշխատավայրը Հ. Խաչատրյանը դարձրել է վտարանդու միջավայրը բնութագրող փոխաբերական միջոց. մամլիչը ճզմում է մեքենաների մետաղական կաղապարները (մեքենաների գերեզմանոցում հնարավորինս քիչ տեղ զբաղեցնելու համար) և որպես մետաղի ջարդոն՝ դասավորում իրար վրա:

ԱՄՆ-ում ապրող հայերի միջավայրը ներկայացնելու համար ֆիլմի հեղինակները ցուցադրում են վտարանդու հետ առաջին հայացքից կապ չունեցող տեսարաններ, ինչպես, օրինակ, հայ քարոզչի և նրա քարոզի ունկնդիրների խոստովանության տեսարանը, ամերիկյան կալանավայրում մեկ այլ քարոզ՝ կրկին հայերեն, նաև ծերանոց, որտեղ տարեցներից ոմանք հայերեն են երգում, թաղում՝ դարձյալ հայկական

արարողակարգով: Դիտարկելով այս տեսարանների այլաբանական ենթատեքստը՝ կարելի է եզրակացնել, որ հեղինակները՝

1. քարոզի միջոցով փորձում են ցույց տալ ամերիկյան հասարակության, հերոսի բնորոշմամբ՝ կործանարար կյանքից դուրս գալու բարդությունները,
2. կալանավայրի կադրերով ներկայացնում են վտարանդու անազատության զգացողությունը, հոգեվիճակը,
3. ծերանոցի տեսարանով ակնարկում են հոգեպես շուտ ծերանալու, մարդու՝ իրեն ձեր զգալու երևույթի մասին (ինչպես Լևոնն է ասում՝ այդտեղ ապրած 5 տարին հավասարազոր է 15 տարվա կյանքի),
4. թաղմանը փառաբանելով այլաբանորեն ներկայացնում են հերոսի հոգեպես մահանալը,
5. աշխատավայրի տեսարանով տալիս են մեքենայացված գոյության հետևանքով բացարձակապես նյութականանալու, այլ կերպ ասած՝ ռոբոտի վերածվելու գաղափարը:

Ռուսաստանցի կինոգետ Օլեգ Արոնսոնը գրում է, որ միայն կինոյի շնորհիվ է հնարավոր մարդու զգայական աշխարհը պատկերել «որպես փաստաթուղթ»¹: Վերոնշյալ հինգ տեսարանները տեղավորվում են այս տրամաբանության մեջ, քանի որ դրանցով ռեժիսոր Հ. Խաչատրյանն առարկայացնում է իր ֆիլմի հերոսի ներաշխարհը: Ֆիլմը պատկերում է նաև ընտանիքի մյուս անդամներին, որոնք իրենց երջանիկ են զգում ամերիկյան հասարակության մեջ և լքել են հորը՝ չհասկանալով նրա ապրումները:

Վավերագրական կինոյի արտարվեստային, սակայն գլխավոր նպատակներից մեկը ժամանակակից կյանքի ու երևույթների մասին պատկերավոր, հավաստի և արժանահավատ տեղեկատվության փոխանցումն է հաջորդ սերունդներին: Նշենք, որ մենք գործ ունենք ոչ թե հեռուստատեսային լրատվության, այլ կինոարվեստի հետ, որտեղ հեղինակն ազատ է իր պատկերացումներն ու համոզմունքները սեփական տեսանկյունից արտահայտելու: Մյուս կողմից՝ վտարանդուն կարելի է ընկալել ոչ թե որպես ամբողջ ամերիկահայության տիպական, այլ Հայաստանում կրթություն ստացած և վերջին 20 տարում ընտանիքի հետ ԱՄՆ արտագաղթած հոր և ամուսնու կերպարի ընդհանրացում: Հ. Խաչատրյանի «Փակուղի» ֆիլմը հասարակությանը բնորոշ երևույթները ուսումնասիրելու՝ վավերագրական կինոյի հնարավորության հաստատումն է:

Որևէ իրողության գեղարվեստականացումը ենթադրում է հեղինակային սուբյեկտիվ միջամտություն. դա բնորոշ է նաև վավերագրությանը: Նույնիսկ եթե ընդունենք, որ վավերագրական ֆիլմի մոնտաժի ու նկարահանման ընթացքում հեղինակը որևէ

¹ Аронсон О. В. Метакино, М., 2003, с. 132.

իրադարձություն չի խեղաթյուրում, միննույն է, դա չի նշանակում հեղինակային միջամտության բացառում. նկարահանման ժամանակ օպերատորն ընտրում է խցիկի դիրքը, հեռավորությունը նկարահանվող օբյեկտից, շարժման տեսակը և այլն: Միջամտություն է նաև մոնտաժը՝ նկարահանված նյութից սուբյեկտիվ ընտրությունը և վերադասավորումը: Սրանցով, սակայն, հեղինակը միտում չունի կինոիրականության փաստը հակադրելու օբյեկտիվ իրականության փաստին, խեղաթյուրել դրանք. հնարավոր է իրականության որևէ հատվածի դիտարկում՝ ընտրված դիտանկյունից: Հետևաբար, վավերագրական կինոն, որի առանձնահատկությունը փաստերի վրա հիմնված լինելն է, կարելի է ընդունել նաև որպես ժամանակակից հասարակական երևույթների՝ գեղարվեստորեն (մասնակի) ամրագրման և ներկայացման ձև: «Փակուղի» ֆիլմում կերպավորվել են ժամանակն ու տարածությունը. ակնհայտ է դրանց ներգործությունը ֆիլմի հերոսի ճակատագրի վրա:

Նույն թեմայի մասին նկարված վավերագրական ֆիլմերից են նաև «Դարձ ի շրջանս յուր» վավերագրական եռապատումի մինչև այժմ լույս տեսած առաջին երկու մասերը (XX դարում հայերի ներգաղթի և արտագաղթի ընդհանրական պատկեր) ու Հրայր Թամրազյանի «Նոթեր խոպանից» լրագրողական ֆիլմը: Հասարակագիտական հնարավոր հետազոտությունների համար վերոնշյալ ֆիլմերն առավել արժևորվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համատեքստում. անկախության հռչակումից ի վեր երկիրը լքել է շուրջ 600.000 մարդ (1991-ին Հայաստանի մշտական բնակչության թիվը՝ 3.574.500 էր, 2016-ին՝ 2.998.600)²:

Հաջորդ կարևորագույն իրադարձությունը, որի անդրադարձը կարելի է նկատել հայ հասարակական կյանքի բոլոր շերտերում, Արցախյան ազատամարտն է: Այս թեմային իրենց ֆիլմերում անդրադարձել են բազմաթիվ ռեժիսորներ, որոնցից գեղարվեստական յուրահատուկ սկզբունքներով առանձնանում են հատկապես Վարդան Հովհաննիսյանի «Մարդկային պատմություն պատերազմի և խաղաղության օրերից» (2007, 69'), Տիգրան Խզմայանի «Բեկոր» (2010, 33'), Վրեժ Պետրոսյանի «Անվերջ ձգվող դասամիջոց» (1996, 55'), Վահե Յանի (Ղազարյան) «Գնդապետին ոչ ոք չի գրում» (2014, 25') ֆիլմերը: Նշվածներից ամենավաղը նկարվել է «Անվերջ ձգվող դասամիջոց»-ը: Այն սկսվում է հետևյալ գրությամբ. «Ֆիլմում նկարահանվել են ՄԱՄՏՄ-ԿԵՆՏԻ պաշտպանական գնդի «ՊԱՏԱՆԵԿԱՆ ԴԱՄԱԿԻ» 13-ից-18 տարեկան զինվորները»: Կանտի ձևակերպմամբ՝ «Գեղեցկությունը բնության մեջ գեղեցիկ առարկան է,

² Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե., 2016, էջ 40:

իսկ գեղեցիկն արվեստում գեղեցիկ պատկերացում է առարկայի մասին»³: Տվյալ դեպքում հստակ զգացվում է հեղինակի համակրանքը նկարահանվող պատանիների հանդեպ: Տղաների հետ հանդիսատեսի ծանոթությունը կայանում է աստիճանաբար. մեկը ծնողներից է փախել եկել, մյուսը տխրում է, որ իր դպրոցական սերն ամուսնացել է ուրիշ տղայի հետ, և այս տեղեկությունները դիտողին տրվում են հիմնականում որպես միջավայրային ձայներ: Ֆիլմի միջնամասում դիտողի ուշադրությունն ամբողջությամբ սևեռվում է մարտական գործողությունների վրա, և պատանիներն ինչ-որ չափով սկսում են ընկալվել որպես հասուն անձինք, ինչի համար հեղինակը նորից ցուցադրում է վերջին զանգի կադրեր (որոնք կան նաև ֆիլմի ամենասկզբում)՝ հիշեցնելով տղաների արտառոց կարգավիճակը և սրելով միջավայրի ու տարիքի անհամապատասխանությունը: Տեսարանն ավարտվում է թաղումով, որտեղ ծեր կանանց լացի ձայներն ու տղամարդկանց՝ օդ ուղղած կրակոցները ինքնաձիգներից՝ ի նշան վերջին հրաժեշտի, իլացվում են այնտեղ նվագող ջութակահարի երաժշտությամբ: Այդ նույն ջութակահարին Վ. Պետրոսյանը նկարել է նաև գերեզմանատանը. նվագելով՝ նա քայլում է թարմ ծաղիկներով զարդարված շիրիմների արանքով, և նրա ներկայությունը շեշտում է այդ տարածքի ամայությունը: «Կինոաշխարհ» թերթում հրապարակված հարցազրույցում հեղինակը, խոսելով «Անվերջ ձգվող դասամիջոց» ֆիլմի մասին, ասել է. «Իմ նպատակն էր ցույց տալ, որ աշխարհի ամենամեծ սարսափն ու անհեթեթությունն այս իրականությունն է, որտեղ դպրոցական նստարանների փոխարեն երեխաներն ընտրել են խրամատները, որտեղ նրանք իրավունք չունեն լինելու, բայց այնտեղ էին»⁴: Այս ֆիլմն ամբողջական պատկեր է տալիս այդ ժամանակ կոմիտի պատանիների ոչ միայն ռազմական կյանքի մասին, այդ թվում՝ հանգստի կազմակերպում մարտադաշտում, բառապաշար, օգտագործվող զինատեսակներ, թաղում, այլև նրանց դիտարկում է որպես իրենց ժամանակի պատանուն բնորոշ երազանքներ ու հիասթափություններ ունեցող շարքային քաղաքացիներ:

Մեկ այլ հեղինակի՝ Արցախյան պատերազմին որպես լրագրող մասնակցած կինոռեժիսոր Տիգրան Խզմայանի «Բեկոր» վավերագրական ֆիլմը հավաքվել է 4 օրում նկարված նյութից: Առաջին տեսարանում տղամարդկանց խմբին մոտեցած զինվորականը ցուցում է տալիս սպասել մինչև առաջնագծից կկանչեն նրանց, միաժամանակ տեղեկացնում է, որ իրենց տարածքն ուղիղ նշանառության տակ է, պետք է ցրված կանգնել: Տղամարդիկ ընկալում են ասածը, բայց որևէ խուճապ չկա, նույնիսկ ժպտում են և հումոր են անում՝ իմանալով, որ կանգնած են հրետակոծման

³ Кант И. Соч, нец, яввжб-2, я2 .,я2 .яб,яКр, 2, каяжпособнос2, яужден, я,яМ.,я1966,яс.яу27.

⁴ <http://kinoashkharh.am/2013/12/4005>, «Հողը պաշտպանում է այդ հողի վրա ապրող մարդը». Վրեժ Պետրոսյան:

նշանակետում: Հաջորդ տեսարանում խումբը մոտենում է առաջնագծին, իրամասներից և դիտակետից կրակում են հակառակորդի ուղղությամբ, ռադիոկապով մարտավարական ցուցումներ են տալիս իրար, ինքնաձիգի փամփշտակալն են լիցքավորում, ռադիո լսում, և կրկին այս ամենի մեջ տարօրինակ հանգստություն կա. կրակոցները չեն խաթարում ո՛չ կոպող տղամարդկանց, ո՛չ նրանց կողքին կոպող պատանիների և ո՛չ էլ դիտողի հանգստությունը կամ կենտրոնացումը: Ֆիլմի հաջորդ հաստիվածում պատերազմի դաշտում մի երիտասարդի բաց վերքն են ախտահանում և զգուշացնում, որ ցավոտ է լինելու. փամփուշտը մի տեղից մտել է մարմնի մեջ, պտտվել և դուրս եկել մյուս կողմից: Տղան ոչ միայն ցույց չի տալիս ցավի նշաններ, այլև հանգիստ հագում է ու, տեսնելով, որ նկարում են ծիծաղում է: Նորից նույն անդորրն է թվում է, թե բաց վերքերը ոչ թե իրական մարդուն են, այլ մանեկենի վրա են: Ֆիլմի մնացած մասը նկարված է բուժկետում. տղամարդու մարմնի մեջ բեկոր է մտել, բժիշկը մատը մտցրել է վիրավորի թևի վերքի մեջ, բայց ցավի ոչ մի նշույլ: Հետո բժիշկը կրծքավանդակը շոշափելով փորձում է գտնել բեկորը, որը մարմնի մեջ է ներթափանցել թևից. վիրավորը նստած է հանգիստ դեմքով: Իրավիճակի անհեթեթությունը սրվում է բժշկի խոսքով. «Ընենց ես նստել, ոնց որ քո վրա գործ չենք անում»: Սրան հետևում է վիրահատության տեսարանը, ապա դուրս է բերվում ռումբի բեկորը, որի խոշոր պլանով էլ ավարտվում է ֆիլմը: Վերջում հայտնված գրությունը տեղեկացնում է, որ բեկորի քաշը 10 գրամ է, նշվում են նաև պատերազմի հետևանքների վերաբերյալ թվային որոշ տվյալներ: Տ. Խզմայանի այս աշխատանքը կարելի է համարել վավերագրական ֆիլմում փաստի պոետիկ մշակման օրինակ, որտեղ կյանքի և արվեստի ճշմարտություններն իրար չեն հակասում: Հեղինակն ընտրել և օգտագործել է հանգստություն արտահայտող տեսարանները՝ ներկայացնելով պատերազմի այն կողմը, որն ինքն է տեսնում և ուզում ցույց տալ: Հանգստության, ներդաշնակության զգացողությունը շեշտվում է Բախի երաժշտությամբ, որն իր մեղմությամբ հակադրվում է ցուցադրվող նյութի՝ պատերազմի էությանը, սակայն այն համապատասխանում է ֆիլմի ներքին տրամաբանությանը և ձևին: «Առասպելին բնորոշ է մտքի փոխակերպումը ձևի: Այլ խոսքով՝ առասպելը միշտ ներկայացնում է լեզվի առևանգում»⁵: Տ. Խզմայանն այս ֆիլմում ստեղծել է պատերազմական խաղաղության մասին առասպել՝ կինոյի լեզվով: Նա ոչինչ չի բեմադրել, ոչինչ չի խնդրում անել հատուկ տեսախցիկի համար, նա դիտարկման մեթոդով նկարել է այն, ինչ տեսել է: Մոնտաժի ժամանակ ևս նյութը չի ձևափոխել, այլ ընտրել է որոշակի զգացողությամբ ընդհանրացնող տեսարաններ ու այդ զգացողությունը սրել համապատասխան երաժշտությամբ: Այդ ամենի շնորհիվ

⁵ Բարթ Ք. Մ, филолог, , «М», 2008, с. 56.

Ֆիլմում կարելի է տեսնել պատերազմի թմրեցնող ազդեցությունը, որտեղ մարդկային որոշ զգացողություններ ու բնագոյներ բթանում են, և սա արված է մաքուր կինեմատոգրաֆիկ միջոցներով: Մա ռազմական գործողությունների հավաստի ընթացք է՝ առանց ռեժիսորական-բեմադրական միջամտության, և հենց դրանով էլ այն արժևորվում է հասարակագիտական տեսակյունից:

Արցախյան պատերազմի տարիներին արտասահմանյան հեռուստա-ընկերությունների օպերատոր-լրագրող Վարդան Հովհաննիսյանը առաջնագծի խրամատներում նկարահանումներ է կատարել և 12 տարի անց, գտնելով այդ կադրերում երևացող կենդանի մնացածներին, ստեղծել է համամարդկային խնդիրների մասին խոսող պարզ, մարդկային պատմություն: Արտավազ Փելեշյանն իր «Դրոշմված ժամանակ» երկհատոր գրքի շնորհանդեսի ժամանակ նախ վկայակոչեց հին Հունաստանի փիլիսոփա Ջենոն Էլեացու տեսությունը, ըստ որի՝ թոչոչ նետի ընթացքը մասերի բաժանելու դեպքում կտեսնենք, որ ամենավերջին մասն անշարժ է, կանգնած, ապա հիշեց Գալիլեյին, որը նույն սկզբունքով փորձել էր ապացուցել, որ ժամանակն ամբողջությամբ է կանգնած, հետո մեկնաբանեց «նկարահանել» բառը հետևյալ կերպ՝ «Ի՛նչը հանեցի. պատասխան՝ նկարը: Որտեղի՞ց հանեցի. պատասխան՝ ժամանակի ձեռքից»⁶: Հեղինակին հաջողվել է պատերազմական ժամանակից «հանված» արխիվային նյութերի բուն իմաստը պահել՝ դրանք ֆիլմի գեղարվեստական պատկեր դարձնելով: Արխիվային նյութն ու 12 տարի անց նկարված տեսարանները իրար փոխընդմեջում և օգնում են: Մասնավորապես, խաղաղ ժամանակների նկարահանումների շնորհիվ ընտրված հերոսները երևում են մարդկային բուն էությամբ: Իսկ արխիվային կադրերի շնորհիվ խաղաղ պայմաններում ապրող վտարանդիները կտրվում են արտաքուստ խաղաղ իրականությունից ու ընկալվում պատերազմի հետևանքով առաջացած մարտական բնույթով: Այս հակադրության մեջ առավել ցայտուն է երևում պատերազմի թոհուրոհով անցած մարդու կենցաղի տարբերությունը տարբեր ժամանակներում:

Հայ ժամանակակից վավերագրության մեջ առանձնանում են առևտրականների իրական կենցաղն ու միջավայրը յուրահատուկ տեսանկյունից պատկերող ֆիլմերը: Արման Երիցյանի «Բաժանորդը ժամանակավորապես անհասանելի է» ֆիլմի հերոսը դազադագործ է: Վաճառակետը, որը նաև նրա տունն է, կարելի է համարել Նար-Դոս փողոցի սզո պարագաների վաճառակետերի հավաքական պատկեր: Խանութի դազադների արանքում տան երեխաները պահմտոցի են խաղում: Վաճառականը

⁶ <http://kinoashkharh.am/2016/05/11884>, Փելեշյանը դեմ չէ ժամանակին, ժա-մանակն է դեմ Փելեշյանին:

ցույց է տալիս մանկական դագաղներն ու հույս հայտնում, որ դրանք երբեք չեն օգտագործվի:

Երիտասարդ ռեժիսորների գործերից, որոնցում առկա է համանման մոտեցում, կարելի է առանձնացնել Վարդան Դանիելյանի «Էսքիզներ ոսկեվազյան դաշտերից» (2009) ֆիլմը: Այն ելակի «Ճանապարհորդության» մասին է՝ դաշտից մինչև շուկա: Այս պոետիկ վավերագրության մեջ ամբողջությամբ դրսևորվել է «հողով ապրող» գյուղացու կերպարը դաշտային ծանր ֆիզիկական աշխատանքից մինչև շուկայում հավաքված բերքի վաճառք: Վ. Դանիելյանին հաջողվել է սովորական դաշտային ծանր աշխատանքի և գիշերային առևտրի տեսարանների միջոցով ստեղծել գեղագիտական բարձր մակարդակով աչքի ընկնող ֆիլմ: Այն կարելի է համեմատել Ջոն Գրիքսոնի՝ 1929 թ. նկարած «Ձկնորսական նավերի» հետ. հեղինակը կարողացել է առևտրական ձկնորսությունը դարձնել արվեստի նյութ՝ դրա մեջ պոեզիա ներդնելով:

Արսեն Գասպարյանի «Սամվել պապը» ֆիլմ-դիմանկարը տարեց երգչի մասին է, որն իր երգերի սկավառակները վաճառում է զբոսաշրջիկներին՝ տարբեր երկրներից եկած անձանց հետ նրանց լեզվով խոսելով: Ֆիլմը տարեց մարդու հնարամտության և նախաձեռնողականության մասին է, սակայն դրա մեջ կարելի է նկատել նաև Հայաստան եկած զբոսաշրջիկների հետաքրքրությունները:

Հասարակագիտական տեսանկյունից հետաքրքիր է նաև Արուսյակ Միմոնյանի «Երիտասարդ մարդը, որ ոչինչ չտեսավ, կամ վարժություն 09:39» վավերագրական ֆիլմը, որտեղ երթուղայիններում գտնվող մարդկանց ու դրսում երևացող իրադարձությունների (տանկեր ու ցուցարարներ Երևանի փողոցներում) կադրերի համադրմամբ հեղինակը փորձել է իր քաղաքացիական վերաբերմունքն արտահայտել արվեստին բնորոշ այլաբանական միջոցներով. երթուղային տաքսին 2000-ական թվականների վերջի իրավիճակների խորհրդանիշ է. հարմարավետ նստած մարդիկ զուգորդվում են հարմարավետ կյանքով ապրող հասարակության անդամների հետ, կոացած-կանգնածները հոգսերի տակ կքած անձանց հավաքական կերպարն են: Այս ֆիլմը կարևորվում է հատկապես ժամանակի տրանսպորտի պատկերը ներկայացնելու տեսանկյունից, քանի որ դրանում երևում են երթուղայիններից օգտվող մարդիկ, վարորդները, մեքենաների ներքին հարդարանքի մանրամասնությունները և այլն: Շուրջ 1 տարի երթուղայիններում նկարված այս ֆիլմը որոշակի վերապահումներով կարելի է համարել 2000-ականների միջին վիճակագրական երևանաբնակի հավաքական կերպարը ներկայացնող աշխատանք՝ նկատի ունենալով կադրերում երևացող մարդաբանական տիպերի ու հագուստի բազմազանությունը և այն հանգամանքը, որ 100 դրամ ուղեվարձով երթուղայինից օգտվում են միջին հնարավորությունների տեր քաղաքացիները:

Այսպիսով, ժամանակակից հայ վավերագրական կինոն կատարում է իր հիմնական գործառնություններից մեկը, այն է՝ առանց իրական կյանքի և կինոիրականության փաստերի միջև հակասություն ստեղծելու գեղարվեստորեն ներկայացնել ժամանակակից հասարակական կյանքի կարևոր երևույթները:

ЭСТЕТИЗАЦИЯ СОЦИАЛЬНЫХ ФЕНОМЕНОВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ДОКУМЕНТАЛЬНОМ КИНО

КИРАКОСЯН С. М.

Резюме

Современное армянское кино выполняет одну из своих главных функций, которая состоит в озвучивании важных вопросов сегодняшнего общества на основе креативных методов. При этом основным критерием документального кино является соответствие кинематографических и жизненных реалий. С учетом сказанного документальное кино может быть использовано в социологических исследованиях. Наиболее яркими примерами, демонстрирующими широкую панораму социальных феноменов в армянском обществе, являются «Тупик» Арутюна Хачатряна, "Осколок" Тиграна Хзмаляна, «Человеческая история о войне и мире» Вардана Оганисяна, «Молодой человек, который ничего не видел, или Задание 09:39» Арусяк Симонян.

AESTHETICIZATION OF THE SOCIAL PHENOMENA IN THE ARMENIAN CONTEMPORARY DOCUMENTARY CINEMA

S. KIRAKOSYAN

Abstract

Armenian contemporary documentary cinema fulfills one of its main functions, which is presenting important aspects of modern society through creative techniques without creating contradictions between the fact of the life reality and cinema reality. From this point of view documentary film can be used in sociological researches. More vivid examples that show a large panorama of different phenomena of Armenian society are the "Deadlock" by Harutyun Khachatryan, "Bekor" (sherd) by Tigran Khzmalyan, "A Story of People in War and Peace" by Vardan Hovhannisyanyan, "The Young Man Who Didn't See Anything or Exercise 09:39" by Arusyayk Simonyan.

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Վ.

Ն. Տոկարսկին, հիմք ընդունելով հայ, ինչպես նաև օտարազգի գիտնականների հետազոտությունների արդյունքները, անդրադառնալով պատմական հուշարձանների թվագրման կարևորագույն հարցին, լավագույնս ձևակերպել է իր պատասխանը. «Հարցը, որն առնչվում է այս կամ այն տիպի կառույցի, ճարտարապետական ձևի, համակարգի և հարդարանքի սյուժեների երևան գալուն և զարգացմանը, այսինքն, այն բոլոր տարրերին, որոնցով կազմվում է հուշարձանների ոճական բնութագիրը, սերտորեն կապված է դրանց թվագրության ճշգրտման հետ: Միայն երբ դրանց կառուցման ժամանակի որոշադրման մեջ կարող են առաջ բերել ամբողջական խմբերի տեղաշարժ նույնիսկ հարյուրամյակներով և դրանով իսկ խեղաթյուրել երկրի գեղարվեստական և շինարարական գործունեության ճշմարիտ զարգացման ընթացքը: Ճարտարապետական կառույցների թվագրության հարցը առավել պարզ ու ճշմարիտ լուծում է ստանում հին պատմիչների վկայությունների և շինարարական արձանագրությունների հիման վրա՝ վերջիններիս վավերական և անեղծ լինելու պայմանով»¹:

Դիցուք, Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության հիշատակությունների հիման վրա են թվագրվել հեթանոսական բազմաթիվ կոթողներ²: Պատմիչ Հովհան Մամիկոնյանի վկայության շնորհիվ հայտնի դարձավ ոչ միայն՝ Վաղարշակ թագավորի օրոք կանգնեցված երկու կոթողի գոյության, այլև դրանց՝ քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու նախաշեմին ոչնչացված լինելու փաստը: Արձանագրությունների հիման վրա են թվագրվել Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824) և Սարգոն II-ի (մ.թ.ա. 721-705)՝ Ուրարտու երկրում կանգնեցված չորս կոթողները³, ինչպես նաև ուրարտական թագավորներ Իշպուինիի (մ.թ.ա. 825-810), Մենուայի (մ.թ.ա. 810-768), Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786-764), Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735), Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713), Արգիշտի II-ի (մ.թ.ա. 713-685), Ռուսա II-ի (մ.թ.ա. 685-645)՝ մեզ հասած կոթողները⁴: Արձանագրությունների հիման վրա են թվագրվել Արտաշես I թագավորի (մ.թ.ա. 183-160) կանգնեցրած կոթողները, որոնցով հաստատվեց Խորենացու վկայության իսկությունը, ավելին, Իջևանի շրջանի Թեղուտ

¹ Токарский Н. Архитектура Армении IV-XIV вв., Е., 1961, с. 147-148.

² Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 50, 54, 118-119, 128 և այլն:

³ Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 1, Ե., 1981, էջ 23-24, 26:

⁴ Меликишвили Г.А. Урартские клинообразные надписи, М., 1960, с. 127, 168, 232, 289, 323, 335, 344.

գյուղի մոտակայքում հայտնաբերված թվակիր կոթողի շնորհիվ որոշակի դարձավ դրա կառուցման ստույգ ժամանակը՝ մ.թ.ա. 180 թ.⁵:

Քրիստոնեական շրջանի առաջին հուշարձաններին վերաբերող մատենագրական միակ վկայությունը Ագաթանգեղոսինն է: Ներկայացնելով կոթող կանգնեցնելու հույժ անհրաժեշտությունը՝ պատմիչը մատնանշում է ոչ միայն նախաձեռնության հեղինակներին, շարժառիթը, կոթողի հորինվածքի ձևը, այլև դրա առանձին տարրերի նշանակությունն ու իմաստը: Թեև քրիստոնեական կոթողների մասին տեղեկություններ կան նաև Խորենացու, Եղիշեի, Հովհան Մամիկոնյանի պատմություններում, սակայն Ագաթանգեղոսի մանրամասն և սպառիչ վկայությունների հիման վրա է, որ առաջին կոթողների երևան գալու ժամանակը համարվում է 301 թվականը⁶:

Անվիճելի է, որ մատենագրական տեղեկությունների և արձանագրությունների հիման վրա պետք է թվագրել նաև խաչքարերը: Պատմիչների աշխատություններում խաչքարերի մասին որևէ ակնարկ գոյություն չունի: Նկատենք, որ մեզ հասած խաչքարերի մի մասը արձանագիր է, ընդ որում՝ թվակիր: Մեծ Մասրիկի (881 թ.) և Կեչուտի (886 թ.) արձանագրությունների վերձանումն անվիճելի է և ավելի քան բավարար խաչքարերի երևան գալու ժամանակը որոշարկելու համար: Ուստի մինչև որևէ անհերքելի փաստի, այն է՝ պատմիչի վկայության կամ արձանագրության ի հայտ գալը, խաչքարերի երևան գալու ժամանակը պարտավոր ենք ընդունել IX դ.:

Առանց որևէ վերապահության ընդունելով հանդերձ նշված և IX դ. պատկանող խաչքարերի թվագրումն ու վերձանումը՝ մի շարք ուսումնասիրողներ (Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Ա. Շահինյան, Լ. Ագարյան, Ս. Սաղումյան, Գ. Շախկյան, Հ. Մելքոնյան) գտնում են, որ խաչքարերը երևան են եկել ավելի վաղ շրջանում՝ VII դարից սկսած⁷: Այս տեսակետին առաջինն անդրադարձել և իրավացիորեն մերժել է Հ. Պետրոսյանը⁸: Հիշյալ ուսումնասիրողների առաջ քաշած և պարբերաբար կրկնվող

⁵ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 204-207:

⁶ Տե՛ս Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914:

⁷ Առաքելյան Բ., Կարախանյան Գ., Գառնի III, 1949-1955 թվականի պեղումների արդյունքները, Ե., 1962, էջ 13, Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, Ե., 1984, էջ 13, Ագարյան Լ., Հայկական խաչքարեր, Էջմիածին, 1973, էջ 12, Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունները 10-16-րդ դարերում, Ե., 1975, էջ 246-247, Սաղումյան Ս., Գուգարքի մեմորիալ կոթողները, Ե., 1980, էջ 4, Шахкян Г. Хачкары Армении VIII-IX веков (Четвертый международный симпозиум по армянскому искусству, тезисы докладов, Е., 1985, с. 307-308); Караханян Г. О., Мелконян У. А. Новые памятники мемориального искусства Армении (Четвертый международный симпозиум по армянскому искусству, тезисы докладов, Е., 1985, с. 145-146).

⁸ Պետրոսյան Հ., Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2008, էջ 88:

այդ կար- ծիքը, թերևս, պատահական չէ և կգոյատևի այնքան ժամանակ, քանի դեռ մատնացույց չեն արվել դրա հիմքերը:

Ա. Շահինյանը, մեջբերելով Ղևոնդ պատմիչի երկու վկայությունը՝ «...յաճեալ յայսոյն պղծութեան բռնութենէ՝ տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Տեառն մերոյ և փրկչին և նորին աշակերտացն: Խորտակեր և զնշան տէրունեան խաչին Քրիստոսի, զոր ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեանն» և «...խոկային կործանել և շփոթել զսրբութիւն եկեղեցեաց Քրիստոսի. խորտակէին և զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, զոր ապաւէն և հովանի յելս և ի մուտս կանգնեալ ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեանն. և հրկիզութեամբ բառնային ի միջոյ՞», եզրակացնում է. «Խաչքարերի ծագումը չի կարելի IX դ. վերագրել: Պետք է ենթադրել, որ խաչքարերն սկսեցին առաջանալ VII դ. առաջին կեսում, իսկ երբ VIII դարի առաջին քառորդում արաբներն արգելեցին մարդկային պատկերներ քանդակելը և սկսեցին խորտակել նման պատկերներ կրող քառակող կոթողները՝ խաչքարաշինությունը արգելքի չհանդիպեց»¹⁰: Հ. Պետրոսյանը, մեջբերելով Ղևոնդի վերոհիշյալ վկայությունները և Մովսես Կաղանկատվացու հետևյալ տեղեկությունը. «...և էր այրն այն ժպիրի և անաստուած. ուր զնացք ոտից նորա լինէր՝ ւաւերէր քանդէր զեկեղեցիս Աստուծոյ. և զնշան Քրիստոսի, ուր և տեսանէր մանրէր իբրև զփռոշի»¹¹, եզրակացնում է. «Այսպիսով, արաբներն արգելել են ոչ միայն մարդկային քանդակները, այլ նաև խաչանշանները, և հենց նման քաղաքականությունն է արգելակել խաչքարերի առաջացումը»¹²: Դժվար չէ նկատել, որ այս երկու՝ իրարամերժ կարծիքները փաստարկվում են պատմիչների միևնույն տեղեկություններով:

Փաստորեն, երկու դեպքում էլ հիմքը ի սկզբանե մեզանում ընդունված այն տեսակետն է, ըստ որի, արաբներն արգելել են եկեղեցիների և կոթողների կառուցումը և պարբերաբար ու անխնա ավերել են դրանք: Ա. Տեր-Ղևոնդյանը՝ Ղևոնդի «Պատմության» աշխարհաբար թարգմանության հեղինակը, անդրադառնալով արաբական տիրապետության ժամանակ հայ ժողովրդի իրավական վիճակին, գրում է. «Ըստ մահմեդական իրավագիտության, քրիստոնյաներն իրավունք չունեին կառուցել նոր եկեղեցիներ կամ հները նորոգել: Սակայն այստեղ կային որոշ նրբություններ, որոնք կարելի էր յուրովի մեկնաբանել, ըստ օրվա տիրակալի

⁹ Ղևոնդեայ մեծի վարդապետի Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 100, 152:

¹⁰ Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, Ե., 1984, էջ 13:

¹¹ Մովսեսի Կաղանկատուացու Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 384:

¹² Պետրոսյան Հ., Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2008, էջ 88:

վերաբերմունքի: ...Հայաստանում նույնպես նոր եկեղեցիներ կառուցելը սկզբունքորեն արգելված էր, սակայն գիտենք եկեղեցիներ կառուցելու առանձին դեպքեր, իսկ քանդման դեպքերը, ըստ երևույթին, նույնպես եզակի են եղել Հայաստանում»¹³: Եկեղեցիներ քանդելու առնչությամբ արված այս դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ քրիստոնեության հաղթանակը խորհրդանշող և ի տես ամենքի հասարակական վայրերում կանգնեցված կոթողներ քանդելու դեպքերը նույնպես եզակի են եղել: **Հետևաբար, Ղևոնդի և մյուս պատմիչների վկայությունների կանխակալ և ոչ ստույգ մեկնաբանության վրա հիմնված, մեզանում ընդունված և անառարկելի համարվող տեսակետը, ըստ որի, արաբներն ավերել են բոլոր կոթողները, հարկ է վերանայել:**

Մինչ օրս շրջանառվում է նաև այն կարծիքը, ըստ որի, հասարակական վայրերում, ինչպես նաև գերեզմանոցներում կանգնեցված կոթողները պատկանում են IV-VII դարերին: Նկատենք, որ Ղևոնդի և մյուս պատմիչների տեղեկություններում բացարձակապես խոսք չկա գերեզմանական հուշակոթողները ավերելու մասին, եթե նման դեպք, թեկուզ փորձ անգամ լիներ, նրանք, անկասկած, կհիշատակեին: Ավելին, Ազաթանգեղոսի և Ղևոնդի վկայությունների համեմատությունը միանշանակ ի ցույց է դնում, որ պատմիչների կոթողներն ավերելու մասին խոսքը վերաբերում է բացառապես հասարակական վայրերում կանգնեցված կոթողներին¹⁴:

Ս. Օրմանյանը ավելի քան հստակ ու մանրամասն բացատրում է գերեզմանական հուշակոթողների անձեռնմխելի մնալու պատճառը. «Արաբական տիրապետութեան ձեռն մասին գաղափար մը կազմելու համար, պէտք է դիտել, որ Արաբացիք քաղաքական եւ կենցաղական օրէնքները, պարզապէս իրենց կրօնական կամ իսլամական սկզբունքներուն վրայ հիմնված ըլլալով, անհնարութեան մէջ կգտնուէին իրենց օրէնքներով քրիստոնէայ հպատակները կառավարել, եւ պարտաւոր կ'ըլլային ներել որ քրիստոնէայք իրենց կրօնական սկզբունքներուն համեմատ կառավարուին ...Ըստ այսմ Արաբացի ոստիկանները չէին կրնար անմիջական ազդեցութիւն եւ մասնակցութիւն ունենալ հպատակ քրիստոնէաներու կեանքին ու կենցաղին վրայ, իրենք կը բաւականանային հարկերը հաւաքելով, եւ երկրին զինուորական պաշտպանութիւնը կատարելով»¹⁵: Հայաստանը արաբական տիրապետության տակ մտավ իբրև քրիստոնյա երկիր և, չնայած բազում զրկանքներին, ժողովուրդը հավատարիմ մնաց իր դավանանքին ու սովորույթին: Դիցուք, կյանքի ու կենցաղի անքակտելի մասն էին կազմում թաղման ծեսը և շիրմին հուշակոթող կանգնեցնելը:

¹³ Հայ ժողովրդի պատմություն հ. II, Ե., 1984, էջ 378:

¹⁴ Այդ կարծիքին են նաև Ս. Շահինյանը (նշվ. աշխ., էջ 10) և Հ. Պետրոսյանը (նշվ. աշխ., էջ 16, 17):

¹⁵ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 900-901:

Ուստի գերեզմանական կոթողները մնացել են անձեռնմխելի, և չորսհարյուրամյա վաղեմություն ունեցող քրիստոնեական ավանդույթը պահպանվել ու գոյատևել է մինչև կոթողի նոր տիպի՝ խաչքարի երևան գալը, այսինքն, IX դ. վերջը: Պատահական չէ, որ մեզ հասած գերեզմանական հուշակոթողներն անհամեմատ ավելի մեծ թիվ են կազմում, քան այլ առիթներով կանգնեցված բոլոր կոթողները՝ միասին առած:

Կոթողների վրա արձանագրություն թողնելու սովորույթը IV- VII դարերում պարզապես չի եղել: Մեզ են հասել Անգեղակոթի, Ջրվեժի, Ակունքի (Գեղամա լեռներ), Հովհանավանքի, Ավանի (գերեզմանոցի և Սբ. Աստվածածին եկեղեցուն կից), Օշականի, Տաթևի կլոր և բազմանիստ սյուներով կոթողները: Թվարկված օրինակներից և ոչ մեկի վրա արձանագրության հետք գոյություն չունի: Շուրջ 250 քառանիստ կոթողներից արձանագրության կամ գրության հետք ունի միայն հինգը: Արուճի սյան բեկորի վրա նշմարվում են ուղղաձիգ գրության հետքը և եղծված մի քանի տառ: Թալինի սյան վրա պատկերված ֆիգուրի ձեռքին բռնած գրքի վրա ՅՍ ՔՍ տառերն են՝ առանց պատվանշանի: Վահրամաբերդի սեղանին առկա արձանագրությունը վիմագրագետ Գ. Սարգսյանը թվա-գրում է IX-XII դարերով: Դսեղի սեղանի հինգ տողանոց արձանագրությունը բոլոր ուսումնասիրողները թվագրում են XIII դարով: Բրդաձորի Փոքր կոթողի սյան նիստին առկա անձնանունների գրությունները Լ. Ազարյանը թվագրում է VI-VII, Ս. Մնացականյանը՝ V-VII դարերով, Ն. Չուրինաշվիլին՝ XIX դ. 30-ականներով¹⁶: Եթե մի պահ համարենք, որ հինգ կոթողներն էլ պատկանել են IV-VII դարերին, ապա այս դեպքում անգամ որևէ հիմք չունենք բոլոր կոթողները վերագրելու այդ ժամանակահատվածին, առավել ևս, VII դարը համարելու ժամանակագրության վերին սահման:

Եթե ընդունենք այդ տեսակետը, ապա դեմ կառնենք տարօրինակ ու անհավանական մի իրողության, այն է՝ VII-IX դարերի ընթացքում Հայաստանում ոչ մի թաղում չի եղել, հետևաբար, և ոչ մի կոթող չի կանգնեցվել: Հազիվ թե այս անհեթեթությունը վրիպեր ուսումնասիրողների աչքից: Մակայն, հետամուտ ի սկզբանե անվերապահորեն որդեգրած իրենց տեսակետին, նրանք, փոխանակ կոթողների վերին սահմանը IX դ. համարելու, պարզապես խաչքարերի ժամանակն են հետ տարել՝ ընդհուպ մինչև VII դ.: Թերևս սա է մշտապես շրջանառվող վարկածի պատճառը: **Հետևաբար, մեզանում ի սկզբանե ընդունված և անատարկելի համարվող այն տեսակետը, ըստ որի, քրիստոնեական բոլոր կոթողները, այդ թվում նաև**

¹⁶ Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Ե., 1975, էջ 61, Մնացականյան Ս., Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Ե., 1982, էջ 145, Чубинашвили Н. Хандиси, Тбилиси, 1972, с. 71:

գերեզմանական քառանիստ հուշակոթողները, պատկանում են IV-VII դարերին, հարկ է վերանայել:

Այժմ դառնանք շարժառիթին: Այս կարևոր խնդրին անդրա-դարձել են ուսումնասիրողներից միայն երեքը: Ս. Բարխուդարյանը գրում է. «Հեթանոսական շրջանում ստեղծված կոթողի այս ձևն էլ, ինչպես տեսնում ենք, խաչի պատկերը իր վրա կրելու համար նույնպես անհարմար է, որովհետև վերևում ազուցված «թևավոր» խաչը կրկին անկայուն է, սյունի վրա քանդակվածը խախտում է խաչի կանոնական ձևը, պատվանդանը, թեև հարմար ըստ տեղի, բայց անվայել նրանով, որ կոթողի կենտրոնական, ակնառու մասը չէ, այլ ներքին, գետնի մոտ մասը: Այս անհարմարությունների պատճառով քառակող կոթողները չմասսայականացան և չդարձան ապագա խաչքարերի հիմքը: Թեև այս տիպի կոթողներ միշտ էլ հաստ ու կենտ շինվել են, ինչպես «թևավոր» խաչերը, մինչև X և ավելի ուշ դարերը, բայց ոչ հատկապես որպես խաչի նշանն իրենց վրա կրող կոթողներ, այլ որպես հատուկ հուշարձաններ»¹⁷: Ա. Շահինյանը գրում է. «Հնագույն քառանիստ կոթողներն իրենց համաչափությամբ (մոտավորապես չորսը մեկի հարաբերությամբ) չէին կարող իրենց վրա կրել խաչի համաչափ (ոչ հավասարաթև իմաստով) և արտահայտիչ ձևերը, որովհետև դրանց վրա քանդակված խաչերի ուղղահայաց թևերը երկար էին ստացվում, հորիզոնականները՝ խիստ կարճ, իսկ խաչքարերը երիզող և ճոխ քանդակներով զարդարված լայն շրջանակների համար բոլորովին տեղ չէր մնում»¹⁸: Հ. Պետրոսյանը գրում է. «Խաչքարային հորինվածքն, իր վրա վերցնելով աստվածային գործությունը ներկայացնելու-խորհրդանշելու և հավատացյալի հետ սրբազան հաղորդակցությունն ապահովելու գործառույթները, մերժում է շրջանաձև պտույտը՝ վեկտորայնություն հաղորդելով ծեսին: Հակված ենք ավելի վճռական նշանակություն տալ այս վերջին հանգամանքին, քանի որ, նախ և առաջ, շուրջանակի պտույտն ակնհայտ զիջում էր հեթանոսությանը, և վաղ թե ուշ այն պիտի ուղղվեր: Եվ այն ուղղվեց, երբ հիմնավորվեց խաչի պաշտամունքն ու մշակվեց խաչային հորինվածքը, այսինքն՝ երբ պարզ դարձավ, թե որն է միակ կենտրոնի համար նախատեսված եզակի հորինվածքը»¹⁹:

Ուսումնասիրողները, մանրամասն անդրադառնալով առաջին կոթողների հորինվածքում տեղ գտած բազմաթիվ «թերություններին», անգամ «սխալներին»,

¹⁷ Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետները և քարգործ վարպետները, Ե., 1963, էջ 128-129:

¹⁸ Շահինյան Ա., նշվ. աշխ., էջ 11-12:

¹⁹ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 87-88:

նշելով նաև խաչքարերի բազում առավելությունները, ի վերջո հանգում են այն մտքին, որ կոթողները խաչքարերով փոխարինելու դրդապատճառը այդ թերությունների սրբագրումն է եղել: Նշանակում է՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքում Արարչի պատգամած կոթողի հորինվածքը՝ «...խարսխաձև ճախարակաձև խարխախ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վե-րայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչև յոյժ, և ի վերայ նորա թակադաղ մի ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա»²⁰, փաստորեն, անկատար է եղել, և այդ մասին հայերն ըմբռնել են միայն վեց հարյուր երկար ու ձիգ տարիներ անց և հենց արարների տիրապետության ժամանակ որոշել են կոթողները փոխարինել խաչքարով: Նման մեկնակետը արդեն իսկ համոզիչ չէ:

Քրիստոնեական առաջին կոթողների երևան գալու շարժառիթը ավելի քան պարզ է ու հստակ: Այն կապված էր աշխարհում ընթացող դարակազմիկ փոփոխության՝ նոր կրոնի տարածման հետ: Հայաստանը առաջին երկիրն էր, որ քրիստոնեությունն ընդունեց իբրև պետական կրոն և խաչն էլ՝ Քրիստոսի մարմնացյալ պատկերի օրինակը, իբրև խորհրդանշան: Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի եռանդուն ջանքերի շնորհիվ, նոր կրոնի հաղթանակը ավետելու, տարածելու և ամրապնդելու նպատակով բազմաթիվ կոթողներ դրվեցին Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում, ագարակներում, ինչպես նաև ճանապարհների ելքերի ու մուտքերի մոտ, փողոցներում, հրապարակներում, խաչմերուկներում:

Քրիստոնեությունը, փաստորեն, հիմք ընդունեց հավերժության խորհրդանիշ հանդիսացող հեթանոսական կոթողի հորինվածքը և այն պսակեց իր խորհրդանշանով՝ թևավոր խաչով: Այս կերպ ստեղծվեց հիմնականում նույն հորինվածքով, սակայն բնույթով տարբեր առաջին քրիստոնեական կոթողը:

Հեթանոսական և քրիստոնեական կոթողների սյուները, իբրև կանոն, պետք է լինեին «բարձր մինչև յոյժ»²¹: Եգիպտոսից Հռոմ փոխադրված կոթողի բարձրությունը հասնում էր մինչև 54 մ-ի²²: Ասորեստանի Շամիրամ թագուհու՝ հայկական լեռների քարից կերտված և Բաբելոն տարված կոթողի բարձրությունը 130 ոտնաչափ էր (35,5 մ)²³: Տարոնում կանգնեցված Դեմետրեի կոթողի բարձրությունը 15 կանգուն էր (8,8 մ), իսկ Գիսանեի կոթողինը՝ 12 կանգուն (7,1 մ)²⁴: Բրդաձորի Մեծ կոթողի բարձրությունը՝ չպահպանված վերնամասով 6մ է²⁵: Ավանի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից կոթողը,

²⁰ Ագաթանգեղոս, էջ 375:

²¹ Նույն տեղում:

²² Гнедич П. П. История искусств, М., 2009, с. 21.

²³ Diodorus of Sicily, with an English Translation by C. H. Oldfather, in Ten volumes, Books I and II, 1-34, London, p. 388.

²⁴ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1944, էջ 97-98:

²⁵ Чубинашвили Н., նշվ. աշխ, էջ 8:

ամենայն հավանականությամբ, մեզ հասածներից ամենաբարձրն է եղել. միայն խարխիսի բարձրությունը «մեծությամբ իբրև զմեծ մի բլուր»՝ 2,1 մ է²⁶: Նման կոթողների հիմնական գործառույթը սրբազան տարածքի ստեղծումն էր: Այս նպատակին ծառայող ավելի կատարյալ հուշարձան մարդկությունը դեռևս չի հայտնագործել: Քրիստոնեական կոթողը, հատկապես նրա գագաթը պսակող խաչը, իբրև անձեռնմխելի պայման, պետք է տեսանելի լիներ բոլոր կողմերից՝ թե մոտ և թե հեռու տարածությունից: Կոթողի հորինվածքում կարելի էր փոխել խարխիսի, սեղանի, սյան ձևը, կարելի էր փոխել կամ հրաժարվել պատկերաքանդակներից և արձանագրություններից, միակ բանը, որ անթույլատրելի էր, ազդեցության ու ընկալման դաշտի սահմանափակումն էր, կենտրոնացումը մեկ կետի վրա, այսինքն՝ վեկտորայնություն հաղորդելը: Քանզի այդ դեպքում կոթողի բուն էությունն ու նպատակը վերանում էր:

Խաչքարերն իրենց բնույթով չէին կարող փոխարինել առաջին կոթողներին: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, առավել ևս արաբական տիրապետության շրջանում և այդուհետև, մինչև մեր օրերը, Հայաստան աշխարհում որևէ դարակազմիկ իրադարձություն տեղի չունեցավ, և նման գործառույթ կրող կոթողներ կանգնեցնելու անհրաժեշտություն պարզապես չառաջացավ²⁷: Մինչդեռ գերեզմանական կոթողներ կանգնեցնելու ավանդույթը շարունակվեց նաև արաբական տիրապետության շրջանում: Մեզ հասած հարյուրավոր օրինակների քննությունը փաստում է, որ համեմատաբար փոքր չափերի, բացառապես անհատական բնույթի այդ հուշակոթողները տարբեր խավերի պատվիրատուների նախասիրությունների, հնարավորությունների, ճաշակի հետ կապված բազմազան լուծումներ են ստացել: Դրանցում քրիստոնեության խորհրդանշանը հիմնականում բացակայում է: Երբեմն էլ կոթողը պսակող թևավոր խաչը փոխարինել են սեղանի, սյան կամ խոյակի վրա քանդակված խաչով:

Խաչքարերի երևան գալու շարժառիթը պարզելու համար դիմենք Հ. Մանանդյանին. «Նախարարական Հայաստանը կործանվում էր, ռազմական ուժի, գաղթի ու կոտորածների միջոցով ստանում էր սոսկալի հարվածներ, եկեղեցին կորցնում էր իր հարստությունները և ազդեցությունը, բնակչությունը խիստ պակասում էր և երկրում բնակություն էր հաստատում մահմեդական գաղթականությունը: Նախարարական Հայաստանի կործանման ու այլասերման ահեղ այդ

²⁶ Պահպանվել են նաև քառանիստ սեղանը և ութանիստ սյան երեք բեկոր՝ 0,5, 2,0, 0,61, 0,48 մ բարձրությամբ:

²⁷ Նշանավոր իրադարձություն համարվեց միայն խորհրդային կարգերի հաստատումը, և 50 տարի անց Երևանի բարձրադիր վայրում կանգնեցվեց քառանիստ կոթող՝ 50 մ բարձրությամբ:

գործընթացը, որ մեծ չափերով առաջ էր տարվում 775 թ. ապստամբությունից հետո, հետզհետե կանգ է առնում սկսած IX դարի սկզբներից»²⁸: Երկրում ստեղծված իրավիճակը, հատկապես ժողովրդագրական պատկերի փոփոխությունը, լրջագույն սպառնալիք էր: Ազատությունը կորցնելուց հետո քրիստոնյա ժողովուրդը այլևս կանգնել էր ձուլվելու անխուսափելի վտանգի առջև: Իբրև ինքնության միակ ճշմարիտ ապացույց և պաշտպան նա ապավինեց ամենագոր խաչին: Եվ հպատակ դարձած ժողովրդի ինքնապահպանության ձգտումն ու կամքը, շնորհիվ տաղանդավոր հայ վարպետների, նյութական ձևն ու դրսևորումը գտան կոթողի նոր տիպի՝ խաչքարի մեջ: «Արձանագրություններում այն կոչվել է խաչ կամ սուրբ նշան, XIX դարից՝ խաչարձան կամ խաչքար»²⁹: Եվ երկրով մեկ սփռված գերեզմանական հուշակոթողներին փոխարինելու եկած խաչքարերի հորինվածքում կենտրոնական գերիշխող տարրը դարձավ ամենագոր սուրբ խաչի նշանը:

Ուրեմն, ավելի քան պարզ է, որ խաչքարերը փոխարինել են ոչ թե Տրդատ Մեծ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի, այնուհետև համայնքների նախաձեռնությամբ կանգնեցված առաջին կոթողներին, այլ անհատ քրիստոնյաների գերեզմանական հուշակոթողներին: Պատահական չէ, որ խաչքարերի հետ հանդես եկավ նաև անհատների կողմից արձանագրություն թողնելու սովորույթը:

ВРЕМЯ И МОТИВАЦИЯ ПОЯВЛЕНИЯ ХАЧКАРОВ

ГРИГОРЯН Г. В.

Резюме

Согласно ряду исследований, посвященных стелам и хачкарам, установленные христианами в общественных местах и в местах захоронений стелы целенаправленно уничтожались в эпоху арабского владычества. Однако подобные утверждения являются результатом ошибочно трактуемых исторических свидетельств.

Расшифровка надписей на хачкарах Мец Масрика (881 г.) и Кечута (886 г.) указывает на то, что хачкары появились в IX в. Стремление армянского народа к сохранению национальной идентичности в период арабского владычества воплотилось в новом типе стел – в хачкарах. И на смену надгробным стелам пришел хачкар,

²⁸ Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Ե., 1978, էջ 594:

²⁹ Ղազարյան Վ., Խաչքար (Քրիստոնյա Հայաստան, Ե., 2002, էջ 432):

господствующим элементом композиции которого стал знак святого всемогущего креста в центре.

THE TIME AND MOTIVATION OF THE APPEARANCE OF KHACHKARS

G. GRIGORYAN

Abstract

From the very beginning, in the studies on steles and khachkars, a viewpoint has been taken as a basis, according to which Christian steles, erected in public places and cemeteries, were destroyed in a planned and ruthless manner in the period under the Arab rule. This viewpoint, considered unquestionable until present, is the result of preconceived and incorrect interpretations of historians' testimonies and is subject to revision.

The deciphering of inscriptions on the khachkars of Mets Masrik (881) and Kechut (886) is indisputable, which obliges to accept that the 9th century must be considered the time when khachkars appeared. The regularly stated hypotheses that khachkars appeared starting from the 7th century remain a hypothesis, as long as neither testimonies by historians nor any inscriptions have come forth yet.

As a result of Arab policies, the country's demographic picture seriously changed. Owing to talented Armenian craftsmen, the subjugated people's aspiration and will of self-preservation found its material form and manifestation in khachkars, a new type of memorial monuments. The memorial steles of the graves all over the country were replaced by khachkars, where the sign of a mighty and sacred cross became predominant as a central element in the composition.

ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԸ

ՆԱԴԱՐՅԱՆ Ն. Թ.

Խաչատուր Իսկանդարյանի արվեստը ձևավորվել է 1950-ական թվականներին: Նա առաջին իսկ քայլերից հանրությանը ներկայացավ իբրև սուր դիտողականությամբ օժտված արվեստագետ, որին մոտ են ինքնատիպ, թարմ կոմպոզիցիոն լուծումով հատկանշվող կամերային փոքր ձևերը: «Իմ լավագույն ընկերն ու բարեկամը՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը, Երևանում ցուցադրել էր իր մի քանի մանրաքանդակները, որոնք չափազանց դուր եկան ինձ, և ես սկսեցի զբաղվել մանրաքանդակներով¹», - ասում էր Իսկանդարյանը:

Խ. Իսկանդարյանն առաջիններից մեկն է այն քանդակագործներից, որոնք սկսեցին հայ կերպարվեստում զարգացնել մանր պլաստիկան: Վերջինս հեղինակին հնարավորություն է տալիս իր մտքերը, հույզերը գեղագիտական ճաշակն ու նախասիրությունները, սեփական, հեղինակային կարծիքը, ստեղծագործական յուրահատուկ ձեռագիրը լիարժեքորեն արտահայտելու համար:

Իսկանդարյանի թողած գեղարվեստական ժառանգության մեջ հատուկ նշանակություն ունեն դիմաքանդակային արձանիկները: Չբավարարվելով պատկերված դիմաքանդակային արձանիկների միայն արտաքին նկարագրությամբ՝ Իսկանդարյանը կիրառել է գեղարվեստական այնպիսի միջոցներ, արտահայտչական այնպիսի հնարներ, որոնք համոզիչ կերպով բացահայտել են կերպարների ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նկարագրերը: Նա իր ուշադրությունը կենտրոնացրել է բնորդների դեմքերի արտահայտությանը, նրանց խոսուն հայացքին, բնութագրական շարժումներին, հոգեբանական խառնվածքներին... Արվեստագետին հատկապես հրապուրել են գաղափարական հաստատուն նկարագրեր ունեցող, ստեղծագործական աշխույժ կյանքով ապրող մարդկանց կերպարներ («Վիլյամ Սարոյան», «Գաբրիել Գյուրջյան», «Նիկողոս Նիկողոսյան», «Դերենիկ Դեմիրճյան», «Մուրադ Կոստանյան», «Լիդիա Դուռնովո», «Գրիգոր Մեդնիկյան», «Ռաֆայել Շիշմանյան», «Հովհաննես Բաղրամյան», «Մարտիրոս Սարյան», «Բարդուղ Վարդանյան», «Ներսիս Բաղդասարյան» և այլն): Իր դիմաքանդակային արձանիկներում Իսկանդարյանը թափանցում է բնորդի հոգեբանության մեջ, վեր է հանում տվյալ անհատի բնորոշ գծերը, առանձնացնում է էականը՝ բնորդին հմտորեն պատկերելով խորհելիս, աշխատելիս... Այդպիսի տպավորություն է թողնում քանդակագործի «Վիլյամ Սարոյան» (1971) դիմաքանդակային արձանիկը: Չափերով փոքր (31x10x7) այս բրոնզե արձանիկը գտնվում է վարպետի արվեստանոցում: Իսկանդարյանն իր այս հերոսին նկարագրելիս հիշում

¹ Փիլոսյան Ս., Խաչատուր Իսկանդարյան (Համայնապատկեր, 22.1.2003):


էր. «Վիլյամ Մարոյանն իմ մտապատկերներում հառել է որպէս մի հաստարուն կաղնի՝ հզոր, խորախորհուրդ»²: Այդպիսին էր Մարոյանին տեսել Իսկանդարյանը, երբ քանդակում էր գրողի կերպարը: Բայց մինչև քանդակի ստեղծումը Մարոյանը եղել է Գյումրիում, այցելել է Բսահակյանի տուն-թանգարան և, տպավորված արվեստագետի՝ Ավետիք Բսահակյանի հուշարձանով³, թանգարանի հուշագրքում թողել է հետևյալ տողերը. «Ես մի օր պետք է մահանամ: Կուզեի թաղվել այստեղ, այս բակում, Ավետիք Բսահակյանի հուշարձանի հայացքի տակ»⁴: Վ. Մարոյանի դիմաքանդակային արձանիկը բնականի անտարբեր ընդօրինակումը չէ. աշխատանքը մշակումով անկաշկանդ է և անմիջական հայեցողությամբ ընկալված: Մի կողմ թողնելով գրողի հասարակական դիրքը՝ տեսնում ենք Իսկանդարյանի ստեղծած կերպարը՝ ինքնավստահ, համարձակ և խոհուն: Գլխի ուղիղ դիրքը, ձեռքերը գրպանում կեցվածքը նկատելի են դարձնում այդ հատկությունները: Կերպարում առկա է խորամիտ մտավորականի, հայրենասեր գրողի, մտածողի էությունը: Քիչ բան չեն ասում նրա խոհուն, կենտրոնացած, սկզբում հայացքը, որը ոչ թե ուշադիր դիտողին է նայում, այլ հառած է հեռուն: Մարոյանի կերպարում Իսկանդարյանը խտացրել է հաստատակամ, կյանքի փորձով իմաստացած մարդու հատկությունները:

Այս շարքի դիմաքանդակային արձանիկների մեջ իրենց ուրույն տեղն ունեն ՆԽՍՀ ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանին պատկերող երեք բրոնզե քանդակները, որոնցից առաջին երկուսը ստեղծվել են 1977-ին, իսկ երրորդը՝ 1978-ին: Կարծում ենք՝ 1977-ին ստեղծված քանդակներից մեկը, որտեղ Գյուրջյանը ներկայացված է թիկնակով արթոնին նստած, առանց թիկնակի նստարանին նստած աշխատանքի նախաքանդակն է. քանդակը թողնված է էտյուդային վիճակում: Թեև երկրորդ աշխատանքը ներկայացված է համեմատաբար ավարտուն, մշակված տարբերակով, սակայն երկուսում էլ Իսկանդարյանը ավելի շատ ուշադրություն է դարձրել ձևին, քան բովանդակությանը: Գյուրջյանը, բնականից ունենալով մի փոքր գիրություն, աշխատանքներում ներկայացված է ծավալային, զանգվածային մշակումներով. կերպարներն ունեն բնական կեցվածքներ և հոգեբանական ինքնամիտի նկարագրեր: Այս երկու դիմաքանդակային արձանիկների արժանիքներից մեկն այն է, որ կատարված են անմիջական ընկալումով՝ առանց կանխամտածված ձևերի: Երրորդ աշխատանքում Գյուրջյանը ներկայացված է ամբիոնի մոտ կանգնած՝ թղթապանակը ձեռքին (ի դեպ, վերոնշյալ երկու քանդակում ևս առկա է թղթապանակը): Իսկանդարյանը վարպետորեն է ներկայացրել

² Փիլոսոֆիա Ս., Խաչատուր Իսկանդարյան, Գատալոգ, Ե., 2010, էջ 11:

³ 1974 թ. Խ. Իսկանդարյանը մասնակցում է Ավ. Բսահակյանի հուշարձանի մրցույթին և արժանանում խրախուսական մրցանակի, իսկ արդեն 1975 թ. իրականացնում է իր մտահղացումը:

⁴ Փիլոսոֆիա Ս., նշվ. աշխ., էջ 12:



Վիլյամ Սարոյան Գաբրիել Գյուրջյան Նիկողոս Նիկողոսյանի



Դերենիկ Դեմիրճյան Մուրադ Կոստանյան Լիդիա Դուռնովո

Գյուրջյանի և՛ դեմքը, և՛ կեցվածքը՝ ձգված, զգաստ, ամբիոնի բարձրությունից շատ քիչ տարբերվող հասակ, դեպի վեր ուղղված հայացքին ենթարկված գլուխ, խոսելու պատրաստ շրթունքներ: Քանդակագործը լավ գիտեր Գաբրիել Գյուրջյան մարդուն և գեղանկարչին. նա Իսկանդարյանի գունանկարչության ուսուցիչն էր: Արվեստագետին հաջողվել է կոմպոզիցիոն զուսպ ձևերի օգնությամբ ցույց տալ Գյուրջյանի՝ գործելու

էներգիայով լի աշխույժ խառնվածքը և ինքնուրույնությունը: Աշխատանքում նկատում ենք, որ Իսկանդարյանը փորձում է հասնել ընդհանրացումների ոչ մանրակրկիտ մշակված ֆակտորայի շնորհիվ: Խ. Իսկանդարյանի թոռը՝ Խաչատուրը, որը հիանալի կերպով հիշում է պապիկի ստեղծած քանդակների պատմությունները, մեզ հետ զրույցում հաղորդեց, որ Գյուրջյանը, տեսնելով իր արձանիկը, թեև հավանել է, սակայն հումորով նշել է, որ կարելի էր մի փոքր իրականությունից շեղվել և իրեն ավելի բարձրահասակ ներկայացնել:

Մեծ թիվ են կազմում Իսկանդարյանի ընկերոջ՝ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Նիկողոս Նիկողոսյանի (նրանց բարեկամությունն սկսվել է դեռ 1933 թ.) կերպարները: Մոտիկից ճանաչելով քանդակագործին, քաջատեղյակ լինելով նրա գործունեությանը՝ վարպետն իր աշխատանքներում կարողացել է Նիկողոսյան ընկերոջը և արվեստագետին ներկայացնել անկեղծ, մտերմիկ ու անմիջական: 1976 թ. ստեղծված գրեթե միանման երկու բրոնզե դիմաքանդակային արձանիկներում բազմոցի մեջ ընկղմված Նիկողոսյանի կերպարներին Իսկանդարյանը խոհական արտահայտություն է հաղորդել: Այստեղ քանդակագործի կերպարների դիմագծերը կերտելու անկաշկանդ եղանակները հասնում են այնպիսի վարպետության, ինչպիսին ունեն ստեղծագործական վառ անհատականությամբ օժտված արվեստագետները: Լավ ճանաչելով Նիկողոսյան մարդուն՝ Իսկանդարյանը կարողացել է օբեկտիվորեն կերպավորել նրան. քանդակագործը խուսափել է սուբյեկտիվ գնահատականներից, փստահել սեփական աչքին ու ղեկավարվել ստեղծագործական սթափ գիտակցությամբ: Իսկ սա նշանակում է, որ քանդակագործը իր ստեղծած կերպարներում չի կիրառել ակադեմիական քարացած, մամոտած ձևեր: Քանդակներում կերպարները մշակված են այնպիսի անկաշկանդ ձևերով, ինչպիսին տեղի է ունենում հանպատրաստից աշխատելիս, ստեղծագործական ներշնչման պահին: Աշխատանքները արտահայտիչ են՝ որպես հաստատական, խառնվածքով արվեստագետի կերպարներ:

Իսկանդարյանի դիմաքանդակային արձանիկներում մշտապես կարևորվել է մարդն իբրև մտածող անհատականություն: Նա կարողացել է յուրաքանչյուր աշխատանքում ներկայացնել պատկերվող անձի և՛ բնավորությունը, և՛ արտաքին տեսքը: Այդ ամենն արել է ֆակտորայի անթերի մատուցման շնորհիվ: Վերը նշված խոսքերի հաստատումն է Դերենիկ Դեմիրճյանի (1985) դիմաքանդակային արձանիկը, որն ունի ուշագրավ պատմություն: Այսպես, 1977 թ. մայիսի 19-ին Երևանի քաղխորհրդի նախագահ Մուրադ Մուրադյանի հրամանով անվանի գրող Դ. Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունների շրջանակում Երևանի Օդակաձև զբոսայգում մեծ հանդիսավորությամբ հիմնադրվում է հուշաքար՝ ապագայում այստեղ կառուցվելիք հուշարձանի մասին: 1982 թ. հայտարարվում է հուշարձանի մրցույթը, որն ընթանում է երկու փուլով: Մրցույթին մասնակցում է Իսկանդարյանը և արժանանում առաջին կարգի մրցանակի: 1985-ին արձանի 2.5մ բարձրությամբ գիպսե տարբերակն արդեն պատրաստ էր: Փոխվեց հասարակարգը, փոխվեցին իշխանությունները, սակայն Դեմիրճյանի գիպսե արձանը

քանդակագործի արվեստանոցից դեռ «նոտքը դուրս չի դրել»⁵: Այս նպատակով Իսկանդարյանը գրողի 125-ամյակին նիրված երեկոյին Հակոբ Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոնի ճեմարահում ներկայացրեց արձանի բրոնզաձույլ, նախօրինակից որոշ չափով զանազանվող տարբերակ՝ հովանավոր գտնելու հույսով: Վերջինիս մոնումենտալ տարբերակն իր արժանի տեղն է փնտրում մինչև օրս, իսկ փոքրաչափ տարբերակը այժմ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարնում է: Մանրաքանդակում Դեմիրճյանը կերպավորված է դեմքի խոհուն, ներամփոփ արտահայտությամբ, ողջ հասակով մեկ կանգնած, մի փոքր գլխահակ, աչքերը խոնարհած, աջ ձեռքով հենված իր նշանավոր ձեռնափայտին, իսկ ձախով՝ գլխարկը բռնած: Տեսնում ենք հավասարակշռված, զգացմունքային խառնվածքով, հաստատակամ, խելամիտ գրողի: Աշխատանքում Իսկանդարյանը ուշադրություն է դարձրել բնորդի դեմքի մշակմանը, կեցվածքին, զգեստներին, որոնք նպաստել են կերպարի արտահայտիչ նկարագրմանը: Դեմիրճյանին պատկերող այս քանդակում ճակատի վրա ակոսված խոր կնճիռները, խոնարհված հայացքը կարծես պատմում են գրողի ողջ կյանքի մասին:

Իսկանդարյանի՝ մեզ հայտնի դիմաքանդակային արձանիկներում արտաքին նկարագրի արահայտչականությամբ իր ուրույն տեղն ունի ՀԽՍՀ ժողովրդական արտիստ «Մուրադ Կոստանյան» մանրաքանդակը (1982, բրոնզ): Անշուշտ, այս դեպքում նշանակալի դեր են կատարել դերասանի դիմագծերի պատրաստի տվյալները. լայն ճակատ, դեմքի վրա իշխող քիթ, ճակատին, աչքերի տակ ծերունական խորշոմներ, հետ սանրած մազեր: Կոստանյանը ներկայացված է գլուխը վեր, ձեռքերը հետևում խաչված, հպարտ կեցվածքով և ինքնավստահ արտահայտությամբ: Եվ եթե աշխատանքում դիտվում է կեցվածքի որոշ հանդիսավորություն, դա ոչ թե Իսկանդարյանի միտումի արդյունքն է, այլ ֆիզուրի բնական հատկանիշը: Քանդակագործի ստեղծած դիմաքանդակային արձանիկը ներշնչում է իմպրեսիոնիստական հուզականություն. սրա համար անհրաժեշտ էր ունենալ սուր դիտողականություն, մարդու ներաշխարհը թափանցելու հատկություն, բնորոշն ընդգծելու ունակություն: Աշխատանքում արտիստը ներկայանում է որպես կյանքից ու իր կերտած դերերից «դասեր առած» անձնավորություն: Իսկանդարյանը ստեղծել է ոչ միայն Կոստանյանի դիմաքանդակային արձանիկը, այլև նրա դիմաքանդակը⁶. Ի դեպ, երկու աշխատանքներն էլ ինչ-որ չափով նման են Իսկանդարյանի կերպարին: Ի տարբերություն Կոստանյանի քանդակի դինամիկ կոմպոզիցիայի, որը թելադրված էր նրա արտիստական նկարագրով, Վարվառայի քանդակում («Հուշեր անցյալից», 1985, բրոնզ) ուշադրությունը կենտրոնացված է կնոջ ինքնամփոփ ներաշխարհի բացահայտմանը: Եթե

⁵ Տե՛ս Խանջյան Ա., Դերենիկ Դեմիրճյանի արձանը սպասում է հանգանակության, Գրական թերթ, 13.VI.2003:

⁶ Տե՛ս Նադարյան Ն., Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակները (Կանթեղ. Գիտական հոդվածներ, 2015, - 2 (63), էջ 216):

ճանաչված մարդկանց պատկերելիս Իսկանդարյանը փորձում է գտնել և ներկայացնել մարդու հոգեկան կերտվածքը, որ արտահայտվում է նրա զգացմունքայնությամբ, եռանդով, գործունեությամբ, ապա մեզ անձանթ բնորոշների պա-րագայում այնքան նրբազգաց է կառուցում կոմպոզիցիան, որ նրանց «մարդկային տեսակին» առնչվող դիտողն ինքն է ակամա մտորում, վերլուծում, կերպարներին վերագրում, ենթադրում հատկանիշներ: Աշխատանքում ներկայացված ծեր կինն ունի համեստ զգեստավորում: Վարվառան կերպավորված չէ զարդերով, ամեն ինչ զուսպ է և ենթարկված ծեր կնոջ էությունը բացահայտելու խնդրին: Նրա հանգիստ կեցվածքը, մասամբ երազկոտ, մտորումների մեջ խորասուզված ֆիզուրը զերծ է որևէ խստությունից, իսկ բնավորության փափկությունն ու խորությունը հմայում են դիտողին: Իսկանդարյանի ստեղծած ծեր կնոջ կնճռապատ դեմքին նկատվում է բարություն: Այդ մտորումներից առաջացած նրա լռությունն իրենց արտացոլումն են ստացել կնոջ հոգնած աչքերում և գլուխը ձեռքին հենած դիրքում, որոնց նաև «ձայնակցում են» սեղմնած շրթունքները: Իսկանդարյանը այստեղ ժեստի և դիմախաղի նկատմամբ ցուցաբերել է ավելի մեծ ուշադրություն: Նման ժեստերը և դիմագծային արտահայտչականությունը գրեթե վճռական են դարձնում կերպարը կառուցելիս:

Հոգեբանական խոր և կենսագրական սեղմ նկարագրով է աչքի ընկնում հատկապես «Լիդիա Դուռնովո» մանրաքանդակը (2006, գիպս), որը Հայաստանի ազգային պատկերասրահում է: Լիդիա Դուռնովոն մեծ աշխատանք է ծավալել միջնադարյան Հայաստանի որմնանկարչական, մանրանկարչական, կիրառական արվեստի գիտական նմանահանության և ուսումնասիրության ասպարեզում: Իսկանդարյանը Լիդիա Դուռնովոյին քանդակել է նստած, որոշ չափով մտազբաղ: Կերպարի զուսպ զգեստն ընդգծում, շեշտում է Դուռնովոյի նուրբ պարանոցը: Այստեղ քանդակագործը կարողացել է ներկայացնել բնահատուկ վեհությունը մի մարդու, որ իր ամբողջ էությամբ կապված է եղել կյանքի, հայ ժողովրդի հետ, որոնք նրան կենսական և ստեղծագործական ուժեր են հաղորդել: Կերպարի կենսունակության գրավականը իրականությանը հարազատ մնալու, դիմագծերի բնական ձևերը պլաստիկ ճշմարտացիությամբ մարմնավորելու մեջ է: Սուր դիտողականությամբ է ընկալված նրա հոգեվիճակը. Իսկանդարյանը թափանցել է մինչև հոգու խորքը՝ ներկայացնելով նրան բարի, վայելուչ, կենսունակ: Դուռնովոյի դիմագծերի նրբությունը, խաղաղ դեմքը կերպարին տալիս են ջերմություն՝ մարդուն հաղորդակից դարձնելով նրա մտերիմ խոհերին:

Դիմաքանդակային արձանիկներում նախապատվությունը տալով անհատներին՝ Իսկանդարյանը վեր է հանել մարդու յուրօրինակությունը և եզակիությունը: Դեմքերը նմանողությամբ դիպուկ են, անհատականությամբ՝ որոշակի, մշակումներով՝ արտահայտիչ: Քանդակագործն իր ստեղծած կերպարներից յուրաքանչյուրը ներկայացրել է ինքնատիպ ներաշխարհով, որոշակի արտահայտությամբ, տրամադրությամբ, ապրումներով, պլաստիկ կենդանի ձևերով: Նրան հատուկ է բնորդի հոգևոր աշխարհը նրբորեն զննելու,

թեման ուսումնասիրելու և մարմնավորելու կարողությունը: Բուկանդարյանի համար կերպարին մարմնացում տալը նախ և առաջ կերպարների բնավորությունները մեկնաբանելն է՝ գտնել կերպարների զգացմունքների այն առանձնահատուկ հյուսվածքը, որով կերտած աշխատանքը կարող է ապրել:

ПОРТРЕТНЫЕ СТАТУЭТКИ ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА

НАДАРЯН Н. Т.

Резюме

Отдельную группу в творчестве ваятеля представляют портретные статуэтки. В этих работах скульптор с любовью и мастерством изобразил своих современников, друзей, известных деятелей искусства (Н. Никогосян, Г. Гюрджян, Д. Демирчян, Б. Вартамян, А. Карибян, Р. Шишмянян, М. Костанян, М. Сарьян и др.), найдя для каждого портрета особое решение и продемонстрировав при этом высокий профессиональный уровень мастерства и тонкий вкус.

PORTRAIT STATUES OF KHACHATUR ISKANDARYAN

N. NADARYAN

Abstract

A separate group in the works of the sculptor are portrait statues. With love and skill the sculptor presented his contemporaries, friends and well-known artists (N. Nikoghosyan, G. Gyurjyan, D. Demirchyan, B. Vartanian, A. Gharibyan, R. Shishmanyanyan, M. Kostanyan, M. Saryan and others) finding for each portrait a singular solution and demonstrating highest level of professional skill and good taste.

ԿԻՆԸ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Ե.

Առասպելը վաղնջական մտածողության մեջ ամփոփում է այն սրբազան նախադեպը, որի հետևանքով և որին կրկնելով է ձևավորվում տիեզերքի և հասարակության ընթացիկ վիճակը¹: Մեզ հայտնի վաղնջական հայկական առասպելներն առաջին Հայկյանների ավանդություններն են: Այդ շարքը ներկայացնում է հին տիեզերածնության կամ արարչագործության առասպելի վիպականացած մի տարբերակը. Հայկի և նրա ժառանգների անուններով են կոչվում Հայաստանը, նրա մարզերը, լեռներն ու գետերը, ամիսներն ու ժամերը, իսկ անվանումն առասպելաբանության մեջ համազոր է արարմանը²: Այդ առասպելները իրենց մեջ պետք է ունենային սրբազան «առաջին ամուսնության» և, ընդհանրապես, սեռերի հարաբերությունները կանոնակարգող ու պայմանավորող նախադեպեր:

Բայց դրանք մեզ են հասել քրիստոնյա հեղինակների կողմից խմբագրված և մշակված վիճակում: Դրանք ներկայացվել են որպես իսկական պատմություններ և համապատասխանեցվել, առաջին հերթին, Աստվածաշնչի, ապա՝ հունական աղբյուրների տվյալներին: Խորենացին ուղղակի բաց է թողել այն, ինչ համարել է երկրորդական և չափազանց առասպելական: Ուրեմն, մեր աղբյուրը թերի է: Բացի այդ, այն չափազանց «հայրիշխանական» է՝ շատ քիչ տվյալներ կան կին հերոսների վերաբերյալ: Առաջին հերթին, դա Արայի, Շամիրամի և Նվարդի «սիրային եռանկյունու» ողբերգական պատմությունն է. հետաքրքիր է նաև Հայկի կանանց հիշատակությունը (տե՛ս ստորև): Շատ հարցերում մեզ օգնության է գալիս համեմատական նյութը՝ հայոց հին կրոնական պատկերացումները, ուշ գրանցված ավանդությունները և մերձակա հին ժողովուրդների զուգահեռ առասպելները:

Պետք է նշել ևս մի հանգամանք: Մեզանում, հետևելով քսաներորդ դարասկզբի արևմտյան գիտությանը, Արայի առասպելում հաճախ շեշտվել է դրա

¹ Այս հարցերի վերաբերյալ տե՛ս հատկապես **Eliade M.** *Cosmos and History*, New York, 1959:

² Առաջին Հայկյանների ավանդության՝ որպես արարչագործության առասպելի վիպական տարբերակի մասին տե՛ս **Petrosyan A. Y.** *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic* (*Journal of Indo-European Studies, Monograph 42*, Washington DC, 2002, p. 159 f).

բուսական պտղաբերության, բնության զարնանային զարթոնքի հետ ունեցած կապը: Բայց այն, ակնհայտորեն, առաջին հերթին, մի սիրային պատմություն է և պետք է քննվի որպես այդպիսին: Ստորև փորձ է արվում միայն շեշտել ավանդությունների այդ հայեցակետը և ուսումնասիրության որոշ նոր մոտեցումներ ու հնարավորություններ բացահայտել³:

Արա Գեղեցիկը, Շամիրամը և արալեզները

Առաջին Հայկյանների առասպելներում հայտնի կանանց կերպարները կապված են Արա Գեղեցիկի հետ: Նրա կինն է Նուարդը, որ հիշվում է միայն անունով: Շամիրամը՝ Ասորեստանի «վաւաշ» թագուհին, սիրահարվում է Արային, որը չի ենթարկվում թագուհու կամքին և կոպելով նրա դեմ՝ զոհվում է: Շամիրամը լուր է տարածում, թե իր աստվածները՝ արալեզները լիզելով վերակենդանացրել են Արային (Խորենացի, Ա. ԺԵ, Սեբեոս, Ա): Հայագիտության մեջ վաղուց ի վեր հիմնավորվել է այն կարծիքը, որ սա մեռնող և հառնող աստծու առասպելի մի տարբերակն է (հմմտ. Օսիրիսի, Դումնուզի, Թամուզի, Ադոնիսի, Ատտիսի համանման առասպելները)⁴: Ըստ այդմ, առասպելական և ծիսական վերակազմության համար կարելի է դիմել զուգահեռների օգնությանը: Բնութագրական է հատկապես փոշուզական համանման աստծու՝ Ատտիսի առասպելը: Չնայած բեղմնավորում է ժայռը, ինչի հետևանքով ծնվում է երկսեռ Ագդիստիսը (Ռեա-Կիրելե դիցուհու մի մարմնավորումը): Վախեցած աստվածները կտրում են նրա արական օրգանները, որոնցից նշենի կամ նոնենի է աճում: Դրանցից հղիացած Սանգարիա գետի աստծու դուստր Նանան ծնում է գերբնական գեղեցկության տեր Ատտիսին: Ագդիստիս-Կիրելեն խանդոտ սիրով սիրում է Ատտիսին, և երբ վերջինս փորձում է ամուսնանալ (կամ կապվել) Սանգարիոսի նիմփայի հետ, խելագարեցնում է Ատտիսին: Նուպայի մեջ Ատտիսը ներքինացնում է իրեն և մեռնում: Նրա մարմինը չի նեխում, ճկույթը շարունակում է շարժվել, իսկ մազերը՝ աճել (Պավսանիաս, VII.17. 10-12, Առնոբիոս, Advers. Nat. V. 5 seq., Օվիդիոս, Fast., 223 seq. և այլն): Հայտնի են Ատտիսի տոնակատարությունները Հռոմում (մ.թ.ա. 204 թ. հետո Կիրելեի և Ատտիսի պաշտամունքներն անցել էին Հռոմ): Տոնի երրորդ օրը՝ մարտի 24-ին, գլխավոր քուրմը կտրում էր իր երակները, իսկ ավելի ցածր դասի

³ Այս թեմային առնչվող որոշ այլ իրողությունների վերաբերյալ տե՛ս Պետրոսյան Ա., Սիրո կրակ և վիշապամարտ. առասպելի ծաղկային կողը, Հայ ժողովրդական մշակույթ XIII, Ե., 2006, էջ 209-219:

⁴ Մատիկյան Ա., Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 153-170, Ադոնց Ն., Հին հայոց աշխարհայացքը, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 289-292, Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1944, էջ 63-68:

քրմերը, կրոնական հափշտակության մեջ, վերքեր էին հասցնում, ապա՝ ներքինաց նում իրենց: Հաջորդ օրը հայտարարվում էր, որ Ատտիսը հարություն է առել և հավատացյալները տրվում էին սանձարձակ զվարճության: Ատտիսի կերպարը շատ առումներով համապատասխանում է Ադոնիսին, և այս ծեսերն էլ հիշեցնում են Ատարգասիս դիցուհուն և Ադոնիսին նվիրված ծիսակատարությունները Միրիայում, որոնք ուղեկցվում էին կանանց սրբազան պոռնկությամբ, իսկ հափշտակության մեջ գտնվող ուխտավորները երբեմն ներքինացնում էին իրենց⁵:

Ակնհայտ է, որ մեռնող ու հառնող՝ պտղաբերություն և բեղմնավորում խորհրդանշող ու ապահովող աստվածը հիշյալ առասպելներում և ծեսերում մարմնավորվել է իջնող և բարձրացող, կտրված և պրկված ֆալլոսի, ապա նաև ներքինու անկարողության և սեռական սանձարձակ վարքի հակադրության միջոցով: Այսօրինակ ֆալլոսային պաշտամունքը կարող էր բնորոշ լինել և Արա Գեղեցկին:

Հին Հայաստանում ևս հայտնի էին միևնույն տիպի պաշտամունքներ և ծեսեր: Ըստ Ստրաբոնի (XI.14.16), նույնիսկ ամենաազնվագարս հայերն Անահիտին են նվիրաբերել իրենց դուստրերին, որոնք երկար ժամանակ վաճառել են իրենց մարմինը դիցուհու տաճարում, ապա միայն ամուսնացել (սա բնորոշ է եղել տարածաշրջանի այլ հին ժողովուրդների ևս): Հայոց երեք դիցուհիները՝ Անահիտը, Աստղիկը և Նանեն կարող են դիտվել որպես միևնույն մեծ դիցուհու երեք տարբեր անձնավորումները: Իսկ Շամիրամը վիպական մակարդակում է ներկայացնում հին մայր դիցուհու կերպարը⁶: Արան, նրա կին Նուարդը և Շամիրամը կազմում են Ատտիսին, Նանային և Կիբելեին հիշեցնող մի «սիրային եռանկյունի»: Հին Հայաստանում հայտնի էր Անահիտ-Վահագն-Աստղիկ դիցա-

⁵ Մատիկյան Ա., նշվ. աշխ., էջ 199-209, Ֆրեզեր Ջ., Ոսկե ճյուղը, Ե., 1989, էջ 391-392, 410-415:

⁶ Այս հարցերի մասին տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. է, Ե., 1985, էջ 156-162, Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները (Պատմա-բանասիրական հանդես, 2004, N 2, էջ 228-230): Նանեի մասին կարելի է հավելել հետևյալը: Նրա անունը նույնական է Ատտիսի զուգորդ Նանային: Նրա պաշտամունքի կենտրոնն էր Թիլ ավանը: Հայկական աղբյուրներում սեմական թիլ «բլուր» բառը հանդես է գալիս որպես միայն «Շամիրամի կողմից արարված բլուր» իմաստով (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II. Ե., 1973, էջ 182-183): Այսպիսով, Նանեն այստեղ ուղղակի համապատասխանում է Շամիրամին: Հետաքրքիր է, որ ըստ Ստրաբոնի (XII.3.37), Պոնտոսի Ջելա քաղաքն իր Անահիտի տաճարով կառուցված էր Սեմիրամիսի բլուրի վրա: Ըստ այդմ, այնտեղ Շամիրամ-Սեմիրամիսը համապատասխանեցվել է Անահիտին:

բանական եռյակը (Ազաթանգեղոս 127), ընդ որում, ըստ մի կարծիքի, Վահագնի կերպարը ծագում է հին Արայից⁷:

Ապուլեոսը պատմում է սիրո աստված Ամուրի (հուն. Էրոս) և Պսիխեայի սիրո պատմությունը (*Met., IV.28-VI.24*): Պսիխեան ամուսնանում է Ամուրի հետ, բայց խախտում է նրա երեսը տեսնելու արգելքը: Ամուրն անհետանում է, իսկ աղջիկը, բազում փորձություններ անցնելով, այդ թվում՝ նաև այցելելով մահվան աշխարհ և հաղթահարելով Վեներայի հալածանքները, կարողանում է հասնել իր սիրելիին:

Ամուրի անհետացումն ու հայտնությունը համադրելի են Արայի մահվան և հարության, իսկ Պսիխեայի և Վեներայի կերպարները՝ համապատասխանաբար Նուարդի և Շամիրամի հետ: Արայի կերպարի քննությունը ցույց է տալիս, որ նա ունեցել է նաև սիրո աստծու և ամուսնության հովանավորի գործառույթ⁸: Հրնդեվրոպական համատեքստում Արան երրորդ՝ պտղաբերության գործառույթան կերպար է⁹, հմմտ. և **այր, արու, արի, առնական** եզրույթները, որոնք, եթե նույնիսկ ոչ ստուգաբանական, ապա նման հնչման՝ անագրամային մակարդակով ակնարկում են Արայի «արական» գործառույթը: Հատկանշական է նրա հակառակորդ Շամիրամի սեմական ծագումը, որը բնորոշ է նաև հնդեվրոպական «այր» արմատով կոչվող հերոսների հակառակորդներին¹⁰: Ըստ Եզնիկ Կողբացու (Ա. ԻԴ), արալեզները սերված են համարվել շնից: Արայի առասպելին զուգահեռ ավանդություններում էլ հերոսի շներն են, որ լիզում են հերոսի կապանքները կամ վերքերը՝ փորձելով մահվան աշխարհից վերադարձնել նրան (հմմտ. հայ. Արտա-

⁷ Մատիկյան Ա., նշվ. աշխ., էջ 237, Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 265-266:

⁸ Պետրոսյան Ա., Արա Գեղեցիկ և սուրբ Մարգիս. հնդեվրոպական աստվածն ու նրա քրիստոնեական հետևորդը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Ե., 2001: Սիրո աստծու մեռնող և հառնող կերպարը հոգեբանական մակարդակում լավագույնս բացատրելի է կյանքի և մահվան հակումները որպես Էրոսի և Թանատոսի (սիրո և մահվան աստվածների) հակադրություն ներկայացնող ֆրոյդյան մոդելով: Հաշվի առնելով մարդու ուղեղի կիսագնդերի գործառույթությունների տարբերակվածությունը՝ կարծիք է հայտնվել, որ Ջ. Ֆրոյդի «մահվան ինստիտուտը» (Фрейд З. Психология бессознательного, М., 1989, с. 409-422) կապված է աջ կիսագնդի հետ, և սիրո ու մահվան հակումների ֆրոյդյան հակադրությունը արտահայտում է համապատասխանաբար ձախ եւ աջ կիսագնդերի տարբեր գործառույթությունները (Иванов В.В. Бессознательное, функциональная асимметрия, язык и творчество /к постановке вопроса/, Бессознательное: многообразие видения, Новочеркасск, 1994, с. 170).

⁹ Ahyan S. *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes*, *Revue de l'histoire des religions*, 1982, CIC-3, p. 267-268; Dumézil G. *Le roman des jumeaux*, Paris, 1994, p. 133-135.

¹⁰ Petrosyan A.Y. *The Indo-European *H₂ner(t)-s and the Danu Tribe* (*Journal of Indo-European Studies*, 2007, p. 297-310).

վագդի, վրաց. Ամիրանիի, աբխազ. Ասլանի համանման առասպելները): Հին հայերենում *շնալ*, *շնանալ*, *շնացող*, *շնաբարո*, *շնասեր*, *շնմոլություն* և նման եզրույթներով բնորոշվել են անթույլատրելի սեռական կապերը, շվայտությունը և այլասերումները (նման պատկերացումների հետքեր կան և այլուր), որոնք հնարավորություն են տալիս այս առասպելները դիտել նաև էրոտիկ համատեքստում: Եթե Արան կարող է խորհրդանշել ֆալլոսային պաշտամունքը, ապա Շամիրամին ծառայող արալեզները համադրելի են Անահիտի տաճարում «շնացող» կանանց հետ:

Հայկը, Արան և «ջրով թոնիրի» ավանդությունը

Ըստ Խորենացու, Հայկը հրամայում է իր սպանած Բել-Նեբրովթի դիակը տանել իր ոստանը՝ Հարք գավառը և թաղել «ի բարձրավանդակ տեղուց, ի տեսիլ կանանց և որդուց իւրոց» (Խորենացի Ա. ԺԱ): Բարձունքը Նեմրութ (=Նեբրովթ) սարն է, Վանա լճի արևմտյան ափին, Հարքի հարավում, Մուշի դաշտի արևելքում: Սա Հայկյանների առասպելում կանանց առաջին հիշատակությունն է. ընդ որում, հոգնակի «կանանց»-ը կարծես թե ակնարկում է բազմակնություն: Այս հարցերի վերաբերյալ որոշ դատողություններ կարելի է անել շրջանի՝ ավելի ուշ գրանցված լեգենդների քննությամբ: Ըստ մի լեգենդի, Բելը մեծ գորքով կռիվ է եկել հայոց թագավորի վրա: Սա սպանում է Բելին, հանում Նեմրութ սարի գագաթը և այնտեղ թոնիր շինելով՝ մեջը վառում: Աստծու հրամանով կրակը ջուր է դառնում (Նեմրութի գագաթի լիճը): Այլ տարբերակներում Նեմրութը մեծ շինություն է կառուցում Նեմրութ սարի վրա և ապաստամբելով աստծու դեմ՝ նետ է արձակում երկինք: Աստված մի ձուկ է հանում ծովից ու պահում նետի դեմ: Արյուն է հոսում երկնքից, և Նեմրութը կարծում է, թե սպանեց աստծուն: Բայց կայծակներ են խփում, և Նեմրութն իր շինությամբ հանդերձ գետնասույզ է լինում, իսկ տեղում լիճ է առաջանում¹¹: Այստեղ հայոց թագավորը, ակնհայտորեն, Հայկն է: Կարելի է կարծել, որ Բել-Նեբրովթին (=Նեմրութ) պատժող աստվածը ևս ի սկզբանե պետք է լիներ Հայկը:

Ըստ ժողովրդական պատկերացումների, Մուշի դաշտի հիմնական գետը՝ Մեղրագետը, սկիզբ է առնում Նեմրութի կատարի լճից¹²: Գետի իրական ակունքի վերաբերյալ պատմել են հետևյալը: Այդտեղ առաջ թոնիր է եղել. իրիցկիներ հաց

¹¹ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե., 1969, էջ 72-73: Կան և համանման մուսուլմանական առասպելներ՝ ծագած միևնույն հինարևելյան ակունքներից. տե՛ս, օրինակ, *Мифы народов мира*, т. 2, М., 1982, с. 219, 393:

¹² Սրվանձտյան Գ., Երկեր, հ. I, Ե., 1978, էջ 50, Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 89:

թխելիս է լինում, երբ մի աղքատ խնդրում է հաց, հետո պանիր (գինի), ապա և համբույր՝ աստծու կամ Քրիստոսի սիրո համար: Տիրուհին համաձայնում է: Համբուրվելու պահին ներս է մտնում քահանան, և տիրուհին իրեն նետում է այրվող թոնիրը: Որոշ տարբերակներում քահանան հետևում է կնոջը: Թոնիրը լցվում է մեղրահամ ջրով ու դառնում գետ, իսկ տիրուհին՝ ձուկ: Այս լեգենդի տարբերակները Հայաստանում պատմվում են այլուրեք¹³:

Ըստ ուսումնասիրողների, ձուկ դառնալու մոտիվը լեգենդի իրից-կին/տիրուհուն նույնացնում է սիրիական Դերկետո դիցուհուն (վերջինս շարունակում է ավելի հին Ատարգատիս-Աստարտեին): Նա իբր հղիացել է մի քրմից և իր դուստր Շամիրամ-Սեմիրամիսին ծնելուց հետո իրեն լիճ է նետել ու վերածվել ձկան (Դիոդորոս, 2.4.2-3)¹⁴:

Այս լեգենդների առասպելական ակունքների խնդիրը և քննարկումը դուրս է մեր նյութից (Նեբրովիթի՝ դեպի երկինք նետ արձակելու մոտիվը կա և մուսուլմանական առասպելաբանության մեջ, բայց այնտեղ չկա ձկան պահր. նետերն արյունով է ներկում Ջաբրահիլ հրեշտակը)¹⁵: Ուղղակի ակնհայտ է, որ սրանք ուշ բանահյուսական արձագանքներն են այն առասպելների, որտեղ մեծ աստվածը կայծակ-կրակով պատժում է իր հակառակորդին և/կամ իրեն դավաճանած կնոջը: Հայագիտության մեջ այս լեգենդները քննարկվել են Արայի և Շամիրամի առասպելի համատեքստում¹⁶:

Հնարավոր է այս ձուկ-կին (դիցուհի) կերպարների շարքում դիտել և Նեմրոթի առասպելի ձկանը: Նրա վրա արձակած նետը կարող է խորհրդանշել սեռական գործողությունը (հմմտ. բրբռ. **նետել** «սեռական գործողության» իմաստով, ապա և հունական և հնդկական սիրո աստվածներ Էրոսին և Կամային որպես նետաձիգ պատկերելը): Ամենամոտ զուգահեռը կովկասյան էպոսներում Սաթանա/ Սաթանեյի հղիանալու դրվագն է: Անդրաշխարհիկ կերպարը գետի մյուս ափից «նետ է արձակում» Սաթանայի կողմը: Այդ «նետից» հերոսուհին հղիանում է, և ծնվում է էպոսի մեծ հերոսը: Ըստ այդմ, արձակած նետից վիրավորված ձկան արյունը կարող է խորհրդանշել աղջկա կուսության

¹³ Սրվանձոյան Գ., նշվ. աշխ., էջ 52, Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 88-89, 95, 98, 106:

¹⁴ Այս սիրիական զուգահեռը առաջինը բերել է Գ. Խալաթյանը (տե՛ս Халатъянц Г. А. Общий очерк армянских сказок, М., 1885, с. 26):

¹⁵ Мифы народов мира, т. 2, с. 218 сл.

¹⁶ Աբելյան Մ., Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 251-252 և Արային նվիրված աշխատություններում (տե՛ս ծան. 4): Այլ մոտեցումներ տե՛ս Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 225-233, Petrosyan A.Y. The Indo-European and Ancient Near Eastern Sources..., p. 59 ff.

կորուստը: Հայր աստվածը պատժում է մեղավորին՝ աղջկա կուսությունը խախտած իր հակառակորդին¹⁷: Հայկական ավանդության մեջ լեռան գագաթի թռնիրը խորհրդանշում է հրաբուխը, հմնտ. Հայկական լեռնաշխարհի առա-վել ակտիվ հրաբխի անվանումը՝ Թոնդրակ (**թոնի** բառի նվազականը): Նեմրութը գործող հրաբուխ էր դեռևս միջնադարում (վերջին ժայթքումները եղել են 1352 և 1441 թթ.): Ուշագրավ է, որ Նեմրութի հրաբխային խառնարանը ամենամեծն է Արևելյան կիսագնդում (տրամագիծը՝ մոտավորապես 8 կմ)¹⁸: Ըստ Խորենացու, Հայկի և Բելի կռիվը տեղի է ունեցել Նեմրութից հեռու՝ Հայոց ձորում: Ըստ այդմ, կարելի էր կարծել, որ Բելի՝ աստծու կողմից կործանման տեղայնացումը Նեմրութի վրա ուշ, երկրորդային երևույթ է: Բայց բերված լեզենդները շատ վաղնջական են, ավելի, քան Հայկի և Բելի առասպելը, որը չափազանց պատմականացած է և մշակված: Այստեղ իրար են խառնվել երկու՝ պատմական և հրաբխային առասպելներ¹⁹: Բայց չի կարելի պնդել, թե Հայկի և Բելի կռիվ տեղայնացումը Նեմրութի վրա երկրորդային է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ

¹⁷ Կովկասյան էպոսների առավել հայտնի, «մեղմացված» տարբերակներում «հղիանում» է հերոսուհու կողքի քարը, որից և ծնվում է հերոսը (տե՛ս **Арджинба В. Г.** *Нартский сюжет о рождении героя из камня. Древняя Анатолия, М., 1985, с. 128-168*): Քարի բեղմնավորման դրվագը, հայտնի նաև խուրիական Ուլլիկումմիի առասպելից և Ատտիսի ծննդաբանությունից, ցույց է տալիս, որ այս պատկերացումների համալիրը միասնական է եղել Փոքր Ասիան և Կովկասն ընդգրկող ողջ տարածաշրջանում: Ըստ Կեղծ Պլուտարքոսի մի գրվածքի (*De Fluviiis, XXIII, 4*), Միթրասը, աստելով կանանց, բեղմնավորում է ժայռը: Ծնվում է Դիորիոս անունով մի որդի, որը սպանվում է Արեսի հետ մենամարտում և վերածվում լեռան Արաքս գետի մոտ: Այստեղ հերոսների կերպարները խառնված են: Միթրասն ինքը պիտի ծնվեր ժայռից (տե՛ս **Widengren G.** *The Mythraic Mysteries in the Greco-Roman World with Special Regard to Their Iranian Background, La Persia e il mondo Greco-Romano, Roma, 1966, p. 444*) և հնարավոր է պատկերացնել, որ Արեսն այստեղ ներկայացնում է Արայի անվան հունական տառադարձումը: Արաքսի մերձակա լեռը, հավանաբար, Մասիսն է, որտեղ զնդանված Արտավազդը, որպես հոր կողմից պատժվող՝ մեռնող և հառնող աստվածության մի արձագանք, համադրելի է Արային. ավելին, մերձակա Արարատյան դաշտը կոչվել է «դաշտն Արայի»: Արտավազդի առասպելի որոշ դրվագներ հնարավոր է մեկնաբանել քննարկվող համատեքստում, իսկ նրա շրթանները լիզող շները նույնական են արալեզներին:

¹⁸ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 976.*

¹⁹ Այս պատմություններն ուղղակիորեն համեմատելի են հունական առասպելի հետ, որտեղ ամպրոպային Ջևսը, Տիփոնին կայծակներով այրելով ու հետապնդելով, ի վերջո, ծածկում է Էտնա հրաբխով, իսկ նա լեռան տակից շարունակում է գոռալ ու կրակ արտաշնչել: Հրաբխային մի առասպել է նաև Արամ նահապետի կռիվը Պայապիս Քաղայի դեմ Արգայոս հրաբխի շրջանում, որն ուղղակի համադրվել է Ջևսի և Տիփոնի առասպելի հետ (տե՛ս **Markwart J.** *Le berceau des arméniens, Revue des études arméniennes, 8, 1928, p. 221 seq.*):

Հայկը հնագույն ամպրոպի աստծու վիպականացած կերպարն է²⁰: Ամպրոպային առասպելում աստծու կռիվն իր հակառակորդ վիշապի դեմ կարող է տեղայնանալ ոչ թե մեկ, այլ մի քանի տարբեր վայրերում, և դրանցից մեկը պիտի լիներ Նեմրուծի վրա:

Հատկանշական է, որ «ջրով թոնրի» լեգենդը կապվում է նաև Արայի հետ, ինչը նորից ցույց է տալիս դրա առնչությունը առաջին Հայկյանների պատմությանը: Լեգենդի մի տարբերակը պատմել են Վան քաղաքին մերձակա Լեզք գյուղում: Այդտեղ, Ամենափրկիչ մատուռի տեղում, առաջ, իբր, տաճար (կռատուն) է եղել, որտեղ արալեզները լիզելով առողջացրել են հիվանդներին ու մեռածներին, և Շամիրամն այդտեղ է դրել Արայի մարմինը²¹: Նկատենք, որ Լեզքի լեգենդի որոշ տարբեր կարող են համադրվել Անահիտի պաշտամունքի վերաբերյալ Ստրաբոնի հաղորդման մանրամասներին (տաճար, օտարական, աստծու սիրո համար համբույր): Աղքատի կերպարի տակ կարելի է պատկերացնել Արայի վերհուշը, որի առասպելում ևս հնում հավանաբար եղել է այրվելու մոտիվը²²: Այս լեգենդները ևս պարզորոշ հասկանալի են ամպրոպի աստծու առասպելի համատեքստում²³:

Այսպիսով, հին ու նոր լեգենդների հիման վրա կարելի է խոսել նաև Հայկ նահապետի՝ կանանց հետ ունեցած որոշ հարաբերությունների վերաբերյալ: Ընդ

²⁰ Հարությունյան Ս. Բ., նշվ. աշխ., էջ 230-233, Petrosyan A.Y. *The Indo-European and Ancient Near Eastern Sources...*, p. 53 ff.: Հատկանշական է, որ հայոց երկրորդ անվանադիր նահապետ Արամը՝ «երկրորդ Հայկը» ևս ամպրոպի աստծու վիպական տարբերակներից մեկն է (տե՛ս նույն տեղում, էջ 43 ff.):

²¹ Սրվանձոյան Գ., նշվ. աշխ., էջ 52, Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Ե., 1931, էջ 191, 309, 327, Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե., 1969, էջ 23, 273, Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., նշվ. աշխ. հ. 2, Ե., 1988, էջ 566-567: Լեզքի լեգենդների քննությունը տե՛ս Աբեղյան Ս., Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 248-255, Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 245-248:

²² Արայի հնագույն նախատիպը՝ Արմենիոսի որդի Էրը գոհվում է մարտում, բայց 12 օր անց դիակիզման խարույկի վրա վերակենդանանում և պատմում է իր տեսածներն անդրաշխարհում (Պլատոն, *Res publica*, 614b seq. տե՛ս Էմին Մ. Հ., Վէպը հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, էջ 85-88):

²³ Ամպրոպային առասպելի պարզ տարբերակում ամպրոպի աստվածը կայծակ-կրակով այրում է իր հակառակորդ օձ-վիշապին: Ավելի բարդ տարբերակներում այս հակադրությունը տեղափոխվում է ներքնտանեկան համակարգ՝ պատժվողի դերում հանդես են գալիս աստծու կինը կամ որդին, որոնք այս դեպքում իրենք են օժտված հակառակորդի հատկություններով: Պատճառը կնոջ դավաճանությունն է, իսկ որդու պարագայում՝ աստծու կնոջ հետ (արյունապիղծ) կապ հաստատելու փորձը: Հնդեվրոպական ամպրոպային՝ «հիմնական առասպելի» այս վերակազմությունների վերաբերյալ տե՛ս Иванов В.В., Топо-ров В. Н. *Исследования в области славянских древностей*, М., 1974:

որում, բացահայտվում է որոշակի կապ Հայկի և Արայի առասպելների միջև (Հայկը ամպրոպի աստծու, իսկ Արան՝ այդ աստծու որդու վիպականացած կերպարներն են): Արժանահիշատակ է նաև այն, որ և՛ Արայի կերպարում, և՛ քննարկվող ավանդություններում, միանգամայն օրինաչափ կերպով, ի հայտ են գալիս պատանիների նվիրագործության (initiation) փորձությունների արձագանքներ. հերոսները պատժվում են՝ այրվում, զոհվում, ապա և վերածնվում նոր էությանը՝ համապատասխան նվիրագործության ծեսերին ու դրանց առնչվող առասպելներին:

ЖЕНЩИНА И МУЖЧИНА В ДРЕВНЕЙШИХ АРМЯНСКИХ МИФАХ

ПЕТРОСЯН А. Е.

Резюме

Одним из героев древних армянских мифов были мужчина и женщина. Ярким примером тому является миф о любви ассирийской царицы Семирамиды к потомку Гайка Ара Прекрасному, который рассматривался в арменоведении в контексте его связи с плодородием, весенним возрождением природы (со смертью Ара природа погибает, а с его возрождением наступает весна). Однако этот миф в первую очередь является историей любви, повествующей об отношениях между мужчиной и женщиной в древнейшую эпоху.

WOMAN AND MAN IN EARLIEST ARMENIAN MYTHS

A. PETROSYAN

Abstract

Archaic myths contain that sacred precedent on the basis of which the current life of the society is formed. The earliest Armenian myths about the forefather Hayk and his descendants, which represent the beginning of Armenia and Armenian people, contain certain information on the men-women relations as well. In the present article are considered the myth of love of the Assyrian queen Semiramis to Hayk's descendant Ara the Handsome along with relevant late legends and some cult practices of ancient Armenia, in which one can find reflections of intimate relations of women and men.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռ. Լ.

Միջնադարյան Հայաստանի տնտեսության առավել զարգացած ճյուղերից էր գյուղատնտեսությունը: Դրա առաջնային ճյուղերից էր երկրագործությունը (հողագործությունը), որն անխտիր տարածված էր երկրի բոլոր շրջաններում՝ սկսած հարթավայրային շրջաններից մինչև բարձրլեռնային:

«Պատմութիւն Աղուանից աշխարհի»¹ աշխատության մեջ նկարագրվում են «Աղուանից աշխարհի»² բարիքները, այդ թվում՝ առատ հացը³: Այս երկում հացազգիների մասին հաջորդ տեղեկությունը կապված է Վաչագան արքայի մշակած եկեղեցական կանոնների հետ. ըստ այդմ՝ ունևորները պետք է վճարեին չորս գրիվ ցորեն և վեց գրիվ գարի⁴: Մակար Բարխուդարյանցն իր «Արցախ» աշխատության մեջ,

¹ Մույն աշխատության ստեղծման, ժամանակագրական խնդիրների, հեղինակի ինքնության մասին առկա է բավական հարուստ վերլուծական գրականություն: Ըստ առավել ընդունված տեսակետի՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունը կազմվել է X դարում, և հեղինակն է Մովսես Դասխուրանցին: Նա հավաքել է բազմաթիվ պատմական աղբյուրներ, հաճախ ուղղակի արտագրելով դրանք առանց փոփոխությունների, որի հետևանքով X դարի աշխատության մեջ պահպանվել են VII դարի աղբյուրներից ծագող հեղինակային նշումներ. սա շատ հետազոտողների տեղիք է տվել նշելու, որ Աղուանից պատմության առաջին երկու գլուխներն ստեղծվել են VII դարում, և դրանց հեղինակն է Մովսես Կաղանկատվացին, իսկ մնացած գլուխները՝ արդեն X դարում: Տե՛ս **Акопян А. А.** *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Е., 1987, с. 150-177. Հղումներում որպես հեղինակ նշում ենք Մովսես Կաղանկատվացուն, ինչպես հրատարակության վերնագրում:

² Թեև պատմության այս հատվածում չի հիշատակվում Արցախ անունը, սակայն խոսքը մեծ մասամբ հենց Արցախ և Ուտիք նահանգների մասին է: «Աղուանից աշխարհի տերմինի կիրառման պատճառն այն է, որ Արշակունիների թագավորության անկումից հետո տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հետևանքով Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգներն անջատվեցին Հայաստանից և միացվեցին Կուր գետի ձախափնյակում գտնվող Աղվանքին և սկսեցին վարչական մեկ միավոր հանդիսանալ Աղվանք անվամբ, թեև պատմական բոլոր աղբյուրներում կար հստակ տարբերակում սրանց միջև: Տե՛ս **Ուլուբաբյան Բ. Ա.**, *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*, Ե., 1981, էջ 53, **Ուլուբաբյան Բ. Ա.**, *Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ (Բանբեր Երևանի համալսարանի, այսուհետև՝ ԲԵՀ)*, 1975, հ. 2, էջ 149-164), **Հարությունյան Բ.**, *Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կազմությունը 387-451 թթ.*, ԲԵՀ, 1976, N 2, էջ 77-95, **Акопян А. А.**, նշվ. աշխ., էջ 110-114:

³ **Մովսես Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 38:

⁴ Նույն տեղում, էջ 66:

նկարագրելով Տիգրանակերտ քաղաքը և համանուն դաշտային գավառը, որպես նրա հարստություն հիշատակում է նաև ցորենը, գարին և կորեկը⁵: Մակայն միջնադար-յան հայկական աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում Արցախի Տիգրանակերտ քաղաքի երկրագործական տնտեսության մասին: Այս բացը լրացնում են հնագիտական պեղումների ժամանակ գտնված հնաբուսաբանական և հնագիտական նյութերի ընձեռած տվյալները:

Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերը

Ըստ Տիգրանակերտի 2011 և 2012 թվականի պեղումների նյութերի՝ Տիգրանակերտ քաղաքում թե՛ անտիկ շրջանում և թե՛ միջնադարում երկրագործության հիմնական ուղղվածությունը եղել է հացազգիների մշակությունը: Ըստ Տիգրանակերտի հնաբուսաբանական նյութերի ուսումնասիրությամբ զբաղվող հնաբուսաբան Ռոման Հովսեփյանի⁶ և՛ այդ, և՛ հաջորդ տարիներին պեղումների ժամանակ բոլոր տեղամասերում գտնված հնաբուսաբանական նյութերի մեջ գերակշռում են հացազգիները և դրանց այս կամ այն տեսակները:

Հայտնաբերված բազմաթիվ ածխացած հատիկները վկայում են, որ քաղաքի երկրագործական գոտում մշակել են հիմնականում գարի և ցորեն, ընդ որում, անտիկ շրջանում գարու մշակությունը մոտ երեք անգամ գերակշռել է ցորենին: Մշակության ծավալներով Տիգրանակերտում երկրորդ տեղում է եղել ցորենը, մասնավորապես՝ ցորենի փափուկ տեսակը, որը հացաթխման համար օգտագործվող հիմնական տեսակն է: Տիգրանակերտում մշակել են նաև ցորենի կարծր տեսակներ և սովորական կորեկ:

Ըստ Ռ. Հովսեփյանի՝ հնարավոր է նախնականորեն՝ սկսած XI դարից (ըստ վաղքրիստոնեական հրապարակի Կենտրոնական թաղամասի շերտագրության), արձանագրել միջնադարում ցորեն-գարի հարաբերակցության տարբերությունը հոգուտ ցորենի, ընդ որում՝ կարելի է փաստել ցորենի մի քանի տեսակներ, այդ թվում՝ չորադիմացկուն կունդիկ տեսակի ցորեն: Ըստ մոլախոտերի տեսակի՝ կարելի է խոսել բերքի գտման որոշակի տեխնոլոգիաների կիրառման մասին⁷: Հատկանշական է, որ Տիգրանակերտում գերակշռում էր չորադիմացկուն կունդիկ ցորեն, ինչպես նաև փաստագրված է ցորենի և գարու միասին մշակում, որը բնորոշ էր շոգ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններին, ինչպիսին Արցախյան հարթավայրն էր:

⁵ Բարխուդարյան Մ., *Արցախ, Ե.*, 1996, էջ 5-61, 18-19:

⁶ *Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերի տվյալների տրամադրման համար հատուկ շնորհակալություն են հայտնում արշավախմբի հնաբուսաբան Ռոման Հովսեփյանին:*

⁷ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանետովա Տ., Հովսեփյան Ռ., *Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012 թթ., Ստեփանակերտ, 2015, էջ 91-93):*



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Տիգրանակերտի երկրագործական գոտում XI-XIII դարերում մշակում էին ցորեն, գարի, կորեկ:

Միջնադարյան Հայաստանում հացահատիկների մշակումից ստացել են առաջին հերթին այլուր և ձավար⁸: Բնակչության աղքատ խավերի համար հանապազօրյա կերակուր է ծառայել գարուց կամ գարեխառն կորեկի այլուրից պատրաստված հացը: Այն, որ կորեկախառն հացը համարվում էր ավելի աղքատների հաց, կամ որ այն կիրառում էին լայն խավերը սովի կամ դժվար տարիներին, վկայված է «Պատմութիւն Ադուանից աշխարհի» աշխատության մեջ. «Ես՝ կորեկս, Շակաշեն գավառի Հակու վայրում թաքնված էի. գնորդների բազմությունը ինձ անուշադրության էր մատնել և չէր գնում. եկավ մի բարի ժամ, երբ տիրեց իմ եղբայր Սովը, և ահա ես դարձա երևելի ու բարձրացա Վարազ-Տրդատ իշխանի ու Եղիազար կաթողիկոսի սեղանները»:

Հացազգիների մշակությանը վերաբերող հնագիտական նյութեր Տիգրանակերտի պեղումներից

Միջնադարյան Տիգրանակերտ քաղաքում հացազգիների մշակումից ստացած բերքի մշակման մասին են վկայում քաղաքի Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական հրապարակի պեղումներից⁹ գտնված բազմաթիվ սանդերը, աղորիքները, երկանքները և սրանց բեկորները, ինչպես նաև մանգաղներն ու սրաքարերը:

Պեղումներից գտնված սանդերը պատրաստված են կրաքարից (նկ. 1)¹⁰: Ամբողջական պահպանված սանդերի փոսերի խորությունը կազմում է 18-23 սմ (նկ. 2): Սրանց մի մասն ուղղանկյուն է, մշակված և հարթեցված է միայն վերին հատվածը, կողային եզրերը կա՛մ կիսամշակ են, կա՛մ էլ կլորացող, որը ցույց է տալիս, որ սանդը մինչև աշխատանքային մակերեսը թաղվում էր հողի մեջ (նկ. 3): Սանդերը գտնվել են բնակելի համալիրների պեղումներից¹¹ (ԿԸ 122, 123, 124 քառ.) և սովորաբար ներդրված են եղել հատակի մեջ:

Միջնադարյան Տիգրանակերտում հացազգիների վերամշակման համար օգտագործում էին նաև աղորիքներն ու երկանքները: Տիգրանակերտի Կենտրոնական թաղա-

⁸ Բեգլարյան Հ., *Հացագործությունը միջնադարյան Հայաստանում (Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, - 5, էջ 73):*

⁹ *Ըստ երևույթին, վաղքրիստոնեական հրապարակը իր եկեղեցիներով ավերված էր արդեն X դարում, և այս ավերակների վրա կառուցվել էին բնակելի համալիրներ իրենց թոնիրներով, տնտեսական հորերով: Այս բնակելի համալիրները, ըստ գտնված խեցեղենի, թվագրվում են XI-XIII դարերով: Նույնպիսի թվագրություն պետք է ունենան նաև այդ համալիրների պեղումներից գտնված սանդերը, երկանքները և այլ տնտեսական իրերը:*

¹⁰ Լուսանկարները Հ. Լ. Պետրոսյանի և Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի:

¹¹ Պեղող հնագետներ Հ. Լ. Պետրոսյան, Վարդանեսովա Տ.:

մասի տարբեր տարիների պեղումներից հայտնաբերվել են բազմաթիվ աղորիքների տարբեր չափերի բեկորներ: Դատելով բեկորներից՝ աղորիքները մակույկաձև և սկավառակաձևն են եղել: Աղորիքները պատրաստված են չեչաքարից (նկ. 4, 5):

Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերվել են նաև երկանքներ (նկ. 6, 7): Հայաստանում երկանքները, նաև ըստ հնագիտական նյութի, զարգացման բավական երկար փուլեր են անցել՝ բազմիցս փոփոխվելով¹²:

Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված է երկանքի ամբողջական վերին քար (Ha 121 քառ. հ-1.50): Այն շրջանաձև է, փոքր-ինչ գոգավոր, կիսաշրջանաձև մակերեսով, ունի 40 սմ տրամագիծ (նկ.8): Վերին աղացաքարի կենտրոնում առկա է անցք՝ ստորին աղացաքարին միանալու համար: Վերին քարի ստորին շփվող մակերեսը հարթ է, այստեղ կենտրոնական անցքի հակադիր եզրին արված է փոսիկ, ուր ամրացվել է կենտրոնում անցք ունեցող երկաթե պահանգ, որի միջով անցել է ստորին աղացաքարի լիսեռը: Այս դեպքում վերին աղացաքարը պտտվելիս տատանումներ չէր տալիս: Վերին քարի անցքի տրամագիծը 10 սմ է: Այստեղից լցնում էին ցորենը: Վերին աղացաքարի արտաքին մակերեսի եզրին առկա է մեկ այլ փոքրիկ անցք՝ փայտե բռնակի ամրացման համար: Սրա խորությունը 3 սմ է, տրամագիծը՝ 2.5 սմ: Իր տեսքով այս երկանքը չի տարբերվում դեռևս ոչ վաղ անցյալում կիրառվող երկանքներից:

Ըստ Հ. Ս. Եսայանի դասակարգման՝ նման տիպի երկանքները պատկանում են ձեռքի երկանքների երկրորդ տեսակին¹³:

Բերքահավաքի գործիքների շարքում առավել տարածված գործիքներից էր մանգաղը: Պահպանված մանգաղի ամբողջական օրինակ գտնվել է Տիգրանակերտի պեղումների ժամանակ (Hb 123 քառ. հ-3,10 մ): Չափերով փոքր է, սակայն ունի ընդգծված կորություն, պոչուկավոր է, այսինքն՝ սրա պոչուկը մտնում էր փայտե կամ ոսկրե բռնակի մեջ: Ընդհանուր առմամբ, այս մանգաղը կոր աղեղ է կազմում պոչուկի հետ: Դատելով պոչուկի չափերից՝ մանգաղն ունեցել է համեմատաբար երկար բռնակ, ինչն ավելի արդյունավետ էր դարձնում նրա աշխատանքային օգտակարությունը: Լրացուցիչ կարևոր գործոն էր նաև աղեղի կորությունը (նկ. 9): Կարելի է ենթադրել, որ փոքր չափի մանգաղները կիրառվում էին նաև բանջարաբուստանային մշակաբույսերի համար:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև մեծ ու փոքր չափի սրաքարեր: Խոշոր սրաքարերը նախատեսված էին մանգաղ, գերանդի և այլ գործիքներ սրելու

¹² Խաչատրյան Օ.Ն., *Երկանքի առաջացումը ըստ Գառնիի պեղումներից հայտնաբերված նյութերի* (Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 1, էջ 264-269):

¹³ Есаян Г. С. *Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье*, Е., 1992, с. 132-140, Եսայան Հ. Ս., *Միջնադարյան Հայաստանի երկանքները (ըստ պեղածո նյութերի), Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, զեկուցումների թեզիսներ, Ե., 1987, էջ 31:*

համար՝ քարը ջրով թրջելու միջոցով, իսկ փոքր սրաքարերը՝ ավելի փոքր գործիքներ՝ դանակներ, փոքր մանգաղներ սրելու: Սրելուց առաջ սրանց վրա յուղ էին քսում:

Բոլոր սրաքարերն էլ բավական մաշված են, ինչը երկարատև օգտագործման վկայություն է, պատրաստված են տեղական կրաքարից: Սրաքարերից մեկն ունի անցք, որը նախատեսված էր գոտուց կախելու համար (նկ. 10):

Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված տնտեսական հորերի նկարագրությունը

Սովորաբար հացահատիկը պահելու համար կիրառվում էին հորեր:

Մխիթար Գոշի, ինչպես նաև Սմբատ Մպարապետի «Դատաստա-նագրքում» հատուկ հոդված է նախատեսված այն դեպքերի համար, երբ հացահատիկի հորում կարող էր մարդ մահանալ հորում կուտակված գազերից կամ էլ ընկնել այնտեղ¹⁴:

Հացահատիկ կամ այլուր պահելու համար Տիգրանակերտում ևս օգտագործում էին հորեր: Դրանցից մեկը բացվել է 2010 թվականի պեղումների ժամանակ և ունի 2,07 մ խորություն: Դատելով հորի կառուցվածքից՝ այն փորվել է վերևից: Նրա պատերը մանրակրկիտ շարվել են ներսից, մանր քարերով կրաշաղախի օգնությամբ, այնուհետև ծածկել են կրասվադով, որի հետևանքով ստացվել է հարթ և ուղիղ մակերես: Հորի բերանը պատրաստված է կրաքարի ամբողջական կտորից, որը բավական լավ մշակված է: Հորի բերանի՝ քարի իրանի հետ միացման տեղը գրեթե անտեսանելի է: Ամենայն հավանականությամբ, այդպիսի հորը նախատեսված էր ցորենի պահպանման համար և վերաբերում է XII-XIII դարերին (նկ. 11):

Միջնադարում այլուրը, հացահատիկը պահել են նաև կարասների մեջ¹⁵: Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասի պեղումների ժամանակ գտնվել են կարասների թե՛ բազմաթիվ բեկորներ և թե՛ ամբողջական կարասներ: Այսպես, 2014 թ. ՀԵ, ՀԵ 120 քառ. սառնանին 0.9 մ խորության մեջ գտնվել է մի կարաս՝ քարե կափարիչով: Այն դատարկ էր և կարող էր նախատեսված լինել նաև ցորեն կամ այլուր պահելու համար: Կարասն ունի նեղ հատակ, լայն բերան, իրանը զարդարված է վերադիր նեղ գոտիներով: Իրանը մեջտեղում լայնանում է: Նմանատիպ կարասները Դվինի նյութի հիման վրա սովորաբար թվագրվում են XII-XIII դարերով (նկ. 12, 13)¹⁶:

Այսպիսով, միջնադարյան Տիգրանակերտ քաղաքի գյուղատնտեսության մեջ առաջնային նշանակություն ունեւ հացագգիների մշակումը, որոնցից առավել տարածված էին ցորենը, գարին, կորեկը: Ըստ հնաբուսաբանական գտածոների բնույթի՝ գերակշռում էին չորադիմացկուն տեսակները: Հնաբուսաբանական նյութի հիման վրա

¹⁴ Տե՛ս Մխիթար Գոշ, *Գիրք Դատաստանի, Աշխատասիրությանը Խորով Թորոյանի, Ե., 1975, էջ 60-61: Судебник Смбата Спарпета, перевод со среднеармянского, предисловие и примечания проф. А. Г. Абрамяна, Е., 1971, с. 57.*

¹⁵ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, Ե., 1952, էջ 55:

¹⁶ Պետրոսյան Հ. Լ., Արցախի Տիգրանակերտի 2014 թ. հնագիտական պեղումների հիմնական արդյունքները, Գիտական հաշվետվություն, Ե., 2015, էջ 27 (ձեռագիր):

կարող ենք արձանագրել նաև երկրագործության մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Պեղումներից գտնվել են նաև հացազգիների վերամշակմանն առնչվող բազմաթիվ գործիքներ և իրեր, որոնց թվում՝ սանդեր, աղորիքներ, երկանքներ, մանգաղների բեկորներ և ամբողջական մանգաղներ, տնտեսական հորեր, կարասներ: Այս բոլոր գտածոները փաստում են միջնադարյան Տիգրանակերտում գյուղատնտեսության կարևոր դերի մասին:

КУЛЬТИВАЦИЯ ЗЕРНОВЫХ В СРЕДНЕВЕКОВОМ ТИГРАНАКЕРТЕ

ОВСЕПЯН Р. Լ

Резюме

В сельском хозяйстве средневекового Тигранакерта важное место занимала культивация зерновых культур, из которых наиболее распространенными были пшеница, ячмень, просо. Исходя из археоботанических находок в Тигранакерте, можно заключить, что здесь преобладали устойчивые к сухим погодным условиям сорта. Во время раскопок также были найдены артефакты, связанные с переработкой зерновых, – зернотерки, камни жерновов, серпы (целые и в виде фрагментов), зерновые ямы и карасы.

ON THE PROCESSING OF GRAIN IN THE MEDIEVAL TIGRANAKERT

R. HOVSEPYAN

Abstract

In agriculture of the medieval Tigranakert occupies an important place processing of crops, from which more spread were wheat, barley, millet. According to botanical discoveries resistant to dry weather sorts dominated in Tigranakert. During the excavations artifacts related to processing of grain also were found: grinding stones, stones of millstones, sickles (whole and fragmented), grain pits and karases.

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ МУЛЬТИМЕДИЙНОЙ И
КОНВЕРГЕНТНОЙ ЖУРНАЛИСТИКИ

ХАЧАТРЯН А. Х.

Становление конвергентной журналистики обусловлено главным образом развитием интернета и информационно-коммуникационные технологии (ИКТ). Элементы конвергенции, являясь журналом, статьями, встречами, сессиями, появились в интернете, как правило, в виде журналов, статей, лекций, семинаров. Однако, как бы то ни было, отмечено выше, данные проявились в виде локальных характеристик, являясь общими, с точки зрения СМИ. Большая часть теоретиков, журналистов, как Качкаева, Вартанова) полагают, что процесс конвергенции, являясь журналом, статьями, узким спектром, манерами, данного явления начался, именно в связи с появлением интернета. Следует упомянуть о такой важнейшей составляющей процесса конвергенции, являясь журналом, статьями, как мультимедийная журналистика, как таковая была бы невозможна без интернета.

Коммерческая, интернет-журналистика в Армении, как правило, началась в 1992 году в результате появления аналоговых, а также и цифровых технологий. Первый армянский веб-сервер (arNinco.am) был начальной etapе развития, интернет-журналистика в Армении, как у стран, не было своего собственного адреса, по электронной почте армянские домены регистратором, сфера деятельности зона высшего уровня (СOM) в середине 90-х годов, электронные журналы, своей собственной зоны, а также появились доменные, менеджеры, были обусловлены. Средств всего на, членство, членство, элекtronные, интернет-услуги возможны.

Тогда же естественно, что в Армении, как и в Соединенных Штатах, мультимедийная журналистика, электронные журналы, членство, менеджеры, были обусловлены. Средств всего на, членство, членство, элекtronные, интернет-услуги возможны.

Агбабяна, я Армяная Гер-Кюрегяна, яая 2 ак же яс Сец, ал, с 2 овяр- мянскогоя Сро, с 2 ожден, яа, зя СШ Ая Р, чардая Юа 2 ая, я Рубеная Налбандяна, я главая ком Сью 2 ерногоя о 2 делая Амер, канскогоя ун, верс, 2е 2 ая Игорья Мкр 2 умяня 2 Срав, лсявя СШ Ая для учас- 2, яая Сервойя Международной кон - еренц, , я Соя Всем, рнойя Сау 2, нея славноя целью, я Сос 2 авленойя Середя с Сец, ал, с 2 ом, я являлосья обре 2 ен, ея навывковя Соя налаж, ван, юя усравлен, яая нац, ональнымя доменоя (аН) э Вя 1995я году я в ярамка эяданной Срограммы была я основаная общес 2 венная я орган, зац, яя «Ин- 2 ерне 2 - сообщес 2 во», яко 2 орая, я Соя су 2, , яобъед, н, лая все эялю- дей, я обладающ, эя Сределенным, я знан, ям, яобя н 2 ерне 2 эя п -, ц, альной я да 2 ой я за Суска я услуг, я «Freenet» я сч, 2 ае 2 ся 1997я год, якогда я Ср, я Соддержке я п рган, зац, , яп б 2 ед, ненны эя Нац, йя (п п Н) я, н, ц, а 2, вая былая во Слощеная явяж, знь эя Армян - ская я свободная я зона я Средос 2 авлялая бес Сла 2 ную я 2 еле - онную я связья (Dial-цря access я service), я возможнос 2 я Сросмо 2 рая , я , с Сользован, яа доменны эя сай 2 овя "аН" я (hosting я service), яак же я возможнос 2 я Сользова 2 ся элек 2 роннойя Соч 2 ой эя для э 2 огоя необэод, моя былая зарег, с 2 р, рова 2 ся на я сай 2 ея «Freenet» я, я Солуч, 2 я адрес я собс 2 венной я элек 2 роннойя Соч 2 ыя (@freenet эН) э Как я 2 меч ае 2 яд, рек 2 оря общес 2 веннойя орган, - зац, , я «h н 2 ерне 2 я сообщес 2 во» я h горья l кр 2 умян, я «с Сус 2 я яо С- ределенное я время я Сосля создан, яя «Freenet» я ч, сло я Сользо- ва 2 елей я дос 2, гло я 2 0 я 2 ы ся ч э 2 о я была, н 2 ересный я Сроек 2, яко- 2 оры я с Сособс 2 вовал я разв, 2, юя н 2 ерне 2 а я янашей яс 2 ране» ¹ эя

Согласная, меющ, мся я в я Субл, чном я дос 2 у Сея данным, я в я 2000я г% д 3 я д% с 23 с% мя к я, н 2 ерне 23 я % бладал, я 1,3% я населен, яя Армен, , э Кя 2008я г% д 3 я данныйя С% каза 2 еля в% зр% с я д% я 6,2% э Пр% дюсер я сай 2 ая «Media эН» я Цен 2 рая l ед, ая, н, ц, а 2, в я сега мя Варданяня % 2 меч ае 2, я ч 2% я в яначале я 2 Ц Ц э в я д% ма эя армянск, эя семейя Срак 2, чекс, я не я был% я к% м Сью 2 ер% в я с я д% с 23 с% мя к я, н - 2 ерне 23, я, я С% каза 2 еля 1,3% я Ср, э% д, лся я в я% с н% в н% мя на ялюдей, я

¹https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=2&cad=rja&uact=8&ved=0ahUKEwjvk-_G5ZLSAhXTbZoKHemrBW8QFggeMAE&url=https%3A%2F%2Fwww.isoc.am%2Fpubl%2Fhistory.doc&usg=AFQjCNFY8c7Cd3t3-l1B7V BwJEv9P0ITCQ&sig2=dAu9g8CmdbMSgFQgCmOtsw&bvm=bv.146786187,d.bGs

к%2%рыеяС%льз%вал, сь, н2ерне2%мянаяраб%н, эямес2аэ,явя%–, – саэяСлед%ва2ельн%я%сн%вн%йя2ра –, кяС%льз%ва2елейя, зяАрмен, , я–, кс, р%валсяявднєвн%єявремяэя

ВяАрмен, , явя2ЦЦ҂єяггэяС%являю2сяя%СределенныеяСред–С%сылк, ядляяС%явлен, яя%нлайн–жЗрнал, с2, к, я, яначалаяСр%цессаяя%нвергенц, , яС1 h эречья, де2яСреждеявсег%я%яС%н, – ман, , явед3щ, м, ямед, аменеджерам, яне%бэ%д, м%с2, я%сва, – ва2ьяВсем, рн3юяСе2ьэяВяавангардеяданн%г%яСр%цесса,якакя, явяСШАя, яр%сс, , я%казал, сьяСеча2ныеяС1 h эПервым, ясред, я армянск, эяС1 h ясв% ясай2ыя%эдал, ягазе2ыя«АгаvП»я, я«Azg»эяПервыйя ма2ер, аля вя ц, –р%в%мя –%рма2ея газе2ая «АгаvП»я выС3с2, лаяещеявя1999яг%д3эя«аылаяС%Сы2каяСеренес2, ясам3я газе23явя%нлайн,ячас2%яэ2%ябыл, я–айлыягазе2,як%2%рыеяСр%с2%я выкладывал, сьянаясай2еяд ляя2%г%явремен, яэ2%ябыл%я%неньяСр%г%ресс, вн%яНек%2%рыеяармянск, еягазе2ыяэ2%яделаю2яд%яс, эяС%р»²э П%д%бныйяс2, льяраб%2ы,як%г%даянаясай2еягазе2ыя ма2ер, алыяС%являя, сьябезякак%й–л, б%яадаС2ац, , янаблюдалясяСрак2, чєск, яв%явсєяс2ранаэявяначалєязар%жден, яя, н2ерне2–жЗрнал, с2, к, яд р3г%єядел%яч2%явяСШАя, яр%сс, , яд%в%льн%я быс2р%яС%нял, яч2%я, н2ерне2–жЗрнал, с2, кая2реб3е2яс%всемя, ныэя%бАем%вя, як%нс2р3кц, , яма2ер, ал%вэ

Вяэ2%явремяявяАрмен, , ясв% я%нлайн–рес3рсыя, мел, яне–ск%льк%ягазе2эп днак%яармянскаяя%нлайн–жЗрнал, с2, каявяза–ча2%нн%мяс%с2%ян, , я3жеяс3щєс2в%валаэяh менн%явя2ЦЦ҂єяггэяС%являю2сяярес3рсы,ядея2ельн%с2ьяк%2%рыэяразв, валасья, с–ключ, 2ельн%я вя рамкаэя се2, эя Э2%я касаетяся Среждея всєг%яя«PanapHenian»,як%2%рыийя%р, ен2, р%валсяянаявнешнююя3д, –2%р, ю,яСреждеявсєг%янаяангл%язычн3юяармянск3юяд, асС%р3эя разв, 2, ея армянск%г%я, н2ерне2ая, я, н2ерне2–жЗрнал, с2, к, я н%с, л%яразн%наСравленн%яэарак2ерэяПр%2екал%я%н%яблаг%–даряя дея2ельн%с2, я %2дельныэя рес3рс%в,я %рган, зац, й,я за–час23ю,я%2дельныэялюдеяэя

В%Срек, ям, р%в%йя2єнденц, , ,як%г%дая, менн%ягазе2ыяшл, я наямельеяэксСер, мен2ы,явяАрмен, , яр%льяСерв%%2крыва2еяя

² *Интервью автора с Нуне Саркисян, 2016 год.*

б%лееяСеред%выеяармянск, еягазе2ыя%бзавел, сьясв% м, ясай – 2ам, , я, яэ2%ябыл, яСервыеяСр, мерыяк%нвергенц, , явя, с2%р, , я армянск%йяжЗрнал, с2, к, эНе%бэ%д, м%яС%дчеркн32ь,яч2%яСр%– цессяк%нвергенц, , яармянск, эяС1 н янаяначальн%мяэ2аСеябыля 2%льк%я –%рмальным,я ая нея с%держа2ельнымэя Сай2ыя газе2яя был, яабс%лю2ным, як%С, ям, яСеча2ныэяверс, й,яС%яс32, яэ2%я был, яц, –р%выеягазе2ыяВ%2якакявсС%м, нае2явыше%С, санныя э2аСя Ср%цессая к%нвергенц, , я главныйя редак2%ря аген2с2вая «1 ед, амакс»яd ав, дяАлавердян:я«У2р%мявыэ%д, л, ягазе2ы,явя 12я час%вя нек%2%р3юя час2ья газе2ныэя ма2ер, ал%вя безя, зме– нен, йявыкладывал, янаясай2ея, я3э%д, л, яд%м%й%нд ажея2ак, ея Ср%гресс, вныеягазе2ы,якакя «АУавП»,ясравн, 2ельн%янедавн%я зад3мал, сья%я2%м,яч2%я%нлайняверс, яям%же2ябы2ьянеязер – кальным%2%бражен, емягазе2ы,яядава2ьянамн%г%яб%льшееяв%э– м%жн%с2ей,ячемягазе2а»⁴э аеэ3сл%вн%ядляяС%н, ман, яяэ2%г%я н3жн%ябыл%явремяя я%Сределенныея3сл%в, яя

Анал, з, р3яя–ак2%ры,як%2%рыеяСреСя2с2в%вал, явян3левыея разв, 2, юя, н2ерне2ая, я, н2ерне2–жЗрнал, с2, к, явяАрмен, , я не%бэ%д, м%яС%дчеркн32ь,яч2%яна, б%леея3щес2веннымя, зян, эя являласьям%н%С%л, яяная, н2ерне2яид ел%явя2%м,яч2%явя2%явремя ед, нс2веннымяСр%вайдер%мя, н2ерне2аяявяАрмен, , ябылаяк%м– Сан, яя«Армен2ел»эВя2ЦДря%д3яд%шл%яд%я2%г%яч2%ям%н%С%л, яя к%мСан, , я«Армен2ел»явяс –ерея2елек%мм3н, кац, , я2алажерь– езнымяСреСя2с2в, емянаяС32, явс23Слен, яяАрмен, , яв%яВсе– м, рн3юя2%рг%в3юясс%ц, ац, юя

П%явлен, еявяс –ерея2елек%мм3н, кац, , ян%выэяк%мСан, йя являе2сяяважнейш, мяс%бы2, емявя, с2%р, , яразв, 2, яяармян – ск%г%я, н2ерне2аяэп ж, да2ь,яч2%явя3сл%в, яэяд%р%г%г%я, н2ерне – 2аяк%л, чес2в%яС%льз%ва2елейявяс2ранея3вел, ч, 2ся,янеяСр, – э%д, л%сьяяС%2ве2с2венн%янеяСр, э%д, л%сья, ярассч, 2ыва2ьяя наябыс2рыйя3сСеэяСервыэясай2%вягазе2эп сн%ва2ельяСерв%г%я армянск%г%явеб–серв, саяАндран, кяАлексажняяС%лагае2,яч2%я , менн%явяСер, %дяд%м, н, р%ван, яяк%мСан, , я«Армен2ел»яАр – мен, яя%с2алая%2явед3щ, эяс2ранявяСланеяразв, 2, яя, ярас–

⁴ *Интервью автора с Давидом Алавердяном, 2016 год.*

Ср%с2ранен, яя, н2ерне2а:я «Есл, я сч, 2а2ь,я ч2%я, н2ерне2я с3–щес2в3е2я3Цфле2,я2%явя2ечен, еяСервыэяСя2, яле2,як%гдаян, к2%я неямешала, явсеябыл%я%сн%ван%янаяэн23з, азме,я%няразв, валсяя намн%г%ял3чшеэП%2%мяСр% з%шл%явмеша2ельс2в%яв%зн, кл, я м%н%С%л, , я г%с3дарс2ва,я час2н%г%я сек2%ра,я к%2%рыея с2ал, я меша2ьяразв, 2, юэВяэ2%2яСер, %дямыя%2с2ал, я%2янек%2%рыэя с2ранэя Сег%дняя Ср%блемя ся каналам, я связ, я не2,я Ср%блемая л, шьявяс%держан, , »⁵ э 1 %н%С%л, яяная Сред%с2авлен, ея2еле –к%мм3н, кац, %нныэя3сл3гвяяАрмен, , я, счезлаясяС%явлен, емьявя 2Цфяг%д3янаярынкея3Ап я«К–Телек%м»,як%2%р%еявыс23Сал%яС%дя бренд%мя«В, ваяСелл»э

Вя2Цф–2Цфяггэялек2р%нныеяверс, , яС%являю2сяя3я2ак, эя С1 h ,якакярад, %я«Св%б%да»я(2Цфяг%д),я«LУа3иУаН»я(2Цфяг%д),я «168эН»я(2Цфяг%д)эНаряд3яся2рад, ц, %нным, яС1 h явясе2, я С%являю2сяя Ср%ек2ы,я нея, меющ, ея Ср%2%2, С%вэя Э2%я ч, с2%я «се2евые»яС1 h ,як%2%рыеякя2%м3явремен, яэ%р%ш%язарек%–менд%вал, ясебявя СШАя, я р%сс, , эя Кя серед, нея 2ЦЦэя ггэя ~~важн~~ важнныя, н2ерне2–С1 h я с2ан%в, 2сяя «МEdiaНах»эя данныЛя ресЗрся ная начальн%мя э2аСея –Знкц, %н, р%ван, яя С%з, ц, %–н, р%валясебякакя, н–%рмац, %нн%еяаген2с2в%я Э2ая наСрав –ленн%с2ья–%рмальн%яс%эраняе2сяя, ясег%дня,я%днак%янаяделея «МEdiaНах»яск%нцен2р, р%валсяянаяав2%рск, эя Ср%ек2аэя С%я временемяС1 h яначал, ярасш, ря2ься,я, янаяданныЛям%мен2я «МEdiaНах»я –яэ2%яС%яс32, яэ%лд, нг,яс%с2%ящ, Ля, зяшес2, яя разн%наСравленныэя3к%Ср%–, льныэялек2р%нныэяресЗрс%вэя

Кя серед, нея 2ЦЦэя ак2, вн%я –Знкц, %н, р%валя2ак%Ля ре–сЗрс,якакя «hEtqэН»,як%2%р%м3я с%я временемяс3жден%ябыл%я с2а2ья%дн, мя, зял3чш, эяq1 h яАрмен, , явяжанреярасслед%–ва2ельск%Ля жЗрнал, с2, к, эя Пр, меча2ельн%я ч2%я владельцыя элек2р%нн%г%яресЗрсая«hEtqэН»яреш, л, я2акжея, здава2ья%д–н% менн3юя газе23,я %днак%я быс2р%я сверн3л, я нач, нан, ея С%нявявсюег%ябесСерсСек2, вн%с2ьяся2%нк, яврен, яяСр, был, эя

Так, мя %браз%м,янакан3нея выб%рн%г%я дв3эле2, яя армян–скаяя %нлаЛн–жЗрнал, с2, ка,я знач, 2ельн%я 3креС, вя св% я С%–

⁵ <http://hetq.am/rus/news/62887/komu-prinadlezhit-internet-v-armenii.html>

з, ц, , явя%бщеЛяс, с2емеяq1 h яс2раны,яСредс2авлялаясерьез – ныЛя, н2ерне2а,я2акя, яС%л, – 2, чекс, эядея2елеЛя, яСар2, Ля «Выб%фрыя 2ЦВяг%дая – я %ченья важн%ея с%бы2, еявяж, зн, я армянск%Ля жЗрнал, с2, к, эя Вяэ2%я времяяная, н2ерне2яначал, ядела2ьяс2авк3яС%л, 2, чекс, еяс, лы, я вячас2н%с2, як%мандая Лев%ная Тер–Пе2р%сянаэя Вяэ2, эяк%ман– даэябыл, я бл%геры,я «ГасЕбПк»я нея, мелян, как%г%явл, ян, я,я ш, р%к%ея расСр%с2ранен, ея С%л3ч, л, я дем%2, ва2%фрыэ б%я времяя, яд%явыб%р%вязнач, м%с2ья%нлаЛн–, н–%рмац, , явяАрме – н, , ярезк%яв%зр%сла»⁶эя

Так, мя %браз%м,я армянск%Ля %нлаЛн–жЗрнал, с2, кея С%на– д%б, л%сья8–1Цле2янаяс2ан%влен, еяП%л, 2, чекс, еяСр%дессыя 2ЦВ–2ЦВяг%д%вя С%дчеркн3л, язначен, ея, н2ерне2аякакаяваж– неЛшег%я каналая масс%в%Ля к%мм3н, кац, , эя Зая э2%я времяя С%яв, л, сья мзль2, мед, Лныея , я к%нверген2ныея ресЗрсы,я ая 2ерм, ня«мзль2, мед, а»яС%л3ч, лш, р%к%еярасСр%с2ранен, еянея 2%льк%явясредея армянск, эя2е%фре2, к%вяжЗрнал, с2, к, ,ян%я, я с2аляважнеЛш, мя %р, ен2, р%мяСрак2, чекс%Ля жЗрнал, с2, к, эя Кан%намя мзль2, мед, , явя2%Ля, л, я, н%Ля с2еСен, я след%вал, я Срак2, чекс, явсеяармянск, еяэлек2р%нныеяq1 h эяП%с2еСенн%я Ср, шл%яС%н, ман, ея2%г%яч2%я, н2ерне2я, я%нлаЛн–жЗрнал, с – 2, кая2реб3ю2я, ныэяс2андар2%вя, яС%дэ%д%я,ячемя2рад, ц, %н– наяя жЗрнал, с2, каэя важнеЛш, мя 3сл%в, емя качес2венн%г%я «ц, –р%в%г%»яжЗрнал, с2ск%г%яма2ер, алаяс2ан%в, 2сяяСрав, ль– н%еяс%не2ан, ея2екс2а,язв3кая, яв, де%эих , р%к%еярасСр%с2ра– нен, еявяэлек2р%нныэяq1 h яС%л3чаю2я люос2рац, , эя

На, б%леея3дачныЛяСр, меряж%нверген2н%г%яq1 h я– ярад, %я «q в%б%да»эя ресЗрся включала вя себяя кака рад, %я 2акя , я мзль2, мед, ЛныЛя саЛ2эя бя нашаея времяя деЛс2в3е2я 2акжея Тбя «q в%б%да»эядр3г%ЛяСр, меря – ягазе2ая«АУавП»,ясамаягазе2ая, я мзль2, мед, ЛныЛясаЛ2эя

П%слея2ЦВяг%дая, н2ерне2явяАрмен, , янея%2ключалсяян, я раз3,яаяя, склучен, емянеск%льк, эям, н32явярез3ль2а2ея, юль – ск, эяс%бы2, Ля2Цб%г%даясязаэва2%мяС%лкаяСа2р3льн%–С%с2%

⁶ Интервью автора с Гехамом Варданияном, 2016 год.

в%ЛяслЗжбыяС%л, ц, , явяЕреванезяАрмянск, еямед, аэксСер2ыя
%2мечаю2,яч2%яС%слеяС%л, 2, ческ, эяСр%цесс%вя, я2раг, ческ, эя
с%бы2, Ля 2ЦВя г%дая %2н%шен, ея влас2, я кя, н2ерне23я, зме –
н, л%сь:я«влас2ьяС%няла,яч2%янельзяявяАрмен, , я, д2, яС%яС32, я
КЗбы,яК, 2аяя, язакры2ья, н2ерне2яñ я%н, яС%шл, янаядр3г%Ля
шаг,я%2крыл, я, н2ерне2я, я3с, л, л, явянемясв% яС%з, ц, , э3яя
Сер, %дяся2ЦВяС%я2Цбггэя, н2ерне2явяАрмен, , я%2ключал, я
всег%я%д, няразявлас2ьян, чег%янеязаСрещала,ян%яскажемя2ак, я
заС%лн, лая, н2ерне2я с%б%ЛяпнаяС%Сы2аласьябы2ьял, дер%мяяяяяяяяяяяяя
вя Сланея расСр%с2ранен, яя %нлаЛн-, н–%рмац, , я С%с2еСенн%я
С%беждааяя%нкЗрен2%в»⁷ эя

П%слея2ЦВяг%даявясе2, яС%явялю2сяяресЗрсыяСр%влас2н%г%я
2%лкаэявя, н2ерне2–жЗрнал, с2, к3яС%яС32, яначал, явкладыва2ья
серьезныея–, нанс%выеяресЗрсыяэя

П%дв%дая, 2%г, яслед3е2яС%дчеркн32ь,яч2%яАрмянскаяяя%н–
верген2наяяжЗрнал, с2, каяя%зн, клаянаябазеягазе2я, янеск%ль–
к, эя2елеканал%в,як%2%фыеяреш, л, сынаяс%здан, еясв% эяэлек–
2р%нныэяверс, Ляñ значальн%яэ2%ябыл, як%С, , я2рад, ц, %нныэя
q1ñ, я%днак%яся3лЗчшен, емякачес2ваяСред%с2авляемызя, н–
2ерне2–3слЗгя, язвел, чен, емяч, слаяС%льз%ва2елеЛя, н2ерне2%мя
%н, яначал, яразв, ва2ьясякакясам%с2%я2ельныеяq1ñ, янеядеЛ–
с2в3ющ, еявяжес2к%Лязав, с, м%с2, я%2я%сн%вн%г%яресЗрсаэя

Армянскаяяк%нверген2наяяжЗрнал, с2, кая разв, валасья, я
Ср%д%лжае2яразв, ва2ьясяная%сн%веядв3эяСла2–%рма –я%сн%в–
ныэяq1ñ, яэлек2р%нн%г%явар, ан2аяявясвяз, яся2, мяак2Зальн%я
г%в%р, 2ья%яС2еСен, я%нвергенц, , я%янеС%лн%Ляж%нвергенц, , эя

Зая г%дыя разв, 2, яя армянск%Ля %нлаЛня, як%нверген2н%Ля
жЗрнал, с2, к, явяАрмен, , я2акя, янеябыл%яс%здан%ян, я%дн%я
q1ñ ясяС%лн%Лявер2, кальн%Ляж%нвергенц, еЛяная%сн%вея4–эя
(газе2а,ярад, %я2елев, ден, е,я%нлаЛн–ресЗрс)яСла2–%рмаПр, –
ч, ня2%м3янеск%льк%яя

• q%здан, еяк%нверген2н%г%яq1ñ яся4–яяСла2–%рмам, я
СредС%лагае2яб%льш, ея–, нанс%выеявл, ван, яэяКакая%2мечаю2я
армянск, еямед, аэксСер2ы,явя3сл%в, яэянес%с2%явшег%сяярын –

⁷ *Интервью автора с Гехамом Варданяном, 2016 год.*

какая коммерческая модель, а данные вл, ван, а не я, мою 2я
%щ32, м%л%я%2дач, э

- қ%здан, ея С%лн%ценн%г%я к%нверген2н%г%я қ1 һ за-
2р3дняе2я армянск%еязак%н%да2ельс2в%як%2%р%еяСредС%лагае2,я
ч2%я армянск, ея2елеканалыяд%лжныяС%л3ча2ья%2яг%с3дарс2вая
л, ценз, юнаявещан, еяТак, мя%браз%м,ямн%г, еяқ1 һ я3жеяная
3р%внеязак%н%да2ельс2ваявын3жденыя%2казыва2ьсяя%2я, де, я
с%здан, яя2елеканалаэ

- важнеЛшеЛя Ср%блем%Ля Ср%д%лжае2я %с2ава2ьсяя ме-
неджмен2я Армянск, еямед, аэксСер2ыя2акжеяк%нс2а2, р3ю2,я
ч2%ямес2ныяеямед, аменеджерыякраЛнеяне%э%2н%я, д32яная, э-
менен, я,я вя 2%мя ч, слея , я связанныея ся Сре%браз%ван, ям, я
с2р3к23рыяредакц, , э

я
я

ՀԱՅ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԵՎ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Խ.

Անվտիմում

Լրագրության տեսարանները կոնվերգենտ լրագրության զարգացումն առնչում են համացանցի ի հայտ գալուն և տեղեկատվության թվայնացմանը: Կոնվերգիոն համացանցը Հայաստանում գործում է 1992 թվականից, սակայն առաջին էլեկտրոնային ՁԼՄ-ները մեր երկրում սկսեցին գործել 2000-ականներին: Ի սկզբանե ցանցային պարբերականները տպագիր տարբերակների նախապատկերներն էին, սակայն քաղաքական զարգացումների և համացանցային ծառայությունների մոնոպոլիայի վերացման ազդեցության տակ առցանց ՁԼՄ-ները սկսեցին հետևել մուլտիմեդիայի կանոններին: Հայաստանի առցանց ՁԼՄ-ներին կայանալու համար անհրաժեշտ եղավ մոտ 10 տարի:

THE FEATURES OF THE ARMENIAN MULTIMEDIA AND CONVERGENT JOURNALISM DEVELOPMENT

A. KHACHATRYAN

Abstract

The theorists try to find the link between the development of convergence journalism and advent of the Internet, as well as digitization of information. The commercial Internet appeared in Armenia in 1992, however the first electronic media outlets came to Armenia only in 2000-s. Originally, the network publications were the exact prototypes of printed versions, but due to distinct political processes and elimination of monopoly in internet delivery services, media outlets started following the rules of multimedia. It required 10 years for Armenian journalism to develop.

ՆՈՐ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Գ. Ա., ՄԱՅՍՈՒՐՅԱՆ Հ. Ա.

Համացանցային տարածության կայացումը հանգեցրել է ավանդական ՁԼՄ-ների գործունեության զգալի փոփոխությունների՝ առաջացնելով նոր մարտահրավերներ: Այդ իրողությամբ պայմանավորված՝ լրագրության տեսության մեջ ի հայտ են եկել մեդիաալոգիայի հետագա զարգացման կանխատեսման տարբեր մոտեցումներ¹: Հայտնի է, որ ավանդական մեդիան հազվադեպ է փոխարինվել նորով, այն միշտ հարկադրված գոյատևել է նորի հետ՝ տեխնոլոգիաների ազդեցության ներքո փոխելով կարգավիճակը և գործառույթները:

Թերևս այդ իրողության գիտակցմամբ՝ մեդիաալոգիայի հետագա զարգացման կանխատեսման կոնվերգենցիոն մոտեցումը, մեր կարծիքով, ավելի իրատեսական է: Ժամանակի ընթացքում արդիականությունը կորցնելու, հնանալու և կատարելագործված տեխնոլոգիաներով փոխարինվելու հատկությունն ավելի բնորոշ է ՁԼՄ-ների բովանդակության հասանելիությունն ապահովող գործիքներին, տեղեկատվության փոխանցման տեխնոլոգիաներին: Ուստի ավանդական մեդիան չի մահանում, այլ միայն ենթարկվում է կոնվերգենցիայի²: Ասել է, թե տեղեկատվական նոր միջոցները երբեք չեն փոխարինի հներին. նրանք միշտ հարկադրված կլինեն որոնելու նոր ձևաչափեր և կիրառության ոլորտներ:

Չնայած առցանց ռեսուրսների քանակական աճին՝ հեռուստատեսությունը մնում է տեղեկատվության հիմնական աղբյուր և շարունակում է գրավել քաղաքական գործիչների և գործարարների ուշադրությունը: Այդ իրողությամբ պայմանավորված՝ հեռուստաալիքների ծրագրային ցանցը հաճախ ծառայում է բիզնեսին և հեռուստաալիքը ֆինանսավորող անձանց քաղաքական շահերին: Հարց է ծագում՝ ո՞ր մնաց հեռուստատեսության սոցիալական պատասխանատվությունը: Հակիրճ մեջբերում «Հեռուստատեսային ժուռնալիստիկա» դասագրքից. «Մոսկվայի պետական համալսարան կատարած այցի ժամանակ

¹ Skú Gilder G. *Life after Television: The Coming Transformation of Media and American Life*, New York, 1994, p. 51-67; Jenkins H. *Convergence Culture: Where New And Old Media Collide*, New York, 2006, p. 6-7:

² Riepl W. *Das Nachrichtenwesen des Altertums: mit besonderer Rücksicht auf die Römer*, Leipzig-Berlin, 1913.

հեռուստատեսության սեփականատեր մեծահարուստներից մեկը հայտարարեց հետևյալը. «Ինֆորմացիան և գվարճանքը ապրանք են, իսկ մենք կոմերցիոն հեռուստատեսություն ենք: Մեզ մի դիմեք ժողովրդի լուսավորության և դաստիարակության հարցերով»³:

Մեզանում ևս իրականությունը շատ տարբեր չէ: Եթե Արևմուտքն արդեն գիտակցել է, որ հեռուստատեսության «շնորհիվ» հեռուստադիտողը վտանգավոր հետզարգացում (դեգրադացիա) կարող է ապրել, և վաղուց հրաժարվել է «վախ+սեքս+սենսացիա» նշանաբանից, ապա մեզանում որոշ հեռուստաընկերություններ կարծես կրկնում են Արևմուտքի արդեն մերժած ճանապարհը: Եռարձակման ընդգրկունության և հասանելիության առումով առաջատար է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Այն հիմնականում գործում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Համոզված ենք՝ մրցունակ հեռուստատեսություն ունենալու համար ֆինանսավորման տարբեր աղբյուրներ պիտի լինեն, որովհետև լավ հեռուստատեսությունը ենթադրում է ֆինանսական մեծ հնարավորություններ և հոսքեր:

Արդի շրջանում Հայաստանի հեռուստատեսությունը զգալիորեն կրում է նոր ՏՀՏ-ների ազդեցությունը. ընդլայնվում է մալուխային-արբանյակային հեռարձակումը, ի հայտ են գալիս նոր իրողություններ, ավարտվել է թվայնացման գործընթացը և այլն:

Դիտարկենք՝ ինչպես են տվյալ երևույթներն անդրադարձել մեր երկրի հեռուստահեռարձակման համակարգի գործունեության վրա: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի ռադիոհեռուստատեսային հեռարձակման համակարգին առնչվող ամենանշանակալի իրադարձություններից մեկը դարձավ անալոգային հեռարձակումից թվայինին անցնելու գործընթացը: Դրա իրականացման դեռևս ամենավաղ փուլում սպասվում էր, որ, տրամադրելով նոր հնարավորություններ, թվանագումն զգալիորեն կփոխի երկրի հեռարձակման դաշտը: Այդպես էլ եղավ, որը հիմք է տալիս ասելու, որ թվային տեխնոլոգիաների, համացանցի հասանելիության ու ցանցային ռեսուրսների պահանջվածության պայմաններում Հայաստանի ավանդական ՁԼՄ-ների գործունեությունը և մրցունակությունն ապահովելու ուղիների որոնման առումով առաջատարը հեռուստատեսությունն է՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով.

³ Հեռուստատեսային ժուռնալիստիկա, Ե., 2003, էջ 11:

ա) այլ ՁԼՄ-ների համեմատությամբ՝ հեռուստատեսության բարձր վարկանիշը. Հայաստանի բնակչության ստվար հատվածը հեռուստատեսությունը համարում է տեղեկատվության հիմնական աղբյուր.

բ) բնակչության աղքատության բարձր մակարդակը. պաշտոնական տվյալների համաձայն՝ երկրի բնակչության մոտ մեկ երրորդը աղքատ է, և հասարակության այդ պատկանելի շերտը հազիվ թե հնարավոր համարի օգտվել վճարովի հեռուստատեսության ծառայություններից: Հետևաբար նա պետք է ապավինի անվճար «սոցիալական փաթեթին» («must carry»)⁴, որը ներառում է վերգետնյա եթերային հեռարձակման միջոցով եթեր տրվող հեռուստաձայնագրեր: Հայաստանում, խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի գնահատմամբ, թվային հեռարձակման անցնելուց հետո երկրի բնակչության շուրջ 50%-ը սահմանափակվելու է «սոցիալական փաթեթի» ծառայություններով.

գ) սովորույթի գործոնը կամ ավելի վաղ անվճար տրամադրված ծառայությունների դիմաց չվճարելու ցանկությունը:

Հեռուստատեսության և համացանցի հասանելիության ժամանակակից ձևերից մեկը հեռարձակման ոլորտում հայտնի «երկակի» մոդելն է՝ երկրորդ էկրանի առկայությամբ. հեռուստատեսությունը տրամադրում է հիմնական կոնտենտը, իսկ համացանցին միացված համակարգիչը կամ բջջային սարքավորումը ծառայում է որպես օժանդակ տարր: Շարժական սարքերի համար հատուկ կոնտենտի ստեղծումը ոչ միայն կարող է նպաստել հեռուստատեսությամբ տեսածն ինտերնետային տիրույթում քննարկելուն, այլև համացանցի օգտվողի մեջ առաջացնել հեռուստացույց դիտելու ցանկություն:

Մեզանում հեռարձակման այս մոդելները դեռևս թույլ են զարգացած: Հեռուստաալիքների գործունեությունը շատ հաճախ սահմանափակվում է պաշտոնական կայքի գոյությամբ կամ պասիվ ներկայությամբ այնպիսի սոցիալական մեդիահարթակներում, ինչպիսիք են «Twitter»-ը և «Facebook»-ը: Այդ իսկ պատճառով հայկական հեռուստաալիքների առցանց տարբերակները տեղեկատվության օպերատիվ հաղորդման և լսարանի քանակի առումով հիմնականում չեն կարողանում մրցակցել ցանցային մեդիայի հետ: Մակայն այստեղ ևս նկատելի են որոշ դրական տեղաշարժեր: Այսպես, ինտերնետային կապի արագության մեծացմանը զուգընթաց՝ Հայաստանի հեռուստաալիքները սկսեցին իրենց էջերը բացել «YouTube»-ում: Հեռուստաարտադրանքը ներբեռնելու

⁴ Ձեկույց՝ Հայաստանում անալոգայինից թվային հեռարձակման անցնելու գործընթացի վերաբերյալ: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, ԵԱՀԿ, Ե., 2014, էջ 22:

և այն դիտելու պարզ ու հարմար եղանակը հեռուստաընկերության համար իր արտադրանքին երկրորդ կյանք տալու, եթե այն հեռարձակման սահմաններից դուրս գալու, հեռարձակվող նյութերի հանդեպ լսարանի նոր շերտերի ուշադրությունը հրավիրելու լավ հնարավորություն է:

Դրանից բացի, բջջային հեռախոսների շուկայի զարգացմանը զուգընթաց, զարգանում է նաև բջջային հեռուստատեսությունը: Իրական ժամանակային ռեժիմում հեռարձակվող հեռուստատեսային ալիքներ դիտելու հնարավորությունից բացի՝ Հայաստանի բջջային օպերատորների բաժանորդները տարաբնույթ տեսահոլովակներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր, հեռուստատեսային ծրագրեր ձեռք բերելու հնարավորություն են ստացել:

Իրողություններ, որոնք, արձանագրելուց զատ, պետք է նաև գիտականորեն քննել, վերլուծել և արժևորել՝ այն համոզումով, որ նաև այդպես պետք է հասնել ցանկալի արդյունքի, ինչի ակնկալիքն ունի նորօրյա մեդիասպասողը:

НОВЫЕ И ТРАДИЦИОННЫЕ МАСС МЕДИА В АРМЕНИИ: ВЗАИМОВЛИЯНИЕ И КОНВЕРГЕНЦИЯ

СОГОМОНЯН Г. А., МАЙСУРЯН А. А.

Резюме

Становление интернет-пространства привело к значительным трансформациям в деятельности СМИ. С учетом этой новой реальности конвергенционный подход в прогнозировании дальнейшего развития медиасферы представляется более реалистичным. В настоящее время телевидение Армении переживает новый этап развития: расширяется кабельно-спутниковая трансляция, возникают новые элементы интерактивного телевидения, завершён процесс оцифровки.

NEW AND TRADITIONAL MASS MEDIA IN ARMENIA: INFLUENCE AND CONVERGENCE

G. SOGHOMONYAN, A. MAYSURYAN

Abstract

The elaboration of the internet space has led to considerable transformations of traditional Mass Media activity bringing new challenges. Realizing this reality the convergence approach towards the prediction of mediasphere development is more realistic. Nowadays Armenian television is highly influenced by new ICTs: cable-satellite broadcasting has been expanded, new elements of interactive television have emerged, the process of digitalization has finished.

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ս. Ս.

Էթնիկ ինքնության և Սփյուռքի պահպանման համար խիստ անհրաժեշտ է հայրենիքի առկայությունը և դրա ընկալումը: Հայրենիքին նշանակությունը և հայրենիքի հետ կապը կարևորագույն դեր ունեն սփյուռքյան ինքնության ձևավորման գործում¹: Ընդ որում, այդ կապը կարող է լինել երևակայական, ինչպես նաև կորուսյալ՝ պատմական հայրենիքի կամ ազգային պետության հետ: Սփյուռքի համար հայրենիքը դիտարկվում է որպես տուն, վայր, ուր ցանկալի է կամ պետք է ի վերջո վերադառնալ²: Չնայած Սփյուռքի քիչ ներկայացուցիչներ կվերադառնան հայրենիք, սակայն ինքնության պահպանման և հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների համար հույժ կարևոր է վերադարձի գաղափարը³:

Հայրենիքի մասին պատկերացումները տարբեր են նաև հայկական Սփյուռքում: Սփյուռքահայերը կարող են «հայրենիք» համարել իրենց կամ ծնողների/նախնիների ծննդավայրը, ընդունող երկիրը, պատմական հայրենիքը (Արևմտյան Հայաստանը), Հայաստանի Հանրապետությունը և այլն: Սակայն, ազգային պետության գոյությանը, նրանց մեջ ձևավորում է «իրական հայրենիքի» գաղափարը, որտեղ ապրում է էթնոսի պատմամշակութային կերպարը: Հետևաբար, Սփյուռքը գիտակցում է Հայաստանի հետ կապի կարևորությունը՝ որպես իր գոյության և ազգային ինքնության պահպանման առանցքային գործոն: Հայրենիք-Սփյուռք կապի առանձնահատկությունները լավագույնս արտացոլվում են էթնիկ մեդիայում⁴: ՏՀՏ միջոցների արդի ժամանակներում մեդիայի միջոցով աշխարհագրորեն հեռու հայրենիքը կարող է ձևավորել և պահպանել սփյուռքյան ինքնությունը: Էթնիկ մեդիայի սպառումը Սփյուռքին հնարավորություն է

¹ Butler K. *Defining Diaspora, Refining a Discourse (Diasporas, vol. 10, N 2, 2001, p. 201).*

² Brubaker R. *The “Diaspora” Diaspora (Ethnic and Racial Studies, vol. 28, N 1, 2005, pp. 1-19).*

³ Rios M., Adiv N. *Geographies of Diaspora: A Review, UC Davis Center for Regional Change, Davis, CA, 2010.*

⁴ Էթնիկ մեդիա է համարվում լրատվամիջոցը, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից: Sk´u Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J. *Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies, SAGE Publications, Inc., 2011, p. 10:*

տալիս ապատարածականացնելու հայրենիքը⁵: Մեղիան առանցքային դեր է խաղում՝ ամրապնդելով Սփյուռքի ներկայացուցիչների կապը տարածքի՝ հայրենիքի հետ: Այն վերարտադրում է հայրենիքի տարածքը և էթնոմշակութային պրակտիկան, որն էթնիկ խմբի անդամները կիրառում են թե՛ անձնական, թե՛ հանրային կյանքում:

Հայկական Սփյուռքի մամուլում հայրենիքի ընկալման առանձնահատկությունները վեր հանելու նպատակով կատարված ուսումնասիրության⁶ մեջ վերլուծվել են Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի պարբերականները (համապատասխանաբար՝ «Ноев Ковчег», «Ալիք» և «Ասպարեզ»)՝ ընդգրկելով այդ պարբերականների վեց տարվա (2005-2010 թթ.) հրատարակությունները՝ ներկայացուցչական ընտրանքով⁷:

Հայկական մամուլում տեղ գտած՝ հայրենիքի և Սփյուռքի մասին տեղեկատվական նյութերի համադրական վերլուծությունը բացահայտում է հայրենիքի կերպարը ներկայացնելու և Սփյուռքի կողմից դրա ընկալման առանձնահատկությունները: Նշված պարբերականների բովանդակության վերլուծությունը բացահայտում է այն իրողությունը, որ էթնիկ մամուլը լուսաբանում է առավելապես հայկական տեղեկատվություն: Այսպես, հայկական թերթերի նյութերի ընդհանուր ծավալի մեջ հայկական թեմաների⁸ տեսակարար կշիռը կազմում է մեծամասնություն «Ասպարեզում» (73.9%՝ թերթի ուսումնասիրված համարների նյութերի մեջ) և «Ալիքում» (66.9%), իսկ գրեթե կեսը՝ «Ноев Ковчег»-ում (48.1%):

Հայկական տեղեկատվությունն իր հերթին կարող է վերաբերել Հայաստանին, տվյալ համայնքին կամ ողջ հայկական Սփյուռքին, ինչպես նաև հայրենիք-Սփյուռք առնչություններին: Բնչպես ցույց են տալիս հետազոտության տվյալները, Սփյուռքի երեք համայնքների մամուլը հիմնականում իրականացնում է միավորող գործառույթ⁹:

⁵ Kang T. *Homeland Re-territorialized: Revisiting the Role of Geographical Places in the Formation of Diasporic Identity in the Digital Age, Information, Communication & Society, Volume 12, Issue 3, 2009, pp. 326-343.*

⁶ Հետազոտությունն իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժինը՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակում, 2011-2013 թթ.:


⁷ Հետազոտության մեթոդաբանությունը հանգամանալից ներկայացված է հեղինակի՝ «Հետազոտության մեթոդի ընտրության հիմնավորումը» հոդվածում: Տե՛ս Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ, Ե., 2012, էջ 26-43:

⁸ Հայկական թեմաներ են համարվել ՀՀ-ին (ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղը), հայկական Սփյուռքին, հայ անհատներին և ընդհանրապես հայությանը վերաբերող նյութերը:

⁹ Էթնիկ խմբի համար էթնիկ մամուլն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ միավորող, կողմնորոշող և խորհրդանշական: Միավորող գործառույթի միջոցով էթնիկ մեղիան կապում է


կենտրոնանալով հայրենիքի մասին տեղեկատվության վրա: Սեփական համայնքների և հայկական Սփյուռքի վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք-Սփյուռք հարաբերություններին (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հայրենիք-Սփյուռք թեմաների համամասնությունը Սփյուռքի մամուլում (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)



Սփյուռքի մասին տեղեկատվության ծավալը ցույց է տալիս՝ որքան կայացած և ինքնակազմակերպված է համայնքը, այնքան մեծ է մամուլում նրա մասին տեղեկատվության տեսակարար կշիռը: Տվյալների վերլուծությունը վկայում է հայրենիքի և Սփյուռքի մասին թեմաների ծավալի և դրանք ներկայացնելու գնահատականների միջև առկա անհամաչափության մասին: Որքան շատ են Հայաստանի մասին հրապարակումները, այնքան ավելի քիչ է դրանց դրական ներկայացումը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Հայաստանի մասին մամուլի հրապարակումների երանգավորումը¹⁰ (տրված գնահատականի տեսակարար կշիռը, %).



Սփյուռքին հայրենիքի հետ՝ ներկայացնելով այնտեղ տեղի ունեցող լուրերն ու իրադարձությունները: Տե՛ս Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J., նշվ. աշխ., էջ 67:

¹⁰ Նյութերը գնահատվել են ըստ մամուլի ներկայացման՝ դրական-չեզոք/ համակցված-բացասական սանդղակով:

Այսպիսով, չնայած հայրենիքի մասին տեղեկատվության գերակայությանը, այն առավելապես ներկայացվում է չեզոք գնահատականներով և վերաբերմունքով: Այս ծավալով և ձևով հայրենիքը ներկայացնելը կարող է սփյուռքահայերին փոխանցել Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը (հաճախ հայերենով), նրանց կյանքը սրփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռել Հայաստանի հետ, վերացնել հայրենիքի և Սփյուռքի կտրված սահմանը: Մակայն այն չի խրախուսի հայրենիքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում ակտիվ ներառվելու վարք, առավելապես՝ հայրենադարձություն:

Հայրենիքը ներկայացնելու համար կարևոր են նաև լուսաբանվող թեմաների տեսակը և համամասնությունը: Դիտարկված երեք համայնքների մամուլում Հայաստանի մասին գերակշիռ թեմաները քաղաքական են (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հայրենիքի մասին սփյուռքի մամուլի հրապարակումների թեմաները¹¹ (թերթի հայկական թեմաների մեջ տվյալ ոլորտի տեսակարար կշիռը, %)

Թեմա	«Խոբ Կոբչեր»	«Այիք»	«Ասպարեզ»
Քաղաքականություն	92.3	87.6	74.5
Տնտեսություն	38.4	9.3	13.2
Սոցիալական ոլորտ	8.6	3.8	5.8
Մշակույթ	29.1	25.3	32.1
Բարեգործություն	1.2	1.3	0.7
Ազգային հարցեր	2.0	5.9	2.7
Իրավական դաշտ	4.6	3.4	5.9

Հայրենիքի մասին տեղեկատվության մեջ քաղաքական թեմաների գերակշռությունը վկայում է տվյալ ոլորտով Սփյուռքի ավելի մեծ հետաքրքրության մասին: Ի լրումն Սփյուռքի համար ավանդական մշակութային թեմաների՝ Սփյուռքի ժամանակակից մամուլն իր խորհրդանշական գործառույթը¹² կատարում է հենց քաղաքական թեմաների մատուցման շրջանակներում:

Այսպիսով, Հայաստանի մասին տեղեկատվության սպառումը կապում է էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնում է պահպանել մշակույթը և լեզուն: Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը վկայում է հայկական Սփյուռքի ձգտումը՝ մշա-

¹¹ Աղյուսակում ներկայացված ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

¹² Խորհրդանշական գործառույթի միջոցով էթնիկ մեղիան տարածում է արժեքներ, գաղափարներ, պահպանում կամ ձևավորում է էթնիկ ինքնությունը: Տե՛ս Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J., նշվ. աշխ., էջ 67:

կուրթային երկատվածության իրավիճակում վերադառնալ արևատներին, անցյալին, սփյուռքյան փոփոխվող ինքնությունը դարձնել առավել կայուն: Հայրենիքը դառնում է հայկական տեղեկատվական դաշտի այն առանցքը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են սփյուռքի համայնքերում՝ անկախ նրանց տարբերություններից: Սփյուռքը մասնակից դարձնելով հայրենիքում ընթացող ամենօրյա գործընթացներին՝ մամուլը նպաստում է դրա ինքնության պահպանմանը, էթնոմշակութային արժեքների վերարտադրմանն ու տարածմանը, ամրապնդում է էթնիկ խմբին պատկանելության զգացումը:

РОДИНА В ПЕРИОДИКЕ ДИАСПОРЫ

БАРСЕГЯН С. С.

Резюме

Этническая родина занимает особое место в сохранении идентичности в диаспоре. Восприятие родины и связи с ней играют важную роль в формировании диаспоральной идентичности. Наилучшее отражение эти связи находят в этнических медиа. Результаты контент-анализа периодических изданий (2005-2010 гг.) трех армянских общин – "Асбарез" (Лос-Анджелес), "Алик" (Тегеран), "Ноев Ковчег" (Москва) выявляют роль этнической прессы в сохранении национальной идентичности, воспроизводстве и распространении этнокультурных ценностей.

HOMELAND IN THE DIASPORA'S PERIODICALS

S. BARSEGHYAN

Abstract

The ethnic homeland holds a special place in the preservation of identity in the diaspora. Perception of the homeland and connection with it play an essential role in the diasporic identity construction. Homeland-diaspora relations may best reflected in ethnic media. In the era of information technologies, geographically distant homeland can form and maintain identity in the diaspora through ethnic media. The analysis of publications in press reveals the homeland perception in the diaspora. The content analysis of the periodicals (2005-2010) of three Armenian communities ("Asbarez" in Los Angeles, "Alik" in Tehran, and "Noev Kovcheg" in Moscow) shows that ethnic press, replicating materials about the homeland, promotes identity preservation, reproduction and dissemination of ethno-cultural values, strengthens the sense of belonging to their ethnic community.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ Ս.
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՃԸՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ
(1920 թ. մարտ-հոկտեմբեր)

1920-ը Հայոց ցեղասպանության տարեգրության ամենաողբերգական ժամանակահատվածներից է: Թափ առնող թուրքական ազգայնամոլությունը՝ Մուստաֆա Քեմալի առաջնորդությամբ, նպատակ էր դրել ավարտին հասցնել իր նախորդների՝ երիտթուրքերի «կիսատ» թողած գործը՝ հայ ժողովրդին ամբողջովին հայրենագրելով ու բնաջնջելով: Այդ նպատակի համար քեմալականները հարձակման անցան միաժամանակ թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ փրկության հույսով Կիլիկիայում հավաքված հայության դեմ: Ամենացավալին այն էր, որ Հայաստանի բոլոր ենթադրյալ դաշնակիցները, տարված դիվանագիտական խարդավանքներով կամ հեղափոխական խառնակություններով, նրան զրկել էին որևէ գործուն աջակցությունից: Հայ ժողովուրդը ստիպված էր իր գոյամարտը մղել մենության մեջ: 1920 թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին հաճրեցիների դուրսագնական մաքառումը այդ գոյամարտի բնորոշ էջերից է: 1920 թ. փետրվարի 11-ի՝ Մարաշը թուրքերին հանձնելու ֆրանսիացիների դավադիր որոշումը քեմալականների առջև բացեց Կիլիկիայի դարպասները: Ֆրանսիական հրամանատարության՝ հայության ճակատագրին անհաղորդ վարքը թուրք ցեղասպանի ձեռքերն արձակեց Այնթապում, Զեյթունում ու Հաճրնում: Վերջինիս շուրջ պաշարման օղակը սեղմվեց մարտի 15-ին: Յոթ ամիս շարունակ Հաճրնի հայությունը՝ իր մի քանի հարյուր մարտիկներով, հարկադրված էր միայնակ մաքառել քեմալական 25-30 հազար կանոնավոր և անկանոն զորքերի դեմ: Իրադրությունը խիստ բարդացավ, երբ 1920 թ. մայիսի 30-ի զինադադարով ֆրանսիացիները քեմալականներին հանձնեցին Սիսը՝ այդպիսով թուրքերի թիկունքում բացարձակ մեկուսացման մեջ թողնելով Հաճրնում պատսպարված շուրջ 9 հազար հայերին: 1920 թ. հոկտեմբերի 15-ին, համալրվելով քեմալական կանոնավոր բանակի լրացուցիչ ուժերով, թուրքերը կարողացան ձեռքել քաղաքի պաշտպանությունը: Սրի քաշվեց գրեթե ողջ բնակչությունը, և միայն 374 հոգու հաջողվեց փրկվել:

¹ Գասպարյան Ռ.Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ), Ե., 2005, էջ 191:

Ստորև ներկայացնում ենք Ադանայում Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության (ԵՔԸ)* հայազգի աշխատակից Միսակ Մանուկյանի հաշվետվությունը Հաճրնի կռիվների ու բնաջնջման մասին: Ս. Մանուկյանը ծնվել է 1878 թ.: 1900 թ. ավարտել է Տարսնի Սբ. Պողոսի քոլեջը**, որից հետո երեք տարի դասավանդել է տեղի դպրոցներից մեկում: Այնուհետև Ադանայում անդամագրվել է ԵՔԸ-ին, որի կողմից երկու անգամ՝ 1908-1909 թթ., այս 1912-1913 թթ. գործուղվել է Շվեյցարիա և Մեծ Բրիտանիա: 1908 թ. ավարտել է Մարաշի բողոքական հոգևոր սեմինարիան***: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին վարել է Ադանայի բողոքական եկեղեցու քահանայի պաշտոնը: Պատերազմի տարիներին ընտանիքի ողջ մնացած անդամների՝ զառամյալ մոր ու մանկահասակ զավակի հետ, տեղահանվել է: 1919 թ. վերադարձել է Ադանա և կրկին անցել աշխատանքի ԵՔԸ-ում:

Ս. Մանուկյանը փաստաթղթում զետեղված տեղեկությունները արձանագրել է Հաճրնի ողբերգական անկումից անմիջապես հետո, քեմալական զորքերից փրկվածների թարմ վկայությունների հիման վրա: Կարծում ենք՝ սույն փաստաթուղթը պատրաստվել է Անտանտի պետություններին ներկայացնելու համար: Բնօրինակը պահվում է ԵՔԸ համաշխարհային այլանսի արխիվում: Այն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: Կատարվել են ուղղագրական կամ կետադրական մասնակի շտկումներ: Մեր միջամտություններն արված են ուղղագիծ փակագծերով, իսկ մեկնաբանությունները տրվել են տողատակերում:

ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ Վ. Վ.

² World Alliance of YMCAs' Archives, Geneva, Switzerland: Dossier – Turkey, Box – Local Reports, File – Adana YMCA 1919 – 1922, Biographical Sketches.

³ Նույն տեղում, The Annihilation of Hadjin.

THE ANNIHILATION OF HADJIN

At last, not by compromise, but by the complete victory of the allies, Turkey yielded unconditionally to the will and mercy of their conquerors. So the lingering years of deportation of the Armenians came to an end and those who remained still ready to die revived with hope, a new hope, and turned to their depopulated and devastated towns. Among them were the Hadjin people who were encouraged by the direct, or indirect, suggestions and encouragements even by the help of native as well as foreign friends and officials. To guarantee their safety the French government appointed a Kaimakam⁴ as governor, a commander of gendarmes, a chief of police, and all their attendants, and the necessary preparations were made to have a complete government. So they marched to Hadjin in March 1919 and this new-flagged government was connected by telegraph with Sis and Adana. Everything was complete to make it a branch of the Adana province. Only 12,000 people out of 32'000 survived to see the end of the deportations so they were very careful to stay away from dangerous points. From 5000 to 8000 men, women and children went to Hadjin and began again new services in the churches, a new orphanage with 300 orphans, a new school, a new market. They had new Missionaries and Relief Workers. At last everything was promising. They were intoxicated with the joy of the hopeful future.

On the other hand the Kemalists, the Nationalist Party of the Turks, were devising their devilish plans. They were centred in Sivas which was not near enough nor strong enough to frighten any people under the victorious flag of the Allies. But Kemalists increased from day to day. The Kemalist spirit rolled down like a small stone from a snowy mountain. After a little while rolling stone got bigger and bigger. The avalanche was approaching Hadjin. In vain the Christian officers telegraphed again and again to Sis and Adana. They had some arms as the French had given already 600 arms and 70,000 rounds of ammunition so they were ready to defend themselves until the expected help should come, but they needed a leader. Mr. Armenag Keregian, the Kaimakam, gathered twelve Turks, the leaders of the Turkish villages round about, as hostages of peace. The French government in Adana was displeased with this kind of peace policy. They instructed Mr. Chalian to proceed to Hadjin as Kaimakam. As soon as they reached there he released them after having obtained their promise to be friends with the Armenians which was not better than a promise of a fox to be friendly with the chickens. At this time they found among themselves an Armenian named Sarkis Jebejian⁵ about forty years of age. He was born in Erkilet⁶ Boghajlian. He came with

⁴ Կայմակամ - կառավարիչ:

⁵ Սարգիս Ճեպեճյան, Ճեպեճ (1864-1920) - եղել է Անդրանիկի առաջին կամավորական զննի հեծյալ վաշտի հրամանատար:

⁶ Էրկիլեթ - Կեսարիայի արվարձան:

Antranik Pasha to Constantinople and then went to Hadjin to go to his country at the first opportunity. Now the need of his people found him as the wanted leader. He soon picked out the soldiers trained with the Turkish troops and divided the men of ability into four parts, each having 150 armed men and 50 civilians. Each division had its sub-division and also a unit of cavalry composed of 60 horsemen. He was the commander of them all. By the first chance he sent men to bound the boundaries. On February 22nd the Gregorian bishop Saragian and the Rev. Khachadourian, the Protestant pastor, and two more delegates were sent in behalf of the people to explain the situation and to beg the French to send help, or to allow the people to come back to Sis and Adana. They reached Adana on March 5th. They did all they could but in vain. At last they sent a cipher telegram to their families to advise them to come instantly. But Colonel Bremond⁷ wrote a special letter to Mr. Damadian⁸, the representative of the Armenian delegation in Paris, to use all his influence to persuade them to stay in Hadjin and fight.

On March 5th the Kaimakam, Mr. Chalian, sent an envoy composed of 40 gendarmes under Krikor Eff. And Misag Eff. Rejihian, to the Turkish villages round about inviting them to be true to the French government and not to unit[e] with the Kemalists when they come. At Roomloo, five hours from Hadjin, the Turkish fired on them but they did not answer the fire and continued their way into the town. After they had a hurried talk Krikor Eff. went to Shar⁹. Another part of the gendarmes had to fight for two days for their lives. Help from Hadjin reached them and enabled them to return. All these approaching dangers were explained to Adana and Sis in order to arouse French sympathy and hasten their help. The Kaimakam said in his telegram, "I am afraid this will be my last telegram". So it was. On the 14th of March postal and telegraphic communications were cut between Hadjin and these two places. While 81 Armenians were on the way to Hadjin with 200 arms and 40,000 cartridges and 200 bombs, the Turks attacked them on the way and killed 40 of them. The others fled back to Sis. How could the Turks understand that they were taking ammunition to Hadjin? The answer is very simple because the telegraph officer was a Turk. He was working during the daytime for the French and during the night for the Kemalists. After the Armenians were killed the ammunition became plunder. So Hadjin, as well as other villages, was imprisoned among the mountains. All the Americans gathered at the Kurdet¹⁰, the American School, and the civilian Armenians into the city even while the mountains were still in their possession.

⁷ *Գնդապետ Բրեմոն - 1919-1920 թթ. Կիլիկիայի ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավարը:*

⁸ *Միհրան Տամատյան (1863-1945) - 1920 թ. Կիլիկիայի Հայոց ազգային միության ղեկավարը:*

⁹ *Շար - հայկական գյուղ Հաճրնի շրջանում, 1920 թ. ունեցել շուրջ 500 բնակիչ:*

¹⁰ *Գրտեթ - Հաճրնի մոտակայքում գտնվող միսիոներներական կայան, որն ուներ որբանոց՝ 300 մանուկներով:*

On the 25th of March the general attack began all around Hadjin. The heavy snow and the heavier force of Kemalists forced the Armenians draw back so that on the 3rd of April they had to shelter themselves in the city and the Turks crowded around them near enough for them to hear their conversations. The first thing the Armenians did was to gather 300 Turks and 150 Kurds, who were living in Hadjin, in order to keep them away from any communication with the Turks outside, and to keep them as hostages for the safety of the 700 to 1000 Armenians in the surrounding villages. Mr. Chalian had no more authority in the city after he had released the 12 leading Turks. The military people were in control. The German cartridge in the hands of Armenians were finished during the fights on the mountains. The French and Russian cartridges would likely give out before help came. In Hadjin necessity became the mother of invention. They learned to make gun-cups and to produce gunpowder enough to fill 30,000 to 40,000 empty shells. They also made a big gun which burst at the first explosion. At the same time they arranged the provisioning of the population by gathering all kinds of cereals and other food supplies to be divided among the people in just proportion.

Do I need to say that, although the Bishop of the Gregorian church and the pastor of the Protestant church were sent to Adana as deputies and the churches closed, they had invented quite a new method of worship in private houses in different quarters of the town. Daily they had from fifteen to twenty meetings with an attendance in each district of about 150 to 200 people. They were praying with a new earnestness for forgiveness and deliverance from sin, and the Turks. Many got a full assurance of forgiveness and joy which continued until they were sent up to the presence of Jesus. They picture the effect of these meetings so vividly that the commanders were forced to appreciate the help of prayer and even Turks noticed that after these meetings the fighters were more kind in their conversations but more brave in their fightings. The commander Jebejian ordered general fasting and prayer for these days. Often he ordered his servant, Bedros Munershian, saying: "Go ask the women to pray. To morrow we shall have a hard battle."

One day while they were praying, a voice from heaven was heard. It was not the voice of God. It was the noise of an aeroplane. The aeroplane dropped a letter from the Armenians of Adana to the people of Hadjin. It said: "The French will help soon." A second time, on the 28th of March, an aeroplane dropped a box of ammunition to the Hadjin people. Two boxes of ammunition and a package of letters from this same aeroplane got into the hands of the Turks.

On the 17 of April Miss Cole¹¹ and Rev. Daniel Eby¹² were sent by the Turks with a letter to persuade the Armenians to take down the French flag and hand over their arms and fight not in vain. If they did not yield they were to be annihilated. Of course, their brave answer

¹¹ Միսս Քոուլ - Գրտեթի ամերիկյան որբանոցի տնօրենուհին:

¹² Վեր. Դանիել Էբի - անգլիական նպաստամատույցի ներկայացուցիչ:

was negative. They said that they could not take the flag down as it belongs to the French, but that they had no enmity against them. All that they asked was to live in peace. The negotiation was repeated on May 22nd by the same agents. This time the Turks asked for two men to be appointed with a time and a place for direct conversation. As soon as the appointed persons started to go, in spite of the fact that there was a six hours armistice, they opened fire from every direction. Miss Cole as well as the men had a narrow escape. Although this also may be explained as a mistake, their purpose was to kill Mr. Jebejian, the chief commander, through that “mistake”. They did not, however. Other attempts at negotiation were not acceptable. On the 25th of May Asadoor Sachian came from Sis to inform them the help from Adana was nearly ready to start.

Just then the Turks in the trenches told the Armenians with pride that all the Armenians in Feke¹³ [,] Yere Bokan¹⁴, Geurumje¹⁵, and so on had been butchered by the victorious Turks. They said that the same fate awaited the Hadjin people. This news was like a chilling winter wind. Dismay, excitement, and weeping passed over the people. An Armenian with his angry men killed some of the Turks who were kept as hostages for the safety of the Armenians in the surrounding villages. This act was condemned by the people as they considered it a sin and a stain on their reputation. To this day they condemn that shameful act with words as bitter as those they use against the Turks. The Turks furthermore said that ten of them had become relatives of the Armenians by marrying Armenian girls who had been in the American school. As soon as they heard this the Armenian women began to cry with a loud voice. Those who had relatives in Kurdet would not be comforted. All said that it was a shame for them to wait there and not save the girls from the Turks.

On the 6th of June a Kurdish boy and on the 7th a Kurdish woman escaped from the prison in the night to join the Turks outside. They told them of the killings of the Turks. An Armenian boy in the orphanage at Kurdet escaped from the Turks and told that the Turks had numbered the orphans one by one and were keeping them in a room to be killed next day. A notorious Turkish brigand who had won the enmity of his own people by his repeated crimes toward them was now working with the Armenians in Hadjin against the Turks. He was a sharpshooter and, it is said, killed not less than 50 Turks. Hamja advised the Armenians again and again to attack the Kurdet saying that the Turks did not have many men there but the Armenians did not yield to his suasions. At last on the night of June 9th Hamja persuaded a group of men who were desperately hungry to attack in a certain direction. They did this

¹³ Ֆեքե կամ Ֆեկկա (Fekka) - 1920 թ. հայաբնակ գյուղ Կիլիկիայում, Հաճրնից մոտ 40 կմ հարավ՝ Սիս տանող ճանապարհին:

¹⁴ Յերե Բոկան կամ Յերեբական (Yerebakan) - 1920 թ. հայաբնակ գյուղ Կիլիկիայում, Հաճրնից մոտ 45 կմ հարավ-արևմուտք:

¹⁵ Գյուրումզը կամ Գյուրումզը (Gurumze) - 1920 թ. հայաբնակ գյուղ Կիլիկիայում, Հաճրնից մոտ 35 կմ արևմուտք:

without permission from the chief commander. They succeeded, so well, that immediately they dared to attack in another direction and again in another. In all they found less Turks and more success than they expected. Fired by this success they took some more men that same night and again without permission attacked the Kurdet. They found that Jivan Bey, the commander, and Abbas Bey had fled in their night gowns and had left many documents as well as all the orphans and the Americans. Joyfully they took all the provisions they found and the orphans and the helpers, 290 in all down to the city. They knew that the presence of the American would be a great source of help and safety for them in the future, so they urged them to come down but they preferred to stay there. The chief commander blamed these men for their lack of discipline, but the joy over the success that brought some wheat to the people overwhelmed his rebuke. After they had held Kurdet for three days they were obliged to hand it back to the Turks.

July 5th was the sad day for the Hadjin people for they heard that Shar had fallen. Since the 5th of March brave little Shar with its four or five hundred population had been under fire from the guns and cannons of 2000 Turks. Only 60 brave armed men defended the town. At last the Turks entered the town like a flood and only 30 people including a woman and a girl escaped to tell the news to Hadjin people. On the 13th of July the conquerors of Shar came against Hadjin and bombarded the city from dawn to noon. 250 shells and more than 100,000 bullets were used by the enemy without having the expected success. On the 16th of July Mr. Sarkis Jebejian, the chief commander, while crossing a bridge was shot by a stray bullet. The wound was not serious but sufficient to cut off his valuable service which the people missed sorely. The decreasing provisions soon brought the people to the point of famine. People ate horses and donkeys and cats. It was unbearable to hear the children crying for food and the mothers roamed about to pick herbs to cook and give to children. They had to find a way or starve to death. They were not ready yet to die by hunger and they found a way. In a few days they dyed the native cloth to a khaki color and made it into the shape of European uniforms. On the 5th of August 200 brave men clad in these garments plunged into the stream at night marched on in the deep water for four hours until they got behind a certain hill from which the Turks were bombarding the town. In daytime they kept themselves behind the rocks. At midnight firing began from both sides upon the Turks. They left everything and run to save their lives. The Armenians brought the captured cannon with 450 shells into the city and set it up near the church. They were revived with the food they got and their victory. They sang hymns and lifted their hands to God who had given them this victory as an answer to their poor prayers. The booty was divided equally between the fighting heroes and praying heroines. Especially were they glad to find a document in which the Turks were ordered by the commander to spare the lives of the men in a list, where the Americans, a few helpers, and the children were mentioned. About sixty of the men were mentioned. All the rest were

ordered to be killed. From this they understood that by their timely arrival at the Kurdet they saved the orphan children in the Kurdet who were not in the list.

On the 11th of August they wrote a friendly letter to the Turkish villages saying that they had no bad intentions against them. They were, they said, old friends and could not be enemies. The sole desire of the Armenians was to be left free to live in peace. If the Turks desired to fight against the French they might do it directly with the French. The Turks answered that they must surrender the French flag and their arms, then they could be free. Of course, they could not do this, but the hunger was remorseless. They could neither be reconciled with their hunger nor their Kemalist enemies. On the 21st of August during the night two Armenians, Garabed Manoogian and Sasouloo Boghos, arrived from Adana to tell them that 2000 Armenians were preparing to come to their help and that already 500 of them were out in Akarja, 3 hours distance from Adana. Oh, the joy over this news! The whole city was overjoyed. They said they could fast for even fifty days. Day and night every ear was strained to hear the joyful sound of the feet of the men coming to help. They grew sick with waiting.

Another desperate sally was made on the 20th of September. 400 armed men out through the enemies strong chain and thirty of them surrounded a Turkish village which surrendered without resistance. 100 of them went to Hoomloo, 5 hours distance, which was the centre of chief commander in that district. After twelve hours of severe fighting the brigands set fire to the houses in order not to give the Armenians any ammunition or provision. Dooran Bey, the chief, fled in the night leaving his sword, a revolver and his diary together with a uniform. The town was in the hands of Armenians. They brought back 22,000 pounds of wheat and five to six hundred cattle and 60 horses and a Circassian physician. Three Armenians were killed and 100 Turks bodies were numbered lying on the ground besides those who were burned in the houses. The physician was of great help in dressing the wounds of Mr. Jebejian, the commander. The sword of the Turkish commander is now with the conquerors but the diary has been confiscated by the French officers in Djihon¹⁶. While the group was bringing in the booty from the first village, including the captured Armenian women from Shar, the Turks recaptured the women from the Armenians.

After several days the hunger and famine began to reign again. The leaves of the trees were all eaten, the bark of the trees was ground, bones were powdered to be mixed with a handful of flour in order to make a large loaf. The price of a cat was gold pound. Dogs, rats, animals of any kind, even the skin of sheep and oxen were eaten after being broiled. While they were preparing for another attack on the evening of October 14th, sentinels brought in the saddest kind of news. 80 to 100 carriages of ammunition, three big cannons, and about 10,000 Turks were coming from the N.E. and N.W. of the city.

¹⁶ *Զինն կամ Ջեյհան (Ceyhan) - քաղաք Կիլիկիայում:*

At dawn of October 15th the canons began to bombard the principle buildings. Their gunners were skilled to fire up towards the heavens and drop the shell just over the top of the buildings, the shells piercing even the four-storied buildings. The last days of Hadjin were days of hell. Men were struggling with empt[y] stomach to defend the city. The women were screaming and fainting, the children were crying. The Turks were shouting for joy, and rushing towards the town. Like a big avalanche they came from every direction calling on the name of God. The Armenians were like flint and the Turks could not pierce their front until evening. The orphans were busy as usual in carrying ammunition from ditch to ditch. The grown men could not do this because of the bullets. Children could bend low enough so that the Turks could not see them. Near evening the Turks gave fire to one end of the city. Some of the fighters preferred to die in the trenches, some went to die with their loved ones in order to show their faithfulness. The names of two men are given who gathered their families and near relatives about them in one room and killed them one by one and then killed themselves rather than allow the Turks to have access to them. Hundreds fell victims to innumerable bullets. Some men and women in their hurry cast away their precious things even their loved one and climbed the mountains. Also some of the fighters in the thick darkness passed out over the bodies of men, women and children, broke through the lines of the enemy towards the mountains. On the way they met some girls, also two teachers from the orphanage. These bagged them to kill them rather than let them fall into the hands of the Turks. They dared not do this. They roamed here and there during the night among the mountains. 500 armed men and 150 unarmed men together with Hamja, the Turk, got together, formed themselves as an army under three able leaders. After three hours of fighting with the Turks who at this time caught slit of them, they marched on. Through many winding ways there were joined by more men and lost a few. Skirmishes in Turkish villages took place. At last after four days they came to a Turkish village tired, hungry and nearly exhausted. They found Hassan Kiahya, the chief of the village. He willingly or unwillingly did all he could to please his self-invited guests. He succeeded in saving his own life as well as lives of few other persons who were captured there. Hasan Kiahya was like an oasis in the desert of Turks. Not because he fed these 378 hungry persons with honey and butter, but, because as soon as he saw them he said: "You have a trust with me whom I have been keeping for four days in danger of my life". Then he showed them an Armenian man, Sarkis Girlekian. They were very glad to see such an angelic Turk after they had seen so many devilish ones. After a few hours rest and many kind words they bade him good-bye and marched on revived.

I need not tell all the details of the repeated skirmishes on the way and how they bravely fought against the Turks and the cold and the heavy rain with some wounded: also how Hamja left them to join his relatives against them. At last they came to Tulan, five hours from Djihon, on the 24th of August [October]. Tulan is the farm of the monastery of Sis and

contains a mill. After they satiated their hunger and thirst in the mill, they found themselves surrounded by 2300 Turks. Instantly safe positions were taken. Twice messengers were sent to the French in Djihon to explain the situation and ask for help. The French did not send any help nor did they allow the Armenian volunteers to go. The Turkish Kaimakam offered his help which was not accepted by the French. The fighting continued until the next day. To the terror of the Turks and to the joy of the Armenians an aeroplane came to the place. The Turks stopped fighting instantly. The Armenians, on the plain behind sand bags, waved the French flag carried from Hadjin. They tied their handkerchiefs and their shirts to their guns and waved them, they shouted and exploded a few shells to attract attention. It was so low that they could have shot it if they liked. It also made four revolutions over them. The Armenians were sure of getting help after this visit and the Turks were afraid. After doing so many things the aeroplane rider seemed not to have seen either Armenians or Turks. I am afraid the rider was blind or the aeroplane got away from the base before the rider got into it. The Turks sent for two cannons and some more help from Sis. The Armenian hope in French help fail them, so they turned with feeling hard to aeroplane to their own aid. They had already captured several fellaheens¹⁷, or gypsies. A young gypsy named Mevlid offered his help to show a secret way through a swamp. He said he was the shepherd of the buffaloes of the monastery, and no one knew the way but himself. This was the help they needed. He led them through the bushes and for five hours through the water during the night. Sometimes it was dangerous but they helped each other and when they came to a deep river they were helped across by Apraham who had been the benefactor of the Hadjin people during the fighting. Often he had passed through the Turkish lines to bring wild pears, wheat, and so on, on his shoulders. He brought even Turks to be examined to find out the enemy's plans. This time he helped many to cross the river with his strong arms. Finally nearly exhausted he himself got across. Just then found that a woman and two wounded had been left on the other side. He plunged in again and went to their help. After a while the rest missed him and sent back to look for him but he could not be found. Afterwards they understood that two armed horsemen had captured him as well as the other three and had killed them after torturing them.

At last after twelve days 345 of them including ten women reached Djihon, there to tell the story of the fall of Hadjin. In addition to this group 26 men and 3 women came during the following eight days as the fragments of ten different big groups. According to their report they spent from eight to twenty five days in reaching here. They spent the daytime in the forests eating what they could find and journeyed in the night. Needless to say they were almost skeletons when they reached a point of safety. As far as we know only those 374 former inhabitants of Hadjin remain of the 9000.

¹⁷ Ֆելլահիներ - գնչուներ:

As to the people left in Hadjin. The Turks burned some of the houses on Friday evening but after some of the Armenians had left the city, twenty-five men still defended it until Saturday evening, in the gendarme centre. The people who wished to surrender begged them to stop firing. Under cover of the night these men got away and on Sunday morning the Turks gained full possession of the city. This was the 17th of October. The Turks gathered the living relics of the city into the monastery and separated the men, women and children. Then ordered the women to take off their cloths, then fired upon them. An economical Turk suggested that they should not waste their ammunition, but should use their daggers. Not a person, supposedly, was left alive. All were piled one on top of the other. Then they took the last group of men, five by five and ten by ten, God knows where. After they took the last group of men complete silence reigned. At midnight the mound of dead bodies began to move. This moment kept on noiseless until eleven women were standing free from the pile. They dared not to speak about their wounds and pains, they only motioned to each other the way to go. Naked, they roamed among the naked rocks and wild trees during the nights that followed, searching where they could for bits to eat, until the following Friday. At last they met six women in the vineyards an hour and a half 's distance from Hadjin. These were under the same pressure of fear but they had their cloths on having left the city before the butchering took palce. The naked women were shivering with cold and faint with hunger. They insisted on lightening a fire with a match they were able to get from these fellow victims. These knew the danger involved in such an action, and being unable to persuade the desperate women from lightening the fire they concealed themselves at some distance away. Early in the morning they heard guns and screams. Thus the last witnesses of the Hadjin tragedy were swept away. Those who had concealed themselves managed finally to reach Missis¹⁸ after twelve days and from there come here to tell as what they had seen and heard.

Respectfully submitted,
Sisag S. Manoogian.

Adana, Asia Minor,

November 15, 1920.

¹⁸ Միսիս - քաղաք Կիլիկիայում, այժմ Յաքափինար (Yakapinar):


ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* ԵՔԸ-ն հիմնադրվել է 1844 թ. հունիսի 6-ին Լոնդոնում: Արդեն 1855 թ. դարձել է համաշխարհային շարժում (տե՛ս *Shedd, Clarence Prouty and Others: History of the World's Alliance of Young Men's Christian Associations, London, 1955*): Լինելով քրիստոնեական արժեքների հիմնարարությունն ընդունող մի կազմակերպություն ու ստեղծվելով Բրիտանական կայսրությունում՝ ԵՔԸ-ն ի սկզբանե ունեցել է բողոքական հենք: Սակայն, ժամանակի ընթացքում տարածվել է աշխարհով մեկ, դարձել համակեղեցական շարժում: Այսօր ԵՔԸ-ն գործում է աշխարհի 119 երկրներում և ունի շուրջ 58 միլիոն անդամ: Այն համարվում է աշխարհում ամենաերկարակյաց ու ամենատարածված հասարակական նախաձեռնություններից մեկը:

** Տարսունի Սբ. Պողոսի քոլեջը հիմնադրվել է 1888 թ. Նյու Յորքի Յունիոն աստվածաբանական սեմինարիայի շրջանավարտ վեր. Հարություն Ջենանյանի կողմից՝ որպես հայկական ուսումնական հաստատություն: 1893 թ. հանձնվել է Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի (Պորտ) կառավարմանը (տե՛ս *Jernazian, Ephraim K.: Judgment unto Truth. Witnessing the Armenian Genocide, New Brunswick NJ, USA, 1990, p. 22*):

*** Մարաշի հոգևոր սեմինարիան հիմնադրվել է 1865 թ.: Եղել է բարձրագույն աստվածաբանական կրթության՝ բողոքական եկեղեցու ուսումնական հաստատություն (տե՛ս նույն տեղում, էջ 28-31):

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ, Արդիականացման տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներ (պրոյեկցիա դեպի Հայաստան), Ե., «Լիմուշ» հրատ., 2016, 116 էջ:



Հայ քաղաքական, քաղաքագիտական և հասարակական խոսույթում արդիականացումը հետին պլանում է: Շատ են խոսում կոռուպցիայի դեմ պայքարի, նաև տնտեսական զարգացման մասին, իսկ արդիականացման մասին խոսելիս սահմանափակվում են առանձին տնտեսական, քաղաքական ոլորտներով: Մինչդեռ արդիականացումը համապարփակ և աշխարհայացքային երևույթ է: Այն ընդգրկում է հասարակական ողջ համակարգը: Արդիականացումից է կախված որևէ երկրի՝ զարգացած և քաղաքակիրթ պետությունների շարքում լինելու հնարավորությունը, քանզի միայն գիտելիքահեն տնտեսությունն է, որ կարող է քաղաքացիներին ապահովել արժանապատիվ կյանքով՝ հիմք դառնալով մշակութային ու ստեղծագործական վերելքի համար: Նկատի ունենալով այլ երկրների արդիականացման հաջողված փորձը և հաշվի առնելով մշակութային ու քաղաքակրթական սեփական ներուժը՝ հարկավոր է մշակել տվյալ երկրի արդիականացման համար անհրաժեշտ

մոդել, որը գուցե հետաքրքիր կլինի նաև այլ երկրների համար: Եվ այս առումով էլ առանձնանում է քաղաքագիտության դոկտոր, պրոֆ. Լևոն Շիրինյանի սույն մենագրությունը, որտեղ հեղինակը համակողմանի քննության է առնում գիտագործնական հիմնախնդիրները՝ մասնավորապես առաջարկելով արդիականացման այլընտրանքներ Հայաստանի Հանրապետության համար:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո հանրապետությունում ստեղծված հասարակական կարգը բնութագրվեց տնտեսական անկմամբ, հոգեգրկությամբ և բացասական այլ երևույթներով: Այս ամենի շարունակականությունը ժամանակի ընթացքում էլ ավելի բարդացրեց հասարակությունների զարթոնքը և նրանց մխրձեց նոր ճգնաժամերի մեջ: Այս իրավիճակից դուրս գալու համար կիրառվող պարզունակ հայեցակարգերը, կտրված լինելով ընդհանուր հասարակական կյանքից, պարզապես տնտեսական զարգացման հայեցակարգերի մեխանիկական էքստրապոլյացիա են (արտարկում), որը, բնականաբար, որևէ դրական արդյունք չի տալու: Ճգնաժամի խորությունը այսպիսի հայեցակարգերով գրեթե անհնար է հաղթահարել: Ուստի անհրաժեշտ է մշակել մեկ այլ, ավելի համընդհանուր հայեցակարգ, որը կունենա այս հասարակություններին ճգնաժամից դուրս բերելու կարելիություն: Կարծում ենք՝ դա իրականացրել է հեղինակը, որը մենագրության մեջ ներկայացրել է արդիականացման ուշագրավ մի հարացույց:

Բավական հետաքրքիր հարցերի շարքում էական նշանակություն ունի Լ. Շիրինյանի հայեցակետը նշված հիմնախնդրի վերաբերյալ, այն է՝ արդիականացում՝ Արևելյան Ասիայի

(հիմնականում՝ կոնֆուցիական արեալի) երկրների փորձի միջոցով: Այս մտեցումը նորարարական է ինչպես գիտագործնական, այնպես էլ՝ աշխարհայացքային տեսանկյունից: Մեր գիտական միտքը արդիականացման, տնտեսական զարգացման հարցերում առավելապես սևեռված է դեպի Արևմուտք: Մենագրությունը մեր հայացքն ուղղում է դեպի այլ երկրներ, որոնց արդիականացման փորձը շատ հետաքրքիր և կիրառելի է մեր երկրի համար:

Արդիականացման տեսության ուսումնասիրության համատեքստում պահպանողականությունը որպես արդիականացման կարևորագույն հիմք դիտարկելը բխում է աշխատանքի ընդհանուր տրամաբանությունից: Հեղինակն այն քննում է որպես **արմատների վերադարձի** (ինդիգենացման) գործընթաց՝ համոզված, որ յուրաքանչյուր ժողովուրդ երբեմն հարկադրված է լինում կանգ առնել, շունչ քաշել և հանրագումարի բերել իր անցած ուղին, իմաստավորել այն և նշված հարցադրման լույսի ներքո՝ գնահատել քաղաքական գործընթացի ելնեղները: Եվ ինչպես իրավացիորեն նշում է ինքը՝ հեղինակը, «Քաղաքական գործընթացն է, որ բացահայտում է քաղաքական համակարգի շարժումը, բնաշրջումը (էվոլյուցիան), նրա վիճակի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ, որն իրենից ներկայացնում է քաղաքական տարբեր ենթակաների (սուբյեկտների) գործողությունների հանրագումարը, իրենց՝ իշխանության ոլորտում առանձնահատուկ գործառույթների իրականացման նպատակով» (էջ 4): Այս առումով կարևոր են մենագրության մեջ որոշ հանգուցային հասկացությունների իմաստաբանական հստակ տարանջատումը և դրանց դասակարգումը, որոնք հաճախ շփոթությունների պատճառ կարող են դառնալ, ինչպես, օրինակ՝ մոդիֆիկացիա (վերափոխություն), տրանսֆորմացիա (կերպափոխություն), մոդեռնիզացիա (արդիականացում) հասկացությունները:

Ուշագրավ է նաև ժողովրդավարության արևմտյան տեսությունների և ինդիգենացման միջև հեղինակի արած համեմատությունը, որի շնորհիվ հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ արևմտյան քաղաքական մտածողության մեջ ինդիգենացումը դիտարկվում է որպես ժողովրդավարության պարադոքս, մինչդեռ այն բնական երևույթ է ոչ արևմտյան հասարակությունների, իրենց ինքնությունը պահպանել ձգտող և, ինչու չէ, պատմական անարդարությունները սրբագրել ցանկացող մշակութաստեղծ ժողովուրդների համար: Այս համատեքստում կարևոր է ընդգծել հեղինակի պնդումն առ այն, որ եթե ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում «վերադարձի» շարժումն անմիջապես ստացավ հակախորհրդային, երբեմն նաև հակառուսական բովանդակություն, ապա ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում առաջնահերթությունը նվաճեց վառ արտահայտված ազգային-ազատագրական (հակազաղութային) շարժումը:

Մենագրության մեջ գիտական մեծ արժեք ունի արդիականացման երևույթի ուսումնասիրությունը՝ որպես փոխակերպվող հասարակության ալգորիթմ, որի շրջանակում հետազոտվում են արդիականացման ընկալումները պատմաքաղաքական տարբեր շրջափուլերում այդ գործընթացի առջև ծառայած մարտահրավերների տեսանկյունից: Այս առումով առանձնակի հիշատակության է արժանի հեղինակի այն պնդումը, թե՛ ճգնաժամային իրավիճակներում հայտնված ժողովուրդների՝ դեպի գալիք էլքի որոնումների խնդիրը քաղաքագիտության մեջ հանգեցրեց արդիականացման հարացույցի տեսական և պատմական տեսանկյունների նորովի իմաստավորմանը: Այս համատեքստում հեղինակը հստակեցնում է նաև արդիականացման տիպաբանությունը՝ մատնանշելով դրա քաղաքական, մշակութային, տնտեսական և

սոցիալական ենթատեսակների միջև հատկանշական տարբերություններն ու փոխառնչությունները:

Մենագրության մեջ Լ. Շիրինյանը քննության է առել նաև արդիականացման քաղաքագիտական խոսույթում առկա միտումները՝ համեմատական վերլուծության ենթարկելով արդիականացման տեսագործական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մի շարք հետազոտողների՝ Ա. Սոլովյովի, Գ. Սոկոլովայի, Թ. Պարսոնսի, Ս. Հանթինգթոնի, Ա. Գորդոնի, Վ. Կոզլովսկու, Ա. Ուտկինի և այլոց աշխատանքները: Հեղինակն այս ենթազրկում քննում է նաև արդիականացման գործում տնտեսության, քաղաքականության, մշակույթի, քաղաքակրթության և մի շարք այլ գործոնների նշանակությունը և փոխազդեցությունները:

Ներկայացնելով Չինաստանի, Վիետնամի, Հարավային Կորեայի, Թայվանի, Սինգապուրի, Հոնկոնգի արդիականացման մոդելները՝ հեղինակն ավանդականի և արդիականի համադրումը բնութագրում է որպես արդիականացման յուրահատկություն «կոնֆուցիական մշակութային արեալում», որտեղ հաջողության են հասել Արևելյան Ասիայի այն երկրները, որոնք «առանձնանում են մշակութային վառ յուրահատկությամբ, պետականության սեփա-կան ավանդույթներով և տնական պատմությամբ»: Լ. Շիրինյանի կարծիքով, քաղաքական հարուստ մշակույթը հաջող արդիականացման առաջին պարտադիր պայմանն է (էջ 39):

Կարևորելով քաղաքական վարչակարգերի տիպարանության, մասնավորապես, «կամիջխանության» (ավտորիտարիզմի)՝ որպես արդիականացման միջոցի հետազոտությունը՝ հեղինակը համապարփակ ձևով ներկայացնում է քաղաքական վարչակարգերի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց կապը քաղաքական մշակույթի և գիտակցության հետ: Նա բացահայտում է այն օրինաչափությունը, որ, բացառությամբ մերձբալթյան նախկին երեք հանրապետությունների, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անցումն ամբողջատիրական վարչակարգից դեպի ժողովրդավարություն տեղի է ունենում կամիջխանության հաստատման և հաղթահարման ճանապարհով: Տվյալ գործընթացի հաջողությունը պայմանավորվում է քաղաքագիտության զարգացման հաջողություններով, քանի որ քաղաքական վարչակարգերի վերաբերյալ մշակված որակական բնութագրերը հանդես են գալիս յուրահատուկ չափորոշիչների դերում: Քաղաքագետը համոզված է, որ այս ճանապարհով է հնարավոր առավել լիարժեք ընկալել արդի քաղաքական գործընթացների էությունը և հասարակության արդիականացման համապատասխան մոդելներ մշակել:

Այսպիսով, տնտեսական զարգացման հարցերում գիտականորեն հիմնավորելով արդիակա-նացման նշանակությունը՝ Լ. Շիրինյանը կարևորում է Արևելյան Ասիայի երկրների փորձը, որը Հայաստանի համար գործնականորեն ավելի դյուրին է իրագործել: Մա ոչ միայն նորարա-րական մոտեցում է, այլև ստեղծված իրավիճակից դուրս գալու իրական հնարավորություն:

ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ Է. Հ.

Քաղաքական գիտությունների թեկնածու

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Հ.

Քաղաքական գիտությունների թեկնածու

АНУШАВАН ЗАКАРЯН. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова, Ереван, изд-во «Гитутюн» НАН РА, 2016, 168 с.



В начале октября 2016 г. в Ереване на государственном уровне – созывом международной научной конференции в Ереванском государственном лингвистическом университете им. В. Брюсова – отмечалось 100-летие уникальной антологии «Поэзия Армении» под редакцией видного русского поэта, переводчика, литературоведа, литературного критика и историка Валерия Брюсова.

Представляемая монография (на русском языке) доктора филологических наук Анушавана Закаряна «Армения в литературно-общественной деятельности В. Брюсова» приурочена к этому знаменательному событию.

Монография состоит из предисловия, четырех глав и послесловия, а также снабжена резюме на армянском и английском языках, списком источников и использованной литературы.

В предисловии монографии А. Закарян, вкратце изложив историю русско-армянских литературно-культурных связей, пишет: «О проблеме В. Брюсов и Армения издано множество книг, статей, публикаций. Однако его титаническая работа по исследованию и пропаганде армянской литературы, в частности, поэзии, истории и культуры, поездки в Закавказье в январе 1916 и 1917 гг., прочитанные лекции, общение с армянской литературно – общественной средой по хронологии реалий, обстоятельств и значению не стали предметом *специального* исследования. В изучении и освещении данной проблематики еще не раскрыты, не оценены многие явления и вопросы, имеется ряд... упущений, ошибок. В монографии восполняется эта страница деятельности В. Брюсова. Критически анализируется также сборник «Поэзия Армении»(с. 13).

Под этим углом зрения и излагается материал монографии.

Первая глава «В. Брюсов – исследователь и пропагандист армянской поэзии». В начале главы автор обращается к предыстории создания антологии. В октябре 1914 г., когда на Кавказском фронте Первой мировой войны развернулись военные действия между русской и турецкой армиями, был образован Московский армянский комитет. Его целью было, в частности, широкое ознакомление русской общественности с историческим прошлым и настоящим армянского народа. В конце апреля 1915 г. комитет наметил подготовить к изданию антологию армянской поэзии. Комиссия, занимающаяся этим вопросом, обращается к «самому культурному» писателю в России – Валерию Брюсову. В этой связи в предисловии к «Поэзии Армении» – «От редактора к читателям» – поэт пишет: «Только после долгих настояний отдельных представителей Комитета, – которым

за это я обязан глубокой благодарностью, – согласился я сделать опыт, пробу» (с. 14–15). В течение трех месяцев он берет уроки армянского языка и литературы у известного литературного и общественного деятеля Погоса Макинцяна, читает «целую библиотеку» литературы об армянской культуре, истории. «Надо отдать справедливость: свое обещание Валерий Яковлевич выполнил идеально, – вспоминает П. Макинцян. – Он усердно прочитал все, что появилось на французском и русском языках из армянской литературы, и проштудировал огромный материал по истории армянской литературы.

...Техника работы была такова: Брюсову предоставлялся подстрочный перевод и оригинал в русской транскрипции. Ознакомившись с содержанием, Валерий Яковлевич внимательно приглядывался к структуре армянского стиха, стараясь сохранить его в переводе» (с. 15).

В работу над сборником В. Брюсов вовлек ведущих представителей русской литературы – А. Блока, И. Бунина, В. Иванова, Ф. Сологуба, К. Бальмонта, С. Шервинского и др. Он сам перевел многие образцы армянской средневековой и классической поэзии XIX века.

До создания антологии «Поэзия Армении» Брюсов предпринял большую работу по популяризации армянской поэзии. После большой и серьезной работы, когда подготовка сборника близилась к концу, 7 января 1916 г. по приглашению «Общества любителей армянской словесности» В. Брюсов прибыл в Баку. 8 января он прочел лекцию «Армянская поэзия», вызвавшую огромный интерес у общественности города. Затем с этой же лекцией выступил в Тифлисе (13 января), в Эчмиадзине (17 января) и Ереване (18 января). 22 января в Тифлисе поэт прочел лекцию «Исторические области Армении и развитие армянской поэзии».

В этой главе А. Закарян обстоятельно представляет пребывание русского поэта в вышеназванных городах, содержательные встречи с представителями закавказской, в частности армянской интеллигенции, прочитанные лекции о многовековой армянской литературе. Брюсовские лекции стали важным событием в жизни армянской общественности и воспринимались с большим воодушевлением. В Закавказье Брюсов знакомится со многими литературно-общественными деятелями – с Иоаннесом Иоаннисианом, Ованесом Туманяном, Гарегином Овсепяном, Александром Ширванзаде, Србуи Лисициан, Дереником Демирчяном, Степаном Зорьяном и мн. др. Общение с ними позволило поэту составить более точное представление о тех или иных явлениях армянской литературы.

Вторая глава – «Сборник «Поэзия Армении» (критические заметки)». В начале июля 1916 г. в Москве, под редакцией В. Брюсова, вышел в свет сборник «Поэзия Армении», который поступил в продажу после 15 августа. Инициатором издания был Московский армянский комитет в лице литературно-культурных деятелей К. Микаэляна, П. Макинцяна, В. Терьяна, К. Кусикьяна и А. Цатуряна. Они отбирали материалы, составляли подстрочники для переводов. В Брюсов снабдил объемистую антологию «Историко-литературным очерком» с предисловием «Поэзия Армении и ее единство на протяжении веков». А. Закарян

детально анализирует изложенный в очерке материал. Не будем останавливаться на наблюдениях автора монографии, предоставив читателю возможность самому ознакомиться с ними. Отметим лишь, что сборник явился своеобразной данью памяти жертв геноцида армян, имел большое культурное, общественно - политическое значение: в трагические, тяжелые дни он был призван ознакомить русскую общественность с армянской поэзией, древней и новой, а шире – с литературой, культурой и историей армянского народа.

Третья глава—«Лекции в Баку (январь 1917 г.)». Во второй свой приезд в Баку, вновь по приглашению «Общества любителей армянской словесности», Брюсов выступил с лекциями «Эмиль Верхарн и героическая Бельгия» (19 января), «Учители учителей (о древнейших культурах человечества)» (24 января). Лекцию об общественных взглядах А. С. Пушкина к 80-летию со дня его смерти Брюсов прочел 29 января.

Кстати, доклад «Учители учителей» был напечатан в виде статьи под заглавием «Сфинксы и вишапы (некоторые черты культуры древнейшего Кавказа)». Резюмируя статью, Брюсов пишет: «Может быть, в библейском рассказе о ноевом ковчеге, остановившемся на Арарате, скрыто зерно исторической истины: это – воспоминание о той исключительной роли, какую играли «царства Араратские» (тоже библейский термин) в культурной жизни прежних тысячелетий (2-го и 3-го до Р. Х.). По представлению Библии весь род человеческий вновь разошелся по земле с Арарата и, следовательно, оттуда разлилась вся земная цивилизация. Еврейские повествователи, так видоизменявшие халдейское предание о всемирном потопе, должны были вспомнить, что когда-то с Арарата лился к ним свет знаний, что оттуда ждали они откровений науки и искусства и уроков утонченной жизни. Народы, основавшиеся вокруг Арарата, представлялись древнейшим евреям как самые просвещенные среди всех других» (с. 115–116).

В эти же дни он общается с различными слоями армянского населения Баку.

В заключительной главе «В. Брюсов и классики армянской литературы (творческие связи и сотрудничество)» автор монографии пишет об интересных встречах и теплом общении русского поэта с армянской литературной элитой, в первую очередь –Иоаннесом Иоаннисианом и Ованесом Туманяном.

Послесловие А. Закарян заканчивает словами выдающегося армянского поэта П. Севака об исторической миссии и значении антологии: «Поэзия Армении», вышедшая в свет в 1916 г., не была лишь томом, объемистым и роскошным. Это был патент на наше благородство, предъявленный кровавому лицу мира, паспорт народа, который обрел право на жизнь не только одним вековым страданием, но и тем своим духовным ресурсом, который внес в хранилище мировой цивилизации и культуры. Брюсовская «Поэзия Армении» в хаосе Первой мировой войны взорвалась как бомба...

Увлечшись армянской поэзией и вообще армянской историей, Брюсов из привычной роли переводчика и редактора вырос настолько, что стал крестным

отцом воскрешения нашей многовековой культуры. Для нашей поэзии он сделал даже несколько больше, чем Стржиговский для нашей архитектуры, Марр – для нашей археологии ...»(с. 146).

Книга написана живым языком, снабжена иллюстрациями и читается с неподдельным интересом.

В заключение отметим, что монография А. Закаряна напечатана по решению Научно-издательского совета НАН РА и ученого совета Института литературы им. М. Абегамяна НАН РА при содействии Всеармянского фонда арменоведческих исследований НАН РА.

АЛЕКСАНИЯН К. С.



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում 2016 թ. լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազգագրագետ Ս. Մկրտչյանի «Հայոց տոնածիսական մշակույթ» մեծածավալ աշխատությունը: Այն հայոց տոնածիսական համակարգի ազգաբանական և էթնոսոցիոլոգիական համալիր հետազոտություն է՝ արխաիկ, քրիստոնեական ու ժողովրդական հավատալիքների համատեքստում: Ժամանակագրական առումով աշխատանքը ներկայացնում է ընդգրկուն պատմական փուլ՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

Հեղինակն անդրադարձել է տոնին առնչվող ավանդական մշակութային գրեթե բոլոր շերտերին:

Գրքի հիմքում բազմաբնույթ և հարուստ դաշտային ազգագրական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալներն են, որոնց միջոցով հեղինակը կատարել է հայոց ավանդական ու արդի տոնական համակարգերի համեմատական վերլուծություն: Սույն

աշխատության շնորհիվ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում հետազոտությունների արդյունքները, որոնք մեծ մասամբ ունեն եզակի բնույթ:

Աշխատանքի առաջին մասում («Տոները հայոց ավանդական կենցաղում») ներկայացված են հայոց մեջ առավել տարածված ավանդական տոները (Նոր տարի, Քրիստոսի Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Վարդանանց, Բարեկենդան, Զատիկ, Համբարձում, Վարդավառ, Ս. Աստվածածնի վերափոխում և Խաչվերաց): Ավանդական ծիսական այդ համալիրը դիտարկվել է տոնի հիմնական բաղադրիչների համատեքստում. այն է՝ ծագում, խորհուրդ, ժամկետ, տոմար, նախաքրիստոնեական հիմքեր, քրիստոնեական մեկնություններ, տոնական ուտեստ, հացկերույթ, տոնական մթնոլորտ, հավատալիքներ և այլն: Հատուկ ուշադրություն է դարձվել մատաղի՝ գոհաբերության և ուխտագնացության հնագույն ծեսերին և սովորույթներին:

Աշխատության երկրորդ մասում («Հայոց տոնական համակարգը վերջին հարյուրամյակում /XXդ.–XXIդ. սկիզբ/») մանրագնին հետազոտությամբ առաջին անգամ ազգագրորեն բնութագրվել են հայոց երեք հանրապետություններում շրջանավոր տոնական համակարգերը: Այստեղ, ավանդական տոնական համալիրներում կատարված փոփոխություններին զուգընթաց, ներկայացվել են նաև ազգային-պետական և միջազգային նշանակության տոները: Արխիվային հարուստ նյութերի հիման վրա տրվել են Հայաստանի Առաջին հանրապետության նորամուտ տոները (Պառլամենտի օր՝ օգոստոսի 1, Անկախության օր՝ մայիսի 28, Աշխատավորների օր՝ մայիսի 1 և այլն), որտեղ առկա էին նաև վիճահարույց որոշակի խնդիրներ:

Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է հայոց խորհրդային տոնական համակարգը՝ ավանդական և նորամուտ տոների կենցաղավարման համատեքստում, բացահայտել հայոց

տոնական համակարգի փոփոխման ընդհանուր միտումները խորհրդային և հետխորհրդային փուլերում:

Մ. Մկրտչյանին հաջողվել է կատարել ավանդական տոների խորքային վերլուծություն, բացահայտել տոնական համակարգի փոփոխությունները, վերհանել դրանց կենցաղավարման սոցիալ-մշակութային առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Նա դիտարկել է տոների տարածումը պայմանավորող առանցքային գործոնները: Հատուկ քննության առարկա են տոնի մասնակիցների սոցիալական հատկանիշները (սեռ, տարիք, մասնագիտություն, կրթություն, ընտանիք, ազգակցական համակարգ և այլն), ինչպես նաև դրանց տարածումը պայմանավորող հիմնական գործոնները (փոխայցելություն, էթնիկ ինքնագիտակցություն, պատմական հիշողություն, հայրենիքի ընկալում, միջէթնիկ փոխհարաբերություն, ներէթնիկ խմբեր և այլն):

Աշխատանքի առավելություններից են հեղինակի կազմած աղյուսակները և գծապատկերները, որոնք թվերի լեզվով ցույց են տալիս տոների տարածվածության համեմատական պատկերը գյուղական ու քաղաքային բնակավայրերում 1980-1990-ական թթ. կտրվածքով, ինչպես նաև այդ շարժընթացը հետխորհրդային ժամանակահատվածում:

Աշխատանքն ունի նաև ռուսերեն և անգլերեն ամփոփումներ, որտեղ ըստ էության ներկայացված է տոների ընդհանրական պատկերը՝ առանցքային բաղադրիչների ողջ համալիրով ու ամփոփ եզրահանգումներով:

Հարուստ է գրքի աղբյուրագիտական հենքը. այն է՝ էթնոսոցիոլոգիական, դաշտային ազգագրական, բանագիտական և արխիվային նյութեր: Շատ ներկայանալի է հատկապես օգտագործված գրականության ցանկը: Ուշագրավ է մենագրության հավելվածը, որտեղ ներկայացված են հայկական երեք հանրապետությունների պետական տոնացույցները, ավանդական տոնածիսական երգ-խաղիկները և խորհրդային-բոլշևիկյան բանահյուսությունը: Իսկ թեմատիկ և բնութագրական նկարների շարքն իրապես ամբողջացնում է հայոց տոնածիսական մշակույթին նվիրված այս աշխատությունը:


Հիրավի, Մ. Մկրտչյանի այս գիրքը մեծ ներդրում է հայ ազգագրության բնագավառում: Աշխատանքն ունի գիտագործնական կարևոր նշանակություն: Այն կարող է ուղեցույց ծառայել հայոց տոնածիսական մշակույթին նվիրված դասընթացների և միջոցառումների կազմակերպման համար սցենարներ մշակելիս:

Գիրքը նախատեսված է ազգագրագետների, սոցիոլոգների, բանագետների, մշակութաբանների, կրոնագետների, պատմաբանների, լրագրողների և լայն հասարակայնության համար: Այն հանձնարարելի է նաև հայոց տոնածիսական մշակույթով հետաքրքրված անձանց. նրանք, ձեռքի տակ ունենալով երկարատև հետազոտությունների շնորհիվ ստեղծված այս գիրքը, հնարավորինս զերծ կմնան չհիմնավորված մեկնաբանություններից և փաստերի խեղաթյուրումներից:

Կարծում եմ՝ Սամվել Մկրտչյանի հաջողության գրավականն են մասնագիտական կրթությունը, գիտարշավների հարուստ փորձը, նաև այն հանգամանքը, որ նա աշխատանքային մկրտությունը ստացել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, որտեղ էլ լքջորեն սկսեց զբաղվել հայոց տոնածիսական մշակույթի հիմնախնդիրներով:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու



Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Քոսյանի «Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայաստանյան միջպետական պայմանագրերը» մենագրությունը խեթական սեպագիր տեքստերի դիվանում պահպանված և Խեթական տերության ու Հայաստայի միջև կնքված միջպետական երկու պայմանագրերի լիակատար հրատարակություն է: Գրախոսվող աշխատանքը դասական արևելագիտության հիմնական բնագավառներից մեկի՝ հին-արևելյան ուսումնասիրությունների բնութագրական օրինակ է: Պայմանագրերի տեքստերի գիտական հրատարակության համար պարտադիր պայման են հին (այլևս խոսակցական լեզու չհանդիսացող) լեզուների, այս դեպքում՝ խեթերենի և աքքադերենի իմացությունը, խեթական և աքքադական սեպագիր բարդ գրահամակարգերին պարտադիր տիրապետումը: Դա բացառիկ մասնագիտացում է, որին լիարժեք տիրապետում է աշխատության հեղինակը: Եվ պատահական չէ, որ

Հայաստանում հրատարակված նմանաբնույթ այլ ուսումնասիրությունների համեմատությամբ գրախոսվող աշխատության մեջ սեպագիր տեքստերի տառադարձումներն ու թարգմանությունը զբաղեցնում են աշխատանքի ողջ ծավալի հազիվ մեկ քառորդը: Աշխատանքի հիմնական մասը նվիրված է այդ տեքստերի գիտական քննությանը՝ տեքստաբանական ընդարձակ դիտարկումներով, պայմանագրերի պակասավոր հատվածների մեծաթիվ վերականգնումներով, տեքստերին տրված ծանոթագրություններով, գիտական կարծիքների լայն քննարկմամբ և պատմական հետնախորքով:

Աշխատության «Ներածության» մեջ մանրամասն ներկայացվում է խեթա-հայաստանյան պայմանագրերի տեքստերի կառուցվածքը և ուսումնասիրության պատմությունը, պայմանագրերի տեքստային կազմը՝ հիմնական տեքստերն ու տարբեր ժամանակներում ինքնագիր եղանակով հրատարակված կցաբեկորները, տեքստերի հնագրական-լեզվական առանձնահատկությունները, տեքստերի վերականգնման և տառադարձման սկզբունքները: Ընդ որում, այս բաժինը միանգամայն կարող է ծառայել իբրև ուղեցույց սեպագիր տեքստերի հրատարակության հայտ ներկայացնող մերօրյա սեպագրագետների համար:

Աշխատության առաջին գլուխը ներկայացնում է քննության հիմնական առարկա հանդիսացող խեթա-հայաստանյան երկու՝ պայմանականորեն **Սուպպիլուլիումաս I + Խուկկանա և Թուդխալիյաս III – Մարիյա + «Հայասայի ժողովուրդ»** անվանված պայմանագրերի ամբողջական հրատարակությունը: Տերմինաբանական խնդիրների շարքում առանձնանում է Հայասայի առաջնորդ կարգված Խուկկանայի appe/izzi- UR.SAG «շարքային հերոս» պայմանականորեն թարգմանվող շումերագրի նշանակության հարցի վերարծարծումը: Պայմանագրի տեքստի նոր հրատարակություններում այդ հատվածն ընթերցվում է որպես appezin UR.GE՝

«հետին, ստորին շուն» (հմմտ. շում. ur.gi(r)՝ «շուն»)՝: Եվ թեև նման ընթերցումը որոշ հետազոտողների՝ առավելապես զգայական մակարդակում առաջ է բերել անհամաձայնություն², սակայն, Խուկկանայի նախնական ցածր կարգավիճակը չի կարելի բացառել. Խուկկանան հիշատակվում է ընդամենը որպես մեկը «հայասացիների մեջ» (LÚ.MEŠ^{URU}Ja-ya-ša-ya... iš-tar-na): Հայասայի և Ազգիի առաջնորդներից միայն Աննիյասն է, որ խեթական արքա Մուրսիլիս II-ի այսպես կոչված «Տասնամյա տարեգրության» մեջ հանդես է գալիս որպես «Ազգի երկրի արքա» (LUGAL KUR^{URU}Azzi), թեև խեթական մեկ այլ տեքստում նա պարզապես անվանվում է «Ազգի երկրի կառավարիչ» (EN KUR^{URU}Azzi): EN տիտղոսը խեթական դպրության մեջ կարող էր նշանակել թե՛ «մեծամեծ», թե՛ «կառավարիչ» և թե՛, օրինակ, «հրամանատար»: Հետևաբար, վերը նշված նոր ընթերցման մեջ տեսնում ենք ցածր կարգավիճակ ունեցող անձի արտահայտություն: Թերևս պատահական չէ Խուկկանային հիշատակող տվյալ հատվածում խեթ. šarā dābhun «վերցրեցի, վեր բարձրացրի» արտահայտության կիրառումը³: Այստեղ հետաքրքիր կլինեք զուգահեռ անցկացնել «հավատարմության երդում» ներկայացնող խեթական KUB XXXVI 32 (i 8) տեքստում հիշատակված UR.TUR GIM-an՝ «ինչպես շնիկ»-ի հետ⁴: Աշխատանքը չի սահմանափակվում միայն խեթա-հայասական նշված պայմանագրերի հրատարակությամբ, այլև ընդգրկում է դրանց առնչվող խեթական դիվանի այլ տեքստերի հրատարակությունն ու մեկնաբանությունը՝ ընթերցողին ներկայացնելով պատմագիտական խնդիրների հնարավորինս ամբողջական պատկեր: Ողջունելի է, որ հեղինակը նպատակ է դրել առանձին հրատարակել նաև այդ տեքստերի համահավաքը:

Կարելի է երիցս շեշտել, որ աշխատանքը շարադրված է պատմական հարուստ հետնախորքի հիման վրա, որը, որպես առանձին բաժին, ներկայացված է նաև աշխատության երրորդ գլխում («Խեթա-հայասական փոխհարաբերությունները մ.թ.ա. XIV դարում»): Սա առավել է ընդգծում աշխատանքի թե՛ աղբյուրագիտական և թե՛ պատմագիտական նշանակությունը: Մեզ համար տեսանելի միակ խնդիրը կապված է Սուպալիլու-լիումաս I – Խուկկանան պայմանագրի հատվածներից մեկի վերականգնման հետ: Դեռևս աշխատության ներածության մեջ հեղինակը նշում է “Keilschrifttexte aus Boghazköi” մատենաշարի 50-րդ հատորում ինքնագիր եղանակով հրատարակված պայմանագրի տեքստի նոր, փոքր կցարեկորների մասին, որոնց հստակ տեղը մայր տեքստում պարզ չէ: Առանձին ենթավերնագրի տակ տրվում է նաև այդ և այլ հավանական կցարեկորների գիտական հրատարակությունը (թվով հինգ կցարեկոր): Միաժամանակ, նման

¹Քննարկման համար տե՛ս գրախոսվող աշխատության 42-43 և 137-138 էջերը, որտեղ և տե՛ս հղված գրականությունը: Այստեղ կարելի է հավելել նաև **de Martino S., Imperati F.** *Observations on Hittite International Treaties*, in: G. Wilhelm (Hrsg.), *Akten des IV Internationalen Kongresses für Hethitologie, Würzburg, 4.-8. Oktober 1999, StBoT 45, Wiesbaden, 2001:359-360* ուսումնասիրությունը:

² **Ղազարյան Ռ.**, «Խուկկանայի պայմանագիրը» որպես Հայաստանի պատմության դիվանագիտական փաստաթուղթ, Վէմ համահայկական հանդես, Է (ԺԳ) տարի, թ. 4 (52), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015:

³ **Cajanko M.** *I Took You Up, Hukkana, the Lowly Dog... An Introduction to Social Deixis in Hittite* (*Altorientalische Forschungen*, 2016, 43(1-2), 17-37).

⁴ **Hoffner H.A. Jr., Melchert H.C.** *A Grammar of the Hittite Language. Part I: Reference Grammar* (*Languages of the Ancient Near East, 1, Winona Lake, Indiana, 2008, 236 and n. 1*).

նոր կցաբեկոր է հայտնի Բեռլինի պետական թանգարանից Անկարայի հինանատոլիական քաղաքակրթությունների թանգարանին հանձնված Բողազքյոյի խեթական դիվանի տեքստերի շարքում⁵: 10-տողանոց այդ բեկորը կցվում է Մուպպիլուլիումաս I – Խուկկաննա պայմա-նագրի պահպանված առաջին պատճենի՝ «Ա տեքստ»-ին (= KBo V 3) և համապատասխանում է պայմանագրի նոր տեքստերից KUB XXVI 37 (ներառելով KUB XXIII 73-ը) + KBo XIX 44a տեքստի դիմային կողմի 3'-9'-րդ տողերին (պայմանագրի միացյալ տեքստի « 21-ի 76-83-րդ տողերը): Դա որոշ շտկումներ է ենթադրում արված տառադարձման և թարգմանության մեջ:

Մրան պետք է հավելել նաև նշված դիվանի տեքստերի շարքում պահպանված և ինքնագիր եղանակով հրատարակված ևս մեկ կցաբեկոր: Bo 9587 ինվենտարային համարը կրող այդ տեքստը խեթական արքա Մուրսիլիս II-ի՝ այսպես կոչված «Ընդարձակ տարեգրության» կցաբեկոր-ներից է և միանում է KUB XIV 17 տեքստին: Պակասավոր տեքստում հիշատակվում է Հայասայի՝ աղբյուրներից հայտնի վերջին կառավարիչ Աննիյան (A-NA (?) ^mAn-ni-i-a ...): Համաձայն պահպանված հատվածի՝ Աննիյան արշավել է դեպի Դանկուվա, ավարառության ենթարկել այն և ավարը տարել Հայասա: Նույն տեքստում հիշատակվում են նաև Բստի-տինա քաղաքի մարդիկ (LÚ.MEŠ ^{URU}!š-te-te-na-i-a-qa-mu-kán)⁶: Հետաքրքիր է, որ տեքստում խոսվում է խեթական արքայի՝ Աննիյասին հասցեագրած նամակի մասին՝ վերջինիս Դանկուվա ձեռնարկած արշավանքից հետո: Ակնհայտ է, որ նշված իրադարձությունները կապվում են Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրության» մեջ պահպանված տեղեկության հետ՝ խեթական արքայի կառավարման 7-րդ տարում նրա կողմից Տիբիյա երկրի նվաճումից հետո Ազգի երկրի արքա Աննիյասի մոտ սուրհանդակ և նամակ ուղարկելու մասին⁷: Եվ թեև նշված կցաբեկորն ու Մուրսիլիս II-ի տարեգրությունը հեղինակի քննարկման առարկան չէին, սակայն Հա-յասայի կառավարիչներին նվիրված և Աննիյասին վերաբերող բաժնում այդ մասին կարող էր խոսվել:

Անշուշտ, Մրամ Քոսյանի «Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմա-նագրերը» աշխատությունը արդի հայագիտության մեջ մեծ արժեք ունի. նրանում քննարկված հարցերը՝ պատմություն և պատմական աշխարհագրություն, լեզվաբանություն, անվանաբանություն և այլն, ուղենշային են լինելու հին հայկական ուսումնասիրությունների բնագավառում՝ Հայկական լեռնաշխարհի խորքային պատմությունը վերհանելու տեսանկյունից: Մենք գործ ունենք (չենք խուսափի դա շեշտելուց) անգերազանցելի ուսումնասիրության հետ:


ԳՐԵԿՅԱՆ Ե. Հ.

Պատմական գիտությունների դոկտոր

⁵ Soysal O. *Unpublished Bo-Fragments in Transliteration I (Bo 9536 – Bo 9736)*, Chicago Hittite Dictionary Supplements · 2, Chicago, Illinois, 2015, 137-138 (Bo 9673).

⁶ Նույն տեղում, 54-55 (Bo 9587).

⁷ Հայերեն թարգմանության համար տե՛ս Ղազարյան Ռ., Մուրսիլիս II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Ե., 2013, էջ 55:



Աշխատությունը նվիրված է ռազմական, հասարակական, քաղաքական և պետական ակնավոր գործիչ, ՀՅԴ առաջին սերնդի ներկայացուցիչ Համազասպ Խաչատուրի Մրվանձոյանցի կյանքի և գործունեության ամբողջական և համակարգված լուսարանմանը:

Տարիներ շարունակ Հայոց Ազատամարտի մոտ 40-ամյա պատմության ուսումնասիրությունը Մայր հայրենիքում եղել է փականքների տակ, ենթարկվել գրաքննության և անարժան գնահատականի: Ազատամարտի մեծերը ներկայացվել են որպես ազգայնականներ, հակախորհրդային գործիչներ, իմպերիալիզմի գործակալներ, «կեղծ» հայրենասերներ, որով էլ ավելի է մեծացել հարցի նկատմամբ եղած հետաքրքրությունն ուսումնասիրողների շրջանում: Մերժողական այդ վերաբերմունքից զերծ չի մնացել նաև Համազասպը: Նա Հայոց Ազատամարտի անդաստանում աչքի է ընկել հայ գորականի անբասիր վարքով, մտքի ճկունությամբ ու հեռատեսությամբ:

Պատմագետների առջև այսօր դրված է Հայոց Ազատամարտի նվիրյալների կյանքի, գործունեության և միջավայրի բացահայտումը, որը միշտ էլ արդիական է և համահունչ ինքնուրույն պետականություն ունեցող ժողովրդի պատմությանը: Իսկ Համազասպի մասին ամբողջական աշխատությունը ոչ միայն լրացնում է հայրենական պատմագրության մեջ տասնամյակներ շարունակ թողնված բացը և ժողովրդին վերադարձնում Ազատամարտի սիրված հերոսներին մեկին, այլև հարստացնում է նաև Մանդյանց-Մրվանձոյանցների բազմաշնորհ տոհմի պատմությունը:

Հարկ է նշել, որ հետազոտողի համար որևիցե անհատի (կամ տվյալ պարագայում հայ ռազմաքաղաքական և պետական նշանավոր գործիչին) անդրադարձնալն ունի իր դյուրին և բարդ կողմերը: Դյուրին այն առումով, որ հրապարակի վրա առկա են վիթխարի գրականություն, պարբերական մամուլի և արխիվային փաստագրերի անհատակ նյութեր, հաճախ իրարամերժ, հակասական և դարձյալ որոնումների տեղիք տվող, որոնց ուսումնասիրումը բոլոր դեպքերում լայն հնարավորություններ է ընձեռում իրապես վերարտադրելու ուսումնասիրման խնդիր դարձած ժամանակահատվածը: Եվ բարդ այն առումով, որ կենսագրական բնույթի աշխատությունները պետք է գրված լինեն այդ դարաշրջանի դեպքերի ու իրադարձությունների առձայնությամբ և, որ ամենակարևորն է, գրված լինեն վերկուսակցական դիրքերից, չունենան միտումնավորություն և տվյալ քաղաքական գործչին հանիրավի մեծարելու ձգտում: Հակառակ պարագայում կատարված աշխատանքը կվերածվի «վարք սրբոցի»: Անհատին հարկավոր է գնահատել տեղին և ժամանակին, առանց ավելորդ պճնագարդության: Դրանից կշահի միայն պատմագրությունը և ստվեր չի նետվի Ազատամարտի մյուս հերոսների կատարած ազգօգուտ

գործերի վրա: Հետևաբար, ողջունելի է անաչառ ամեն մի փորձ, որն օգնում է ամբողջացնելու հայոց Ազատամարտի հերոսների դերն ու նշանակությունը մեր պատմության մեջ:

Պրոֆ. Գ. Ստեփանյանին հաջողվել է շրջանցել այդ դժվարությունները և հասարակայնության սեփականությունը դարձնել լրջմիտ և հիմնարար մի աշխատանք:

Աշխատության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են 1873-1921 թթ. պատմական այն իրադարձությունները, որոնք անմիջականորեն առնչվում են Համազասպի կյանքին և գործունեությանը:

Հեղինակը աշխատությունը ստորաբաժանել է 7 գլուխների, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է 48-ամյա Համազասպի կյանքի և գործունեության այս կամ այն ժամանակաշրջանին՝ սկսած մանկությունից և պատանեկությունից մինչև հայ-թաթարական ընդհարումների տարիները, (1905-1906 թթ.), բանտարկության, քստրի և դեգերումների շրջանը (1907-1914 թթ.), ապա՝ Առաջին աշխարհամարտի (1914-1916 թթ.), Բաքվի նահանգում և Դադստանի մարզում ծավալած կռիվների (1918 թ.) և մինչև կյանքի վերջին շրջանի իրադարձությունները (1921 թ.):

Ընթերցողի աչքին Համազասպը, որպես գաղափարի և գործի մարդ, վեր է հանում հասարակական և քաղաքական լարված ու բախումնալի իրադարձությունների մեջ: «**Գործունեությունը հայ-թաթարական ընդհարումների շրջանում**» խորագրով գլխում Գ. Ստեփանյանը վերհանում է Համազասպի հեղափոխական գործունեության վաղ շրջանը՝ նախ որպես Խաչենի 1905 թ. օգոստոս-նոյեմբերի ինքնապաշտպանության ղեկավարի և ապա՝ դեպքերի ազդող ներկայությունը Գանձակում (1905թ. նոյեմբեր- 1906 թ. հունվար), Արցախում (1906 թ. հունվար-հուլիս) և Թուրքեստանում (1906 թ. վերջ – 1907 թ. գարուն):

Աշխատության **III գլուխն** ամբողջությամբ նվիրված է Համազասպի բանտարկությանը (Թիֆլիսի Մետեխի, Գանձակի, Դոնի Ռոստովի, Նովոչերկասկի բանտերում), դատավարությանը (որն անցկացվում է Սանկտ-Պետերբուրգում), Սիբիր նրա քստրին (1907 թ. օգոստոսից մինչև 1912 թ. վերջը.) և նրա դեգերումներին՝ Եվրոպայում, Եգիպտոսում և Կ. Պոլսում (1912 թ. վերջ– 1914 թ. օգոստոս):

Առանձնահատուկ կարևորություն ունի մենագրության IV գլուխը (որն ընդգրկում է Առաջին աշխարհամարտի շրջանը՝ «**Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ճակատում**»): Հեղինակը նախ բացահայտում է Համազասպի՝ որպես կամավորական III ջոկատի հրամանատարի գործունեությունը (1914 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), նրա տպավորիչ ջանքերը Արարատյան գնդի կազմում (1915 թ. ապրիլ-մայիս), ապա մասնակցությունը Վանի շրջանի վերագրավման, Խիզանի, Բաղեշի համար մղված մարտերին և Ալաշկերտի շրջանում՝ որպես պաշտպանության ղեկավարի (1915 թ. օգոստոս – 1917 թ. հոկտեմբեր):

«**Բաքվի հերոսամարտի հորձանուտում**» վերնագրված գլխում հանգամանորեն լուսաբանվում է Համազասպի դերակատարումը Բաքվում, Ղուբայում և Բաքվի հերոսամարտում: Կարելի է առանձնացնել հեղինակի ջանքերի արդյունավետությունը՝ Համազասպի գործունեության համազգային բնույթը հաստատելու և ցուցադրելու տեսակետից:

Գ. Ստեփանյանն առանձնահատուկ ջանք ու եռանդ է ծախսել աշխատության «**Գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին**» և «**Հայհեղկումի հանցավոր**

քաղաքականության գոհր» գլուխներն ի մի բերելու և ամբողջացնելու համար: Դրանք ընդգրկում են գորահրամանատարի կյանքի մայրամուտին շրջանը՝ նախընթաց գործունեությամբ՝ Թիֆլիսում, Երևանում, Նոր Բայազետի գավառում, ինչպես նաև նրա ձերբակալությունը և կյանքի վերջին՝ 68 օրերը Երևանի կենտրոնական բանտում:

Անկախ աշխատության պատկառելի ծավալից շարունակ զգացվում է, որ հեղինակը ասելիք ունի, ընդամին, հիմնավոր և անհրաժեշտ: Եվ այս իմաստով կարևոր են գրքի լուսանկարները և հավելվածները, որոնց մեջ տեղ են գտել Սրվանձտյանց տոհմագրությունը, Համազասպի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, նրան նվիրված աշուղ Ջիվանու երգը, Համազասպի դատական գործի արձանագրությունները, իր նամակները, հեռագրերը և այլն:

Աշխատության աղբյուրագիտական հենքն ընդգրկում է փաստառատ նյութի լայն մի շրջանակ, որն ամբողջացնում է ազատագրության համար պայքարի ընդհանուր համապատկերը: Միայն օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը կազմում է 50 էջ: Բարեխղճորեն հաշվի առնելով պատմագիտական մտքի ձեռքբերումներն այդ ուղղությամբ, Գ. Ստեփանյանը հայտնաբերել, ուսումնասիրել, գիտական շրջանառության մեջ է դրել և համակարգել վավերագրեր ՀԱԱ-ից, Մատենադարանից, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, ՀՅԴ կենտրոնական (Բոստոն), ԹԼՀԴ-ի, ՀԹԹԼԼ-ի արխիվներից, Հայաստանի պատմության պետական թանգարանից, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից, ՀՅԴ պատմության թանգարանից, հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հրատարակված տպագիր սկզբնաղբյուրներ, հուշեր, ուսումնասիրություններ, պարբերական մամուլի նյութեր և համացանցային կայքէջեր՝ ընդհանուր առմամբ մոտ 900 միավոր, որը աշխատանքին տալիս է գիտական կշիռ: Նա նորովի դիտարկմամբ հիմնարար կերպով շոշափել է Համազասպ զինվորական-պետական գործչի հսկայածավալ և նպատակադիր ազգային գործունեությունը, որը հայրենական պատմագրության մեջ առաջին փորձն է:

Աշխատության մեջ դեպքերն ու երևույթները ներկայացված են պատճառական կապերով և փոխազդեցություններով, որոնց մեջ հետզհետե ուրվագծվում և առաջնային է դառնում անհատը՝ Համազասպը՝ իր խորապես մարդկային նկարագրով միշտ նվիրված իր ժողովրդին և նրա հետ: Ունենալով գիտաքաղաքական, իմացական և գործնական նշանակություն՝ աշխատությունը գրված է պատմաբանական բարձր մակարդակով: Ուշադրության են արժանի հեղինակի հիմնավորված և տրամաբանված եզրահանգումներն ու փաստարկված, ճիշտ գնահատականները, որոնք հույժ այժմեական են և հակադարձում են գիտական շատ մոտեցումների:

Աշխատությունն աչքի է ընկնում հղկված գիտական ոճով, բայց կարելի էր խուսափել լեզվական և ոճական որոշ շեղումներից, որոնք, թվում է՝ անխուսափելի են նման ծավալի և ընդգրկումների պարագայում:

Բարձր գնահատելով և ըստ ամենայնի արժևորելով Գ. Ստեփանյանի կատարած արդյունավետ, բայց և դժվարին աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել, որ այս մենագրությունը ծանրակշիռ և լուրջ ներդրում է հայագիտության բնագավառում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ. ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ



Այսօր առավել քան երբևէ արդիական է Պատմահոր՝ «Բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի» խորիմաստ խոսքը, որի կարևորությունը քաջ գիտակցելով է իր գործունեությունը ծավալել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Գուրգենի Դոլուխանյանը: Դրա ապացույցը նրա գիտամանկավարժական վաստակն է:

Հոբելյանական 2017 թվականը վաստակաշատ հայագետը դիմավորում է շուրջ 30 ուսումնասիրություններով և 400-ից ավելի հոդվածներով:

Աելիտա Դոլուխանյանին բնութագրում են սեփական ժողովրդի պատմության սթափ ու լայնախոռոչ գնահատումը, այդ ճանաչողությունից բխած կենսահաստատ լավատեսությունը, արարելու բերկրանքն ու սեփական անձի նկատմամբ խիստ պահանջկոտությունը: Դրանք հրաշալի դրսևորվում են նրա թե՛ բանասիրության և թե՛ դասախոսական աշխատանքի, ուսում-

նական գործընթացի կազմակերպման ասպարեզներում:

Աելիտա Դոլուխանյանը ծնվել է 1942 թ. փետրվարի 14-ին Երևանում, ճանաչված պետական գործիչ Գուրգեն Դոլուխանյանի ընտանիքում: Գերազանցությամբ ավարտել է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1959 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվական ֆակուլտետը, որն ավարտել է 1964 թ. գերազանցությամբ:

1964-68 թթ.՝ ասպիրանտուրայի տարիներին, նշանավոր հայագետ Ասատուր Մնացականյանի գիտական ղեկավարությամբ, ապագա հայագետը մասնագիտանում է հին և միջնադարյան գրականության գծով: Գիտական ղեկավարը Ա. Դոլուխանյանի համար եղել է և՛ դպրոց, և՛ ուսուցիչ՝ օժտված զարմանալի ներքնատեսությամբ և հայոց ազգային մշակույթի խոր ըմբռնումով:

Գիտական թեմայի ինքնուրույն որոնումները երիտասարդ ուսումնասիրողին մղում են դեպի միջնադարի հոգևոր արժեքները, և արդյունքը 1972 թ. պաշտպանած «Ներսես Մոկացի» թեկնածուական ատենախոսությունն է:

1969-ից, դասախոսական աշխատանքին զուգահեռ, նա մեծ պատասխանատվությամբ վարում է ֆակուլտետին կից մասնագիտացված գիտխորհրդի քարտուղարի պաշտոնը:

1987 թ. Ա. Դոլուխանյանը լույս է ընծայում «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունը (1989 թ. այն պաշտպանեց որպես դոկտորական ատենախոսություն), որը ոչ միայն բարձրացնում է գիտական կարևորության հարցեր և առաջարկում լուծումներ, այլև հայ միջնադարյան գրականությունը ներկա-յացնում է որպես համաշխարհային գրականության անկապտելի մաս՝ հիմք դառնալով նոր ուսումնասիրությունների համար: Հոգու և մարմնի խնդրին առնչվող հայ տեսական, փիլիսոփայական, ինչպես նաև բանահյուսական և հեղինակային բանաստեղծական ողջ նյութը քննվում է պատմական զարգացման փուլերի և տարբեր մշակույթների համանման դրսևորումների գույզահեռներում: Ուսումնասիրությունը համարժեք արձագանք գտավ՝ արժանանալով մասնագետների բարձր գնահատականին: Գրքի արդիականության վկան է 2008 թ. լրամշակված, ռուսերեն թարգմանությունը («Проблема души и тела в средневековой армянской поэзии») մոսկովյան գրաքննադատության դրվատելի արժևորմամբ: Օրինաչափ էին գիտնականի բանասիրական, ձեռագրագիտական և բնագրագիտական պրպտումները. նա կազմել և հրատարակել է Ներսես Մոկացու (1975, 1985) և Խաչատուր Կեչառեցու (1988) երկերի քննական բնագրերը՝ գիտական առաջաբաններով, ծանոթագրություններով և շահեկան ցանկերով:

2009 թ. Ա. Դոլուխանյանը հրատարակում է «Ներսես Մոկացի» խորագրով ուսումնասիրությունը, և Ներսես Մոկացին՝ որպես եկեղեցական եռանդուն ու ակտիվ գործիչ, շնորհալի բանաստեղծ, իր արժանի տեղն է գտնում միջնադարի հայ մյուս հեղինակների կողքին: Գրքում զետեղված մատենագիտական-ձեռագրագիտական հարուստ նյութը, գիտական վարկածները, ճշգրտված, խմբագրված և նորահայտ տեղեկությունները պարարտ հող են նախապատրաստում հայ միջնադարի հարցերով զբաղվողների համար:

Օտար լեզուներին ազատ տիրապետելը, լայնահայաց մտտեցումը տարբեր մշակույթներին և ամբարած գիտական վիթխարի պաշարը որոնող գիտնականին կանգնեցնում են նոր խնդիրների լուծման առաջ, որի արդյունքն է 2000 թ. Ա. Դոլուխանյանի հիմնած, Եվրոպացի հայագետներե մատենաշարը: Հեղինակը սկիզբ է դնում հայագիտության մի նոր ճյուղի խորքային ուսումնասիրությանը և գիտական աշխարհին ներկայացնում հայ մշակույթին անուրանալի նպաստ բերած եվրոպացի հայագետների գիտական ժառանգության մանրամասն քննությունը: «Ֆելիքս Նևր և հայ քրիստոնեական մատենագրությունը» (2001), «Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ» (2002), «Վիկտոր Լանգլուան հայագետ» (2003), «Էդուարդ Դյուլորինեն հայագետ» (2004), «Ֆրեդերիկ Ֆելդին հայագետ» (2008), «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» (2011), «Սեն Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր» (2014)՝ եվրոպացի հայագետների գիտական վաստակն ամբողջացնող ուսում-նասիրություններն այսօր ընթերցողի սեղանին են՝ որպես հեղինակի տարիների մտորումների և տքնաջան աշխատանքի արդյունք: Հայ ժողովրդին և նրա պատմությանը տված եվրոպացի հայագետների գնահատականներով նաև օտարալեզու ընթերցողի համար տեսանելի՝ մեր մշակույթը կանգնում է աշխարհի հնագույն մշակույթների կողքին: Այսօր խիստ անհրաժեշտ այս մատենաշարը ուսումնասիրողին գիտական հարուստ նյութ է տալիս և արժանի է օտար լեզուներով թարգմանվելու:

«Եվրոպացի հայագետներ» մատենաշարն է լրացնում Ա. Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (2005) աշխատությունը՝ նվիրված գրերի գյուտի 1600-ամյակին:

Հայ գրականության և տեսության խնդիրները նույնպես անմասն չեն թողել հեղինակին: Դրանք արծարծված են գրականագետի, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը (2004) ուսումնասիրության մեջ: Ա. Դոլուխանյանի նախաձեռնությամբ և նրա նախաբանով (նաև ռուսերեն) հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հրատարակեց «Վալերի Բրյուսովի “Поэзия Армении” ժողովածուն և հայ հին ու միջնադարյան քնարերգությունը» հոդվածների ժողովածուն (2016):

Բազմաթիվ գիտաժողովներին մասնակցելը՝ Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում, շրջագայություններն արտասահմանյան հայտնի գրադարաններում, թանգարաններում և տեսարժան վայրերում, օտար լեզուների իմացությունը թույլ են տալիս հետաքրքրասեր գիտնա-կանին այլ մշակույթների զուգահեռների միջոցով ներկայացնել հայ մշակույթի միջազգային արժեքը. սա է, կարելի է ասել, Ա. Դոլուխանյանի գործունեության ողնաշարը: Նա այլ մշակույթների ուսանելի արժեքները մեկնաբանում է թե՛ գիտական, թե՛ ճանաչողական և տեղեկատվական իր հոդվածներում՝ անցկացնելով սեփական մշակույթի բովով: Այդ զուգահեռների յուրօրինակ արտահայտությունն են հեղինակի «Համընդհանուր իմաստախոսություններ» գիրքը (2012) և ամենատարբեր հոդվածները. բանահյուսական ժանրային զուգահեռներով դիտարկվում է «Ավեստայի» «Վենդիդատ» գրքի XIII գլուխը, բացահայտվում են Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի գրական նոր աղբյուրները՝ նաև Մոսկվայում 2010 թ. լույս տեսած ժողովածուում:

Հայ գրականության տարբեր դրսևորումներն անաչառ քննելու առաքելությունը Ա. Դոլուխանյանն իրականացնում է նաև այլ ասպարեզներում: Նրա հեղինակությամբ առաջին անգամ գիտական առանձին ուսումնասիրության նյութ են դարձել Շարլ Ազնավուրի, Ալիսիա Կիրակոսյանի, Գրիշա Դարբինյանի, Նորայր Ադալյանի ստեղծագործությունները:

Գրականագետի խորաթափանց և զգայուն վերաբերմունքը դրսևորվում է նոր հրատարակված, գիտական արժեք ունեցող ուսումնասիրությունների գրախոսականներով և տարբեր գիտնականների գործունեությունը գնահատող հոդվածներով: Ա. Դոլուխանյանը կատարում է նաև թարգմանություններ ռուսերենից, ֆրանսերենից և անգլերենից. նրա հետաքրքրության ուղեծրում են թե՛ օտարալեզու հեղինակներն ու հայ գրական կապերը, թե՛ գիտական կարևորություն ունեցող աշխատությունները և թե՛ հայագիտության համար կարևոր աղբյուրները: Գիտական շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրին Ավեստայի «Վենդիդատ» գրքի հատվածական թարգմանությունները ֆրանսերենից, նա բնագրից թարգմանել է Պ. Ռոնսարի, Թալի դը Մոլենի, Մ. Քոզեմի, Ջ. Քոլինգի, Ռ. Դոմենթի երկերից:

1990-ից Ա. Դոլուխանյանը պրոֆեսոր է և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի, նախ, հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի, ապա՝ 2013-ից, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Դասախոսական երկար տարիների նրա աշխատանքի տեսանելի կողմը դրսևորվում է նաև ուսանողների կյանքում ունեցած կարևոր

դերով: Ա. Դոլուխանյանի ղեկավարությամբ մեկ տասնյակից ավելի ասպիրանտներն ու հայցորդները զբաղվել և զբաղվում են գիտական հնչեղություն ունեցող և նորություն բերող թեմաներով՝ իրականացնելով նորանոր ծրագրեր ու ձեռնարկներ:

Անձնական փորձն ու ուսանողին օգտակար լինելու ցանկությունը Ա. Դոլուխանյանին մղեցին ստեղծելու նաև ապագա բանասեր-ուսուցչի համար խիստ կարևոր ձեռնարկներ. ուսանողի սեղանին են «Հայ գրականության պատմություն (Հայ հին և միջնադարյան գրականություն)» (2006), «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» (2006), «Հայ գրականության տեսություն» (2006), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (2008), «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից» (2009), «Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը» (2012), «Գեղարվեստական գրականության վերլուծության մի քանի սկզբունքներ» (2013) դասագրքերը:

Սկզբունքային և անաչառ գիտնական-մանկավարժը տարիներ ի վեր վարել է հանրապետական դպրոցական օլիմպիադաների՝ հայ գրականության գծով գործող նախագահի պաշտոնը մի առանձնակի հոգատարությամբ ու պատասխանատվությամբ՝ իր շուրջը համախմբելով շնորհալի մանկավարժների և գիտնականների:

Տաղանդավոր մարդու ունակությունները սովորաբար դրսևորվում են տարբեր կերպով, և բնականաբար, հանապազ պրպտող գիտնականի ակտիվությունը չի սահմանափակվում ՀՊՄՀ-ով. Ա. Դոլուխանյանը Գիտությունների ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսի» և «Գրական թերթի» խմբագրական խորհուրդների անդամ է, 2001-ից՝ գրողների միության անդամ, ՀՊՄՀ-ի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտական խորհուրդների անդամ, պետական մրցանակներ շնորհող Ա. Աբրահամյանի հանձնաժողովի նախագահ:

Ա. Դոլուխանյանի գիտամանկավարժական, հասարակական գործունեությունը գնահատվում է ըստ արժանվույն. 2003 թ. նա պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, 2007 թ.՝ «Ֆ. Նանսենի ոսկե հուշամեդալով», ՀԳՄ-ի «Գրական վաստակի համար» և ՀՊՄՀ-ի «Խաչատուր Աբովյան» մեդալներով: 2008 թ. «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ. մենագրության համար արժանացել է ՀԳՄ-ի «Նիկոլ Աղբալյան» մրցանակին: 2012 թ. Ա. Դոլուխանյանին շնորհվել է ՀՀ ԿԳՆ-ի «Ոսկե հուշամեդալը», ինչպես նաև ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչում: Նրա գիտական վաստակը բարձր է գնահատվել, և գրականագիտության բնագավառում ունեցած մեծ ներդրման համար 2010 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. Դոլուխանյանը նկատել է՝ հայագիտությունը նվիրյալների բնագավառ է, բնագավառ, որ գրկաբաց ընդունեց հե՛նց իրեն: Այսօր վաստակաշատ գիտնականը եռանդուն շարունակում է հայագիտության մեջ բացած իր ինքնատիպ ուղին: Աելիտա Դոլուխանյանին մաղթում ենք նոր մտահաղացումներ և ազգանվեր գործունեության երկար ու բեղուն տարիներ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Լ. Վ.

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՆՐԱՀԱՅՏ ՇԵՔՍՊԻՐԱԳԵՏԸ. ԲՅՈՒՐԱԿՆ ՉԵՐԱԶ-ԱՆՊՐԵԱՍՅԱՆ



Իր ծննդյան 90-ամյակը բոլորեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Բյուրակն Վահանի Չե-րազ-Անդրեասյանը:

Ծնվել է 1927 թ. հունվարի 25-ին Լենինականում, ծառայողի ընտանիքում: 1934-ին Բ. Չերազ-Անդրեասյանն ընդունվում է Լենինականի պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանը: Ինչ իմանար երաժշտական հնչյունների կախարդական աշխարհում առաջին քայլերը կատարող աղջնակը, որ դրանից տասնամյակներ անց՝ 1981-2008 թվականներին պիտի «Հայոց լեզու» առարկա դասավանդեր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1996 թ. ստանար դոցենտի, իսկ 1999-ին՝ պրոֆեսորի կոչում: Ինչ իմանար, որ իր հարազատ Ար-

վեստի ինստիտուտում աշխատող երիտասարդ սերնդի երաժշտագետներից շատերը, այդ թվում՝ ավագ գիտաշխատողներ, արվեստագիտության թեկնածուներ Լիլիթ Արտեմյանը և Մարիաննա Տիգրանյանը, իր նախկին ուսանողներն են և այսօր էլ ջերմությամբ ու կարոտով են հիշում «Հայոց լեզվի» իրենց կոնսերվատորիական դասերը...

Դա հետագայում: Իսկ մինչ այդ...

Իսկ մինչ այդ՝ 1938-ին Անդրեասյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան, և Բ. Չերազ-Անդրեասյանն ուսումը շարունակում է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում:

1944-ին ավարտելով դպրոցը՝ Բ. Չերազ-Անդրեասյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևմտաեվրոպական գրականության և անգլերեն լեզվի բաժինը, որն ավարտում է 1949-ին՝ ստանալով բանասերի որակավորում: Ի դեպ՝ Երևանի պետական համալսարանը բախտորոշ նշանակություն ունեցավ Բ. Չերազ-Անդրեասյանի ոչ միայն հետագա գիտաստեղծագործական, այլև անձնական կյանքում: Այստեղ է նա գտնում իր «երկրորդ կեսին»՝ հետագայում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն, լեզվաբան, գրականագետ ու մատենագետ Ռաֆայել Իշխանյանին (1922-1995), ում հետ նրանց կենաց ներդաշնակ զուգերգը շարունակվեց 48 տարի, և ում անունով հետագայում անվանակոչվեց Երևանի թիվ 153 հիմնական դպրոցը:

1950-ին Բ. Չերազ-Անդրեասյանն աշխատանքի է անցնում Երևանի Սպանդարյանի շրջանի մասսայական գրադարանում՝ որպես գրադարանավար, իսկ այնուհետև աշխատում Հայպետհրատում և թիվ 6 տպարանում՝ որպես սրբագրիչ:

1958 թ. Բ. Չերազ-Անդրեասյանն աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ համակարգում, նախ ՀԽՍՀ ԳԱ հրատարակչությունում՝ որպես խմբագիր, իսկ մեկ տարի անց տե-

դափռվում ԳԱ «Պատմա-բանասիրական» հանդեսի խմբագրություն՝ որպես ավագ գիտաշխատող:

1964-ի ապրիլի 23-ին, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի տոնակատարության ժամանակ, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի նախաձեռնությամբ իր իսկ անձնական գրադարանում եղած Շեքսպիրի ստեղծագործությունների ու նրա մասին ուսումնասիրությունների (68 անուն) հիման վրա Երևանում ստեղծվում է աշխարհում չորրորդ շեքսպիրյան գրադարանը, որի գլխավոր նպատակն էր Հայաստանում Շեքսպիրի երկերի, նրա մասին ստեղծված ծավալուն գրականության, շեքսպիրյան թատերգությունների հայերեն թարգմանությունների և բեմադրությունների ուսումնասիրությունը:

1966-ին Արվեստի ինստիտուտին առընթեր կազմակերպվում է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնը՝ Ռուբեն Զարյանի ղեկավարությամբ, որտեղ լրջորեն սկսում են ուսումնասիրվել մեզանում Շեքսպիրի ստեղծագործական ժառանգության յուրացման խնդիրները: Կենտրոնի նպատակներից էր ամբողջացնել շեքսպիրյան երկերի հայերեն թարգմանությունները, նախապատրաստել ու հրատարակել դրանց լիարժեք ժողովածուն: Շեքսպիրագիտական հայկական կենտրոնի թարգմանչական և գիտահետազոտական խմբերը զբաղվելու էին Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությամբ: Կենտրոնում աշխատելու են հրավիրվում Նշան Մուրադյանը, Էլեոնորա Վարդանյանը, Ռուզան Մարգունին, Անելկա Գրիգորյանը, Աիդա Ֆրունջյանը, Վարդուհի Բուլուխյանը և Անահիտ Բեքարյանը:

Ահավասիկ, 1965 թ. մայիսին ԳԱ արվեստի ինստիտուտի նոր հիմնադրվող Շեքսպիրագիտության հայկական կենտրոնում աշխատանքի է անցնում նաև Բ. Չերազ-Անդրեասյանը՝ սկզբում որպես մատենագետ, իսկ երեք տարի անց՝ 1968-ին՝ որպես կրտսեր գիտաշխատող: Այսուհետ հարազատ գիտական օջախի հետ է կապվում նրա գիտաստեղծագործական կյանքի շուրջ քառորդ դարը:

Հայկական շեքսպիրագիտական կենտրոնի հիմնադրման օրից ի վեր Բ. Չերազ-Անդրեասյանը իբրև գիտքարտուղար՝ իր ակտիվ մասնակցությունն է բերել Շեքսպիրյան գրադարանի կազմակերպման, ինչպես նաև հայկական շեքսպիրյան յոթհատորյա տարեգրքի՝ «Շեքսպիրականի», հրատարակման գործին, որին աշխատակցել են շեքսպիրագետներ, գրականագետներ, արվեստաբաններ, թարգմանական տեսության մասնագետներ, ինչպես նաև դերասաններ ու գրողներ Հայաստանից և արտասահմանյան մի շարք երկրներից:

Շեքսպիրագետ-հետազոտողի գիտական ուսումնասիրությունների ոլորտում են Շեքսպիրի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության մի շարք հարցեր, ինչպես և շեքսպիրագիտական նոր և նորագույն գրականությունը: Բ. Չերազ-Անդրեասյանը հատկապես խորանում է Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունների պատմության հետ կապված խնդիրների մեջ: Նա կազմում է ու իր առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակում շեքսպիրյան երկերի անտիպ թարգմանություն-

ների մի քանի բնագրեր, այդ թվում՝ «Վինձորի ուրախ կանայք» կատակերգության ու սոնետների՝ հայ նշանավոր գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի թարգմանությունները և այլն:

Բ. Չերագ-Անդրեասյանը ծանոթագրել է Շեքսպիրի քրոնիկներից «Հենրի 4-րդ»-ի հայերեն առաջին հրատարակությունը, մանրամասն ծանոթագրություններով հրատարակել է հայ շեքսպիրագիտության անհայտ նյութեր, ինչպես նաև «Ռիչարդ 3-րդ»-ի թարգմանության Վ. Սուրենյանցի առաջաբանը, Վ. Սուրենյանցի նամակները դերասան Արամ Վրույրին և այլն:

Բ. Չերագ-Անդրեասյանի գիտական հետաքրքրությունների առանցքում են եղել Շեքսպիրի «Սոնետների» ուսումնասիրությունը և դրանց հայերեն թարգմանությունները:

1975 թ. Բ. Չերագ-Անդրեասյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Շեքսպիրի սոնետների հայերեն թարգմանությունները» թեմայով և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Իսկ նրա՝ Շեքսպիրի բոլոր սոնետների տողացի թարգմանությունների հիման վրա ստեղծվում են դրանց՝ Գևորգ Էմինի գեղարվեստական թարգմանությունները:

Բյուրակն Չերագ-Անդրեասյանը մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է՝ «Շեքսպիրական» հայկական շեքսպիրագիտական տարեգրքերում 1966-1985 թթ. հրատարակվել են նրա «Վ. Սուրենյանցը Շեքսպիրի սոնետների թարգմանիչ» (1966, գիրք 1-ին), «Վ. Սուրենյանցը Շեքսպիրի կատակերգության թարգմանիչ» (1967, գիրք 2-րդ), ««Հավելտը» Ռուբեն Մամուլյանի խմբագրությամբ» (1967, 2-րդ գիրք), «Շեքսպիրի 66-րդ սոնետը և նրա հայերեն թարգմանությունները» (1970, գիրք 3-րդ), «Փափագյանը՝ թարգմանիչ» (1974, գիրք 4-րդ), «Վահան Թեքեյանը՝ շեքսպիրյան սոնետների թարգմանիչ և 73-րդ սոնետի հայերեն թարգմանությունները» (1975, գիրք 5-րդ), «Ռիչարդ 3-րդ»-ի Վ. Սուրենյանցի կատարած թարգմանության առաջաբանը» (1975, գիրք 5-րդ), ««Ռոմեո և Ջուլիետի» Մասեհյանի թարգմանության երկու տարբերակները» (1980, գիրք 6-րդ), «Շեքսպիրի սոնետները հայ մտքի գնահատմամբ» (1985, գիրք 7-րդ):

Իսկ 1981-ին տպագրված նրա «Շեքսպիրը հայերեն» գրքույկն ամփոփում է Շեքսպիրի երկերի հայերեն հրատարակությունների և հայ հեղինակների Շեքսպիրի մասին գրքերի մատենագիտությունը:

1985 թ. օգոստոսի 16-ից մինչև 1989 թ. սեպտեմբերի 18-ը Բ. Չերագ-Անդրեասյանը կատարել է ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական քարտուղարի պարտականությունները, իսկ 1989 թ. որպես ավագ գիտաշխատող շարունակել աշխատել Շեքսպիրագիտության կենտրոնում:

Ջերմորեն շնորհավորելով մեր գործընկերոջը մեծ հոբելյանի կապակցությամբ, մաղթում ենք նրան քաջառողջություն և երջանկություն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ' ՆՎԻՐՎԱԾ Ռ. ԴՐԱՄԲՅԱՆԻ ՀՈՒՐԵՆԻՅԱՆԻՆ

2016 թվականին լրացավ վաստակաշատ գիտնական, արվեստի պատմաբան և գեղարվեստի քննադատ, Հայաստանի կերպարվեստի թանգարանի (ներկայումս՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) առաջին տնօրեն, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Գրիգորի Դրամբյանի (1891–1991) ծննդյան 125-ամյա հոբելյանը: Ինչպես նշել է Արարատ Աղասյանը «Պատմաբանասիրական» հանդեսում լույս տեսած «Հայ արվեստագիտության դրոշակակիրը» հոդվածում՝ «Ժանրակշիռ ու նշանակալից է Ռ. Դրամբյանի ներդրումն ինչպես հանրապետությունում թանգարանային գործի կազմակերպման բնագավառում, այնպես էլ հայ արվեստաբանական մտքի ձևավորման ու զարգացման ասպարեզում, ինչն իր արտացոլումն է գտել նրա գրքերում և մենագրություններում, հոդվածներում ու զեկուցումներում, Հայաստանի կերպարվեստին նվիրված պատմական ակնարկներում»¹:

Հոբելյանական միջոցառումների շրջանակում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ հրատարակվեց Ռ. Դրամբյանի «Из истории армянского искусства» հոդվածների ժողովածուն, որը կազմել և հրատարակության է պատրաստել Ռ. Դրամբյանի դուստրը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գլխավոր գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանը: Նա է հեղինակել ժողովածուի առաջաբանը:

ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի ազգային պատկերասրահի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում 2016 թ. հոկտեմբերի 5-ին և 6-ին գումարվեց գիտաժողով՝ նվիրված Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյա հոբելյանին: Պատահական չէր գիտաժողովի անցկացման վայրի ընտրությունը: Լինելով ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի առաջին վարիչը՝ Ռ. Դրամբյանը երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի պատկերասրահը: Ավելին՝ այսօր Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում է գտնվում Ռ. Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը, որի տեղադրման նախաձեռնությունը կրկին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտին էր (2012 թ.), որ հավանություն գտավ Երևանի քաղաքապետարանի և ավագանու կողմից: 2013 թ. հոկտեմբերի 12-ին, «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության շրջանակներում տեղի ունեցավ հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

¹ Աղասյան Ա., Հայ արվեստագիտության դրոշակակիրը (Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակի առթիվ) (Պատմաբանասիրական հանդես, 2016, 3 (203), էջ 68):

«Ռուբեն Դրամբյան – 125» գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ ՀԱՊ տնօրեն, արվեստագիտության թեկնածու Արման Օատուրյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար Արմեն Ամիրջյանը՝ հատկապես շեշտելով Ռուբեն Դրամբյան նվիրյալի և նրա սերնդակիցների մեծ ներդրումը ազգային մշակույթի հարատևման ասպարեզում:

Երկօրյա գիտաժողովի չորս նիստերի ընթացքում լսվեց 17 զեկուցում, որոնցից 8-ը նվիրված էին հենց Ռ. Դրամբյանի գործունեության ուսումնասիրությանը:

Առաջին նիստում (նախագահող՝ ՀԱՊ փոխտնօրեն, արվեստագիտության թեկնածու Մամվել Հովհաննիսյան) լսվեց 4 զեկուցում:

«Ռուբեն Դրամբյանի դերը ազգային պատկերասրահի ստեղծման գործում» զեկուցման մեջ Իրինա Դրամբյանը նշեց, որ իր պաշտոնավարության ոչ լրիվ երեսուն տարիների ընթացքում Ռ. Դրամբյանը սահմանեց թանգարանի հայեցակարգը, հավաքեց նրա երեք բաժինների հարուստ ֆոնդերը՝ փաստորեն ձևավորելով Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի հիմնական կորիզը և ստեղծելով Ռ. Դրամբյանի մեծարժեք ժառանգության հավաքածու, «ինչով մենք լիիրավ կարող ենք հպարտանալ»:

Ազգային նոր կերպարվեստի ուսումնասիրման ասպարեզում Ռ. Դրամբյանի անուրանալի վաստակին նվիրված «Ռուբեն Դրամբյանը՝ հայ նոր կերպարվեստի պատմաբան» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը նկատեց, որ Ռ. Դրամբյանն առաջինն էր, որ հիմնավորապես ուսումնասիրեց և ընդհանուր գծերով, համառոտ ակնարկների տեսքով ներկայացրեց հայկական գեղանկարչության, գրաֆիկական արվեստի ու քանդակագործության պատմական գրեթե երեքհարյուրամյա զարգացման բարդ և շատ առումներով խճճված պատկերը՝ սկսած XVII դարի կեսերից մինչև նախընթաց դարի կեսերը: Բանախոսը հատկապես կարևորեց գիտնականի ներդրումը տվյալ շրջանի հայ կերպարվեստի ակնապարտ վարպետներ Հակոբ Հովնաթանյանի, Եղիշե Թադևոսյանի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Գյուրջյանի, Հակոբ Կոջոյանի և Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրման բնագավառում՝ արվեստագետներ, որոնց Ռ. Դրամբյանն առանձին մենագրություններ է նվիրել:

Գիտաժողովի շրջանակներում հրատարակվեց Ն. Քոթանջյանի հեղինակած «Ռուբեն Դրամբյան. կյանքն արվեստում» (Ե., 2016) գրքույկը, որտեղ Ռ. Դրամբյանի մահից գրեթե քառորդ դար անց հեղինակը փորձել էր գնահատել նրա բացառիկ ներդրումը XX դարի հայ գեղարվեստական կյանքի մեջ և հիշել նրան որպես բարոյական բարձր հատկանիշների տեր անձնավորություն:

Ռուբեն Դրամբյանն ու խոշոր տեսաբան, կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, պրոֆ. Քրիստափոր Քուշնարյանը (1890-1960) եղել են համադասարանցիներ՝ Թիֆլիսի առաջին գիմնազիայում: «Ռուբեն Դրամբյանը և Քրիստափոր

Քուշնարյանը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Աննա Սաստրյանը Ռ. Դրամբյանի հուշագրության և նամակների հիման վրա ներկայացրեց Ռուբեն Դրամբյանի և Քրիստափոր Քուշնարյանի մարդկային և ստեղծագործական շփումները:

Առաջին նիստը եզրափակեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Սարյանի «Կես դար տևած բարեկամություն՝ Մարտիրոս Սարյանի և Ռուբեն Դրամբյանի նամակագրությունը» զեկուցումը: Մ. Սարյանի ընտանեկան արխիվում պահպանվում են Ռուբեն Դրամբյանի գրած թվով 25 անտիպ նամակ և բացիկ: Ռ. Դրամբյանին ուղղված Մ. Սարյանի նամակների մեծ մասը տեղ գտավ «Մարտիրոս Սարյան: Նամակներ» գրքի առաջին (2002) և երկրորդ (2012) հատորներում, կգետեղվեն նաև տպագրության պատրաստվող երրորդ հատորում: Բանախոսի կարծիքով՝ Սարյանի նամակագրությունը Դրամբյանի հետ բացառիկ տեղ է գրավում նկարչի նամակագրական ժառանգության մեջ: Այն արտացոլում է Հայաստանի՝ 1920–1960 թթ. մշակութագեղարվեստական կյանքի կազմավորման, կայացման և զարգացման, թանգարանային գործի, մշակութային օջախների, հայ արվեստաբանական դպրոցի ստեղծման հիմնական փուլերը:

Երկրորդ նիստում (նախագահող՝ ՀԱՊ գիտքարտուղար Արմինե Գաբրիելյան) «Ռուբեն Դրամբյանը՝ գեղարվեստական քննադատ» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանը դիտարկեց Ռ. Դրամբյանի գործունեությունը գեղարվեստական քննադատության բնագավառում, քանի որ մեծ է նրա ավանդը խորհրդահայ գեղարվեստական քննադատության ձևավորման գործում:

«Ռուբեն Դրամբյանի դերը Հակոբ Հովնաթանյանի արվեստի հայտնաբերման և արժևորման գործում» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Գարեգին Քոթանջյանը նշեց, որ երկար տարիներ զբաղվելով արվեստի պատմության անհայտ գեղանկարչի գործերի որոնման և ձեռքբերման աշխատանքով՝ Դրամբյանը միաժամանակ դրեց նրա արվեստի պրոֆեսիոնալ ուսումնասիրության հիմքերը՝ հրապարակելով հոդվածներ, զեկույցներ, կազմակերպելով ցուցահանդեսներ: Արվեստաբանի գրչին է պատկանում նաև նկարչի ստեղծագործությանը նվիրված լրջագույն մենագրությունը, որի վրա աշխատել է գիտնականը շարունակաբար՝ հատկապես կյանքի վերջին 10 տարիներին: Բանախոսը կարևորեց այն հանգամանքը, որ Դրամբյանը Հովնաթանյանի արվեստը դիտարկում է համաշխարհային մշակութային ժառանգության լույսի ներքո՝ բացահայտելով նրա գեղանկարչության եզակիությունն ու բացառիկ բնույթը:

«Ռ. Դրամբյանի գործունեությունը թանգարանի ձևավորման տարիներին (ըստ Ազգային արխիվի նյութերի) զեկուցման մեջ ՀԱՊ աշխատակից Հայկուշ Սահակյանը ձևակերպեց

թանգարանում Դրամբյանի գործունեության չորս հիմնական ուղղությունները՝ գիտական կադրերի պատրաստում և մասնագիտացում, ցուցահանդեսների կազմակերպում և գիտահետազոտական աշխատանք, հավաքածուի համալրում նոր ցուցանմուշներով, թանգարանային առարկաների պահպանության պայմանների և տարածքի խնդրի բարելավում:

Ռ. Դրամբյանի գործունեությանը թանգարանի ստեղծման օրվանից՝ բանախոսը եզրակացրեց, որ նա, հիմքում ունենալով ռուսական թանգարանների մոդելը, կարճ ժամանակամիջոցում կարողացավ պատկերասրահը դարձնել ԽՍՀՄ հեղինակավոր թանգարաններից մեկը:

Ռ. Դրամբյանի գործունեությանն ու վաստակին նվիրված զեկուցումների շարքը եզրափակեց ՀԱՊ գլխավոր ֆոնդապահ Վեհանուշ Փունաջյանի «ՀԱՊ-ի հավաքածուի հաշվառման որոշ առանձնահատկությունների մասին» զեկուցումը, որտեղ բանախոսը կարևորեց Ռ. Դրամբյանի ներդրումն Ազգային պատկերասրահի հավաքածուի կազմավորման և համակարգման գործում: Հեղինակը, հենվելով պատկերասրահի հատուկ հաշվառման ուսումնասիրության իր փորձի վրա, վերհանեց մի քանի հիմնախնդիրներ թանգարանի հաշվառման համակարգում, որոնք լուծման կարիք ունեն:

Գիտաժողովի ընթացքում թանգարանագիտությանը նվիրված զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ինչպես նաև մայրաքաղաքի բուհերի՝ Երևանի պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, և թանգարանների՝ Հայաստանի ազգային պատկերասրահի և Ս. Փարաջանովի թանգարանի ներկայացուցիչները, այդ թվում՝ Դ. Պողոսյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Պետրոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը, Ա. Ավագյանը, պատմական գիտությունների թեկնածու Հ. Պիկիչյանը և ուրիշներ:

Գիտաժողովի շրջանակներում ՀԱՊ Որմնանկարների դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը՝ Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ, որի ընթացքում հնչեցին Կոմիտասի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:

Օրերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Ռուբեն Դրամբյան – 125» գիտաժողովի զեկուցումների ժողովածուն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.

Արվեստագիտության դոկտոր

ԳԵՂԵՑԻԿԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 6-ին Նարեկացի արվեստի միության ցուցասրահում կայացավ երիտասարդ և շնորհալի նկարչուհի Արմինե Պետրոսյանի «Կյանքի գույները և հոգևորի լույսը» խորագրով առաջին անհատական ցուցահանդեսը: Ներկայացվել է տարբեր տարիներին կերտված 35 ստեղծագործություն՝ սրբապատկերների կրկօրինակումներ և գեղանկար աշխատանքներ:

Ա. Պետրոսյանը սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի կերպարվեստի պատմության և տեսության բաժնում: Դեռևս ուսանողական տարիներից է ձևավորվել սերը հայ միջնադարյան արվեստի նրկատմամբ, և թերևս պատահական չէ, որ երիտասարդ արվեստագետը իր մագիստրոսական



«Աստվածամայրը մանկան հետ» (2016) «Աստվածամայրը մանկան հետ» (2013)

աշխատանքը պաշտպանեց «Սրբապատկեր. քրիստոնեական գաղափարների համակարգումը պատկերային նոր ձևերում» թեմայով: Սա կարծես առիթ դարձավ, որ նկարչուհին զբաղվի սրբանկարչությամբ՝ այն առավել խորը և համակողմանի ուսումնասիրելու համար: 2012-ից նա սկսեց հաճախել Արարատյան հայրապետական թեմում գործող սրբանկարչության և մանրանկարչության դասընթացներին: 2014-ից առ այսօր երիտասարդ արվեստագետն աշխատում է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում, որտեղ հրատարակվել են նրա գիտական հոդվածները, որոնցից առաջինը նվիրված էր XIX-XX դդ. հայ ազգային բնանկարի հիմնադիր, գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի արվեստին (Բնանկարը՝ որպես աշխարհընկալում Գ. Բաշինջաղյանի արվեստում, 2015, № 2, էջ 333-345), իսկ մյուսն անդրադարձ էր հայ միջնադարյան պատկերագրության մեջ, մասնավորապես սրբապատկերում կիրառվող գույ-

ների նշանակությանը և խորհրդին (Սրբապատկեր. գույները միջնադարյան հայ պատկերագրության մեջ, 2016, № 1, էջ 330-338):

Նկարչուհին 2011 թ. մասնակցեց Ե. Չարենցի տուն-թանգարանում կազմակերպված՝ «Աշնան գույներ» խորագիրը կրող պատկերահանդեսին, որտեղ ցուցադրվեցին «Իմ ծառը» (2007), «Նատյուրմորտ ծաղիկներով» (2011), «Աշնան արև» (2009) ստեղծագործությունները: Մեկ տարի անց՝ 2012-ին, նույն թանգարանում կայացած համանուն մեկ այլ ցուցահանդեսում ներկայացվեցին «Աշնան արև» (2009), «Ծաղիկներ» (2010), «Նատյուրմորտ» (2009), «Տիրություն» (2007) ստեղծագործությունները: «Արտ ֆեստ» (2013) առաջին երիտասարդական հանրապետական փառատոնի բացօթյա ցուցահանդեսին Ա. Պետրոսյանը արվեստասեր հանրությանը հանդիպեց «Աշնան արև» (2009) կտավով, իսկ «Տիրամայրը մանկան հետ» (2014, կրկնօրինակ) գործով՝ 2014 թ. Արարատյան հայրապետական թեմում կայացած Սրբապատկերների ցուցահանդեսին: Ա. Պետրոսյանի այս վերջին՝ անհատական ցուցահանդեսում ներառված են 2007 թ. մինչ օրս ստեղծված գործերը: Յուղաներկով, գուաշով, տեմպերայով կատարված աշխատանքների վերաբերյալ (19 սրբապատկեր և 16 գեղանկար) նկարչուհին նշում է, որ սրբապատկերների ուրույն աշխարհն իրեն հոգևոր խաղաղություն և հանգստություն է պարզևում, իսկ գեղանկարներում արտահայտված են իր հոգեվիճակը, տպավորությունները և հույզերը:

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը ցուցահանդեսի բացման առթիվ իր ողջույնի խոսքում նկատեց. «Կերպարվեստում գույնի և կոմպոզիցիայի զգացողությունն առաջնային է, իմ համեստ և մեղմիկ ուսանողուհու մեջ կարևորում եմ գույնի նուրբ զգացողության առկայությունը և նուրբ կոլորիտը...»¹:

Պատկերահանդեսի կայացման կապակցությամբ նկարչուհուն շնորհավորեց և անգուգական կատարմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր դաշնակահարուհի Լիլիթ Արտեմյանը, որը կատարեց Ֆրեդերիկ Շոպենի «Սկերցո» երկ 31, թիվ 2, սի բեմով մինոր ստեղծագործությունը:

Կերպարվեստի բնագավառում Ա. Պետրոսյանի հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն միջնադարյան արվեստով, այլ ընդգրկում են նաև գեղանկարչության բնանկարի և նատյուրմորտի ժանրերը: Աշխատանքները կրում են նկարչուհու ուրույն ձեռագիրը՝ երփնագրի ներդաշնակ համադրումներով, ազատ, զգայուն վրձնահարվածներով և գունային նկարագրի թարմ, անմիջական բնույթով: Հատկապես երանգային խաղաղ և արտահայտիչ երկխոսությամբ ստեղծված կտավներում զգացվում է երիտասարդ նկարչուհու ստեղծագործական ոգին՝ ավյունով լեցուն հուզականությամբ, լավատեսությամբ և նրբությամբ:

¹ Պեպանյան Ռ., Կյանքի գույների և հոգևոր լույսի նրբագեղ համադրություն (Նօրաթերթ, 7.II.2017, <http://notaieti.am>):

Ստեղծագործական ազատությամբ են «շնչում» թե՛ միջնադարյան պատկերները և թե՛ գեղանկարները:

Կրկնօրինակված սրբապատկերների շարքում իրենց կատարողական բարձր կուլտուրայով են առանձնանում հատկապես «Աստվածամայրը մանկան հետ» (2013), «Սուրբ Միքայել հրեշտակապետ» (2013), «Հիսուս Քրիստոս Ամենակալ» (2016) գործերը: Անդրադառնալով գեղանկարներին՝ կարելի է նկատել, որ «Ծառերի զրույց» (2015) բնանկարում, օրինակ, կարծես արտահայտվել է վրձնի եռանդուն շարժումներով կերտված երանգախաղով՝ արվեստագետի անհանգիստ, փոթորկոտ հոգեվիճակը. այստեղ գերիշխում է գունային ինտենսիվությունը, մինչդեռ «Բնանկարը» (2016) աչքի է ընկնում ներդաշնակ, հոգեպարար հանգստությամբ՝ ազատ վրձնումներով ստեղծելով գունային վառ համադրումներ: Գեղարվեստական այլ որակներ և այլ տրամադրություն է հաղորդում «Երազի խրճիթը» (2015) ստեղծագործությունը: Նկարչուհին խուսափում է պատկերի մանրագնին մշակումից՝ տոնային, լուսաստվերային նուրբ անցումներից՝ առաջնություն տալով բնապատկերի գունային հագեցվածությանը: Ե՛վ լայն վրձնահարվածներով, և՛ երանգների փոքր, դետալային բնութագրությամբ, գունաբծերի սահուն հերթագայությամբ, ինչպես նաև երփնագրի ներդաշնակ համադրումներով առանձնանում են «Ծաղիկներ» (2016), «Յասամաններ» (2015), «Նատյուրմորտ» (2010) աշխատանքները: Եթե բնանկարներում հանդես են գալիս գույների հնչեղ, էքսպրեսիվ գուգորդումները, որոշ դեպքերում՝ թանձր ու հյութեղ ֆակտուրայով և համապատասխան կոմպոզիցիոն, բազմերանգ կառուցվածքով, ապա նատյուրմորտներում նկատվում է այլ մոտեցում. լուսառատ գույների կիրառմամբ ստեղծվում են քնարական հուզականությամբ լի պատկերներ:



Կակաչներ (2014)

Դրվատելի է, որ մասնագիտությամբ արվեստաբան Արմինե Պետրոսյանը դրսևորվում է նաև որպես գեղանկարիչ: Հաջողություն ենք մաղթում նրան՝ ստեղծագործական նորանոր վերելքների նվաճման սպասումով և հավատով, որ այս անհատական ցուցահանդեսը կոգեշնչի երիտասարդ նկարչուհուն, նոր գործեր արարելու և առավել ներկայանալի ցուցահանդեսների կայացման յուրօրինակ մեկնարկ կդառնա:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.
Արվեստագիտության թեկնածու

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ



Կյանքի 90-րդ տարում վախճանվեց վաստակաշատ պատմաբան, հայագիտության բնագավառի ճանաչված կազմակերպիչ, գիտության վաստակավոր գործիչ (2003), ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին, Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղքյորփի հայկական գյուղում, ծառայողի ընտանիքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թ. նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ և ավարտում 1950 թ.: Նույն տարում ընդունվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: Ասպիրանտական ուսումնառության տարիներին ակադ. Սուրեն Երեմյանի ղեկավարությամբ մասնագիտացել է Հայաստանի միջնադարյան պատմության հիմնախնդիրներում: 1954 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնա-ծուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսությունները:

Վ. Բարխուդարյանը աշխատանքային առաջին մկրտությունը ստացել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտաշխատող (1955-1958): 1958 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր (1958-1959), այնուհետև՝ ավագ (1963-1967) գիտաշխատող, գիտքարտուղար (1959-1963), փոխտնօրեն (1967-1990): 1990-ից աշխատում էր ՀՀ ԳԱԱ նախագահությունում՝ որպես ակադեմիկոս-քարտուղար (1990-2000), փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար (2000-2005), փոխպրեզիդենտ, Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (2005-2006), ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (2006-2011), ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի օգնական (2011-2017 թ.):

Վ. Բարխուդարյանի գիտական գործունեությունն ընթացել է հայկական գաղթավայրերի, պատմագիտության և հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցերի մշակման ուղղությամբ: Նա առաջին մասնագետներից էր, որ, գիտակցելով գաղթավայրերի պատմության հետազոտության կարևորությունը, դարձավ այդ ուղղության համակարգված ու գիտական նորովի ուսումնասիրության սկզբնավորողներից մեկը: «Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» (հ. 1-2, Ե., 1967, 1985) մենագրության մեջ աղբյուրագիտական հարուստ հենքով լուսաբանել է հայկական գաղութի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային պատմությունը: Վ. Բարխուդարյանի ուսումնասիրությունն ակնառու է դարձնում հայկական գաղութի նշանակալի դերը հարավային Ռուսաստանի՝ Նովոռոսիայի գրեթե անմարդաբնակ տափաստանները յուրացնելու, առևտրատնտեսական կյանքը զարգացնելու գործում:

Վ. Բարխուդարյանը 1980-1987 թթ., ղեկավարել է Պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժինը, նրա նախաձեռնությամբ ու խմբագրությամբ ստեղծվել են հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք հոդվածների ժողովածուներ, ինչպես՝ «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16-18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996): Խորհրդային շրջանի գիտական գործունեության ընթացքում Վ. Բարխուդարյանը հեղինակել է մի շարք արժեքավոր մենագրություններ. «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության» (2006), «Պատմագիտության հարցեր» (2008), «Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես-XX դարի սկիզբ)» (2010), «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության (X-XIV դդ.)» (2016), «Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն» (համահեղինակ՝ Հովհ. Ալեքսանյան) և «История армянских колоний Москвы и Петербурга (половина XVIII века-начало XX века)» (2015):

Հայաստանի Հանրապետության՝ անկախություն ձեռք բերելուց հետո Վ. Բարխուդարյանը լուրջ ներդրում է ունեցել դպրոցներում պատմության դասագրքերի ստեղծման գործում: Հասկանալի պատճառներով անհնար էր դարձել նախկին դասագրքերով ազգային պատմության դասավանդումը: Նրա խմբագրությամբ լույս տեսան հայոց պատմությունն ամբողջականորեն ընդգրկող չորս դասագիրք:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ և գործուն մասնակցություն է ունեցել դրանց աշխատանքներին: Վ. Բարխուդարյանը առանձնակի ջերմությամբ ու եռանդով է մասնակցել Հայոց եկեղեցու հոգևոր ու գիտամշակութային կյանքին: Նա երկար տարիներ եղել է Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն ավելի քան չորս տասնամյակ՝ որպես Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, փոխպրեզիդենտ, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ծավալել է գիտական-կազմակերպական ակտիվ գործունեություն: Որպես վաստակի գնահատում՝ նա արժանացել է բազմաթիվ պարգևների՝ ԽՍՀՄ-ի Պատվո նշան, ՀՀ-ի Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ ջրանշաններով, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով, Հունգարիայի Ա մեդալով:

Վաստակաշատ գիտնականի, ներհուն մտավորականի և գիտության կազմակերպչի՝ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հիշատակը անմար կմնա շնորհակալ սերունդների հիշողության մեջ:

**ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայ գաղթականների և Սփյուռքի պատմության բաժին»**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարուքյան Ա.Ց. – Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը
օսմանյան խորհրդարանում (1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր).....13

Խառատյան Ա.Ա. – Զննչաբանական հայ գաղթաբանական կազմավորման շուրջ.....26

Միրզախանյան Ռ.Կ. – Կրթության ոլորտը Հայաստանում 1925-1932 թթ.....35

Խաչատրյան Հ.Ա. – Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ.....48

Հարությունյան Ժ.Հ. – Շառլ դը Գոլի ավժիրյան քաղաքականության
արդյունք.....63

Թորոսյան Շ.Ա. – Արդահանի խնդիրը հայ-վրացական
հարաբերություններում 1920 թ. աշնանը.....72

Մելքունյան Ա.Է. – Էնվեր փաշայի թուշեիկների հետ համագործակցության
հարցի շուրջ.....84

Ղուլյան Հ.Գ. – Հայ-ֆրանսիական հարաբերությունների կայացումն ու
զարգացումը (1991-2015 թթ.).....88

Սակիչյան Վ.Լ. – Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը.....97

Գալստյան Վ.Ա. – Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր
մշակույթի ձևավորումը XIX դ. երկրորդ կեսին.....103

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ղազարյան Ռ.Պ. – Մարիսսան ռուսական Հայկական լեռնաշխարհի արևմտյան
մասի կարևորագույն կենտրոններից մեկը (մ.թ.ա XVI-XII դդ.).....113

Ասատրյան Է.Տ. – Նասերականություն, տեսություն և գործառնություն.....119

Առաքելյան Ա.Ռ. – Օռոցի արարական պետությունների
համագործակցության խորհուրդը.....127

ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդանյան Լ.Գ. – Իրավունքի սինկրետիկ հայեցակարգ. հայացք դեպի
սպագա.....136

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սուվարյան Յու.Մ., Մարգարյան Վ.Ա. – Նորամուծական ներուժի
զննահատման մեթոդաբանությունը.....148

Ավետիսյան Կ.Հ. – Տնտեսական անվտանգությունը ազգային
անվտանգության համակարգում.....165

Նալչաջյան Թ.Ա., Աղաջանյան Լ.Հ., Մնացականյան Ն.Գ. –
Ինքնաթիռների օպտիմալ հատկացումների մոդելը.....174

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գալստյան Ա.Վ. – Գրաբարյան և բարբառային բառաշերտը XIX դ. երկրորդ կեսի արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվում.....	182
Հովհաննիսյան Վ.Վ. – «Բնական մարդ» հայեցակարգը՝ ըստ Դ. Հ. Լորենսի...191	
Թաբաղյան Ս.Վ. – Անհրաժեշտության կարգի դրսևորումները գերմաներենում.....	196
Մուրադյան Գ.Հ. – Արտարկումը՝ որպես ոճական հնար գիտաֆանտաստիկ դիսկուրսում.....	201
Զաքարյան Շ.Ի. – Ժամանակակից թուրքերենի բայասեռի հարցի շուրջ.....	207
Աբրահամյան Ա.Ա. – Օտար հեղինակների ստեղծագործությունները «Դրոշակի» էջերում (1899-1914).....	213
Ղազարյան Գ.Ա., Ավետիսյան Հ.Վ. – Գիտական խոսույթում գրագործության կրճատման մեթոդների շուրջ.....	217

ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երնջակյան Ա.Հ. – Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը Եղիսաբեթյան դարաշրջանի պայմանական թատրոնի համատեքստում.....	222
Կիրակոսյան Ս.Մ. – Հասարակական երևույթների գեղարվեստականացումը ժամանակակից հայ վավերագրական կինոյում.....	227
Գրիգորյան Գ.Վ. – Խաչքարերի երևան գալու ժամանակը և շարժառիթը.....	235
Նադարյան Ն.Թ. – Խաչատուր Բսկանդարյանի դիմաքանդակային արձանիկները.....	245

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյան Ա.Ե. – Կինը և տղամարդը հայկական հնագույն առասպելներում.....	252
Հովսեփյան Ռ.Լ. – Հացագգիների մշակումը միջնադարյան Տիգրանակերտում.....	261

ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐ

Խաչատրյան Ա.Խ. – Հայ մուլտիմեդիա և կոնվերգենտ լրագրության զարգացման առանձնահատկությունները.....	269
Սողոմանյան Գ.Ա., Մայսուրյան Հ.Ա. – Նոր և ավանդական մեդիան Հայաստանում. փոխազդեցություն և կոնվերգենցիա.....	279
Բարսեղյան Ս.Ս. – Հայրենիքը Սփյուռքի պարբերականներում.....	283

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Համբարձումյան Վ.Վ. – Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության աշխատակից Ս. Մանուկյանի հաշվետվությունը Հաճընի հերոսամարտի մասին (1920 թ. մարտ-հոկտեմբեր).....	288
--	-----

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Օրդուխանյան Է.Հ., Սուքիասյան Հ.Հ. –Լևոն Շիրինյան, <i>Արդիականացման տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներ</i> <i>(պրոյեկցիա դեպի Հայաստան)</i>	<i>300</i>
Ալեքսանյան Կ.Ս. – Անուշավան Զաքարյան, <i>ՀայաստանըՎ. Բրյուստլի</i> <i>գրական-հասարակական գործունեության մեջ.....</i>	<i>303</i>
Պողոսյան Ս.Հ. –Սամվել Մկրտչյան, <i>Հայոց տոնածիսական մշակույթ.....</i>	<i>307</i>
Գրեկյան Ե.Հ. – Արամ Քոսյան, <i>Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական</i> <i>միջպետական պայմանագրերը.....</i>	<i>309</i>
Հարությունյան Ա.Հ. – Գևորգ Ստեփանյան, <i>Համագասպ Մրվանձտյանց.....</i>	<i>312</i>

ՄԵՐ ՀՈՒՄԵՆՏԱՐՆԵՐԸ

Հովսեփյան Լ.Վ. – <i>Հայագիտության նվիրյալը. Աելիտա Դուլխանյան.....</i>	<i>315</i>
<i>Հանրահայտ շեքսպիրագետը. Բյուրակն Չերագ-Անդրեասյան</i>	<i>319</i>

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Ասատրյան Ա.Գ. – <i>Գիտաժողով՝ նվիրված Ռ. Դրամբյանի հոբելյանին.....</i>	<i>322</i>
Կիրակոսյան Մ.Ա. – <i>Գեղեցիկի որոնումներում.....</i>	<i>326</i>

ԽՈՍՔ ՀԻՇՍԱԿԻ

<i>Վլադիմիր Բարխուդարյան. մեծավաստակ գիտնականը և գիտության</i> <i>կազմակերպիչը.....</i>	<i>329</i>
--	------------

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Марукян А.Ц. – Признание и осуждение геноцида армян в османском парламенте (ноябрь-декабрь 1918 г.)	13
Харатян А.А. – О формировании армянской колонии Смирны.....	26
Мирзаханян Р.К. – Сфера образования в Армении в 1925-1932 гг.....	35
Хачатрян Г.А. – К вопросу о правлении марзпанов Армении	48
Аругян Ж.А. – Результат алжирской политики Шарля де Голля.....	63
Торосян Ш.А. – Вопрос Ардагана в армяно-грузинских отношениях осенью 1920 г.	72
Мелкумян А.Э. – К вопросу о сотрудничестве Энвера паши с большевиками.....	84
Гулян Г.Г. – Становление и развитие армяно-французских отношений (1991-2015 гг.).....	88
Макичян В.Л. – Центральный совет армян в Германии.....	97
Галстян В.А. – Формирование тюркоязычной письменной культуры в Восточном Закавказье во второй половине XIX в.....	103

ВОСТОКОВЕДЕНИЕ

Казарян Р.П. – Сарисса как один из важнейших центров Западной части Армянского нагорья (XVI-XII вв. до н.э.).....	113
Асатрян Э.Т. – Нассеризм: теория и функция.....	119
Аракелян А.Р. – Совет сотрудничества арабских государств залива.....	127

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Варданян Л.Г. – Синкретическая концепция права: взгляд в будущее.....	136
---	-----

ЭКОНОМИКА

Суварян Ю.М., Саркисян В.А. – Методология оценки инновационного потенциала.....	148
Аветисян К.Г. – Экономическая безопасность в системе национальной безопасности.....	165
Налчаджян Т.А., Агаджанян Л.Г., Мнацаканян Н.Г. – Модель оптимальной расстановки воздушных судов.....	174

ФИЛОЛОГИЯ

Галстян А.В. – Лексические пласты диалектов и грабара в языке восточноармянской художественной документа-листки второй половины XIX в.....	182
--	-----

Оганесян В.В. – <i>Концепция Д. Г. Лоуренса о "естественном человеке"</i>	191
Табагян С.В. – <i>Категория необходимости в немецком языке</i>	196
Мурадян Г.А. – <i>Экстраполяция как стилистический прием в дискурсе научной фантастики</i>	201
Закарян Ш.И. – <i>К вопросу о категории глагольных залогов в современном турецком языке</i>	207
Абраамян А.А. – <i>Произведения иностранных писателей на страницах газеты "Дрошак" (1899-1914)</i>	213
Казарян Г.А., Аветисян Г.В. – <i>О методах предотвращения плагиата в научном дискурсе</i>	217

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Ернджакян А.А. – <i>Трагедия Шекспира "Тамлет" в контексте условного театра Елизаветинской эпохи</i>	222
Киракосян С.М. – <i>Эстетизация социальных феноменов в современном армянском документальном кино</i>	227
Григорян Г.В. – <i>Время и мотивация появления хачкаров</i>	235
Надарян Н.Т. – <i>Портретные статуэтки Хачатура Исхандаряна</i>	245

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Петросян А.Е. – <i>Женщина и мужчина в древнейших армянских мифах</i>	252
Овсепян Р.Л. – <i>Культивация зерновых в средневековом Тигранакерте</i>	261

ИСТОРИЯ ПЕРИОДИКИ И СМИ

Хачатрян А.Х. – <i>Особенности развития армянской мультимедийной и конвергентной журналистики</i>	269
Согомонян Г.А., Майсуриян А.А. – <i>Новые и традиционные масс медиа в Армении: взаимовлияние и конвергенция</i>	279
Барсегиан С.С. – <i>Родина в периодике диаспоры</i>	283

ПУБЛИКАЦИИ

Амбарцумян В.В. – <i>Отчет сотрудника Ассоциации молодых христиан С. Манукяна о героической битве в Аджне (март-октябрь 1920 г.)</i>	288
---	-----

РЕЦЕНЗИИ

Ордуханян Э.Г., Сукиасян А.Г. – <i>Левон Ширинян, Проблемы теории и практики модернизации (проекция на Армению)</i>	300
Алексян К.С. – <i>Анушаван Закарян. Армения в литературно-общественной деятельности В. Брюсова</i>	303
Погосян С.А. – <i>Самвел Мкртчян, Празднично-обрядовая культура армян</i>	307

Грекян Е. А. – Арам Косян, <i>Хеттско-айасские межгосударственные договора XIV века до н.э.</i>	309
Арутюнян А. А. – Геворг Степанян, <i>Амазасп Срвандзтянц</i>	312

НАШИ ЮБИЛЯРЫ

Овсепян Л. В. – <i>Заслуженный арменовед: Аэлига Долуханян</i>	315
<i>Известный шекспировед: Бюракан Чераз-Андреасян</i>	319

НАУЧНАЯ ХРОНИКА

Асатрян А. Г. – <i>Научная конференция, посвященная юбилею Р. Дрампяна</i>	322
Киракосян М. А. – <i>В поисках Прекрасного</i>	326

СЛОВО ПАМЯТИ

<i>Владимир Бархударян: заслуженный ученый и организатор науки</i>	329
--	-----

CONTENTS
HISTORY AND POLITICAL SCIENCE

A. Marukyan – <i>Recognition and Condemnation of the Armenian Genocide in the Ottoman Parliament (November-December 1918)</i>	13
A. Kharatyan – <i>On the Formation of the Armenian Colony of Smyrna</i>	26
R. Mirzakhanyan – <i>The Field of Education in Armenia in 1925-1932</i>	35
H. Khachatryan – <i>On the Question of Ruling of the Armenian Marzpons</i>	48
Zh. Harutyunyan – <i>The Result of Charles De Gaulle’s Algerian Policy</i>	63
Sh. Torosyan – <i>The Question of Ardahan in Armenian-Georgian Relations in Autumn of 1920</i>	72
A. Melkumyan – <i>On the Question of Cooperation of Enver pasha with Bolsheviks</i>	84
H. Ghoulyan – <i>The Establishment and Development of Armenian-French Relations (1991-2015)</i>	88
V. Makichyan – <i>The Central Council of Armenians in Germany</i>	97
V. Galstyan – <i>The Formation of the Turkic Literal Culture in Eastern Transcaucasia in the Second Half of the XIX Century</i>	103

ORIENTAL STUDIES

R. Ghazaryan – <i>Sarissa as One of the Most Significant Centers in the Western Part of the Armenian Highland (XVI-XII Centuries B.C.)</i>	113
E. Asatryan – <i>Nasserism: Theory and Function</i>	119
A. Arakelyan – <i>The Cooperation Council for the Arab States of the Gulf</i>	127

PHILOSOPHY AND LAW

L. Vardanyan – <i>Syncretic Conception of Law: Prospection</i>	136
---	-----

ECONOMICS

Yu. Suvaryan, V. Sargsyan – <i>The Methodology of Innovation Potential Estimation</i>	148
K. Avetisyan – <i>The Economic Security in the National Security System</i>	165
T. Nalchajyan, L. Aghajanyan, N. Mnatsakanyan – <i>The Model of Aircraft Optimal Alignment</i>	174

PHILOLOGY

A. Galstyan – <i>Grabar and Dialect Word Layers in the Fiction Documentary</i>	
---	--

<i>Writings of the Eastern Armenian in the Second Half of the XIX Century</i>	182
V. Hovhannisyan – <i>The Concept of D. H. Lawrence on the "Natural Man"....</i>	191
S. Tabagyan – <i>The Category of Necessity in German Language</i>	196
G. Muradian – <i>Extrapolation as a Stylistic Device in Science Fiction Discourse</i>	201
Sh. Zakaryan – <i>On the Problem of the Verbal Voice in Modern Turkish Language</i>	207
A. Abrahamyan – <i>Works of the Foreign Writers in the Newspaper "Droshak" (1899-1914)</i>	213
G. Ghazaryan, H. Avetisyan – <i>On the Methods of Preventing Plagiarism in Scientific Discourse</i>	217

CULTURE AND ART HISTORY

A. Yernjakyan – <i>The Tragedy of Shakespeare "Hamlet" in the Context of the Conditional theatre of the Elizabethan Era</i>	222
S. Kirakosyan – <i>Aestheticization of the Social Phenomena in the Armenian Contemporary Documentary Cinema</i>	227
G. Grigoryan – <i>The Time and Motivation of the Appearance of Khachkars</i>	235
N. Nadaryan – <i>Portrait Statues of Khachatur Iskandaryan</i>	245

ARCHAEOLOGY AND ETNOGRAPHY

A. Petrosyan – <i>Woman and Man in Earliest Armenian Myths</i>	252
R. Hovsepyan – <i>On the Processing of Grain in the Medieval Tigranakert</i>	261

HISTORY OF PERIODICALS AND MASS MEDIA

A. Khachatryan – <i>The Features of the Armenian Multimedia and Convergent Journalism Development</i>	269
G. Soghomonyan, A. Maysuryan – <i>New and Traditional Mass Media in Armenia: Influence and Convergence</i>	279
S. Barseghyan – <i>Homeland in the Diaspora's Periodicals</i>	283

PUBLICATIONS

V. Hambardzumyan - <i>Report of the Employee of the Association of Young Christians of S. Manukyan on the Heroic Battle in Hadjin (March-October 1920)</i>	288
---	-----

LITERARY REVIEWS

- E. Ordukhanyan, H. Sukiasyan**–Levon Shirinyan, *The Problems of Theory and Practice of the Modernization (Project to Armenia)*.....300
- K. Aleksanyan**–Anushavan Zakaryan, *Armenia in V. Bryusov’s Literary-Social Activities*.....303
- S. Pogosyan**–Samvel Mkrtchyan, *Armenian Festival and Ritual Culture*.....307
- A. Grekyan**–Aram Kosyan, *The XIV Century B.C. Interstate Treaties between the Hittite Empire and Hayasa*.....309
- A. Harutyunyan** –Gevorg Stepanyan, *Hamazasp Servandztyants*.....312

OUR JUBILEES

- L. Hovsepyan**– *The Devotee of the Armenian Studies: Aelita Dolukhanyan*..315
- Merited Specialist in Shakespeare Studies: Byurakn Cheraz-Andreasyan*.....319

SCIENTIFIC CHRONOLOGY

- A. Asatryan**– *Scientific Conference Dedicated to the Jubilee of R. Drambyan*.322
- M. Kirakosyan**– *Looking for the Beauty*.....326

WORD OF MEMORY

- Vladimir Barkhudaryan: Honored Researcher and Scientific Manager*.....329

Հայերեն բաժնի խմբագիրներ՝

Մելանիա Միքայելյան
Սեդա Քուփեյան

Редакторы армянского отдела – Меланья Микаелян
Седая Купеляня

я

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Պետրոսյան
Компьютерный дизайн и компоновка – Арминия Петросян

Հրատ. պատվեր N 769

Ստորագրված է տպագրության 18.IV.2017 թ.:

Տպագրական 20.5 մամուլ: Տպարանակը՝ 200:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:

Հեռ.՝ 564180, 581902:

Подписано к печати 18. IV.2017 г.

20.5 печатных листов Тираж – 200 экз, по граф. я. НАН РА, я

Ереван, я. р.ж. Маршала Баграмяна 24 я

Адрес редакц. , : 0019, Ереван, я. р.ж. Маршала Баграмяна 24 я

Тел. 564180, 581902 я

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://iraber.sci.am>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ iraber@sci.am

Официальный сайт журнала: <http://iraber.sci.am>

Электронная почта журнала: iraber@sci.am

ՔԱՌԱՍՄՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՑՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА

Գլխավոր խմբագիր **ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՌԱՍՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ
ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆ, ՀԱՍԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ,
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԳԱՅԱՆԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (պատ. քարտուղար), ՎԼԱԴԻՄԻՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ
ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ
ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор **АЛЬБЕРТ А. ХАРАТЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԱՐԱՏՅՈՆՅԱՆ (օտ. секретарь),
ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐԱՏՅՈՆՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ,
ԳԱԳԻԿ ԿԱՅԻՆՅԱՆ, ՐԱՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ
ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՅԱՆ, ԳԵՎՈՐԿ ՊՈԳՈՍՅԱՆ, ՐԱՍԵՆ ՏԱՓՐԱՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՏՍՎԱՐՅԱՆ, ԿԻՐԱՆ ԿՈՐՅԱՆ

© Լրագրի հասարակական գիտությունների

© Вестник общественных наук